Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

Михаил Шолохов

ТИХИЙ ДОН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ
ТРЕТИЙ

Перевод
А. Мазманяна

ИЗДАТЕЛЬСТВО
„СОВЕТАКАН ГРОХ“ ЕРЕВАН 1978

Միխայիլ Շոլոխով

ԽԱՂԱՂ ԴՈՆԸ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ
ԵՐՐՈՐԴ

թարգմանությունը
Գ. Մազմանյանի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ — 1978

Р 2
Ե 77

Դու մեր հայր, խաղաղ, պանծալի մեր Դոն,
Դու մեր բարերար, Դոն Իվանովիչ,
Ընդում է միշտ էլ համբավդ բարի,
Համբավդ բարի, անուշդ անուշ.
Դու, մեկ էլ տեսար, հոսում ես արագ,
Հոսում ես արագ, ջրերդ մաքուր:
Իսկ հիմա դու, Դոն, պղտոր ես հոսում,
Պղտորվել ես դու վերից մինչև վար:
Հոսում է Դոնը խաղաղ, պանծալի.
«Բա ես ի՞նչ անեմ պղտոր չլինեմ,—
Արձակել եմ ես սեզ արծիվներիս,
Սեզ արծիվներիս, իմ կազակներին:
Նրանց ոտքերս ափերս են մաշվում,
Գազերս են թափվում հանց դեղին ավազ»:

(Կազակական հինավուրց երգ)

Ե 70302 (310)
705 (01) 78 , 78 «Տ»

© «Սովետական գրող» հրատարակչություն,
թարգմանված է հայերեն, 1978

ՎԵՑԵՐՈՐԴ ՄԱՍ

I

1918 թվականի ապրիլին Դոնի մարզում ավարտվեց մեծ բաժանումը. Խոպերի, Ուստ-Մեդվեդիցկու և մասամբ Վերին Դոնի,— հյուսիսային այդ օկրուգների ճակատային կազակները գնացին Միրոնովի ու կարմիրգվարդիականների նահանջած զորամասերի հետ. Դոնի ստորին օկրուգների կազակները քշում էին նրանց ու սեղմում մարզի սահմաններին։

Խոպերցիները Միրոնովի հետ գնացին համարյա գլխովին, ուստ-մեդվեդցիները՝ կիսով չափ, Վերին Դոնի կազակները՝ միայն աննշան թվով։

Միայն 1918 թվականին պատմությունը վերջնականապես բաժանեց Դոնի վերին ու ստորին ավազանի կազակներին. բայց բաժանման սկիզբը նշմարվել էր դեռ հարյուրավոր տարիներ առաջ, երբ հյուսիսային օկրուգների ավելի քիչ ունևոր կազակները, որոնք չունեին ոչ մերձազովյան բերրի հողերը, ոչ խաղողի այգիներ, ոչ էլ հարուստ որսատեղեր ու ձկնորսարաններ, երբեմնակի անջատվում էին Չերկասկից, ինքնակամ հարձակումներ էին գործում վելիկոռուսական հողերի վրա և ամենահուսալի հենարաններ էին հանդիսանում բոլոր բունտարարների համար՝ Ռազինից սկսած մինչև Սեկաչը։

Նույնիսկ ամենաուշ ժամանակներում, երբ ամբողջ կազակ բնակչությունը տերության կողմից ճնշված, խուլ կերպով հուզվում էր, Դոնի վերին ավազանի կազակները բա-

ցահայտորեն ոտքի էին ելնում ու իրենց ատամանների ղեկավարությամբ ցնցում ցարերի հենարանները. կռվում էին զարահական զորքերի դեմ, Դոնում թալանում էին քարավանները, արշավում դեպի Վոլգա և խռովության էին դրդում ընկճված Զապորոժիեն։

Ապրիլի վերջին կարմիրները թողել էին Դոնի մարզի երկու-երրորդ մասը։ Երբ արդեն ակներև էր մարզային իշխանություն ստեղծելու անհրաժեշտությունը, հարավում կռվող մարտական խմբերի ղեկավար պաշտոնյաները առաջարկեցին կազակ ներկայացուցիչների ժողով հրավիրել։ Դոնի ժամանակավոր կառավարության անդամների և ատամանների ու զորամասերի դելեգատների հավաքը նշանակվել էր ապրիլի 28-ին, Նովոչերկասկում։

Տատարսկի խուտորում ապրիլի քսանից հետո, Վեշենսկայա ստանիցայի ատամանից ստացվեց մի թուղթ, որով ծանուցվում էր, թե Վեշենսկայա ստանիցայում այդ ամսի 22-ին տեղի կունենա ստանիցայի ժողով՝ կազակ ներկայացուցիչների ժողովի դելեգատներ ընտրելու համար։

Միրոն Գրիգորևիչ Կորշունովը ժողովում կարդաց թուղթը։ Խուտորը Վեշենսկայա ուղարկեց նրան, Բոգատիրյով պապին և Պանտելեյ Պրոկոֆևիչին։

Ստանիցայի հավաքում ներկայացուցիչների ժողովի մյուս դելեգատների թվում ընտրեցին նաև Պանտելեյ Պրոկոֆևիչին։ Նույն օրը նա վերադարձավ Վեշենսկուց ու որոշեց հետևյալ օրը խնամու հետ գնալ Միլլերովո, այնպես որ ժամանակին հասնի Նովոչերկասկ (Միրոն Գրիգորևիչին հարկավոր էր Միլլերովոյում նավթ, օճառ ու տնտեսության համար էլի ուրիշ բաներ գնել և, ի դեպ, ուզում էր նաև փող աշխատել՝ Մոխովի աղացի համար մաղեր ու բաբբիտ գնել)։

Լուսաբացին մեկնեցին։ Միրոն Գրիգորևիչի սևաթույր ձիերը թեթև տանում էին բրիչկան։ Խնամիները կողք-կողքի նստել էին նախշուն, գույնզգույն օրորանում։ Բարձրացան բլուրը, խոսեցին. Միլլերովոյում գերմանացիներ էին գտնվում, դրա համար էլ Միրոն Գրիգորևիչը մի քիչ վախեցած հարցրեց.

— Խնամի ջան, գերմանացիք մեր գլխին խաթա չե՞ն

բերի, հը՞։ Զարագործ մարդիկ են, դրանց շուն հերն անիծվի։

— Չէ՛-է՛,— հավատացրեց Պանտելեյ Պրոկոֆևիչը։— Մատվեյ Կաշուլինը անցած օրը այնտեղ էր, ասում է՝ գերմանացիք վախում են... սիրտ չեն անում կազակներին ձեռք տալ։

— Հլա տես, է՛,— Միրոն Գրիգորևիչը քմծիծաղ տվեց աղվեսի շեկլիկությունն ունեցող մորուքի տակին ու խաղացրեց բալի գույնի ահագին մտրակը. ըստ երևույթին հանգըստանալով, նա փոխեց խոսակցության նյութը.— բա ի՞նչ իշխանություն է հաստատվելու, ի՞նչ ես կարծում։

— Ատաման կընտրենք։ Մերոնցից։ Կազակներից։

— Տա՛ աստված։ Ընտրեցեք ամենալավին։ Տնտղեցեք գեներալներին, ոնց որ ցիգանը ձիերին։ Պակասություն չունենա, հա՛-ա։

— Կընտրենք։ Դոնումը հլա շատ կան լավ գլուխ ունեցողներ։

— Դրուստ է, խնամի ջան, դրուստ է... Նրանց և հիմարներին հո չեն ցանում,— իրենք են բուսնում։— Միրոն Գրիգորևիչը կկոցեց աչքերը, տխրությունը ստվերեց նրա պեպենոտ դեմքը։— Ես միտք ունեի իմ Միտկային մարդ դարձնել. ուզում էի, որ սովորի, սպա դառնա, իսկ նա ծխական դպրոցն էլ չավարտեց, երկրորդ ձմռանը թողեց ու փախավ։

Մի բոպե լռեցին՝ մտածելով իրենց որդիների մասին, որոնք գնացել էին հայտնի չէ ուր,— բոլշևիկներին հետապընդելու։ Բրիչկան հա՛ ցնցվում էր խորդուբորդ ճանապարհին. աջ կողմի սևուկը ոտներն իրար էր զարկում, շրխկացնում չմաշված պայտերը. օրորանը ճռճվում էր, ու ինչպես ձկնկիթ արձակող ու զուգավորվող ձկներ, խնամիները կողքերով քսվում էին միմյանց։

— Տեսնես ո՞րտեղ են մեր կազակները,— հոգոց հանեց Պանտելեյ Պրոկոֆևիչը։

— Գնացել են Խոպերի կողմը։ Կալմիկ-Ֆեդոտկան եկել էր Կումիլժենսկուց, նրա ձին սատկել է։ Ասում էր, որ միթամ ճամփա են բռնել Տիշանսկայա ստանիցայի կողմը։

Էլի լռեցին։ Քամին պաղեցնում էր մեջքերը։ Ետևում, Դոնի մյուս կողմում, արշալույսի վարդագեղ խարույկի վրա

ՀԵՀորեն ու լռին այրվում էին անտառները, մարգագետինները, լճերը, մերկ բացուտները։ Դեղին, չհալած մեղրահացի նման փռված էին ավազոտ բլրակները, ափերին զարնըվող ալիքների ուղտասապատները դժգունորեն բրոնզի գույն էին անդրադարձնում։

Գարունը հախուռն կերպով էր ընթանում։ Անտառների բյուրեղափայլ զմրուխտը արդեն տեղի էր տվել մուգ կանաչ, փարթամ սաղարթին, ծաղկում էր տափաստանը, իջել էին հեղեղված ջրերը՝ գետառում թողնելով բազմաքանակ, պըսպըղան լճակներ, իսկ քարափների տակ դեռևս կավախառն հողին էր կառչել տաքությունից հալչող ձյունը, շողում էր հանդգնորեն ու պայծառ։

Երկրորդ օրվա իրիկնագեմին ժամանեցին Միլլերովո, գիշերեցին ծանոթ մի ուկրաինացու մոտ, որ ապրում էր էլեվատորի կողքին, գորշ փոշիով պատած տեղում։ Առավոտյան նախաճաշելով, Միրոն Գրիգորևիչը լծեց ձիերը, գնաց դեպի խանութները։ Անարգել անցավ երկաթգծից և այստեղ իր կյանքում առաջին անգամ տեսավ գերմանացիներին։ Նրան դեմուդեմ գալիս էին երեք լանդշտուրմիստ։ Սրանցից մեկը, որ ցածրահասակ էր, մինչև ականջները աճած գանգուր, շագանակագույն մորուքով, ձեռքը թափահարեց նրա կողմը։

Միրոն Գրիգորևիչը քաշեց երասանները՝ անհանգիստ ու ապաստողական ծամծմելով շրթունքները։ Գերմանացիները մոտեցան։ Բարձրահասակ, պարարտ մի պրուսացի, ժպտալով ու բանալով սպիտակափայլ ատամները, ասաց ընկերոջը.

— Ահա իսկական կազակը։ Տե՛ս, սա մինչև իսկ կազակական տարազով է։ Սրա տղաները հավանորեն կռվել են մեր դեմ։ Եկեք սրան կենդանի ուղարկենք Բեռլին։ Սա ամենահետաքրքիր էքսպոնատը կլինի։

— Մեզ նրա ձիերն են հարկավոր, իսկ նա թող չհանձնամը գնա,— առանց ժպտալու պատասխանեց ցածրահասակ, շագանակագույն մորուքով գերմանացին։

Նա վախվխելով շրջանցեց ձիերը, մոտեցավ բրիչկային։

— Վա՛ր իջիր, ծերուկ։ Քո ձիերն անհրաժեշտ են մեզ համար, պետք է այս աղացից ալյուր փոխադրենք կայարան։ Ասում եմ քեզ վա՛ր իջիր, է՛։ Ձիերիդ համար կգաս պարետի մոտ, կստանաս։ Ձիերդ ու սայլդ.— գերմանացին աչքերով ցույց տվեց աղացը և իր անելիքի նկատմամբ կասկածներ թույլ չտվող ժեստով Միրոն Գրիգորևիչին հրավիրեց վար իջնել։

Մյուս երկուսը ետ նայելով ու ծիծաղելով, քայլեցին դեպի աղացը։ Միրոն Գրիգորևիչի դեմքը գորշ-դեղնակարմիր գույն առավ։ Երասանները փաթաթելով օրորանի ձողին, նա ջահելավարի թռավ բրիչկայից, անցավ ձիերի առջևի կողմը։

«Խնամիս չկա,— անցողակի մտածեց նա ու սարսուռ զգաց,— կտանե՛ն ձիերը, թյո՛ւ, ա՛յ քեզ խաթա. սատանան ինձ բերեց այստեղ»։

Գերմանացին, շրթունքներն ամուր սեղմելով իրար, բռնեց Միրոն Գրիգորևիչի թևքը, նշան արեց, որ նա գնա դեպի աղացը։

— Թո՛ղ,— Միրոն Գրիգորևիչը առաջ անցավ ու է՛լ ավելի սփրթնեց,— դեն տար ձեռներդ, հա՛-ա, չե՛մ տա բրիչկան։

Գերմանացին նրա ձայնից կռահեց պատասխանի իմաստը։ Նա հանկարծ գիշատչաբար բացեց բերանը, ցույց տվեց կապտավուն-սպիտակ ատամները, բիբերը սպառնալից կերպով լայնացան, տիրաբար ու ճղճղալով հնչեց նրա ձայնը։ Գերմանացին վերցրեց ուսից քարշ արած հրացանի փոկը և այդ ակնթարթում Միրոն Գրիգորևիչը հիշեց իր ջահելությունը. մուշտակովի ժամանակ տրվող հարված հասցրեց նրա թշին,— համարյա առանց թափ առնելու։ Գերմանացու գլուխը ճքալով ցնցվեց հարվածից, կզակի վրա կտրվեց սաղավարտի փոկը։ Նա ընկավ երեսի վրա ու, փորձելով վեր կենալ, բերանից թանձրացած արյուն դուրս տվեց։ Միրոն Գրիգորևիչը մի անգամ էլ խփեց նրա ծոծրակին, նայեց դես-դեն, ու կռանալով, քաշեց ու վերցրեց հրացանը։ Այդ պահին նրա միտքը արագ ու անասելի հստակությամբ էր աշխատում։ Շուռ տալով ձիերը, նա արդեն գիտեր, որ գերմանացին չի կարող կրակել իր ետևից, ու վախենում էր միայն մի բանից,— չլինի՞ թե ժամապահները իրեն տեսնեն երկաթուղու ցանկապատի մյուս կողմից կամ երկաթգծերից։

Նույնիսկ ձիարշավների ժամանակ էլ սևուկները չէին սլանում այդչափ կատաղի քառատրոփով։ Նույնիսկ հարսնառ գնալիս էլ այդքան արագ չէին պտտվում բրիչկայի անիվները։ «Տե՛ր իմ, պահպանիր ինձ, ազատիր, տեր իմ. հանուն հոր...»— մտքում կրկնում էր Միրոն Գրիգորևիչը՝ անընդհատ մտրակելով ձիերին։ Քիչ մնաց, որ բնածին ազատությունը կործաներ նրան. նա ուզում էր բրիչկան քշել ծանոթ ուկրաինացու տունը, որպեսզի վերցներ ոտների ծածկոցը. բայց բանականությունը հաղթեց,— նա մի կողմ շուռ եկավ։ Մինչև Օրեխովայա ավանը քսան վերստ թռչում էր նա, ինչպես հետո ինքն էր ասում, թռչում էր ավելի արագ, քան եղիա մարգարեն իր կառքով։ Օրեխովում հասավ մի ծանոթ ուկրաինացու տունը, ու կիսամեռ-կիսակենդան վիճակում պատմեց տեղի ունեցած դեպքը, տանտիրոջը խնդրեց թաքցնել իրեն և ձիերը։ Ուկրաինացին թաքցրեց, բայց նախազգուշացրեց.

— Ես կթաքցնեմ, ամա թե որ ինձ շատ հարցուփորձ արեցին, ես, Գրիգորիչ, տեղդ ցույց կտամ, էլ ուրիշ ճար չունեմ։ Տունս կվառեն, վիզս էլ չվան կգցեն։

— Թաքցրու, էլի, ազիզ։ Քեզանից շնորհակալ կլինեմ, ինչով որ ուզենաս։ Մենակ թե ազատիր մահից, պահիր մի լավ տեղ, քեզ մի հոտի չափ ոչխար կբերեմ։ Տասը հատ ամենալավ ոչխարը քեզ նվեր,— խնդրում ու խոստանում էր Միրոն Գրիգորևիչը՝ բրիչկան քաշելով չարդախի տակ։

Նա հետապնդումից ավելի շատ էր վախենում, քան մահից։ Ուկրաինացու բակում մնաց մինչև երեկո, ու մթնեց թե չէ, չքացավ։ Օրեխովայից ձգվող ամբողջ ճանապարհով թռչում էր գժվածի պես, ձիերից ծով քրտինք ու փրփուր էր թափվում, բրիչկան այնքան արագ էր գնում, որ անիվների ճաղերը աչքիդ միաձուլված էին թվում, և ուշքի եկավ միայն Նիժնե-Յաբլոնովսկի խուտորի մոտ։ Դեռ այնտեղ չհասած, նստիքի տակից հանեց գերմանացուց գրաված հրացանը, դիտեց փոկը, որի վրա թանաքե մատիտով ինչ-որ բառեր էին գրված, ու թեթևացած ասավ.

— Հը՛, հասա՞ք իմ ետևից. շան որդիք։ Ո՛նց չէ, կհասնե՛ք։

Ուկրաինացու համար այնպես էլ ոչխարներ չտարավ։

Աշնանն այդ ավանից անցնելիս եղավ նրա մոտ, տանտիրոջ ակնկալող հայացքին պատասխանեց.

— Ոչխարները սատկեցին։ Ոչխարների բանը վատ է... Ամա տես, իմ սեփական այգուց քեզ տանձ եմ բերել քո բարության համար։— Բրիչկայից երկու կոտ տանձ թափեց, որը ճխլտվել էր ճանապարհին, ու չարաճճի աչքերը մի կողմ դարձնելով, ասաց.— Մեր տանձը լավն է, հա՛-ա... համ ու հոտից չես կշտանա... — ու տանտիրոջը հրաժեշտ տվեց։

Այն ժամանակ, երբ Միրոն Գրիգորևիչը փախչում էր Միլլերովոյից, նրա խնամին ցցվել էր կայարանում։ Գերմանական մի երիտասարդ սպա անցաթուղթ գրեց, թարգմանչի միջոցով հարցուփորձ արեց Պանտելեյ Պրակոֆևիչին, ու վառելով էժան սիգարը, հովանավորական տոնով ասաց.

— Մեկնեցեք, միայն թե հիշեցեք, որ ձեզ խելոք իշխանություն է հարկավոր։ Ընտրեցեք նախագահ, ցար, ում ուզենաք, միայն այն պայմանով, որ այդ մարդը զուրկ չլինի պետական մարդու բանականությունից և կարողանա մեր պետության նկատմամբ լոյալ քաղաքականություն վարել։

Պանտելեյ Պրակոֆևիչը բավական անբարյացակամորեն էր նայում գերմանացուն։ Նա հակամետ չէր խոսակցություն ունենալու և, ստանալով անցաթուղթը, իսկույն գնաց տոմս գնելու։

Նովոչերկասկում նրան զարմացրեց երիտասարդ սպաների շատությունը. դրանք խմբերով քայլում էին փողոցներում, նստում ռեստորաններում, զրոսնում օրիորդների հետ, թրևում ատամանի պալատի և դատարանի շենքի մոտ, որտեղ բացվելու էր ներկայացուցիչների ժողովը։

Դելեգատներին հատկացված հանրակացարանում Պանտելեյ Պրակոֆևիչը հանդիպեց իրենց ստանիցայից մի քանի հոգու, մի ծանոթի, որ Ելանսկայա ստանիցայից էր։ Դելեգատների մեջ գերակշռում էին կազակները, սպաները շատ չէին, իսկ ստանիցաների ինտելիգենցիայի ներկայացուցիչներն ընդամենը մի քանի տասնյակ էին։ Անվստահ դատողություններ էին արվում մարզային իշխանություն ընտրելու մասին։ Պարզ էր մի բան,— պետք է ատաման ընտրեն։

ծրվում էին հայտնի կազակ գեներալների անունները, ընթերկվում էին թեկնածությունները։

Ժամանելու օրվա երեկոյան, թեյից հետո Պանտելեյ Պրակոֆևիչը նստեց իր սենյակում, տնից բերած ուտեստն ուտելու։ Նա կտոր-կտոր արեց չորացրած ծածան ձուկը, կտրեց հացը։ Նրա մոտ նստեցին երկու միգուլինցի, մոտեցան էլի մի քանի մարդիկ։ Խոսակցությունը սկսվեց ռազմաճակատի դրությունից, հետզհետե անցավ իշխանության ընտրություններին։

— Հանգուցյալ Կալեդինից ավելի լավ մարդ չի գտնվի, ողորմի՛ նրա հոգուն,— հոգոց հանեց գորշաճերմակ մորուքով մի շումիլինցի։

— Համարյա թե,— համաձայնեց մի ելանցի։

Խոսակցությանը ներկա գտնվողներից մեկը, Բերսերգենևսկայա ստանիցայի դելեգատը, որը փոխ-յասավուլ էր, մի փոքր տաքացած ասաց.

— Ինչպե՞ս թե հարմար մարդ չկա։ Ի՞նչ եք ասում, պարոններ. հապա գեներալ Կրասնո՞վը։

— Այդ ի՞նչ Կրասնով է։

— Այսինքն ո՞նց թե ինչ։ Ամոթ չէ՞ այդ հարցնել, պարոններ։ Հռչակավոր գեներալ է, Երրորդ հեծյալ կորպուսի հրամանատար, խելացի, գեորգեյան կավալեր, տաղանդավոր զորավար։

Փոխ-յասավուլի հիացական, կրքոտ խոսքը վրդովեց մի դելեգատի, որը ռազմաճակատի զորամասերից մեկի ներկայացուցիչն էր։

— Իսկ ես ձեզ փաստացի եմ ասում՝ մենք գիտե՞նք նրա տաղանդը։ Անպետք գեներալ է։ Գերմանական պատերազմում իսկի էլ աչքի չընկավ։ Թե որ ռևոլյուցիան չլիներ, նա բրիգադի հրամանատարությունից դենը չէր գնա։

— Ինչե՞ր եք ասում, ա՛յ մարդ, դուք, ուրեմն, չեք ճանաչում գեներալ Կրասնովին։ Եվ հետո, առհասարակ, ինչպե՞ս եք համարձակվում նման բաներ ասել բոլորի կողմից հարգված գեներալի մասին։ Դուք ամենայն հավանականությամբ մոռացել եք, որ շարքային կազակ եք։

Փոխ-յասավուլը ջախջախիչ կերպով շեշտում էր սառցե խոսքերը, ու կազակը շփոթվեց, վախեցավ, ձայնը ցածրացնելով կմկմաց.

— Ես, ձերդ բարեծննդություն, իմ գիտեցածն եմ ասում,— ծառայել եմ նրանց հրամանատարության տակ... Ավստրական ֆրոնտումը նա մեր գունդը փշալարերի վրա նստեցրեց։ Դրա համար էլ մենք նրան անպետք ենք համարում... Ասենք, ո՞վ գիտի... Կարելի է բանը այդպես չի...

— Բա ինչի՞ համար են նրան գեորգի տվել, հը՞, սարսաղ,— Պանտելեյ Պրակոֆևիչը քիչ մնաց կուլ տար ծածանի ոսկորը. հազալով և այն ետ տալով հարձակվեց ճակատայինի վրա.— սարսաղությունից ձեռ չեք քաշում, բոլորին պախարակում եք, բոլորն էլ վատ են ձեզ համար... Տեսե՛ք թե գլխներից ինչ մոդա են հանել, է՛։ Որ քիչ խոսեիք, հո այսպիսի ավերմունք չէր լինի։ Խելքի ծով եք դառել, էլի՛, փչաններ։

Չերկասկը, Դոնի ստորին ավազանի բոլոր կազակները ամուր կանգնած էին Կրասնովի կողմը։ Գեորգեյան շքանշանակիր գեներալը ծերունիների սրտովն էր. ճապոնական պատերազմի ժամանակ շատերը ծառայել էին նրա հետ։ Սպաներին հրապուրում էր Կրասնովի անցյալը. գվարդիական էր, բարձր դասին պատկանող, փայլուն կերպով կըրթված գեներալ, եղել էր արքունիքում և նորին կայսերական մեծության շքախմբում։ Լիբերալ ինտելիգենցիային բավարարում էր այն հանգամանքը, որ Կրասնովը ոչ միայն գեներալ էր, ռազմական գործի մեջ մարզված մարդ, այլև, ինչքան չլիներ, նաև գրող էր, սպայության կենցաղի վերաբերյալ նրա պատմվածքները, որոնք տպվում էին «Նիվա»-ի[1] հավելվածներում, հաճույքով էին կարդացվում. և քանի որ գրող էր, ուրեմն, այնուամենայնիվ, կուլտուրական մարդ էր։

Հանրակացարանում թունդ ագիտացիա էր մղվում Կրասնովի օգտին։ Նրա կերպարի առջև նսեմանում էին մյուս գեներալների անունները։ Կրասնովին կողմնակից սպաները Աֆրիկան Բոգաևսկու մասին շշնջալով լուրեր էին տարա-

[1] «Նիվա» — պատկերազարդ շաբաթաթերթ (ամսագիր), որ հրատարակվում էր Պետերբուրգում, 1870—1917 թթ.։

ծում, որ իբր թե Բոգաևսկին ու Դենիկինը մի շաշկա-լոժկա են, ու եթե Բոգաևսկին ատաման ընտրվի, ապա հենց որ ջախջախեն բոլշևիկներին ու մտնեն Մոսկվա, վե՛րջ կլինի կազակական բոլոր արտոնություններին և ինքնավարությանը։

Կային նաև Կրասնովի հակառակորդներ։ Մի ուսուցիչ դելեգատ փորձում էր արատավորել գեներալի անունը, բայց անհաջող։ Ուսուցիչը մտնում էր դելեգատների սենյակները, թունալից կերպով, մոծակի պես բզզում կազակների մազակալած ականջներին.

— Կրասնո՞վը։ Եվ քոսոտ գեներալ է, և անպետք գրող։ Պալատում թրև եկած, քծնող մարդ է։ Մի մարդ, որը ուզում է, այսպես ասած, թե՝ ազգային կապիտալ ձեռք բերել և թե՝ դեմոկրատական անմեղություն պահպանել։ Ա՛յ, կտեսնեք, Դոնը կծախի հենց առաջին գնորդին։ Գծուծ մարդ է։ Իբրև քաղաքագետ, զրոյի է հավասար։ Պետք է Ագեևին ընտրել։ Նա բոլորովին ուրիշ մարդ է։

Բայց ուսուցիչը հաջողություն չէր գտնում։ Ու երբ, մայիսի մեկին, ժողովի բացման երրորդ օրը, գոչում էին.

— Հրավիրե՛լ գեներալ Կրասնովին։

— Խնդրում ենք...

— Խոնարհաբար...

— Թող գա՛։

— Մեր պարծա՞նքն է։

— Թող գա պատմի մեզ իր կյանքից— ամբողջ ընդարձակ դահլիճը թնդաց։

Սպաները ուժգին ծափահարեցին, ու, նայելով նրանց, թույլ, ցածրաձայն ծափահարեցին նաև կազակները։ Նրանց սև, աշխատանքից կոշտացած ձեռներից չոր, հքճքան, կարելի է ասել՝ նույնիսկ անհաճելի ձայն էր ստացվում, որը խորապես տարբերվում էր ծափահարությունների այն մեղմ երաժշտությունից, որ առաջացնում էին օրիորդների ու տիկինների, սպաների և վերնասրահում ու միջանցքներում հավաքված աշակերտների ձեռնափերի փափկիկ բարձիկները։

Իսկ երբ հանդիսավոր կերպով, կորովի տեսքով բեմ եկավ բարձրահասակ, իր տարիքին անհամապատասխան

վայելչատես, գեղեցիկ գեներալը, որ համազգեստով էր, խաչերի ու մեդալների խիտ ծածկոցով, էպոլետներով և գեներալական այլ տարբերանշաններով,— դահլիճը ծածկվեց ծափերի ալյակներով, բացականչություններով։ Ծափերը օվացիայի վերածվեցին։ Ցնծության փոթորիկ բարձրացավ դելեգատների շարքերից։ Այդ գեներալի մեջ, որ կանգնել էր գրգռված, հուզված դեմքով ու նկարվելու դիրք ընդունած, շատերը տեսան կայսրության երբեմնի հզորության աղոտ արտացոլումը։

Պանտելեյ Պրակոֆևիչը արտասվեց ու երկար խնչում էր գլխարկից հանած կարմիր թաշկինակի մեջ։ «Ամա՛ թե գեներալ է, հա՛-ա։ Իսկույն երևում է, որ կարգին մարդ է։ Ոնց որ կայսրն ինքը, երևելի տեսքով է։ Ասես նման լինի հանգուցյալ Ալեքսանդրին»,— մտածում էր նա՝ գորովագին դիտելով բեմի վրա կանգնած Կրասնովին։

Ժողովը, որ կոչվեց «Դոնի փրկության ժողով», ընթանում էր անշտապ։ Ժողովի նախագահ յասավուլ Յանովի առաջարկով որոշում ընդունվեց ուսադիրներ և զինվորական կոչման համապատասխան բոլոր տարբերանշանները կրելու մասին։ Կրասնովը հանդես եկավ փայլուն, վարպետորեն հորինված ճառով։ Նա զգացված խոսում էր «բոլշևիկների կողմից անարգված Ռուսաստանի» մասին, նրա «նախկին հզորության», Դոնի բախտի մասին։ Պատկերելով առկա դրությունը, կարճ շոշափեց գերմանական օկուպացիան և աղմկալից հավանություն առաջացրեց, երբ ճառը վերջացնելիս պաթոսով խոսեց բոլշևիկների պարտությունից հետո Դոնի մարզի ինքնուրույն գոյության մասին։

— Կազակ ներկայացուցիչների տիրակալ Ժողովը կկառավարի՛ Դոնի մարզը։ Ռևոլյուցիայով ազատագրված կազակությունը կվերականգնի կազակական կյանքի ամբողջ հինավուրց, սքանչելի կացութաձևը, և մենք, ինչպես հնում մեր նախնիները, լիահնչուն, հաստատուն ձայնով կասենք՝ «Բարև, սպիտակ ցար, դու կայծքարե Մոսկվայում ես, իսկ մենք՝ կազակներս, խաղաղ Դոնում»։

Մայիսի 3-ին, երեկոյան նիստում, հարյուր յոթանասուն ընդդեմ երեսունի և տասը հոգու ձեռնպահության կանոնով ատաման ընտրվեց գեներալ-մայոր Կրասնովը։

ЛИЧНАЯ

յասավուլի ձեռքից նա չընդունեց ատամանական փետրազարդ գավազանը՝ առաջադրելով մի պայման—հաստատել իր կողմից ժողովին առաջարկված հիմնական օրենքները և իրեն օժտել ատամանական անսահմանափակ իշխանությամբ։

— Մեր երկիրը կործանման նախօրյակն է ապրում։ Ես գավազանը կվերցնեմ միայն այն պայմանով, երբ լիակատար վստահություն լինի դեպի ատամանը։ Իրադարձությունները պահանջում են աշխատել վստահորեն և կատարելիք պարքի բերկրալից գիտակցությամբ, երբ գիտես, որ կազակ ներկայացուցիչների ժողովը, Դոնի կամքի գերագույն արտահայտիչը վստահում է քեզ, երբ կսահմանվեն իրավական հաստատուն նորմաներ՝ ի հակակշիռ բոլշևիկյան անարխիայի և սանձարձակության։

Կրասնովի առաջարկած օրենքները նախկին կայսրության հապճեպորեն շուռ տված, մի քիչ ռեստավրացիայի ենթարկված օրենքներն էին։ Ժողովն էլ ինչպե՞ս չընդուներ դրանք։ Ուրախությամբ ընդունեցին։ Ամեն ինչ, նույնիսկ անհաջող վերափոխված դրոշակը նախկինն էր հիշեցնում. երկայնակի կապույտ, կարմիր ու դեղին զոլեր (կազակներ, գյուղացիներ, կալմիկներ), և միայն կառավարական գերբը, որպես ազգային ոգու արտահայտություն, արմատական փոփոխության ենթարկվեց. գիշատիչ երկգլխանի արծվի փոխարեն, որ տարածել էր թևերը ու չռել մագիլները, պատկերված էր մի մերկ կազակ, փափիսը գլխին, թրով, հրացանով ու հանդերձանքով, գինու տակառին նստած։

Քծնող, միամիտ դելեգատներից մեկը շողոքորթությամբ հարց տվեց.

— Գուցե նորին գերազանցությունը կառաջարկի որևէ բան փոխել կամ ձևափոխել իբրև հիմք ընդունված օրենքների մեջ։

Կրասնովը, ողորմածաբար ժպտալով, իրեն թույլ տվեց կատակ անել։ Նա խոստումնալից կերպով նայեց Ժողովի անդամներին և ընդհանուր ուշադրությունից երես առած մարդու ձայնով պատասխանեց.

— Կարող եմ։ Խոսքս որոշակի, գերբի ու հիմնի վերաբերյալ քառասունութերորդ, քառասունիններորդ և հիսուներորդ հոդվածների մասին է։ Դուք կարող եք ինձ առաջարկել որևէ դրոշակ, բացի կարմիր դրոշակից, որևէ գերբ, բացի հրեական հնգաթև աստղից կամ այլ մասոնական նշանից, և որևէ հիմն, բացի «Ինտերնացիոնալից»։

Ժողովը ծիծաղելով հաստատեց օրենքները։ Ատամանի կատակը հետո երկար ժամանակ բերանից բերան էր անցնում։

Մայիսի 5-ին Ժողովը արձակվեց։ Հնչեցին վերջին ճառերը։ Հարավային զորախմբերի հրամանատար գնդապետ Դենիսովը, Կրասնովի աջ ձեռքը, խոստացավ ամենակարճ ժամանակամիջոցում վերջ տալ բոլշևիկյան խռովությանը։ Ժողովի անդամները ցրվեցին հանգստացած, թե՛ ատամանի հաջող ընտրությամբ և թե՛ ռազմաճակատից ստացվող ամփոփագրերով ուրախացած։

Պանտելեյ Պրակոֆևիչը Դոնի մայրաքաղաքից գնում էր խորին հուզմունքով, բուռն բերկրանքով լեցուն։ Նա հաստատ համոզված էր, որ փետրազարդ գավազանը հուսալի ձեռք է ընկել, որ շուտով կջարդեն բոլշևիկներին, և իր զավակները տուն կվերադառնան։ Ներունին նստել էր վագոնի պատուհանի մոտ, հենվել փոքրիկ սեղանին. ականջներում դեռ հնչում էին Դոնի հիմնի հրաժեշտի ձայները, կենարար խոսքերը թափանցում էին մինչև գիտակցության խորքը, ու թվում էր, որ իրոք, ինչպես հարկն է, «շարժվել, հուզվել է խաղաղ Դոնը ուղղափառ»։

Բայց Նովոչերկասկից մի քանի վերստ հեռանալով, Պանտելեյ Պրակոֆևիչը պատուհանից տեսավ բավարական հեծելազորի առաջապահ պոստերը։ Մի խումբ հեծյալ գերմանացիներ երկաթգծի կողքից գալիս էին դեպի գնացքը։ Զինվորները հանգիստ նստել էին թամքերին, պարարտ, լայնագավակ ձիերը թափահարում էին կարճ կտրած պոչերը, պլպլում էին պայծառ արևի տակ։ Թեքվելով պատուհանին, տխրությամբ կիտելով հոնքերը, Պանտելեյ Պրակոֆևիչը նայում էր, թե ինչպես գերմանական ձիերի սմբակները հաղթականորեն, վեր-վեր թռչելով, կոխոտում են կազակական հողը, ու հետո երկար, տխուր կուչ էր գալիս, ֆրստում՝ լայն մեջքը դարձնելով դեպի պատուհանը։

II

Դոնի մարզից Ուկրաինայի վրայով սլանում էին գնացքները, կարմիր վագոններով ցորենի ալյուր, յուղ, ձու, եղներ տանում Գերմանիա։ Վագոնների հարթակների վրա կանգնած էին լինում գերմանացիներն անհովար գլխարկներով, գորշկապույտ սերթուկներով, հրացանների ծայրերին ամրացված սվիններով։

Դեղին կաշուց կարված, լավորակ, պայտած կրունկներ ունեցող գերմանական սապոգները տոփանում էին Դոնի ճանապարհները, բավարական հեծելազորը ջրում էր ձիերը Դոնում... Իսկ Ուկրաինայի սահմանում երիտասարդ կազակները, որոնք Պերսիանովկայում հենց նոր էին ավարտել ուսուցումը ու ծառայության կանչվել, կռվում էին պետլյուրականների դեմ։ Դոնի կազակական 12-րդ, նոր հավաքած գնդի համարյա կեսը կոտորվեց Ստարոբելսկի մոտ՝ ուկրաինական տերիտորիայից մի ավելորդ կտոր նվաճելով մարզի համար։

Հյուսիսում Ուստ-Մեդվեդիցկայա ստանիցան ձեռքից ձեռք էր անցնում. Միրոնովը Գլազունովսկայա, Նովո-Ալեքսանդրովսկայա, Կումիլժենսկայա, Սկուրիշենսկայա և այլ ստանիցաների խուտորներից իր մոտ հավաքված կարմիրգվարդիականների ջոկատով գրավում էր այն, իսկ մի ժամից հետո սպա Ալեքսեևի սպիտակ պարտիզանների ջոկատը նրան դուրս էր քշում, ու փողոցներում երևում էին ջոկատի կադրերը կազմող գիմնազիստների, ռեալականների, սեմինարիստների շինելները։

Հյուսիսում Վերին Դոնի կազակները հոծ խմբերով ստանիցայից ստանիցա էին անցնում։ Միրոնովը հեռանում էր Սարատովի նահանգի ուղղությամբ։ Կարմիրները թողել էին Խոպերի համարյա ամբողջ օկրուգը։ Ամառվա վերջում Դոնի բանակը, որ բաղկացած էր զենք կրելու ընդունակ ամեն հասակի կազակներից, կանգ առավ սահմանների վրա։ Ճանապարհին վերակազմակերպվելով, Նովոչերկասկից ժամանող սպաներով համալրված, բանակը իսկական բանակի բնույթ էր ստանում. միացվում էին ստանիցաներից եկած, փոքրաթիվ գուգազները. վերականգնվում էին առաջվա կանոնավոր գնդերը՝ գերմանական պատերազմից ողջ մնացած նախկին կազմով. գնդերից դիվիզիաներ էին կազմվում. շտաբներում խորունժիներին փոխարինեցին փորձառու գլխդապետները. հետզհետե փոխվեց նաև պետերի կազմը։

Ամառվա վերջում մարտական միավորները, որոնք բաղկացած էին Միգուլինսկու, Մեշկովսկու, Կազանսկու և Շումիլինսկու կազակների հարյուրյակներից, գեներալ-մայոր Ալֆերովի հրամանով անցան Դոնի մարզի սահմանը ու գրավելով Դոնեցկոյեն,— Վորոնեժի նահանգի սահմանամերձ առաջին ավանը,— պաշարեցին գավառական Բոգուչար քաղաքը։

Արդեն չորս օր էր, որ Տատարսկիի կազակների հարյուրյակը Պետրո Մելեխովի հրամանատարությամբ խուտորների ու ստանիցաների միջով գնում էր Ուստ-Մեդվեդիցկու օկրուգի հյուսիսային կողմը։ Հեռվում, նրանց աջ կողմից, առանց կռվի բռնվելու, Միրոնովը շտապ նահանջում էր դեպի երկաթգիծը։ Ամբողջ ժամանակվա ընթացքում նրանք չտեսան հակառակորդին։ Օրվա ընթացքում քիչ տարածություն էին անցնում։ Պետրոն, ինչպես և բոլոր կազակները, առանց պայմանավորվելու որոշել էին, որ հարկ չկա շտապել դեպի մահը, և օրվա ընթացքում երեք տասնյակ վերստից ավելի չէին անցնում։

Հինգերորդ օրը մտան Կումիլժենսկայա ստանիցան։ Դունդուկով խուտորում անցան Խոպերը։ Մոծակները մարմաշե վարագույրի նման պատել էին մարգագետինը։ Քանի գնում սաստկանում էր նրանց անլռելի բզզոցը։ Բյուրավոր մոծակները թռչկոտում, պտույտ էին գալիս, լցվում հեծյալների ու ձիերի ականջները, աչքերը։ Ձիերը նեղվում էին, փնչում, կազակները պաշտպանվում էին ձեռներով, անդադար ծխում իրենց տնտեսություններում մշակված ծխախոտը։

— Ա՛յ քեզ օյին, անիծված մոծակներ,— բղավեց Խրիստոնյան, թևքով սրբեց արցունքված աչքերը։

— Մտավ ա՞չքդ, հա՞,— ժպտաց Գրիգորին։

— Աչքս կսկծում է։ Ուրեմն թունավոր է այս զզվելի մժղուկը։

Ճմլելով կարմրած կոպը՝ Խրիստոնյան կոշտ մատը

տարավ աչքի խնձորի վրայով. շրթունքներն ուռցրած, ձեռքի արտաքին կողմով երկար տրորեց աչքը։

Գրիգորին գնում էր նրա կողքից։ Արշավանքի դուրս գալու օրից նրանք միասին էին լինում։ Նրանց միանում էր նաև Անիկուշկան, որը վերջին ժամանակներում հաստացել էր ու դրանով է՛լ ավելի էր կնոջ նմանվում։

Ջոկատը լրիվ հարյուրյակից էլ պակաս էր։ Պետրոյի օգնականը վախմիստր Լատիշևն էր, որը Տատարսկի խուտորի փեսա էր դարձել։ Գրիգորին դասակի հրամանատար էր։ Նրա դասակի համարյա բոլոր կազակները խուտորի ստորին ծայրից էին. դրանց թվին էին պատկանում Խրիստոնյան, Անիկուշկան, Ֆեդոտ Բոդովսկովը, Մարտին Շամիլը, Իվան Տամիլինը, երկարահասակ Բորշևը, անճոռնի ու դանդաղկոտ Զախար Կովալյովը, Պրոխոր Զիկովը, գնչուի ազգական Մերկուլովը, Եպիֆան Մակսաևը, Եգոր Սինիլինը ու էլի մի տասնհինգ հոգի հասակակից երիտասարդներ։

Երկրորդ դասակի հրամանատարը Նիկոլայ Կոշևոյն էր, երրորդինը՝ Յակով Կոլովեյդինը և չորրորդինը՝ Միտկա Կորշունովը, որ Պատյոլկովի մահապատժից հետո գեներալ Ալֆերովի հրամանով շտապ կարգով ավագ ուրյադնիկի կոչում էր ստացել։

Հարյուրյակը ընթանում էր արագ վարգով։ Ճանապարհը շրջանցում էր ջրով լցված ճահիճները, իջնում բոշխով և ուռենիներով ծածկված ձորահովիտները, ձգվում մարգագետիններով։

Հետին շարքերում բամբ ձայնով քրքջում էր Յակով Պատկովան, բարակ ձայնով նրան արձագանքում էր Անդրյուշկա Կաշուլինը, որ նույնպես ուրյադնիկի թելեր էր ստացել, դրանք վաստակել Պատյոլկովի զինակիցների արյունը թափելու համար։

Պետրո Մելեխովը ու Լատիշևը իրար կողքի էին գնում։ Նրանք կամացուկ զրուցում էին։ Լատիշևը տնտղում էր նոր Բրափունջը, Պետրոն ձախ ձեռքով թիմարում էր ձին, քորում դրա ականջների արանքը։ Ուռուցիկ այտեր ունեցող Լատիշևի դեմքին խաղում էր ժպիտը, նոսր բեղերի տակից երևում էին ծխախոտից սև-դեղնավուն գույն ստացած, սուր պսակներ ունեցող ատամները։

Բոլորի ետևից խայտաբղետ, փոքրիկ զամբիկով գնում էր Անտիպ Ավդեևիչը, Փչանի տղան, որին կազակները «Անտիպ Փչանով» մականունն էին կպցրել։

Կազակներից ոմանք զրուցում էին, ոմանք էլ, խախտելով շարքերը, գնում էին հինգ մարդ իրար կողքի, մնացածները ուշադրությամբ դիտում էին անծանոթ վայրերը, ալեբրթռուն լճակներով կտրատված մարգագետինը, բարդիների և ուռիների կանաչ ցանկը։ Հանդերձանքից երևում էր, որ կազակները հեռավոր վայրեր էին գնում. թամքերի տոպրակները ուռճացած էին իրերից, հակերը լիքն էին, ամեն մեկի շինելը հոգատարությամբ կապված էր թամքի ետին կողմի փոկերով։ Նույնն էր ցույց տալիս նաև ձիասարքը. յուրաքանչյուր փոկը մերակված էր ձյութալարով, ամեն ինչ ամուր կարված էր, քսցրած, նորոգած։ Եթե մի ամիս առաջ հավատում էին, թե պատերազմ չի լինի, ապա այժմ գնում էին այն հլու, անուրախ գիտակցությամբ, որ արյունահեղությունն անխուսափելի է։ «Այսօր կաշիդ վրստ է, իսկ վաղը գուցե ագռավները չոլում դաբաղեն այն»,— մտածում էր ամեն մեկը։

Անցան Կրեպցի խուտորից։ Աջ կողմից երևում էին եղեգնով ծածկված, իրարից հեռու խրճիթները։ Անիկուշկան շալվարի գրպանից հանեց մի կարկանդակ ու գիշատչաբար բանալով մանր, կտրիչ ատամները, կծեց դրա կեսը, սկսեց ծամել, նապաստակի պես անհանգիստ շարժել ծնոտները։

Խրիստոնյան շեղակի նայեց նրան։

— Սովա՞ծ ես, հը՞։

— Բա ո՞նց... Կնկաս թխածն է։

— Ա՛մա թե զիտվում ես, հա՛-ա։ Ուրեմս քո փորը խոզի փոր է։— Նա դարձավ դեպի Գրիգորին և ինչ-որ բարկացկոտ ու գանգատվող ձայնով շարունակեց.— ինչքա՛ն է զիտվում գրողի տարածը։ Ոնց էլ տեղավորո՛ւմ է փորի մեջ։ Այս քանի օրը մտիկ եմ անում նրան ու թուքս սառում է. ինքը, ուրեմս, ջանով չէ, ամա լափում է ու լափում, ոնց է՛լ չի տրաքվում։

— Իմ ունեցածն եմ ուտում, աղբեր։ Իրիկունը մի ոչխար կուտեմ, առավոտն էլ շուտ կսովեմ։ Մենք ամեն մի

համով բան անուշ ենք անում։ Մեզ ամեն բան էլ օգուտ է տալիս, ինչ որ բերաններս է գալիս։

Անիկուշկան քոքոում էր ու Գրիգորիին աչքով անում Խրիստոնյայի կողմը. վերջինս բարկացած թքեց։

— Պետրո Պանտելեև, ո՞րտեղ ես գիշերում։ Տեսնո՞ւմ ես, ձիերը բեզարել են,— բղավեց Տամիլինը։

Նրան պաշտպանեց Մերկուլովը.

— Գիշերելու ժամանակն է։ Արևը մայր է մտնում։

Պետրոն թափահարեց մտրակը։

— Կգիշերենք Կլյուչիում։ Գուցե թե մինչև Կումիլգի էլ հասնենք։

Մերկուլովը ժպտաց սև, խուճուճ մորուքի տակին, փըսփսաց Տամիլինի ականջին.

— Ուզում է Ալֆերովի աչքը մտնել, շա՜-ան-որդի. վռազում է...

Մեկը Մերկուլովի մազերը խուզելիս չարաճճիաբար փըշացրել էր նրա փարթամ մորուքը, կարճացրել, ծուռ սեպի տեսք էր տվել դրան։ Մերկուլովը մի նոր, ծիծաղելի տեսք ուներ, հենց այդ էլ մշտական կատակների առիթ էր դարձել։ Տամիլինն այստեղ էլ չզսպեց իր լեզուն.

— Իսկ դու աչք մտնող չե՞ս։

— Ի՞նչ եմ արել որ։

— Մորուքդ գեներալի պես ես կտրել։ Երևի կարծում ես, որ եթե գեներալի մորուքի պես կտրեցիր, քեզ միանգամից դիվիզիա՞ կտան, հա՞։ Փայըդ շատ չի՞ լինի։

— Հիմա՛ր, սատանա՛։ Քեզ լուրջ բան են ասում, իսկ դու ա՛յ թե որ կողմն ես ծռում։

Ծիծաղելով ու խոսակցելով մտան Կլյուչի խուտորը։ Բնակարաններ գտնելու համար առաջուց ուղարկված Անդրյուշկա Կաշուլինը ծայրամասի մի տան մոտ դիմավորեց հարյուրյակին։

— Մեր դասակը թող գա իմ ետևից։ Առաջին դասակի համար—հրեն այն երեք տունը, երկրորդին—ձախ կողմը, երրորդին—հրեն այն տունը, որտեղ ջրհոր կա, ու էլի մյուս չորս տունը, որ իրար կողքի են։

Պետրոն ձիով մոտեցավ նրան։

— Ոչինչ չլսեցի՞ր։ Հարցրի՞ր։

— Այստեղ նրանց հոտն էլ չի գալիս։ Ամա գիտե՞ս ինչ, ա՛յ տղա, այստեղ անհաշիվ մեղր կա։ Մի պառավ երեք հարյուր փեթակ ունի։ Գիշերս անպատճառ մեկնումեկը կճղենք։

— Դեհ, դեհ, մի՛ դուրս տա, թե չէ ես քեզ ճղել ցույց կտամ։

Պետրոն նոթերը կիտեց, մտրակեց ձին։

Տեղավորվեցին։ Ձիերը կապեցին։ Մթնեց։ Տանտերերը կազակներին իրիկնահաց տվին։ Բակերում նախորդ տարում կտրված լաստենիների վրա նստոտեցին եկվորներն ու խուտորի կազակները։ Խոսեցին դեսից-դենից ու գնացին քնելու։

Առավոտյան մեկնեցին խուտորից։ Համարյա հենց Կումիլժենսկու մոտ հարյուրյակի ետևից հասավ մի հատուկ սուրհանդակ։ Պետրոն բացեց ծրարը, երկար կարդաց՝ ճոճվելով թամքի վրա, թուղթը լարվածորեն ձեռքում պահած,— ասես դա ծանրություն լիներ։ Գրիգորին մոտեցավ նրան։

— Հրամա՞ն է։

— Ըհը՛մ։

— Ի՞նչ են գրում։

— Նոր բան... Հրամայում են հանձնել հարյուրյակը։ Իմ բոլոր հասակակիցներին ետ են կանչում, Կազանկայում Քսանութերորդ գունդ են կազմում։ Հրետանավորներին ու գնդացրորդներին է՛լ են կանչում։

— Բա մնացածնե՞րը։

— Այստեղ գրված է՝ «Արժենովսկում անցնել Քսաներկուերորդ գնդի հրամանատարի տրամադրության տակ։ Անմիջապես գնալ»։ Մի տե՛ս, է՛,— «անմիջապե՞ս»։

Մոտեցավ Լատիշևը, Պետրոյի ձեռքից վերցրեց հրամանը։ Թուղթը շեղակի պահած, շարժելով հաստ, պիրկ շրթունքները, կարդաց հրամանը։

— Գնացի՛ք,— բղավեց Պետրոն։

Հարյուրյակը շարժվեց, գնաց քայլքով։ Կազակները, ետ դարձնելով գլուխները, ուշադրությամբ նայում էին Պետրոյին, սպասում, թե նա ինչ կասի։ Կումիլժենսկում Պետրոն հայտարարեց հրամանը։ Տարեց կազակներն իրար անցան պատրաստվելով ետ գնալու։ Որոշեցին ցերեկը հանգստա-

նալ ստանիցայում, իսկ մյուս օրվա լուսաբացին մեկնել ուր հարկն է։ Պետրոն, որ ամբողջ օրը առիթ էր փնտրում եղբոր հետ խոսելու, գնաց նրա գրաված բնակարանը։

— Եկ անցնենք հրապարակ։

Գրիգորին լուռ դուրս ելավ դարպասից։ Միտկա Կորշունովը հասավ նրանց ետևից, բայց Պետրոն սառն տոնով դիմեց նրան.

— Գնա, Միտրի։ Ուզում եմ մի քիչ խոսել աղբորս հետ։

— Կարելի է, լավ,— Միտկան հասկացողաբար ժըպտաց, ետ մնաց։

Գրիգորին, որ շեղակի նայում էր Պետրոյին, տեսավ, որ նա ուզում է խոսել ինչ-որ մի լուրջ բանի մասին։ Մի կողմ թողնելով իր կռահած այդ դիտավորությունը, նա սկսեց խոսել շինծու աշխուժությամբ.

— Զարմանալի է. տնից ընդամենը հարյուր վերստ ենք հեռացել, ամա այստեղ ժողովուրդն ուրիշ տեսակ է։ Այնպես չեն խոսում, ինչպես մեզ մոտ, տներն էլ ուրիշ տեսակ են, ոնց որ թե պոլիպոնների[1] տներ լինեն։ Տեսնո՞ւմ ես, դարպասները տախտակե կտուր ունեն, ոնց որ մատուռ։ Մեզ մոտ այդպես չէ։ Հետո, տես,— նա ցույց տվեց մոտակա մի հարուստ խրճիթ,— տան չորս բոլորը գետնի վրա նույնպես տախտակ է քաշած. երևի նրա համար, որ փայտը չփտի, հը՞։

— Թո՛ղ, է՛,— Պետրոն կնճռոտեց դեմքը,— դու դրա մասին խոսելու միտք չունես... Կա՛ց, եկ կանգնենք ցանկապատի տակ։ Մարդիկ մտիկ են տալի։

Հրապարակից անցնող կանայք ու կազակները հետաքրքրությամբ նայում էին նրանց։ Կապույտ վերնաշապկով, առանց գոտու, հնությունից խունացած գլխարկով մի ծերունի կանգ առավ։

— Հանգստանո՞ւմ եք։

— Ուզում ենք հանգստանալ։

— Ձիերի համար վարսակ կա՞։

— Մի քիչ կա,— պատասխանեց Պետրոն։

— Ուզում եք եկեք ինձ մոտ, մի երկու կոտ կտամ։

1 Պոլիպոններ — հնածեսների մականունն է (Մ. Թ.)։

— Քրիստոս փրկե, պապի։

— Սուրբ աստված... եկեք։ Հրե՛ն իմ տունը, որ կանաչ թիթեղով է ծածկված։

— Դու ինչի՞ մասին ես խոսելու,— մռայլվելով, անհամբերությամբ հարցրեց Գրիգորին։

— Ամեն բանի մասին։— Պետրոն մի տեսակ մեղավոր ու բռնազբոսիկ ժպիտ ցույց տվեց, բերանի անկյունով բռնեց ցորնագույն բեղի ծայրը։— Ժամանակն այնպես է, Գրիշատկա, որ գուցե էլ չտեսնվենք...

Եղբոր նկատմամբ անդիտակցական թշնամանքը, որ քիչ մնաց համակեր Գրիգորիին, հանկարծակի չքացավ Պետրոյի ողորմելի ժպիտից և վաղուցվա, մանկությունից մնացած «Գրիշատկա» մտերմական անունից։ Պետրոն էլի բռնազբոսիկ կերպով, երկար ժպտալով, փաղաքուշ նայում էր եղբորը։ Շրթունքների շարժումով նա ջնջեց ժպիտը, դեմքին խոժոռ արտահայտություն տվեց, ասաց.

— Տես թե ոնց են ժողովրդին բաժան-բաժան արել, իժե՛ր։ Ոնց որ թե գութանով վար անելիս լինեն,— մեկը դեսն է գնում, մյուսը դենը, ամեն մեկն իր խոփն է սրում։ Անիծվա՛ծ կյանք է, ժամանակն էլ սարսափելի է։ Մեկը մյուսին չի է՛լ ճանաչում... Ա՛յ դու,— Պետրոն շուռ տվեց խոսակցությունը,— դու իմ հարազատ եղբայրն ես, իսկ ես քեզ չեմ հասկանում, աստված վկա։ Տեսնում եմ, որ դու մի տեսակ հեռանում ես ինձանից... Ճի՞շտ եմ ասում,— ու ինքն իրեն պատասխանեց,— Ճի՛շտ։ Դու մոլորվում ես... Վախենում եմ, որ վազ կտաս կարմիրների մոտ... Դու, Գրիշատկա, մինչև հիմի ինքդ քեզ չես գտել։

— Իսկ դու գտե՞լ ես,— հարցրեց Գրիգորին, նայելով, թե ինչպես խոպերի աննշմար գծից դենը, կավճասարի հեռվում մայր է մտնում արևը, վառվում վերջալույսը, ու այնտեղից սահում են ամպերի խանձված, սև փաթիլները։

— Գտել եմ։ Ես իմ ճամփեն եմ ընկել։ Եվ դա չեմ կորցնի։ Ե՛ս, Գրիշկա, քեզ պես դես ու դեն չեմ ընկնի։

— Է՞հ,— Գրիգորիի դեմքով սահեց շինծու, չար ժպիտը։

— Չե՛մ ընկնի,— Պետրոն բարկացկոտ ցնցեց բեղերը, արագ թարթեց աչքերը, ասես կուրացել էր։— Վիզս որ թոկ գցես, էլի չես կարող ինձ քարշ տալ կարմիրների մոտ։ Կա-

զակությունը նրանց դեմ է, ես էլ դեմ եմ։ Չեմ ուզում նրան հակառակ գնալ ու չեմ գնա։ Որ դրուստն ասեմ... միտք էլ չունի նրանց կողմն անցնել, իմ ու նրանց ճամփաները տարբեր են։

— Թո՛ղ այդ խոսակցությունը,— հոգնած խնդրեց Գրիգորին։

Ամուր քայլերով, ուսերը ճոճելով, նա առաջինը գնաց դեպի իր բնակարանը։

Դարպասի մոտ Պետրոն ետ մնաց, հարցրեց.

— Դու ասա, որ ես գիտենամ... ասա. Գրիշկա, հո չե՞ս անցնի նրանց կողմը։

— Հազիվ թե... Չգիտեմ։

Գրիգորին պատասխանեց դժկամորեն, աչարկոտությամբ։ Պետրոն հոգոց հանեց, բայց էլ ոչինչ չհարցրեց։ Նա հուզված, գլխիկոր հեռացավ։ Թե նրա և թե Գրիգորիի համար մի բան բոլորովին պարզ էր. այն շավիղները, որ առաջ միացնում էին նրանց, այժմ պատել էին անանցելի մացառներով, անկարելի էր իմանալ Գրիգորիի գաղտնի մտքերը։ Այդպես ձորակի վերևից, թեք լանջով ձգվում է այծերի կճղակներով հարթված, ոլոր-մոլոր արահետը, ու հանկարծ շուռ գալով, չքանում է ձորակի հատակում, ասես կտրվում է ու էլ ճանապարհ չկա, առջևում պարսպվել է քոլերի անանց մացառուտը, փակուղի առաջացրել։

...Հետևյալ օրը Պետրոն հարյուրյակի կեսը ետ տարավ դեպի Վեշենսկայա։ Մնացածները, երիտասարդները, Գրիգորիի հրամանատարությամբ գնացին Արժենովսկու կողմը։

Առավոտից անխնա վառում էր արևը։ Տափաստանը եփվում էր գորշ մուժում։ Ետևում կապույտին էին տալիս խոպերին մոտիկ զմրուխտաքող լեռնաճյուղերը, փռվել էին շաֆրանե ավազուտները։ Հեծյալների տակին շորորալով քայլում էին քրտնած ձիերը։ Կազակների դեմքերը արևից սևացել, գունաթափվել էին։ Թամքերի բարձերը, ասպանդակները, սանձերի մետաղե մասերը այնքան էին տաքացել, որ չէր կարելի շոշափել։ Անտառում էլ զովություն չէր մնացել,— խեղդուկ տոթ էր ու անձրև էր սպասվում։

Մռայլ տխրությունը գերել էր Գրիգորիին։ Ամբողջ օրը նա օրորվում էր թամքի վրա, անկապ մտածում գալիքի մասին. մտքում տնտղում էր Պետրոյի խոսքերը՝ ինչպես տրնտրղում են մանյակի ուլունքները, ու թախծում էր դառնապես։ Օշինդրի բարկ, շշմեցնող բույրը չորացնում էր նրա շուրթերը, ճանապարհը մշուշվել էր տապով։ Արևի տակ երեսն ի վեր փռվել էր թուխ-ոսկեհուր տափաստանը։ Սուրում էին չոր քամիները, ճմլում փշոտ խոտաբույսերը, քշում ավազն ու փոշին։

Իրիկնադեմին թափանցիկ մուժը վարագուրեց արևը։ Երկինքը խամրեց, գորշացավ։ Արևմուտքում խիտ ամպեր երևացին։ Նրանք կանգնած էին անշարժ, կախ ընկած ծայրերով կութնել էին հորիզոնի անորոշ, նրրահյուս գծին։ Հետո սահեցին հողմավար, ահեղորեն, բոլորովին ցածրից քարշ տալով թուխ պոչերը, շաքարի նման սպիտակին էին տալիս նրանց կլորավուն կատարները։

Ջոկատը երկրորդ անգամ անցավ Կումիլգա գետակը, մտավ բարդու անտառի գմբեթի տակ։ Տերևները քամուց երերվում էին, կաթնա-կապտավուն գույն առնում, ներդաշնակորեն ու թավ սոսափում։ Հեռո՞ւ-հեռվում, խոպերի մյուս կողմում ամպի բիլ-ճերմակ փեշի տակից թափվում էր ու գետինը հատում շեղակի, կարկտախառն անձրևը, որ գոտևորված էր ծիածանի նրբերանգ լաթագոտիով։

Գիշերեցին մի փոքրիկ, ետ ընկած խուտորում։ Գրիգորին տեղավորեց ձին, գնաց մեղվանոց։ Դրա տերը զարմած, գանգրահեր մի կազակ, մորուքից դեն տալով մեղուները, անհանգիստ ասաց Գրիգորիին.

— Այս փեթակը նոր եմ գնել։ Բերեցի այստեղ, ու չգիտեմ ինչու բոլոր մատղաշ մեղուները կոտորվեցին։ Տեսնո՞ւմ ես, մեղուները տանում են նրանց,— կանգ առնելով մի փեթակի,— մեջը փորած գերանի մոտ, նա ցույց տվեց դրա անցքը. մեղուները անդադար դուրս էին բերում մատղաշների փոքրիկ դիակները, դրանք տանում խուլ բզզոցով։

Տանտերը ցավագին կկոցեց խարտյաշ աչքերը, դառնացած ճպճպացրեց շրթունքները։ Նա քայլում էր անհամաչափ, անհանգիստ, ու անճոռնի կերպով թափահարում ձեռները։ Լինելով չափից դուրս արագաշարժ, կոպտամարմին, կցկտուր ու հապճեպ շարժումներ կատարող, նա ինչ-որ անհանգստություն էր առաջացնում և ավելորդ էր թվում

մեզվանոցում, ուր մեղուների հսկայական կոլեկտիվը չափած ու ձևած, կանոնավոր, դանդաղ ու խելացի աշխատանք էր կատարում։ Գրիգորին անբարյացակամության թեթև զգացումով հետամուտ էր լինում նրան։ Այդպիսի զգացում էր ակամայից առաջացնում պոռթկումներով լեցուն, տարեց, թիկնավետ կազակը, որը ճռճռան ձայնով ու արագ էր խոսում։

— Այս տարի մեղուն լավ է հյութեր հավաքում։ Ծոթորը հիանալի է ծաղկել, նրանից են հյութ բերում։ Արկղերն ավելի լավ են փեթակի համար, քանց քոթուկները։ Սկըսում եմ արկղեր բանեցնել...

Գրիգորին սոսնձի պես կպչուն մեղրով թեյ էր խմում։ Մեղրից զգացվում էր ծոթորի, ախլախնձորի, մարգածաղկի քաղցր բույրը։ Թեյը լցնում էր տանտիրոջ դուստրը,— առանց ամուսնու մնացած բարձրահասակ, գեղեցիկ մի կին։ Նրա ամուսինը գնացել էր Միրոնովի հետ, այս պատճառով էլ տանտերը հաճոյակատար, ուշադիր էր Գրիգորիի նկատմամբ։ Նա չէր նկատում, որ դուստրը աչքի տակով, շեշտակի նայում էր Գրիգորիին, սեղմում բարակ, դժգույն շրթունքները։ Կինը ձեռքը տարավ թեյամանին, ու Գրիգորին տեսավ նրա թևատակի կպրանման սև, խուճուճ մազերը։ Նա մի քանի անգամ բռնեց կնոջ զննող, հետաքրքրվող հայացքը, ու մի անգամ էլ նրան մինչև իսկ այնպես թվաց, թե երբ այդ ջահել կազակուհու աչքերը հանդիպեցին իր աչքերին, նրա այտերը շիկնեցին և շուրթերի անկյուններում թաքցրած քմծիծաղ նկատվեց։

— Ես ձեզ համար օթախում տեղ կգցեմ,— թեյից հետո ասաց նա Գրիգորիին, բարձն ու կարպետը ձեռքին. անցավ նրա կողքից ու կարոտավառ խոստումնալից հայացքով այրեց նրան։ Թափ տալով բարձը, որպես թե ի միջի այլոց ասաց ցածրաձայն ու արագ.— ես կպառկեմ չարդախի տակ... տան մեջ շոգ է, լվերը կծում են...

Գրիգորին հենց որ լսեց տանտիրոջ խոմփոցը, հանեց միայն կոշիկները ու գնաց նրա մոտ։ Կինը իր կողքին նրա համար տեղ զիջեց քարշակը հանած սայլի վրա, ու ոչխարենու մուշտակը գցելով իր վրա, ոտները դիպցնելով Գրիգորիին սկվեց։ Նրա շուրթերը չոր էին, կոշտ սոխի հոտ և

թարմության անաղարտ բույր էին արձակում։ Գրիգորին գլուխը նրա բարակ ու թուխ թևին դրած, պառկեց մինչև լուսաբաց։ Կինը ամբողջ գիշերը նրան ուժով սեղմում էր իրեն, անհագորեն փայփայում, ու քոքռալով, կատակելով, կծոտում, ցավեցնում էր նրա շուրթերը, ու նրա պարանոցի կրծքի և ուսերի վրա թողեց իր համբույրներից առաջացած կապտավուն բծերը ու իր մանր, գազանային ատամների փոքրիկ հետքերը։ Երրորդ աքլորականչից հետո Գրիգորին ուզեց քոչել դեպի օթախը, բայց կինը չէր թողնում։

— Թող, թող, սիրելիս, ջանիկս,— խնդրում էր Գրիգորին՝ ժպտալով սև, կախ ընկած բեղի տակին, մեղմիվ փորձելով ազատվել։

— Մի քիչ է՛լ պառկիր... մի քիչ է՛լ։

— Ախր կտեսնեն, է՛։ Տե՛ս, շուտով կլուսանա։

— Է՛հ, թող լուսանա։

— Բա հա՞յրդ։

— Հերս գիտե։

— Ո՞նց թե գիտե.— Գրիգորիի հոնքերը բարձրացան զարմանքից։

— Այնպե՞ս, էլի...

— Ա՛յ քեզ բան, իսկ նա ո՞րտեղից գիտի։

— Նա, հասկանո՞ւմ ես... Նա երեկ ինձ ասավ, որ եթե աֆիցերը կպչելու լինի, գիշերս քնիր նրա հետ, կակղացրու նրան, թե չէ Գերասկայի պատճառով կտանեն մեր ձիերը և ո՛վ գիտե էլ ինչ կլինի... Մարդս՝ իմ Գերասիմը, Միրոնովի հետ է գնացել...

— Ա-ա-ա՛յ թե ի-ի՛նչ,— Գրիգորին ծիծաղկոտ ժըպտաց բայց ներքուստ վիրավորվեց։

Կինը ցրեց այդ անհաճելի զգացումը։ Սիրաբար շոշափելով Գրիգորիի թևի մկանները, նա ցնցվեց.

— Իմ սիրածն այնպես չի ինչպես դու...

— Բա ինչպե՞ս է նա,— հետաքրքրվեց Գրիգորին՝ զգաստացած աչքերը հառելով գունատվող երկնակամարին։

— Անպետքի մեկն է... թույլ է...— կինը վստահորեն հպվեց Գրիգորիին, նրա ձայնի մեջ չոր արցունքներ էին

զգացվում.— ես նրա հետ ապրել եմ առանց որևէ քաղցրության... Կնկա գործերի մեջ անպետք է նա...

Գրիգորիի առաջ պարզապես բացվում էր ուրիշի մանկականորեն միամիտ հոգին, ինչպես ցողը ներծծելով՝ բացվում է ծաղիկը։ Դա շշմեցնում, թեթև կարեկցություն էր արթնացնում։ Գրիգորին ցավակցությամբ, փաղաքշանքով շոյում էր իր պատահական մտերմուհու թափթփված մազերը, փակում հոգնած աչքերը։

Լուսնի մարող լույսը թափանցում էր չարդախի եղեգնյա կտուրից։ Ընկնող մի աստղ լուսավառվեց ու շնչտակի նետվեց դեպի հորիզոնը՝ ֆոսֆորափայլ, մարող հետք թողնելով մոխրագույն երկնքի վրա։ Լճակում կռթկռթաց մարի բաղը, տարփալից ձայնով նրան արձագանքեց արուն։

Գրիգորին թեթևացած, քաղցր հոգնածությամբ համակված մարմնով գնաց օթախը։ Շուրթերի վրա զգալով կնոջ շուրթերի բարկ բույրը, նա քնեց՝ հիշողության մեջ սիրաբար պահելով կազակուհու տենչավառ մարմինը և դրա բույրը,— ծաղկաբույր մեղրի, քրտինքի ու ջերմության բարկ բույրը...

Երկու ժամից հետո կազակներն արթնացրին նրան։ Պրոխոր Զիկովը թամբեց նրա ձին, բակից դուրս տարավ։ Գրիգորին հրաժեշտ տվեց տանտիրոջը՝ անտարբերությամբ հանդուրժելով թշնամությամբ մշուշված նրա հայացքը. գըլխով արեց տանտիրոջ աղջկան, որ անցավ դեպի խրճիթը։ Վերջինը նույնպես գլխով արեց՝ մի փոքր ներկած, բարակ շրթունքների անկյուններում վառելով ժպիտը ու ափսոսանքի տարտամ արտահայտությունը։

Գրիգորին գնում էր փողոցով ու ետ էր նայում։ Փողոցը կիսաղեղի ձևով շրջանցում էր այն տունը, ուր գիշերել էր նա, ու տեսավ, թե ինչպես իր փայփայած կազակուհին փոքրիկ, թուխ ձեռքը վահանակի պես աչքերի վերևում պահած՝ նայում է իր ետևից։ Գրիգորին անսպասելիորեն ծագած տխրությամբ ետ էր նայում, փորձում էր պատկերացնել նրա դեմքի արտահայտությունը, նրա ամբողջ կերպարանքը ու չէր կարողանում։ Նա միայն տեսնում էր, որ կազակուհու գլուխը, սպիտակ լաչակով ծածկված, կամացուկ

շուռ է գալիս, աչքերով հետևում իրեն։ Այդպես է շուռ գալիս արևածաղկի գլխիկը՝ հետամուտ լինելով արևի դանդաղ, շուրջանակի ընթացքին։

Միխայիլ Կոշևոյին էտապային կարգով Վեշենսկուց տանում էին ռազմաճակատ։ Նա հասավ Ֆեդոսեևսկայա ստանիցան, այնտեղ ստանիցայի ատամանը նրան պահեց մի օր և հսկողության տակ ուղարկեց Վեշենսկայա։

— Ինչո՞ւ եք ետ ուղարկում,— հարցրեց Միխայիլը ստանիցայի գրագրին։

— Վեշենսկուց կարգադրություն է ստացված,— դժկամ պատասխանեց գրագիրը։

Բանից դուրս եկավ, որ Միշկայի մայրը խուտորի ժողովում ծնկաչոք աղաչել-պաղատել էր ծերունիներին, և սրանք հասարակության կողմից միջնորդել էին, որ Միխայիլ Կոշևոյը որպես ընտանիքի միակ նեցուկ, ձիարած նշանակվի։ Միրոն Գրիգորևիչն ինքը այդ միջնորդությամբ գնացել էր Վեշենսկայա ստանիցայի ատամանի մոտ։ Թախանձագին խնդրել էր բաց թողնել Միշկային։

Ստանիցայի վարչությունում ատամանը գոռաց իր առջև ճակատ կանգնած Միշկայի վրա, հետո ցածրացրեց ձայնը, բարկությամբ վերջացրեց խոսքը.

— Բոլշևիկներին մենք չենք վստահում Դոնի պաշտպանությունը։ Գնա արոտավայրը, կծառայես իբրև ձիարած, հետո կտեսնենք ինչ կլինի։ Տես, շան որդի, խելոք կմնաս, հա՛-ա։ Մո՞րդ եմ խղճում, թե չէ... գնա՛։

Միշկան արդեն առանց ուղեկցորդի գնում էր շոգից թեժացած փողոցներով. շինելի կոլոլը հարում էր նրա ուսը։ Հարյուր հիսուն վերստ քայլելուց հետո նրա ոտները բոլորովին թուլացել էին։ Մինչև երեկո հազիվ հասավ խուտոր, իսկ մյուս օրը հրաժեշտ տալով իր վրա լացող, գգվող մորը, մեկնեց արոտավայր՝ հիշողության մեջ պահելով մոր պառաված դեմքը և նրա գլխի ճերմակած մազափունջը, որ ինքը առաջին անգամ էր տեսնում։

Կարգինսկայա ստանիցայից դեպի հարավ, քսանութ վերստ երկարությամբ ու վեց վերստ լայնությամբ փռված

էր խոպան, երբեք չվարած անձեռնմխելի տափաստանը։ Բազմահազար դեսյատին տարածությամբ այդ հողամասը հատկացված էր ստանիցայի հովատակների արածեցման համար, այս պատճառով էլ արոտավայր էր կոչվել։ Ամեն տարի ս. Գևորգի տոնին Վեշենսկուց, ձմեռային ախոռներից ձիարածները դուրս էին բերում ձմռանը հանգստացած հովատակները, տանում արոտավայր։ Արոտավայրի մեջտեղում ստանիցայի փողով կառուցված էր մի ախոռ ամառային բաց մսուրներով, տասնութ հովատակների համար, կողքին էլ կառուցված էր փայտաշեն մի հանրակացարան՝ ձիարածների, վերակացուի և անասնաբուժակի համար։ Վեշենսկու հողի կազակները բերում էին մայրացու զամբիկներին, դրանց ընդունելու ժամանակ բուժակն ու վերակացուն հետևում էին, որ յուրաքանչյուր զամբիկի բարձրությունը երկու արշինից պակաս չլիներ և նա չորս տարեկանից փոքր չլիներ։ Առողջներից կազմում էին ջոկեր՝ յուրաքանչյուրում քառասուն ձի։ Ամեն մի հովատակ իր ջոկը տանում էր տափաստան՝ խանդոտությամբ հետամուտ լինելով զամբիկներին։

Միշկան գնում էր իր տնտեսության մեջ եղած միակ զամբիկով։ Մայրը նրան ճանապարհելիս զոգնոցով արցունքները սրբելով, ասաց.

— Կարելի է թե գիրանա զամբիկը... Դու սրան լավ պահիր, շատ մի շարչարի։ Մենք պետք է մի ձի էլ ունենանք, շա՛տ է պետք։

Կեսօրին տոթակեզ մուժից դենը, որ սահում էր ձորահովտի վերևում, Միշկան տեսավ հանրակացարանի երկաթե կտուրը, ցանկապատը, ախոռի տախտակե կտուրը, որ անձրևից ու ձյունից գորշ գույն էր ստացել։ Նա արագացրեց զամբիկի ընթացքը. բարձրանալով բլրագագաթը, պարզ տեսավ շենքերը ու դրանցից դենը՝ փարթամորեն փռված խոտաբույսերը։ Հեռո՞ւ-հեռվում, արևելյան կողմում սև բծի նման երևում էր դեպի լճակը վազող ձիերի մի ջոկ. նրանցից քիչ հեռու վարգով սլանում էր ձիավոր ձիարածը,— խաղալիքանման, փոքրիկ մի մարդ՝ խաղալիքանման ձիուն կպած։

Մտնելով բակը, Միշկան իջավ ձիուց, սանձը կապեց

մուտքի սանդուղքին, ներս մտավ։ Ընդարձակ միջանցքում նրան հանդիպեց ձիարածներից մեկը, կարճահասակ, պեպենոտ մի կազակ։

— Ո՞ւմ ես ուզում,— անբարյացակամորեն հարցրեց նա՝ ոտից-գլուխ չափելով Միշկային։

— Ուզում եմ տեսնել վերակացուին։

— Ստրուկովի՞ն։ Չկա, բոլորովին դուրս է գնացել։ Նրա օգնականը, Սազոնովը այստեղ է։ Զախ կողմի երկրորդ դուռը... Ինչի՞ համար է, գու ո՞րտեղից ես եկել։

— Եկել եմ ձեզ մոտ ձիարած լինելու։

— Ում տսես խոթում են, էլի՛...

Ձիարածը մռթմռթալով քայլեց դեպի դուրս։ Նրա ետևից հատակի վրա քարշ էր գալիս ուսին գցած օղապարանը։ Բանալով դուռը ու մեջքը Միշկայի կողմը դարձրած, նա թափահարեց մտրակը, արդեն հաշտ տոնով ասաց.

— Մեզ մոտ, աղբերս, ծառայությունը ծանր է։ Մեկ էլ տեսար երկու օր ձիուց վար չիջար։

Միշկան նայում էր նրա կուզիկ մեջքին ու խիստ ծուռ ոտներին։ Կազակի անհամաչափ մարմնի յուրաքանչյուր գիծը պարզ ու ցայտուն կերպով ուրվագծվում էր դռնից ներս ընկած լույսի մեջ։ Ձիարածի ոտները, որոնք անվի կորություն ունեին, զվարճացնում էին Միշկային։ «Սա կա՛ծես քառասուն տարի նստած է եղել տակառի վրա»,— իր մեջ ծիծաղելով մտածեց նա ու աչքերով փնտրեց դռան բռնակը։

Սազոնովը փքված ու անտարբեր կերպով ընդունեց նոր ձիարածին։

Շուտով ինչ-որ տեղից եկավ ինքը վերակացուն, հաղթանդամ մի կազակ՝ ատամանյան գնդի վախմիստր Աֆանասի Ստրուկովը։ Նա հրամայեց Կոշևոյին հաշվի առնել սնունդ տալու համար, նրա հետ դուրս ելավ արտաքին սանդուղք, որ թունդ տաքացել էր սաստիկ շոգից։

— Կարո՞ղ ես ընտելացնել չհեծած ձիերը։ Դրանով զբաղվե՞լ ես թե ոչ։

— Չեմ զբաղվել,— անկեղծորեն խոստովանեց Միշկան և իսկույն նկատեց, թե ինչպես աշխուժացավ շոգից նվաղած վերակացուի դեմքը, որի վրա սահեց դժգոհությունը։

Քորելով քրտնած մեջքը, ծռմռելով հուժկու թիակները, վերակացուն բութ նայում էր Միշկայի աչքերի արանքին։

— Կարո՞ղ ես օղապարան գցել։

— Կարող եմ։

— Ձիերին խղճո՞ւմ ես։

— Խղճում եմ։

— Նրանք էլ մարդկանց պես են, միայն թե համր են։ Խղճա՛,— հրամայեց վերակացուն ու առանց պատճառի բարկանալով՝ բղավեց.— պետք է խղճալ և ոչ թե մտրակով դաղել։

Նրա դեմքը մի րոպե թե իմաստավորվեց և թե աշխուժացավ, բայց աշխուժությունը իսկույն չքացավ, յուրաքանչյուր գիծը ծածկվեց բութ անտարբերության պինդ կեղևով։

— Ամուսնացա՞ծ ես։

— Ամենևին ոչ։

— Ա՛յ քեզ հիմար։ Ամուսնանայիր, էլի,— ուրախացած վրա բերեց վերակացուն։

Նա սպասողաբար լռեց, մի րոպե դիտեց տափաստանի բացված, վիթխարի կուրծքը, հետո հորանջելով գնաց տուն։ Ձիարածի իր ծառայության մի ամսվա ընթացքում Միշկան նրանից այլևս ոչ մի խոսք չլսեց։

Արոտավայրում կար ընդամենը հիսունհինգ հովատակ։ Յուրաքանչյուր ձիարածին երկու-երեք ջոկ էր ընկնում։ Միշկային հանձնարարեցին մի մեծ ջոկ, որի մեջ էր Բախար անունով մի հուժկու, տարեց հովատակ, ու էլի մի փոքրիկ ջոկ,— մոտ քսան մայրացու, որոնց մեջ էր Բանայլնի կոչված հովատակը։ Վերակացուն կանչեց ձիարած Իլյա Սալդատովին, ամենաջանադիր ու աներկյուղ ձիարածներից մեկին, և ասաց.

— Ահա մի նոր ձիարած, Միխայիլ Կոշևոյը՝ Տատարսկի խուտորից։ Սրան ցույց տուր Բանայլնու և Բախարի ջոկերը, օղապարան տուր։ Պետք է ապրի ձեր տնակում։ Տար ցույց տուր։ Գնացեք։

Սալդատովը լուռ վառեց ծխախոտը, գլխով արեց Միշկային.

— Գնանք։

Մուտքի սանդուղքի վրա ցույց տալով Միշկայի զամբիկը, որ նվաղել էր արևի տակ, հարցրեց.

— Քո հայվա՞ննն է։

— Իմն է։

— Ծանրա՞ծ է։

— Չէ։

— Զուգավորիր Բախարի հետ։ Բախարը թագավորական բուծարանից է, անգլիական ու մեր ձիուց ծնված։ Ա՜յ թե գիժն է, հա՛-ա... Դեհ, նստիր։

Գնում էին իրար կողքի։ Ձիերը մինչև ծնկները թաղվում էին խոտի մեջ։ Բավական հեռացել էին հանրակացարանից և ախոռից։ Առջևում, ամենաքնքուշ ու կապույտ մուժով վարագուրված, փռվել էր վեհասքանչ, լռին տափաստանը։ Ձենիթում, լուսավառված ամպիկների քուլաներից դենը բաց կըլտում էր արևը։ Ջերմացած խոտաբույսերը թունդ, բարկ բուրմունք էին տարածում։ Աջ կողմից, բլրագոգի աղոտ գըծագրված փոսից գենը մարգարտաշող ժպիտով սպիտակին էր տալիս ժիրով լճակի շերտը։ Իսկ շուրջը,— որքան որ աչքդ տեսներ,— դալարագեղ, անծայրածիր տարածություն, երևրուն օդացոլքեր, կեսօրվա տապով բռնված հնամենի տափաստանը ու հորիզոնում,— գորշ կապտավուն, լայնանիստ մի բլուր,— հեքիաթային ու անհաս։

Խոտաբույսերը արմատներից վեր մուգ կանաչին էին տալիս, նրանց գլխիկները պլպլում էին արևի տակ, երանգավորվում պղնձափայլ բզեզի գույնով։ Փրչոտվել էր չհասունացած փնջավոր փետրախոտը, դրա հետ շերտերով փռված էր գանգրագեղ առվույտը, սիգախոտը ագահությամբ ձգտում էր դեպի արևը՝ պարզելով հատիկավորված գլխիկը։ Տեղ-տեղ կուրորեն ու պինդ կպել էր գետնին ցածրիկ երկաթախոտը՝ երբեմնակի եղեստուկով ցանցված, ու կըրկին փարթամորեն փռվել էր գերակշռող փետրախոտը, որին հաջորդում էին բաղմերանգ խոտաբույսերը, խոպուկը, դեղին կանճրակը, կաղանչանը, ինչ-որ քոլախոտ,— կոշտ, փշոտ մի խոտաբույս, որը իր գրաված տարածությունից դուրս էր մղել մյուս բոլոր խոտաբույսերը։

Կազակները լուռ գնում էին։ Միշկան վաղուց չզգացած հլու անդորրության զգացում էր ապրում։ Տափաստանը նրան

ճնշում էր իր լռությամբ, իմաստուն վեհությամբ։ Նրա ուղեկիցը ուղղակի քնել էր թամքի վրա, թեքվել ձիու բաշին, պեպենոտ ձեռները ծալել ու դրել թամքի ղաշին՝ ասես ճաշակվելու էր։

Ձիերի ոտների տակից թռավ մի արոս, ճախրեց ձորակի վերևում՝ արևի տակ փայլեցնելով սպիտակ փետուրները։ Ծածանելով խոտաբույսերը, հարավից սուրաց քամին, որ գուցե ակոսել էր Ազովյան ծովը։

Կես ժամից հետո հանդիպեցին մի ջոկի, որ արածում էր Բարդինների լճակի մոտ։ Սալդատովը արթնացավ, ճմլկոտվեց թամքի վրա, ծուլորեն ասաց.

— Պանտելյուշկա Լոմակինի ջոկն է։ Ո՞ւր է նա, չի երևում։

— Այդ հովատակի անունն ի՞նչ է,— հարցրեց Միշկան՝ նայելով Դոնի բաց շիկակարմիր, երկարամարմին նժույգին։

— Ֆրազյոր է։ Չար է անիծվածը։ Տես թե ոնց է գիրացել։ Տարավ, հա՛-ա։

Հովատակը գնաց մի կողմ, ու զամբիկները խմբովին հետևեցին նրան։

Միշկան ընգունեց իրեն հանձնված ջոկերը և իրերը դրեց դաշտային տնակում։ Մինչև իր գալը այնտեղ ապրում էին երեք հոգի,— Սալդատովը, Լոմակինը և վարձու մի ձիարած,— տարեց, լռակյաց կազակ Տուրովերովը։ Սալդատովը ավագն էր։ Նա Միշկային սիրով բացատրեց վերջինի պարտականությունները, հետևյալ օրն էլ նրան պատմեց հովատակների բնավորության ու սովորությունների մասին ու թեթև ժպտալով, այսպիսի խորհուրդ տվեց.

— Դու իրավունք ունես քո ձիով կատարելու ծառայությունդ, ամա թե որ ամեն օր նրանով դես-դեն գնաս, միայն նրան կընտելանաս։ Դու նրան պահիր ջոկի մեջ, ուրիշի ձի նստիր ու դրանց շուտ-շուտ փոխիր։

Միշկայի աչքերի առաջ նա ջոկեց մի մայրացու, և վազվզելով, օղաղարանը ճարպկությամբ գցեց դրա վիզը։ Թամբեց Միշկայի թամքով, ու դողդոջուն, ետին ոտների վրա պպզող ձիուն բերեց Միշկայի մոտ։

— Նստիր։ Երևում է, որ այս անտերը հեծած չի։ Նրստիր, է՛,— բարկությամբ բղավեց նա՝ աջ ձեռքով ուժգին

քաշելով սանձը, ձախ ձեռքը զամբիկի դնչին պահած։— Դու սրանց հետ մեղմ վարվիր։ Ախոռում դու կգտնաս հովատակի վրա՝ «Մի կո՛ղմ», և նա կսեղմվի մսուրի մի կողմին, իսկ այստեղ զգույշ կաց։ Բախարից առանձնապես վախեցիր, շատ մոտիկ մի՛ գնա, կխփի ու վար կգցի,— ասում էր Սալդատովը՝ ասպանդակից բռնած ու սիրաբար շոյելով մեկ կամ մյուս ոտը վեր գցող զամբիկի պիրկ, ատլասե-սև կուրծը։

III

Միշկան մի շաբաթ հանգստանում էր, ամբողջ օրերով ձիուց վար չէր գալիս։ Տափաստանը նվաճում էր նրան, տիրաբար ստիպում ապրել նախնադարյան, բուսական կյանքով։ Ջոկն արածում էր որևէ մոտիկ տեղում։ Միշկան կամ ննջում էր թամքի վրա նստած, կամ խոտի վրա փռված, մտամոլոր հետևում էր, թե ինչպես քամին երկնքով մեկ քշում-տանում էր եղյամային սպիտակությամբ խավակալած ամպերի ջոկերը։ Ամեն ինչից ձեռք քաշելու այդ վիճակը սկզբում բավարարում էր նրան։ Արոտավայրում, մարդկանցից հեռու իր վարած կյանքը նրան մինչև իսկ դուր էր գալիս։ Բայց շաբաթվա վերջում, երբ նա արդեն ընտելացել էր նոր դրության, անորոշ մի երկյուղ արթնացավ։ «Այնտեղ մարդիկ իրենց և ուրիշների բախտն են որոշում, իսկ ես ձիեր եմ արածացնում։ Այդ ո՞նց կլինի։ Պետք է հեռանալ, թե չէ կիրվես ու կմնաս»,— զգաստանալով մտածում էր նա։ Բայց մի այլ միտք էլ էր ծուլորեն թափանցում նրա գիտակցության մեջ. «Թող այնտեղ կռվեն, այնտեղ մահն է, իսկ այստեղ՝ ազատ կյանք, արոտ ու երկինք։ Այնտեղ քեն ու ոխ է, իսկ այստեղ՝ խաղաղություն։ Դու ի՞նչ գործ ունես մյուսների հետ...» Մտքերը սկսեցին եռանդով մաշել Միշկայի հոգու հանգստությունը։ Այդ նրան մղում էր դեպի մարդիկ, և նա ավելի հաճախ, քան առաջին օրերում, ձգտում էր հանդիպել Դուդարև լճակի շրջանում իր ջոկով շրջող Սալդատովին, փորձում էր մոտիկանալ նրա հետ։

Սալդատովը ըստ երևույթին չէր զգում մենակության ծանրությունը։ Նա հազվադեպ էր գիշերում տնակում և համարյա միշտ լինում էր ջոկի հետ կամ լճակի ափին։ Նա ապրում էր գազանի կյանքով, ինքն էր ուտելիք ճարում իրեն համար և դա անում էր արտասովոր ճարտարությամբ, կարծես իր ամբողջ կյանքում հենց դրանով էր զբաղվել։ Միշկան մի անգամ տեսավ, թե ինչպես նա ձիու մազից կարթաթել է հյուսում։ Հետաքրքրվելով՝ հարցրեց.

— Ինչի՞ համար ես հյուսում։

— Ձկան համար։

— Ձուկ ո՞րտեղ կա։

— Լճակում։ Ծածաններ են։

— Ճիճուներո՞վ ես որսում։

— Հացով ու ճիճուներով։

— Եփո՞ւմ ես։

— Չորացնում եմ և ուտում։ Առ, վերցրու,— սրտաբաց հյուրասիրեց նա՝ շալվարի գրպանից հանելով չորացրած մի ծածան։

Մի անգամ ջոկի ետևից գնալիս Միշկան տեսավ թաղարդով բռնված մի արոս։ Դրա կողքին դրված էր արոսի խրտվիլակը, վարպետությամբ սարքված, թակարդն էլ լավ թաքցրած էր խոտերի մեջ ու կապված էր ցցին։ Սալդատովը այդ նույն երեկոյան արոսը խորովեց հողի մեջ, որի վրա շիկացած կրակ լցրեց։ Նա իրիկնահացի հրավիրեց նաև Միշկային։ Կտրատելով հոտավետ միսը, ասաց.

— Մյուս անգամ զգույշ մոտեցիր, թե՝ չէ իմ գործը կըփչացնես։

— Դու ո՞նց ես ընկել այստեղ,— հարցրեց Միշկան։

— Ես ընտանիքի միակ նեցուկ եմ։

Սալդատովը մի փոքր լռեց ու հանկարծ հարցրեց.

— Լսիր, ճի՞շտ են ասում տղերքը, որ դու կարմիրներից ես։

Կոշևոյը, որ այդպիսի հարց չէր սպասում, շփոթվեց։

— Ոչ... Դե, ո՛նց ասեմ... Հա՛, էլի, գնում էի նրանց մոտ... Բռնեցին։

— Ինչո՞ւ էիր գնում, ի՞նչ էիր փնտրում,— աչքերին մոայլ արտահայտություն տալով՝ կամացուկ հարցրեց Սալդատովը ու սկսեց ավելի դանդաղ ուտել։

Նրանք նստած էին կրակի մոտ, շոր ձորակի ափին։ Տարթերը թանձր ծուխ էին արձակում, մոխրի տակից պըլպըլում էր կրակը։ Շուրջը փռված էր գիշերային խավարը, զգացվում էր շոր տաքությունը և թառամող օշինդրի բույրը։ Ընկնող աստղերը ճեղքում էին սև երկինքը։ Ընկնում էր մի աստղ, և ապա երկար ճառագայթում էր խավոտ հետքը՝ ինչպես ձիու գավակին մտրակի հարված տալուց հետո։

Միշկան ուշադրությամբ դիտում էր Սալդատովի դեմքը, որի վրա խաղում էր կրակի ոսկեհուր ցոլքը։ Միշկան պատասխանեց.

— Ուզում էի իրավունքներ ձեռք բերել։

— Ո՞ւմ համար,— Սալդատովը ցնցվեց, աշխուժացավ։

— Ժողովրդի համար։

— Ի՞նչ իրավունքներ, պատմիր տեսնենք։

Սալդատովի ձայնը խուլ և շողոքորթությամբ էր հնչում։ Միշկան մի վայրկյան տատանվեց. նրան թվաց, թե Սալդատովը դիտմամբ տարթ դրեց կրակի վրա, որպեսզի թաքցներ իր դեմքի արտահայտությունը։ Միշկան այնուհետև ասաց.

— Բոլորի համար իրավահավասարություն, այ թե ինչ։ Չպետք է լինեն ոչ պաներ, ոչ էլ ծառաներ։ Հասկանալի՞ է։ Այդ բանին վերջ կտրվի։

— Կարծում ես կադետները չե՞ն հաղթի։

— Դե, իհարկե, ո՛չ։

— Ուրեմն դու ա՛յ թե ինչ էիր ուզում, հա՛-ա...— Սալդատովը շունչ առավ ու հանկարծ վեր կացավ։— Դու, շան որդի, ուզում էիր կազակությանը ջհուդների ստրուկնե՞ր դարձնել, հա՞,— սուր, չարացած բղավեց նա,— դու... դուք բոլորդ էլ, ես ձեր... Ուզում եք բնաջի՞նջ անել մեզ, հա՞։ Հը՛մ, ա՛յ թե ինչ... Ուզում եք, որ ջհուդները իրենց գործարաննե՞րը շինեն տափաստանումը, որ մեզ կտրե՞ն հողից, հը՞։

Միշկան ապշեց, դանդաղորեն ոտքի ելավ։ Նրան թվաց, թե Սալդատովն ուզում է խփել իրեն։ Նա ետ ընկավ, ու Սալդատովը տեսնելով, որ նա վախենում է ու ընկրկում, ետ

տարավ ու վրա բերեց բռունցքը։ Միշկան կարողացավ բռունել նրա ձեռքը. սեղմելով դրա ենթադաստակը, նախազգուշացման խորհուրդ տվեց.

— Դու, աղբեր-տղա, ձեռ քաշիր, թե չէ քեզ ջարդուխուրդ կանեմ։ Ի՞նչ ես բռռում, հը՞։

Մթության մեջ նրանք կանգնած էին իրար դեմ։ Ոտնեբով տրորված կրակը հանգավ. միայն մի տարթ էր վառվում ու ծուխ արձակում մոխրակույտի ծայրում։ Սալդատովը ձախ ձեռքով բռնեց Միշկայի շապկի օձիքից. բռունցքի մեջ հավաքելով օձիքը ու բարձրացնելով, փորձում էր ազատել աջ ձեռքը։

— Յախիցս մի բռնի, է՛յ,— խռխռում էր Միշկան՝ պըտըտելով հուժկու պարանոցը,— մի՛ բռնիր, ասում եմ. կթակեմ, լսո՞ւմ ես...

— Չէ-է մի... կթակե՞մ... Հլա կա՛ց,— հևում էր Սալդատովը։

Միշկան պոկ եկավ, ուժով դեն հրեց նրան, և հարվածելու, վար գցելու, ձեռներին ազատություն տալու բուռն ցանկություն զգալով, ջղաձգաբար շտկում էր շապիկը։

Սալդատովը չէր մոտենում նրան։ Ատամները կրճտացնելով ու մայր հայհոյելով, նա գոռում էր.

— Կհայտնեմ... Հենց հիմի քարշ կտամ վերակացուի մոտ։ Ես կքերթեմ քո կաշին, օձ, իժ... Բոլշևիկ... Քեզ պետք է Պաղտյոլկովի օրին հասցնել, վիզդ թոկ գցել, կախել։

«Կհայտնի... Գլխից դուրս կտա... Բանտ կնստեցնեն... Ֆրոնտ չեն ուղարկի, ուրեմն չեմ կարողանա փախչել մերոնց մոտ»։— Միշկան սարսուռ զգաց, ու նրա միտքը ելք փնտրելով, դեգերում էր անհույս, ինչպես դեգերում է շիղաձուկը որևէ փոսում՝ վարարած և ապա իջնող ջրով գետից կտրված։ «Սպանե՞լ սրան, հիմա կխեղդեմ... Ուրիշ կերպ չի կարելի...» Ու ենթարկվելով այդ վայրկենական որոշման, նրա միտքն արդեն արդարացում էր փնտրում. «Կասեմ, որ հարձակվեց ինձ վրա, որ ծեծեր... Ես էլ բռնեցի բկից... պատահաբար... ինքս ինձ կորցրած...— այսպես կասեմ...»

Միշկան դողդողալով քայլեց դեպի Սալդատովը, և եթե այդ պահին վերջինս փախչեր, մահն ու արյունը անխուսափելի կլինեին։ Բայց Սալդատովը շարունակեց հայհոյանքներ թափել, ու Միշկան մեղմացավ, միայն ոտներն էին թունդ դողում ու քրտինքն էլ դուրս տվեց մեջքի վրա և թեվերի տակ։

— Սպասիր, է՛... Լսո՞ւմ ես, Սալդատով, կաց։ Մի՛ գոռա։ Դու հո առաջինը սկսեցիր...

Ու Միշկան նվաստացած խնդրում էր դադարեցնել վեճը։ Նրա ծնոտը դողում էր, աչքերը շփոթված թափառում էին։

— Շատ էլ շատ բան կարող է լինել ընկերների մեջ... Ես հո չխփեցի քեզ... Իսկ դու բկիցս ես բռնում... Ախր ես ի՞նչ ասացի որ։ Դրա համար պետք է նեղանա՞լ... Եթե վիրավորեցի, ներիր, էլի, մա՛րդ ես։

Սալդատովը հետզհետե ցածրացրեց ձայնը և լռեց։ Մի բոպեից հետո շուռ գալով ու ձեռքը ետ քաշելով Կոշևոյի պաղ, քրտնած ձեռքից, ասաց.

— Պոչդ ես պտտացնում ոնց որ իժը։ Դե լավ, չեմ ասի։ Սարսաղի մեկն ես, խղճում եմ... Էլ չերևաս աչքիս, էլ չեմ կարող քեզ տեսնել։ Սրիկա ես դու, ջհուդներին ես ծախվել, իսկ ես չեմ խղճում այնպիսի մարդկանց, որոնք ծախվում են փողով։

Միշկան ստորացած ու ողորմելիորեն ժպտում էր մթության մեջ, թեպետև Սալդատովը նրա դեմքը չէր տեսնում։ Ինչպես և չէր տեսնում, որ Միշկայի բռունցքները սեղմվում են և արյունով լցվելուց ուռչում։

Նրանք բաժանվեցին առանց մի բառ ասելու։ Կոշևոյը զայրացած մտրակում էր ձին՝ փնտրելով իր ջոկը։ Արևելքում բռնկվում էին փայլակները, գոռում էր որոտը։

Այդ գիշեր փոթորիկ բարձրացավ։ Արևելքից ոռնալով, սուլելով, փչեց ուժգնաթափ քամին, նրա ետևից անտեսանելի փեշերը փռելով՝ ձգվեցին ցուրտ զովությունը ու դառն փոշին։

Երկինքը մռայլվեց։ Կայծակը շեղակի ճեղքում էր ուռճացած, սևահողի գույն առած ամպը, երկար ժամանակ լռություն էր կուտակվում և հեռո՛ւ-հեռվում սպառնալից թնդում էր որոտը։ Անձրևի խիտ ցանքը սկսեց ճմլել խոտաբույսերը։ Երկրորդ անգամ ճայթող կայծակի լույսի տակ Կաշևոյը տեսավ երկնքի կեսը բռնած թուխ ամպը, որի ծայրերը ածխանման սև էին, ահավոր. դրա տակ փռված գետ-

նի վրա տեսավ կուչ եկած, իրար գլխի հավաքված ձիերը։ Որոտը պայթեց զարհուրեցուցիչ ուժով, կայծակը շեշտակի թռավ դեպի երկիրը։ Նոր հարվածից հետո ամպի ընդերքից հեղեղի նման թափվեց անձրևը, տափաստանը սկսեց խուլ հեծկլտալ, հողմը Կոշևոյի գլխից պոկեց թաց գլխարկը, ուժգին խփեց թամքի դաշին։ Մի րոպե սև լռություն իջավ, հետո կայծակը վերստին սրարշավեց երկնքով մեկ՝ է՛լ ավելի սաստկացնելով դժոխային խավարը։ Որոտի հետագա հարվածն այնքան ուժեղ, չոր ու ճայթումնալից էր, որ Կոշևոյի ձին պպզեց ու վեր թռչելով՝ սկսեց ծառս լինել։ Ջոկի ձիերը դոփդոփում էին գետինը։ Ամբողջ ուժով մեկ քաշելով սանձը, Կոշևոյը ձիերին քաջալերելու ցանկությամբ գոռաց.

— Կանգնե՛լ... Բը՛ռռռ...

Ամպի կատարներով մեկ տևականորեն սահող զիգզագաձև, շաքարի սպիտակությամբ փայլող կայծակի լույսի տակ Կոշևոյը տեսավ, որ ջոկը սլանում է իր վրա։ Ձիերը թռչում էին կատաղի քառատրոփով, պլպլան դնչերը համարյա դիպցնում գետնին։ Նրանց ուռած ռունգները փնչոցով կլանում էին օդը, չպայտած սմբակները խուլ դղրդյուն էին բարձրացնում։ Առջևից առավելագույն արագությամբ սլանում էր Բախարը։ Կոշևոյը մի կողմ քաշեց իր ձին ու հազիվ կարողացավ խուսափել զարկվելուց։ Ձիերն անցան ու ու մի քիչ հեռու կանգ առան։ Զգիտենալով, որ խլշկոտած ու փոթորկից վախեցած ջոկը հենց իր ճշոցի կողմն էր վազել, Կոշևոյը կրկին, է՛լ ավելի բարձր գոռաց.

— Կանգնեցե՛ք, դե՛հ։

Ու դարձյալ, արդեն մթության մեջ սմբակների դղրդյունը հրեշավոր արագությամբ նետվեց նրա կողմը։ Կոշևոյը սարսափելով, մտրակը զարկեց իր զամբիկի աչքերի արանքին, բայց չկարողացավ մի կողմ անցնել։ Ինչ-որ խելակորույս մի ձի կուրծքը խփեց նրա զամբիկի գավակին, ու Կոշևոյը, ասես պարսատիկով նետված, ընկավ գետնին։ Նա միայն հրաշքով ողջ մնաց. ջոկի մեծ մասը անցավ նրա աջ կողմից, դրա շնորհիվ էլ նրան ոտնատակ չարեցին, այլ միայն մի մայրացու ձի նրա աջ ձեռքը սմբակով թաղեց ցեխի մեջ։ Միշկան ոտքի ելավ, ու աշխատելով բոլորովին ձայն չհանել, զգուշությամբ մի կողմ գնաց։ Նա զգում էր,

որ ջոկը մոտիկ տեղում բղավոցի է սպասում, որպեսզի նորից խելագար քառատրոփով նետվի իր վրա, ու լսում էր Բախարի բնորոշ, յուրահատուկ փնչոցը։

Կոշևոյը միայն լուսաբացից առաջ հասավ տնակը։

IV

Մայիսի 15-ին Դոնի Մեծ Զորաց ատաման Կրասնովը կառավարիչների խորհրդի նախագահ, արտաքին գործերի բաժնի կառավարիչ գեներալ-մայոր Աֆրիկան Բոգաևսկու, Դոնի բանակի գեներալ-բնակապետ գնդապետ Կիսլովի և Կուբանի ատաման Ֆիլիմոնովի ուղեկցությամբ շոգենավով ժամանեց Մանիչսկայա ստանիցան։

Դոնի և Կուբանի հողի տերերը տախտակամածից ձանձրույթով նայում էին, թե շոգենավն ինչպես է մոտենում նավակայանին, ինչպես են դես-դեն ընկնում նավաստիները ու կամրջակից դեն շպրտվում փրփրադեզ ալիքները։ Հետաքրքիր իջան։ Նավակայանում հավաքված ամբոխի հարյուրավոր աչքերը նրանց էին նայում։

Երկինքը, հորիզոնները, ցերեկը, նրբահյուս մուժը—ամեն ինչ կապույտ է։ Նույնիսկ Դոնն էլ, ինչպես գոգավոր հայելի, իրեն համար արտասովոր կապտությամբ է երանգավորված՝ անդրադարձնելով ամպերի ձյունափայլ կատարները։

Քամին հագեցված է արևի, չոր աղուտների ու նախորդ տարված փտած խոտաբույսերի բույրերով։ Ամբոխը խուլ գժժում է։ Տեղական իշխանությունները դիմավորում են գեներալներին, որոնք մեկնում են հրապարակ։

Մեկ ժամից հետո ստանիցայի ատամանի տանը սկսվեց Դոնի կառավարության ու Կամավորական բանակի ներկայացուցիչների խորհրդակցությունը։ Կամավորական բանակից եկել էին գեներալներ Դենիկինը և Ալեքսեևը՝ բանակի շտաբի պետ գեներալ Ռոմանովսկու, գնդապետներ Ռյասնյանկու և Էվայլդի ուղեկցությամբ։

Հանդիպումը սառն բնույթ էր կրում։ Կրասնովն իրեն ծանր արժանապատվությամբ էր պահում։ Ալեքսեևը բարևելով ներկաներին, նստեց սեղանի մոտ. կախ ընկած թշերը

հենեց վտիտ, սպիտակ ձեռներին, անտարբերությամբ փակեց աչքերը։ Ճանապարհին ավտոմոբիլի մեջ օրորվելը վատ էր ազդել նրա վրա։ Նա ասես արյունաքամ էր եղել ծերությունից և ապրած ցնցումներից։ Գոսացած բերանի ծալերը թոշնել, կախ էին ընկել, երակներով կտրատված, կապտավուն կոպերը ուռել ու ծանրացել էին։ Բազմաթիվ մանրագույն կնճիռները ցանցել էին դեմքը մինչև քունքերը։ Ծատները, որոնք ամուր սեղմված էին այտերի թորշոմած մաշկին, ծայրերով թաղվել էին ծերունական դեղնավուն, կարճ խուզած մազերի մեջ։ Գնդապետ Ռյասնյանսկին սեղանի վրա խնամքով փռում էր խշշացող քարտեզը, Կիսլովն օգնում էր նրան։ Ռոմանովսկին կանգնել էր նրանց կողքին, ճկույթի եղունգով պահել քարտեզի անկյունը։ Բոգաևսկին հենվել էր ցածր պատուհանին, իր սիրտը ճմլող կարեկցությամբ նայում էր Ալեքսեևի անսահմանորեն հոգնած դեմքին։ Այն կարծես գիպսե դիմակ լիներ։ «Որքա՜ն ծերացել է նա, սարսափելի է, թե որքան է ծերացել»,— մտածում էր Բոգաևսկին՝ խոնավ, նշաձև աչքերը չկտրելով Ալեքսեևից։ Ներկաները դեռ չէին տեղավորվել սեղանի շուրջը, երբ Դենիկինը դիմելով Կրասնովին, խիստ տոնով և հուզմունքով ասաց.

— Նախքան խորհրդակցությունը սկսելը ես պետք է հայտարարեմ ձեզ հետևյալը. մեզ չափազանց զարմացնում է այն հանգամանքը, որ դուք Բատայսկը գրավելու դիսպոզիցիայում մատնանշում եք, թե ձեր աջ զորասյունում գործում է գերմանական գումարտակը և մարտկոցը։ Պետք է խոստովանեմ, որ նմանօրինակ համագործակցության փաստը ինձ համար ավելի քան տարօրինակ է... Թույլ տվեք իմանալ, թե դուք ինչո՞վ եք ղեկավարվել, որ հարաբերություն եք պահպանել հայրենիքի թշնամիների, անարգ թշնամիների հետ, և օգտվել եք նրանց օգնությունից։ Դուք իհարկե տեղյակ եք, որ դաշնակիցները պատրաստ են մեզ օժանդակություն ցույց տալու... Կամավորական բանակը գերմանացիների հետ եղած դաշինքը գնահատում է որպես դավաճանություն Ռուսաստանի վերականգնման գործին։ Դոնի կառավարության գործողությունները նույնպիսի գնահատական են գտնում դաշնակիցների լայն շրջաններում։ Խնդրում եմ ձեզ բացատրվել։

Դենիկինը ցասկոտությամբ հոնքը ծռած, պատասխանի էր սպասում։

Միմիայն պաղարյունության և իրեն հատուկ նրբակրթության շնորհիվ էր, որ Կրասնովը արտաքին հանգստություն էր պահպանում. բայց այնուամենայնիվ զայրույթը հաղթահարում էր. ճերմակող բեղերի տակի ջղայնոտ մկանագելանքը ցնցում ու ծռմռում էր բերանը։ Կրասնովը շատ հանգիստ ու շատ քաղաքավարի պատասխանեց.

— Երբ խաղաթղթի է դրվում ամբողջ գործի բախտը, չեն խորշում նաև նախկին թշնամիների օգնությունից։ Եվ հետո ընդհանրապես Դոնի կառավարությունը, հինգ միլիոն սուվերեն ժողովրդի կառավարությունը, զերծ լինելով որևէ մեկի խնամակալությունից, իրավունք ունի գործելու ինքնուրույն կերպով. կազակության շահերին համապատասխան, որոնց պաշտպանության համար է նա կոչված։

Այս խոսքերի վրա Ալեքսեևը բացեց աչքերը և ըստ երևույթին մեծ լարվածությամբ փորձում էր լսել ուշադիր կերպով։ Կրասնովը նայեց Բոգաևսկուն, որը ջղայնորեն ոլորում էր սլաքի նման սրած բեղը, ու շարունակեց.

— Ձեր դատողությունների մեջ, ձերդ գերազանցություն, գերակշռում են, այսպես ասած, բարոյական կարգի մոտիվները։ Դուք խիստ շատ պատասխանատու խոսքեր ասացիք Ռուսաստանի գործին մեր իբր թե դավաճանության մասին, դաշնակիցներին դավաճանելու մասին... Բայց, ես կարծում եմ, ձեզ հայտնի է այն փաստը, որ Կամավորական բանակը մեզանից ստանում էր այն արկերը, որ գերմանացիները ծախել էին մեզ...

— Խնդրում եմ խստորեն սահմանազատել խորապես տարբեր կարգի երևույթները։ Իմ գործը չէ, թե դուք գերմանացիներից ինչ ճանապարհով եք ռազմամթերք ստանում, բայց, օգտվել նրանց զորքերի օժանդակությունի՞ց...— Դենիկինը բարկությամբ վեր գցեց ուսերը։

Վերջացնելով իր խոսքը, Կրասնովը անցողակի կերպով, զգուշությամբ, բայց վճռականապես հասկանալ տվեց Դենի-

կինին, որ ինքը առաջվա բրիգադային գեներալը չէ, որին Դենիկինը տեսել էր ավստրո-գերմանական ռազմաճակատում։

Խախտելով անհարմար լռությունը, որ տիրել էր Կրասնովի խոսքից հետո, Դենիկինը խելամտությամբ անցավ Դոնի ու Կամավորական բանակների միացման և միասնական հրամանատարություն սահմանելու հարցերին։ Բայց դրան նախորդած ընդհարումը ըստ գործի էության սկիզբ դարձավ նրանց հարաբերությունների հետագա, անդադար աճող սրման և այդ հարաբերությունները վերջնականապես խզվեցին այն պահին, երբ Կրասնովը հեռացավ իշխանությունից։

Կրասնովը խուսափեց ուղղակի պատասխանից, դրա փոխարեն առաջարկելով համատեղ արշավանք Ցարիցինի վրա, որպեսզի նախ՝ գրավեին այդ խոշորագույն ստրատեգիական կենտրոնը և երկրորդ՝ այն պահելով իրենց ձեռքում, միանային Ուրալի կազակների հետ։

Հետևեց կարճ խոսակցությունը.

— ...Ձեզ չէ, որ պիտի ասել, թե մեզ համար ինչպիսի հսկայական նշանակություն ունի Ցարիցինը։

— Կամավորական բանակը կարող է հանդիպել գերմանացիներին։ Ցարիցինի վրա չեմ գնա։ Ես ամենից առաջ պետք է ազատագրեմ կուբանցիներին։

— Այո, բայց և այնպես Ցարիցինի գրավումը ամենահիմնական խնդիրն է։ Դոնի զորաց կառավարությունը ինձ հանձնարարել է այդ մասին խնդրել ձերդ գերազանցությանը։

— Կրկնում եմ՝ ես չեմ կարող թողնել կուբանցիներին։

— Ցարիցինի վրա հարձակվելու պայմանո՞վ միայն կարելի է խոսել միասնական հրամանատարություն սահմանելու մասին։

Ալեքսևևը, դրան հավանություն չտալով, ծամծմեց շրթունքները։

— Հնարավոր չէ։ Կուբանցիները չեն գնա իրենց մարզից, որը բոլշևիկներից վերջնականապես մաքրված չէ, իսկ կամավորական բանակում կա երկու հազար հինգ հարյուր հոգի, ըստ որում մեկ երրորդ մասը շարքից դուրս է,— վիրավորներ ու հիվանդներ են։

Համեստ ճաշի ժամանակ ալարկոտությամբ, աննշան

դիտողություններ էին փոխանակում. պարզ էր, որ համաձայնություն չի կայանա։ Գնդապետ Ռյասնյանսկին պատմեց մարկովականներից մեկի ինչ-որ մի զվարճալի, կիսաանեկդոտային սխրագործության մասին և ճաշի, ուրախ պատմության համատեղ ներգործությամբ լարվածությունը հետզհետե չքացավ։ Բայց ճաշից հետո, երբ ծխելով ցրվեցին սենյակում, Դենիկինը բռթեց Ռոմանովսկու ուսը, սուր, կկոցված աչքերով ցույց տվեց Կրասնովին, շշնջաց.— Մարզային մասշտաբի Նապոլեոն է... Անխելք մարդ է, գիտե՞ք...— Ռոմանովսկին ժպտաց, արագ պատասխանեց.— Իշխել ու տիրել է ուզում... Բրիգադային գեներալը միապետի իշխանությամբ է հափշտակված։ Ըստ իս, նա զուրկ է հումորի զգացումից...

Ցրվեցին՝ թշնամանքով ու անբարյացակամությամբ լցուն։ Այդ օրվանից Կամավորական բանակի ու Դոնի կառավարության հարաբերությունները խիստ վատթարանում են, վատթարացումն իր գագաթնակետին է հասնում հունիսի վերջին, երբ Կամավորական բանակի հրամանատարությանը հայտնի է դառնում գերմանական կայսր Վիլհելմին Կրասնովի ուղարկած նամակի բովանդակությունը։ Նովոչերկասկում պառկած վիրավոր կամավորականները ծաղրում էին Կրասնովի ձգտումը դեպի ավտոնոմիա և կազակական հին կյանքը վերականգնելու նրա հակումը, յուրայինների շրջանում նրան արհամարհանքով անվանում էին «խազեին», իսկ Դոնի զորաց կառավարությունը՝ «Դոնի կորած կառավարություն»։ Դրան իբրև պատասխան, Դոնի անկախականները նրանց հորջորջում էին «թափառաշրջիկ երաժիշտներ», առանց տերիտորիայի կառավարողներ» անուններով։ Կամավորական բանակի «ջոջերից» մեկը Դոնի կառավարության մասին կծու կերպով ասաց՝ «Դա մի պոռնիկ է, որը վաստակում է գերմանական անկողնում»։ Դրան հետևեց գեներալ Դենիսովի պատասխանը՝ «Եթե Դոնի կառավարությունը պոռնիկ է, ապա Կամավորական բանակն էլ կատու է, որ ապրում է այդ պոռնիկի միջոցներով»։

Պատասխանը ակնարկում էր Կամավորական բանակի կախումը Դոնի կառավարությունից, որը նրան բաժին էր հանում Գերմանիայից ստացվող մարտական հանդերձանքից։

Ռոստովն ու Նովոչերկասկը, որոնք Կամավորական բանակի թիկունքն էին հանդիսանում, լեփ-լեցուն էին սպաներով։ Հազարավոր սպաներ սպեկուլյացիայով էին զբաղվում, ծառայում էին անթիվ ու անհամար թիկունքային հիմնարկներում, պատսպարվում ազգականների ու ծանոթների մոտ, վիրավորվելու վերաբերյալ կեղծ փաստաթղթերով պառկում էին լազարեթներում... Բոլոր նրանք, ովքեր առավելապես արի էին, կոտորվում էին մարտերում, տիֆից, վերքերից, իսկ մնացածները, որոնք ռևոլյուցիայի տարիներին ընթացքում կորցրել էին իրենց պատիվն ու խիղճը, շնագայլերի նման թաքնվում էին թիկունքում, կեղտոտ քափի, աղբի նման լողում հերոսական օրերի մակերեսին։ Դրանք սպայության դեռևս այն անվթար, մարտերում չմարզված կադրերն էին, որոնց մի ժամանակ պախարակում, մերկացնում, ամաչեցնում էր Չերնեցովը՝ կոչ անելով պաշտպանել Ռուսաստանը։ Նրանք մեծ մասամբ այսպես կոչված «մտածող ինտելիգենցիայի» ամենանողկալի, զինվորական համազգեստ հագած այլատեսակությունն էին հանդիսանում։ Բոլշևիկներից փախել էին, սպիտակներին չէին միացել, կամաց-կամաց ապրում էին, վիճում Ռուսաստանի բախտի մասին, գլուխ էին պահում և բուռն կերպով պատերազմի վախճանն էին տենչում։

Նրանց համար միևնույն էր, թե ով կկառավարի երկիրը,— Կրասնովը, գերմանացիները թե բոլշևիկները,— միայն թե վերջանար պատերազմը։

Իսկ իրադարձությունները օրեցօր ավելի ահավոր էին դառնում։ Սիբիրում ծավալվում էր չեխոսլովակյան խռովությունը[1], Ուկրաինայում մեջտեղ էր եկել Մախնոն[2], որը գերմանացիների հետ չափահասի, թնդանոթների ու գնդացիրների լեզվով էր խոսում։ Կովկասը, Արխանգելսկը, Ֆինլանդիան... Ամբողջ Ռուսաստանը կրակ ու բոցով է բռնված... Ամբողջ Ռուսաստանը մեծ վերափոխման տառապանքի մեջ է...

Հունիսին Դոնում արևելյան քամիների նման լուրեր տարածվեցին, որ իբր թե չեխոսլովակները գրավում են Սարատովը, Ցարիցինն ու Աստրախանը, նպատակ ունենալով Վոլգայի ափերին արևելյան ֆրոնտ կազմել՝ գերմանական զորքերի վրա հարձակվելու համար։ Ուկրաինայում գերմանացիները դժկամորեն էին ճանապարհ տալիս այն սպաներին, որոնք Ռուսաստանից գնում էին Կամավորական բանակի դրոշակի տակ անցնելու համար։

Գերմանական հրամանատարությունը «արևելյան ֆրոնտ» կազմվելու լուրերից անհանգստացած, իր ներկայացուցիչներին ուղարկեց Դոն։ Հունիսի 27-ին Նովոչերկասկ ժամանեցին գերմանական բանակի մայորներ Ֆոն Քոկենհաուզենը, Ֆոն Ստեֆանին և Ֆոն Շլեյնիցը։

Այդ նույն օրը ատաման Կրասնովը պալատում գեներալ Բոգաևսկու ներկայությամբ ընդունեց նրանց։

Մայոր Քոկենհաուզենը հիշատակելով, թե ինչպես գերմանական հրամանատարությունը բոլոր ուժերով, ընդհուպ մինչև զինված միջամտությունը, օգնել էր Դոնի Մեծ Զորաց, բոլշևիկների դեմ պայքարելու և սահմանները վերականգնելու համար, հարցրեց, թե ինչպես կվերաբերվի Դոնի կառավարությունը, եթե չեխոսլովակները գերմանացիների դեմ ռազմական գործողություններ սկսեն։ Կրասնովը նրան հավատացրեց, որ կազակությունը խստորեն չեզոքություն կպահպանի և, իհարկե, չի թույլ տա, որ Դոնը ռազմաթատրոն դառնա։ Մայոր ֆոն Ստեֆանին ցանկություն հայտնեց, որ ատամանի պատասխանը գրավոր ձևակերպում ստանա։

Դրանով վերջացավ տեսակցությունը, իսկ մյուս օրը Կրասնովը հետևյալ նամակը գրեց գերմանական կայսրին.

---

[1] Չեխոսլովակյան խռովությունը համաշխարհային պատերազմի ժամանակ գերի հանձնված չեխոսլովակյան զորամասերի կոնտրռևոլյուցիոն ապստամբությունն էր սովետական իշխանության դեմ 1918 թ. ամռանը։ Խռովությունը կազմակերպվել էր ստարերկրյա տերությունների ուղղակի դիրեկտիվով և մենշևիկների ու աջ էսէռների ամենաակտիվ օժանդակությամբ։

[2] Մախնո Նեստոր, «հայր Մախնո»—քաղաքացիական պատերազմի ժամանակ Ուկրաինայում խոշորագույն բանդիտական ջոկատի պարագլուխ։ Անարխիստություն անող Մախնոն կռվում էր և՛ գերմանացիների, և՛ սպիտակների ու Պետլյուրայի, և՛ սովետական իշխանության դեմ։ Վրանգելի ջախջախումից հետո Մախնոյի բանդաները հարավային Ուկրաինայում սովետական իշխանության գլխավոր թշնամիներն էին։

«Ձերդ կայսերական և արքայական մեծություն, սույն նամակը հանձնողը, Դոնի Մեծ Զորաց Զիմովայա ստանիցայի ատաման, ձերդ կայսերական մեծության արքունիքին կից դեսպանը ե նրա ընկերները իմ, Դոնի ատամանի կողմից լիազորված են ողջունելու ձերդ կայսերական մեծությանը, մեծ Գերմանիայի հզոր միապետին, և հաղորդելու հետևյալը.

Դոնի քաջակորով կազակների երկու ամսվա պայքարը, որ նրանք իրենց հայրենիքի ազատության համար մղում են այնպիսի արիությամբ, որով վերջին ժամանակներս անգլիացիների դեմ պայքարում էին գերմանական ժողովրդին ազգակից բուրերը, մեր պետության բոլոր ֆրոնտներում պսակվեց լիակատար հաղթանակով, և այժմ Դոնի Մեծ Զորաց երկիրը առ 9/10 ազատագրված է կարմիրգվարդիական վայրենի բանդաներից։ Երկրի ներսում ամրապնդվել է պետական կարգը և լիակատար օրինականություն է հաստատվել։ Ձերդ կայսերական մեծության զորքերի բարեկամական օգնության շնորհիվ անդորրություն է ստեղծվել երկրի հարավում, ու ես կազակների մի կորպուս եմ պատրաստել երկրի ներսում կարգը պահպանելու և դրսի թշնամիների հարձակմանը դիմադրելու համար։ Երիտասարդ պետական օրգանիզմի համար, որպիսին ներկայումս հանդիսանում է Դոնի մարզը, դժվար է մենակ գոյություն ունենալ, և այս պատճառով էլ նա սերտ դաշինք է կնքել Աստրախանի և Կուբանի մարզերը գլխավորողների, գնդապետ իշխան Տունդուտովի և գնդապետ Ֆիլիմոնովի հետ, այն հաշվով, որ Աստրախանի և Կուբանի մարզերը բոլշևիկներից մաքրելուց հետո ֆեդերացիայի հիմունքներով կազմվի պետական հաստատուն միավորություն Դոնի Մեծ Զորաց երկրից, Աստրախանի մարզից՝ Ստավրոպոլի նահանգի կալմիկներով հանդերձ, Կուբանի մարզից, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի ժողովուրդներից։ Այդ բոլոր տերությունների կողմից համաձայնություն կա, և նոր կազմվող պետությունը Դոնի Մեծ Զորաց հետ լիակատար համաձայնությամբ որոշել է թույլ չտալ, որ իր երկրները արյունոտ ընդհարումների ասպարեզ դառնան, ու պարտավորվել է լիակատար չեզոքություն պահպանել։ Մեր Զիմովայա ստանիցայի՝ ձերդ կայսերական մեծության արքունիքին կից ատամանը իմ կողմից լիազորված է՝

Խնդրել ձերդ կայսերական մեծության՝ ճանաչել Դոնի Մեծ Զորաց ինքնուրույն գոյության իրավունքները, իսկ Կուբանի, Աստրախանի և Թերեքի ու Հյուսիսային Կովկասի ազատագրումից հետո—նաև ամբողջ ֆեդերացիայի ինքնուրույն գոյության իրավունքը՝ Դոն-Կովկասյան միության անունով։

Խնդրել ձերդ կայսերական մեծության՝ ճանաչել Դոնի Մեծ Զորաց սահմանները նախկին աշխարհագրական ու ազգագրական չափերով, օգնել Տագանրոգի ու նրա օկրուգի վերաբերյալ Ուկրաինայի և Դոնի Զորաց միջև վեճի լուծմանը հօգուտ Դոնի Զորաց, որն ավելի քան 500 տարի տիրում է Տագանրոգի օկրուգին և որի համար Տագանրոգի օկրուգը մի մասն է հանդիսանում Տմուտարականի, որից և առաջացել է Դոնի մարզը։

Խնդրել ձերդ մեծության աջակցությունը՝ ստրատեգիական նկատառումներով Դոնին միացնելու Կամիշին և Ցարիցին քաղաքները, Սարատովի նահանգը, Վորոնեժ քաղաքն ու Լիսկի կայարանը և Պովարինոն. Դոնի Զորաց սահմանն անցկացնելու այնպես, ինչպես այդ ցույց է տրված Զիմովայա ստանիցայում եղած քարտեզի վրա։

Խնդրել ձերդ մեծության՝ ճնշում գործադրել Մոսկվայի սովետական իշխանությունների վրա և ստիպել նրանց իրենց հրամանով Կարմիր Բանակի ավազակային չոկատներից մաքրել Դոնի Մեծ Զորաց և Դոն-Կովկասյան միության մեջ մտնելիք մյուս տերությունների սահմանները և հնարավորություն տալ վերականգնելու նորմալ, խաղաղ հարաբերությունները Մոսկվայի և Դոնի Զորաց միջև։ Սովետական Ռուսաստանը պետք է հատուցի Դոնի կազակ բնակչության, առևտրի և արդյունաբերության բոլոր վնասները, որոնք առաջացել են բոլշևիկների արշավանքից։

Խնդրել ձերդ կայսերական մեծության՝ մեր երիտասարդ պետությանն օգնել թնդանոթներով, հրացաններով, ռազմամթերքով ու ճարտարագիտական գույքով, և եթե այս շահավետ եք գտնում, Դոնի Զորաց սահմաններում թնդանոթների, հրացանների, արկերի ու փամփուշտների գործարաններ կառուցել։

Դոնի Մեծ Զորաց երկիրը և Դոնի-Կովկասյան միության այլ պետությունները չեն մոռանա բարեկամական ծառայությունները գերմանական ժողովրդի, որի հետ կազակները համատեղ կռվում էին դեռ երեսնամյա պատերազմի ժամանակ, երբ Դոնի գնդերը գտնվում էին Վալենշտեյնի բանակի շարքերում, իսկ 1807—1813 թվականներին Դոնի կազակները իրենց ատաման կոմս Պլատովի հետ պայքարում էին Գերմանիայի ազատության համար, և այժմ, Պրուսիայի, Գալիցիայի, Բուկովինայի ու Լեհաստանի դաշտերում մղված $3^1/_2$ տարվա արյունոտ պատերազմից հետո կազակները և գերմանացիները փոխադարձաբար սովորել են հարգել իրենց զորքերի քաջությունն ու տոկունությունը, ու հիմա միմյանց ձեռք մեկնելով, որպես երկու ազնիվ մարդիկ, միասին պայքարում են հայրենի Դոնի ազատության համար։

Դոնի մեծ Զորաց երկիրը ձերդ կայսերական մեծության մատուցած ծառայության համար պարտավորվում է լիակատար չեզոքություն պահպանել ժողովուրդների համաշխարհային պատերազմի ժամանակ և գերմանական ժողովրդին թշնամի դիմած ուժերը չթողնել իր տերիտորիան, որի համար իրենց համաձայնությունն են տվել թե՛ Աստրախանի զորաց ատաման իշխան Տունդուտովը և թե՛ Կուբանի կառավարությունը, իսկ միանալուց հետո կտան Դոն-Կովկասյան միության նաև մյուս մասերը։

Դոնի Մեծ Զորաց երկիրը Գերմանական կայսրությանը նախապատվության իրավունք է ընձեռում տեղական կարիքների բավարարումից հետո արտածել հացահատիկ և այլուր, կաշվեղեն ապրանքներ և հումք, բուրդ, ձկնեղեն ապրանքներ, բուսական ու կենդանական ճարպեղեն ու յուղ և դրանցից պատրաստված ապրանքներ, ծխախոտի ապրանքներ, անասուններ ու ձիեր, խաղողի գինի և այգեբուծության ու հողագործության այլ մթերքներ, որի փոխարեն Գերմանական կայսրությունը կմատակարարի գյուղատնտեսական մեքենաներ, քիմիական մթերքներ և աղաղման հյութեր, պետական արժեթղթերի պատրաստման էքսպեդիցիա-

յի սարքավորում նյութերի համապատասխան պաշարով, բամբակեղենի, կաշվեղենի, քիմիական, շաքարի և այլ գործարանների սարքավորում և էլեկտրատեխնիկական պարագաներ։

Բացի դրանից, Դոնի Մեծ Զորաց կառավարությունը գերմանական արդյունաբերությանը կտրամադրի հատուկ արտոնություններ Դոնի արդյունաբերության և առևտրի ձեռնարկություններում կապիտալներ զետեղելու, մասնավորապես ջրային և այլ նոր ճանապարհների կառուցման ու շահագործման համար։

Սերտ դաշինքը փոխադարձ օգուտներ է խոստանում, և ճակատամարտերի ընդհանուր դաշտերում գերմանացի ու կազակ ռազմասեր ժողովուրդների թափած արյունով ամրապնդված բարեկամությունը կդառնա մի հզոր ուժ՝ մեր բոլոր թշնամիների դեմ պայքարելու համար։

Այս նամակով ձերդ կայսերական մեծությանն է դիմում ոչ թե մի դիպլոմատ և միջազգային իրավունքին քաջածանոթ մի մարդ, այլ մի զինվոր, որը սովորել է ազնիվ մարտում հարգել գերմանական զենքի ուժը, այս պատճառով էլ խնդրում եմ ներել իմ տոնի շիտակությունը, որը խորթ է որևէ խորամանկության, ու խնդրում եմ հավատալ իմ զգացմունքների անկեղծությանը։

Ձեզ հարգող Պյոտր Կրասնով
Դոնի ատաման, գեներալ-մայոր»։

Հուլիսի 2-ին նամակը քննարկվեց բաժինների կառավարիչների խորհրդում, ու չնայելով, որ վերաբերմունքը դեպի այն խիստ զուսպ էր, իսկ Բոգաևսկու և կառավարության էլի մի քանի անդամների կողմից այն նույնիսկ պարզապես բացասական էր, Կրասնովն այն անհապաղ հանձնեց Բեռլինում Զիմովայա ստանիցայի ատաման հերցոգ Լիխտենբերգսկուն, որը մեկնեց Կիև, այնտեղից էլ գեներալ Ֆերյաչուկինի հետ—Գերմանիա։

Առանց Բոգաևսկու գիտության չէր, որ նամակը մինչև ուղարկելը արտատպվեց արտաքին գործերի բաժնում, նրա պատճենները լայն չափով ձեռքից ձեռք անցան և համապատասխան կոմենտարիաներով տարածվեցին կազակական զորամասերում և ստանիցաներում։ Նամակը պրոպագանդայի մի հզոր միջոց դարձավ։ Մարդիկ սկսեցին ավելի ու ավելի բարձրաձայն խոսել այն մասին թե Կրասնովը ծախվել է գերմանացիներին։ Ռազմաճակատներում հուզումներ էին ծավալվում։

Իսկ այդ ժամանակ գերմանացիները հաջողություններից թեավորված, ռուսական գեներալ Ֆերյաչուկինին տանում էին Փարիզի մերձակայքը, և նա գերմանական գլխավոր շտաբի պաշտոնյաների հետ միասին դիտում էր Կրուպպի ծանր հրետանու հզորագույն գործողությունը, անգլո-ֆրանսիական գորքերի ջախջախումը։

V

Զմեռային արշավանքի ժամանակ Եվգենի Լիստնիցկին երկու անգամ վիրավորվեց. առաջին անգամ՝ Ուստ-Լաբինսկայա ստանիցայի համար մղված մարտում, երկրորդ անգամ՝ Եկատերինոդարի վրա գրոհելու ժամանակ։ Երկու վերքերն էլ անեշան էին, և նա նորից շարք վերադարձավ։ Բայց մայիսին, երբ կամավորական բանակը Նովոչերկասկի ռայոնում կանգ առավ կարճատև հանգստի համար, Լիստնիցկին տկարություն զգաց, երկու շաբաթվա արձակուրդ վերցրեց։ Որքան էլ մեծ էր տուն մեկնելու ցանկությունը, այնուամենայնիվ նա որոշեց մնալ Նովոչերկասկում, որպեսզի այնտեղ հանգստանար, ժամանակ չկորցներ ճանապարհ գընալու վրա։

Նրա հետ միասին արձակուրդ ստացավ միևնույն դասակում ծառայած նրա ընկերը, ռոտմիստր Գորչակովը։ Գորչակովը նրան առաջարկեց ապրել իր մոտ.

— Ես երեխաներ չունեմ, իսկ կինս ուրախությամբ կընդունի քեզ։ Նա քեզ հետ ծանոթ է իմ նամակների միջոցով։

Կեսօրին, որ ամառվա պես տաք ու պայծառ էր, նրանք մոտեցան ցածրիկ, առանձնակի մի տան, որ գտնվում էր կայարանամերձ փողոցներից մեկի վրա։

— Ահա իմ ռեզիդենցիան անցյալում,— արագ քայլելով ու նայելով Լիստնիցկուն, ասաց սևաքեղ, բարձրասքրունք Գորչակովը։

Նրա ուռուցիկ, թուխ-կապտավուն աչքերը խոնավանում էին խնդաուատ հուզումից, ժպիտը դեպի ներքև էր ծռում հույնի քթի պես մսոտ քիթը։ Լայն-լայն քայլելով, պաշտպանական գույնի հեծելազորային շալվարի մաշված սեկերի

չոր խշշոց արձակելով, նա մտավ տուն, սենյակները միանգամից լցրեց զինվորականության սուր հոտով։

— Ո՞րտեղ է Լյոլյան, Օլգա Նիկոլաևնան ո՞ւր է,— բղավեց խոհանոցից հապճեպ մոտեցող ու ժպտացող սպասուհու վրա,— այգո՞ւմն է։ Գնանք այնտեղ։

Այգում խնձորենիներից վագրի մորթու պես բծավոր ստվերներ են ընկել, տարածվել է մեղվանոցի, տաքացած հողի բույրը։ Լիստնիցկու ակնոցի ապակիների մեջ բեկվելով, շրապնելի նման փշրվում են արևի ճառագայթները։ Կայարանում անդադար ու խռպոտ մոնչում է մի շոգեքարշ, ընդհատելով այդ միալար, հեծեծագին մոնչոցը, Գորչակովը կանչում է կնոջը.

— Լյո՛ւլյա, Լյո՛ւլյա, ո՞րտեղ ես։

Կողմնակի փոքրիկ ծառուղուց, մասրենու թփերի ետևից դուրս եկավ բաց դեղնագույն շրջազգեստով, բարձրահասակ մի կին։

Մի վայրկյան նա կանգ առավ, վախենալով, գեղեցիկ ժեստով ձեռները սեղմեց կրծքին, հետո էլ ճիչ արձակելով, բազկատարած վազեց նրանց կողմը։ Նա այնքան արագ վազեց, որ Լիստնիցկին տեսավ միայն յուրկայի տակ թրթռացող կլորավուն-ուռուցիկ ծնկները, տուֆլիների նեղլիկ թաթերը և ետ գցած գլխի վրա ծածանվող ոսկեփրփուր վարսերը։

Թաթերի վրա բարձրացած, արևավառ, մերկ թևերով ամուսնու գլուխը գրկած, Լյոլյան համբուրում էր նրա փոշոտ այտերը, քիթը, աչքերը, շրթունքները, արևից ու քամուց սևացած պարանոցը։ Համբույրների կարճ, ճպճպացող հնչյունները թափվում էին գնդացրի տկտկոցի նման։

Լիստնիցկին սրբում էր ակնոցը՝ ներշնչելով աղավնիճի բույրը, որ տարածված էր իր շուրջը, ու ժպտում էր ամենահիմար, շինծու ժպիտով, ինչպես ինքն էր այդ գիտակցում։

Երբ ուրախության պոռթկումը մեղմացավ ու մի վայրկյան ընդհատվեց, Գորչակովը իր վզից գուրգուրանքով, բայց վճռականապես իջեցրեց կնոջ ձեռները, ու գրկելով նրա ուսերը, մեղմակի դարձրեց Լիստնիցկու կողմը։

— Լյոլյա... ընկերս է, Լիստնիցկին։

— Ա՜խ, Լիստնիցկի՜ն։ Շատ ուրախ եմ։ Ամուսինս ձեզ

մասին...— Նա շնչասպառ լինելով, երջանկությունից ոչինչ չտեսնող, ծիծաղկոտ աչքերով հարևանցիորեն նայեց Լիստնիցկուն։

Նրանք քայլում էին կողք-կողքի։ Գորչակովի մազոտ ձեռքը, որի եղունգներն անմաքուր ու քիստավոր էին, գրկել էր կնոջ աղջկական իրանը։ Լիստնիցկին քայլելիս շեղակի նայում էր այդ ձեռքին, ներշնչում աղավնիճի և արևից տաքացած կանացի մարմնի բույրը ու իրեն զգում էր մանկականորեն խորապես դժբախտ, ինչ-որ մեկի կողմից անարդարացի ու ծանր վիրավորված։ Նա նայում էր կնոջ վարդագույն, փոքրիկ ականջաբլթակին, որի վրա ոսկեփայլ-շիկակարմրավուն մազերի մի փունջ էր ընկել, նայում էր իրենից մի արշին հեռու գտնվող այտի մետաքսե մաշկին. նրա աչքերը մողեսավարի սահեցին դեպի կնոջ կուրծքը, ու նա տեսավ ոչ բարձր, թմբանման կաթնա-դեղնավուն ստինքը և իջած, կինամոնագույն պտուկը։ Գորչակովան երբեմն նրա վրա էր դարձնում պայծառ, կապտավուն աչքերը, դրանց նայվածքը փաղաքուշ, բարեկամական էր, բայց թեթևակի ու ջղայնացուցիչ մի ցավ մաշում էր Լիստնիցկուն, երբ այդ նույն աչքերը նայելով Գորչակովի թուխ դեմքին, բոլորովին ուրիշ լույս էին ճառագայթում...

Լիստնիցկին միայն ճաշի ժամանակ ինչպես հարկն է զննեց տանտիրուհուն։ Վերջինիս թե՛ բարետես կերպարանքում և թե՛ դեմքի վրա կար այն նվազող, մարող դեղեցկությունը, որով ոչ այնքան պայծառ փայլում է երեսուներորդ աշունն ապրած կինը։ Բայց ծիծաղկոտ, մի փոքր սառն աչքերում, շարժումներում նա դեռ պահպանել էր ջահելության չվատնած պաշարը։ Նրա դեմքն իր մեղմ, իրենց անկանոնությամբ գրավիչ գծերով անշուշտ ամենասովարական մի դեմք էր։ Խիստ աչքի էր ընկնում միայն մի կոնտրաստ. բարակ, թուխ-կարմրավուն, ճաքճքված, վառ շուրթեր, որ ունենում են հարավի սև կանայք միայն, և այտերի նուրբ վարդագեղ մաշկ, բաց շիկագույն հոնքեր։ Նա հաճույքով էր ծիծաղում, բայց ժպիտի մեջ, որից բացվում էին խիտ, մանր, ասես ձուլածո ատամները,— ինչ-որ մի սերտած բան կար։ Նրա ցածր ձայնը մի փոքր խուլ էր հնչում ու երանգավորումներով հարուստ չէր։ Նա չափազանց գեղեցիկ էր թվում

Լիստիցկուն, որը երկու ամիս կին չէր տեսել, բացի գթության լկտված քույրերից։ Լիստնիցկին նայում էր Օլգա Նիկոլաևնայի հպարտ նստվածք ունեցող, վարսահանգույցով ծանրացած գլխին, պատասխանում էր անպատեհաբար ու, շուտով պատճառ բերելով հոգնածությունը, անցավ իրեն հատկացված սենյակը։

...Եվ ահա սահում էին օրերը հաճելի ու ձանձրալի։ Հետո Լիստնիցկին դրանք երկյուղածությամբ էր տնտղում իր հիշողության մեջ, իսկ այն ժամանակ նա տանջվում էր տղայաբար, անխոհեմ ու հիմարորեն։ Գորչակովների մտերիմ զույգը առանձնանում էր, խուսափում նրանից։ Գորչակովների ննջարանին կից սենյակից նրան տեղափոխեցին տան անկյան սենյակը, պատրվակ բերելով նորոգումը, որի մասին խոսելիս Գորչակովը կծոտում էր բեղը, սափրված, ջահելացած դեմքի վրա ժպտալից լրջություն էր պահպանում։ Լիստնիցկին գիտակցում էր, որ նեղում է ընկերոջը, բայց չգիտես ինչու չէր ուզում տեղափոխվել ծանոթների մոտ։ Նա ամբողջ օրերով նստում էր խնձորենու տակ, գորշնարնջավուն ստվերում, կարդում էր լրագրերը, որոնք հապճեպ տպված էին լինում անպետք փաթթոցաթղթի վրա, քնում էր ծանր, չթարմացնող քնով։ Նրա հետ մաշող ձանձրույթը բաժանում էր սիրունիկ պոնտերը,— շոկոլադագույն ու սպիտակ պիսակներով շունը։ Սա լուռ խանդում էր տանտիրոջը՝ վերջինիս կնոջ նկատմամբ, գնում էր Լիստնիցկու մոտ, հևալով պառկում նրա կողքին, ու Լիստնիցկին շոյելով նրան, հուզված շշնջում էր.

Երազիր, երազիր... դալկացել է արդեն
Նայվածքը ոսկեհուր աչքերիդ...

Գուրգուրանքով կրկնում էր Բունինի տողերը, որ մնացել էին հիշողության մեջ ու ծոթորի մեղրի պես բուրավետ ու թանձր էին։ Ու դարձյալ քնում էր...

Օլգա Նիկոլաևնան լոկ կնոջը հատուկ բնազդով ըմբռնեց նրան ճնշող տրամադրությունը։ Սկզբից զուսպ լինելով, նա սկսեց է՛լ ավելի զուսպ վարվել նրա հետ։ Մի անգամ հրեկոյան քաղաքային այգուց վերադառնալիս նրանք գնում էին երկուսով (Մարկովյան գնդի ծանոթ սպաները այգու մուտքի մոտ կանգնեցրել էին Գորչակովին)։ Լիստնիցկին թևանցուկ էր արել Օլգա Նիկոլաևնային, անհանգստացնում էր վերջինիս՝ նրա արմունկը պինդ սեղմելով իրեն։

— Ի՞նչ եք այդպես նայում,— ժպտալով հարցրեց Օլգա Նիկոլաևնան։

Լիստնիցկուն թվաց, թե նրա ձայնը խաղուն, գրգռիչ տոնով է հնչում։ Հենց միայն այս պատճառով էլ նա ռիսկ արեց մելամաղձոտ մի քառյակ արտասանել (այդ օրերին նա պոեզիայով էր տարվում, ու մտքերը մեղուների ջանադրությամբ հիշողության մեջ վերականգնում էին ուրիշի հնչուն թախիծը)։

Նա թեքեց գլուխը, ժպտալով շշնջաց.

Օտարոտի մտերմությամբ ուժաբեկ,
Ես նայում եմ քողով պատած երեսիդ,
Ու տեսնում եմ սքանչագեղ մի եզերք,
Հեռուների կախարդանքը խնդաորի։

Օլգա Նիկոլաևնան մեղմիվ ետ քաշեց իր թևը, զվարթացած ձայնով ասաց.

— Եվգենի Նիկոլաևիչ, ես բավականաչափ... Ես չեմ կարող չտեսնել, թե դուք ինչպես եք վերաբերվում ինձ... Եվ դուք չե՞ք ամաչում։ Սպասեցեք, սպասեցեք։ Ես ձեզ մի քիչ... այլ կերպ էի պատկերացնում... Լավ, թողնենք այդ։ Թե չէ մի տեսակ անորոշություն և անաղնվություն կա այստեղ... Ես վատ օբյեկտ եմ նմանօրինակ էքսպերիմենտների համար։ Ուզում էիք իմ ետևի՞ց ընկնել, հա՞։ Եկեք չկտրենք մեր բարեկամական հարաբերությունները, թողեք հիմարությունները։ Ես «գեղեցիկ անծանոթուհին» չեմ։ Հասկանալի՞ է։ Համաձա՞յն եք։ Տվեք ձեր ձեռքը։

Լիստնիցկին ազնվորեն վրդովված ձևացավ, բայց ի վերջո, չկարողանալով տանել իր դերը, քա՛հ-քա՛հ ծիծաղով պատասխանեց Օլգա Նիկոլաևնայի ծիծաղին։ Երբ Գորչակովը հասավ նրանց, Օլգա Նիկոլաևնան աշխուժացավ ու է՛լ ավելի զվարթացավ, իսկ Լիստնիցկին լռեց և մինչև տուն հասնելը մտքում շարաշար նախատում էր ինքն իրեն։

Օլգա Նիկոլաևնան իր ամբողջ խելացիությամբ հանդերձ, անկեղծորեն հավատում էր, թե բացատրությունից

հետո նրանք բարեկամներ կլինեն։ Լիստնիցկին արտաքուստ արդարացնում էր նրա այդ հավատը, բայց ներքուստ համարյա ատում էր նրան, ու մի քանի օրից հետո զգալով, որ իգուր է ինքը տանջալից կերպով բացասական գծեր որոնում Օյլգայի բնավորության ու արտաքինի մեջ, հասկացավ, որ վրա է հասնում իսկական, մեծ զգացմունքը։

Վերջանում էին արձակուրդի օրերը՝ նրա գիտակցության մեջ թողնելով չխմորված տականքը։ Կամավորական բանակը, համալրված ու հանգստացած, պատրաստվում էր հարվածներ հասցնել. կենտրոնախույս ուժերը նրան դեպի Կուբան էին մղում։ Գորչակովն ու Լիստնիցկին շուտով մեկնեցին Նովոչերկասկից։

Օյլգան նրանց ճանապարհ էր դնում։ Սև, մետաքսե զգեստը շեշտում էր նրա ոչ պայծառ գեղեցկությունը։ Նա ժպտում էր լացակումած աչքերով, տգեղորեն ուռած շուրթերը նրա դեմքին հուզիչ, սրտաշարժ, մանկական արտահայտություն էին տալիս։ Նա հենց այդպես էլ տպավորվեց Լիստնիցկու հիշողության մեջ։ Եվ սա երկար ժամանակ, իր ապրած օրերի արյան ու կեղտի մեջ գուրգուրանքով պահում էր իր հուշերում նրա պայծառ, անմար կերպարը, պահում անհասանելիության ու երկրպագության լուսապսակով։

Կամավորական բանակը հունիսին արդեն կովի բռնվեց։ Առաջին իսկ կռվում երեք դյույմանոց արկի բեկորը խոցոտեց ռոտմիստր Գորչակովի փորոտիքը։ Նրան շղթայից դուրս տարան։ Մի ժամից հետո նա, սայլի վրա պառկած, արյունով ու մեզով ողողված դիմեց Լիստնիցկուն.

— Ես չեմ կարծում, թե կմեռնեմ... Հիմա ինձ օպերացիա կանեն... Ասում են քլորոֆորմ չկա... Ջարժե մեռնել։ Ի՞նչ ես կարծում... Բայց համենայն դեպս... Միանգամայն գիտակցական վիճակում և այլն... Եվգենի, չթողնես Լյոլյային... Ես էլ, նա էլ հարազատներ չունենք։ Դու ազնիվ ու հիանալի մարդ ես... Ամուսնացիր նրա հետ... Ջե՞ս ուզում...

Նա աղերսանքով ու ատելությամբ էր նայում Եվգենուն, նրա չսափրված, կապուտկած այտերը դողում էին։ Նա արյունոտված ու հողոտված ձեռները խնամքով սեղմում էր պատռված փորին, ու շրթունքներից լիզելով կարմրավուն քրտինքը, ասում էր.

— Խոստանո՞ւմ ես։ Մի՛ թող նրան... Եթե քեզ էլ այսպես չզարդարեն... ռուս զինվորիկները։ Խոստանո՞ւմ ես։ Լռո՞ւմ ես։ Նա լավ կին է,— ու ամբողջովին այլանդակ կերպով ծռմռվեց,— տուրգենևյան կին է... Հիմա այդպիսիները չկան... Լռո՞ւմ ես։

— Խոստանում եմ։

— Դեհ, ջհաննամը գնաս... Մնաս բարով...

Նա դողդողալով սեղմեց Լիստնիցկու ձեռքը, հետո էլ ծանր, հուսահատական շարժմամբ նրան քաշեց դեպի իրեն, ու ճիգ թափելուց սրթսրթալով, մի փոքր բարձրացնելով քրտնակալած գլուխը, ցամաքած շրթունքները սեղմեց Լիստնիցկու ձեռքին։ Շտապելով, շինելի փեշը գցելով գլխին, շուռ տվեց դեմքը, և հուզված Լիստնիցկին հարևանցիորեն տեսավ նրա շուրթերի պաղ դողը, արցունքների գորշ հետքը այտի վրա։

Երկու օրից հետո Գորչակովը մեռավ։ Մեկ օրից հետո էլ Լիստնիցկուն ուղարկեցին Տիխորեցկ. նա ծանր վիրավորվել էր ձախ ձեռքից ու ազդրից։

Կորենովսկայայի մոտ երկարատև ու համառ մարտ ընկրկվեց։ Լիստնիցկին իր գնդի հետ երկու անգամ գրոհի և հակագրոհի գնաց։ Երրորդ անգամ ոտքի ելան նրա գումարտակի շղթաները։ Լսելով մի վաշտապետի ճչոցները,— «Չպառկե՛լ», «Արծիվներս, դեպի առա՛ջ», «Դեպի առաջ, հանուն Կոռնիլովի գործի»,— նա ծանր ու դանդաղ վազեց չհնձած ցորենի միջով, ձախ ձեռքով թիակը իբրև վահան գլխի վրա պահած, աջ ձեռքում սեղմելով հրացանը։ Մի անգամ գնդակը զրնգալով սահեց թիակի թեքված փոսիկով, ու Լիստնիցկին շտկելով թիակի բռնակը, սուր բերկրանքով մտածեց՝ «չդիպավ»։ Հետո էլ մի կարճ, ապշեցուցիչ կերպով ուժեղ հարված դեն գցեց նրա ձեռքը։ Նա վար գցեց թիակը և բորբոքված վիճակում, չպաշտպանված գլխով վազեց էլի մի տասը սաժեն։ Փորձեց հրացանը վերցնել հորիզոնադիր, բայց չկարողացավ ձեռքը բարձրացնել։ Ցավը ծանր լցվում էր յուրաքանչյուր հոդի մեջ, ինչպես արճիճը—կաղապարի մեջ։ Պառկեց մի ակոսի վրա, ու չկարողանալով ղսպել իրեն, մի քանի անգամ ճչաց։ Պառկած վիճակում մի գնդակ էլ

խփեց ազդրին, և նա դանդաղորեն, դժվարությամբ կորցրեց գիտակցությունը։

Տիխոնրեցկում կտրեցին նրա ջարդված թևը, մի կտոր ոսկոր հանեցին ազդրից։ Երկու շաբաթ պառկեց՝ տանջվելով հուսալքումից, ցավից, ձանձրույթից։ Հետո տեղափոխեցին Նովոչերկասկ։ Էլի երեսուն տաղտկալի օրեր լազարեթում։ Վիրակապումներ, գթության քույրերի ու բժիշկների ձանձրացուցիչ դեմքեր, յոդի, կարբոլյան թթվուտի սուր հոտ... Երբեմն գալիս էր Օյլգա Նիկոլաևնան։ Նրա այտերը կանաչավուն դեղնությամբ էին պատած։ Սգաշորը կրկնապատկում էր մարած աչքերի լացով չթեթևացած վիշտը։ Լիստնիցկին երկար նայում էր նրա խամրած աչքերին, լռում էր, շապկի դատարկ թևը ամոթխածությամբ, գողավարի թաքցնում վերմակի տակ։ Օյլգա Նիկոլաևնան ասես դժկամորեն պատմել էր տալիս ամուսնու մահվան մանրամասնությունները, լսում շինծու ցրվածությամբ, անտարբեր նայում մահճակալներին։ Լազարեթից դուրս գրվելով, Լիստնիցկին գնաց նրա մոտ։ Օյլգան նրան դիմավորեց արտաքին սանդուղքի մոտ, երեսը շուռ տվեց՝ երբ Լիստնիցկին նրա ձեռքը համբուրելիս խոր թեքից գլուխը, որը կարճ կըտրած, սպիտակավուն ու խիտ մազերով էր ծածկված։

Լիստնիցկին խնամքով էր սափրված, պաշտպանական գույնի պճնագեղ ֆրենչը առաջվա պես հիանալի էր նստել նրա վրա, բայց դատարկ թևը տանջալից անհանգստություն էր պատճառում. դրա մեջ ջղաձգաբար շարժվում էր թևի փոքրիկ, բինտով կապված կտրոնքը։ Նրանք տուն մտան։ Լիստնիցկին առանց նստելու ասաց.

— Բորիսը մահից առաջ խնդրել էր ինձ... Ինձնից խոստում էր վերցրել, որ ես ձեզ չեմ թողնի...

— Ես գիտեմ։

— Ո՞րտեղից։

— Նրա վերջին նամակից...

— Նրա ցանկությունն այն էր, որ մենք միասին լինենք... Իհարկե եթե դուք համաձայնեք, եթե հաշմանդամի հետ ամուսնանալը ձեռնտու է ձեզ... Խնդրում եմ հավատալ... զգացմունքների մասին խոսելն այժմ տեղին չէր լինի... Բայց ես անկեղծորեն ձեր բարօրությունն եմ ցանկանում։

Լիստնիցկու շփոթված տեսքը ու անկապ, հուզումնալի խոսքերը շարժեցին Օյլգայի սիրտը։

— Ես մտածում էի այդ մասին... Ես համաձայն եմ։

— Մենք կմեկնենք հորս մոտ, մեր կալվածքը։

— Լա՛վ։

— Մնացածը կարելի է հետո՞ ձևակերպել։

— Այո։

Լիստնիցկին ակնածանքով շրթունքները հպեց Օյլգայի ձեռքին, որ թեթև էր ինչպես ճենապակի, ու երբ բարձրացրեց խոնարհ աչքերը, տեսավ նրա շրթունքներից սահող ժպիտի ստվերը։

Սերը և մարմնական ծանր ցանկությունը Լիստնիցկուն քաշում էին դեպի Օյլգան։ Նա սկսեց ամեն օր գնալ Օյլգայի մոտ։ Մարտական առօրյայից հոգնած նրա սիրտը հեքիաթի էր ձգտում... Եվ նա մենակության րոպեներին դասական վեպի հերոսի նման էր դատողություններ անում, իր մեջ համառորեն փնտրում ինչ-որ վեհ զգացումներ, որպիսիք երբեք և ոչ ոքի չէր տածել,— գուցե ցանկանում էր դրանցով քողարկել ու պճնել սոսկ զգայական հակման մերկությունը։ Սակայն հեքիաթը մի թևով էր շոշափում իրականությունը։ Կյանքում պատահմամբ հանդիպած այդ կնոջ հետ նրան կապում էր ոչ միայն սեռական հակումը, այլև էլի ինչ-որ անհշմար մի թել։ Լիստնիցկին աղոտ կերպով էր ըմբռնում իր ապրումները, միայն մի բան էր զգում առավելագույն պարզությամբ, այն է՝ իր վրա, խեղված ու շարքից դուրս եկած այդ մարդու վրա առաջվա պես տիրաբար իշխում է սանձարձակ ու վայրենի բնազդը,— «ինձ ամեն ինչ կարելի է»։ Նույնիսկ Օյլգայի համար տրտում օրերին, երբ վերջինս իր մեջ, որպես պտուղ, կրում էր ամենածանր կորստի դառնությունը, Լիստնիցկին մեռյալ Գորչակովի նկատմամբ խանդով դաղված, ըղձում էր Օյլգային, ըղձում մոլեգնաբար... Կատաղի ջրապտույտում փրփրում էր կյանքը։ Այն օրերին վառոդի հոտ քաշած, իրադարձություններից կուրացած ու շշմած մարդիկ ապրում էին հապճեպորեն ու ագահությամբ, հենց միայն առկա օրով։ Եվ արդյո՞ք այդ չէր պատճառը, որ Լիստնիցկին շտապում էր կապել իր և Օյլգայի կյանքը՝ թերևս տարտամորեն գիտակցելով անիուսափե-

լի կործանումն այն գործի, որի համար ինքը դեպի մահ էր գնում։

Նա մանրամասն նամակով հաղորդեց հորը, որ ամուսնանում է և շուտով կնոջ հետ կժամանի Յագոդնոյե։

«...Ես վերջացրի իմ անելիքը։ Ես դեռ կարող էի մի ձեռքով էլ ոչնչացնել բունտ բարձրացրած խուժանին, այդ անիծված «ժողովրդին», որի վիճակի համար տասնյակ տարիներ լաց ու կոծ էր անում ռուսաստանյան ինտելիգենցիան, բայց, իսկապես, այժմ դա ինձ օտարոտի ու անիմաստ է թվում... Կրասնովը Դենիկինի հետ հաշտ չէ. իսկ երկու լագերի մեջ էլ փոխադարձ ոտնձգություն, խարդավանք, գարշանք ու նողկանք է տիրում։ Երբեմն ես սարսափում եմ։ Ի՞նչ է լինելու։ Այժմ տուն եմ գալիս միակ ձեռքով ձեզ գրկելու և ձեզ հետ ապրելու՝ հեռվից հետամուտ լինելով պայքարին։ Ես արդեն ոչ թե զինվոր եմ, այլ ֆիզիկապես ու հոգեպես հաշմանդամ։ Ես հոգնել եմ, անձնատուր եմ լինում։ Երևի մասամբ դրա հետևանքն է իմ ամուսնությունը և «խաղաղ հանգրվան» ձեռք բերելու ձգտումս»,— այսպիսի տխուր հեղնանքով էր նա վերջացրել նամակը։

Նովոչերկասկից մեկնելը նշանակված էր մեկ շաբաթից հետո։ Մեկնելուց մի քանի օր առաջ Լիստնիցկին վերջնականապես տեղափոխվեց Գորչակովայի մոտ։ Նրանց մերձեցնող գիշերից հետո Օյլգան մի տեսակ նիհարեց, դալկացավ։ Նա հետո էլ էր գիջում Լիստնիցկու ցանկություններին, բայց տաջնալից կերպով էր տանում ստեղծված դրությունը և հոգու խորքում վիրավորված էր։ Լիստնիցկին չգիտեր կամ չէր ուզում գիտենալ, որ նրանց կապող սերը չափում են տարբեր չափերով և ատելությունը՝ մեկ չափով։

Եվգենին մինչև մեկնելը Ակսինյայի մասին դժկամորեն, կցկտուր կերպով էր մտածում։ Նա պաշտպանվում էր Ակսինյային վերաբերող մտքերից, ինչպես ձեռքով պաշտպանվում են արևից։ Բայց, նրա կամքից անկախ, ավելի ու ավելի համառորեն, լուսաշերտերի նման թափանցում, անհանգստացնում էին նրան հիշողություններն այդ կապի մասին, որը տարիների ընթացքում հաստատուն միություն էր դարձել։ Լիստնիցկին որոշ ժամանակ մտածում էր՝ «Նրա հետ հարաբերություններս չեմ կտրի։ Նա կհամաձայնվի»։

Բայց պատաշաճության զգացումը հաղթահարեց. նա որոշեց Յագոդնոյե ժամանելուց հետո խոսել Ակսինյայի հետ, ու եթե հնարավոր լինի, ձեռք քաշել նրանից։

Մեկնելուց հետո չորրորդ օրվա վերջում ժամանեցին Յագոդնոյե։ Ներունի պանը նորապսակներին դիմավորեց կալվածքից մի վերստ հեռավորությամբ։ Եվգենին դեռ հեռվից տեսավ, թե ինչպես հայրը ոտը ծանրաշարժ իջեցրեց մրրցարշավի կառքի նստելատեղից, հանեց գլխարկը։

— Եկել ենք դիմավորելու թանկագին հյուրերին։ Էհ, թողեք մի տեսնեմ ձեզ...— բամբ ձայնով ասաց ծերունին՝ անճոռնի շարժմամբ գրկելով հարսին, կանաչավուն-սպիտակ, ծխահարված բեղերի փնջերը հպելով նրա թշերին։

— Նստեցեք մեզ հետ, հայրիկ։ Քշի՛ր, կառապան։ Ա՜-ա-ա, Սաշկա պապի, բարև, սա՛ղ ես, էլի՛։ Հայրիկ, նստեցեք իմ տեղը, ես կտեղավորվեմ կառապանի կողքին։

Ներունին նստեց Օյլգայի կողքին, թաշկինակով սրբեց բեղերը ու զուսպ կերպով, առերևույթ զվարթությամբ նայեց որդուն։

— Էհ, ո՞նց ես, ջանըս։

— Շատ ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ։

— Ասում ես հաշմանդամ ես, էլի՛։

— Ի՞նչ արած, հաշմանդամ եմ։

Հայրը շինծու ձգվածությամբ նայում էր Եվգենիին՝ փորձելով խստության տակ թաքցնել կարեկցության արտահայտությունը, աշխատելով չնայել որդու համազգեստի դատարկ, կանաչ, գոտու տակ խոթած թևքին։

— Ոչինչ, ընտելացել եմ։— Եվգենին թոթվեց ուսը։

— Իհարկե կընտելանաս,— հապճեպ վրա բերեց ծերունին,— միայն թե զլուխդ ողջ լինի։ Չէ՞ որ վահանով... հը՞, ինչպե՞ս։ Ասում եմ վահանով ես եկել։ Եվ նույնիսկ գերի վերցրած գեղեցկուհու հետ, հը՞։

Եվգենին զմայլվում էր հոր նրբին, մի փոքր հնացած բարեկրթությամբ, աչքերով հարցնում Օյլգային՝ «Հը՛, ի՞նչպես է դուր գալիս ծերունին», ու Օյլգայի աշխույժ ժպիտից, ջերմություն արտահայտող աչքերից առանց խոսքերի հասկացավ, որ հայրը նրան դուր է եկել։

Գորշ, կիսավարդագույն ձիերը կառքն արագ տանում էին

Բլրալանջից ներքև։ Բլրակից երևացին շենքերը, տնամերձ պուրակի կանաչ, փռված բաշը, սպիտակ պատերով տունը, պատուհանները ծածկող թխկիները։

— Որքա՜ն լավ է, ախ, լավ է,— աշխուժացավ Օյլգան։

Բակից դուրս գալով, բարձր ցատկումներով մոտ վազեցին բարակները։ Նրանք շրջապատեցին կառքը։ Սաշկա պապին ետևից մտրակով շրմփացրեց նրանցից մեկին, որ ցատկում էր կառքի մեջ, ու բարկացկոտ գոռաց.

— Ուզում ես կառքի տա՞կ ընկնել, սատանա՜։ Դե կորիգնա։

Եվգենին նստել էր մեջքը դեպի ձիերը. գրանք երբեմն փնչում էին, քամին ետ էր բերում մանրիկ կաթիլները, ցողում նրա վիզը։

Նա ժպտալով նայում էր հորը, Օյլգային, ճանապարհին, որի վրա հասկեր էին թափթփված, բլրակին, որ դանդաղ բարձրանում էր, ծածկում հեռավոր բլրաշարքը և հորիզոնը։

— Ի՜նչ խուլ տեղ է և ինչպիսի՜ անդորրություն...

Օյլգան ժպտալով նայում էր ճանապարհի վերևում լուռ թռչող սերմնագռավներին, դեպի ետ սլացող բարձվենյակի ու իշառվույտի թփերին։

— Դուրս են եկել մեզ դիմավորելու։— Պանը կկոցեց աչքերը։

— Ովքե՞ր։

— Ծառաները։

Եվգենին ետ նայելով ու դեռ լավ չտեսնելով տան մոտ կանգնածների դեմքերը, զգաց, որ կանանցից մեկն Ակսինյան է, թունդ կարմրեց։ Նա սպասում էր, որ Ակսինյայի դեմքի վրա հուզմունք կարտահայտվի, բայց երբ կառքը կայտառ սվսվալով մոտեցավ դարպասին և նա սրտագող նայեց աջ կողմը ու տեսավ Ակսինյային, նրան ապշեցրեց վերջինիս դեմքը, որ զուսպ ուրախություն էր արտահայտում ու ժպտում էր։ Լիստնիցկու ուսերից ասես մի ծանրություն ընկավ, նա հանգստացավ, պատասխանեց Ակսինյայի բարևին։

— Ինչպիսի՜ արատավոր գեղեցկություն՜, ո՞վ է դա... Գրգռիչ կերպով գեղեցիկ է, այնպես չէ՞,— Օյլգան հիացած աչքերով ցույց տվեց Ակսինյային։

Բայց Եվգենին վերստին արիացավ. հանգիստ ու սառն պատասխանեց.

— Այո, գեղեցիկ կին է։ Դա մեր աղախինն է։

Օյլգայի ներկայությունը տան մեջ ամեն ինչի վրա իր դրոշմն էր դնում։ Մերուկ պանը, որ առաջ տանը ամբողջ օրերով գիշերային շապկով և տաք, գործած վարտիքով էր լինում, հրամայեց սնդուկներից հանել նավթալինի հոտ արձակող սերթուկները և կոշիկների մեջ չդրվող գեներալական շալվարները։ Նա, որ առաջ անփույթ էր ամեն բանի մեջ, ինչ որ իր անձնավորությանն էր վերաբերում, այժմ գոռում էր Ակսինյայի վրա, եթե արդուկած սպիտակեղենը որևէ փոքրիկ ծալ էր ունենում, ու աչքերին սարսափելի արտահայտություն էր տալիս, երբ Ակսինյան առավոտները նրան լավ չմաքրված կոշիկներ էր հրամցնում։ Մերուկը թարմացած էր, Եվգենին հաճելի զարմանք էր զգում՝ նայելով նրա մշտապես մաքուր սափրված, պլպլան թշերին։

Ակսինյան ասես մի վատ բան նախազգալով, աշխատում էր գոհացնել դեռատի տիրուհուն, քծնողաբար հնազանդ էր և չափից դուրս ծառայական։ Լուկերյան կաշվից դուրս էր գալիս, որ լավ ճաշ պատրաստեր, ու ինքն էլ գերազանցում էր իրենից՝ չափազանց հաճելի համ ունեցող սոուսներ ու կերակրի թանձր հեղուկներ հնարելու մեջ։ Յագոդնոյում կատարված փոփոխությունների քայքայիչ ազդեցությունը շոշափեց նույնիսկ Սաշկա պապին, որը նիհարել էր ու խիստ ծերացել։ Մի անգամ արտաքին սանդուղքի մոտ պանը հանդիպեց նրան, ոտից գլուխ զննեց ու, չարագուշակ արտահայտություն տալով դեմքին, մատով կանչեց նրան։

— Այդ ի՞նչ է, շան որդի, հը՞,— պանի աչքերից սարսափ էր կաթում,— այդ ի՞նչ վիճակումն է շալվարդ, հը՞։

— Այսպես է, էլի՛,— հանդգնաբար պատասխանեց Սաշկա պապին, բայց ինքը մի փոքր շփոթվեց թե՛ անսովոր հարցուփորձից և թե՛ իր տիրոջ դողդոջուն ձայնից։

— Տանը ջահել կին կա, իսկ դու, գյադայի մեկը, դու ուզում ես ինձ գերեզմա՞ն դնել, հը՞։ Ինչո՞ւ շալվարդ չես կոճկում, մունտռիկ ավանակ, հը՞։

Սաշկա պապի կեղտոտ մատները շոշափեցին շալվարի առջևի մասը, սահեցին խոշոր կոճակների երկար շարքի, ասես անհնչուն հարմոնի կափարիչների վրայով։ Նա ուզում էր էլի մի խիստ հանդուգն բան ասել իր տիրոջը, բայց սա, ինչպես երիտասարդության ժամանակ, ոտը խփեց գետնին, ու այնպես խփեց, որ սրաքիթ, հին ձևի սապոգի ներբանն էլ երևաց. պանը գոռաց.

— Հա՛յդա ախոռ, մա՛ռչ։ Լուկերյային կստիպեմ եռաջրով խաշե՛լ քեզ։ Կեղտը դեն կշպրտեմ, ձիո՛ւ մռութ։

Եվգենին հանգստանում էր, հրացանով թափառում անջրդի ձորահովտում, հնձած կորեկի արտերի մոտ կաքավներ էր որսում։ Նրան մի բան էր մտահոգում,— Ակսինյայի հարցը։ Բայց մի երեկո հայրը Եվգենիին իր մոտ կանչեց. վախլուկ նայելով դռանը ու, խուսափելով որդու աչքերին հանդիպելուց, ասաց.

— Գիտե՞ս ինչ, ես... Ներիր ինձ, որ միջամտում եմ քո անձնական գործերին։ Բայց ես ուզում եմ գիտենալ, թե դու ինչպես պիտի վարվես Ակսինյայի հետ։

Եվգենին ինքն իրեն մատնեց նրանով, որ հապճեպորեն հանեց ու վառեց ծխախոտը։ Նա դարձյալ շիկնեց ինչպես ժամանելու օրը, ու զգալով, որ կարմրում է, դրանից է՛լ ավելի կարմրեց։

— Չգիտեմ... Ուղղակի չգիտեմ...— անկեղծորեն խոստովանեց նա։

Ծերունին ծանրակշիռ կերպով ասաց.

— Իսկ ես գիտեմ։ Գնա և իսկույն խոսիր նրա հետ։ Խոստացիր փող, մեզնից ձեռք քաշելու գին,— այստեղ ծերունին ժպտաց բեղի տակին,— խնդրիր, որ մեկնի։ Մենք ոչնչ մեկ ուրիշին կգտնենք։

Եվգենին անմիջապես գնաց սպասավորների շենքը։

Ակսինյան մեջքը դեպի դուռը դարձրած, խմոր էր հունցում։ Մեջքի վրա երևում էր երկայնակի փոսը, թիակների շարժումը։ Դողում էին մինչև արմունկները քշտած թուխ, պարարտ թևերի մկանները։ Եվգենին նայեց փարթամ մազերի խոշոր խոպոպներով պատած նրա վզին ու ասաց.

— Ակսինյա, խնդրում եմ ձեզ մի բոպեով։

Ակսինյան արագ շուռ եկավ՝ աշխատելով փայլ առած

իր դեմքին ծառայակամության և անտարբերության արտահայտություն տալ։ Բայց Եվգենին նկատեց, որ իջեցնելով թևքերը, դողում էին նրա մատները։

— Գալիս եմ։— Ակսինյան մի երկչոտ հայացք նետեց խոհարարուհու վրա, ու անկարող լինելով թաքցնել ուրախությունը, երջանիկ և աղերսագին ժպիտով քայլեց դեպի Եվգենին։

Մուտքի սանդուղքի վրա Եվգենին նրան ասաց.

— Գնանք այգի։ Պետք է խոսել։

— Գնանք,— ուրախացած և հլու համաձայնեց Ակսինյան, կարծելով, որ դրանով վերսկսվում են նախկին հարաբերությունները։

Ճանապարհին Եվգենին ցածրաձայն հարցրեց.

— Դու գիտե՞ս, թե ինչի համար քեզ կանչեցի։

Մթության մեջ ժպտալով, Ակսինյան բռնեց նրա ձեռքը, բայց Եվգենին խսկույն ետ քաշեց այն, ու Ակսինյան ամեն ինչ հասկացավ։ Կանգ առան։

— Ի՞նչ էիք ուզում, Եվգենի Նիկոլաևիչ։ Ես այստեղից դենը չեմ գնա։

— Լավ, մենք կարող ենք հենց այստեղ էլ խոսել։ Մեզ ոչ ոք չի լսում...— Եվգենին շտապում էր, խճճվում խոսքերի աննշմար ցանցում։— Դու պետք է հասկանաս ինձ։ Այժմ ես չեմ կարող քեզ հետ այնպես լինել, ինչպես առաջ... Ես չեմ կարող քեզ հետ ապրել... Հասկանո՞ւմ ես։ Հիմա ես ամուսնացած եմ և, որպես ազնիվ մարդ, չեմ կարող ստորություն անել... Խիղճս թույլ չի տալիս...— ասում էր Եվգենին՝ սաստիկ ամաչելով իր վերամբարձ խոսքերից։

Գիշերը հենց նոր էր եկել մթին արևելքից։

Արևմուտքում դեռ բոսորավառված էր վերջալույսի հրդեհած երկնքամասը։ Կալում, լապտերների լույսով կալսում էին «լավ եղանակին». այնտեղ արագ ու եռանդով խփում էր մեքենայի զարկերակը, աղմկում էին բանվորների ատամնանիվը, որ անդադար կերակրում էր շատակեր կալսիչը, խռպոտ ու բերկրալի բղավում էր՝ «բեր-տուր, բեր-տուր, բե՛ր-տուր»։ Այգում կուտակվում էր լռությունը։ Եղինջի, ցորենի, ցողի բուրմունք էր զգացվում։

Ակսինյան լուռ էր։

— Ի՞նչ կասես, ինչո՞ւ ես լռում, Ակսինյա։

— Էհ, ի՞նչ ասեմ։

— Ես քեզ վող կտամ։ Դու պետք է մեկնես այստեղից։ Ես կարծում եմ, որ կհամաձայնվես... Ինձ համար ծանր կլինի շարունակ տեսնել քեզ։

— Մի շաբաթից հետո ամիսը կլրանա։ Կարելի՞ է այդ մի շաբաթն էլ ծառայել։

— Իհարկե, իհարկե։

Ակսինյան մի փոքր լռեց, հետո մի տեսակ կողքի շարժվելով, անհամարձակ, ասես տկար վիճակում մոտեցավ Եվգենիին, ասաց.

— Դեհ, ի՜նչ արած, կգնամ... Բա ինձ չե՞ս խղճա վերջին րոպեին։ Ինձ կարիքն է այսպես անամոթ դարձել... Մենակ հոգիս դուրս եկավ... Դու ինձ մի՜ փնովի, Ժենյա։

Նրա ձայնը հնչեղ ու շոր էր։ Եվգենին իզուր էր փորձում հասկանալ՝ լո՞ւրջ է ասում նա, թե՞ կատակում է։

— Ի՞նչ ես ուզում։

Եվգենին սրտնեղությամբ հազաց ու հանկարծ զգաց, որ Ակսինյան նորից երկչոտ փնտրում է նրա ձեռքը...

Հինգ րոպեից հետո նա դուրս եկավ հաղարջի թաց, բուրավետ թփի տակից, հասավ ցանկապատին, ու փստացնելով ծխախոտը, թաշկինակով երկար սրբեց շալվարը, որի ծնկները կանաչել էին հյութալի խոտից։

Տան արտաքին սանդուղքով բարձրանալիս ետ նայեց։ Սպասավորների շենքում, լուսավորված պատուհանից երևում էր Ակսինյայի վայելչակազմ կերպարանքը. ձեռները գլխին տարած, Ակսինյան շտկում էր մազերը, նայում լամպին, ժպտում...

VI

Հասունացել էր փետրախոտը։ Տափաստանը բազմավերստ տարածությամբ ծածանվող ալիքաթ էր հագել։ Քամին առաձգականորեն տափում էր այն, վրա հասնում, գըզգըզում, թմբացնում, կապտավուն-արևակնային ալիքները քշում մերթ դեպի հարավ, մերթ դեպի արևմուտք։ Այնտեղ, ուր սրարշավում էր ուժգնաթափ օդահոսանքը, փետրախոտը աղոթարարի նման կռանում էր գետնին, ու նրա սպիտակավուն լանջի վրայով երկար ձգվում էր սևին տվող մի արահետ։

Թոշնել էին գույնզգույն խոտաբույսերը։ Բլրակների վրա ճկվել էր անուրախ, խանձված օշինդրը։ Արագ սահում էին կարճ գիշերները։ Գիշերները ածխանման-սև երկնքում շողում էին անթիվ ու անքանակ աստղերը. լուսինը,— կազակական արեգակը,— նվազած կողով սևին տալով, ժլատ, սպիտակավուն լույս էր սփռում. լայնարձակ Հարդագողի ճանապարհը միաձուլվում էր աստղային այլ ուղիների հետ։ Բարկ օդը խիտ էր, քամին շոր էր, օշինդրաբույր. գետինքը, որ հագեցված էր ամենազոր օշինդրի էլի նույն դառն բույրով. զովություն էր տենչում։ Երերվում էին սիգապանծ աստղուղիները, որոնցով ոչ սմբակ էր անցել, ոչ էլ ոտք. աստղերի ցորնացրոնքը ոչնչանում էր սևահողանման սև երկընքում՝ առանց ծլելու և առանց ծիլերի բերկրանք վառելու. լուսինը—ոնց որ չորացած աղուտ, իսկ տափաստանով մեկ—չորություն, պառկած խոտ ու դրա վրա՝ լորերի աշխույժ, անլռելի, արծաթահնչուն դայլայլը ու բզեզների մետաղե զրնգոցը։

Իսկ ցերեկները՝ տաք ու տոթ, ծխանման մուժ։ Երկնքի խունացած լազուրում՝ անողոք արև, ամպերի բացակայություն և ուրուրի տարածված թևերի կինամոնագույն, պողպատե կիսաղեղները։ Տափաստանով մեկ կուրացուցիչ կերպով, պայծառ շողում է փետրախոտը, մշուշվում ուղտագույն, թուխ, տաք խոտը. ուրուրը թեքվելով՝ լողում է կապույտ կամարում. ներքևում, խոտի վրայով լռին սահում է նրա ահագին ստվերը։

Հոգնածորեն ու խռպոտ ճստճստում են գետնասկյուռները։ Բներից դուրս տված, դեղնող, տաք հողի թմբիկների վրա ննջում են արջամկները։ Տափաստանը տաք է, բայց մեռած է, ու շուրջն ամեն ինչ տաղտկալիորեն անշարժ։ Նույնիսկ կուրգանն էլ հեքիաթայնորեն ու անուրջ, որպես երազում, կապույտին է տալիս տեսանելիության սահմանի վրա։

Հայրենի՜ տափաստան։ Դառն քամի, որ օրորում է չո-

կային մայրացուների ու հովատակների բաշերը։ Ձիու դունչը աղիանում է քամուց, և ձին, ներշնչելով դառն-աղի բույրը, ծամծմում է մետաքսանման շրթունքներով ու վրրընջում՝ դրանց վրա զգալով քամու և արևի կողմնակի համը։ Հայրենի՜ տափաստան Դոնի ցածր երկնի տակ, ձորակների, չոր հովիտների, կարմրակավոտ յառերի ոլորոլոր գծեր, փետրախոտե հեռուներ՝ ձիու սմբակի կանաչած, փոս ընկած հետքով, իմաստուն լռությամբ խոյացած կուրգաններ, որ պահպանում եք կազակական թաղված փառքը... Խոնարհում եմ գլուխս ու որդիաբար համբուրում քո անուշ հողը, Դոնի՜ տափաստան, որ ողողված ես կազակական չժանգոտող արյունով։

Նա փոքրիկ, վտիտ, օձի գլուխ ունի։ Ականջները մանր են ու արագաշարժ։ Կրծքի մկանները լիակատար չափով զարգացած են։ Ոտները բարակ են, ուժեղ, կոճիկներն անբասիր են, սմբակները ողորկ՝ ինչպես գետաքարը։ Հետույքը մի քիչ կախ է, պոչը թել-թել։ Նա Դոնի զտարյուն նժույգ է։ Ավելին՝ նա միանգամայն ազնվացեղ է, նրա երակներում ո՛չ մի կաթիլ այլ արյուն, ու ցեղայնությունը նկատվում է ամեն ինչում։ Նրա անունը Մայլբրուկ է։

Ջրարբում պաշտպանելով իր մատակ ձիուն, նա կռվում էր մի ուրիշ, ավելի ուժեղ ու տարիքավոր հովատակի հետ, ու վերջինս սաստիկ վիրավորեց նրա առջևի ձախ ոտը, չնայելով, որ արոտավայրում ձիերը միշտ էլ առանց պայտերի են լինում։ Նրանք ծառս էին լինում, կրծում միմյանց, խրփում առջևի ոտներով, պոկում մեկը մյուսի կաշին...

Ձիարածն այնտեղ չէր, նա քնել էր տափաստանում՝ մեջքը արևին դեմ արած ու փոշոտ, տաք սապոգներով ոտները տարածած։ Հակառակորդը Մայլբրուկին գցեց գետին, հետո ջոկից հեռո՛ւ-հեռու քշեց ու արյունլվիկ վիճակում թողնելով այնտեղ, զավթեց երկու ջոկն էլ, տարավ Ճահճոտ ձորակի երկարությամբ։

Վիրավորված հովատակին տեղավորեցին ախոռում, բուժակը բուժեց նրա վնասված ոտը։ Իսկ վեցերորդ օրը Միշկա Կոշևոյը, որ եկել էր վերակացուին զեկուցում տալու,

ականատես եղավ, թե ինչպես Մայլբրուկը ցեղը շարունակողի հզոր բնազդով տարված, կրծելով կտրեց սանձափոկը, դուրս թռավ ախոռից, ու վերցնելով հանրակացարանի մոտ արածող, երկու թե երեք ոտները կապած զամբիկներին,— որոնցով երթևեկում էին ձիարածները, վերակացուն ու բուժակը,— տարավ տափաստան,— սկզբում վարգով, հետո էլ սկսեց կծոտել ետ մնացողներին, շտապեցնել։ Ձիարածներն ու վերակացուն դուրս թռան հանրակացարանից, լսեցին միայն, թե ոտնակապանքներն ինչպես են շրմփալով զարկվում զամբիկներին։

— Անիծվածը մեզ առանց ձիերի թողեց, հիմի ոտով պիտի գնանք...

Վերակացուն հայհոյանք թափեց, բայց հեռացող ձիերին նայում էր ո՛չ առանց ծածուկ հավանության։

Կեսօրին Մայլբրուկը ձիերը բերեց ջրելու։ Հետիոտն ձիարածները նրանից անջատեցին զամբիկներին, իսկ Միշկան թամբեց նրան, տարավ տափաստան ու խառնեց առաջվա ջոկին։

Երկու ամիս ծառայելով իբրև ձիարած, Կոշևոյը ուշադրությամբ ուսումնասիրեց արոտավայրում գտնվող ձիերի կյանքը. ուսումնասիրեց ու համակվեց խորին հարգանքով դեպի նրանց խելքը և ոչ մարդկային ազնվությունը։ Նրա աչքերի առաջ զուգավորվում էին մայրացուները. և նախնադարյան պայմաններում կատարվող այդ հավերժական ակտը այնքան բնականորեն անարատ ու պարզ էր, որ Կոշևոյի մտքում ակամայից հակադրություն էր առաջացնում ո՛չ հօգուտ մարդկանց։ Բայց ձիերի հարաբերության մեջ նաև շատ բան մարդկային էր։ Օրինակ, Միշկան նկատում էր, որ պառավող Բախարը հովատակը, որ սանձարձակ ու կատաղի էր ու մի փոքր կոպիտ էր վարվում զամբիկների հետ, ջոկում էր չորս տարեկան շիկակարմիր, գեղեցիկ մի զամբիկ, որը ճակատին աստղանման նախշ ուներ, աչքերն էլ վառվռուն էին։ Բախարը դրա մոտ միշտ էլ անհանգիստ, հուզված ու խստաբարո էր լինում, միշտ էլ մի առանձին, զուսպ ու կրքոտ փնչոցով հոտոտում էր նրան։ Բախարը սիրում էր արխաջում իր չար գլուխը դնել սիրած զամբիկի գավակին ու այդպես երկար ննջել։ Միշկան մոտիկից նա-

յում էր նրան, տեսնում, թե ինչպես նրա բարակ կաշվի տակ թույլ խաղում են մկանների կապուկները, ու Միշկային թըվում էր, որ Բախարը ծերունական անհույս, բուռն ու տխուր սիրով է սիրում այդ զամբիկին։

Կոշևոյը կանոնավոր էր ծառայում։ Ըստ երևույթին նրա ջանադրության լուրը հասել էր ստանիցայի ատամանին, ու օգոստոսի սկզբին վերակացուն հրաման ստացավ՝ Կոշևոյին գործուղել ստանիցայի վարչության տրամադրության տակ։

Միշկան իսկույն պատրաստվեց, հանձնեց պետական հանդերձանքը և նույն օրվա երեկոյան մեկնեց տուն։ Նա անդադար շտապեցնում էր իր զամբիկին։ Մայրամուտին արդեն անցավ Կարգինից և այնտեղ, բլրակի վրա հասավ մի սայլի, որը գնում էր Վեշենսկու ուղղությամբ։

Ուկրաինացի սայլապանը քշում էր քրտնակալած, պարարտ ձիերը։ Ջսպակավոր սայլի ետին մասում կիսապառկած էր վայելչակազմ, լայնաթիկունք մի տղամարդ քաղաքային ձևի պիջակով և ծոծրակին քշած գորշ, ֆետրե գըլխարկով։ Միշկան որոշ ժամանակ գնում էր սայլի ետևից, դիտում այդ մարդու լայն, ցնցումներից շարժվող ուսերը, օձիքի սպիտակ, փոշոտված շերտը։ Ճանապարհորդի ոտների մոտ դրված էր մի դեղին ճամպրուկ ու մի պարկ, որը ծածկված էր ծալված վերարկուով։ Սիգարի անծանոթ հոտը ասր խտղտում էր Միշկայի քիթը։ «Որևէ մի մեծավոր է, գնում է ստանիցա»,— մտածեց Միշկան, երբ իր զամբիկն արդեն սայլի կողքից էր գնում։ Նա շեղակի նայեց լայնեզր գլխարկի եզրերի տակ ու կիսաբացեց բերանը՝ զգալով, թե ինչպես վախից ու մեծ զարմանքից իր մեջքով սարսուռ է անցնում. Ստեպան Աստախովն էր կիսապառկել սայլի վրա՝ անհամբերությամբ ծամծմելով սիգարի սև ծայրը, կկոցելով սուր, պայծառ աչքերը։ Ինքն իրեն չհավատալով, Միշկան մի անգամ էլ դիտեց իր հայրենակցի ծանոթ, տարորեն փոխված դեմքը, վերջնականապես համոզվեց, որ սայլի վրա օրորվողը հենց կենդանի Ստեպանն է, ու հուզմունքից քրտնելով՝ հազաց.

— Ներողություն, պարոն, դուք Աստախովը չե՞ք։

Սայլի վրայի մարդը գլխի շարժումով գլխարկը քշեց ճակատին. շուռ գալով, աչքերը հառեց Միշկայի վրա։

— Այո, Աստախովն եմ։ Ի՞նչ կա որ։ Մի՞թե դուք... Կաց, դու հո Կոշևո՞յն ես, չէ՞։— Նա վրա նստեց ու ծայրերը կտրած, շագանակագույն բեղերի տակին ժպտալով միայն թուխ շրթունքներով, աչքերում ու ամբողջ ծերացած դեմքի վրա անմատչելի խստություն պահպանելով, շփոթված և ուրախացած մեկնեց ձեռքը։— Կոշևո՞յն ես, Միխայի՞լը։ Ա՛յ թե ոնց տեսնվեցինք... Շատ ուրախ եմ...

— Բա այդ ո՞նց է, ախր ո՞նց թե այդպես.— Միշկան զցեց սանձը, տարակուսանքով տարածեց ձեռները.— բա ասում էին, թե քեզ սպանել են։ Մտիկ եմ անում՝ հրես Աստախովը...

Ժպիտը ծաղկեց Միշկայի դեմքին, նա սկսեց անհանգիստ շարժումներ անել թամքի վրա, բայց Ստեպանի արտաքինը, մաքուր, խուլ առոգանությունը շփոթեցրին նրան. նա փոխեց վարվելաձևը ու այնուհետև խոսակցության ժամանակ Ստեպանին շարունակ «դուք» էր ասում, անորոշ կերպով զգալով ինչ-որ անտեսանելի մի սահման, որը բաժանում էր նրանց։

Երկուսի միջև խոսակցություն բացվեց։ Ձիերը քայլքով էին գնում։ Արևմուտքում ճոխ հրավառվում էր վերջալույսը, երկնքում հետզհետե մթնում էին կարմրաշող ամպերը։ Ճանապարհի կողքին, կորեկի արտերում զի՛լ, անդադար դայլայլում էր լորը, փոշոտ լռություն էր նստում տափաստանի վրա, ուր դադարել էին ցերեկվա իրարանցումն ու աղմուկը։ Զուկարինսկու և Կրուժիլինսկու ճանապարհների բաժանման տեղում, յասամանագույն երկնքի ֆոնի վրա երևում էր մի մատուռի թոշնած սիլուետը. դրա վրա ուղղաձիգ կախվել էր թուխ-աղյուսագույն, խիտ ամպերի վիթխարի մի կուտակ։

— Բա դուք ո՞րտեղից եք եկել, Ստեպան Անդրեիչ,— ուրախացած հարցրեց Միշկան։

— Գերմանիայից։ Դուրս պրծա, եկա հայրենիք։

— Բա մեր կազակներն ասում էին, թե իրենց աչքերի առաջ սպանեցին Ստեպանին։

Ստեպանը պատասխանեց զուսպ, միապաղաղ տոնով, ասես նեղվում էր հարցուփորձից.

— Վիրավորվեցի երկու տեղից, իսկ կազակները... էհ,

ի՞նչ ասեմ. նրանք թողին ինձ ու հեռացան... Գերի ընկա... Գերմանացիները բուժեցին, ուղարկեցին աշխատանքի...

— Ձեզանից կարծեմ նամակներ չէին գալի...

— Ո՞ւմ պիտի գրեի։— Ստեպանը դեն գցեց սիգարի մնացորդը և իսկույն վառեց երկրորդ սիգարը։

— Բա կի՞նդ։ Ձեր կինը ողջ-առողջ է։

— Ես հո նրա հետ չէի ապրում, կարծեմ դա հայտնի է։

Ստեպանի ձայնը չոր էր հնչում, դրա մեջ ոչ մի ջերմ հնչյուն չկար։ Կնոջը վերաբերող հիշեցումը նրան չհուզեց։

— Էհ, օտար երկրում չէի՞ք տխրում,— ագահությամբ հարցուփորձ էր անում Միշկան՝ կուրծքը համարյա հենելով թամքի դաշին։

— Սկզբում տխրում էի, իսկ հետո ընտելացա։ Լավ էի ապրում։— Մի քիչ լռելով՝ ավելացրեց.— ուզում էի բոլորովին մնալ Գերմանիայում, գերմանական հպատակություն ընդունել։ Բայց հետո կարոտեցի տանը, ամեն բան թողի, մեկնեցի։

Ստեպանն առաջին անգամ մեղմելով աչքերի անկյունների կոշտ ծալերը, ժպտաց։

— Իսկ այստեղ, մեզ մոտ, տեսնո՞ւմ եք ինչ իրարանցում է... Կռվում ենք իրար դեմ։

— Այո-ո՛... լսել եմ։

— Դուք ի՞նչ ճանապարհով եկաք։

— Ֆրանսիայից, շոգենավով, Մարսելից—այդպիսի քաղաք կա — մինչև Նովորոսիյսկ։

— Ձեզ էլ կմոբիլիզացնեն, չէ՞։

— Երևի... Ի՞նչ նոր բան կա խուտորում։

— Էհ, ո՞ր մեկն ասեմ. նոր բան շատ կա։

— Տունս անվնա՞ս է։

— Քամին օրորում է այն...

— Հարևանները։ Մելեխովենց տղերքը կենդանի՞ են։

— Կենդանի են։

— Մեր նախկին կնոջ մասին լուր ունե՞ք։

— Նա էլի այնտեղ է, Յագոդնոյում։

— Իսկ Գրիգորին... ապրո՞ւմ է նրա հետ։

— Ո՛չ, նա օրինական կնոջ հետ է ապրում։ Ձեր Ակսինյայից բաժանվեց...

— Ա՛յ թե ինչ... Չգիտեի։

Մի բոպե լուռ էին։ Կոշևոյը շարունակում էր ագահությամբ զննել Ստեպանին։ Հավանության ու հարգանքի տոնով ասաց.

— Երևում է, որ լավ էիք ապրում, Ստեպան Անդրեիչ։ Ձեր հագուստը կարգին է, ոնց որ աղնվականի հագուստ լինի։

— Այնտեղ բոլորն էլ մաքուր են հագնվում։— Ստեպանը կնճռոտեց դեմքը, բռթեց սայլապանի ուսը.— Դե՛հ, շտապիր։

Սայլապանը դանդաղ թափահարեց մտրակը, հոգնած ձիերը ծուլորեն քաշեցին քեղիները։ Սայլը մեղմ սվսվացնելով անիվները, ճռճվում էր փոսերի վրայով անցնելիս ու Ստեպանը, վերջացնելով խոսակցությունը, մեջքը դարձնելով դեպի Միշկան, հարցրեց.

— Խուտո՞ր ես գնում։

— Ոչ, գնում եմ ստանիցա։

Ճամփաբաժանում Միշկան շուռ եկավ դեպի աջ, կիսականգնեց ասպանդակների վրա։

— Հլա գնաք բարով, Ստեպան Անդրեիչ։

Վերջինս մատների ծանր հնգյակով ճմլեց գլխարկի փոշոտված եզրը, ու շեշտելով յուրաքանչյուր վանկը, ինչպես ոչ ռուս մարդ, սառն ու պարզ պատասխանեց.

— Մնա՛ք բարո՛վ։

VII

Ֆիլոնովո-Պովորինո գծի վրա հավասարեցվում էր ռազմաճակատը։ Կարմիրները հավաքում էին ուժերը, բռունցք էին պատրաստում հարված հասցնելու համար։ Կազակները թույլ էին ծավալում հարձակումը. ռազմամթերքի սուր կարիք էին զգում, չէին ձգտում մարզի սահմաններից դուրս գալու։ Ֆիլոնովոյի ճակատում մարտական գործողությունները փոփոխակի հաջողությամբ էին ընթանում։ Օգոստոսին համեմատաբար հանդարտություն տիրեց, և այն կազակները, որոնք ռազմաճակատից գալիս էին կարճատև արձա-

կուրդով, ասում էին, թե աշնան սկզբին պետք է զինադադար սպասել։

Իսկ այդ ժամանակ թիկունքում, ստանիցաներում ու խուտորներում հացի բերքահավաք էր կատարվում։ Պակասում էին աշխատող ձեռքերը։ Ցերեքն ու կնանիքը չէին կարողանում կատարել աշխատանքը. դրան խանգարում էր նաև այն, որ շարունակ բնակիչներ էին նշանակվում իրենց սայլերով ֆրոնտին ռազմամթերք ու պարեն հայթայթելու համար։

Տատարսկի խուտորից համարյա ամեն օր կարգագրով հինգ-վեց սայլ էր ուղարկվում դեպի Վեշենսկայա, այնտեղ դրանք բեռնվում էին փամփուշտներով ու արկերով լցված արկղերով, ուղարկվում փոխադրիչ կետ, որ գտնվում էր Անդրոպովսկի խուտորում, երբեմն էլ, այնտեղ սայլեր չլինելու դեպքում, ուղարկվում էին ավելի հեռու,— Խոպերին մոտիկ խուտորները։

Խուտորն անհանգիստ, բայց խուլ կյանքով էր ապրում։ Բոլորի մտքերը թռչում էին դեպի հեռավոր ճակատը, բոլորն էլ անհանգստությամբ ու ցավով սև լուրերի էին սպասում կազակների մասին։ Ստեպան Աստախովի գալուստը հուզեց ամբողջ խուտորը. յուրաքանչյուր խրճիթում, յուրաքանչյուր կալում հենց միայն այդ մասին էին խոսում։ Եկել էր մի կազակ, որը վաղուց թաղված էր, որին միայն պառավներն էին հիշում, այն էլ «ողորմի հոգուն» ասելով, որի մասին արդեն համարյա մոռացել էին։ Մի՞թե սա զարմանալի չէր։

Ստեպանը իջավ Անիկուշկայի կնոջ մոտ, իրերը տարավ խրճիթ, ու մինչդեռ տանտիրուհին նրա համար իրիկնահաց էր պատրաստում, գնաց դեպի իր տունը։ Տնտեսատիրոջ ծանր քայլերով երկար չափչփեց լուսնի սպիտակ լույսով ողողված բակը, մտավ կիսավեր մարագների ծածկերի տակ, զննեց տունը, ճոճեց ցանկապատերի ձողերը... Անիկուշկայի կնկա տանը, սեղանի վրա վաղուց արդեն սառել էր ձվածեղը, իսկ Ստեպանը էլի դեռ զննում էր իր բուսակալած տուն ու տեղը, ճքացնում մատները ու թլվատի նման ինչ-որ անհասկանալի բան էր քրթմնջում։

Հենց երեկոյան նրան այցելեցին կազակները, որ նրան

տեսնեն ու հարցուփորձ անեն գերության մեջ ապրած իր կյանքի մասին։ Անիկուշկայի օթախը լիքը լցվեց կնանիքով ու եբեխաներով։ Նրանք կանգնել էին հոծ բազմությամբ, լսում էին Ստեպանի պատմածները, սևին էին տալիս նրանց բացված բերանները։ Ստեպանը դժկամորեն էր խոսում, ժպիտը ոչ մի անգամ չթարմացրեց նրա ծերացած դեմքը։ Երևում էր, որ կյանքը խիստ ճկել, փոխել, ուրիշ մարդ էր դարձրել նրան։

Առավոտյան, երբ Ստեպանը դեռ քնած էր օթախում, եկավ Պանտելեյ Պրակոֆևիչը։ Նա բամբ ձայնով հազում էր բոի մեջ, սպասում, որ արթնանար եկվորը։ Օթախում զգացվում էր հողե հատակի մեղմ զովությունը, անծանոթ, սարթ թուքունի հեղձուցիչ հոտը ու հեռավոր ճանապարհի հոտը, որով երկար ժամանակ հագեցված է լինում ճամփորդ մարդը։

Ստեպանն արթնացավ, լսվեց լուցկու շխկոցը,— նա ծխեց։

— Թույլ կտա՞ս ներս մտնել,— հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը, ու կարծես մեծավորի մոտ եկած լինելով, հապճեպ շտկեց նոր վերնաշապկի դուրս ընկած ծալերը. Իլյինիչնան միայն տվյալ առիթով էր նրան հագցրել այդ վերնաշապիկը։

— Մտե՛ք։

Ստեպանը հագնվում էր՝ փստացնելով սիգարի մնացորդը, ծխից կկոցելով քնաթաթախ աչքերը։ Պանտելեյ Պրակոֆևիչը ո՛չ առանց երկչոտության ներս մտավ շեմքից, արմանք-զարմանք կտրեց Ստեպանի փոխված դեմքից ու նրա մեռաքսե տաբատակալի մետաղե մասերից, կանգ առավ, մակուչկաձև մեկնեց սև ձեռքը։

— Բարև քեզ, հարևան։ Սաղ ես, էլի՛...

— Բարև ձեզ։

Ստեպանը տաբատակալն անցկացրեց լայն, հուժկու ուսերին, շտկեց այն և արժանապատվությամբ իր ձեռքը դրեց ծերունու կոշտ ձեռքի մեջ։ Հարևանցիորեն նայեցին միմյանց։ Ստեպանի աչքերում թշնամանքի կապտավուն կայծեր բռնկվեցին. Մելեխովի շիլ, ուռուցիկ աչքերում՝ հարգանք ու թեթև, հեգնալից զարմանք։

— Ներացել ես, Ստյոպա... ծերացել ես, ջանս։

— Այո, ծերացել եմ։

— Քեզ համար մեռելոց էինք անում, ոնց որ Գրիշկայի համար...— Ասաց ու սրտնեղությամբ կտրեց խոսքը. անտեղի էր այդ հիշողությունը։ Փորձեց ուղղել բերանից թռցրածը.— փառք աստծո, ողջ-առողջ ես եկել... Փառք քեզ, տե՛ր։ Գրիշկայի համար էլ էինք մեռելոց անում, իսկ նա, ոնց որ Ղազարոսը, սաղ դուրս եկավ։ Արդեն երկու երեխա ունի, ու նրա կինը, Նատալյան, փառք աստծո, տուն-տեղ եղավ։ Լավ կնիկ է, հա՛-ա... էհ, բա դու ո՞նց ես, զավակս։

— Շնորհակալ եմ։

— Հարևանիդ մոտ հյուր կգա՞ս։ Արի, էլի, պատիվ արա, կխոսենք։

Ստեպանը հրաժարվեց, բայց Պանտելեյ Պրակոֆևիչը համառորեն խնդրում էր, նեղանում, ու Ստեպանն անձնատուր եղավ։ Լվացվեց, կարճ կտրած մազերը սանրեց դեպի վեր, ծերունու այն հարցի վրա, թե «բա քյաքուլդ ո՞ւր է, մսխե՞լ ես»,— ժպտաց, ու լայնեզր գլխարկը վստահորեն դնելով գլխին, առաջինը դուրս ելավ բակը։

Պանտելեյ Պրակոֆևիչը քծնելու չափ սիրալիր էր, այնպես որ Ստեպանն ակամա մտածեց՝ «Հին վիրավորանքի համար է այդպես ջանք թափում...»

Հետևելով ամուսնու աչքերի լուռ ցնցումներին, Իլյինիչնան արագ քայլում էր խոհանոցում, շտապեցնում Նատալյային ու Դունյաշկային, ինքն էր սեղան գցում։ Կնանիքը երբեմն հետաքրքրությամբ նայում էին սրբապատկերների տակ նստած Ստեպանին, աչքերով տնտղում նրա պիջակը, օձիքը, ժամացույցի արծաթե շղթան, սանրվածքը, լավ չթաքցրած զարմանքի ժպիտներով նայում էին միմյանց։ Ներս մտավ շիկնած Դարյան. շվարած ժպտալով ու գոգնոցի ծայրը քսելով բարակ շրթունքներին, կկոցեց աչքերը.

— Ա՛խ, հարևան, քիչ մնաց չճանաչեի ձեզ։ Դուք արդեն կազակի է՛լ նման չեք։

Պանտելեյ Պրակոֆևիչը առանց ժամանակ կորցնելու մի շիշ արաղ դրեց սեղանի վրա, շշի բերանից հանեց խիցը,— կոլոլած լաթը, հոտ քաշեց քաղցրա-դառնաբույր հեղուկից, գովեց այն.

— Փորձի՛ր։ Մեր տան արաղն է։ Որ լուցկին վառես ու մոտեցնես, կապույտ բոց կտա, աստված վկա։

Կցկտուր խոսակցություններ էին տեղի ունենում։ Ստեպանը դժկամությամբ էր խմում, բայց բավականաչափ խրմելուց հետո գինովցավ, կակղեց։

— Հիմի դու պետք է ամուսնանաս, հարևան։

— Ի՞նչ եք ասում, բա առաջվա կի՞նս։

— Առաջվա... Դե ի՞նչ կա որ... Կարծում ես առաջվա կինը չի՞ մաշվի։ Կինն ու մատակ ձին մեկ են. մատակ ձին կարող ես այնքան հեծնել, քանի դեռ բերանում ատամներ կան... Մենք քեզ համար ջահել կին կգտնենք։

— Մեր կյանքը խառնակվել է... Ամուսնանալու ժամանակ չի... Մեկ ու կես շաբաթ արձակուրդ ունեմ, հետո էլ պետք է ներկայանալ վարչություն, ու երևի ֆրոնտ կուղարկեն,— ասում էր Ստեպանը՝ հարբելով ու հետզհետե կորցնելով իր արտասահմանյան առոգանությունը։

Շուտով գնաց, Դարյան հիացած հայացքով ուղեկցեց նրան, ու այնուհետև նրա մասին սկսեցին վիճել, դատողություններ անել։

— Ա՛մա թե մարդ է դառել շան որդին։ Ո՞նց էր խոսում։ Ոնց որ թե ակցիզի չինովնիկ կամ թե մեկ ուրիշ աղա մարդ լինի... Գնում եմ մոտը, նա վեր է կենում ու շապկի վրայից աբրշումի շլնքաթոկեր է կապում, վրան էլ այվզուկներ, հոգիս վկա։ Թոկերն էլ այնպես խտտեցին քամակն ու դոշը, ոնց որ ձիուն։ Բա այդ ի՞նչ է, հը՞։ Մի բանի համար հարկավոր է, չէ՞։ Հիմի նա ոնց որ թե ուսումնական մարդ լինի,— հիացած ասում էր Պանտելեյ Պրակոֆևիչը, պարզապես գոհ լինելով, որ Ստեպանը հարգել էր նրա աղ ու հացը ու, մի կողմ թողնելով ոխը, եկել էր իր մոտ։

Խոսակցություններից պարզվեց, որ ծառայությունը վերջանալուց հետո Ստեպանը ապրելու է խուտորում, վերականգնելու է տունն ու տնտեսությունը։ Նա թռուցիկ կերպով ասել էր, թե միջոցներ ունի, ու դրանով Պանտելեյ Պրակոֆևիչի մեջ տարտամ մտքեր ու ակամա հարգանք էր առաջացրել։

— Երևում է, որ փող ունի,— նրա գնալուց հետո ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը,— անզգամը կապիտալ ունի, հա՛-

ա։ Կազակները գերությունից գալիս են տկլոր վիճակում, իսկ նա, տեսեք, է՛, աբրշում է հագել-կապել... Ո՛վ գիտի, մարդ է սպանել թե փող գողացել։

Ստեպանը առաջին օրերին հանգստանում էր Անիկուշկայի խրճիթում, փողոցում քիչ էր երևում։ Հարևանները հետաքրքրում էին լինում նրան, հսկում նրա յուրաքանչյուր շարժումը, նույնիսկ փորձեցին հարցուփորձ անել Անիկուշկայի կնոջը, թե Ստեպանը ինչ է անելու։ Բայց այդ կինը լռում էր, գաղտնապահություն անում, ասում էր, թե ինքը ոչինչ չգիտե։

Խուտորով մեկ այլևայլ լուրեր էին պտտվում այն դեպքից հետո, երբ Անիկուշկայի կնիկը Մելեխովներից ձի վարձեց ու շաբաթ օրը վաղ առավոտյան մեկնեց հայտնի չէ ուր։ Միայն Պանտելեյ Պրակոֆևիչը հասկացավ, թե ինչ էր կատարվում։ «Գնում է Ակսինյային բերելու»,— աչքով արավ նա Իլյինիչնային՝ կաղ զամբիկը լծելով տարանտասին։ Ու չսխալվեց։ Ստեպանի ցուցումով Անիկուշկայի կինը գնաց Յագոդնոյե. «Ակսինյային կհարցնես, թե արդյոք չի՞ վերադառնա ամուսնու մոտ՝ մոռանալով անցած վիրավորանքները»։

Ստեպանն այդ օրը առմիշտ կորցրեց պաղարյունությունն ու հանգստությունը, մինչև երեկո շրջում էր խուտորում, Մոխովի տան արտաքին սանդուղքի վրա երկար նստեց Սերգեյ Պլատոնովիչի ու Յացայի հետ, պատմեց Գերմանիայի, այնտեղ իր ապրելու, Ֆրանսիայով ու ծովով ճանապարհ անցնելու մասին։ Խոսում էր, լսում Մոխովի գանգատները, ու շարունակ անհամբերությամբ նայում ժամացույցին...

Մթնշաղին Յագոդնոյից վերադարձավ տանտիրուհին։ Ամառային խոհանոցում իրիկնահաց գցելով, պատմում էր, թե Ակսինյան վախեցավ անսպասելի լուրից, շատ հարցեր տվեց Ստեպանի մասին, բայց կտրուկ կերպով հրաժարվեց վերադառնալուց։

— Տեղից շարժվելու կարիք չունի նա, խանում-խաթունի պես է ապրում։ Կոկլիկացել է, երեսը սպիտակ է։ Մանր աշխատանք չի անում։ Էլ ի՞նչ է պետք։ Այնպես է հագել-կապել, որ իսկի մտքովդ էլ չի անցնի։ Լի օր է, իսկ նա

ձյան պես ճերմակ յուրկա է հագել, ձեռներն էլ մաքո՞ւր-մաքուր...— ասում էր տանտիրուհին՝ կուլ տալով նախանձոտ ախ ու վախը։

Ստեպանի այտերը կարմրում էին, խոնարհած, վճիտ աչքերում բարկացկոտ ու կարոտալից կայծեր էին բռնկվում ու մարում։ Ջնարակած թասից գդալով մածուն էր վերցնում՝ զսպելով ձեռքի դողը։ Դիտավորյալ դանդաղությամբ հարցեր էր տալիս.

— Ասում ես Ակսինյան պարծենո՞ւմ է իր ապրուստով։

— Բա ո՞նց։ Ո՞վ չի ուզենա այդպես ապրել։

— Իմ մասին հարցնո՞ւմ էր։

— Ո՞նց չէ։ Սփրթնեց, երբ ասացի, որ դուք եկել եք։

Ընթրելուց հետո Ստեպանը դուրս ելավ կանաչապատ բակը։

Արագահոս իջել ու մարել էր օգոստոսյան կարճատև մթընշաղը։ Գիշերվա խոնավավուն զովում անդադար թրխկթրխկում էին քամիչների թմբուկները, հատու ձայներ էին լսվում։ Դեղին, բծավոր լուսնի տակ մարդիկ ջանք էին թափում սովորական խառնաշփոթության մեջ. էրնում էին օրվա ընթացքում կալսած օրանը, հացահատիկը տանում ամբարները։ Խուտորում տարածված էր հենց նոր կալսած ցորենի ու մզեղային փոշու ջերմ, բարկ բույրը։ Հեռվում, հրապարակի մոտ թխկթխկում էր շոգեկալսիչը, շները հաչում էին։ Հեռավոր կալերում հեղվում էր ծորուն մի երգ։ Դոնից անուշահամ խոնավություն էր փչում։

Ստեպանը հենվեց ցանկապատին ու երկար դիտեց Դոնի բուռն հոսանքը, որ երևում էր փողոցի միջով, շողշողուն, գալարաձև շավիղը, որ լուսնից շեղակի ընկել էր գետի վրա։ Թավալվում էին խայտաբղետ, փրփրուն կոհակները։ Դոնի մյուս կողմում լուռ նիրհել էին բարդիները։ Թախիծը մեղմակի ու տիրաբար համակեց Ստեպանին։

Արշալույսին անձրև էր գալիս, բայց արևածագից հետո ամպերը ցրվեցին, ու երկու ժամից հետո միայն աղուրների չորացած ցեխակտորներն էին հիշեցնում անձրևային եղանակը։

Ստեպանը առավոտյան ժամանեց Յագոդնոյե։ Հուզվե-

լով, ձին կապեց դարպասի մոտ, կայտառ քայլերով, օրորվելով գնաց սպասավորների շենքը։

Ջորացած խոտաբույսերով պատած, ընդարձակ բակը գատարկ էր։ Ախոռի մոտ, աղբակույտի վրա հավերը քուջուջ էին անում։ Ընկած ցանկապատի վրա թրևում էր ագռավի պես սև մի աքաղաղ։ Կանչելով հավերին, նա այնպես էր ցույց տալիս, թե կտցում է ցանկապատի վրա սողացող կարմիր զատիկները։ Պարարտացած բարակները պառկել էին ստվերում, կառեթանոցի կողքին։ Վեց հատ սև, խայտաբղետ, պոչատ լակոտները իրենց մորը, մատղաշ, առաջին անգամ ցնկնած մի քածի գետնին տապալած, տոտիկներին հենված, ծծում էին՝ ետ-ետ քաշելով ճլորված, մոխրագույն պտուկները։ Աղայատան երկաթե կտուրի ստվերված կողմում պսպղում էր ցողը։

Ստեպանը ուշադրությամբ նայելով իր շուրջը, մտավ սպասավորների շենքը, հարցրեց հաստ խոհարարուհուն.

— Կարո՞ղ եմ տեսնել Ակսինյային։

— Իսկ դուք ո՞վ եք,— հետաքրքրվեց խոհարարուհին՝ գոգնոցով սրբելով քրտնած, չեչոտ դեմքը։

— Այդ ձեզ հարկավոր չէ։ Ակսինյան ո՞րտեղ կլինի։

— Պանի մոտ է։ Սպասեցեք։

Ստեպանը նստեց, սարսափելի հոգնածության ժեստով գլխարկը դրեց ծնկներին։ Խոհարարուհին չուգունե կճուճները էր դնում վառարանի մեջ, թխկթխկացնում կեռ ունելիքը՝ ուշադրություն չդարձնելով հյուրի վրա։ Խոհանոցում զգացվում էր մակարդված տվարոգի ու գայլուկի ճյուղերի հոտը։ Ճանճերը սև ցրոնքով ծածկել էին վառարանի բուխարիկը, պատերը, ալյուրոտ սեղանը։ Ստեպանը ուշքը լարած՝ ականջ էր դնում, սպասում։ Ակսինյայի քայլերի ծանոթ ձայնը նրան կարծես թե վեր թռցրեց նստարանից։ Նա վեր կացավ՝ ծնկներից վար գցելով գլխարկը։

Ակսինյան ներս մտավ՝ բերելով մի դաստա ափսեներ։ Նրա դեմքը սփրթնեց, փափլիկ շուրթերի անկյունները ցընցվեցին։ Նա կանգ առավ՝ ափսեները երկչոտությամբ սեղմելով կրծքին, վախեցած, անթարթ նայելով Ստեպանին։ Հետո էլ մի տեսակ պոկվեց տեղից, արագ մոտեցավ սեղանին, ափսեները վար դրեց։

— Բարև։

Ստեպանը շնչում էր դանդաղ, խորունկ, ինչպես քնի մեջ. շրթունքները բացվում էին լարված ժպիտից։ Նա լուռ, դեպի առաջ թեքվելով, ձեռքը մեկնեց Ակսինյային։

— Եկ օթախը, ինձ մոտ...— ժեստով հրավիրեց Ակսինյան։

Ստեպանը գլխարկը բարձրացրեց ինչպես ծանրություն։ Արյունը խփեց նրա գլխին, մշուշեց աչքերը։ Հենց որ մտան Ակսինյայի սենյակը ու նստեցին սեղանով անջատված, Ակսինյան լպստելով չորացած շուրթերը ու հոգոց հանելով՝ հարցրեց.

— Ո՞րտեղից բուսար...

Ստեպանը անորոշ ու անբնականորեն ուրախ շարժմամբ, գինովցածի նման թափահարեց ձեռքը։ Նրա շուրթերից դեռևս չէր չքացել ուրախության ու ցավի էլի նույն ժպիտը։

— Գերությունից... Եկել եմ քեզ մոտ, Ակսինյա...

Նա մի տեսակ անհեթեթ, անհանգիստ շարժումներ արեց. վեր կացավ, գրպանից հանեց մի փոքրիկ փաթեթ, ու անհամբերությամբ պոկելով դրա վրայի լաթը, չկարողանալով զսպել մատների դողը, հանեց կանացի արծաթե մի ժամացույց, ապարանջան ու էժանագին, կապույտ քարով մի մատանի... Այս բոլորը նա քրտնած ձեռքով մեկնեց Ակսինյային, իսկ սա աչք չէր կտրում իրեն օտար դեմքից, որը ծրմրվում էր նվաստության ժպիտից։

— Վերցրո՛ւ, քեզ համար եմ պահել... Հո միասին էինք ապրում...

— Ինչի՞ս է պետք, սպասիր...— շշնջում էին Ակսինյայի գունաթափ շրթունքները։

— Վերցրու... Մի՛ նեղացնի... Մեր հիմարությունից պետք է ձեռ քաշել...

Ակսինյան ձեռքով պաշտպանվելով վեր կացավ, մոտեցավ վառարանի պառկելատեղին։

— Ասում էին, թե դու մեռել ես...

— Իսկ դու ուրա՞խ կլինեիր։

Ակսինյան չպատասխանեց. արդեն ավելի հանգիստ վի-

ճակում ոտից-գլուխ զննելով ամուսնուն, աննպատակ շտկեց խնամքով արդուկած շրջազգեստի ծալերը։ Ձեռները դնելով մեջքին, ասաց.

— Անիկուշկայի կնկանը դո՞ւ էիր ուղարկել... Ասում էր, թե ինձ կանչում ես քեզ մոտ... ապրելու...

— Կգա՞ս,— ընդհատեց Ստեպանը։

— Չէ,— Ակսինյայի ձայնը կոշտ հնչեց։— Չէ, չեմ գալ։

— Ինչո՞ւ այդպես։

— Դրանից ձեռք եմ քաշել, մի քիչ էլ ուշ է... Ուշ է։

— Իսկ ես ուզում եմ տուն ու տեղ լինել։ Գերմանիայից էի գալիս, այնտեղ ապրելով միշտ էլ դրա մասին էի մտածում... Բա դու ի՞նչ պիտի անես, Ակսինյա։ Գրիգորին թողել է քեզ... Թե՞ դու ուրիշին ես գտել։ Լսել եմ, որ պանի տղայի հետ... Ճի՞շտ է։

Արյունը խփեց Ակսինյայի այտերին, ամոթից ծանրացած աչքերի կոպերի տակին արցունքներ երևացին։

— Հիմի նրա հետ եմ ապրում։ Ճիշտ է։

— Ես չեմ նախատում,— վախեցավ Ստեպանը,— ես նրա համար եմ ասում, որ գուցե դու քո բախտը չես որոշել։ Դու նրան երկար ժամանակ հարկավոր չես լինի, նա խաղ է անում... Ա՛յ, աչքերիդ տակին կնճիռներ կան... Նա քեզ կթողնի, երբ ձանձրացնես, կվռնդի։ Ո՞ւր պիտի գնաս։ Բա նոքարությունը չի՞ ձանձրացրել։ Տես, էլի՛... Ես փող եմ բերել։ Պատերազմը կվերջանա, կարգին կապրենք։ Կարծում էի, որ կմիանանք։ Ես ուզում եմ մոռանալ եղած-անցածը...

— Բա առաջ ինչի մասին էիր մտածում, սիրելի բարեկամ Ստյոպա,— ուրախության արցունքներով, կերկերաձայն ասաց Ակսինյան ու պառկելատեղից ետ քաշվեց, հույզ մոտեցավ սեղանին,— առաջ ի՞նչ էիր մտածում, երբ ջահել կյանքս սև արեցիր։ Դու ինձ Գրիշկայի գիրկը գցեցիր... Դու իմ սիրտը ցամաքեցրիր... Մի՞տդ է, թե ինչ արեցիր ինձ։

— Ես հաշիվ մաքրելու չեմ եկել... Դու... ի՞նչ գիտես։ Կարելի է ես շատ եմ ցավել դրա համար։ Կարելի է ես ուրիշ կյանքով եմ ապրել, հիշելով...— Ստեպանը երկար զննեց սեղանին դրած իր ձեռները, բառերը դանդաղ էր կապակցում, ասես դրանք քաշելով էր դուրս հանում բերանից.— մտածում էի քո մասին... Սիրտս արյունլվիկ էր լինում... Գիշեր-ցերեկ մտքիցս չէիր հեռանում... Ես այնտեղ ապրում էի մի այրի կնկա, գերմանուհու հետ... Հարուստ էի ապրում, ու թողի... Ուզեցի տուն գալ...

— Հանգիստ կյա՞նք ուզեցիր, հա՞,— ցասկոտ շարժելով ոունգները՝ հարցրեց Ակսինյան,— ուզում ես տուն ու տնդ լինել։ Գուցե ուզում ես երեխանե՞ր ունենալ, կի՞ն ունենալ, որ շորերդ լվա, ուտեցնի ու խմեցնի, հա՞։— Ու անբարյացակամորեն, մռայլ ժպտաց.— ոչ, Քրիստոս ազատե, պառավ եմ ես, հրես, կնճիռներ տեսար... Երեխաներ ունենալուց էլ ձեռք եմ քաշել։ Սիրուհի եմ, իսկ սիրուհիներին երեխաները չեն սազի... Այս տեսակ կինը ինչի՞ դ է պետք։

— Ճարպկացել ես, հա՛-ա...

— Ինչ որ կամ, այն եմ։

— Ուրեմն չե՞ս գա։

— Ոչ, չեմ գա։ Ո՛չ։

— Է՛հ ողջ-առողջ լինես։— Ստեպանը վեր կացավ, ձեռների մեջ ավելորդ տեղը շուռումուռ արեց ապարանջանը ու այն նորից դրեց սեղանի վրա։— Թե որ գալու միտք ունենաս, հայտնիր։

Ակսինյան նրան ճանապարհ դրեց մինչև դարպասը։ Երկար նայում էր, թե ինչպես անիվների տակից բարձրանում է փոշին, սքողում Ստեպանի լայն թիկունքը։

Դառն արցունքներ էր թափում Ակսինյան։ Երբեմնակի հեկեկում էր, մտածելով իր անմուրազ մնալու մասին, ողբալով նորից քամուն տված իր կյանքը։ Երբ իմացավ, որ ինքն այլևս հարկավոր չէ Եվգենիին ու երբ լսեց ամուսնու վերադարձի լուրը, որոշեց տեղափոխվել վերջինիս մոտ, որպեսզի կրկին մաս-մաս հավաքեր իր երջանկությունը, որը չէր եղել... Այս որոշմամբ սպասում էր Ստեպանին։ Բայց նրան տեսավ ստորացած, հնազանդ վիճակում, ու իր մեջ ծառա եղավ սև հպարտությունը, այն հպարտությունը, որ նրան, մերժվածին թույլ չէր տալիս մնալ Յագոդնոյում։ Նրան չենթարկվող չար կամքն էր ուղղություն տալիս նրա խոսքերին ու արարքներին։ Վերհիշեց իր կրած վիրավորանքները, վերհիշեց այն ամենը, ինչ որ տարել էր այդ մարդուց, նրա մեծ-մեծ երկաթե ձեռներից, ու ինքն էլ ան-

ջատում չցանկանալով, ներքուստ սարսափելով իր վարմունքից, շնչասպառ էր լինում խոցող խոսքերից—«Ոչ, չեմ գա քեզ մոտ։ Ո՛չ»։

Մի անգամ էլ հայացքը ուղղեց հեռացող սայլակին։ Ստեպանը թափահարելով մտրակը, չքացավ ճանապարհամերձ ցածր օշինդրի յասամանագույն եզրակտորի ետևում...

Մյուս օրը Ակսինյան ստանալով իր հաշիվը, հավաքեց իրերը։ Եվգենիին մնաս բարով ասելիս լաց եղավ.

— Ավել-պակասը ներեք, Եվգենի Նիկոլաևիչ։

— Է-է, ի՞նչ ես ասում, սիրելիս... Շատ շնորհակալ եմ քեզանից։

Եվգենիի ձայնը, թաքցնելով շփոթությունը, մեղմորեն ուրախ էր հնչում։

Ու Ակսինյան գնաց։ Երեկոյան Տատարսկի խուտորում էր։

Ստեպանը դարպասի մոտ դիմավորեց նրան։

— Եկա՞ր,— ժպտալով հարցրեց նա,— բոլորովի՞ն։ Կարելի՞ է հույս ունենալ, որ էլ չես գնա։

— Չե՛մ գնա,— որոշակի պատասխանեց Ակսինյան՝ սրտաբեկ դիտելով կիսավեր տունը և բակը, որ խիտ ծածկված էր թայլով ու սև քոլախոտով։

VIII

Դուրնովսկայա ստանիցայի մերձակայքում Վեշենսկու գունդը առաջին անգամ կռվի բռնվեց կարմիրգվարդիականների նահանջող զորամասերի հետ։

Գրիգորի Մելեխովի հրամանատարության տակ գտնվող հարյուրյակը կեսօրին գրավեց ծառաստանների մեջ ծվարած մի խուլ, փոքրիկ խուտոր։ Գրիգորին կազակներին ձիերից իջեցրեց ուռենիների խոնավավուն ստվերում, առվի մոտ, որ հոսում էր խուտորի միջով, ոչ խորունկ զառիթափի տակ։ Մոտիկ տեղում, սև, կակուղ հողի տակից գլգլալով հորդում էին աղբյուրները։ Ջուրը շատ սառն էր. կազակները գլխարկներով վերցնում, խմում էին այն ու հետո էլ գոհունակությամբ տնքալով՝ գլխարկները դնում էին քրտնած գլուխներին։ Շոգից նվաղած խուտորի վերևում ուղղաձիգ կանգնած էր արևը։ Թեժանում էր կեսօրվա մուժով շղարշված հողը։ Թունավոր-կիզիչ ճառագայթներով ողողված խոտաբույսերը և ուռենիների տերևները թույլ կախել էին գլխիկները, իսկ առվի կողքին, ուռենիների ստվերում առատ կուտակվել էր զովը, շքեղությամբ կանաչին էին տալիս կռատուկները ու խոնավ հողի սնուցած էլի ինչ-որ փարթամ խոտաբույսեր. փոքրիկ ջրափոսերում աղջկական ըղձալի ժպիտի նման շողում էր ջրոսպը. մի տեղ, ուղեդարձից դենը բադերը ճողփում էին ջուրը ու շփշփացնում թևերը։ Ձիերը փնչալով ձգտում էին դեպի ջուրը, քայլելիս ճլմփացնում ջրիկ ցեխը, հեծյալների ձեռներից պոկում սանձերը ու հասնում առվի մեջտեղը, պղտորում ջուրը ու շրթունքներով հստակ շիթ փնտրում։ Տաք քամին նրանց իջեցրած շրթունքներից ալմաստափայլ, խոշոր կաթիլներ էր պոկում։ Տարածվել էր կոխկրտած, տիղմոտ հողի, ցեխի ծծմբահոտը, ուռենիների ողողվող ու նեխած արմատների դառն ու քաղցրավուն բույրը...

Կազակները հենց նոր էին պառկել կռատուկների մեջ ու ծխում էին, երբ վերադարձավ պարեկը։ «Կարմիրները» բառը մի ակնթարթում գետնից վեր թռցրեց մարդկանց։ Սկսեցին ձգել ձիերի փորքաշները ու էլի մոտենալ առվին, լցնել սրվակները, խմել ու երևի ամեն մեկը մտածում էր՝ «Ո՞վ գիտի, էլ կհաջողվի՞ երեխի արցունքի պես պարզ այսպիսի ջուր խմել թե ոչ...»

Ճանապարհով անցան առուն, կանգ առան։

Խուտորից դենը, տեղ-տեղ գնդածաղիկներով պատած, գորշ-ավազոտ բլրակի վրա, մի վերստ հեռավորությամբ շարժվում էր թշնամու հետախուզախումբը։ Ուշ ձիավոր զգուշությամբ գալիս էին դեպի խուտորը։

— Մենք դրանց կբռնենք, թույլ կտա՞ս,— առաջարկեց Միտկա Կորշունովը Գրիգորիին։

Նա կիսադասակով շուրջանակի ճանապարհով անցավ խուտորի մյուս կողմը. բայց հետախուզախումբը, հայտնաբերելով կազակներին, ետ դարձավ։

Մեկ ժամից հետո, երբ մոտեցան գնդի մյուս երկու հեծյալ հարյուրյակները, ջոկատն առաջ շարժվեց։ Պարեկները հաղորդում էին, որ կարմիրները, թվով մոտավորապես հազար հոգի, գալիս են նրանց վրա։ Վեշենցիների հարյուրյակները կորցրին կապը աջ կողմից ընթացող 33-րդ Ելանյան-Բուկանովյան գնդի հետ, բայց և այնպես որոշեցին կռվի բռնվել։ Անցնելով բլրակից, իջան ձիերից։ Զիապահները ձիերը տարան դեպի խուտորն իջնող, ընդարձակ բլրագոգը։ Հեռվում, աջ կողմում ընդհարվեցին հետախուզախմբերը։ Շեշտակի ճարճատեց ձեռքի մի գնդացիր։

Շուտով երևացին կարմիրների նոսր շղթաները։ Գրիգորին իր հարյուրյակով դիրք բռնեց բլրագոգի վերևում։ Կազակները պառկեցին լանջի կատարին, որ ծածկված էր փոքրոտ մանրաթփերով։ Ցածրիկ, վայրի մի խնձորենու տակից Գրիգորին հեռադիտակով դիտում էր հակառակորդի հեռավոր շղթաները։ Նա պարզ տեսնում էր, թե ինչպես էին առաջանում առաջին երկու շղթաները, իսկ դրանց ետևում, հընձած հացի գորշ, չհավաքած լասերի միջև երթային մի սև շարասյուն շղթա էր կազմում։

Թե՛ նրան և թե՛ կազակներին զարմացրեց այն, որ առաջին շղթայի առջևից բարձր, սպիտակ ձիով գալիս էր մի ձիավոր,— ըստ երևույթին հրամանատարը։ Երկրորդ շղթայի առջևից էլ իրարից հեռու գալիս էին երկուսը։ Երրորդ շղթային ևս առաջնորդում էր հրամանատարը, իսկ նրա կողքին ծածանվում էր դրոշակը։ Դա փոքրիկ, արյունաներկ կաթիլի նման կարմրին էր տալիս խոզանի գորշ-դեղնավուն ֆոնի վրա։

— Նրանց կոմիսարները առջևումն են,— բղավեց կազակներից մեկը։

— Օ-օ՜, ա՛յ քեզ հերոսություն,— հիացմունքով քրքջաց Միտկա Կորշունովը։

— Տղերք, մտիկ արեք, ա՛յ թե ինչպիսի մարդիկ են նրանք, կարմիրները։

Համարյա ամբողջ հարյուրյակը ձայն ձայնի տալով մի քիչ բարձրացավ տեղից։ Բոլորի ձեռներն էլ վահանակների պես արևից պաշտպանում էին աչքերը։ Խոսակցությունները դադարեցին։ Ու մահվան նախորդող վեհապանծ, քար լռությունը հլու և մեղմիվ, ամպի ստվերի պես իջավ տափաստանի ու բլրագոգի վրա։

Գրիգորին ետ էր նայում։ Ուռենիների մոխրագույն-կապտավուն կղզուց դենը, խուտորի կողքին ծածանվող փոշի էր բարձրանում. երկրորդ հարյուրյակը վարգով սլանում էր հակառակորդին թևանցելու։ Զորակն առայժմ քողարկում էր հարյուրյակի առաջշարժումը, բայց մի չորս վերստ դենը ոլորապտույտ ելնում էր բլուրի վրա, ու Գրիգորին մտքում որոշեց հեռավորությունը ու ժամանակը, երբ հարյուրյակը կկարողանա հավասարվել թևին։

— Պառկե՛լ,— հրաման տվեց Գրիգորին՝ կտրուկ շուռ գալով ու հեռադիտակը դնելով պատյանի մեջ։

Նա մոտեցավ իր շղթային։ Կազակների դեմքերը, որ շոգից ու փոշուց բոսորավուն ու սև գույն էին ստացել, դարձան նրա կողմը։ Կազակները իրար նայելով՝ պառկում էին։ «Պատրաստվե՛լ կրակելու» հրամանից հետո գիշատչաբար շիկշիկացին փակաղակները։ Գրիգորին վերևից տեսնում էր միայն չռված ոտներ, գլխարկների կարկաճներ ու մեջքեր, որոնց վրա վերնաշապիկները փոշոտվել էին ու երևում էին քրտնակալած փոսիկները և թիակները։ Կազակները դեսդեն էին սողում, թաքստոց և ավելի հարմար տեղ փնտրում։ Ոմանք փորձեցին թրերով փորել կոշտ հողը։

Այդ ժամանակ քամին իր թևերով կարմիրների կողմից երգեցողության անպարզ հնչյուններ բերեց...

Շղթաները գնում էին ծանր գալարվելով, ճոճվելով, անհավասար։ Տոթակեզ տարածության մեջ կորչող, նվազ մարդկային ձայներ էին գալիս այնտեղից։

Գրիգորին զգաց, թե ինչպես հանկարծակի, թունդ, անհավասար զարկեց իր սիրտը... Նա առաջ է՛լ էր լսել այդ հեծեծող եղանակը, լսել էր, թե այն ինչպես էին երգում Գլուբոկայայում մոկրոուսովյան նավաստիները՝ հուզված փայլեցնելով աչքերը, գլխարկները հանած,— ասես աղոթելիս լինեին։ Նրա մեջ հանկարծ երկյուղին համազոր, անորոշ անհանգստություն առաջացավ։

— Ի՞նչ են բռնում նրանք,— անհանգստությամբ պտտելով գլուխը՝ հարցրեց զառամյալ մի կազակ։

— Ոնց որ թե աղոթելով են երգում,— նրան պատասխանեց աջ կողմից պառկած մի ուրիշը։

— Սատանի աղոթք է նրանց մոտ,— ժպտաց Անդրեյ Կաշուլինը. հանդգնորեն նայելով Գրիգորիին, որ կանգնել էր իր կողքին, հարցրեց.— Դու, Պանտելեյ, եղել ես նրանց մոտ, երևի գիտես, թե հիմի ինչու են երգում։ Երևի ինքդ էլ ես նրանց հետ երգել։

«...տիրանալ հողին»,— ցնծության ձայնով հնչեցին հեռավորության պատճառով պարզ չլսվող բառերը, ու նորից լռություն իջավ տափաստանի վրա։ Կազակների մեջ չար խնդություն առաջացավ։ Շղթայի մեջտեղում մեկը քրքջաց։ Միտկա Կորշունովն անհանգիստ շարժումներ արեց.

— Է՛յ, լսո՞ւմ եք, հը՞։ Ուզում են տիրանալ հողին...— ու անվայել հայհոյանք թափեց։— Գրիգոր Պանտելև, թող մի գետին գցեմ հրե՛ն այն ձիավորին։ Մի հատ խփե՞մ, հը՞։

Առանց համաձայնության սպասելու կրակեց։ Գնդակն անհանգստացրեց ձիավորին։ Նա իջավ ձիուց, ձին հանձնեց մեկին, քայլեց շղթայի առջևից՝ փայլեցնելով մերկացրած սուրը։

Կազակները սկսեցին կրակել։ Կարմիրները պառկեցին։ Գրիգորին գնդացրորդներին հրամայեց կրակ բանալ։ Գնդացրային մի շարք կրակոցներից հետո առաջին շղթան վեր կացավ ու առաջ վազեց։ Տասը սաժեն անցնելուց հետո նորից պառկեցին։ Գրիգորին հեռադիտակով տեսնում էր, թե ինչպես կարմիրգվարդիականները բահերով խրամատներ են փորում։ Նրանց գլխավերևում ճախրել սկսեց գորշ փոշին, շղթայի առաջ, ինչպես արջամկների բների կողքին, փոքրիկ հողաթմբեր առաջացան։ Այնտեղից դանդաղ համազարկ տվին։ Փոխհրաձգությունը սաստկացավ։ Կռիվը սպառնում էր երկար տևել։ Մի ժամից հետո կազակները կորուստ ունեցան. առաջին դասակից մեկը մահացու խոցվեց գնդակով, երեքն էլ վիրավորվեցին ու սողալով գնացին ձիապահների մոտ, բլրագոգը։ Երկրորդ հարյուրյակը երևաց թեից, փոշի բարձրացնելով՝ գրոհի նետվեց։ Գրոհը ետ մղվեց գնդացրային կրակով։ Երևում էր, թե ինչպես կազակները խուճապահար ետ են փախչում, խմբվում ու ցրվում հովհարաձև։ Նահանջելով, հարյուրյակը հավասարեց շարքերը ու

լուռ, առանց անընդմեջ բղավոցի, կրկին գրոհ տվեց։ Ու էլի գնդացրային մրրկանման կրակը նրան ետ քշեց, ինչպես քամին քշում է տերևները։

Բայց գրոհները խախտեցին կարմիրգվարդիականների տոկունությունը. առաջին շղթաները իրար խառնվեցին, ետ գնացին։

Գրիգորին առանց կրակը դադարեցնելու ոտքի հանեց հարյուրյակը։ Կազակներն առանց պառկելու առաջ գնացին։ Որոշ անվճռականությունն ու ծանր տարակուսանքը, որ սկզբում տիրել էին նրանց, կարծես թե չքացան։ Նրանց տրամադրությունը բարձրացրեց մի մարտկոց, որը վարգով ժամանեց դիրքերը։ Առաջին մարտկոցային դասակը կրակային դիրք բռնելով՝ կրակ բացեց։ Գրիգորին հրաման ուղարկեց ձիապահներին՝ մոտ բերել ձիերը։ Նա գրոհի էր պատրաստվում։ Այն խնձորենու կողքին, որտեղից նա մարտի սկզբում հետամուտ էր լինում կարմիրներին, երրորդ հրանոթն էլ հանվեց առաջքից։ Նեղ գալիֆե շալվարով, բարձրահասակ մի սպա վազեվազ մոտենալով հրանոթին, մտրակը խփելով սապոգի սրունքին, բարակ ձայնով, կատաղի գոռում էր շշկլված ձիավարների վրա։

— Ետ տարեք, է՛, սատանան հո չի՞ շշմեցրել ձեզ...

Դիտորդը և ավագ սպան մարտկոցից կես վերստ հեռավորությամբ իջնելով ձիերից, մի փոքրիկ բլուրից հեռադիտակով դիտում էին հակառակորդի ետ քաշվող շղթաները։ Հեռախոսիչները վազեվազ քարշ տվին հաղորդալարը՝ մարտկոցը միացնելով դիտակետին։ Տարեց յասավուլի,— մարտկոցի հրամանատարի խոշոր մատները ջղայնորեն պտտում էին հեռադիտակի անվակը (մատներից մեկի վրա երևում էր նշանդրեքի ոսկե մատանին)։ Նա ապարդյուն կերպով դես-դեն էր ընկնում առաջին հրանոթի մոտ, գլուխը ցնցում սվսվացող գնդակներից, ու նրա յուրաքանչյուր կտրուկ շարժումից լխկլխկում էր կողքից քարշ արած հնամաշ դաշտային պայուսակը։

Փուխր ու ճայթումնալից թնդյունից հետո Գրիգորին հետամուտ եղավ, թե որտեղ է ընկնում հրաձգության ճշտման արկը, ու ետ նայեց. հրետանավորները, ճիգ թափելով, տնքտնքալով, քաշքշում էին մի հրանոթ։ Առաջին շրապնելը

պայթեց չհնձած ցորենի արտում, ու կապույտ ֆոնի վրա երկար ցնդում էր քամուց ծվատվող ծխի սպիտակ, բամբականման քուլան։

Զորս հրանոթները հերթով արկեր էին շպրտում դեպի այնտեղ, ցորենի ճմռթված արտից դենը, բայց, Գրիգորիի սպասածին հակառակ, հրանոթային կրակը նկատելի իրարանցում չառաջացրեց կարմիրների շղթայում. նրանք անշտապ, կազմակերպված էին ետ քաշվում ու արդեն չքանում էին հարյուրյակի տեսադաշտից՝ իջնելով մի ձորակի խորքը։ Հասկանալով գրոհի անիմաստությունը, Գրիգորին այնուամենայնիվ որոշեց խոսել մարտկոցի հրամանատարի հետ։ Նա երերաքայլ մոտ գնաց, ու ձախ ձեռքը տանելով բեղի արևախանձ, շիկակարմրավուն, խուճուճիկ ծայրին, բարեկամաբար ժպտաց.

— Ուզում էի գրոհ տալ։

— Ի՞նչ գրոհ կարող է լինել,— յասավուլը կտրուկ թափահարեց գլուխը, ձեռքի արտաքին կողմով ընդունեց հովարի տակից հոսող քրտինքի կաթիլները,— դուք տեսնո՞ւմ եք, թե ինչպես են ետ քաշվում նրանք, շան որդիները։ Խուսափում են։ Եվ ծիծաղելի էլ կլիներ, եթե այդպես չանեին. չէ՞ որ նրանց այդ զորամասերում ամբողջ հրամանատարական կազմը կադրային սպաներ են։ Իմ մի ընկերը՝ զորական ավագ Սերովը, նրանց մոտ է...

— Ո՞րտեղից գիտեք,— Գրիգորին անվստահությամբ կկոցեց աչքերը։

— Փախստականները... Դադարեցնե՛լ կրակը,— հրաման տվեց յասավուլը, ու կարծես արդարանալով՝ ավելացրեց.— կրակելն անօգուտ է, արկերն էլ քիչ են... Դուք Մելեխո՞վն եք։ Լինենք ծանոթներ. Պոլտավցև.— նա իր քրտնած, խոշոր ձեռքը հրոցով խոթեց Գրիգորիի ձեռքի մեջ ու չթողնելով, որ Գրիգորին սեղմեր այն, ճարպկորեն նույն ձեռքը տարավ բացված գծագրոցի մեջ, հանեց սիգարետները.— ծխեցե՛ք։

Ձիավարները խուլ դղրդոցով բլրագագաթից բարձրացրին հրանոթները։ Դրանք դրվեցին քարշակների վրա։ Գրիգորին իր հարյուրյակը նստեցրեց ձիերին ու տարավ բլուրի մյուս կողմն անցած կարմիրների ետևից։

Նրանք գրավեցին հետևյալ խուտորը, բայց այն հանձնեցին առանց դիմադրության։ Վեշենցիների երեք հարյուրյակները և մարտկոցը տեղավորվեցին այդ խուտորում։ Վախեցած բնակիչները տներից դուրս չէին գալիս։ Կազակները թրևում էին տնետուն, ուտելիք էին փնտրում։ Գրիգորին խուտորի ծայրին գտնվող մի տան մոտ իջավ ձիուց, տարավ բակը, կապեց մուտքի սանդուղքի մոտ։ Տանտերը,— երկարահասակ, տարեց մի կազակ,— պառկել էր մահճակալի վրա, տնքտնքալով օրորում էր կեղտոտ բարձին դրած, չափազանց փոքր, թռչնային գլուխը։

— Հիվա՞նդ ես, ինչ է,— բարևելով ժպտաց Գրիգորին։

— Հիվա-ա-նդ եմ...

Տանտերը հիվանդ էր ձևանում, ու դատելով նրա աչքերի անհանգիստ թափառումից, գլխի էր ընկնում, որ իրեն չեն հավատում։

— Կկերակրե՞ք կազակներին,— պահանջկոտ հարցրեց Գրիգորին։

— Քանի՞ հոգի եք,— տանտիրուհին անջատվեց վառարանից։

— Հինգ։

— Դեհ, ի՞նչ կա որ, կկերակրենք աստծու տվածով։

Կազակների հետ ճաշելով, Գրիգորին դուրս ելավ փողոց։

Ջրհորի մոտ մարտական լրիվ պատրաստությամբ կանգնել էր մարտկոցը։ Հանդերձանքը հանած ձիերը թափահարելով տոպրակները, ուտում էին գարու մնացորդը։ Ձիավորներն ու մյուս հրետանավորները արևից պաշտպանվում էին լցարկղերի ստվերում, նստել կամ պառկել էին հրանոթների մոտ։ Մի մարտկոցավոր քնել էր երեսնիվայր, ոտը ոտին դրած ու քնի մեջ ուսն էր ցնցում։ Նա հավանորեն առաջ պառկած էր եղել ստվերում, բայց արևը տեղաշարժել էր ստվերները և հիմա դաղում էր նրա բաց, խուճուճ մազերը, որոնց վրա խոտի փշրանք էր թափված։

Ձիերի լայն, կաշվե լծասարքի տակին պլպլում էր քրտինքից դեղնափրփրուն, թաց բուրդը։ Սպաների ու սպասակազմի ձիերը ցանկապատին կապված, տխուր կուչ էին եկել։ Փոշոտված, քրտնաթոր կազակները լուռ հանգստանում

էին։ Սպաները և մարտկոցի հրամանատարը նստել էին գետնի վրա, մեջքերը դեմ արել ջրհորի փայտվածքին, ծխում էին։ Նրանցից ոչ հեռու, ոտները տարածած, կազակները վեցթևանի աստղի ձևով պառկել էին խանձված թայլի վրա։ Նրանք եռանդով մածուն էին ուտում դույլից, երբեմն մեկնումեկը բերանով դեն էր գցում այնտեղ ընկած գարու հատիկը։

Արևը դաղում էր մոլեգնաբար։ Խուտորը դեպի բլուրն էր տարածել համարյա անմարդ փողոցները։ Ամբարների կողքին, մարագների ծածկերի տակ, ցանկապատերի մոտ, կռատուկների դեղին ստվերում քնած էին կազակները։ Ցանկապատերի մոտ իրար գլխի հավաքված, թամքերը չհանած ձիերը նեղվում էին շոգից ու քնկոտությունից։ Ահա ձիով անցավ մի կազակ՝ մտրակը ծուլորեն բարձրացնելով մինչև ձիու մեջքի մակարդակը։ Ու էլի փողոցը ասես տափաստանային մոռացված ճանապարհ լիներ, ու այնտեղ պատահական, ավելորդ էին թվում կանաչ ներկած հրանոթները և երթերից ու արևից հոգնատանջ, քնած մարդիկ։

Զանձրույթից նեղվելով, Գրիգորին ուզում էր գնալ տուն, սակայն փողոցում երևացին ուրիշ հարյուրյակի երեք ձիավոր կազակ։ Նրանք մի փոքրիկ խումբ գերի կարմիրգվարդիականներ էին բերում։ Հրետանավորներն իրար անցան, վեր կացան՝ թափ տալով վերնաշապիկների ու շալվարների փոշին։ Սպաներն էլ վեր կացան։ Հարևան բակում մեկը ուրախ բղավեց.

— Տղերք, գերիներ են բերում... Սո՞ւտ եմ ասում։ Այն աստվածամայրը վկա։

Քնաթաթախ կազակները շտապելով դուրս էին գալիս բակերից։ Գերիները մոտեցան. ութ հոգի երիտասարդ տղերք էին՝ քրտնքի ու փոշու մեջ կորած։ Նրանց խիտ շրջապատեցին։

— Սրանց ո՞րտեղ եք վերցրել,— հարցրեց մարտկոցի հրամանատարը՝ սառն հետաքրքրությամբ նայելով գերիներին։

Ուղեկցորդներից մեկը պարծենկոտ կտրիճության տոնով պատասխանեց.

— Ա՛մա կովողներ են, հա՜-ա։ Մենք սրանց բռնոտեցինք խուտորի մոտ, արևածաղիկների մեջ։ Թաքնվել էին ոնց որ լսրը ուրուրից։ Մենք ձիերի վրայից տեսանք սրանց ու վրա տվինք։ Մեկին էլ սպանեցինք...

Կարմիրգվարդիականները երկչոտությամբ սեղմվում էին միմյանց։ Ակներևաբար նրանք վախենում էին դատաստանից։ Հուսալքված նայում էին կազակների դեմքերին։ Միայն մեկը, որ տեսքով ավելի մեծ էր, արևայրուկից դարչնագույն դարձած երեսով, դուրս ընկած այտոսկրներով, կեղտոտված վերնաշապիկով ու բոլորովին պատառոտված ոտափաթաթաններով, մի փոքր շիլ, սև աչքերով արհամարհանքով նայում էր գլուխներից վեր ու պինդ սեղմում արյունլվիկ շրթունքները։ Նա բարեկազմ էր, թիկնեղ։ Նրա սև, ձիու մազի պես կոշտ գանգուրների վրա կանաչ բիշիի պես, տափակ նստել էր գլխարկանիշի հետքը պահած գլխարկը, որ հավանորեն մնացել էր դեռ գերմանական պատերազմից։ Նա կանգնել էր ազատ, ու սև, հաստ մատներով, որոնց եղունգների վրա չորացել էր արյունը, տնտղում էր տակի շապկի բացված օձիքը ու սև մազերով ծածկված, սուր ադամախնձորը։ Տեսքով նա անտարբեր էր թվում, բայց ազատորեն մեկնած մի ոտը, որ մինչև ծունկը այլանդակ կերպով հաստացել էր ոտնափաթաթանից թեթևակի ցնցվում, դողում էր, կարծես նա նեղվում էր ցրտից։ Մնացածները գունատ էին և ոչնչով աչքի չէին ընկնում։ Միայն նա էր աչքի ընկնում ուսերի հուժկու կազմվածքով ու թաթարական կորովի դեմքով։ Թերևս հենց դրա համար էլ մարտկոցի հրամանատարը դիմեց նրան, հարցրեց.

— Դու ո՞վ ես։

Կարմիրգվարդիականի փոքրիկ, անտրացիտի բեկորներին նմանվող աչքերն աշխուժացան, և նա ամբողջովին, աննկատելիորեն, բայց ճարպկությամբ հավաքեց ինքն իրեն.

— Կարմիրբանակային եմ։ Ռուս եմ։

— Ո՞րտեղացի ես։

— Պենզացի։

— Կամավո՞ր ես, ի՛ժ։

— Ամենևին ոչ։ Հին բանակի ավագ ենթասպա եմ։

Տասնյոթ թվից ընկել եմ դես-դեն, ու այսպես մինչև հիմի...

Ուղեկցորդներից մեկը միջամտեց խոսակցությանը.

— Նա, այդ սատանան, կրակում էր մեր վրա։

— Կրակո՞ւմ էր,— թթվեց ու մռայլվեց յասավուլը, ու բռնելով իր դեմուդեմ կանգնած Գրիգորիի հայացքը. աչքերով ցույց տվեց գերուն.— մի տե՛ս, է՛... Կրակում էիր, հա՞։ Հապա չէի՞ր մտածում, որ քեզ կբռնեն։ Իսկ եթե դրա համար քեզ այժմ գնդակահարե՞ն։

— Մտածում էի կրակելով պաշտպանվել։— Պատռված շրթունքները մեղավոր քմծիծաղ տվին։

— Ի՞նչ պտուղ է, հա՛-ա։ Բա ինչո՞ւ չպաշտպանվեցիր։

— Փամփուշտներս վերջացան։

— Հը՛մ...— յասավուլը ցասկոտ չռեց աչքերը, բայց չթաքցրած հաճույքով նայեց զինվորին։— Իսկ դո՞ւք որտեղից եք, շան որդեներ,— արդեն բոլորովին ուրիշ տոնով հարցրեց նա՝ աշխուժացած աչքերը սահեցնելով մյուսների վրա։

— Մոբիլիզացվածներ ենք մենք, ձերդ բարձր բարեծննդություն։ Սարատովցիներ ենք... բալաշովցիներ...— կերկերաց բարձրահասակ, երկարավիզ մի տղա՝ հաճախակի թարթելով աչքերը, տնտղելով թուխ-շիկակարմիր մազերը։

Գրիգորին սիրտը ճմլող հետաքրքրությամբ դիտում էր պաշտպանական տարազ հագած ջահել տղաներին, նրանց պարզ, մուժիկական դեմքերը, հետևակային աննշան տեսքը։ Նրա մեջ թշնամանք էր առաջացնում միայն այտոսկրոտ կարմիրգվարդիականը։ Նա չարախնդությամբ դիմեց վերջինին.

— Ինչի՞ համար խոստովանեցիր, հը՞։ Դու երևի նրանց մոտ վաշտապե՞տ էիր, հրամանատա՞ր, կոմունի՞ստ, հա՞։ Ասում ես փամփուշտներդ վերջացե՞լ էին։ Իսկ մենք դրա համար քեզ թրերով կկտրատենք, գիտե՞ս թե չէ։

Կարմիրգվարդիականը շարժելով հրացանի կոթով ճմռլված քթի պինչերը, արդեն ավելի համարձակ ասաց.

— Ես նրա համար չխոստովանեցի, որ սրտոտ երևամ։ Ինչո՞ւ պիտի թաքցնեմ։ Որ կրակել ես, ուրեմն խոստովանեմ... Դրուստ չե՞մ ասում։ Ինչ վերաբերում է... սպանեցեք։ Ես ձեզանից...— ու էլի ժպտաց,— լավ բան չեմ սպասում, դուք հենց դրա համար էլ կազակներ եք։

Շուրջը հավանության ժպիտներ երևացին։ Գրիգորին զինվորի խելամիտ պատասխանով հաղթահարված՝ դեն քաշվեց։ Նա տեսավ, թե ինչպես գերիները մոտեցան ջրհորին՝ ջուր խմելու։ Նրբանցքից դասակային շարքերով դուրս էր գալիս պլաստունների հարյուրյակը։

IX

Հետագայում էլ, երբ գունդը թևակոխեց անընդհատ մարտերի շրջանը, երբ ծածկույթների փոխարեն արդեն տարածված էր ծուռումուռ ձգված ռազմաճակատը, Գրիգորին միշտ էլ, հանդիպելով թշնամուն, գտնվելով նրան անմիջականորեն մոտիկ վայրերում, ապրում էր էլի նույն սուր զգացումը,— հսկայական, անհագ հետաքրքրություն դեպի բոլշևիկները, դեպի այդ ռուս զինվորները, որոնց դեմ պիտի կռվեր հայտնի չէ ինչի համար։ Նրա մեջ կարծես առմիշտ մնացել էր այն պարզամտորեն-մանկական զգացումը, որ ծնունդ էր առել քառամյա պատերազմի առաջին օրերին, երբ նա Լեշնյուվի մոտ բլրակից առաջին անգամ դիտում էր ավստրահունգարական զորքերի ու գումակների իրարանցումը։ «Ի՞նչ մարդիկ են, ինչպիսի՞ն են նրանք»։ Կարծես թե նրա կյանքում չէր է՛լ եղել այն շրջանը, երբ նա Գլուբոկայայի մերձակայքում կռվում էր Չերնեցովի ջոկատի դեմ։ Բայց այն ժամանակ նա հաստատապես գիտեր իր թշնամիների դեմքը,— դրանք մեծ մասամբ Դոնի սպաներ, կազակներ էին։ Իսկ այստեղ նրան վիճակվում էր գործ ունենալ ռուս զինվորների հետ, ինչ-որ ուրիշ տեսակ մարդկանց, ա՛յն մարդկանց հետ, որոնք իրենց ամբողջ վիթխարի զանգվածով սովետական իշխանության հենարանն էին հանդիսանում ու ձգտում էին,— ինչպես կարծում էր նա,— զավթել կազակական հողերն ու անդակները։

Մի անգամ էլ մարտում համարյա դեմառդեմ նա հանդիպեց կարմիրգվարդիականներին, որոնք անսպասելիորեն

դուրս թափվեցին ձորակի մի ճյուղից։ Նա դասակի հետ մեկնեց հետախուզության, ձորակի միջով մոտեցավ ճամփաբաժանին և այստեղ հանկարծ լսեց «ա»-ի փոխարեն «օ»-յով և կոշտ հնչող «գ»-ով արտասանվող ռուսերեն բառեր, մայր հայհոյելը, քայլերի սորուն խշշոց։ Մի քանի կարմիրգվարդիականներ, որոնցից մեկը չինացի էր, դուրս թռան ձորակի կատարը ու կազակների տեսքից շշմած, մի վայրկյան քարացան զարմանքից։

— Կազակնե՛րը,— ընկնելով, վախեցած ու կշկշան ձայնով բղավեց մեկը։

Չինացին կրակեց։ Ու անմիջապես ընկնողը, սպիտակավուն մի կարմիրգվարդիական, հատու և խեղդվող ձայնով, շուտասելուկով գոռաց.

— Ընկերներ, բերեք մակսիմկան։ Հրե՛ն կազակները։

— Բերե՛ք, է՛։ Կազակներն են...

Միտկա Կորշունովը նագանով խփեց չինացուն և, ձին կտրուկ շուռ տալով, Գրիգորիի ձիուն նեղելով, առաջինը սլացավ ձորակի խորունկ հատակում. նա թափահարում էր սանձը, ձիու տագնապալից վազքը ուղղում ծուռումուռ ճանապարհով։ Նրա ետևից սլացան մյուսները՝ աշխատելով իրարից առաջ անցնել։ Նրանց թիկունքից բարիտոն ձայնով որոտաց գնդացիրը, գնդակները քստքստացնում էին վայրի սալորենու և լանջերի ու հրվանդանների վրա խիտ աճած մլենու տերևները, փորփրում ու գիշատչաբար պոռնկում ձորակի քարքարոտ հատակը...

Էլի՛ մի քանի անգամ դեմառդեմ հանդիպեց կարմիրներին, տեսնում էր, թե ինչպես կազակների գնդակները կարմիրգվարդիականների ոտների տակից պոկոտում էին հողը, և նրանք ընկնում էին ու իրենց կյանքը թողնում այդ արգավանդ ու իրենց օտար հողի վրա։

...Ու Գրիգորին հետզհետե սկսեց չարությամբ համակվել դեպի բոլշևիկները։ Նրանք իբրև թշնամիներ ներխուժե՛լ էին իր կյանքի մեջ, իրեն կտրե՛լ էին հողից։ Նա տեսնում էր, որ նույնպիսի զգացմունք է համակում նաև մյուս կազակներին։ Նրանց բոլորին էլ թվում էր, որ այս պատերազմը տեղի է ունենում միայն բոլշևիկների մեղքով, որոնք վրա էին տալիս մարզին։ Ու ամեն մեկը նայելով ցորենի

չհավաքած լասերին, սմբակներով ճմռթված, չհնձած հացին, դատարկ կալերին, հիշում էր իր դեսյատինները, որոնց վրա հևում, ուժից վեր աշխատանք էին կատարում կանայք, ու չարանում էր, գազանանում։ Գրիգորիին մարտում երբեմն թվում էր, թե իր թշնամիներն էլ,— Տամբովի, Ռյազանի, Սարատովի մուժիկները,— գալիս են հողի նկատմամբ նույնպիսի խանդոտ զգացումով մղված։ «Կռվում ենք հողի համար, ոնց որ սիրածի համար»,— մտածում էր Գրիգորին։

Սկսեցին ավելի քիչ գերի վերցնել։ Հաճախացան գերիներին կոտորելու դեպքերը։ Ռազմաճակատով մեկ լայն ծավալ ստացան կողոպուտները. թալանում էին բոլշևիկներին համակրելու մեջ կասկածվողներին, կարմիրգվարդիականների ընտանիքները, գերիների վրա եղած հագուստը...

Վերցնում էին ամեն ինչ, ձիերից ու բրիչկաներից սկսած մինչև բոլորովին ավելորդ, դժվարաշարժ իրերը։ Վերցնում էին թե՛ կազակները և թե՛ սպաները։ Երկրորդ կարգի գումակներն ուռճանում էին ավարից։ Էլ ի՞նչ ասես որ չկար սայլերի վրա. և՛ հագուստ, և՛ ինքնաեռներ, և՛ կարի մեքենաներ, և՛ ձիու լծասարք,— այն ամենը, ինչը մի որևէ արժեք էր ներկայացնում։ Ավարը գումակներից ուղարկվում էր տները։ Գալիս էին ազգականները, կամավոր կերպով փամփուշտներ ու պարեն էին բերում զորամասի համար, իսկ այնտեղից սայլերին թալանված իրեր էին բեռնում ու տանում։ Հնձյալ գնդերը,— իսկ դրանք մեծամասնություն էին կազմում,— իրենց առանձնապես սանձարձակ էին պահում։ Հետևակ զինվորը փամփշտանոցից բացի ուրիշ բան չունի իրեր դնելու, իսկ ձիավորը լիքը լցնում էր թամքի տոպրակները, կապում դրա փոկերով, ու նրա ձին ավելի շուտ բեռնատար կենդանու էր նմանվում, քան շարային ձիու։ Սանձարձակ էին դարձել աղբեր-տղերքը։ Պատերազմում ալանթալանը միշտ էլ կարևորագույն շարժիչ ուժ է եղել կազակի համար։ Գրիգորին այդ գիտեր թե՛ անցյալ պատերազմների վերաբերմամբ ծերունիների պատմածներից և թե՛ սեփական փորձից։ Դեռ գերմանական պատերազմի օրերին, երբ գունդը Պրուսիայում շարժվում էր թիկունքում, բրիգադի հրամանատարը,— վաստակավոր մի գեներալ,— շարք կանգնեցնելով տասերկու հարյուրյակը և մտրակով ցույց

տալով բլուրների տակ գտնվող մի փոքրիկ քաղաք, ասաց.

— Կգրավեք,— քաղաքը երկու ժամ կլինի ձեր տրամադրության տակ։ Բայց երկու ժամից հետո կողոպուտի մեջ բռնված առաջին իսկ մարդը կգնդակահարվի։

Բայց Գրիգորիի մեջ այդ բանը ինչ-որ չէր արմատանում. նա վերցնում էր միայն ուտելիք և ձիու կեր, ուղղակի վախենում էր ձեռք տալ ուրիշի իրերին ու զզվանքով էր վերաբերվում կողոպուտներին։ Նրա աչքում առանձնապես գարշելի էր հենց յուրայիններին, կազակներին թալանելը։ Հարյուրյակը պինդ էր պահում իր ձեռքում։ Նրա կազակները եթե որևէ բան էին վերցնում, ապա այդ անում էին գաղտնաբար և հազվագյուտ դեպքերում։ Նա չէր հրամայում ոչնչացնել գերիներին ու հանել նրանց հագուստը։ Ձափից դուրս մեղմ իր վարմունքով դժգոհություն առաջացրեց կազակների ու գնդի հրամանատարության մեջ։ Բացատրությունների համար նրան կանչեցին դիվիզիայի շտաբը։ Պաշտոնյաներից մեկը կոպտաբար բարձրացնելով ձայնը, հարձակվեց նրա վրա.

— Դու ինչո՞ւ ես փչացնում հարյուրյակը, խորունժի։ Ինչո՞ւ ես ազատամտություն անում։ Մեղմ ես վարվում, որ հետո լավամարդ լինես, հա՞։ Առաջվա պես երկերեսանիություն ես անում... Ո՞նց թե չգոռալ քեզ վրա... Դեհ, առանց հակաճառելո՛ւ։ Զգիտե՞ս կարգապահությունը։ Ի-ի՞նչ, հեռացնե՞լ։ Կհեռացնե՛նք։ Հրամայում եմ այսօր ևեթ հանձնել հարյուրյակը։ Եվ հետո... մի՛ ֆշշա, հա՛-ա։

Ամսի վերջին գունդը 33-րդ Ելանյան գնդի մի հարյուրյակի հետ, որ գնում էր նրա կողքից, գրավեց Գրեմյաչի Լոգ խուտորը։

Ներքևում, խոր ձորակում խիտ խմբված էին ուռենիները, հացենիներն ու բարդիները, լանջի վրա փռված էին երեք տասնյակի չափ սպիտակ խրճիթներ, որոնք շրջապատված էին անտաշ քարից կառուցված ցածրիկ ցանկապատերով։ Խուտորի վերևում, փոքրիկ բլրակի վրա կանգնած էր բոլոր քամիներին մատչելի մի հողմաղաց։ Բլուրի ետևից բարձրացող սպիտակ ամպի ֆոնի վրա սևին էին տալիս ծռված խաչի ձև ունեցող, անշարժ կանգնած նրա թևերը։ Օրը անձրևային ու մառախլապատ էր։ Ձորակով մեկ սրարշավում էր ցրտաշունչ բուքը. տերևները շրշալով թափվում էին գետնին։ Երևում էին փարթամ աճած, արնագույն-կարմիր ուռիները։ Կալերում կանգնած էին փայլող ծղնոտի դեզերը։ Նախաձմեռային մեղմ ցուրտը գրկել էր անալի բույր արձակող գետինը։

Գրիգորին իր դասակով գրավեց բնակարանորդների կողմից հատկացված մի տուն։ Ինչպես պարզվեց, տանտերը գնացել էր կարմիրների հետ։ Ջառամած, չաղ տանտիրուհին իր անչափահաս դստեր հետ սկսեց ջծնաբար սպասարկել դասակին։ Գրիգորին խոհանոցից անցավ օթախը, նայեց շուրջը։ Երևում էր, որ տանտերերը լավ էին ապրում. ներկված հատակներ, վիեննական աթոռներ, հայելի, պատերի վրա—զինվորականների սովորական լուսանկարներ և աշակերտական մի գովասանաթերթ՝ սև շրջանակով։ Թրջված անջրանցիկ վերարկուն կախելով վառարանի մոտ, Գրիգորին ծխախոտ փաթաթեց։

Ներս մտավ Պրոխոր Զիկովը, հրացանը հենեց մահճակալին, անտարբեր հաղորդեց.

— Սայլվորներ են եկել։ Նրանց հետ է ձեր հայրիկը, Գրիգոր Պանտելևիչ։

— Դե՛հ, մի՛ դուրս տա։

— Դրուստ խոսք։ Նրանից բացի էլի մի վեց սայլվոր է եկել մեր խուտորցիներից։ Գնա տես։

Գրիգորին շինելը գցեց վրան, դուրս ելավ։

Պանտելեյ Պրակոֆիևիչը ձիերի սանձերը քաշելով, նրանց ներս էր բերում դարպասից։ Բրիչկայի վրա նստել էր տնային արտադրության կապայով փաթաթված Դարյան։ Նա բռնել էր երասանները։ Կապայի թաց վեղարի տակից նա խոնավ ժպիտով, ծիծաղկոտ աչքերով նայեց Գրիգորիին։

— Ո՞ր քամին բերեց ձեզ, հայրենակիցներ,— գոչեց Գրիգորին՝ ժպտալով հորը։

— Ա-ա՛, տղաս, ողջ-առողջ ես։ Հյուր ենք եկել, առանց հարցնելու ներս ենք գալի։

Գրիգորին քայլելիս գրկեց հոր լայն ուսերը, սկսեց շեղաձողերից անջատել քաշանները։

— Ասում ես չէի՞ր սպասում, Գրիգորի։

— Իհարկե։

— Իսկ մենք, հրես, մեկի սայլով... Վերցրել էինք։ Ձեզ համար արկեր ենք բերել, միայն թե կովեք։

Արձակելով ձիերը, նրանք կցկտուր ֆրազներ էին փոխանակում։ Դարյան բրիչկայից վերցնում էր ուտելեղենը ու ձիերի կերը, հացահատիկը։

— Դո՞ւ ինչու ես եկել, — հարցրեց Գրիգորին։

— Հայրիկի հետ եմ եկել։ Նա հիվանդ է, փրկչի տոնից մինչև հիմա չի առողջանում։ Մայրիկը վախենում էր, թե չլինի՞ նրան մի բան պատահի. նա մենակ օտար տեղ էր գալի...

Ձիերի առաջ հոտավետ, վառ-կանաչ սիզախոտ գցելով, Պանտելեյ Պրակոֆևիչը մոտեցավ Գրիգորիին, ու անհանդգստությամբ շռելով սև աչքերը, որոնց սպիտակուցներն անառողջ կերպով արյունոտված էին, խռպոտ շշնջոցով հարցրեց.

— Էհ, ի՞նչ կա։

— Ոչինչ։ Կռվում ենք։

— Լսել եմ, որ իբր թե կազակները չեն ուզում սահմանից դենը գնալ... Ճի՞շտ է։

— Խոսակցություններ են, էլի՛...— խուսափուկ պատասխանեց Գրիգորին։

— Այդ ո՞նց կլինի, աղբեր-տղերք,— մի տեսակ օտարոտի ու շփոթված ասավ ծերունին,— ո՞նց թե այդպես։ Իսկ մեզ մոտ ծերունիները հուսով են... Ձեզանից բացի էլ ո՞վ կարող է պաշտպանել հայր-Դոնը։ Թե որ դուք,— աստված ազատե,— չուզենաք կռվել։ Բա այդ ո՞նց կլինի։ Ձեր սայլերներն էին փչում... Խառնակչություն են գցում շան որդիքը։

Մտան խրճիթ։ Հավաքվեցին կազակները։ Խոսակցությունը սկզբում պտտվում էր խուտորի նորությունների շուրջը։ Դարյան տանտիրուհու հետ փսփսալով, բացեց ուտելեղենի տոպրակը, իրիկնահաց գցեց։

— Ասում են դու արդեն հարյուրյակի հրամանատարությունից հեռացված ես, հա՞,— հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ ոսկրե սանրով սանրելով ճխլտված մորուքը։

— Հիմի ես դասակապետ եմ։

Գրիգորիի անտարբեր պատասխանը խոցեց ծերունուն։

Պանտելեյ Պրակոֆևիչը խիստ կնճռոտեց ճակատը, կաղկաղ մոտեցավ սեղանին, անհանգիստ աղոթեց, ու չեքմենի փեշով գդալը սրբելով՝ վիրավորված հարցրեց.

— Այդ ինչո՞ւ ես ընկել նրանց աչքից։ Թե՞ չես գոհացրել մեծավորներին։

Գրիգորին չէր ուզում կազակների ներկայությամբ խոսել այդ մասին, սրտնեղությամբ թոթվեց ուսը։

— Նոր հրամանատար են ուղարկել... Կրթություն ունի։

— Այդպես էլ դու ծառայիր նրանց, որդի։ Շուտով նրանք գնահատական կտան։ Հլա տես, է՛, կրթված մարդ են ուղեցել։ Հասկացրու, որ գերմանական կռվում քեզ իսկապես կրթել են, կարելի է թե ամեն մի ակնոցավորից էլ ավելի շատ բան գիտես։

Ծերունին պարզապես վրդովվում էր, իսկ Գրիգորին կնճռոտում էր դեմքը, շեղակի նայում, թե կազակները հո չե՞ն ժպտում։

Աստիճանի իջեցումը նրան չէր վշտացրել։ Նա ուրախությամբ էր հանձնել հարյուրյակը, հասկանալով, որ իրենց խուտորցիների կյանքի համար պատասխանատու չի լինի։ Բայց և այնպես, նրա ինքնասիրությունը վիրավորված էր, և հայրը այդ մասին խոսելիս ակամայից անախորժություն էր պատճառում նրան։

Տանտիրուհին գնաց խոհանոց, իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը զգալով, որ պաշտպանություն կգտնի ի դեմս Բոգատիրյովի, որը իրենց խուտորից էր ու եկել էր այնտեղ,— սկսեց խոսակցությունը.

— Ուրեմս դրո՞ւստ է, որ միտք ունեք սահմաններից դենը չգնալ։

Պրոխոր Զիկովը հաճախակի թարթելով հորթի իր փաղաքուշ աչքերը, լռում էր, մեղմ ժպտում։ Միտկա Կորշունովը վառարանի մոտ պպզած, մատները վառելով, ծխում էր փաթաթած ծխախոտի մնացորդը։ Մնացած երեք կազակները նստել ու պառկել էին նստարանների վրա։ Հարցին ինչոր ոչ ոք չէր պատասխանում։ Բոգատիրյովը վշտացած թափահարեց ձեռքը։

— Նրանք այդ գործերի մասին իսկի էլ դարդ չեն

անում,— խոսեց նա բամբ, դմբդմբան ձայնով,— նրանց համար մեկ է, թեկուզ դաշտում խոտ է՛լ չբուսնի...

— Իսկ ինչո՞ւ սահմաններից դենը գնալ,— ծուլորեն հարցրեց Հիվանդոտ ու հանգիստ կազակ Իլյինը,— ախր ինչո՞ւ գնալ։ Հրե՛ն, կնկանս մեռնելուց հետո որբ երեխաներս են մնացել, իսկ ես զուր տեղը պետք է կորցնե՞մ կյանքս...

— Կազակական հողից դուրս կքշենք հակառակորդին ու կգնանք մեր տները,— նրան վճռականապես պաշտպանեց մի ուրիշը։

Միտկա Կորշունովը ժպտաց կանաչ աչքերով միայն, ոլորեց բարակ, փափլիկ բեղը։

— Թեկուզ էլի հինգ տարի կռվենք, մեկ է ինձ համար։ Սիրում եմ կռվել։

— Դուրս եկե-ե-ք... Թամբեք...— գոռացին դրսից։

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք,— հուսահատությամբ բացականչեց Իլյինը,— տեսնո՞ւմ եք, ծերուկներ։ Դեռ շորերս էլ չենք չորացրել, իսկ այնտեղ արդեն գոռում են «դուրս եկեք»։ Ուրեմն էլի դիրքերն ենք գնում։ Իսկ դուք ասում եք՝ սահմանները։ Ի՞նչ սահմաններ կարող են լինել։ Պետք է տո՛ւն գնալ։ Պետք է հաշտության ձգտել, իսկ դուք ասում եք...

Պարզվեց, որ տագնապը կեղծ էր։ Ջարացած Գրիգորին ձին բերեց բակը, առանց պատճառի սապոգով խփեց նրա աճուկին ու կատաղաբար կլորացնելով աչքերը, բղավեց.

— Սատանա՛, ուղիղ քայլիր, էլի՛։

Պանտելեյ Պրակոֆևիչը դռան մոտ ծխում էր։ Ճանապարհ տալով ներս մտնող կազակներին, հարցրեց.

— Ի՞նչ էին իրար անցել։

— Տագնա՛պ էր... Կռվերի նախիրը կարմիրների տեղ էին ընդունել։

Գրիգորին հանեց շինելը, նստեց սեղանի մոտ։ Մնացածները տնքտնքալով հանվում էին, թրերը, հրացաններն ու փամփշտանոցները գցում նստարաններին։

Երբ բոլորը պառկեցին քնելու, Պանտելեյ Պրակոֆևիչը Գրիգորիին կանչեց բակ։ Նստեցին մուտքի սանդուղքին։

— Ուզում եմ խոսել քեզ հետ.— ծերունին շոշափեց Գրիգորիի ծունկը, շշնջաց.— մեկ շաբաթ առաջ գնացել էի Պետրոյի մոտ։ Նրանց Քսանութերորդ գունդը հիմի Կալաչից

դենն է... Ես, որդի, այնտեղ մի լավ խերվեցի։ Պետրոն պիտանի, շատ պիտանի է տնտեսության համար։ Նա ինձ տվեց մի ջվալ շոր, մի ձի, շաքար... ձին կարգին է...

— Կա՛ց,— խստորեն ընդհատեց նրան Գրիգորին՝ հասկանալով բանի էությունը և դրանից դողվելով,— դու հո դրա համար չե՞ս եկել այստեղ։

— Ի՞նչ կա որ։

— Ո՞նց թե ինչ։

— Խալխը հո վերցնում է, Գրիշա...

— Խա՛լխը, վերցնո՞ւմ է,— բառեր չգտնելով՝ կատաղությամբ կրկնեց Գրիգորին։— Ունեցածներդ քի՞չ է, հա՞։ Գյադաներ եք դուք։ Այդպիսի բաների համար գերմանական ֆրոնտում գնդակահարում էին մարդկանց...

— Լավ, մի՛ վովոա,— սառնասրտությամբ նրան ընդհատեց հայրը.— ես քեզանից չեմ խնդրում։ Ինձ ոչինչ պետք չէ։ Ես այսօր ապրում եմ, իսկ էգուց ոտներս կփռեմ... Դու քո մասին մտածիր։ Ա՛մա թե հարուստ մարդ ես եղել, հա՛-ա։ Տանը մի բրիչկա է մնացել, իսկ սա... Ախր ինչի՞ չվերցնել նրանցից, որոնք կարմիրների կողմն են բռնել, հը՞... Նրանցից չվերցնելը մեղք է։ Իսկ տանը ամեն մի թելն է՛լ պետք կգար։

— Դու դրանից ձեռ քաշի, հա՛-ա, թե չէ ես իսկույն քեզ կհեռացնեմ այստեղից։ Ես դրա համար կազակների մուրթն էի ջարդում, իսկ իմ հայրը եկել է բնակիչներին թալանելու,— դողում ու շնչահեղձ էր լինում Գրիգորին։

— Հենց դրա համար էլ քեզ վռնդել են հարյուրյակի հրամանատարությունից,— նենգաբար կծեց նրան հայրը։

— Դա ինչի՞ս է պետք։ Ես դասակից էլ կհրաժարվեմ...

— Էլ ո՛նց չէ։ Խելո՛ք ես, խելոք...

Մի բոպե լուռ էին։ Վառելով ծխախոտը, Գրիգորին լուցկու լույսի տակ անցողակի տեսավ հոր շփոթված ու նեղացած դեմքը։ Միայն այժմ նրա համար հասկանալի դարձան հոր ժամանելու պատճառները։ «Դրա համար էլ բերել է Դարյային, գրողի՞ տարած քոփակ։ Բերել է, որ Դարյան պահպանի թալանածը,— մտածում էր Գրիգորին։

— Մոտեպան Աստախովն է երևացել։ Լսե՞լ ես,— անտարբեր սկսեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Ո՞նց թե,— Գրիգորին ձեռքից նույնիսկ վար գցեց ծխախոտը։

— Հենց այդպես։ Բանից դուրս եկավ, որ նա գերի է եղել և ոչ թե սպանվել։ Ունևոր է դարձել։ Անհամար շոր և ուրիշ բարիք ունի։ Երկու սայլով է բերել,— փչեց ծերունին պարծենալով, կարծես Ստեպանը նրա հարազատն էր։— Ակսինյային տարավ իր մոտ և հիմի ծառայության է գնացել։ Նրան լավ պաշտոն են տվել, էտապի կամենդանտն է մի տեղ, կարծյոք Կազանսկում։

— Ինչքա՞ն հաց եք կալսել,— Գրիգորին փոխեց խոսակցությունը։

— Չորս հարյուր կոտ։

— Թոռներդ ո՞նց են։

— Օ-հո՛, թոռներս հերոսներ են, աղբեր։ Նվե՛ր ուղարկեիր, էլի։

— Ֆրոնտից ի՞նչ նվեր,— թախծոտ շունչ առավ Գրիգորին, իսկ մտքով Ակսինյայի ու Ստեպանի մոտ էր։

— Չե՞մ կարող քեզանից մի հրացան վերցնել։ Ավելորդ չկա՞։

— Ինչի՞ դ է պետք։

— Տան համար։ Գազանից է՛լ, վատ մարդուց էլ պաշտպանվելու համար։ Պետք կգա, էլի՛։ Փամփուշտ կա, մի ամբողջ արկղ եմ վերցրել։ Տանում էին, ես էլ վերցրի։

— Վերցրու գումակից։ Այդ բարիքը շատ է։— Գրիգորին նոթոտ ժպտաց։— Դեհ գնա քնիր։ Ես պետք է ուղեկալ գնամ։

Գնդի մի մասը առավոտյան դուրս եկավ խուտորից։ Գրիգորին գնում էր հավատացած լինելով, որ ամաչեցրել էր հորը, և սա կվերադառնա առանց որևէ բան տանելու։ Իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը, ճանապարհ դնելով կազակներին, տեր ու տնօրենի նման գնաց ամբար, չարդախի տակից վերցրեց անուրներն ու շինքափոկերը, տարավ դեպի իր բրիչկան։ Նրա ետևից արտասվալի դեմքով քայլում էր տանտիրուհին, ճղճղում էր՝ կառչելով նրա ուսերից.

— Ապի, սիրելիս, բա դու մեղքից չե՞ս վախենում։ Ինչո՞ւ ես որբերիս զրկում դրանցից։ Տո՛ւր անուրները, տո՛ւր, ի սեր աստծու։

— Դեհ, դեհ, աստծու անունը չտաս,— կաղ-կաղ քայլելով հոխորտում և կնոջից պաշտպանվում էր Մելեխովը։— Ձեր մարդիկ է՛լ հո կվերցնեին մեզանից։ Քո մարդը կարծյոք կոմիսար է, հը՞... Ձե՛ռ քաշի։ Թե որ «քոնը-իմը— աստծունն է», ուրեմն սկվիր, մի՛ գանգատվիր։

Հետո, ջարդելով սնդուկների կողպեքները, համակրական լռություն պահպանող գումակայինների ներկայությամբ ընտրեց նոր շալվարներն ու համազգեստները, լույսի տակ դիտեց դրանք, ճմռթեց սև, կարճ մատներով, հանգույցներ կապեց...

Ճաշից առաջ նա մեկնեց։ Լիքը լցված բրիչկայում, կապոցների վրա նստել էր Դարյան, բարակ շրթունքներն իրար սեղմել։ Բրիչկայի ետին կողմում, իրեղենի վրա ընկած էր բաղնիքի մի կաթսա։ Պանտելեյ Պրակոֆևիչը դա հանել էր բաղնիքի վառարանից, հազիվ հասցրեց մինչև բրիչկան և Դարյայի կշտամբալից դիտողությանը.

— Ապի, դուք ք...ից էլ ձեռ չեք քաշում,— զայրացկոտ պատասխանեց.

— Ձենդ կտրի, անզգամ։ Չէ՛ մի, կաթսան թողնեի նրանց համար։ Դու էլ մունտռիկ Գրիշկայի նման ես, քեզանից ի՞նչ տնտեսուհի դուրս կգա։ Այդպես... Դե՛հ, քշիր, է՛, ի՞նչ ես բերանդ բաց արել։

Արցունքներից աչքերն ուռած տանտիրուհուն, որը նրանց ետևից ծածկում էր դարպասը, նա բարեհոգությամբ ասաց.

— Մնաս բարով, քուրրս։ Չբարկանաս։ Դուք ձեզ համար էլի իրեր կճարեք։

X

Օրերի շղթա... Օղակի մեջ ներկուած օղակ։ Երթեր, կռիվներ, հանգիստ։ Շոգ։ Անձրև։ Ձիու քրտնքի և թամքի տաքացած կաշվի միախառնված հոտ։ Երակներումդ մշտական լարումից ոչ թե արյուն է, այլ տաքացրած սնդիկ։ Կիսաքուն մնալուց գլուխդ երեք դյույմանոց թնդանոթի արկից էլ ծանր է։ Գրիգորին որքա՞ն կուզեր հանգստանալ, քնից կշտանալ։ Հետո էլ, իբրև զուրթանավոր, քայլել փափուկ ակոսով,

շվացնել եղների վրա, լսել կոունկների կապույտ, շեփորային կանչը, այտերի վրայից փաղաքշանքով հանել քամու բերած արծաթափայլ սարդոստայնը ու անդադար խմել գութանի շուռ տված աշնանային հողի գինեբույրը։

Իսկ դրա փոխարեն — ճանապարհների շեղբերով կտրատված արտեր։ Ճանապարհներին—մերկ, փոշուց դիակի պես սևացած գերիների ամբոխներ։ Գնում է հարյուրյակը, կոխոտում ճանապարհները, երկաթե պայտերով ճզմում արտերը։ Խուտորներում սիրողները խուզարկում են կարմիրների հետ գնացած կազակների ընտանիքները, մտրակներով ձաղկում ուրացողների կանանց ու մայրերին։

Զգվում էին ձանձրույթով ամլացած օրերը։ Դրանք ջընջվում էին հիշողությունից, և ոչ մի իրադարձություն, նույնիսկ եթե նշանավոր էր, իր ետևից հետք չէր թողնում։ Պատերազմի առօրյան էլ ավելի ձանձրալի էր թվում, քան անցած պատերազմում, գուցե այն պատճառով, որ առաջ ամեն ինչ տեսնված էր։ Ու հենց պատերազմին էլ արհամարհանքով էին վերաբերվում նախկին պատերազմի բոլոր մասնակիցները. և՛ ծավալը, և՛ ուժերը, և՛ կորուստները— ամեն ինչ խաղալիքային էր գերմանական պատերազմի համեմատությամբ։ Միմիայն սև մահը, ինչպես և Պրուսիայի դաշտերում, ծառացած էր իր ամբողջ հասակով մեկ, վախեցնում էր ու ստիպում անասնաբար զգուշանալ իրենից։

— Մի՞թե սա պատերազմ է։ Այնպես, էլի, նման է պատերազմին։ Գերմանական պատերազմում, մեկ էլ տեսար, գերմանացին թնդանոթներից կրակ թափեց, տակնիգլուխ հնձեց գնդերը։ Իսկ հիմի եթե հարյուրյակից երկու մարդ վիրավորվեց, ասում են կորուստ ունեցանք,— դատում էին ճակատայինները։

Սակայն այդ խաղալիքային պատերազմն էլ էր զայրույթ պատճառում։ Ուժեղանում էր դժգոհությունը, հոգնածությունը, չարացումը։ Հարյուրյակում հետզհետե ավելի վճռականորեն ասում էին.

— Դոնի հողից դուրս կքշենք կարմիրներին, ու պրծավ-գնաց։ Սահմանից դենը չենք գնա։ Թող Ռուսաստանն իր ուզածի պես ապրի, մենք էլ մեր ուզածի պես։ Մենք չենք կարող այնտեղ սահմանել մեր կարգերը։

Ֆիլոնովսկու մերձակայքում ամբողջ աշնանը թույլ մարտեր էին տեղի ունենում։ Ամենագլխավոր ստրատեգիական կենտրոնը Ցարիցինն էր, թե՛ սպիտակները և թե՛ կարմիրները այնտեղ էին նետում լավագույն ուժերը, իսկ Հյուսիսային ճակատում հակառակորդներից որևէ մեկի կողմում գերակշռություն չկար։ Երկու կողմն էլ ուժեր էին կուտակում վճռական գրոհի համար։ Կազակներն ավելի շատ հեծելազոր ունեին. օգտագործելով այդ առավելությունը, կոմբինացված գործողություններ էին կատարում, շրջանցում թևերը, անցնում թիկունքը։ Գերակշռությունը կազակների կողմն էր միայն այն պատճառով, որ նրանց դեմ կանգնած էին բարոյապես խախուտ զորամասեր՝ գլխավորապես ճակատամերձ գոտում նոր մոբիլիզացված կարմիրբանակայիններից։ Սարատովցիները, տամբովցիները հազարներով անձնատուր էին լինում։ Բայց հենց որ հրամանատարությունը կռվի էր հանում բանվորական մի գունդ, նավաստիական մի ջոկատ կամ Միրոնովի հեծելազորը, դրությունը հավասարվում էր, ու նորից նախաձեռնությունը ձեռքից ձեռք էր անցնում ու հերթով զուտ տեղական նշանակություն ունեցող հաղթանակներ էին տարվում։

Մասնակցելով պատերազմին, Գրիգորին անտարբերությամբ հետևում էր դրա ընթացքին։ Նա հավատացած էր, որ ձմռանը ռազմաճակատում չի լինի. գիտեր, որ կազակները հաշտվողարար էին տրամադրված ու երկարատև պատերազմի մասին խոսք էլ չէր կարող լինել։ Գնդում երբեմն լուրագրեր էին ստացվում։ Գրիգորին ատելությամբ վերցնում էր «Վերխնե-Դոնսկոյ կրայ»-ի դեղին, փաթթոցաթղթի վրա տպված համարը, ու հարևանցիորեն նայելով ռազմաճակատների ամփոփագրերը, կրճատացնում էր ատամները։ Կազակներն էլ բարեհոգությամբ քրքջում էին, երբ Գրիգորին նրանց համար բարձրաձայն կարդում էր կորովից, քաղցր-մեղցր կայտառությամբ լեցուն տողերը.

«Սեպտեմբերի 27-ին Ֆիլոնովսկու ուղղությամբ մարտեր էին մղվում փոփոխակի հաջողություններով։ Լույս 26-ի գիշերը Վեշենսկու քաջակորով գունդը հակառակորդին դուրս քշեց Պոդգորնի խուտորից և, կը-

ընկակոխ հետապնդելով նրան, ներխուժեց Լուկյանովսկի խուտորը։ Վերցրված են հսկայական թվով գերիներ և ռազմական ավար։ Կարմիր զորամասերը անկարգ նահանջում են։ Կազակների տրամադրությունը բարձր է։ Դոնեցիք նոր հաղթանակների են ձգտում»։

— Քանի գերի ենք վերցրե՞լ։ Հսկայական թվո՞վ։ Օ-հո-հո՛, շա՛ն որդիք, Երեսուներկու մարդ ենք վերցրել, իսկ նրանք... քա՛հ-քա՛հ-քա՛հ-քա՛հ...— ծիծաղից թուլանում էր Միտկա Կորշունովը՝ ամբողջ լայնությամբ բաց անելով սպիտակ ատամներով բերանը, երկար ձեռները դնելով կողերին։

Կազակները չէին հավատում նաև Սիբիրում ու Կուբանում «կադետների» հաջողությունների վերաբերյալ տեղեկություններին։ Ցափազանց անպատկառ ու լկտի կերպով էր ստում «Վերխնե-Դոնսկոյ կրայ»-ը Օխվատկինը,— մեծ-մեծ ձեռներով, վիթխարահասակ մի կազակ, կարդալով մի հոդված չեխոսլովակյան խռովության մասին, Գրիգորիի ներկայությամբ հայտարարեց.

— Ա՛յ, կսղկեն չեխին, հետո էլ այնտեղ եղած ամբողջ բանակը կշպրտեն մեր դեմ, ու այն ժամանակ վայն եկել է մեզ տարել... Ռուսաստան են ասում, հա՛-ա։— Ու սպառնագին վերջացրեց.— Հանա՞ք ես անում, ինչ է։

— Մի՛ վախեցնի, հա՛-ա։ Օ՛ֆ, պորտիս կողքը մրմռում է այս հիմար խոսակցությունից,— ջղայնացավ Պրոխոր Զիկովը։

Իսկ Գրիգորին ծխախոտ փաթաթելով, կամացուկ չարախնդությամբ մտածեց՝ «ճիշտ է»։

Այդ երեկո նա սեղանի մոտ երկար նստեց գլխիկոր, արևից գունաթափ վերնաշապկի օձիքն արձակած, նույնպես գունաթափ պաշտպանական գույնի ուսադիրներով։ Մռայլ էր արևահար նրա դեմքը, որի վրա անառողջ շաղությունը կոկել էր այտոսկրների փոսերը և սուր անկյունները։ Նա պտտում էր սև, մկանոտ պարանոցը, մտազբաղ ոլորում գանգրացած, արևակեզ բեղի ծայրը ու լարվածորեն մի կետի էր նայում վերջին տարիներում խամրած, բարկացկոտ աչքերով։ Մտածում էր ծանր, անսովոր դժվարությամբ, ու

արդեն պառկելով քնելու, ասես պատասխանելով ընդհանուր հարցին, ասաց.

— Չգիտես ոնց շարժվես։

Ամբողջ գիշերը չքնեց։ Հաճախ դուրս էր գալիս ձիուն նայելու ու երկար կանգնում էր մուտքի սանդուղքի վրա՝ ունկնդրելով սև, մետաքսաշշրշուն լռության։

Երևում է, որ դեռ մեղմ, դողդոջ լույսով վառվում էր այն փոքրիկ աստղը, որի տակ ծնվել էր Գրիգորին. երևում է, որ դեռ չէր հասել ժամանակը, երբ այն պետք է պոկվեր ու թռչեր՝ ընկնող, սառն բոցով վառելով երկինքը։ Աշնան ընթացքում երեք ձի էր սպանվել Գրիգորիի տակին, հինգ տեղից գնդակով ծակվել էր շինելը։ Մահը կարծես խաղ էր անում այդ կազակի հետ՝ սև թևը տարածելով նրա վրա։ Մի անգամ գնդակը ամբողջովին ծակեց թրի պղնձե գլխիկը, թրափունջը ընկավ ձիու ոտների տակ, ասես կծոտված լիներ։

— Մեկը թունդ աղոթում է քեզ համար, Գրիգորի,— ասաց նրան Միտկա Կորշունովը և զարմացավ Գրիգորիի անուրախ ժպիտից։

Ճակատը անցել էր երկաթուղագծից դենը։ Ամեն օր գումակները փշալարերի փաթաթներ էին բերում։ Ամեն օր հեռագիրը ճակատով մեկ ծորացնում էր հետևյալ բառերը.

«Օրերս կժամանեն դաշնակիցների զորքերը։ Անհրաժեշտ է ամրանալ մարզի սահմաններում մինչև օժանդակ ուժերի գալը, ամեն գնով կասեցնել կարմիրների գրոհը»։

Մոբիլիզացված բնակչությունը ծանր նիգերով քանդում էր սառած հողը, խրամատներ էր փորում, դրանք ցանցում փշալարով։ Իսկ գիշերները, երբ կազակները թողնում էին խրամատները ու գնում բնակարաններում տաքանալու, կարմիրբանակային հետախույզները մոտենում էին խրամատներին, տապալում էին ցցերը և կազակներին ուղղված կոչեր էին կպցնում մետաղալարի ժանգոտ սեպերին։ Կազակները դրանք կարդում էին ագահությամբ՝ ինչպես հարազատներից ստացած նամակներ։ Պարզ էր, որ այդպիսի պայմաններում անհնարին է շարունակել պատերազմը։ Շողշողում էին սառնամանիքները, դրանց հաջորդում էր տա-

քությունը և ձյան առատ տեղումը։ Ձյունը ծածկում էր խը-
րամատները։ Դժվար էր թեկուզ մի ժամ պառկել խը-
րամատներում։ Կազակները մրսում էին, նրանց ոտներն ու
ձեռները ցրտահար էին լինում։ Հետևակ և պլաստունական
զորամասերում շատերը սապոգներ չունեին։ Ոմանք ռազ-
մաճակատ էին գնացել միայն քոշերով ու բարակ շալվա-
րով,— կարծես գնացել էին գոմ՝ աղբը հավաքելու։ Դաշ-
նակիցներին չէին հավատում։ «Նրանք գալիս են բզեզնե-
րին նստած»,— մի անգամ տրտմությամբ ասավ Անդրյուշ-
կա Կաշուլինը։ Իսկ կարմիրների պարեկներին հանդիպելով,
կազակները ականջ էին դնում, թե ինչպես նրանք բղավում
էին՝ «է-հե՛յ, քրիստոսիկներ, դուք մեր դեմ գալիս եք տան-
կերով, իսկ մենք ձեր դեմ՝ սահնակներով։ Կրունկներիդ
ճարպ քսեցեք, հա՛-ա, շուտով հյուր կգանք»։

Նոյեմբերի կեսից կարմիրները հարձակման անցան։
Նրանք համառությամբ ետ էին մղում կազակական զորա-
մասերը դեպի երկաթուղագիծը, սակայն գործողություննե-
րի մեջ բեկումն ավելի ուշ առաջացավ։ Դեկտեմբերի 16-ին
Միրոնովի հեծելազորը երկարատև կռվից հետո ետ շպրտեց
33-րդ գունդը, բայց Վեշենսկու գնդի ճակատամասում, որ
ծավալված էր Կոլոդեզյանսկի խուտորի կողքին, հանդուգն
դիմադրության հանդիպեց։ Կալերի ցանկապատերի ձյունա-
պատ եզրից գնդացրորդ վեշենցիները մրրկային կրակով
դիմավորեցին հակառակորդին, որը հարձակվում էր հետևակ
շարքով։ Աջ թևի գնդացիրը, որ գտնվում էր կարգինցի կա-
զակ Անտիպովի միանգամայն փորձված ձեռքում, խփում
էր՝ գնդակները շաղ տալով հակառակորդի դասավորության
խորքը, հնձում վազեվազք կատարող շղթաները։ Հարյու-
րյակը ծածկվում էր կրակոցների ծխով։ Իսկ ձախ թևից երկու
հարյուրյակ արդեն շրջանցում էին կատարում։

Թույլ հարձակվող կարմիրբանակային զորամասերին
երեկոյան դեմ փոխարինեց հենց նոր ռազմաճակատ ժա-
մանած նավաստիների ջոկատը։ Նրանք առանց պառկելու,
առանց աղաղակելու, ճակատից գրոհ տվին գնդացիրների
վրա։

Գրիգորին անընդհատ կրակում էր։ Տաքացել էր փողա-
կալը։ Փողը շիկացել էր ու վառում էր նրա մատները։ Սա-

ռեցնելով հրացանը, Գրիգորին նորից պահունակ էր խո-
թում, կկոցած աչքերով նշան բռնում հեռավոր, սև ու փոք-
րիկ կերպարանքների վրա։

Նավաստիները ետ քշեցին նրանց։ Վերցնելով ձիերը,
հարյուրյակները սրարշավ անցան խուտորը, դուրս թռան
բլուրի վրա։ Գրիգորին ետ նայեց ու բնազդորեն գցեց սան-
ձը։ Բլուրի վրայից հեռվում երևում էր տխրամած, ձյունա-
պատ դաշտը՝ ձյան մեջ թաղված քոլերի հրվանդաններով
ու ձորակների լանջերից ընկած իրիկնադեմի կարմրակա-
պույտ ստվերներով։ Դաշտում մի վերստ տարածությամբ
սև բծերի նման ընկած էին գնդացրային կրակով կոտորված
նավաստիների դիակները։ Բուշլատներ և կաշվե-կուրտ-
կաներ հագած, նրանք սևին էին տալիս ձյան վրա, ինչպես
չվող, գետին իջած սերմնաքաղների երամ...

Հարձակումից անդամահատված հարյուրյակները, կորց-
նելով կապը Ելանսկի գնդի և Ուստ-Մեդվեդիցկու օկրուգի
համարագրված գնդերից մեկի հետ, որը գտնվում էր նրանց
աջ կողմում, իրիկնադեմին կանգ առան գիշերելու երկու
խուտորում, որոնք գտնվում էին մի փոքրիկ գետակի, Բու-
զուլուկի վտակի ափին։

Արդեն մթնշաղին Գրիգորին վերադառնալով այն վայ-
րից, որտեղ նա հարյուրյակի հրամանատարի հրամանով
ուղեկալներ էր կարգել, նրբանցքում հանդիպեց գնդի հրա-
մանատարին և նրա համհարզին։

— Ո՞րտեղ է երրորդ հարյուրյակը,— ձիու սանձը քաշե-
լով՝ հարցրեց հրամանատարը։

Գրիգորին պատասխանեց։ Ձիավորները քշեցին ձիերը։

— Հարյուրյակի կորուստները շա՞տ են,— հեռանալիս
հարցրեց համհարզը. պատասխանը նա չլսեց, նորից հարց
տվեց.— ի՞նչ։

Բայց Գրիգորին գնաց առանց պատասխանելու։

Ամբողջ գիշերը խուտորի միջով ինչ-որ գումակներ էին
անցնում։ Այն տան մոտ, որտեղ կազակների հետ գիշերել
էր Գրիգորին, երկար կանգնած էր մի մարտկոց։ Միափեղկ,
փոքրիկ պատուհանից լսվում էր մայր հայհոյելը, ձիավոր-
ների աղմուկը, իրարանցումը։ Տաքանալու համար խրճիթ
էին մտնում հրետանավորները, գնդի շտաբի հանձնատար-

ները, որոնք հայտնի չէ ինչու էին ընկել այդ խուտորը։ Կեսդիշերին մարտկոցի հրետանավորներից երեք հոգի, արթնացնելով տնեցիներին ու կազակներին, ներս խցկվեցին։ Մոտիկ տեղում նրանք հրանոթը գցել էին գետակի մեջ ու որոշել էին անցկացնել գիշերը, որպեսզի առավոտը գետակից եզներով դուրս քաշեին այն։ Գրիգորին արթնացավ, երկար նայում էր, թե ինչպես մարտկոցավորները տնքալով, մաքրելով սապոգների կպչուն, սառած ցեխը, հանում են ոտների թաց փաթաթանները ու կախոտում վառարանի ծխնելույզի վրա։ Հետո ներս մտավ մինչև ականջները ցեխոտված մի հրետանավոր սպա։ Նա խնդրեց գիշերելու տեղ տալ, հանեց շինելը ու ֆրենչի ցեխոտ թևքով անտարբեր տեսքով երկար տրորում էր դեմքը։

— Մենք կորցրինք մի հրանոթ,— ասաց նա՝ հոգնած ձիու աչքերի պես խոնարհ աչքերով նայելով Գրիգորիին։— Այսօր այնպիսի կռիվ եղավ, ինչպես Մաշեխայի մերձակայքում։ Երկու կրակոցից հետո հայտաբերեցին մեր տեղը... Հենց որ շրմփացրին, վայրկենապես ջարդեց մարտական սոնակը։ Թնդանոթը տեղավորված էր կալում։ Այնքան էլ լա՛վ էր քողարկված...— Նա ըստ սովորության ու հավանորեն անգիտակցաբար յուրաքանչյուր ֆրազին անպատկառ հայհոյանք էր ավելացնում։— Դուք Վեշենսկու գնդի՞ց եք։ Թեյ խմելո՞ւ եք։ Տանտիրուհի, դուք մեզ համար ինքնաեռ չէի՞ք գցի, հը՞։

Բանից դուրս եկավ, որ նա շաղակրատ, ձանձրալի զրուցակից է։ Անդադար թեյ էր կլանում։ Ու կես ժամից հետո Գրիգորին արդեն գիտեր, որ նա Պլատովսկայա ստանիցայից է, ավարտել է ռեալական դպրոցը, եղել է գերմանական պատերազմում ու երկու անգամ անհաջող ամուսնացել։

— Այժմ վե՛րջ Դոնի բանակին,— ասաց նա՝ սուր և կարմիր լեզվով քրտինքը լիզելով սափրած շրթունքից։— Պատերազմը վերջանալու մոտ է։ Ֆրոնտը էգուց ցրիվ կգա, իսկ երկու շաբաթից հետո մենք արդեն կլինենք Նովոչերկասկում։ Ուզում էին ոտաբոբիկ կազակներով գրոհե՞լ Ռուսաստանը։ Բա ապուշներ չե՞ն, հը՞։ Կադրային սպաները բոլորն էլ անպիտաններ են, աստվա՛ծ վկա։ Դուք հո կազակ եք, չէ՞։ Ա՛յ, նրանք էլ հենց ուզում են ձեր ձեռներով կրակից շագանակ հանել։ Իսկ իրենք համբարակություններում դափնու տերև ու ձավար են կշռում։

Նա հաճախակի թարթում էր դատարկ աչքերը, շարժվում՝ իր ամբողջ խոշոր ու ամրակազմ մարմինը հենելով սեղանին, իսկ մեծ, լայն բերանի անկյունները մռայլ ու անկամք կերպով կախ էին ընկել, ու դեմքի վրա անխախտ պահպանվել էր հլու, մարզված ձիու նախկին արտահայտությունը։

— Առաջ, թեկուզ հենց Նապոլեոնի էպոխայում պատերազմելը հիանալի էր։ Հանդիպեցին երկու բանակները, զարկվեցին, բաժանվեցին։ Ոչ ֆրոնտներ կային, ոչ էլ հարկավոր էր նստել խրամատներում։ Իսկ հիմի փորձիր գլուխ հանել գործողություններից. սատանան ինքն էլ կշշմի։ Թե առաջ պատմագիրները փչում էին, ապա այս պատերազմի նկարագրության մեջ այնպիսի՜ պոչով ստեր են լինում... Ուղղակի ձանձրույթ է և ոչ թե պատերազմ։ Գույներ չկան։ Կեղտ է։ Եվ առհասարակ անմտություն է։ Ես այդ գերագույններին երես երեսի կբերեի ու կասեի՝ «Ահա ձեզ, պարոն Լենին, վախմիստրը. սովորեցեք նրանից տիրապետել զենքին։ Իսկ ձեզ համար, պարոն Կրասնով, ամոթ է չգիտենալը»։ Եվ թող զարկվեին ոնց որ Դավիթն ու Գողիաթը[1]. ով հաղթեր, նա էլ թող իշխեր։ Ժողովրդի համար միևնույն է, թե նրան ով է կառավարում։ Դուք ինչ եք կարծում, պարոն խորունժի։

Գրիգորին առանց պատասխանելու քնեած հետևում էր նրա մսոտ ուսերի ու ձեռների ծանր շարժումներին, բերանի խոռոչում անհաճելիորեն-հաճախ երևացող կարմիր լեզվին։ Ուզում էր քնել, աներես, ցանցառ հրետանավորը շարունակում էր նրան, սիրտը խառնում էր հրետանավորի քրտնած ոտների շնահոտից...

Գրիգորին առավոտյան արթնացավ ինչ-որ չլուծված բանի տաղտուկ զգացումով։ Այն վախճանը, որ նա նախատեսել էր դեռ աշնանից, այնուամենայնիվ ապշեցրեց նրան իր

[1] Դավիթ և Գողիաթ — ըստ բիբլիական ավանդության, փղշտացիների ու հրեաների միջև տեղի ունեցած ճակատամարտերից մեկը վերջացավ էր պատանի Դավթի ու փղշտացի հսկա Գողիաթի մենամարտով հաղթությամբ։

հանկարծակիությամբ։ Գրիգորին աչքաթող էր արել այն, որ պատերազմի դեմ ուղղված դժգոհությունը սկզբում մանրագույն առվակների պես քչքչալով հարյուրյակներում ու գնդերում, անտեսանելիորեն միախառնվել ու հզոր հեղեղ էր առաջացրել։ Ու հիմա տեսնում էր լոկ այդ հեղեղը, որ շեշտակիորեն և ագահաբար քշում-տանում էր ֆրոնտը։

Այդպես գարնանամտին տափաստանով գնում է մարդը։ Շողում է արևը։ Շուրջը—համատարած բացկապտավուն ձյուն։ Իսկ նրա ոտների տակ տեղի է ունենում աչքի համար աննշմարելի, հավերժական սքանչելի աշխատանքը,— հողի ազատագրումը։ Արևն ուտում է ձյունը, մաշում այն, տակից խոնավություն լցնում։ Տաք, մշուշոտ գիշեր, ու առավոտյան արդեն շրշյունով ու զղրդյունով նստում է վերնաշերտը, ճանապարհներին ու աղոտներում պղպջակվում է կանաչ, բարձրադիր վայրերում հոսող ջուրը, սմբակների տակից ձյունը հալչող փաթիլներով թռչում է բոլոր կողմերը։ Տաք է։ Բացվում ու մերկանում են ավազոտ բլրակները, զգացվում է կավոտ գետնի, փտած խոտաբույսերի նախնադարյան բույրը։ Կեսգիշերին ուժգնաթափ վշշում են ձորակները, շաչում ձյան նստվածքներով լցվող հեղեղատները, բուրավետ ծխախոտի ծխի պես գոլորշի է արձակում թավիշե, սև, մերկացած ցրտահերկը։ Իրիկնադեմին, տնքտնքալով, տափաստանային գետակը ջարդում է սառույցը, քշում այն՝ ինքը ջրառատ, պիրկ լցված, ինչպես ծծմոր ստինքը, ու ձմռան անսպասելի վախճանից ապշած, կանգնած է մարդը ավազե եզերքին, աչքերով ծանծաղ տեղ է փնտրում, քրտնած, ականջները թափահարող ձիուն շրմփացնում մըտրակով։ Իսկ շուրջը դավաճանորեն ու անմեղ տեսքով կապույտին է տալիս ձյունը, փռված է նիրհուն ու սպիտակ ձմեռը...

Գունդը ամբողջ օրը նահանջում էր։ Ճանապարհներով սլանում էին զումակները։ Հեռո՞ւ-հեռվում, հորիզոնը սքողած գորշ ամպից դենը փխրուն փլվածքների նման որոտում էին թնդանոթային համազարկերը։ Ձյունից մերկացած, զոմազբոտած ճանապարհով, ցեխը ճլմփացնելով, գնում էին հարյուրյակները, ցեխոտված կոճկնեռով ձիերը հունցում էին թաց ձյունը։ Ճանապարհների կողքերից ձիերով սլանում էին հանձնատարները։ Փայլուն, կապտավուն փեռուներով, լռակյաց, կարճապոչ և հետիոտն հեծելակների պես անհարպիկ սերմնաքաղները ծանր ու մեծ, օրորվելով քայլում էին ճանապարհի կողքից, ու ասես զորատեսի պահին, նրանց կողքից անցնում էին կազակական նահանջող հարյուրյակները, ցնցոտիապատ պլաստունների շարասյուները, զումակների զանգվածները։

Գրիգորին հասկացավ, որ այլևս ոչինչ չի կարող կանգնեցնել շեշտակիորեն ծավալվող նահանջի զսպանակը։ Ու ցնծագին վճռականությամբ լեցուն, նա գիշերով ինքնակամ հեռացավ գնդից։

— Ո՞ւր ես գնում, Գրիգոր Պանտելև,— հարցրեց Միտկա Կորշունովը, ծաղրականորեն դիտելով, թե ինչպես Գրիգորին շինելի վրայից հագնում է անջրանցիկ թիկնոցը, կապում թուրն ու նագանը։

— Քե՛զ ինչ։

— Հետաքրքիր է։

Գրիգորին խաղացրեց այտոսկրների կարմրատակած ուռուցքները, բայց ուրախ, աչքով անելով պատասխանեց.

— Խնամոնց տունը։ Հասկացա՞ր։

Ու դուրս գնաց։

Նրա ձին թամբած, պատրաստ էր։

Մինչև լուսաբաց նա սլանում էր գիշերային ցրտից մշուշված ճանապարհներով։ «Կապրեմ տանը, հետո էլ կը-լսեմ, թե նրանք ոնց են գնալու մեր կողքից, ու կմիանամ գնդին»,— օտարոտի մտածում էր նա այն մարդկանց մասին, որոնց հետ երեկ կռվում էր կողք-կողքի։

Մյուս օրվա երեկոյան նա արդեն երկու հարյուր վերստ սլացած, երկու օրում նիհարած, հոգնածությունից օրորվող ձիով մտավ հայրական տան բակը։

XI

Նոյեմբերի 24-ին Նովոչերկասկում լուր սարսափեց, որ ժամանելու է Համառուսական տերությունների ռազմական միսիան։ Քաղաքում համառ լուրեր տարածվեցին, թե անը-

լիական մի հզոր նավախումբ արդեն կանգնած է Նովորոսիյսկի նավահանգստի խարսխակայանում, թե իրը դաշնակիցների զորքերի հսկայական դեսանտները Սալոնիկից փոխադրված լինելով, արդեն ափ են դուրս գալիս, թե ֆրանսիական սեամորթ հրաձիգների մի կորպուս արդեն ափ է դուրս եկել և ամենամոտիկ ապագայում Կամավորական բանակի հետ համատեղ հարձակում կսկսի։ Քաղաքով մեկ ձնագնդի պես գլորվում էին լուրերը...

25-ի առավոտյան Կրասնովը հրամայեց լեյբ-գվարդիայի Ատամանյան գնդի կազակներից պատվո պահակ ուղարկել։ Երիտասարդ ատամանցիների երկու հարյուրյակ շտապ կերպով զուգեցին բարձրաճիտ սապոգներով ու սպիտակ փոկե հանդերձանքով և փողհարների հարյուրյակի հետ մեկտեղ ուղարկեցին Տագանրոգ։

Ռուսաստանի հարավում անգլիական ու ֆրանսիական ռազմական միսիաների ներկայացուցիչները յուրատեսակ քաղաքական հետախուզության նպատակով որոշել էին մի քանի սպա ուղարկել Նովոչերկասկ։ Նրանց խնդիրն էր ծանոթանալ Դոնի դրության և բոլշևիկների դեմ հետագա պայքարի հեռանկարների հետ։ Անգլիան ներկայացնում էին կապիտան Բոնդը և լեյտենանտներ Բլումֆելդը և Մոնրոն, Ֆրանսիան՝ կապիտան Օշենը և լեյտենանտներ Դյուպրեն ու Ֆորը։ Դաշնակիցների ռազմական միսիաների հենց այս ոչ բարձր պաշտոնյաների գալուստը,— որոնք դիպվածի քմահաճույքով «դեսպաններ» դարձան,— այնքա՜ն իրարանցում առաջացրեց ատամանի պալատում։

«Դեսպաններին» մեծ պատվով տարան Նովոչերկասկ։ Չափից անց քծնությամբ ու ստորաքարշությամբ պտտեցրին համեստ սպաների գլուխները, ու սրանք զգալով իրենց «իսկական» մեծությունը, արդեն սկսեցին հովանավորի աչքով ու բարձրից նայել կազակական անվանի գեներալների ու Դոնի բուտաֆորական ռեսպուբլիկայի շքաստիճանավորների վրա։

Կազակական գեներալների հետ եղած խոսակցությունների ժամանակ ֆրանսիական երիտասարդ լեյտենանտների քաղաքավարության ու ֆրանսիական քաղցր-մեղցր սիրալիրության արտաքին փայլի տակից արդեն սկսվել էին նըշմարվել ներողամտության ու ամբարտավանության սառն արտահայտությունները։

Պալատում երեկոյան հարյուր հոգու ճաշ տրվեց։ Զորական երգեցիկ խումբը դահլիճով մեկ փռում էր կազակական երգերի մետաքսե պաստառները, որոնք ճոխ պճնազարդված էին ձայնակիցների տենորներով, փողային նվագախումբը թնդում էր հուժկու և դաշնակցային հիմներ էր զրնգացնում։ «Դեսպանները» ուտում էին համեստորեն ու մեծ արժանապատվությամբ, ինչպես և պատշաճում է այդպիսի դեպքերում։ Զգալով մոմենտի պատմական նշանակությունը, ատամանի հյուրերը աչքի տակով զննում էին նրանց։

Կրասնովը սկսեց ճառը.

— Դուք գտնվում եք, պարոններ, այն պատմական դահլիճում, որի պատերից ձեզ են նայում մի այլ ժողովրդական պատերազմի, հազար ութ հարյուր տասներկու թվականի պատերազմի հերոսների համբ աչքերը։ Պլատովը, Իլովայսկին, Դենիսովը մեզ հիշեցնում են այն սրբազան օրերը, երբ Փարիզի բնակչությունը ողջունում է իր ազատարարներին,— Դոնի կազակներին, երբ Ալեքսանդր Առաջին կայսրը փլատակներից ու ավերակներից վերականգնում էր գեղեցիկ Ֆրանսիան...

«Գեղեցիկ Ֆրանսիայի» դելեգատների աչքերը արդեն փայլփլում ու թափառում էին բավականաչափ կոնծած ցիմլյանական գինուց, բայց նրանք մինչև վերջ ուշադրությամբ լսեցին Կրասնովի ճառը։ Երկար ու բարակ նկարագրելով այն կատաստրոֆիկ դժբախտությունները, որ կրում էր «վայրենի բոլշևիկների կողմից ճնշվող ռուս ժողովուրդը», Կրասնովը իր ճառը վերջացրեց այսպիսի խանդալից խոսքերով.

— ...Ռուս ժողովրդի լավագույն ներկայացուցիչները կորչում են բոլշևիկյան զնդաններում։ Նրանց հայացքները ուղղված են ձեզ. նրանք սպասում են ձեր օգնության, և դուք պետք է օգնեք նրանց ու միայն նրանց, և ոչ Դոնին։ Մենք կարող ենք հպարտությամբ ասել՝ մենք ազատ ենք։ Բայց մեր բոլոր մտքերը, մեր պայքարի նպատակը ուղղված են մեծ Ռուսաստանին, որը հավատարիմ է իր դաշնակիցներին, պաշտպանել է նրանց շահերը, նրանց համար զոհա-

բերել իրեն և այժմ այնքան տհավոր կերպով ծառայի է նրանց օգնության։ Հարյուր չորս տարի առաջ, մարտ ամսին ֆրանսիական ժողովուրդը ողջունեց Ալեքսանդր Առաջին կայսրին և ռուսաստանյան գվարդիան։ Եվ այն օրվանից Ֆրանսիայի կյանքում սկսվեց մի նոր ժամանակաշրջան, որը նրան հասցրեց առաջին տեղը։ Հարյուր չորս տարի առաջ մեր ատամանը, կոմս Պլատովը հյուր էր Լոնդոնում։ Մենք ձեզ սպասում ենք Մոսկվայում։ Մենք սպասում ենք ձեզ, որպեսզի հանդիսավոր մարշերի ու մեր հիմնի հնչյունների ներքո միասին մտնենք Կրեմլ, որպեսզի միասին վայելենք խաղաղության և ազատության ամբողջ քաղցրությունը։ Մեծ Ռուսաստա՜ն,— այս բառերի մեջ են մեր բոլոր երազանքները և հույսերը։

Կրասնովի եզրափակիչ խոսքերից հետո վեր կացավ կապիտան Բոնդը։ Անգլերեն լեզվի հնչյուններին հետևեց բանկետին ներկա գտնվողների քար լռությունը։ Թարգմանիչը ոգևորությամբ սկսեց թարգմանել։

— Կապիտան Բոնդը իր անունից և կապիտան Օշենի անունից լիազորված է հայտարարելու Դոնի ատամանին, որ իրենք պաշտոնապես ուղարկված են Համաձայնության տերությունների կողմից, որպեսզի իմանան, թե Դոնում ինչ է կատարվում։ Կապիտան Բոնդը հավաստիացնում է, որ Համաձայնության տերությունները բոլոր ուժերով ու միջոցներով, չբացառելով նաև զորքերը, կօգնեն Դոնին ու Կամավորական բանակին՝ բոլշևիկների դեմ ուղղված նրանց անվեհեր պայքարում։

Թարգմանիչը դեռ չէր վերջացրել վերջին ֆրազը, երբ դահլիճի պատերը դողացին երեք անգամ կրկնված ուժգնաթափ «ուռայից»։ Նվագախմբի որոտընդոստ նվագի ներքո հնչեցին բաժակաճառերը։ Խմում էին «գեղեցիկ Ֆրանսիայի» և «հզոր Անգլիայի» ծաղկման համար, խմում էին «բոլշևիկների դեմ հաղթանակի պարգևման» համար... Բաժակների մեջ փրփրում էր Դոնի ֆշշան գինին, կայծկլտում էր երկար պահված փրփրուն գինին, քաղցր բուրում էր հինավուրց «կանթեղի» գինին...

Խոսք էին սպասում դաշնակցային միսիաների ներկայացուցիչներից, և կապիտան Բոնդը չտիրեց սպասել իրեն.

— Ես առաջարկում եմ խմել մեծ Ռուսաստանի կենացը և կուզենայի այստեղ լսել ձեր հին, սքանչելի հիմնը։ Մենք նշանակություն չենք տա դրա խոսքերին, բայց ես կուզեի լսել միայն դրա երաժշտությունը...

Թարգմանիչը թարգմանեց, ու Կրասնովը հուզումից սփրթնած դեմքը դարձնելով հյուրերին, կերկերաձայն գոչեց.

— Մեծ, միասնական և անբաժան Ռուսաստանի կենացը, ուռա՜։

Նվագախումբը ուժգնաթափ ու սահուն սկսեց «Աստվա՜ծ, պահիր ցարին» հին հիմնը։ Բոլորը ոտքի ելան, դատարկեցին բաժակները։ Ալեհեր արքեպիսկոպոս Գերմագենի դեմքից առատ արցունքներ էին հոսում։ «Որքա՜ն գեղեցիկ է դա...»— սքանչանում էր գինովցած կապիտան Բոնդը։ Բարձրաստիճան հյուրերից մեկը, խորապես զգացված, պարզապես հեկեկում էր մորուքը անձեռոցիկի մեջ դրած, որը աղտեղվել էր ճզմված հատիկավոր խավյարով...

. . . . . .

. . . . . .

Այդ գիշեր քաղաքի վրա մռնչում ու ոռնում էր մերձազովյան կատաղի քամին։ Մեռած փայլ էր արձակում տաճարի գմբեթը, որին ծեծկում էր առաջին ձյունահողմը...

Այդ գիշեր քաղաքից դուրս, աղբանոցում, կավոտ հեղեղատներում ռազմա-դաշտային դատարանի վճռով գնդակահարում էին Շախտի բոլշևիկ-երկաթուղայիններին։ Մեջքերին կապած թևերով նրանց երկու-երկու մոտեցնում էին զառիթափին, դեմառդեմ գնդակահարում նագաններով ու հրացաններով, ու սառնաշունչ քամին մարում էր կրակոցների ձայները, ինչպես ծխախոտի կայծերը...

Իսկ ատամանի պալատի դռան առաջ, ցրտում, նոյեմբերի վառող քամու տակ կծկվում-սառչում էր լեյբ-գվարդիայի Ատամանյան գնդի կազակներից բաղկացած պատվո պահակը։ Կծմում, սևանում էին մերկացրած թրերի կոթերը սեղմող կազակների ձեռները, ցրտից արցունքվում էին աչքերը, փայտանում ոտները... Մինչև լուսաբաց պալատից լսվում էին հարբածների աղաղակները, նվագախմբի

պղնձե կարկաչները ու զորական երգեցիկ խմբի տենորների հեծեծող գեղգեղանքները...

Իսկ մի շաբաթ անց սկսվեց ամենասարսափելին—ռազմաճակատի քայքայումը։ Գրված ճակատամասից առաջինը հեռացավ Կալաչի ուղղությամբ գտնվող 28-րդ գունդը, որտեղ ծառայում էր Պետրո Մելեխովը։

15-րդ Ինզենյան դիվիզիայի հրամանատարության հետ գաղտնի բանակցություններ վարելուց հետո կազակները որոշեցին թողնել ճակատը ու Վերին-Դոնյան օկրուգի տերիտորիայի միջով անարգել ճանապարհ տալ կարմիր զորքերին։ Յակով Ֆոմինը, որ կարճամիտ, մտավորապես սահմանափակ մի կազակ էր, անցավ խոովարար գնդի գլուխը, բայց ըստ էության նա միայն ցուցանակ էր, իսկ գործերը վարում ու Ֆոմինին ղեկավարում էին մի խումբ կազակներ, որոնք բոլշևիկորեն էին տրամադրված։

Աղմկալի միտինգից հետո, որտեղ սպաները, վախենալով, որ ետևից գնդակ կուտեն, դժկամորեն էին ապացուցում կռվելու անհրաժեշտությունը, իսկ կազակները միահամուռ, համառ ու անհեթեթ կերպով էին բղավում բոլորին ձանձրացրած էլի նույն խոսքերը պատերազմի ավելորդության, բոլշևիկների հետ հաշտվելու մասին,— գունդը ճանապարհ ընկավ։ Առաջին իսկ օրաշվերթից հետո Սոլոնկի ավանի մոտ գնդի հրամանատարը, զորական ավագ Ֆիլիպովը սպայական կազմի մեծամասնության հետ գիշերով հեռացավ գնդից և լուսաբացին միացավ կոմս Մոլյերի նահանջող, մարտերում գզգզված բրիգադին։

28-րդ գնդից հետո դիրքերը թողեց 36-րդ գունդը։ Նա լրիվ կազմով, բոլոր սպաներով ժամանեց Կազանսկայա։ Կազակների հանդեպ ստրկամտորեն քծնող, կարճահասակ, գողաբարո աչքերով հրամանատարը հեծյալներով շրջապատված, ձիով մոտեցավ այն տանը, որտեղ գտնվում էր էտապային պարետը։ Կտրիճի տեսքով, մտրակը խաղացնելով ներս մտավ։

— Ո՞վ է պարետը։

— Ես պարետի օգնականն եմ,— տեղից քիչ բարձրանալով՝ արժանապատվությամբ պատասխանեց Ստեպան Աստախովը։— Դուրը ծածկեցեք, պարոն սպա։

— Ես երեսունվեցերորդ գնդի հրամանատարն եմ, զորական ավագ Նաումովը։ Ը-ը... պատիվ ունեմ... Իմ գնդին անհրաժեշտ է հագուստ ու կոշիկ։ Մարդիկ մերկ ու ոտաբոբիկ են։ Դուք լսո՞ւմ եք։

— Պարետը այստեղ չէ, իսկ առանց նրան ես ձեզ մի զույգ թաղյակ է՛լ չեմ կարող տալ։

— Ինչպե՞ս։

— Հենց այդպես։

— Դո՛ւ... Դու ո՞ւմ հետ ես խոսում, հը՞։ Կձերբակալեմ, սատանան քեզ տանի։ Տղերք, սրան գցեք գետնահարկ։ Ո՞րտեղ են պահեստի բանալիները, թիկունքի՞ խլուրդ... Ի-ի՞նչ.— Նաումովը մտրակով շրմփացրեց սեղանին ու, կատաղությունից գունատվելով, մանչուրական փրչոտ փափախը քշեց ծոծրակին.— տուր բանալիները ու շատ մի խոսի։

Կես ժամից հետո պահեստի դռնից, նարնջավուն փոշի բարձրացնելով, դաբաղած մորթու կիսամուշտակների կապոցները, թաղյակների, սապոգների դաստաները թռչում էին ձյան վրա, ընկնում ամբոխված կազակների ձեռքը, շաքարով լեցուն պարկերը ձեռքից ձեռք էին անցնում։ Աղմկալից և ուրախ խոսակցությունը երկար ժամանակ բռնել էր հրապարակը...

Իսկ այդ ժամանակ 28-րդ գունդը իր նոր հրամանատարի, վախմիստր Ֆոմինի հետ մտնում էր Վեշենսկայա։ Նրա ետևից, երեսուն վերստ նրանից հեռու ընթանում էին Ինզենյան դիվիզիայի զորամասերը։ Կարմիր հետախուզությունը այդ օրը արդեն եղել էր Դուբրովկա խուտորում։

Հյուսիսային ճակատի հրամանատար գեներալ-մայոր Իվանովը դրանից չորս օր առաջ շտաբի պետ գեներալ Զամբրժիցկու հետ շտապ տեղափոխվում էին Կարգինսկայա ստանիցան։ Նրանց ավտոմոբիլը տեղապտույտ էր անում ձյան վրա, Զամբրժիցկու կինը արյունոտելու չափ կծոտում էր շրթունքները, երեխաները լալիս էին...

Վեշենսկում մի քանի օր անիշխանություն էր տիրում։ Ըստ լուրերի, Կարգինսկում ուժեր էին կուտակվում 28-րդ

գնդի վրա նետելու համար։ Բայց 22-ին Իվանովի ադյուտանտը Կարգինսկուց ժամանեց Վեշենսկայա, ու ծիծաղելով, հրամանատարի բնակարանից վերցրեց նրա մոռացած իրերը,— ամառային գլխարկը՝ բոլորովին նոր գդականիշով, գլխի խոզանակը, սպիտակեղեն ու էլի ինչ-որ մանր իրեր...

8-րդ Կարմիր բանակի զորամասերը ներխուժեցին Հյուսիսային ճակատում առաջացած հարյուր վերստանոց ճեղքվածքը։ Գեներալ Սավատեևը առանց կռվի ետ էր քաշվում դեպի Դոնը։ Տալիի և Բոգուչարի ուղղությամբ շտապ նահանջում էին գեներալ Ֆիցխելաուրովի գնդերը։ Հյուսիսում մի շաբաթ արտասովոր հանդարտություն տիրեց։ Չէր լսվում թնդանոթային որոտմունքը, լռում էին գնդացիրները։ Վերին Դոնի գնդերի դավաճանությունից վհատված, առանց կռվի նահանջում էին Ստորին Դոնի կազակները, որոնք կռվել էին Հյուսիսային ճակատում։ Կարմիրները առաջ էին շարժվում զգուշությամբ, դանդաղ, հետախուզախմբերով մանրակրկիտորեն զննում առջևում գտնվող խուտորները։

Հյուսիսային ճակատում Դոնի կառավարության համար խոշորագույն անհաջողությանը փոխարինեց ուրախությունը։ Դեկտեմբերի 28-ին Նովոչերկասկ ժամանեց դաշնակիցների միսիան,— Կովկասում բրիտանական ռազմական միսիայի հրամանատար գեներալ Պուլը՝ շտաբի պետ գնդապետ Կիսսի հետ, ու Ֆրանսիայի ներկայացուցիչները—գեներալ Ֆրանշե-դ՝Էսպերեն և կապիտան Ֆուկեն։

Կրասնովը դաշնակիցներին տարավ ճակատ։ Դեկտեմբերյան մի ցուրտ առավոտ Չիր կայարանում, կառամատույցում շարք կանգնեց պատվո պահակը։ Կախ ընկած բեղեր, գինեմոլի տեսք ունեցող գեներալ Մամոնտովը, որ սովորաբար փնթի էր, բայց այս անգամ քպցած, նոր սափրված, կապտափայլ այտերով,— սպաների ուղեկցությամբ քայլում էր կառամատույցում։ Սպասում էին գնացքին։ Ռազմական նվագախմբի երաժիշտները կայարանի շենքի մոտ թրևում էին ու փչելով տաքացնում կապուտկած մատները։ Պահակում ներդաշնակ շարքերով կանգնել էին ստորին ստանիցաների տարբեր արտաքին ու տարբեր հագակ ունեցող կազակները։ Սպիտակամորուք պապերի կոզ-

քին կանգնած էին անբեղ երիտասարդները, մեջեմեջ՝ քյաքուլավոր ճակատայիններ։ Պապերի շինելների վրա ոսկեփայլում ու արծաթափայլում էին Լովչայի ու Պլևնայի համար ստացած խաչերը և մեդալները, ավելի ջահել կազակների կրծքերից խիտ կախոտված էին այն խաչերը, որ նրանք ստացել էին Գյոք-Թափայի, Լիդիանտունի մերձակայքում եղած խիզախ գրոհների համար ու գերմանական պատերազմում—Պերեմիշլի, Վարշավայի, Լվովի համար։ Երիտասարդները ոչնչով չէին փայլում, բայց լարի պես ձգվում էին և աշխատում ամեն ինչով նմանվել մեծերին։

Կաթնագույն գոլորշիով պարուրված, դղրդալով մոտեցավ գնացքը։ Պուլմանյան վագոնի դռները դեռ չէին բացվել, երբ կապելմեյստերը եռանդով թափահարեց թևերը և նվագախումբը նվագեց անգլիական ազգային հիմնը։ Մամոնտովը ձեռքով թուրը պահած, շտապեց դեպի վագոնը։ Կրասնովը սրտաբաց տանտիրոջ պես կազակների քարացած ցանկաշարի առջևից հյուրերին տարավ կայարանի շենքը։

— Ամբողջ կազակությունը ոտքի է ելել հայրենիքը պաշտպանելու կարմիրգվարդիական վայրենի բանդաներից։ Դուք տեսնում եք երեք սերնդի ներկայացուցիչներին։ Այդ մարդիկ կռվում էին Բալկաններում, Ճապոնիայում, Ավստրո-Հունգարիայում ու Պրուսիայում, իսկ հիմա կռվում են հայրենիքի ազատության համար,— ասաց նա հիանալի ֆրանսերենով, նրբագեղ ժպտալով, գլխի արքայավայել շարժմամբ ցույց տալով պապերին, որոնք չռել էին աչքերը, շունչները պահել ու քարացել։

Իզուր չէր, որ Մամոնտովը, ըստ վերևի կարգադրության, պատվո պահակն ընտրելիս ջանք չէր խնայել։ Ապրանքը ցույց էր տրված շիտակ կողմից։

Դաշնակիցները եղան ռազմաճակատում, բավարարված վերադարձան Նովոչերկասկ։

— Ես շատ գոհ եմ ձեր զորքերի փայլուն տեսքից, կարգապահությունից և մարտական ոգուց,— մեկնելուց առաջ գեներալ Պուլը ասաց Կրասնովին։— Ես անհապաղ կարգադրություն կանեմ, որ Սալոնիկից այստեղ ուղարկեն մեր զինվորների առաջին ջոկատը։ Ձեզ, գեներալ, ես խնդրում եմ պատրաստել երեք հազար մուշտակ և տաք կոշիկ։ Հու-

սով եմ, որ մեր օգնությամբ դուք կկարողանաք վերջնականապես արմատախիլ անել բոլշևիզմը։

...Շտապ կերպով դաբաղած կաշվե կիսամուշտակներ էին կարվում, թաղիքե ոտնամաններ պատրաստվում։ Բայց դաշնակիցների դեսանտը ինչ-որ չէր ժամանում Նովորոսիյսկ։ Լոնդոն մեկնած Պուլին փոխարինեց պաղարյուն, գոռոզ Բրիդգսը։ Նա Լոնդոնից նոր հրահանգներ բերեց ու վճռականորեն, գեներալական անդրդվելիությամբ հայտարարեց.

— Նորին մեծության կառավարությունը Դոնում Կամավորական բանակին նյութական լայն օգնություն ցույց կտա, բայց ոչ մի զինվոր չի տա։

Այդ հայտարարության կոմենտարիաներ չէին պահանջվում...

XII

Այն թշնամանքը, որ դեռ իմպերիալիստական պատերազմի օրերին աննշմարելի ակոսով բաժանում էր սպաներին ու կազակներին, 1918 թվականի աշնանը շլված չափեր ընդունեց։ 1917 թվականի վերջին, երբ կազակական զորամասերը դանդաղ հոսում էին դեպի Դոն, սպաների սպանությունները ու մատնումները հազվադեպ էին, իսկ մի տարուց հետո դրանք գրեթե սովորական երևույթ դարձան։ Հարձակման ժամանակ սպաներին ստիպում էին, կարմիր հրամանատարների օրինակով, գնալ շղթաների առջևից, ու անաղմուկ, կամացուկ կրակում էին նրանց մեջքերի վրա։ Սերտ կապը ուժեղ էր միայն այնպիսի զորամասերում, ինչպես Գունդորովյան գեորգևյան գունդը, բայց Դոնի բանակում դրանք քիչ էին։

Խորամանկ, հնարամիտ ու ծանրախոհ Պետրո Մելեխովը վաղուց էր հասկացել, որ կազակի հետ գժտվելը մահաբեր է, ու առաջին իսկ օրերից հոգատարությամբ աշխատում էր ոչնչացնել այն սահմանը, որը իրեն՝ սպային, բաժանում էր շարքայինից։ Նա, ինչպես և շարքայինները, հարմար պարագաներում խոսում էր պատերազմի ավելորդության մասին.

նա այդ ասում էր կեղծավորությամբ, մեծ լարումով, բայց այդ կեղծավորությունը չէին նկատում. բոլշևիկ էր ձևանում ու Ֆոմինի առաջ անչափ քծնել սկսեց այն օրերից, երբ տեսավ, որ գունդը նրան առաջ է քաշում։ Ինչպես և մյուսները, Պետրոն պատրաստ էր թալանել, հայհոյել պետերին, խղճալ գերուն, մինչդեռ նրա հոգու մեջ մոլեգին տրոփում էր ատելությունը, ու ձեռները ջղաձգվում, քոր էին գալիս խփելու, սպանելու բորբոք ցանկությունից... Ծառայության մեջ նա մեղմ էր, պարզ,— մոմ էր և ոչ թե խորունժի։ Եվ Պետրոն կարողացավ ձեռք բերել կազակների վստահությունը, նրանց աչքի առաջ փոխել դիմակը։

Երբ Սոլոնկա ավանի մերձակայքում Նաումովը հեռացավ սպաների հետ, Պետրոն մնաց։ Լինելով խոնարհ ու մեղմ, շարունակ գտնվելով ստվերի մեջ, ամեն բանում լինելով չափավոր, նա գնդի հետ միասին ժամանեց Վեշենսկայա։ Իսկ Վեշենսկում երկու օր մնալով, չդիմացավ, թուլացավ, ու չգնալով ոչ շտաբ, ոչ էլ Ֆոմինի մոտ, ծլկեց տուն։

Այդ օրը առավոտից Վեշենսկում, հրապարակում, հին եկեղեցու մոտ միտինգ էր։ Գունդը սպասում էր Ինզենյան դիվիզիայի դելեգատների ժամանելուն։ Հրապարակում խումբ-խումբ քայլում էին շինելներ, առանց երեսի ու շինելներից կարած կիսամուշտակներ, կուրտկաներ, բամբակած չեքմեններ հագած կազակները։ Չէր կարելի հավատալ, որ խայտաբղետ հագնված այդ հսկայական բազմությունը շարային զորամաս է, 28-րդ կազակական գունդն է։ Պետրոն տխուր անցնում էր մի խմբից մյուսին, նոր, մտայնությամբ էր նայում կազակներին։ Առաջ, ճակատում նրանց հագուստը աչքի չէր ընկնում, և առիթ էլ չէր լինում տեսնելու գունդը իբրև մի ամբողջ, կոմպակտ մասսա։ Հիմա Պետրոն ատելությունից կծոտելով երկարած, սպիտակ բեղը, դիտում էր եղյամնակալած դեմքերը, գլուխները, որոնք ծածկված էին գույնզգույն, ականջավոր, կուբանյան փափախներով, հովարավոր գլխարկներով, իջեցնում էր հայացքը ու տեսնում նույնպիսի հարուստ բազմազանություն,— երկար հագնված թաղյակներ, սապոգներ, կարմիրբանակայինից հանած կոշիկների վերևից սրունքների փաթաթաններ։

— Անփոխանակ՝ր, անիծվա՛ծ մուժիկներ, բեռ՝ր,— անզոր չարությամբ ինքն իրեն շշնջում էր Պետրոն։

Ցանկապատերի վրա սպիտակին էին տալիս Ֆոմինի հրամանները։ Փողոցներում բնակիչներ չէին երևում։ Ստանիցան թաքնվել էր սպասողական վիճակում։ Նրբանցքների լուսածերպերից երևում էր ձյունով ծածկված Դոնի սպիտակ կուրծքը։ Դոնի մյուս կողմում սևին էր տալիս անտառը՝ ասես տուշով նկարված։ Հին եկեղեցու գորշ, վիթխարի քարե շենքի կողքին ոչխարի հոտի նման իրար գլխի էին հավաքվել խուտորներից իրենց ամուսինների մոտ եկած կանայք։

Պետրոն, որ մորթե բոլորքով, կրծքի վրա ահագին գըրպանով կիսամուշտակ էր հագել ու գլխին դրել այդ անիծված կարակուլե սպայական փափախը, որով առաջ այնքա՛ն հպարտանում էր,— ամեն րոպե իր վրա զգում էր ծուռ, սառն հայացքները։ Դրանք թափանցում էին իր հոգու խորքը, է՛լ ավելի վատթարացնում առանց այն էլ տագնապալից ու անհանգիստ իր վիճակը։ Հետո նա աղոտ կերպով հիշում էր, թե ինչպես հրապարակի մեջտեղում շուռ տված տակառի հատակի վրա կանգնեց կարճահասակ մի կարմիրբանակային, լավորակ շինելով և բոլորովին նոր գառնենու փափախով, որի ականջակալների կապիչները արձակված էին։ Բրդոտ ձեռնոց հագած ձեռքով նա շտկեց վզին փաթաթած գորշ-ծխագույն, ճագարի մորթուց կարված, կազակական ծոպազարդ շարֆը, նայեց շուրջը։

— Ընկեր կազակներ,— ցածր, մրսած ձայնը խոցեց Պետրոյի ականջները։

Նայելով իր շուրջը, Պետրոն տեսավ, թե ինչպես կազակները իրենց առօրյա կենցաղում արտասովոր բառից ապշած, հայացքներ են փոխանակում, խոստումնալից և հուզված կերպով միմյանց աչքով անում։ Կարմիրբանակայինը երկար խոսում էր սովետական իշխանության մասին, Կարմիր բանակի և կազակության հետ եղած փոխհարաբերությունների մասին։ Պետրոյի հիշողության մեջ առանձնապես տպավորվեց այն, որ հռետորին շարունակ ընդհատում էին հետևյալ աղաղակներով.

— Ընկեր, ի՞նչ բան է կոմունան։

— Մեզ չե՞ն գրի դրա մեջ։

— Բա ի՞նչ բան է կոմունիստական պարտիան։

Հռետորը ձեռները սեղմում էր կրծքին, շուռ էր գալիս բոլոր կողմերը, հաճբերատարությամբ բացատրում.

— Ընկե՛ր, Կոմունիստական պարտիան,— դա կամավոր բան է։ Պարտիայի մեջ սեփական ցանկությամբ մտնում են նրանք, ովքեր ուզում են պայքարել բանվորներին ու գյուղացիներին կապիտալիստների և կալվածատերերի ճնշումից ազատագրելու մեծ գործի համար։

Մի րոպեից հետո մի այլ կողմից բղավում էին.

— Խնդրում ենք բացատրել կոմունիստների ու կոմիսարների մասին։

Պատասխանից հետո մի քանի րոպե էլ չէր անցնում, երբ նորից թնդում էր որևէ մեկի ցասկոտ, բամբ ձայնը.

— Կոմունայի մասին անհասկանալի ես խոսում։ Խոնարհաբար խնդրում ենք մի լավ բացատրել։ Մենք անգետ մարդիկ ենք, դու պարզ խոսքերով ասա։

Հետո տաղտկալի ու երկար խոսում էր Ֆոմինը ու հաճախ, տեղի ու անտեղի մեջտեղ բերում «էվակացնել» բառը։ Ֆոմինի մոտ ֆոբկի պես ֆոռում էր ինչ-որ մի երիտասարդ՝ ուսանողական գլխարկով ու շքեղ վերարկուով։ Լսելով Ֆոմինի անկապ ճառը, Պետրոն վերհիշեց, որ 1917 թվականի փետրվարին, այն օրը, երբ Դարյան եկավ իր մոտ, առաջին անգամ ինքը տեսել էր Ֆոմինին Պետրոգրադի ճանապարհին, մի կայարանում։ Պետրոյի աչքերի առաջ պատկերացավ դասալիք ատամանցին լայնադիր աչքերի խիստ, խոնավ փայլող հայացքով, շինել հագած, որի ուսադիրների վրա երևում էր «52» մաշված համարը. Պետրոն վերհիշեց նրա անճոռնի քայլվածքը։ «Էլ համբերություն չկա, աղբերս»,— վերհիշեց Պետրոն նրա տարտամ խոսքերը։ «Դասալիք էր, Խրիստոնյայի պես հիմարի մեկն է ու հիմի գնդի հրամանատար է, իսկ ես ստվերի մեջ եմ»,— մտածեց Պետրոն՝ բարբաջ փայլեցնելով աչքերը։

Ֆոմինին փոխարինեց մի կազակ, որը կրծքին ու մեջքին գնդացրային ժապավեններ էր կապել։

— Աղբեր տղերք, ես ինքս եղել եմ Պոգոյոլիովի ջոկա-

տամը, ու հիմի էլ կարելի է թե աստված տա, էլի մերոնց հետ գնամ կազակների վրա,— խոպոտ ասում էր նա, ճոճվում ու հարբածի պես դես-դեն նետում ձեռները։

Պետրոն արագ քայլեց դեպի իր բնակարանը։ Թամբեց ձին ու լսեց, թե ինչպես կրակում էին կազակները՝ մեկնելով ոտանիցայից, հին սովորությամբ այդ կերպ ծանուցելով խուտորներին ռազմիկների վերադառնալու մասին։

XIII

Լռությամբ վախեցնող կարճ օրերը իրիկնադեմին երկար էին թվում ինչպես հունձ ու կալսի եռուզեռի ժամանակ։ Նընջում էին խուտորները ինչպես խուլ ու խոպան տափաստանը։ Ասես մեռել էր Դոնի ամբողջ շրջակայքը, ասես ժանտախտն ավերել էր ստանիցաների հողերը։ Ու այնպես էր դրությունը, որ կարծես մի ամպ իր խիտ, անթափանց-սև թևով ծածկել էր Դոնի շրջակայքը, փռվել անձայն ու սարսափելի, և ահա մրրկով գետնի վրա կծռի կաղամախիները, կարձակի որոտի չոր, ճքճքան ճայթյունը ու կգնա խորտակելու և ծռմռելու Դոնի մյուս կողմի սպիտակ անտառը, կթափի կավճոտ բլրալանջերի ապառաժ քարերը, կ՛ոռնա փոթորկի ահասարսուռ ձայներով...

Տատարսկում մշուշը առավոտից պարուրում էր գետինը։ Սարը շաչում էր սառնամանիքից։ Կեսօրին արևը կեղեվատվում էր ցուրտ մառախուղից, բայց դրանով չէր պայծառանում։ Իսկ մշուշը կորած թափառում էր Դոնի շրջակա լեռնաբարձունքների վրա, լցվում էր ձորակները, բլուրների արանքները ու ցնդում այնտեղ՝ թաց փոշու նման նստելով կավճի մամոտ սալերին, բլուրների լերկ, ձյունած կատարներին։

Երեկոներին մերկ անտառի կատարներից գիշերը բարձրացնում էր լուսնի հրաշեկ-կարմիր, հսկայական վահանը։ Սա մշուշոտ փայլում էր հանդարտած խուտորների վերևում, պատերազմի ու հրդեհների արյունամած ցոլքերով։ Եվ նրա անողոք, չմարող լույսից տաղտկալի անհանգստություն էր առաջանում մարդկանց մեջ, ձանձրանում էին անասունները։ Ձիերն ու եզները քնից զրկվելով, մինչև լուսաբաց թրեվում էին բակերում։ Ահավոր ոռնում էին շները, ու կեսգիշերից շատ առաջ աքաղաղները սկսում էին կանչել տարբեր ձայներով։ Լուսադեմին ցուրտը սառցապատում էր ծառերի թաց ճյուղերը։ Քամին հրմշտում էր ճյուղերը, և դրանք զրնգում էին ինչպես պողպատե ասպանդակներ։ Ասես հեծյալ, անտեսանելի մի բանակ էր գնում Դոնի ձախ ափով, մթին անտառով, կապտավուն խավարի մեջ, ու զրնգացնում զենքերն ու ասպանդակները։

Տատարսկի համարյա այն բոլոր կազակները, որոնք եղել էին Հյուսիսային ճակատում, վերադարձան խուտորինքնակամ թողնելով զորամասերը, որոնք դանդաղ ետ էին քաշվում դեպի Դոնը։ Ամեն օր գալիս էր ուշացածներից որևէ մեկը։ Մեկը գալիս էր, որպեսզի երկար ժամանակով հաներ շարային ձիու թամքը ու սպասեր կարմիրների գալուն՝ մարտական հանդերձանքը թաքցնելով ծղնոտի դեզի մեջ կամ մարագի կտուրի տակ, իսկ մյուսը բանալով ձյունապատ բակի դուռը, ձին տանում էր ախոռը ու, լրացնելով պաքսիմատի պաշարը, կնոջ հետ անցկացնելով գիշերը, առավոտյան ճանապարհ էր ընկնում, բլուրից մի անգամ էլ նայում Դոնի սպիտակ, մեռած ընդարձակության, հարազատ վայրերին, որոնք գուցե էլ չէր տեսնելու։

Ո՞վ կկանխի մահը։ Ո՞վ կկռահի մարդուս ճամփի վերջը... Ձիերը դժվարությամբ էին հեռանում խուտորից։ Կազակները ճմլված սրտերից դժվարությամբ էին պոկում կարեկցությունը իրենց մոտիկների նկատմամբ։ Ու այդ ճանապարհին, որ թիփին ծածկել էր ձյունով, շատերը մտքով վերադառնում էին տուն։ Քանի՜-քանի ծանր մտքեր էին լինում այդ ճանապարհին... Գուցեև արյան պես աղի արցունքը, գլորվելով թամքի թևից, ընկնում էր պաղ ասպանդակի վրա, պայտամեխերի կծոտած ճանապարհի վրա։ Չէ՞ որ գարնանը այդտեղ չի բուսնելու անջատման դեղին, վայրի ծաղիկը։

Երբ Պետրոն Վեշենսկուց արդեն տուն էր եկել, Մելեխովների տանը գիշերով ընտանեկան խորհրդակցություն սկսվեց։

— Հը՛, ի՞նչ կա,— հարցրեց Պանտելեյ Պրակոֆիևիչը,

հենց որ Պետրոն շեմքից ներս մտավ,— կովեցիր-պրծա՞ր, առանց ուսադիրների՞ ես եկել։ Դեհ, արի, արի, փաթաթվիր, աղբորդ, մորդ, ուրախացրու, հրե՛ն կնիկդ կարոտել է քեզ... Բարև, բարև, Պետյաշա... Գրիգորի, Գրիգորի Պանտելևիչ, ի՞նչ ես արջամկան պես կուչ եկել վառարանի վրա, իջիր։

Գրիգորին կախեց բորիկ ոտները պաշտպանական գույնի շալվարի պիրկ ձգված ներբանականներով, ժպտաց, քորեց խիտ մազակալած սև կուրծքը, նայեց, թե ինչպես Պետրոն ծռվելով, հանում է սուսերակալը, սառնամանիքից փայտացած մատներով արձակում բաշլուղի հանգույցը։ Դարյան անխոս ու ժպտալից նայելով ամուսնու աչքերին, արձակում էր նրա կիսամուշտակի մերակները. վախվխելով անցնում նրա աջ կողմից, որտեղ նագանի պատյանի կողքին պլպլում էր գոտուն կապած գորշ-կապտավուն ձեռնանոնակը։

Վեր կենալով ու թուշը մոտեցնելով եղբոր եղյամնակալած բեղերին, Դունյաշկան դուրս վազեց ձին տեղավորելու։ Իլյինիչնան գոգնոցով սրբեց պռոշները՝ պատրաստվելով համբուրելու «մեծ տղին»։ Վառարանի մոտ ուտելիքի պատրաստություն էր տեսնում Նատալյան։ Երեխաները բռնել էին նրա շրջազգեստի փեշից ու կուչ եկել։ Բոլորն էլ Պետրոյից խոսք էին սպասում, իսկ նա շեմքից խռպոտաձայն «բարով տեսանք» ասելով, լուռ հանվում էր, կորեկածղնոտի ավելով երկար սրբում սապոգները ու, շտկելով կռացած մեջքը, հանկարծ ողորմելիորեն դողացրեց շրթունքները, մի տեսակ շփոթված հենվեց մահճակալի մեջքին, ու բոլորն էլ անսպասելի կերպով արցունքներ տեսան նրա ցրտահար, սևացած այտերի վրա։

— Հը՛, զինվոր տղա, ի՞նչ է պատահել,— կատակի տակ թաքցնելով անհանգստությունը և կոկորդի դողը, հարցրեց ծերունին։

— Կորա՛նք մենք, ապի։

Պետրոն երկար ծռմռեց բերանը, շարժեց սպիտակավուն հոնքերը, ու թաքցնելով աչքերը՝ խնչեց ծխախոտի հոտ արձակող, կեղտոտ թաշկինակի մեջ։

Գրիգորին դեն գցեց իրեն քսմսվող կատվին, տնքալով վար թռավ վառարանից։ Մայրը լացեց՝ համբուրելով Պետ-

րոյի ոչլոտած գլուխը, բայց իսկույն կտրվեց նրանից։

— Ջավակս, մեռնեմ անունիդ, մածուն լցնե՞մ, հա՞։ Դե, գնա նստիր, շչին կսառի։ Սոված ես, չէ՞։

Սեղանի մոտ, կերակրելով ծնկներին նստեցրած եղբորորդուն, Պետրոն աշխուժացավ. զսպելով հուզումը, պատմեց Ֆրոնտից 28-րդ գնդի հեռանալու, հրամանատարական կազմի փախուստի, Ֆոմինի և Վեշենսկում եղած վերջին միտինգի մասին։

— Բա դու ի՞նչ ես մտածում,— սև ջլուտ ձեռքը դստեր գլխին պահած՝ հարցրեց Գրիգորին։

— Մտածելու բան չկա։ Էգուց ցերեկը կմնամ, իսկ իրիկունը կմեկնեմ։ Մայրիկ, ինձ համար ճամփապաշար պատրաստեցեք, շուտ եկավ նա մոր կողմը։

— Ուրեմն պետք է նահանջե՞լ, հա՞։

Պանտելեյ Պրակոֆևիչը մատները խոթեց թութունի տոպրակի մեջ ու այդպես էլ մնաց պտղուցից թափվող թութունով,— պատասխան էր սպասում։

Պետրոն վեր կացավ, խաչակնքեց գորշ, սևացած սրբապատկերների կողմը, մռայլ ու վշտոտ նայեց մյուսներին։

— Գոհություն Քրիստոսի, կշտացա... Ասում ես նահանջե՞նք։ Բա ո՞նց։ Մնամ ի՞նչ անեմ։ Որ կարմրամորթները գլո՞խս թռցնեն։ Կարելի է դուք մտածում եք մնալ, իսկ ես... չէ՛, ես կգնամ։ Նրանք սպաներին չեն խնայում։

— Բա տունը ո՞նց կլինի։ Ուրեմն թողնե՞նք։

Ծերունու հարցի վրա Պետրոն միայն թոթվեց ուսերը։ Բայց իսկույն մեջ մտավ Դարյան։

— Դուք կմեկնեք, իսկ մենք պիտի մնա՞նք, հա՞։ Լա՛վ եք, էլի՛, ի՞նչ ասել կուզի։ Ձեր գո՞ւյքը պիտի պահպանենք... Դրա պատճառով կարելի է կյանքիցդ է՛լ զրկվես։ Թեկուզ դա վառվի ու կորչի, ես մնացողը չեմ։

Նույնիսկ Նատալյան էլ խառնվեց խոսակցության։ Խլացնելով Դարյայի զրնգուն կշկշոցը, գոչեց.

— Թե որ ամբողջ խուտորը շարժվի, մենք էլ չենք մնա։ Ոտով կգնանք։

— Հիմարներ, քածեր,— մոլեգին գոռաց Պանտելեյ Պրակոֆևիչը՝ արագ թարթելով աչքերը, ակամա որոնելով հենակը,— անզգամնե՛ր, ձեր հոր հերն անիծվի, սսկեցնք,

էլի՛, դարձվորներ։ Տղամարդու գործին ինչի՞ եք խառնվում, հը՞... Էհ, եկեք ամեն բան թողնենք ու գնանք ուր որ պատահի։ Բա անասուններն ի՞նչ անենք, ծոցնե՞րս դնենք, հը՞։ Բա տո՞ւնը...

— Դուք, ա՛ կնանիք, խելքներդ թոցրել եք,— նեղացած պաշտպանեց ծերունուն Իլյինիչնան։— Այդ գույքը դուք չեք վաստակել, ձեզ համար հեշտ է դա թողնել ու հեռանալ։ Իսկ ես ու իմ ալևորը գիշեր ու ցերեկ մեջք ենք ծռել ու հիմի թողնենք ու գնանք, հա՞։ Չէ՛ ու չէ,— Իլյինիչնան սեղմեց շրթունքները, հոգոց հանեց։— Գնում եք գնացեք, իսկ ես տեղիցս չեմ շարժվի։ Ավելի լավ է թող ինձ սպանեն շեմքիս վրա, քանց սատկեմ ուրիշի պատի տակ։

Պանտելեյ Պրակոֆևիչը, ֆսսալով ու հոգոց հանելով, պտտեց-բարձրացրեց լամպի պատրույգը։ Մի բոպե բոլորն էլ լռեցին։ Դունյաշկան, որ գործում էր գուլպայի սրունքը, մլերից բարձրացրեց գլուխը, շշնջալով ասաց.

— Անասուններին կտանենք մեզ հետ... Անասունների համար հո չպիտի՞ մնանք։

Ու էլի ծերունին բռնկվեց կատաղությամբ։ Նա, ինչպես տեղում երկար կանգնած որձ ձի, թփթփացրեց ոտները, քիչ մնաց ընկներ՝ դիպչելով վառարանի մոտ պառկած ուլին։ Կանգ առնելով Դունյաշկայի դիմաց, բղավեց.

— Կտանե՛նք, հա՛։ Բա որ քավթառ կովը ծանրած է՞, ո՞նց կլինի։ Դու նրան մինչև ո՞րտեղ կտանես, հը՞։ Ի-ի-հ, չոռն ու ցավը մտնի պինդ, հա՛։ Անտեր-անտուն, մունտռի՛կ, անի՛ծ։ Արուն-քրտինք եմ թափել, տուն ու տեղս լցրել, և ահա թե ինչեր եմ լսում... Բա ոչխարնե՞րը։ Գառներն ո՞ւր կտանես, հը՞... Օ-օֆ-օֆ, շան աղջիկ։ Սկսեիր, էլի՛։

Գրիգորին շեղակի նայեց Պետրոյին, ու ինչպես վաղուց անցած ժամանակներում, շագանակագույն, հարազատ նրա աչքերում տեսավ չարաճճի, հեգնող ու միևնույն ժամանակ հեզ ու հարգալից ժպիտը, ցորնագույն բեղերի ծանոթ դողը։ Պետրոն կայծակնաթափ աչքով արավ, ամբողջովին ցընցվեց քրքիջը պահելուց։ Գրիգորին իր մեջ էլ զգաց ծիծաղի այդ հակումը, որ վերջին տարիներում հատուկ չէր նրան, ու չթաքցնելով այդ, խուլ ու որոտալից ծիծաղեց։

— Ըհը՛... Փառք աստծո... Խոսեցինք-պրծանք։— Ծերունին բարկությամբ հայացքը մեխեց նրա վրա ու նստեց՝ շուռ գալով դեպի պատուհանը, որ գեղազարդված էր եղյամի սպիտակ նախշերով։

Միայն կեսգիշերին հանգեցին մի ընդհանուր որոշման. կազակները կհեռանան, իսկ կնանիքը կմնան տունն ու տընտեսությունը պահպանելու։

Լուսաբացից շատ առաջ Իլյինիչնան վառեց վառարանը ու մինչև առավոտ հաց թխեց, երկու տոպրակ պաքսիմատ պատրաստեց։ Ծերունին լամպի լույսով նախաճաշելով, լուսաբացին գնաց անասունների աղբը հավաքելու, ճանապարհի համար սահնակը պատրաստելու։ Նա երկար կանգնեց ամբարում, ձեռքը խոթելով գարնովկա ցորենով լեցուն արկղի մեջ, մատների միջից մաղելով տուռզ հատիկները։ Դուրս ելավ կարծես ննջեցյալի մոտից,— փափախը հանած, կամացուկ ծածկելով դեղին դուռը...

Նա դեռ զբաղված էր չարդախի տակ,— փոխում էր սահնակի քթոցը. երբ նրբանցքում երևաց Անիկուշկան, որը իր կովը ջրելու էր տանում։ Բարևեցին միմյանց։

— Պատրաստվե՞լ ես հեռանալու, Անիկեյ։

— Իմ պատրաստվելն ի՞նչ է,— ոնց որ տկլորը գոտի կապի։ Իմը—իմ մեջն է, իսկ ուրիշինը ինձ հետ կլինի։

— Ի՞նչ նոր բան ես լսել։

— Նորություններ շատ կան, Պրակոֆիչ։

— Ի՞նչ կա որ,— անհանգստացավ Պանտելեյ Պրակոֆևիչը՝ կացինը խրելով սահնակի կողի մեջ։

— Կարմիրները շուտով կգան։ Մոտենում են Վեշկիին։ Մեծ Գրոմոկից մի մարդ էր տեսել, պատմում էր, թե վատ բաներ են անում։ Կոտորում են մարդկանց... Նրանց մոտ ջհուդներ ու չինացիներ են, հողս դրանց գլխին։ Քիչ ենք մենք կոտորել դրանց, այդ շլդիկ սատանաներին։

— Կոտորո՞ւմ են։

— Բա հոտ են քաշո՞ւմ։ Այստեղ էլ անիծված կոռնները...— Անիկուշկան մայր հայհոյեց ու գնաց ցանկապատի կողքից՝ քայլելիս վերջացնելով խոսքը.— Դոնի մյուս կողմի կնանիքը արաղ են պատրաստել, խմացնում են նրանց, որ իրենց գլխին փորձանք չբերեն, իսկ նրանք կհարբեն, ուրիշ խուտոր կգրավեն ու դալմաղալ կգցեն։

Ներունին տեղավորեց քթոցը, անցավ բոլոր մարագները՝ դիտելով իր ձեռքով դրած բոլոր բարդերն ու ցանկերը։ Հետո էլ վերցրեց եղանը, կաղալով գնաց կալը՝ ճանապարհի համար խոտ վերցնելու։ Նա դեզից հանեց երկաթե կեռը, ու գեռևս չզգալով մեկնելու անհրաժեշտությունը, սկսեց հանել խոտի վատ տեսակը (լավը նա միշտ պահում էր գարնան վարի համար), բայց փոխեց միտքը ու ինքն իր վրա ջղայնանալով, մոտեցավ մի ուրիշ դեզի։ Նրա գիտակցությանը կարծես թե չէր հասել այն, որ ահա մի քանի ժամից հետո թողնելու է տունը և խուտորը ու գնալու է ով գիտե ուր, դեպի հարավ ու գուցե նույնիսկ չվերադառնա։ Նա դեզից խոտ հանեց ու նորից, առաջվա պես, ձեռքը տարավ փոցխին, որ փոցխի, բայց ձեռքը ետ քաշելով,— ասես կրակի էր դիպցրել,— սրբեց ականջավոր ու ծոծրակալով փափախի տակ քրտնած ճակատը, լսելի ձայնով ասաց.

— Հիմի էլ ինչո՞ւ պահեմ լավ խոտը։ Մեկ է, պիտի գցեն ձիերի ոտների տակ, զուր տեղը փչացնեն կամ վառեն։

Փոցխը դեմ անելով ծնկին ու կոտրելով, նա կրճտացրեց ատամները, եղանով տարավ խոտը՝ ծերունաբար քստքստացնելով ոտները, ճկելով ու կռացնելով մեջքը։

Նա տուն չմտավ, այլ դուռը մի քիչ բաց անելով, ասաց.

— Պատրաստվեցեք, հիմի լծելու եմ։ Չլինի թե ուշանանք։

Արդեն շինքափոկերը գցեց ձիերի վրա, սահնակի հետին կողմում մի ջվալ վարսակ տեղավորեց, ու զարմանալով, որ որդիները այդքան երկար ժամանակ դուրս չեն գալիս ձիերը թամբելու, նորից գնաց տուն։

Տանը տարօրինակ բան էր կատարվում. Պետրոն զայրացած բաց էր անում մեկնելու համար պատրաստված կապոցները, հենց հատակի վրա շպրտում շալվարները, համազգեստները, կանացի տոնական հագուստը։

— Սա՞ ինչ բան է,— միանգամայն զարմացած հարցրեց Պանտելեյ Պրակոֆիևիչը և նույնիսկ հանեց ականջավոր փափախը։

— Ա՛յ թե ինչ.— Պետրոն ուսի վրայից մեծ մատով ցույց տվեց կանանց, շարունակեց.— լաց ու կոծ են անում։ Մենք ոչ մի տեղ էլ չենք գնա։ Թե գնալու ենք, բոլորս էլ գնանք, թե չէ, թող ոչ ոք չգնա։ Կարելի է այստեղ կարմիրները անպատվեն սրանց, իսկ մենք գնանք մեզ փրկելո՞ւ, հա՞։ Իսկ թե սպանելու լինեն, սրանց աչքի առաջ կմեռնենք։

— Հանվիր, հայրիկ։— Գրիգորին ժպտալով հանեց իր շինելն ու թուրը, իսկ ետևից լացող Նատալյան վերցնում ու համբուրում էր նրա ձեռքը ու ցնծագին ծափ էր տալիս կակաչի պես կարմիր Դունյաշկան։

Ներունին փափախը դրեց գլխին, բայց իսկույն նորից հանեց այն ու, մոտենալով առջևի անկյան, թափով, լայն խաչակնքեց։ Նա երեք անգամ ծունր դրեց, չոքած տեղից վեր կացավ, նայեց բոլորին։

— Էհ, որ այդպես է, մնացինք։ Թող մեզ պահի ու պաշտպանի երկնային թագավորը։ Գնամ արձակեմ ձիերը։

Ներս վազեց Անիկուշկան։ Մելեխովների տանը նրան ապշեցրին ծիծաղկոտ, ուրախ դեմքերը։

— Ի՞նչ է պատահել։

— Մեր կազակները չեն գնա,— բոլորի փոխարեն պատասխանեց Դարյան։

— Ա՛յ քեզ բա-ա՛ն։ Միտներդ փոխեցի՞ք։

— Փոխեցինք։— Գրիգորին դժկամորեն ժպտաց՝ ցույց տալով շաքարագույն-կապտավուն, պայտաձև ատամնաշարքը, ու աչքով արավ։— Մահը մահ է, էլի՛, ինչո՞ւ նրա փնտրել, նա այստեղ էլ կբռնի։

— Սպաները չեն գնում, ուրեմն մեզ ասված չէ պատվիրում մնալ։— Ու Անիկուշկան, ասես ոտների փոխարեն սմբակներ ունենալով, դմբդմբալի իջավ մուտքի սանդուղքից ու վազ տվեց պատուհանների կողքից։

XIV

Վեշենսկում, ցանկապատ/ի վրա փակցված էին Ֆոմինի հրամանները։ Ժամառաջ սպասում էին կարմիր զորքերի գալուն։ Իսկ Կարգինսկում, Վեշենսկուց երեսունհինգ վերստ հեռավորությամբ գտնվում էր Հյուսիսային ճակատի շտաբը։ Հունվարի լույս 4-ի գիշերը եկավ չեչենների մի ջոկատ, և Ուստ-Բելոկալիտվենսկայա ստանիցայից շտապ կերպով,

երթական կարգով Ֆոմինի խոովարար գնդի դեմ գնաց զորական ավագ Ռոման Լազարևի պատժիչ ջոկատը։

Ամսի 5-ին չեչենները պետք է գնային Վեշենսկու վրա հարձակվելու։ Նրանց հետախուզախումբն արդեն եղել էր Բելոգորկայում։ Բայց հարձակումը վիժեց. Ֆոմինի կազակներից մի փախստական հաղորդեց, որ Կարմիր բանակի խոշոր ուժերը գիշերում են Գորոխովկայում և 5-ին պետք է լինեն Վեշենսկում։

Կրասնովը, որ զբաղված էր Նովոչերկասկ ժամանած դաշնակիցներով, փորձում էր ազդել Ֆոմինի վրա։ Նա Ֆոմինին կանչեց Նովոչերկասկ-Վեշենսկայա ուղիղ հեռագրալարի մոտ։ Հեռագիրը, որ մինչ այդ համառորեն տկտկացնում էր՝ «Վեշենսկայա—Ֆոմինի՛ն», կապեց հետևյալ կարճ խոսակցությունը.

«Վեշենսկայա—Ֆոմինին։ Ուրյադնիկ Ֆոմին, հրամայում եմ խելքի գալ և գնդի հետ գնալ դիրքերը վերջակետ։ Ուղարկված է պատժիչ ջոկատ վերջակետ։ Չհնազանդվելու դեպքում մահվան պատիժ վերջակետ։ Կրասնով»։

Ֆոմինը կիսամուշտակի կոճակները արձակած, նավթի լամպի լույսով նայում էր, թե ինչպես հեռագրիչի մատների տակից սողում, օձանում է կինամոնագույն գծիկներով բծավորված թղթե բարակ տաշեղը ու հեռագրիչի ծոծրակին ցուրտ և արաղի հոտ շնչելով՝ ասաց.

— Հը՛, ի՞նչ է դուրս տալի։ Խելքի գա՞լ։ Վերջացրե՞ց նա... Գրի՛ր նրան... Ի-ի-ի՞նչ։ Ո՞նց թե չի կարելի։ Հրամայում եմ, թե չէ հիմի փոր ու փսորդ կթափեմ։

Ու հեռագիրը տկտկաց.

«Նովոչերկասկ ատաման Կրասնովին վերջակետ... Ռադ եղի ես քո մերը վերջակետ։ Ֆոմին»։

Հյուսիսային ճակատում դրությունը հղի էր այնպիսի բարդություններով, որ Կրասնովը որոշեց անձամբ մեկնել Կարգինսկայա, որպեսզի այնտեղից «պատժող ձեռքը» անմիջականորեն ուղղի Ֆոմինի դեմ, և որ գլխավորն է, բարձրացնի բարոյալքված կազակների տրամադրությունը։ Հենց այս նպատակով էլ նա դաշնակիցներին հրավիրեց իր հետ շրջագայել ռազմաճակատում։

Բուտուրլինովկա ավանում կազմակերպվեց Գունդարովյան գեորգևյան գնդի զորատես. գունդը կռվից հենց նոր էր դուրս եկել։ Զորատեսից հետո Կրասնովը կանգնեց գնդի դրոշակի մոտ։ Դառնալով աջ կողմը, բարձրաձայն գոչեց.

— Ով իմ հրամանատարության տակ ծառայել է տասներորդ գնդում, մի քայլ առա՛ջ։

Գունդարովցիների համարյա կեսը դուրս եկավ շարքի առաջ։ Կրասնովը հանեց փափախը, խաչաձև համբուրեց մոտիկ կանգնած մի վախմիստրի, որը ջահել չէր, բայց կտրիճի տեսք ուներ։ Վախմիստրը շինելի թևքով սրբեց ծայրատած բեղերը, քարացավ, շփոթված չռեց աչքերը։ Կրասնովը համբուրվեց նույն գնդում ծառայած բոլոր կազակների հետ։ Դաշնակիցներն ապշած էին, տարակուսանքով փսփսում էին իրար մեջ։ Բայց զարմանքին փոխարինեցին ժպիտները և զուսպ հավանությունը, երբ Կրասնովը մոտեցավ նրանց ու բացատրեց.

— Սրանք այն հերոսներն են, որոնց հետ ես գերմանացիներին ջարդում էի Նեզվիսկայի մերձակայքում, ավստրիացիներին՝ Բելժեցի ու Կոմարովի մոտ, և օժանդակում էի Թշնամու դեմ մեր ընդհանուր հաղթանակին։

... Արևի կողքից, որպես ժամապահներ դրամարկղի մոտ, անշարժ կանգնել էին ծիածանային, սպիտակ պարուրված սյուները։ Հյուսիս-արևելյան ցուրտ քամին փողհարի նման շեփորում էր անտառներում, սրարշավում տափաստանով մեկ, ծավալվում ուժգնաթափ, ծառս լինում ու խորտակում քոլերի ցցված քառանկյունակը[1]։ Հունվարի 6-ի երեկոյան (Ձիրի վրա արդեն վարագույրի պես իջել էր մթնշաղը) Կրասնովը անգլիական թագավորական ծառայության սպաների՝ Էդվարդսի և Օյլկոտտի ու ֆրանսիացիների՝ կապիտան Բարտելլոյի ու լեյտենանտ Էլիխի ուղեկցությամբ ժամանեց Կարգինսկայա։ Դաշնակիցները, որ մուշտակներ էին հագել և նապաստակի մորթու փրչոտ փափախներ դրել, ծիծաղելով, կծկվելով ու ոտները թփթփացնելով, դուրս ելան ավտոմոբիլներից, նրանցից սիգարների և օդեկոլոնի հոտ էր

[1] Քառանկյունակ — այստեղ — հետևազորի շարումը քառանկյան ձևով (հեծելազորի գրոհի ետ մղելու համար), շուրջը երկայնած շարքերով։

գալիս։ Հարուստ վաճառական Լեոչկինի տանը տաքանալով, թեյ խմելով, սպաները Կրասնովի և Հյուսիսային ճակատի հրամանատար գեներալ-մայոր Իվանովի հետ գնացին դրսը, ուր պետք է ժողով լիներ։

Կրասնովը երկար խոսում էր ականջները սրած կազակների ամբոխի առաջ։ Նրան ուշադրությամբ, լավ էին լսում։ Բայց երբ նա սկսեց իր ճառում գեղարվեստականորեն պատկերել «բոլշևիկների գազանությունները», որ կատարվում էին նրանց գրաված ստանիցաներում, հետին շարքերից, ծխախոտի կապտավուն ծխի միջից մեկը զայրացած բղավեց.

— Ճիշտ չէ,— ու վիժեցրեց տպավորությունը։

Առավոտյան Կրասնովը դաշնակիցների հետ շտապ մեկնեց Միլլերովո։

Նույնքան շտապ էվակուացվեց Հյուսիսային ճակատի շտաբը։ Ստանիցայում՝ մինչև երեկո թրևում էին չեչենները, որսում այն կազակներին, որոնք չէին ցանկանում նահանջել։ Գիշերը հրկիզվեց ռազմամթերքի պահեստը։ Մինչև կեսգիշեր, ինչպես վառվող ցախի հսկայական մի շեղջ, ճարճատում էին հրացանների փամփուշտները. փլվածքների պես որոտում էին պայթող արկերը։ Հետևյալ օրը, երբ հրապարակում նահանջելուց առաջ մաղթանք էր կատարվում, Կարգինսկու բլուրից ճարճատեց մի գնդացիր։ Գնդակները գաբնանային կարկտի նման խփում էին եկեղեցու կտուրին, ու բոլորն էլ խառնիճաղանջ փախան տափաստան։ Լազարևն իր ջոկատով և կազակական փոքրաթիվ զորամասերը փորձում էին պաշտպանել նահանջողներին. հետևազորը շղթա կազմեց ու պառկեց հողմաղացի ետևում, 36-րդ Կարգինյան մարտկոցը կարգինցի յասավուլ Ֆյոդոր Պոպովի հրամանատարությամբ շտապ կրակով հրակոծեց հարձակվող կարմիրներին, բայց շուտով նահանջի դիմեց։ Իսկ հետևազորին կարմիր հեծելազորը շրջանցեց Լատիշև խուտորից ու ձորակներում շրջապատելով, սրախողխող արեց կարգինցի քսան հոգի ծեր մարդկանց, որոնց ինչ-որ մեկը ծաղրականորեն «հայդամակներ»[1] հորջորջեց։

XV

Ջնահանջելու որոշումը Պանտելեյ Պրակոֆևիչի աչքում նորից վերադարձրեց իրերի ուժն ու նշանակությունը։

Երեկոյան նա դուրս եկավ անասուններին կեր տալու և էլ չտատանվելով, խոտ հանեց ամենավատ դեզից։ Մութ գոմում երկար պտտվում էր կովի շուրջը, գոհունակությամբ մտածում. «Սանրած է, շատ հաստ է։ Հո աստված ջուխտակ հորթեր չի՞ տալու»։ Նրա համար ամեն ինչ էլի դարձավ հարազատ, մոտիկ. այն ամենը, ինչից նա մտքում արդեն հրաժարվել էր, ստացավ առաջվա կարևորությունը և կշիռը։ Նա ժամանակ էր գտել իրիկնադեմին Դունյաշկային էլ նախատելու այն պատճառով, որ վերջինը մղեղ էր թափել ոչխարանոցի մոտ ու տաշտի միջից չէր քերել սառույցը, նա ծածկել էր նաև ցանկապատի մեջ Ստեպան Աստախովի խոզի բացած անցքը։ Ակսինյային, որը դուրս եկավ պատուհանների փեղկերը ծածկելու, նա հարցրեց, թե Ստեպանը արդյոք մտադիր չէ՞ մեկնելու։ Ակսինյան ծածկվեց շալով, քաղցրաձայն ասաց.

— Չէ՛, չէ, ո՞նց կարող է գնալ։ Հիմի պառկել է վառարանի վրա, ոնց որ թե դողացնում է... Ճակատը տաք է, ներսից էլ գանգատվում է։ Հիվանդացել է Ստյոպան։ Չի գնա...

— Մերոնք էլ։ Այսինքն մենք էլ չենք գնա։ Դե, ո՞վ գիտի, թե որ գնանք լավ կլինի՞ որ...

Մթնշաղվում էր։ Դոնի մյուս կողմում, անտառի գորշ զանգվածից դենը, կանաչավուն անհունում վառ շողում էր Բեռեռային աստղը։ Արևելքում երկնքի ծայրամասը ծիրանի

[1] Հայդամակներ — XVIII դարում ուկրաինական ապստամբներ, որոնք պայքարում էին լեհական կալվածատերերի դեմ։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ իրենց հայդամակներ էին անվանում Պետլյուրայի զորքերի մի մասը, որոնք կռվում էին Կարմիր բանակի դեմ։

էր հագնում։ Ելնում էր կարմրացողը։ Սև կաղամախու լայնատարած եղջյուրների վերևից բարձրանում էր կիսալուսինը։ Ձյան վրա խտանում էին մթին ստվերները։ Մթնում էին ձյան կուտակները։ Այնպիսի անդորրություն էր, որ Պանտելեյ Պրակոֆևիչը լսում էր, թե ինչպես Դոնի վրա, սառցածակի մոտ ինչ-որ մեկը, երևի Անիկուշկան, լինգով սառույց էր ջարդում։ Սառցաբեկորները թռչում ու ջարդվում, զրնգում էին ապակու պես, գոմում եզները համաչափ ծամում էին խոտը։

Խոհանոցում լույս վառեցին։ Լուսավորված պատուհանի ներսից սահեց Նատալյան։ Պանտելեյ Պրակոֆևիչը ներս մտավ տաքանալու։ Նա բոլոր տնեցիներին գտավ իրար գլխի հավաքված։ Դունյաշկան հենց նոր էր եկել Խրիստոնյայի կնոջ մոտից։ Դատարկում էր թթվի թասը, ու վախենալով, որ իրեն կընդհատեն, հապճեպորեն նորություններ էր պատմում։

Օթախում Գրիգորին յուղեց հրացանը, նագանը, թուրը, հեռադիտակը փաթաթեց երեսսրբիչով, կանչեց Պետրոյին։

— Դու քո զենքերը կարգի բերե՞լ ես։ Բեր։ Պետք է թաքցնել։

— Իսկ եթե հարկավոր լինի պաշտպանվե՞լ։

— Բա՛ն ես ասում, էլի,— քմծիծաղ տվեց Գրիգորին,— տե՛ս, կգտնեն, շալվարիդ ձագից կախ կտան դարպասի վրա։

Նրանք դուրս ելան բակը։ Հայտնի չէ ինչու ամեն մեկն առանձին թաքցրեց իր զենքերը։ Բայց Գրիգորին իր բոլորովին նոր, սև նագանը օթախում դրեց բարձի տակ։

Հենց նոր էին ընթրել և ալարկոտ խոսակցություններով պատրաստվում էին քնելու, երբ բակում խռպոտ հաչեց կապած շունը՝ նետվելով դես ու դեն, խռխռացնելով իրեն խեղդող վզնոցից։ Մերունին դուրս ելավ նայելու, վերադարձավ մի մարդու հետ, որը մինչև հոնքերը փաթաթված էր բաշլուղով։ Մարտական լրիվ հանդերձանքով, սպիտակ գոտին պիրկ կապած այդ մարդը ներս մտնելով՝ խաչակնքեց. շուրջը եղյամնակալած, «օ» սպիտակ տառին նմանվող նրա բերանից գոլորշի էր դուրս գալիս։

Երևի չե՞ք ճանաչում ինձ։

— Օ-հո՛, ախր սա խնամի Մակարն է,— գոչեց Դարյան։

Եվ միայն այստեղ Պետրոն ու մնացած բոլորը ճանաչեցին իրենց հեռավոր ազգականին, Մակար Նոգայցևին, Սինյագին խուտորի կազակին, ամբողջ օկրուգում հայտնի հազվագյուտ երգասացին ու հարբեցողին։

— Այդ ո՞ր փորձանքը քեզ բերեց,— ժպտաց Պետրոն, բայց տեղից վեր չկացավ։

Բեղերից պոկելով սառցի լուլաները, Նոգայցևը դրանք գցում էր շեմքին, թփթփացնում էր ոտները՝ տակից կաշի կարած, ահագին թաղյակներով, ու առանց շտապելու հանվում էր։

— Մենակ մեկնելը երևի ձանձրալի կլիներ, մտածեցի՝ արի գնամ խնամիներիս մոտ, նրանց հետ մեկնեմ։ Լսել էի, որ դուք երկուսդ էլ տանն եք։ Կնկանս ասացի՝ գնամ Մելեխովների ետևից, որ միասին ճամփա ընկնենք, ավելի ուրախ կլինի։

Նա հրացանը տարավ ու դրեց վառարանի մոտ, մեծ ունելիքների կողքին՝ ժպիտներ ու ծիծաղ առաջացնելով կանանց դեմքերին։ Փամփշտանոցը խոթեց վառարանի տակ, իսկ թուրն ու մտրակը պատկառանքով դրեց մահճակալի վրա։ Այս անգամ ևս Մակարից արաղի թունդ հոտ էր գալիս, մեծ, ուռուցիկ աչքերը մշուշվել էին հարբածությունից, մորուքի թաց փնջի մեջ սպիտակին էր տալիս Դոնի խեցիների պես կապտավուն, համաչափ ատամնաշարը։

— Բա Սինյագինից կազակներ չե՞ն գնում,— հարցրեց Գրիգորին՝ մեկնելով ծխախոտի ուլունքազարդ տոպրակը։

Հյուրը ձեռքով ետ տվեց պարկը։

— Թութունով չեմ զբաղվում... Հա՛, կազակնե՞րը. ոմանք մեկնել են, ոմանք էլ մկան բույն են փնտրում թաքնվելու համար։ Դուք հո գնալո՞ւ եք։

— Մեր կազակները չեն գնա։ Դու նրանց չհամոզես,— վախեցավ Իլյինիչնան։

— Մի՞թե մնում եք։ Ուղղակի չեմ հավատում։ Խնամի Գրիգորի, ճի՞շտ է։ Գլխներիցդ հո ձեռք չե՞ք վերցրել, աղբեր-տղերք։

— Ինչ ուզում է լինի...— Հոգոց հանեց Պետրոն ու հանկարծակի թունդ կարմրելով՝ հարցրեց.— Գրիգորի, դու ի՞նչ ես ասում, չե՞ս փոշմանել։ Գուցե գնա՞նք։

— Չէ, աղբեր։

Ծխախոտի ծուխը մշուշապատեց Գրիգորիին ու երկար ծածանվում էր խուճուճ, կպրագույն քյաքուլի վերևում։

— Հայրիկը տեղավորո՞ւմ է քո ձին,— անտեղի հարցրեց Պետրոն։

Երկար լռություն տիրեց։ Միայն ճախարակն էր Դունյաշկայի ոտի տակ իշամեղվի պես բզզում, նինջ բերում։

Նոգայցևը նստեց մինչև լուսաբաց՝ շարունակ համոզելով եղբայրներին, որ գնան Դոնեցի մյուս կողմը։ Գիշերվա ընթացքում Պետրոն երկու անգամ առանց գլխարկի դուրս վազեց ձին թամբելու և երկու անգամն էլ հանեց թամքը՝ Դարյայի սպառնալից հայացքներով խոցված։

Լույսը բացվեց, և հյուրը պատրաստվեց գնալու։ Արդեն հագնված, դռան ունկը բռնած, նա նշանակալից հազաց, թաքուն սպառնալիքով ասավ.

— Կարելի է վերջը լավ լինի, միայն թե դուք հետո կփոշմանեք։ Թե որ մեզ հաջողվի այնտեղից վերադառնալ, մենք կհիշենք, թե ովքեր էին կարմիրների առաջ դուռ բաց անում դեպի Դոնը, մնում էին նրանց ծառայելու...

Առավոտից առատ ձյուն տեղաց։ Դուրս գալով բակը, Գրիգորին տեսավ, թե ինչպես սևին տվող մարդկանց մի խումբ Դոնի մյուս կողմից նետվեց դեպի գետանցը։ Ութ ձի ինչ-որ բան էին քարշ տալիս։ Մարդիկ խոսում էին, հապճեպում, մայր հայհոյում։ Բուքի միջից, ինչպես մշուշում, երևում էին մարդկանց ու ձիերի սպիտակագորշ ուրվագծերը։ Գրիգորին չորսական ձի լծված լինելուց կռահեց՝ «Մարտկոց է... Մի՞թե կարմիրներն են»։ Այս մտքից նրա սիրտը ճմլվեց, բայց նա, կշռադատելով դեպքը, ինքն իրեն հանգստացրեց։

Խառնիճաղանջ ամբոխը մոտենում էր խուտորին՝ շրջանցելով սև, իրեն նայող սառցածակի երախը։ Բայց գետափի մոտ, որտեղ սառույցը ողողված էր, առջևի հրանոթի մի անիվը թաղվեց գետի մեջ։ Քամին բերեց ձիավարների աղաղակը, փշրվող սառույցի շրխկոցը և ձիերի սմբակների հապճեպ, սլլող դոփյունը։ Գրիգորին գնաց անասունների բակը, զգուշությամբ դուրս նայեց։ Ձիավորների շինելների վրա տեսավ ձյունով ծածկված ուսադիրներ, կերպարանքներից ճանաչեց, որ նրանք կազակներ էին։

Հինգ րոպեից հետո բարձրամարմին, լայնագավակ ձիով գարպասից ներս մտավ տարիքավոր մի վախմիստր։ Սա մուտքի սանդուղքի մոտ իջավ ձիուց, երկար սանձը կապեց բազրիքին, մտավ տուն։

— Այստեղ ո՞վ է տանտերը,— բարևելով հարցրեց նա։

— Ես եմ,— պատասխանեց Պանտելեյ Պրակոֆևիչը, վախեցած ոպասելով հետևյալ հարցին՝ «Իսկ ինչո՞ւ ձեր կազակները տանն են»։

Բայց վախմիստրը բռունցքով կոկեց ձյունից սպիտակած, ոլորուն և ակսելբանտների պես երկար բեղերը, խընդրեց հետևյալը.

— Կազակներ, ի սեր Քրիստոսի օգնեցեք թնդանոթը փրկելու։ Ափի մոտ խրվել է մինչև սռնին... Դուցե պարանե՞ր ունեք։ Սա ո՞ր խուտորն է։ Մենք մոլորվել ենք։ Պետք է գնանք Ելանսկայա ստանիցան, բայց այնքան ձյուն է եկել, որ ոչինչ չես տեսնում։ Մալշրուտը կորցրել ենք, իսկ կարմիրները հրե՛ս կճզմեն պոչներս։

— Զգիտեմ, աստված վկա...— շշկլվեց ծերունին։

— Այստեղ գիտենալս ո՞րն է, ա՛յ, ինչպիսի կազակներ կան ձեզ մոտ... Մեզ մարդիկ էլ են հարկավոր, պետք է օգնել։

— Ես հիվանդ եմ,— ասաց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Բա ո՞նց կլինի, եղբայրներ,— վախմիստրը գայլի պես առանց վիզը պտտելու նայեց բոլորին։ Նրա ձայնը կարծես ջահելի ձայն դարձավ, շտկվեց։— Բա դուք կազակներ չե՞ք։ Ուրեմն կազակական գույքը կորչի՞, հա՞։ Մարտկոցի հրամանատարի տեղ ես եմ մնացել, սպաները փախել են, մի շաբաթ է, որ ձիուց չեմ իջնում, ցրտատար եմ եղել, ոտիս մատները թափել են, բայց ես կյանքս կտամ, իսկ մարտկոցը չեմ թողնի։ Իսկ դուք... Այստեղ «չէ» չի կարող լինել։ Կամովին չեք ուզում, ես հիմի կկանչեմ կազակներին, և մենք ձեզ...— վախմիստրը արտասվելով ու զայրանալով բղավեց.— կստիպենք գնալ, շա՛ն որդիք, բոլշևիկներ, ձեր հերն անիծվի։ Մենք հենց քեզ էլ կլծենք, ա՛յ

պապի, գիտե՞ս թե չէ։ Դնա մարդիկ կանչի, իսկ եթե չգան, աստված վկա, կվերադառնամ այս կողմը և ձեր խուտորը հող ու մոխիր կդարձնեմ...

Նա խոսում էր որպես մի մարդ, որն այնքան էլ վստահ չէ իր ուժի վրա։ Գրիգորին խղճաց նրան։ Վերցրեց փափախը, ու առանց նայելու ցասկոտող վախմիստրին, խիստ տոնով ասաց.

— Դու մի՛ շարանա, հա՞-ա։ Այստեղ գոռալու տեղը չէ։ Թնդանոթը փրկելուն կօգնենք, իսկ հետո աստված քեզ հետ, կգնաս։

Ուրից գործած ցանկեր դնելով, մարտկոցն անցկացրին գետից։ Քիչ մարդ չէր հավաքվել։ Անիկուշկան, Խրիստոնյան, Իվան Տամիլինը, Մելեխովները և մի տասը հոգի կանայք մարտկոցավորների օգնությամբ ափ հանեցին հրանոթները և լցարկղերը, օգնեցին ձիերին՝ հրանոթները բարձրացնելու։ Սառցակալած անիվները չէին պտտվում, քարշ էին գալիս ձյան վրա։ Հյուծված ձիերը դժվարությամբ էին հաղթահարում նույնիսկ ամենաչնչին վերելքը։ Հրետանավորները, որոնց կեսը փախել էր, ոտով էին գնում։ Վախմիստրը հանեց փափախը, գլուխ տվեց, օգնողներին շնորհակալություն հայտնեց ու ձիու վրա շուռ գալով, ցածրաձայն հրամայեց.

— Մարտկո՛ց, իմ ետևի՛ց։

Գրիգորին նրան նայում էր հարգանքով, անվստահ հիացմունքով։ Պետրոն մոտեցավ, ծամծմեց բեղը, ու կարծես պատասխանելով Գրիգորիի մտքին, ասաց.

— Թե որ բոլորն էլ այդպես լինեի՞ն։ Ա՛յ թե ոնց պիտի պաշտպանել խաղաղ Դոնը։

— Դու այն բեղավորի, վախմիստրի մասի՞ն ես խոսում,— մոտենալով հարցրեց մինչև ականջները կեղտոտված Խրիստոնյան.— տես, է՛, իր թնդանոթները, ուրեմս, տեղ կհասցնի։ Նա, այն անիծվածը, մտրակը ո՞նց թափ տվեց վրաս։ Ու կխփեր, ուրեմս, գլխից անցած մարդ էր, էլի՛։ Ես չէի ուզում գնալ, ամա հետո էլ, դրուստն ասեմ, վախեցա։ Վալենկաներ էլ չկային, ամա գնացի։ Ասա՛ խընդրեմ, նրա, հիմարի ինչի՞ն են պետք այդ թնդանոթները։ Ոնց որ կովարար մի խոզ՝ ոտները կալանդների մեջ. համ դժվարանում է, համ լավ բան չի սպասում, ամա դրանք քարշ է տալի...

Կազակները, լուռ ժպտալով, ցրվեցին։

XVI

Հեռո՛ւ-հեռվում, Դոնի մյուս կողմում,— ժամանակն արդեն ճաշից անց էր,— մի գնդացիր կրակեց երկու հերթով ու լռեց։

Կես ժամից հետո Գրիգորին, որ չէր հեռանում օթախի պատուհանից, ետ-ետ գնաց՝ մինչև այտոսկրները պատելով մոխրագույն կապտությամբ։

— Ահա նրանք։

Իլյինիչնան հառաչեց, նետվեց դեպի պատուհանը։ Փողոցով ցրիվ սլանում էր ութ ձիավոր։ Նրանք վարգելով հասան Մելեխովների բակը, ու մի փոքր կանգ առնելով, դիտեցին Դոնի գետանցը, Դոնի ու լեռան միջև ձգված հետքի սև արահետը, ու ետ դարձան։ Նրանց պարարտ ձիերը թափահարելով կարճ կտրած պոչերը, ոտներով ձյան փաթիլներ էին շպրտում։ Խուտորը հետախուզող ձիավոր հետախուզախումբը չքացավ։ Մեկ ժամից հետո Տատարսկին լսվեց քայլերի ճռճռոցով, օտար, «ա»-ի փոխարեն «օ»-ով հնչող խոսվածքով, շների հաչոցով։ Հետևազորի մի գունդ սահնակներին դրած գնդացիրներով, գումակով ու խոհանոցներով անցավ Դոնը ու լցվեց խուտորը։

Որքան էլ սարսափելի էր թշնամական զորքի ժամանելու այդ առաջին պահը, այնուամենայնիվ ծիծաղկոտ Դունյաշկան այստեղ էլ չհամբերեց. երբ հետախուզախումբը ետ դարձավ, նա փոթկաց գոգնոցի մեջ, վազեց խոհանոց։ Նատալյան նրան դիմավորեց վախեցած հայացքով։

— Ի՞նչ է պատահել։

— Ա՛խ, Նատաշենկա, ջանիկս... Ո՛նց են նրանք ձի նստում. թամքի վրա ընկնում են ետ ու առաջ, ետ ու առաջ... Արմունկներն էլ ճռճվում են հա՛ ճռճվում։ Իրենք էլ ոնց որ թե կտորտանքից կարված լինեն, նրանց վրա ամեն բան դողում է։

Դունյաշկան այնպես վարպետորեն արեց ձիերի վրա ճոճվող կարմիրբանակայինների տնազը, որ Նատալյան, ծիծաղից թուլանալով, վազեց դեպի մահճակալը, ընկավ բարձերի մեջ, որպեսզի չգրավի կեսարի զայրացկոտ ուշադրությունը։

Պանտելեյ Պրակոֆևիչը թեթև, սարսռալի դողալով նըստարանի վրա, կողքի սենյակում աննպատակ տնտղում էր ձյութալաբը, բզերը, կեչու սեպիկներով լեցուն տուփը, ու կկոցված, երկյուղալի հայացքով ստեպ-ստեպ նայում պատուհանին։

Իսկ խոհանոցում կնանիքը քա՜հ-քա՜հ ծիծաղում էին, ասես լավ բան էին սպասում. կարմրատակած Դունյաշկան արցունքներից թրջված աչքերով,— որոնք փայլում էին ինչպես ցողապատ մորմի հատիկները,— Դարյային ցույց էր տալիս կարմիրբանակայինների նստվածքը թամքերի վրա և չափածո շարժումների մեջ անգիտակցական ցինիզմով անպարկեշտ ակնարկ էր մտցնում։ Ներվային ծիծաղից կոտրատվում էին Դարյայի ներկած հոնքերի պայտաձև աղեղները, նա քրքջում էր, խռպոտ ու խեղդվող ձայնով ասում.

— Երևի շալվարները կմաշեն մինչև ծակծկվելը... Ամա՜ ձիավորներ են, հա՜-ա... կծռմռեն թամքերի դաշերը...

Նրանց ծիծաղը մի բոպե զվարճացրեց նույնիսկ Պետրոյին, որը մեռելի տեսքով դուրս եկավ օթախից։

— Ծիծաղելի է տեսնել նրանց ձի նստելը, հա՞,— հարցրեց նա։— Նրանց շա՜տ պետքն է։ Կջարդեն ձիու մեջքը,— ուրիշ ձի կվերցնեն։ Մուժիկնե՜ր։— Ու անսահման արհամարհանքով թափահարեց ձեռքը։— Նա հենց ձին էլ գուցե առաջին անգամն է տեսնում. «Քիչ-քիչ կերթանք, մեկ էլ տեսար—հասանք»։ Նրանց հայրերը անիվի ճռճռոցից էին վախենում, իսկ իրենք ջիրիդ են խաղում... է-է՜,— Պետրոն ճքացրեց մատները, օթախի դռնից ներս խցկվեց։

Կարմիրբանակայինները բազմությամբ գալիս էին փողոցով, խմբերի էին բաժանվում, մտնում բակերը։ Երեքը ներս մտան Անիկուշկայի գարպասից, հինգ հոգի, որոնցից մեկը ձիավոր էր. մնացին Աստախովի տան մոտ, իսկ մնացած հինգը ցանկապատի կողքից եկան Մելեխովների մոտ։ Առջևից քայլում էր ցածրահասակ, տարեց, սափրված մի կարմիրբանակային, տափակ, լայնառունգ քթով, ճարպիկ շարժումներով, վայելչակազմ, իսկույն երևում էր, որ հին ճակատային է։ Նա առաջինը մտավ Մելեխովների բակը, ու, կանգ առնելով մուտքի սանդուղքի մոտ, գլուխը թեքելով, մի բոպե նայում էր, թե ինչպես է կապը զոնգացնում դեղին, որձ շունը, խեղդվում, շնչասպառ լինում հաչոցից. հետո ուսից հանեց հրացանը։ Կրակոցը կտուրից եղյամի սպիտակ փոշի թափեց։ Գրիգորին շտկելով իրեն նեղող շապկի օձիքը, պատուհանից տեսավ, թե ինչպես ձյան մեջ, արյունոտելով այն, գալարվում է շունը, հոգեվարքի տանջանքում կատաղի կրծում գնդակով խոցված կողը, ու երկաթե շղթան։ Ետ նայելով, Գրիգորին տեսավ կանանց գունաթափ դեմքերը, մոր մարած աչքերը։ Նա առանց փափախի քայլեց դեպի հաշտը։

— Թո՜ղ,— ետևից օտարոտի ձայնով գոչեց հայրը։

Գրիգորին բացեց դուռը։ Դատարկ պարկումը զրնգալով ընկավ շեմքին։ Բակի դռնից ներս էին մտնում ետ մնացած կարմիրբանակայինները։

— Ինչի՞ համար սպանեցիր շանը, խանգարե՞ց,— հարցրեց Գրիգորին՝ կանգնելով շեմքի վրա։

Կարմիրբանակայինի լայն քթածակերը օդ կլանեցին, բարակ, կապուտակելու չափ մաքուր սափրված շրթունքների անկյունները ներքև սողացին։ Նա նայեց շուրջը՝ հրացանը գցելով թևին։

— Քե՜զ ինչ, ափսոսո՞ւմ ես, հը՞։ Իսկ ես չեմ ափսոսի, եթե մի փամփուշտ էլ քեզ վրա ծախսեմ։ Ուզո՞ւմ ես։ Կանգնի՜ր։

— Դե՜հ, թող, Ալեքսանդր,— մոտենալով ու ծիծաղելով, ասաց բարձրահասակ, շեկ հոնքերով մի կարմիրբանակային։— Բարև ձեզ, տանտեր։ Կարմիրներին տեսնե՞լ եք։ Ընդունեցեք ձեր տանը։ Սա՞ սպանեց ձեր շանը. իզո՜ւր... Ընկերնե՜ր, ներս անցեք։

Վերջինը ներս մտավ Գրիգորին։ Կարմիրբանակայինները ուրախ բարևեցին, հանեցին փամփշտանոցները, ճապոնական կաշվե փամփշտակալները, մահճակալի վրա կիտեցին շինելները, բամբակած, տաք կուրտկաները, փափախները։ Ու ամբողջ տունը միանգամից լցվեց զինվորայնության սպիր-

տային թունաբույր հոտով, մարգկային քրտինքի, ծխախոտի, էժան օճառի, հրացանի քսուքի միախառնված հոտով,— հեռավոր ճանապարհների հոտով։

Նա, որի անունը Ալեքսանդր էր, նստեց սեղանի մոտ, վառեց ծխախոտը, ու որպես թե շարունակելով Գրիգորիի հետ սկսված խոսակցությունը, հարցրեց.

— Դու սպիտակների մեջ եղե՞լ ես։

— Այո...

— Հը՛մ... Ես միանգամից բվեճին ճանաչում եմ թռիչքից, իսկ քեզ քթիցդ ճանաչեցի։ Սպիտա՞կ ես։ Սպա ես, հը՞։ Ոսկե ուսադիրնե՞ր։

Նա քթածակերից քուլա-քուլա ծուխ էր արձակում, դրանդու մոտ կանգնած Գրիգորիին խոցում սառն, անժպիտ աչքերով ու ծխախոտից դեղնած, ուռուցիկ եղունգով ներքևից տփտփացնում ծխախոտը։

— Սպա ես, չէ՞։ Խոստովանիր։ Ես այդ բանը կեցվածքիցդ եմ տեսնում. երևի գերմանական կռվումն ես եղել։

— Սպա եղել եմ։

Գրիգորին բռնազբոսիկ ժպտաց ու կողքից իր վրա բռնելով Նատալյայի վախեցած, աղերսող հայացքը, մռայլվեց, ցնցեց հոնքը։ Նա սրտնեղեց իր ժպիտից։

— Ափսոս։ Դուրս է գալիս, որ պետք էր կրակել ոչ թե շան, այլ...

Կարմիրբանակայինը ծխախոտի մնացորդը շպրտեց Գրիգորիի ոտների տակ, աչքով արավ մյուսներին։

Ու Գրիգորին նորից զգաց, թե ինչպես, իր կամքին հակառակ, մեղավոր ու աղերսական ժպիտը ծոմռում է իր շուրթերը, և նա ամոթից կարմրեց իր ակամա, բանականությանը չենթարկվող թուլության արտահայտման համար։ «Ոնց որ վատ բան արած շունը տիրոջ առաջ»,— ամոթով վառեց նրան այս միտքը, ու մի ակնթարթ նրա աչքերի առաջ պատկերացավ հետևյալը. նույնպիսի ժպիտով էր շոում սև, ատլասե շրթունքները սպանված սպիտակակուրծք շունը, երբ ինքը, Գրիգորին, տերը, որ ազատ էր նրա կյանքն ու մահը տնօրինելու մեջ, մոտենում էր նրան, և շունը ընկնելով մեջքի վրա, բաց էր անում մատաղ կտրիչները, թափահարում բրդոտ, շիկակարմիր պոչը...

Պանտելեյ Պրակոֆևիչը Գրիգորիին անծանոթ էլի նույն ձայնով հարցրեց՝ կարելի է հյուրերը ուզում են ընթրե՞լ։ այդ դեպքում ինքը կհրամայի տանտիրուհուն...

Իլյինիչնան առանց համաձայնության սպասելու նետվեց դեպի վառարանը։ Մեծ ունելիքը դողում էր նրա ձեռքերում, և նա ոչ մի կերպ չէր կարողանում բարձրացնել շչիով լեցուն չուգունը։ Աչքերը խոնարհելով, Դարյան սեղան գցեց։ Կարմիրբանակայինները սեղան նստեցին առանց խաչակնքելու։ Ներունին վախով և թաքցրած զզվանքով հետամուտ էր լինում նրանց։ Վերջապես, չդիմացավ, հարցրեց.

— Աստծուն, ուրեմն, չե՞ք աղոթում։

Միայն այստեղ ժպիտի պես մի բան սահեց Ալեքսանդրի շրթունքներով։ Մնացածների միահամուռ քրքիջի տակ նա պատասխանեց.

— Քեզ էլ, հայրիկ, խորհուրդ չէի տա աղոթել։ Մենք մեր աստվածներին վաղուց ենք գրողի ծոցը...— կանգ առավ, խոժոռեց հոնքերը.— աստված չկա, իսկ հիմարները հավատում են, աղոթում հրե՛ն այն փայտի կտորներին։

— Այդպես, այդպես... Ուսումնական մարդիկ, նրանք իհարկե իմացել են այդ բանը,— վախեցած համաձայնեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Դարյան ամեն մեկի առաջ մի գդալ դրեց, բայց Ալեքսանդրը դեն հրելով իր գդալը, ասաց.

— Գուցե ո՛չ փայտե գդա՞լ կա։ Այդ էր պակաս, որ վարակվենք։ Մի՞թե սա գդալ է։ Դեն գցելու բան է։

Դարյան վառոդի պես փշշաց.

— Թե որ ուրիշի գդալներից զզվում եք, պետք է ձեր գդալն ունենաք։

— Դեհ, ձենդ կտրի, սիրունիկ։ Գդալ չկա՞։ Մաքուր սրբիչ տուր, սա սրբեմ։

Իլյինիչնան մեծ, խորունկ ամանով շչի դրեց, Ալեքսանդրը դիմեց նրան.

— Սկզբից դու կեր, մայրիկ։

— Ես ինչի՞ ուտեմ։ Հո աղի չէ՞,— վախեցավ պառավը։

— Դու կեր, կեր։ Գուցե մի որևէ փոշի ես խառնել կերակրին...

— Փորձիր, է՛,— խստորեն հրամայեց Պանտելեյ Պրա-

կոֆևիչը ու սեղմեց շրթունքները։ Դրանից հետո նա կողքի սենյակից բերեց կոշկակարական գործիքները, իր համար որպես աթոռ ծառայող լաստենու կոճղակտորը մոտեցրեց պատուհանին, սրվակի մեջ շրեշ պատրաստեց ու նստեց՝ մի հին սապոգ գոգը դրած։ Էլ չմասնակցեց խոսակցությանն։

Պետրոն օթախից դուրս չէր գալիս։ Այնտեղ երեխաների հետ նստած էր և Նատալյան։ Դունյաշկան վառարանին սեղմվելով՝ գուլպա էր գործում, բայց երբ կարմիրբանակայիններից մեկը նրան «օրիորդ» անվանեց ու հրավիրեց ընթրելու, նա դուրս եկավ։ Խոսակցությունը դադարեց։ Ընթրելուց հետո կարմիրբանակայինները ծխեցին։

— Ձեզ մոտ կարելի՞ է ծխել,— հարցրեց շեկ հոնքերովը։

— Մեր ծխողներն էլ հերիք են,— դժկամ ասաց Իլյինիչնան։

Գրիգորին հրաժարվեց իրեն առաջարկած ծխախոտից։ Նրա ամբողջ ներքինը դողում էր, սիրտը արյունով լցվում ու ճմլվում, երբ նայում էր այն կարմիրբանակայինին, որը գնդակահարել էր շանը և նրա նկատմամբ իրեն զայրացուցիչ ու լկտի կերպով էր պահում։ Նա, ըստ երևույթին, ընդհարվել էր ուզում և շարունակ առիթ էր փնտրում Գրիգորիին խայթելու, նրան խոսակցության դրդելու։

— Ո՞ր գնդում էիք ծառայում, ձերդ բարեծննդություն։

— Ձանազան գնդերում։

— Մերոնցից քանիսի՞ն եք սպանել։

— Կռվի մեջ դա չեն հաշվում։ Դու, ընկեր, չկարծես, թե ես սպա եմ ծվել։ Ես գերմանական պատերազմից եմ սպա եկել։ Մարտական ծառայություններիս համար են տվել այս նշանները...

— Ես սպաներին ընկեր չեմ։ Ձեր նմաններին մենք գնդակահարում ենք։ Ես, մեղավորս, նույնպես խփել եմ մի քանիսին։

— Ես քեզ ա՛յ թե ինչ կասեմ, ընկեր... Դու քեզ լավ չես պահում. կարծես թե դուք կռվով եք վերցրել խուտորը։ Չէ՞ որ մենք ենք թողել ֆրոնտը, ձեզ ճանապարհ տվել, իսկ դու ոնց որ թե նվաճած երկիր ես եկել... Շներին գնդակահարել—դա ամեն մեկն էլ կարող է, անզեն մարդուն սպանել ու նեղելն էլ դժվար բան չի...

— Դու ինձ խրատներ մի՛ տա։ Մենք գիտենք ձեզ։ «Ֆրոնտը թողե՞լ ենք»։ Եթե ձեր քիթ ու մուրը չջարդեին, չէիք թողնի։ Քեզ հետ էլ ես կխոսեմ ուզածիս պես։

— Թո՛ղ, Ալեքսանդր, ձանձրացնում ես,— խնդրեց շեկ հոնքերովը։

Բայց Ալեքսանդրը արդեն մոտեցավ Գրիգորիին՝ ուղղելով պինչերը. շնչելիս նա ֆսսում էր ու շվացնում։

— Դու լավ կանես ինձ չկպչես, սպա, թե չէ բանը վատ կլինի։

— Ես ձեզ չեմ կպչում։

— Ո՛չ, կպչում ես։

Դուռը մի քիչ բանալով, Նատալյան կերկերաձայն կանչեց Գրիգորիին։ Վերջինս շրջանցեց իր դեմ կանգնած կարմիրբանակայինին, գնաց ու դռան շեմքին օրորվեց հարբածի նման։ Պետրոն նրան դիմավորեց բարկացկոտ, հեծությամբ լեցուն շշնջոցով.

— Ի՞նչ ես անում, է՞... Նա քո ինչի՞ն է պետք։ Ինչո՞ւ ես գլուխ դնում նրա հետ։ Ախր քեզ էլ, մեզ էլ կկորցնես։ Նստի՛ր...— Նա Գրիգորիին ուժով հրեց ու նստեցրեց սընդուկի վրա, գնաց խոհանոց։

Գրիգորին բաց բերանով ագահությամբ կլանում էր օդը, նրա թուխ թշերից անցնում էր սև կարմրությունը ու դալկացած աչքերը թույլ փայլ էին առնում։

— Գրի՛շա, Գրիշենկա, նրանց հետ գործ մի ունենա,— խնդրում էր Նատալյան դողալով, փակելով լաց լինելու պատրաստ երեխաների բերանները։

— Ինչո՞ւ չմեկնեցի, է՛,— հարցրեց Գրիգորին ու թախծոտ նայեց Նատալյային։— Լավ, էլ չեմ անի, սուս կաց։ Սիրտս ուժ չունի համբերելու։

Ավելի ուշ երեք կարմիրբանակայիններ է՛լ եկան։ Մեկը, որ բարձր, սև փափախ էր ծածկել և ըստ երևույթին պետ էր, հարցրեց.

— Քանի՞ մարդ է տեղավորված այս բնակարանում։

— Յոթ մարդ,— բոլորի փոխարեն պատասխանեց շեկ հոնքերովը, որ տնտղում էր հարմոնի հնչուն մատնատեղերը։

— Գնդացրային ուղեկալն այստեղ է լինելու։ Տեղ տվեք։

Գնացին։ Ու իսկույն ճռնչաց դարպասը։ Երկու սայլ մտան բակ։ Գնդացիրներից մեկը ներս բերեցին հաշտը։ Մթության մեջ մեկը լուցկի վառեց ու զայրանալով՝ մայր հայհոյեց։ Զարդախի տակ ծխում էին, կալում, դեզերից խոտ վերցնելով, կրակ էին վառում, բայց տանտերերից ոչ ոք դուրս չեկավ։

— Գնայիր ձիերին մտիկ տալու,— շշնջաց Իլյինիչնան՝ անցնելով ծերունու կողքից։

Վերջինը միայն ուսերը թոթվեց, բայց չգնաց։ Ամբողջ գիշերը շրխկում էին դռները։ Սպիտակ գոլորշին կախվել էր առաստաղի տակ ու ցողի պես նստում էր պատերին։ Կարմիրբանակայինները օթախում իրենց համար քնելու տեղ զցեցին։ Գրիգորին նրանց համար կարպետ բերեց ու փռեց, իր կիսամուշտակը դրեց նրանց գլուխների տակ։

— Ինքս էլ եմ ծառայել, գիտեմ,— հաշտվողաբար ժըպտաց նա այն կարմիրբանակայինին, որը նրան թշնամի էր ճանաչում։

Բայց կարմիրբանակայինի լայն պինչերը շարժվեցին, հայացքը անհաշտ սահեց Գրիգորիի վրայով...

Գրիգորին ու Նատալյան պառկեցին նույն սենյակում, մահճակալի վրա։ Կարմիրբանակայինները հրացանները դնելով գլուխների տակ, իրար գլխի թափված, տեղավորվեցին կարպետի վրա։ Նատալյան ուզեց հանգցնել լամպը, նրան խիստ տոնով հարցրին.

— Քեզ ո՞վ խնդրեց լույսը հանգցնել։ Չհամարձակվե՛ս։ Պատրույգը մի քիչ իջեցրու, բայց լույսը պետք է վառվի ամբողջ գիշերը։

Նատալյան երեխաներին պառկեցրեց ոտների կողմը, ինքն էլ առանց հանվելու պառկեց պատի կողմը։ Գրիգորին լուռ պառկել էր ձեռները գլխի տակ դրած։

«Եթե հեռանայինք,— ատամները իրար սեղմելով, սրտի կողմով բարձի անկյունին կոթնած, մտածում էր Գրիգորին։— Եթե հեռանայինք, հիմի Նատաշկային կխաչեին այս մահճակալի վրա ու նրանով կզվարճանային, ինչպես մի ժամանակ Լեհաստանում զվարճանում էին Ֆրանյայով...»

Կարմիրբանակայիններից մեկը սկսեց ինչ-որ բան պատմել, բայց ծանոթ ձայնը ընդհատեց նրան, պղտոր կիսախավարում հնչեց սպասողական պառկածներով.

— Է՛խ, առանց կնկա ձանձրալի է։ Ո՛նց կխպշտեի, հա՛-ա... Բայց տանտերը—նա սպա է... Հասարակ մարդկանց, խլնքոտներին նրանք չեն զիջում իրենց կանանց... Լսո՞ւմ ես, տանտեր։

Կարմիրբանակայիններից ոմանք արդեն խոմփացնում էին, ոմանք էլ քնած ծիծաղեցին։ Սպառնալից հնչեց շեկ հոնքերով կարմիրբանակայինի ձայնը։

— Էհ, Ալեքսանդր, ես ձանձրացա քեզ խրատելուց։ Ամեն մի բնակարանում դու սկանդալ ես սարքում, խուլիգանություն անում, խայտառակում կարմիրբանակայինի կոչումը։ Դա անտանելի է։ Ա՛յ, հիմա գնում եմ կոմիսարի կամ վաշտապետի մոտ։ Լսո՞ւմ ես։ Մենք քեզ հետ կխոսե՛նք։

Լռություն տիրեց։ Լսվում էր միայն, թե ինչպես շեկ հոնքերովը բարկությամբ ֆսֆսալով, հագնում է սապոգները։ Մի րոպեից հետո, դուռը զրխկացնելով, նա դուրս գնաց։

Նատալյան չկարողանալով իրեն զսպել, բարձր հեկեկաց։ Գրիգորին դողդոջ ձեռքով շոյում էր նրա գլուխը, քրտնած ճակատը ու թաց դեմքը։ Աջ ձեռքով հանգիստ տնտղում էր իր կուրծքը, իսկ մատները մեխանիկորեն կոճկում ու արձակում էին տակի շապկի կոճակները։

— Լռիր, լռիր,— հազիվ լսելի նա շշնջում էր Նատալյային։ Եվ այդ ակնթարթում հաստատապես գիտեր, որ իր ամբողջ էությամբ պատրաստ է տանել ամեն մի փորձություն ու ստորացում, միայն թե պահպանի իր և հարազատների կյանքը։

Լուցկին լուսավորեց տեղից բարձրացած Ալեքսանդրի դեմքը, քթի լայն շրջանակը, բերանը, որ կպել էր ծխախոտին։ Լսվում էր, թե ինչպես նա ցածրաձայն մոթմոթաց ու բազմաձայն խոմփոցի մեջ հոգոց հանելով, սկսեց հագնվել։

Գրիգորին, որ անհամբերությամբ ականջ էր դնում, հոգու խորքում անսահմանորեն շնորհակալ լինելով շեկ հոն-

քերով կարմիրբանակայինից, բերկրալի ցնցվեց՝ լսելով քայլեր պատուհանի տակից և վերջինի զայրացկոտ ձայնը։

— Եվ ահա նա շարունակ կպչում է... անկարգություն... անում... փորձանք է... ընկեր կոմիսար...

Քայլերը լսվեցին հաշտից, ճռնչալով բացվեց դուռը։ Մեկը երիտասարդական, տիրական ձայնով հրամայեց.

— Ալեքսանդր Տյուրնիկով, հագնվիր և իսկույն հեռացիր այստեղից։ Կգիշերես իմ բնակարանում, իսկ վաղը մենք քեզ կդատենք կարմիրբանակայինին անվայել վարքի համար։

Գրիգորիի հայացքը հանգիպեց դռան մոտ, շեկ հոնքերովի կողքին կանգնած, կաշվե սև կուրտկա հագած մի մարդու բարյացակամ, սուր հայացքին։

Վերջինը տեսքով երիտասարդ էր ու երիտասարդաբար խստագեմ. չափից դուրս շեշտված հաստատակամությամբ էին սեղմվել նրա շրթունքները, որոնք պարուրված էին երիտասարդական աղվամազով։

— Անհանգիստ հյո՞ւր էր ընկել ձեզ մոտ, ընկեր,— հազիվ նկատելի ժպիտով դիմեց նա Գրիգորիին։— Դեհ, հիմա քնեցեք, մենք վաղը նրան կհանդարտեցնենք։ Բարի գիշեր։ Գնա՛նք, Տյուրնիկով։

Գնացին, ու Գրիգորին թեթևացած շունչ առավ։ Իսկ առավոտյան շեկ հոնքերովը, վճարելով բնակարանի և ուտելիքի համար, դիտմամբ հապաղեց ու ասաց.

— Վերցրեք, տանտերեր, մեզանից մի՛ նեղանաք։ Մեր այդ Ալեքսանդրը մի քիչ ցնդած է։ Անցյալ տարի Լուգանսկում,— նա Լուգանսկից է,— նրա աչքերի առաջ սպանեցին մորն ու քրոջը։ Դրանից էլ նա այդպես է... Դեհ, շնորհակալություն, մնաք բարով։ Հա, քիչ մնաց մոռանայի երեխաներին.— ու վերջիններիս անասելի ուրախություն պատճառելով՝ իրերի պարկից հանեց կեղտից գորշացած մի-մի կտոր շաքար ու տվեց նրանց։

Պանտելեյ Պրակոֆևիչը հուզված նայում էր թոռներին։

— Օ-հո՛, նվեր էլ ստացան։ Տարիուկես կլինի, որ մենք շաքար չենք տեսնում... Քրիստոս փրկե, ընկե՛ր... Դեհ, գնաս բարով ասեք հորեղբորը։ Պոլյուշկա, շնորհակալություն ասա... Զաքուկս, ի՞նչ ես շշկլվել ու կանգնել։

Կարմիրբանակայինը դուրս գնաց, և ծերունին բարկությամբ դիմեց Նատալյային.

— Ահա ձեր անուսումությունը։ Գոնե մի բլիթ տայիր նրան ճանապարհի համար։ Նվերի փոխարեն նվեր հո պե՞տք է տալ բարի մարդուն։ Թյո՛։

— Վազիր,— հրամայեց Գրիգորին։

Նատալյան, շալը գլխին գցելով, բակի դռնից դենը հասավ շեկ հոնքերով կարմիրբանակայինին։ Շփոթմունքից կարմրելով, մի բլիթ դրեց նրա շինելի գրպանը, որ խորունկ էր ինչպես տափաստանի ջրհորը։

XVII

Կեսօրին խուտորի միջով շտապ երթով անցավ 6-րդ Մցենյան կարմրադրոշ գունդը՝ իր հետ վերցնելով կազակներից ոմանց շարային ձիերը։ Բլուրից դենը, հեռվում որոտում էին հրանոթային կրակոցները։

— Ձիրի վրա կռիվ է,— որոշեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

Երեկոյան վերջալույսին թե՛ Պետրոն և թե՛ Գրիգորին մի քանի անգամ դուրս եկան բակ։ Դոնի վրայից լսվում էր, թե ինչպես հեռվում, Ուստ-Խոպերսկից էլ դենը խուլ որոտում էին հրանոթները ու բոլորովին կամաց (լսելու համար հարկավոր էր ականջը դնել սառած գետնին) տկտկում գնդացիրները։

— Այնտեղ վատ չեն դիմադրում։ Գեներալ Գուսելշչիկովը գունդարովցիների հետ այնտեղ է,— ասաց Պետրոն՝ սքրբելով ծնկների ու փափախի ձյունը և արդեն բոլորովին փոխելով խոսակցությունը, ավելացրեց.— մեր ձիերը կտանեն։ Քո ձին, Գրիգորի, լավ տեսքով է, աստված վկա կվերցնեն։

Բայց ծերունին նրանցից առաջ էր գլխի ընկել։ Գրիգորին գիշերամտին երկու շարային ձիերը տարավ ջրելու, դռնից դուրս բերելիս տեսավ, որ դրանք կազում են առջևի ոտներից։ Անցկացրեց իր ձին, որը բոլորովին կազում էր, Պետրոյի ձին՝ նույնպես։ Կանչեց եղբորը։

— Ձիերը ստից ընկել են, ա՛յ քեզ բա՛ն։ Քոնը՝ աջ

տից, իսկ իմը՝ ձախից։ Ոտնահարք չի եղել... Մի՞թե խոշ-նավախտ է։

Գորշ-կապտավուն ձյան վրա, իրիկնային անպայծառ աստղերի տակ տխուր կանգնել էին ձիերը, չէին խաղում երկար անշարժությունից հետո, չէին աքացում։ Պետրոն վառեց լապտերը, բայց կալից եկած հայրը կանգնեցրեց նրան.

— Ինչի՞ վառեցիր լապտերը։

— Ձիերը կաղում են, ապի։ Երևի ոտները հիվանդ են։

— Իսկ եթե հիվանդ են, դա վա՞տ է։ Ուզում ես, որ մի որևէ մուժիկ թամքը դնի ու տանի, հա՞։

— Դե, վատ չէ, ամա...

— Գրիշկային ասա, որ ես եմ դրանց հիվանդացրել։ Վերցրի մուրճը, ոտներին մի-մի մեխ խփեցի կոճիկից ցած, հիմի կկաղան, մինչև որ ֆրոնտը հեռանա։

Պետրոն պտտեց գլուխը, ծամծմեց բեղը ու գնաց Գրիգորիի մոտ։

— Դրանց տար ախոռ։ Ապին դիտմամբ է կաղ դարձրել։

Ծերունու հնարքը փրկեց։ Գիշերը նորից խուտորը թընդաց աղմուկից։ Փողոցներով ձիավորներ էին սլանում։ Փոսերից ու թեք տեղերից զրնգալով, անցավ մի մարտկոց ու կուտակվեց հրապարակում։ 13-րդ հեծգունդը խուտորում կանգ առավ գիշերելու։ Խրիստոնյան այդ ժամանակ եկավ Մելեխովների մոտ, պպզեց, վառեց ծխախոտը։

— Սատանաներ չկա՞ն, չե՞ն գիշերում ձեզ մոտ։

— Հլա դեռ աստված գութ է անում։ Ովքեր որ եկան, ամբողջ տունը լցրին իրենց մուժիկական փիս հոտով,— դժգոհ մոթմոթաց Իլյինիչնան։

— Ինձ մոտ եղան,— Խրիստոնյայի ձայնը շշուկի փոխվեց, ահադին ձեռքը սրբեց արցունքի կաթիլով թրջված ակնախոռոչը։ Բայց, թափահարելով մեծ, դաշտ տարվող կաթսայի չափ գլուխը, Խրիստոնյան թեթև տնքաց ու կարծես թե ամաչեց իր արցունքներից։

— Ի՞նչ եղավ քեզ, Խրիստոնյա,— ծիծաղելով հարցրեց Պետրոն, որը առաջին անգամն էր տեսնում Խրիստոնյայի արցունքները։ Հենց դրանք էլ Պետրոյի մեջ ուրախ տրամադրություն առաջացրին։

— Տարա՛ն սևուկիս... Գերմանական կովումը իմ ձեռքին էր... Իրարից, ուրեմս, չէինք բաժանվում... Ոնց որ մարդ լիներ, ուրեմս, այնքա՛ն խելացի էր... Հենց ինքս թամքեցի։ «Թամքիր,— ասում է,— թե չէ նա ինձ չի հնազանդվում»։— «Է՛,— ասում եմ,— քեզ համար դրան ամբողջ կյանքո՞ւմս պիտի թամքեմ, ինչ է։ Վերցրիր,— ասում եմ,— ուրեմս ինքդ էլ ղեկավարի»։ Թամքեցի, իսկ նա գոնե մարդու նման լիներ... Կարճլիկ էր, ուրեմս, բոյը մինչև գոտիս, ոտը չէր հասնում ասպանդակին... Սևուկիս մոտեցրեց սանդուղքին, ելավ դրա վրա ու նստեց... Ես երեխի պես մղկըտացի։ «Էհ,— ասում եմ կնկանս,— զուր տեղը պահեցի, կերցրի ու խմացրի...»— Խրիստոնյան էլի անցավ սվսվուն, արագ շշնջոցին ու վեր կացավ։— Վախում եմ ախոռը մրտնել։ Տուն ու տեղս բրիշակ եղավ...

— Իմ գործը լավ է։ Տակիս երեք ձի էր սպանվել, սա չորրորդն է, սրան վերցնելը այնքան էլ հեշտ չէ...

Գրիգորին ականջ դրեց։ Դրսում—ձյան ղողոց, թրերի շրխկոց, խուլ «թփռու-ու-ու»։

— Մեզ մոտ էլ են գալի։ Ոնց որ հոտ առած ձուկ լինեն, անիծվածնե՛ր։ Կամ գուցե մեկն ու մեկը ասել է...

Պանտելեյ Պրակոֆիևիչը անհանգստացավ, ձեռները դարձան ավելորդ, չգիտեր դրանք ինչ անի։

— Տանտե՛ր, ապա դուրս արի։

Պետրոն կապան գցեց ուսերին, դուրս ելավ։

— Ո՞րտեղ են ձիերդ, դուրս բեր։

— Ես հակառակ չեմ, բայց նրանք, ընկերներ, ոտների ցավ ունեն։

— Ի՞նչ ցավ։ Դուրս բեր։ Մենք չենք վերցնում հենց այնպես, դու մի վախենա։ Մեր ձիերը կթողնենք։

Պետրոն երկու ձի մեկ-մեկ դուրս բերեց ախոռից։

— Այնտեղ երրորդն էլ կա։ Ինչո՞ւ չես բերում,— լապտերով շուրջը լուսավորելով՝ հարցրեց կարմիրբանակայիններից մեկը։

— Դա մատակ ձի է, ծնած է։ Շատ է քավթառ, արդեն հարյուր տարեկան է...

— Է՛յ, բեր թամքերը... Կաց, իսկապես որ կաղում են... Ես քու աստծուդ, խաչիդ... Ո՞ւր տանես դրանց, կաղերին։ Ետ վերցրու...— կատաղի գոռաց լապտերը բռնողը։

Պետրոն քաշեց սանձերը ու լապտերից շուռ տվեց ծրամբռավող շրթունքներով դեմքը։

— Թամքերը ո՞րտեղ են։

— Այսօր առավոտյան ընկերները վերցրին։

— Ստում ես, կազակ։ Ո՞վ վերցրեց։

— Աստված վկա... Թող նա պատժի՝ թե սուտ եմ ասում, վերցրին։ Մցենյան գունդը անցավ ու տարավ։ Համ թամքերը տարան, համ էլ մինչև իսկ երկու անուր։

Երեք հեծյալները մայր հայհոյելով հեռացան։ Պետրոն ներս մտավ՝ իր հետ տանելով ձիու քրտինքի ու մեզի հոտը։ Նրա պինդ շրթունքները սեղմվել էին և նա ոչ առանց պարծենկոտության թփթփացրեց Խրիստոնյայի ուսին և ասաց.

— Ա՛յ թե ոնց պիտի վարվել։ Ձիերը կաղում են, թամքերն էլ միթամ վերցրել էին... Հը՛մ, իսկ դու...

Իլյինիչնան հանգցրեց լամպը, խարխափելով գնաց օթախը՝ անկողին գցելու։

— Թող մութ լինի, թե չէ մեկ էլ տեսար գիշերողներ եկան։

Այդ գիշեր Անիկուշկայի մոտ քեֆ էին անում։ Կարմիրբանակայինները խնդրեցին հրավիրել հարևան կազակներին։ Անիկուշկան եկավ Մելեխովներին կանչելու։

— Կարմիրնե՞րը։ Նրանք մեզ ի՞նչ կանեն որ։ Մկրտված չեմ՞ ներ չե՞ն, ինչ է։ Մեզ պես ռուսներ են, էլի։ Աստված վկա։ Կուզեք հավատացեք, կուզեք՝ ոչ... Ես նրանց խղճում եմ... Ի՞նձ ինչ։ Նրանց հետ մի ջհուդ կա, դե, նա էլ մարդ է, էլի՛։ Ջհուդներին մենք կոտորեցինք Լեհաստանում... Հը՛մ, Բայց սա ինձ մի բաժակ արաղ քշեցրեց։ Սիրում եմ ջհուդներին... Գնանք, Գրիգոր, Պետյա, դու ինձնից մի փախնի...

Գրիգորին հրաժարվեց գնալուց, բայց Պանտելեյ Պրակոֆիևիչը խորհուրդ տվեց.

— Գնա, թե չէ կասեն, որ ենդուր չես անում։ Դու գնա առանց ոխ պահելու։

Դուրս ելան բակը։ Տաք գիշերը լավ եղանակ էր խոստանում։ Մոխրի և տարթի ծխի հոտ էր գալիս։ Կազակները

լուռ կանգնած էին, հետո գնացին։ Բակի դռան մոտ Դարյան հասավ նրանց։

Ծարիրով ներկած նրա հոնքերը, դեմքի վրա թեավորված, ամպերի միջից թափանցող լուսնի դալուկ լույսի տակ փայլում էին թավշե սևությամբ։

— Իմ կնկանը խմացնում են... Միայն թե նրանց մտածածը չի անցնի։ Ես աչք ունեմ, աղբերս...— մոթմոթում էր Անիկուշկան, իսկ արաղը նրան գցում էր ցանկապատին, ճանապարհից նետում ձյան կուտակների վրա։

Ոտների տակ շաքարի պես փշրվում էր հատիկավորկապտավուն, սորուն ձյունը։ Երկնքի գորշ ծածկոցից ձյունահողմ էր փչում։

Քամին ծխախոտներից կայծեր էր տանում, էրնում ձյան փոշին։ Աստղերի տակ նա գիշատչաբար հարձակվում էր սպիտակափետուր մի ամպի վրա (այդպես բազեն հասնելով կարապին, խփում է նրան խիստ ուռուցիկ իր կրծքով), ու ալեձև օրորվելով՝ սպիտակ բմբուլ-փաթիլները թափվում էին հանդարտած երկրի վրա, ծածկում խուտորը, խաչաձևված ճանապարհները, տափաստանը, մարդկանց և գազանների հետքերը...

Անիկուշկայի խրճիթում շնչել չի լինում։ Լամպից մրուրի սև, սուր լեզուներ են դուրս գալիս, իսկ ծխախոտի ծխի միջից ոչինչ չի երևում։ Կարմիրբանակային հարմոնիստը եռանդով հնչեցնում է «սարատովյան եղանակը»՝ ծայր աստիճան քաշքշելով փուքսը, տարածելով երկար ոտները։ Նստարանների վրա նստոտել են կարմիրբանակայինները, հարևան կնանիքը։ Անիկուշկայի կնոջը գուրգուրում է հաղթանդամ մի քեռի՝ պաշտպանական գույնի, բամբկուն շալվարով ու կարճ սապոգներով, որոնք ծանրաբեռնված են ահագին, ասես թանգարանից վերցրած շպորներով։ Սպիտակ, նուրբ գառնենու փափախը քշել է խուճուճ մազերով պատած ծոծրակին, թուխ դեմքը քրտնած է։ Թաց ձեռքը դաղում է Անիկուշկայի կնկա մեջքը։

Իսկ այդ կնիկն արդեն նվաղել է. լորձնոտել, կարմրել է նրա բերանը. նա կուզենար դեն քաշվել, բայց հալ չկա. նա ամուսնուն էլ է տեսնում, կնանոց ժպտուն հայացքներն էլ, բայց արի ու տես, որ ուժ չունի մեջքից դեն հրելու

զորեղ ձեռքը. ամոթը կարծես չի էլ եղել, ու նա ծիծաղում է գինովցած ու թուլացած։

Սեղանի վրա սափորների բերանները բացված են, սպիրտի հոտը բռնել է ամբողջ խրճիթը։ Սփոռոցը կարծես ճահիճ լինի, իսկ խրճիթի մեջտեղում պտտվում և ոտները հատակին թրմփացնելով պարում է 13-րդ հեծելազորային գնդի մի դասակապետ։ Նրա սապոգները խրոմից են, բարակ են, գալիֆե շալվարը սպայական մահուդից է։ Գրիգորին շեմքից նայում է նրա սապոգներին ու գալիֆեին և մտածում է՝ «Սպայից են վերցված...» Հետո դիտում է նրա դեմքը. դա թուխ-սևավուն է, պլպլում է քրտնքից ինչպես սևաթույր ձիու գավակը. կլոր ականջախեցիները դուրս են ցցված, շրթունքները հաստ են ու կախ ընկած։ «Ջհուդ է, բայց ճարպիկ է»,— ինքն իր մեջ որոշում է Գրիգորին։ Նրա և Պետրոյի համար արաղ լցրին։ Գրիգորին զգուշությամբ էր խմում, իսկ Պետրոն շուտով հարբեց։ Ու մի ժամից հետո հողե հատակի վրա արդեն «կազաչոկ» էր պարում, կրունկներով փոշի պոկում, խռպոտաձայն խնդրում հարմոնիստին՝ «Արա՛գ, արա՛գ»։ Գրիգորին նստել էր սեղանի կողքին, դդումի սերմեր էր շրթում։ Նրա մոտ նստել էր բարձրահասակ մի սիբիրցի, գնդացրորդ։ Սա կնճռոտում էր մանկականորեն կլորավուն դեմքը, խոսում էր մեղմորեն՝ կոկելով շշական հնչյունները, «ց»-ի փոխարեն արտասանելով «ս»,— «գնդասիր», «սանկապատ»,— այսպես էին հնչում նրա արտասանած բառերը։

— Մենք ջարդեսինք Կոլչակին։ Ձեր Կրասնովին կսղկենք ոնս որ պետքն է, ու պրծավ-գնաս։ Բա-ա՛ս։ Իսկ հետո գնա ու արա քո վար ու սանկը, հող—ինչքան ուզես, վերսրու դա, ստիպիր լավ բերք տալ։ Հողն ու կնիկը մեկ է, ինքը չի հանձնվի, նրան խլել է պետք։ Իսկ ով թույլ չտա,— սպանել է պետք։ Ձեր ունեսածը մեզ պետք չի։ Միայն թե բոլորն էլ հավասար բաժին ստանան...

Գրիգորին համաձայնվում էր, ու շարունակ աչքի տակով նայում կարմիրբանակայիններին։ Երկյուղի համար կարծես թե հիմքեր չկային։ Բոլորն էլ հավանության ժպիտներով նայում էին Պետրոյին, նրա կլորավուն և վարժ շարժումներին։ Մեկի զգաստ ձայնը հիացումով բացականչում էր՝ «Ա՛յ

ինչ եմ ասո՞ւմ, հիանալի է»։ Բայց Գրիգորին իր վրա պատահմամբ բռնեց մի կարմիրբանակայինի, ավազի կկոցված աչքերի ուշադիր հայացքը, ու զգուշացավ, խմելը դադարեցրեց։

Հարմոնիստը պոլկա նվագեց։ Կանայք վեր կացան կարմիրբանակայիններին հետ պարելու։ Կարմիրբանակայիններից մեկը, որի մեջքը պատին քսվելուց սպիտակել էր, օրորվելով, հրավիրեց մի ջահել կնոջ,— Խրիստոնյայի հարևանուհուն, բայց վերջինս հրաժարվեց, ու հավաքելով ծալավոր փեշը, վազ տվեց Գրիգորիի մոտ։

— Եկ պարենք։

— Չեմ ուզում։

— Ե՛կ, Գրիշա, ալվան ծաղիկս։

— Թո՛ղ հիմարությունը, չեմ գա։

Կինը քաշում էր Գրիգորիի թևքից, բռնազբոսիկ կերպով ծիծաղում։ Գրիգորին կիտում էր հոնքերը, դիմադրում, բայց նկատելով, որ կինը աչքով արեց, վեր կացավ։ Երկու շրջան կատարեցին, հարմոնիստը մատները տարավ թավ ստեղներին, ու կինը հարմար վայրկյան գտնելով՝ գլուխը դրեց Գրիգորիի ուսին, հազիվ լսելի շշնջաց.

— Պայմանավորվում են սպանել քեզ... Մեկը ապացուցել է, որ սպա ես... Փախիր...

Ու բարձրաձայն՝

— Օ՛ֆ, գլուխս պտույտ է գալի։

Գրիգորին զվարթացավ։ Մոտեցավ սեղանին, մի բաժակ օղի խմեց, Դարյային հարցրեց.

— Պետրոն հարբե՞լ է։

— Համարյա մեռածի պես է։ Բանը բանից անցել է։

— Տար տուն։

Դարյան տարավ Պետրոյին՝ տղամարդու ուժով նրան պահպանելով վայր ընկնելուց։ Նրանց ետևից դուրս ելավ Գրիգորին։

— Ո՞ւր, ո՞ւր։ Դո՞ւ ուր ես գնում։ Ո-ո՛չ։ Ձե՛ռքդ կհամբուրեմ, մի գնա։

Թունդ հարբած Անիկուշկան կպավ Գրիգորիին, բայց սա այնպիսի աչքերով նայեց, որ Անիկուշկան տարածեց ձեռները ու ետ-ետ գնաց։

— Ազնիվ մարդկանց հաջողությո՛ւն,— Գրիգորին շեմքից թափահարեց փափախը։

Գանգրահերը, թոթվելով ուսերը, շտկեց գոտին, գնաց նրա ետևից։ Մուտքի սանդուղքի վրա, շնչելով Գրիգորիի դեմքին, փայլեցնելով աչխույժ, պայծառ աչքերը, շշնջալով հարցրեց.

— Ո՞ւր ես գնում։— Ու պինդ բռնեց Գրիգորիի շինելի թևքից։

— Տուն,— պատասխանեց Գրիգորին առանց կանգ առնելու, նրան տանելով իր ետևից։ Հուզված ու ցնծագին որոշեց՝ «Ո՛չ, քանի կենդանի եմ, դուք ինձ չեք բռնի»։

Գանգրահերը ձախ ձեռքով բռնել էր Գրիգորիի արմունկը. ծանր շնչելով՝ քայլում էր նրա կողքից։ Բակի դռան մոտ նրանք կանգ առան։ Գրիգորին լսեց, թե ինչպես ճռնչաց դուռը, ու կարմիրբանակայինի աջ ձեռքը իսկույն ընկավ ազդրին, եղունգները չանգռոտեցին ատրճանակի պատյանի կափարիչը։ Գրիգորին մի վայրկյան դեմուդեմ տեսավ ուրիշի նայվածքի կապույտ սայրը, ու շուռ գալով՝ բռնեց պատյանի օղակը արձակող ձեռքը։ Տնքալով, նա սեղմեց դրա ենթադաստակը, սարսափելի ուժով գցեց իր ուսին, կռացավ, ու ծանր մարմինը վազուց ծանոթ ձևով շպրտելով իր վրայից, ձեռքը քաշեց ներքև՝ խշշացող ձայնից զգալով, թե ինչպես են ջարդվում արմունկի հոդակապերը։ Շեկլիկ, գառան գլխի պես խոպոպավոր գլուխը ճզմելով ձյունը, թաղվեց ձնակույտի մեջ։

Նրբանցքով, ցանկապատի տակ կուզեկուզ վազ տալով, Գրիգորին նետվեց դեպի Դոնը։ Ոտները զսպանաձև շարժվելով, նրան դեպի վայրէջքն էին տանում... «Միայն թե ուղեկալ չլինի, հետո արդեն...» Մի վայրկյան կանգ առավ. ետևից երևում էր Անիկուշկայի ամբողջ բակը։ Կրակոց։ Գիշատիչ կերպով սուլեց գնդակը։ Նորից կրակոց։ Իջավ, մթին դետանցով վազ տվեց Դոնի մյուս կողմը։ Արդեն Դոնի մեջտեղում Գրիգորիի կողքին գնդակը վզզալով խփեց անհարթ, ջինջ սառցաշերտին, սառույցի կտորները թռան, զարկվեցին Գրիգորիի վզին։ Վազեվազ անցնելով Դոնը, նա ետ նայեց։ Կրակոցները դեռ շրխկում էին հովվի մտրակի նման։ Փըրկվելու ուրախությունը չջերմացրեց Գրիգորիին, բայց իր

ապրածի հանդեպ անտարբերության զգացումը շփոթեցրեց նրան։ «Ոնց որ թե գազանի ետևից էին կրակում,— մեխանիկորեն մտածում էր նա, նորից կանգ առնում։— Չեն փնտրի, կվախենան անտառ գնալուց... Նրա թևը լավ բուժեցի, հա՛-ա։ Ախ, սրիկա, ուզում էր կազակին առանց զենքի բռնել»։

Քայլեց դեպի ձմեռային դեզերը, բայց, երկյուղ կրելով, անցավ դրանցից, երկար ժամանակ, ինչպես թռչկոտող նապաստակ, հետքերի օղակներ էր հյուսում։ Որոշեց գիշերել չոր ճլի լքած դեզի մեջ։ Դրա կատարին փոս արեց։ Ոտների տակից սահեց մի ջրաքիս։ Գրիգորին ամբողջովին թաղվեց նեխահոտ արձակող խոտի մեջ, դողաց։ Մտքեր չկային։ Հարևանցիորեն, դժկամ մտածեց՝ «Վաղը թամբել ձին ու ֆրոնտի վրայով սլանալ մերոնց մոտ». բայց դրան պատասխան չգտավ, հանդարտվեց։

Առավոտյան դեմ ցուրտը նեղեց նրան։ Դուրս նայեց։ Նրա վերևում ուրախ ու դողդոջ փայլում էր առավոտյան շամանդաղը, և մթնակապույտ երկնքի խորագույն անընդում, ինչպես Դոնի ծանծաղուտում, կարծես երևաց հատակը,— վաղորդյան մուգկապույտ լազուրը զենիթում, դրա եզրերին մարող աստղացրոնքը։

XVIII

Ռազմաճակատը անցավ։ Լռեց մարտական օրերի որոտմունքը։ Վերջին օրը 13-րդ հեծգնդի գնդացրորդները հեռանալուց առաջ Մոխովի գրամաֆոնը դրին ուկրաինական լայն սահնակի վրա, ձիերը երկար ու արագ քշեցին խուտորի միջոցներով։ Գրամաֆոնը խռխռում ու կռնչում էր (ձիերի սմբակներից թռչող ձյան փաթիլները ընկնում էին խողովակի լայն բկի մեջ), սիբիրյան ականջավոր փափախով մի գնդացրորդ անփույթ մաքրում էր խողովակը և գրամաֆոնի քանդակավոր բռնակը բանեցնում նույնպիսի վստահությամբ, ինչպես և գնդացրի ծոծրակալի բռնակները։ Իսկ ետևից ճնճղուկների գորշ երամի պես վազ էին տալիս երեխաները. կառչելով սահնակից, բոռում էին՝ «Քեռի, ածա այդ խռխռող

զատը, ածա, քեռի ջան»։ Երկու ամենաերջանիկները նստել էին գնդացրորդի ծնկներին, և սա ընդմիջումների ժամանակ, երբ չէր պտտում բռնակները, թաթմանով հոգատարությամբ ու հերստոտ սրբում էր փոքր տղայի չանգռոտված, սառնամանիքից ու մեծ երջանկությունից թրջված քիթը։

Հետո լսվում էր, թե ինչպես Ուստ-Մեչետկայի մերձակայքում կռիվներ էին տեղի ունենում։ Տատարսկու միջով նոսր զանգվածներով ձգվում էին գումակները, որոնք պարեն և ռազմամթերք էին հայթայթում Հարավային ճակատի 8-րդ և 9-րդ Կարմիր բանակներին։

Երրորդ օրը բանբերները գնացին տնետոն, կազակներին ծանուցեցին, որ սրանք ժողովի գնան։

— Կրասնովին, ատամանին ենք ընտրելու,— ասաց Անտիպ Փչանովը՝ դուրս գալով Մելեխովների բակից։

— Ընտրելո՞ւ ենք, թե՞ նրան վերևից են նշանակելու,— հետաքրքրվեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Այնտեղ կտեսնենք, էլի՛...

Գրիգորին ու Պետրոն գնացին ժողով։ Հավաքվել էին բոլոր երիտասարդ կազակները։ Սերունդներ չկային։ Միայն Փչան Ավդեիչը մի խումբ մասխարա մարդկանց իր գլխին հավաքած, փչում էր հա փչում, թե ինչպես մի կարմիր կոմիսար իջևանել էր իր տանը և ինչպես իրեն, Ավդեիչին հրավիրում էր հրամանատարական պաշտոն ստանձնել։

— «Ես,— ասում է,— չգիտեի, որ դուք հին ծառայություն վախմիստր եք, թե չէ հաճույքով կհրավիրեի. դեհ, հայրիկ, անցիր պաշտոնի...»

— Ի՞նչ պաշտոնի. իբրև ավագ, ո՞ւր կուղարկեն,— ատամները ցույց տվեց Միշկա Կոշևոյը։

Նրան սիրով արձագանքեցին.

— Կոմիսարի ձիու պետ։ Դրա պոչի տակը լվալու համար։

— Քիչ վերև վերցրու։

— Հա՛-հա՛-հա՛...

— Ավդեիչ, լսիր, նա քեզ երրորդ կարգի գումակ է ղրկելու, որ թթվի վարիչ լինես։

— Դուք չգիտեք բոլոր գործերը... Կոմիսարը սրա հետ

խոսում էր, իսկ կոմիսարի բանբերն այդ ժամանակ կպել էր սրա պառավին։ Տրորում էր։ Ավդեիչն էլ բերանը ջուր դառած, քթից ծլուզը կախած՝ լսում է...

Ավդեիչը անթարթ աչքերով նայում էր բոլորին, թուքը կուլ էր տալիս, հարցնում.

— Ո՞վ դուրս տվեց վերջին խոսքերը։

— Ես,— քաջացավ ետևում կանգնածներից մեկը։

— Ա՛յ քեզ շան որդի,— Ավդեիչը շուռ էր գալիս, համակրանք փնտրում, և այն թափվում էր առատորեն.

— Նա օձի մեկն է, ես վաղուց եմ ասում։

— Նրանք տնով-տեղով այդպես են։

— Թող ես մի քիչ ջահել լինեի...— Ավդեիչի թշերը կարմրեցին ինչպես փոնչենու փնջերը.— Թող մի քիչ ջահել լինեի, ես քեզ ցույց կտայի բանի վերջը։ Հենց խախոլի շենք ու շնորհք ունես, Տագանրոգի՛ կպրի կարաս, խախոլի՛ մռութ...

— Ինչի՞ չես քոթակում սրան, Ավդեիչ։ Քո դեմ նա զամիշ է։

— Ավդեիչը վախից դողում է...

— Վախում է, որ զոռ տալուց պորտը կընկնի...

Բղավոցը ուղեկցում էր ծանր ու մեծ հեռացող Ավդեիչին։ Հրապարակում խումբ-խումբ կանգնել էին կազակները։ Գրիգորին, որ վաղուց ի վեր չէր տեսել Միշկա Կոշևոյին, մոտեցավ նրան։

— Բարև, աղբեր-տղա։

— Աստծու բարին։

— Ո՞րտեղ էիր, հը՞։ Ի՞նչ դրոշակի տակ էիր կատարում ծառայությունդ։— Գրիգորին ժպտաց՝ սեղմելով Միշկայի ձեռքը, նայելով նրա կապույտ աչքերին։

— Օ-օ՛, աղբերս, ես արոտավայրում է՛լ եմ եղել, Կալաչի ֆրոնտում, պատժական հարյուրյակում է՛լ։ Ո՞րտեղ ասես, որ չեմ եղել։ Մի կերպ տուն եկա։ Ֆրոնտում ուզում էի փախչել կարմիրների մոտ, ամա ինձ ավելի խիստ էին հետևում, քանց մայրը իր չփորձած աղջկան։ Անցած օրը Իվան Ալեքսեևիչը գալիս է ինձ մոտ, վրեն՝ յափնջի, երթական հանդերձանք։ «Է՛հ,— ասում է,— հրացանդ վերցրու և հա՛յդա»։ Ես հենց նոր էի եկել, հարցնում եմ՝ «Մի՞թե նա-

հանջելու ես։ Նա ուսերից դողում է, ասում՝ «Հրամայում են, էլի։ Ատամանն է ուղարկել։ Ախր ես աղացում էի ծառայում, նրանց մոտ հաշվի եմ առնված»։ Մնաս բարով ասավ ու գնաց։ Ես կարծում էի, թե նա իսկապես հեռացել է։ Մյուս օրը արդեն անցավ Մցենյան գունդը, մեկ էլ տեսնեմ երևաց... Հրե՛ն նա գալիս է. Իվա՛ն Ալեքսեևիչ։

Իվան Ալեքսեևիչի հետ մոտեցավ նաև գլանիչ Դավիդկան։ Դավիդկայի բերանը լիքն է սպիտակ ատամներով, Դավիդկան ծիծաղում է, ասես մի զվարճալի բան է գտել...։ Իվան Ալեքսեևիչը Գրիգորիի ձեռքը սեղմեց իր կոշտ մատներով, որոնցից մեքենայի քսուքի հոտ էր գալիս, ու ծընոտացրեց լեզուն։

— Բա դու ո՞նց ես մնացել, Գրիշա։

— Իսկ դո՞ւ։

— Դե ես... Իմ բանը ուրիշ է։

— Ուզում ես ասել, որ ես սպա եմ, հա՞։ Էհ, ռիսկ արի, մնացի... Քիչ մնաց սպանեին... Երբ ետևիցս ընկան ու սկսեցին կրակել, ցավում էի, որ չեմ հեռացել, իսկ հիմի էլ չեմ ցավում։

— Ինչի՞ համար կպան։ Տասներեքերորդ գնդի՞ց էին։

— Նրանք էին։ Անիկուշկայի մոտ քեֆ էին անում։ Մեկը ապացուցել էր, որ ես սպա եմ։ Պետրոյին ձեռք չտվին, իսկ ինձ... Ուսադիրներիս համար գործ բացվեց։ Հեռացա Դոնի մյուս կողմը, մի քիչ վնասել էի մեկի ձեռքը, փրչոտ գլխով էր... Դրա համար նրանք եկել էին մեր տունը, վերցրել բոլորը, ինչ որ ես ունեի։ Շալվարներս է՛լ, կապաներս է՛լ։ Ինչ որ ինձ վրա կա, այն է մնացել։

— Մենք պետք է այն ժամանակ, Պադտյոլկովի օրով անցնեինք կարմիրների կողմը։ Հիմի էլ դես-դեն չէինք ընկնի.— Իվան Ալեքսեևիչը թթու ժպտաց, սկսեց ծխել։

Մարդիկ շարունակ մոտ էին գալիս։ Ժողովը բացեց Վեշենսկուց ժամանած փոխ-խորունժի Լապչենկովը, Ֆոմինի սխրակիցը։

— Ընկեր կազակներ, սովետական իշխանությունը արմատացել է մեր օկրուգում։ Պետք է վարչություն սահմանել, ընտրել գործկոմ, նախագահ և նրա տեղակալ։ Սա—մի

հարց։ Հետո, ես օկրուգային սովետից հրաման եմ բերել, որը կարճ է,— պետք է հանձնել ամբողջ հրաղենը ու սառը զենքը։

— Հիանալի՛ է,— թունավոր հեգնանքով ետևից ասաց մեկը։ Հետո երկար ժամանակ ամբողջ հասակով մեկ կանգնած էր լռությունը։

— Այստեղ, ընկերներ, կարիք չկա այդպիսի բացատրություններ անելու.— Լապչենկոն ձգվեց, փափախը դրեց սեղանին.— հասկանալի է, որ զենքերը պետք է հանձնել, տնային կյանքում դրանք հարկավոր չեն։ Ով ուզում է գնալ Սովետները պաշտպանելու, նրան զենք կտան։ Երեք օրվա ժամանակամիջոցում բերեք հրացանները։ Իսկ հիմի սկսում ենք ընտրությունները։ Ես նախագահին կպարտավորեցնեմ հրամանը հասցնել ամեն մեկին, ու նա պետք է ատամանից վերցնի կնիքը և խուտորի բոլոր գումարները։

— Բա նրանք մեզ զենք են տվե՞լ, որ դրա վրա իբենց թաթն են դնում...

Հարցնողը դեռ չէր վերջացրել նախադասությունը, երբ բոլորն էլ մեկտեղ շուռ եկան նրա կողմը։ Զախար Կարալյովն էր խոսում։

— Իսկ զենքը քո ինչի՞ն է պետք,— պարզապես հարցրեց Խրիստոնյան։

— Դա ինձ պետք չի։ Բայց երբ մենք Կարմիր բանակը բաց թողինք մեր օկրուգի միջով, մեզ զինաթափելու մասին խոսք չկար։

— Ճի՛շտ է։

— Միտինգում Ֆոմինն է ասել։

— Թրերը մեր կողեկներով ենք ճաթել։

— Ես իմ հրացանով գերմանու կռվից եմ եկել, իսկ այստեղ տա՞մ։

— Ասա, որ զենքերը չենք տա։

— Ուզում են պլոկե՞լ կազակներին։ Առանց զենքի ես ի՞նչ եմ։ Ի՞նչ սահնակով պիտի ճամփա գնամ։ Առանց զենքի ես ոնց որ փեշը բարձրացրած կնիկ,— մերկ եմ։

— Զենքը կմնա մեզ մո՛տ։

Միշկա Կոշևոյը վայելչաբար խոսք խնդրեց.

— Թույլ տվեք, ընկերներ։ Ինձ համար մինչև իսկ բա-

վական զարմանալի է այսպիսի խոսակցություններ լսել։ Մեզ մոտ ռազմական դրությո՞ւն է թե ոչ։

— Էհ, թեկուզև ռազմական, հետո ի՞նչ։

— Իսկ քանի որ ռազմական դրություն է, երկար խոսելն ավելորդ է։ Դուրս բեր ու հանձնիր։ Բա մենք այդպես չէի՞նք անում, երբ գրավում էինք խախոլների գյուղերը։

Լապչենկոն տնտղեց իր փափախը ու վճռականորեն ասաց.

— Ով այս երեք օրում զենքերը չհանձնի, կտրվի ռևոլյուցիոն դատի և կգնդակահարվի իբրև կոնտր։

Մի բոպե լռությունից հետո Տամիլինը հազալով, խրոպոտ ասաց.

— Խնդրում ենք իշխանություն ընտրել։

Թեկնածություններ առաջադրեցին։ Մի տասնյակի չափ ազգանուններ ասացին։ Ջահելներից մեկը բղավեց։

— Ավդեիչի՛ն։

Սակայն կատակը հաջողություն չունեցավ։ Առաջինը քվեարկեցին Իվան Ալեքսեևիչին։ Անցավ միաձայն։

— Քվեարկությունը կարիք չկա շարունակելու,— առաջարկեց Պետրո Մելեխովը։

Ժողովը սիրով համաձայնվեց, ու առանց քվեարկության նախագահի օգնական ընտրվեց Միշկա Կոշևոյը։

Մելեխովներն ու Խրիստոնյան դեռ տուն չէին հասել, երբ Անիկուշկան կես ճանապարհին հանդիպեց նրանց։ Թևի տակ բերում էր հրացանը ու կնոջ գոգնոցով փաթաթած փամփուշտները։ Տեսավ կազակներին, ամաչեց, ծլկեց կողքի նրբանցքը։ Պետրոն նայեց Գրիգորիին, Գրիգորին՝ Խրիստոնյային։ Բոլորն էլ, ասես պայմանավորված լինելով, ժպտացին։

XIX

Հայրենի տափաստանով մեկ կազակի նման սրարշավում է արևելյան քամին։ Բլրագագաթները լցված են ձյունով։ Հեղեղատներն ու յառերը հավասարվել են։ Ոչ ճանապարհներ կան, ոչ էլ արահետներ։ Շուրջդ ամենուրեք քամիների լիզած, սպիտակ ու մերկ հարթավայր։ Կարծես մեռած է

տափաստանը։ Երբեմնակի բարձունքում թռչում-անցնում է մի ագռավ, հնադարյան, ինչպես այս տափաստանը, ինչպես ամառային ճանապարհին կողքին բարձրացող կուրգանը սպիտակափառ իշխանական գդակով՝ բոլորքը գնդածաղիկներով, ասես կուղբի մորթիով պճնած։ Թռչում-անցնում է ագռավը, թևերով սվսվացնում, ճեղքում օդը, կոկորդային հեծեծող կոնչյուն արձակում։ Քամին նրա կոնչյունը տանում է հեռո՛ւ-հեռու, և երկար ու տխուր է այն հնչելու տափաստանի վրա՝ ինչպես գիշերային անդորրում պատահաբար շոշափված թավ լարը։

Բայց ձյան տակին այնուամենայնիվ ապրում է տափաստանը։ Այնտեղ, ուր սառած ալիքների նման թմբանում է ձյունից արծաթաշող դարձած հերկը, ուր մեռյալ ալեծածանության պես փռված է աշնանից սերմանված հողը,— այնտեղ իր ագահ, կենսալից արմատներով գետնի մեջ մխրճված, փռվել է սառնամանիքից կուչ եկած աշնանացան հացահատիկը։ Մետաքսանման-կանաչ, ամբողջովին ծածկված լինելով սառած ցողի արցունքի կալյակներով, նա ցրտատանջ սեղմվում է փուխր սևահողին, սնվում դրա կենարար, սև արյունով ու սպասում գարնան, արևին, որպեսզի ելնի՝ պատռելով կանգնած, ոստայնանման-բարակ, ալմաստե սառնաձյունը, որպեսզի փարթամորեն դալարի մայիսին։ Եվ նա կելնի իր ժամանակին։ Նրա մեջ կթփրտան լորերը, նրա վերևում կգեղգեղա ապրիլյան արտույտը։ Ու վերստին նրան լույս կտա արևը, ու քամին կօրորի նրան։ Եվ դա այնքան ժամանակ, մինչև որ հասունացած, հատիկալից հասկը, հորդ անձրևներից ու վայրագ քամիներից ճմլված, կկախի քիստառատ գլուխը, կընկնի տնտեսատիրոջ գերանդուց, կալում հնազանդորեն կթափի ուռուցիկ, ծանրաքաշ հատիկը։

Դոնի ամբողջ շրջակայքն ապրում էր թաքուն, ճնշված կյանքով։ Մոտենում էին ահավոր օրերը։ Վրա էին հասնում իրադարձությունները։ Սև շշուկը Դոնի վերին ավազանից սողաց Չիրի, Ցուցկանի, Խոպերի, Ելանկայի վրայով, մեծ ու փոքր գետերի վրայով, որոնց ափերին փռված էին կազակական խուտորները։ Ասում էին, թե սարսափելին ոչ թե ֆրոնտն է, որը անցել էր ալիքի նման ու տարածվել Դոնեցի ափերին, այլ արտակարգ հանձնաժողովներն ու տրիբու-

նալներն են։ Ասում էին, թե օրեցօր նրանց սպասում են ստանիցաներում, թե Միգուլինսկում ու Կազանսկում որպես թե արդեն երևացել են նրանք և կարճ ու անարդար դատ են անում սպիտակների մոտ ծառայած կազակների դեմ։ Որպես թե այն հանգամանքը, որ վերին գոնեցիները թողել էին ֆրոնտը, չի ծառայում իբրև արդարացում, իսկ դատը բոլորովին կարճ ու կտրուկ է,— մեղադրանք, մի երկու հարց, դատավճիռ ու գնդացրով գնդակահարություն։ Ասում էին, թե Կազանսկում և Շումիլինսկում որպես թե կազակների շատ ու շատ գլուխներ անխնամ ընկած են ցեխերի մեջ... Ճակատայինները ծիծաղում էին միայն. «Սուտ է, դրանք սպաների հեքիաթներ են։ Կադետները վաղուց մեզ Կարմիր բանակով են վախեցնում»։

Լուրերին և՛ հավատում էին, և՛ չէին հավատում։ Մինչ այդ էլ խուտորներով մեկ քիչ ստեր չէին պատվում։ Ասեկոսեները թուլամորթներին դեպի փախուստ մղեցին։ Բայց երբ ֆրոնտն անցավ, քիչ չէին նաև այնպիսիները, ովքեր գիշերները չէին քնում, այնպիսիները, որոնց համար բարձը տաղտուկ էր, անկողինը՝ կոշտ ու հարազատ կինը՝ անհաճելի։

Ոմանք արդեն ցավում էին, որ չէին փախել Դոնի մյուս կողմը, բայց անցածը չես վերադարձնի, ընկած արցունքը չես բարձրացնի...

Տատարսկում կազակները երեկոները հավաքվում էին նրբանցքներում, խոսում նորություններից, հետո էլ գնում էին տնետուն՝ արաղ խմելու։ Հանդարտ ու դառն էր ապրում խուտորը։ Մսի ուտիքի սկզբին միայն մի հարսանիքի բոժոժները զնգզնգացին. Միշկա Կոշևոյը քրոջը մարդու տվեց։ Ու դրա մասին էլ կծու ծաղրանքով էին խոսում։

— Միթամ ժամանա՞կ գտան ամուսնանալու։ Երևի զոռել էր։

Խշխանության ընտրություններից հետո մյուս օրը խուտորը զինաթափվեց մինչև վերջին տունը։ Մոխովի տանը, որ զբաղեցրել էր ռևկոմը, տաք հաշտը և միջանցքը լցրին զենքերով։ Պետրո Մելեխովը նույնպես տարավ իր և Գրիգորիի հրացանները, երկու նագան և մի թուր։ Եղբայրները իրենց մոտ թողին սպայական երկու նագան, հանձնեցին

միայն այն, ինչ որ մնացել էր դեռ գերմանական պատերազմից։

Թեթևացած Պետրոն տուն եկավ։ Օթախում Գրիգորին թևքերը մինչև արմունկները քշտած, քանդում ու նավթով թրջում էր հրացանային երկու փակաղակների ժանգոտած մասերը։ Հրացանները դրված էին վառարանի պառկելատեղի մոտ։

— Սրա՞նք սրտեղից են.— զարմանքից նույնիսկ կախ ընկան Պետրոյի բեղերը։

— Հեռս էր բերել, երբ եկել էր Ֆիլոնովո, ինձ մոտ։

Գրիգորիի նեղացած ակնախոռոչներում խաղացին լուսատիկները։ Նա քրքջաց՝ նավթոտ ձեռները դնելով կողերին։ Ու նույնպես անսպասելի կերպով կտրեց ծիծաղը, գայլի պես կրճկրճացրեց ատամները։

— Հրացաններն ի՞նչ են որ... Գիտե՞ս,— շշնջաց նա, թեպետ տանը ոչ մի կողմնակի մարդ չկար,— հերս այսօր ինձ խոստովանեց,— Գրիգորին դարձյալ զսպեց ժպիտը,— նրա մոտ գնդացիր կա։

— Փչում ես, հա՛-ա։ Ո՞րտեղից, ինչի՞ համար։

— Ասում է, որ գումակավոր կազակներն են տվել մի տոպրակ մածնով, իսկ իմ կարծիքով ստում է քոփակը։ Երևի գողացել է։ Նա ոնց որ թե աղբը քչփորող բզեզ լինի,— քաշում-տանում է ամեն բան, ինչ որ չի է՛լ կարողանում տեղից բարձրացնել։ Ականջիս ասում է՝ «Գնդացիր ունեմ, թաղված է կալում։ Մեջը զսպանակ կա, պետք կգա քյարթավոր կեռերի համար, բայց ես դրան ձեռք չեմ տվելը.— «Դա քո ինչի՞ն է պետք»,— հարցնում եմ նրան։ «Աչքս կպավ այդ թանկ զսպանակին, կարելի է պետք գա էլի մի ուրիշ բանի համար։ Արժեքավոր բան է, երկաթից է...»

Պետրոն չարացավ, ուզում էր գնալ խոհանոց, հոր մոտ, բայց Գրիգորին խորհուրդ չտվեց.

— Թող։ Օգնիր սրանք մաքրենք ու հավաքենք։ Ի՞նչ պիտի իմանաս նրանից։

Հրացանների փողերը սրբելիս Պետրոն երկար ֆսֆսում էր, հետո էլ մտազբաղ ասաց.

— Գուցեն դա ճիշտ է... պետք կգա։ Թող մնա։

Այդ օրը Իվան Տամիլինը լուր բերեց, թե Կազանսկում

գնդակահարություններ են տեղի ունենում։ Վառարանի մոտ ծխեցին, խոսեցին։ Խոսակցության ժամանակ Պետրոն համառորեն մտածում էր ինչ-որ բանի մասին։ Նա, ինչպես միշտ, դժվարությամբ էր մտածում, ճակատին քրտնքի ուլունք էր դուրս գալիս։ Տամիլինի գնալուց հետո նա հայտարարեց.

— Հիմի կերթամ Ռուբեժին, Յաշկա Ֆոմինի մոտ։ Լսել եմ, որ այսօր իր տնեցիների մոտ է։ Ասում են, որ օկրուգային ռևկոմը նրա ձեռքին է, ինչքան չլինի, դատարկ չոլում մի քոթուկ է։ Կխնդրեմ, որ եթե մի բան պատահի, պաշտպանի մեզ։

Պանտելեյ Պրակոֆևիչը զամբիկը լծեց լայն ու բաց սահնակին։ Դարյան հագավ նոր մուշտակը ու ինչ-որ երկար փսփսաց Իլյինիչնայի հետ։ Նրանք միասին աճապարեցին դեպի ամբարը, այնտեղից դուրս եկան մի կապոցով։

— Այդ ի՞նչ է,— հարցրեց ծերունին։

Պետրոն լուռ էր, իսկ Իլյինիչնան կամացուկ, արագարագ վրա տվեց.

— Ես այստեղ յուղ եմ դրել, պահել էի, հարկավոր կլիներ։ Իսկ հիմի յուղն ի՞նչ ենք անում, տվի Դարյային, թող նվեր տանի Ֆոմինի կնկան, կարելի է Ֆոմինը պետք կգա Պետյուշկային,— ու լացեց.— ծառայեցին, ծառայեցին, կյանք չխնայեցին, իսկ հիմի նրանց ուսադիրների համար մեկ էլ տեսար...

— Սո՛ւս, կչկչան,— Պանտելեյ Պրակոֆևիչը մտրակը բարկությամբ շպրտեց խոտի մեջ, մոտեցավ Պետրոյին,— Դու նրան ցորեն-մորեն խոստացիր։

— Ցորենը նրա ինչի՞ն է պետք,— ջղայնացավ Պետրոն,— դուք, ապի, ավելի լավ է գնայիք Անիկուշկայի մոտ, արաղ առնեիք, թե չէ—ցորե՞ն։

Պանտելեյ Պրակոֆևիչը փեշի տակ դույլանոց սափորով արաղ բերեց, գովեց այն.

— Անտեր մնա, լավ արաղ է, հա՛-ա։ Ոնց որ Նիկոլի արաղ լինի։

— Դու արդեն համը տեսա՞ր, ա՛յ քավթառ բողար,— նրա վրա բղավեց Իլյինիչնան. բայց ծերունին որպես թե լսեց, չահելավարի, կաղ-կաղ մտավ տուն՝ կատվի պես

կկոցելով աչքերը, տնքալով ու թևքով սրբելով արաղից վառված շրթունքները։

Պետրոն սահնակը քշեց բակից և հյուրի պես բաց թողեց դարպասը։

Նա իր կողմից է՛լ էր նվեր տանում հիմա մեծահզոր, իրեն ծառայակից մարդուն,— բացի արաղից, մի կոստյումացու մինչպատերազմյան շևիոտ, սապոգներ ու մի ֆունտ բարձր տեսակի թանկ թեյ։ Այդ բոլորը նա ձեռք էր բերել Լիսկիում, երբ 28-րդ գունդը կռվով գրավեց կայարանը ու ցրվեց վագոններն ու պահեստները թալանելու... Այդ նույն ժամանակ գրավված գնացքում նա վերցրել էր կանացի սպիտակեղենով լցված մի զամբյուղ։ Դա ուղարկել էր ռազմաճակատ ժամանած հոր հետ։ Ու Դարյան, մեծ նախանձ առաջացնելով Նատալյայի և Դունյաշկայի մեջ, պճնվում էր մինչ այդ չտեսնված սպիտակեղենով։ Արտասահմանյան ամենանուրբ կտավը ձյունից էլ սպիտակ էր, յուրաքանչյուր կտորի վրա մետաքսով հյուսված էին ինչ-որ գերբ և անունազգանունների սկզբնատառեր։ Կանացի վարտիքների ժանյակները Դոնի փրփուրից էլ ավելի փարթամ էին։ Դարյան ամուսնու ժամանելուց հետո առաջին գիշերը պառկեց այդպիսի վարտիքով։

Լույսը հանգցնելուց առաջ Պետրոն ներողամտությամբ ժպտաց.

— Տղամարդու ոտաշո՞ր ես վերցրել ու հագել։

— Սա ավելի տաք ու սիրուն է,— երազկոտ պատասխանեց Դարյան.— ամա ես բան չեմ հասկանում, թե որ սա տղամարդու ոտաշոր լիներ, ավելի երկար կլիներ։ Բա հաշիան... սա տղամարդու ինչի՞ն է պետք։

— Երևի ազնվական տղամարդիկ հաշիայով փոխան են հագնում։ Է՛հ, ի՛նձ ինչ, հագիր,— քնաթաթախ քորելով մարմինը, պատասխանեց Պետրոն։

Այդ հարցը նրան առանձնապես չէր հետաքրքրում։ Բայց հետագա օրերին, պառկելով կնոջ կողքին, արդեն զգուշաբար մի կողմ էր քաշվում, ակամա հարգանքով ու անհանգստությամբ նայում ժանյակներին, վախենում էր դրանց թեկուզ մի քիչ դիպչելուց ու Դարյայի նկատմամբ իրեն մի քիչ խորթացած էր զգում։ Նա այնպես էլ չընտելացավ այդ

սպիտակեղենին։ Երրորդ գիշերը, չարանալով, վճռականորեն ասաց.

— Դեն գցիր քո այդ ոտաշորը, է՛։ Դա կնկան չի սազում և իսկի էլ կնկա ոտաշոր չի։ Պառկել ես ոնց որ խանում-խաթուն. դրանով դու ոնց որ թե օտար լինես։

Առավոտյան նա Դարյայից շուտ վեր կացավ։ Հագալով ու նոթերը կիտելով, փորձեց հագնել կանացի վարտիքը։ Երկար ու աչալուրջ նայեց կապերին, ժանյակներին ու ծընկներից ներքև իր մերկ, մազոտ ոտներին։ Շուռ եկավ, ու հայելու մեջ անսպասելիորեն տեսնելով իր կերպարանքը ու ետևի փարթամ ծալերը, թքեց, մոթմոթաց՝ «գրո՛ղը տանի», արջի շարժումներով ցած գցեց լայն-լայն վարտիքը։ Մի ոտի մեծ մատը խճճվեց ժանյակների մեջ, քիչ մնաց նա ընկներ սնդուկի վրա, ու արդեն լուրջ կերպով զայրացած, պատռեց կապերը, ազատվեց վարտիքից։ Դարյան քնաթաթախ հարցրեց.

— Ի՞նչ ես անում։

Պետրոն նեղացած ու լուռ էր, ֆսֆսում էր ու հաճախակի թքում։ Իսկ վարտիքը, որ հայտնի չէր ինչ սեռի համար էր կարված, Դարյան հենց նույն օրը, հոգոց հանելով, ծալեց ու դրեց սնդուկի մեջ (այնտեղ կային ուրիշ շատ իրեր, կանանցից ոչ ոք չգիտեր, թե դրանք ինչպես պետք էր օգտագործել)։ Այդ բարդ իրերից հետագայում պետք է կըրծկալներ կարվեին։ Իսկ յուրկաները Դարյան օգտագործեց։ Հայտնի չէ ինչի համար դրանք կարճ էին, բայց դրանց խորամանկ տիրուհին վերևից այնպես սարքեց, որ տակի յուրկան վրայի երկար յուրկայից ավելի երկար լինի, որ կես քառորդաչափ երևան ժանյակները։ Ու Դարյան սկսեց շախանել, հոլանդական ժանյակով ավլել հողե հատակը։

Ու հիմա էլ, ամուսնու հետ հյուր գնալով, նա փարթամ ու շքեղ էր հագնվել։ Ջրասամույրի մորթիով եզրազարդված, Դոնի մուշտակի տակից յուրկայի ժանյակներն էլ էին երևվում, վրայի բրդե յուրկան է՛լ լավորակ ու նոր էր, որպեսզի Ֆոմինի կնիկը, որ երեկ-մեկէլ օրը խանում-խաթուն էր դարձել, հասկանար, որ Դարյան հասարակ կազակուհի չէ, այլ ինչքան չլինի, աֆիցերի կնիկ է, հա՛-ա։

Պետրոն թափահարում էր մտրակը, ճպճպացնում շրթունքները։ Հաստափոր, մազաթափ կոնակով զամբիկը շորորալով վազում էր տրորված ճանապարհով, Դոնի վըրայով։ Ճաշին ժամանեցին Ռուբեժին։ Ֆոմինը իսկապես որ տանն էր։ Նա լավ ընդունեց Պետրոյին, նստեցրեց սեղանի մոտ, ժպտաց շիկավուն բեղերի տակին՝ երբ նրա հայրը Պետրոյի սահնակից, որ եղյամով էր պատած, բերեց խոտի կտորտանքով ծածկված սափորը։

— Հը՛, մե՛ր տղա, այդ ո՞նց է որ աչքդ չես դարձնում մեր կողմը,— ծոր տալով, հաճելի ու թավ ձայնով ասաց Ֆոմինը՝ կնամոլի իր լայնադիր կապույտ աչքերը հառելով Դարյայի վրա, ու փքվելով՝ ոլորեց բեղը։

— Ինքդ գիտես, Յակով Եֆիմիչ, զորամասեր էին գալիս ու գնում, լուրջ ժամանակ է...

— Այդպես է, հա։ Ա՛ կնիկ, դու մեզ բերեիր վարունգ, քյալամ, Դոնի չորացրած ձուկ։

Նեղլիկ խրճիթում խիստ տաք էր։ Վառարանի վրա պառկած էին երեխաները—հոր նման, նույնպիսի կապույտ, լայնադիր աչքերով մի տղա ու մի աղջիկ։ Խմելուց հետո Պետրոն անցավ գործին։

— Խուտորներում ասում են, թե եկել են չեկաները, ձեռք են գցում կազակներին։

— Տասնհինգերորդ Ինզենյան դիվիզիայի տրիբունալը եկել է Վեշենսկայա։ Էհ, ի՞նչ կա որ։ Քեզ ի՞նչ վնաս։

— Բա ո՞նց, Յակով Եֆիմիչ, դուք էլ գիտեք,— սպա եմ համարվում։ Ախր ես ի՞նչ սպա եմ որ։

— Լավ, ուրեմն ի՞նչ։

Ֆոմինը իրեն դրության տեր էր զգում։ Հարբածությունը նրան ինքնավստահ ու պարծենկոտ էր դարձրել։ Նա շարունակ ծանր ու մեծ տեսք էր ընդունում, թիմարում բեղերը, նայում աչքի տակով, տիրաբար։

Փորձելով նրան, Պետրոն որբ էր ձևանում, ստորացած ու քծնաբար ժպտում, բայց «դուք»-ից աննկատելիորեն անցավ «դու»-ին։

— Ես ու դու միասին ենք ծառայել։ Դու չես կարող իմ մասին վատ բան ասել։ Ես իսկի հակառակ եղե՞լ եմ։ Ո՛չ մի ժամանակ։ Թող աստված պատժի, եթե ես միշտ էլ կազակների կողմը չեմ եղել։

— Մենք գիտենք։ Դու, Պետրո Պանտելեևիչ, կասկած մի տանի։ Մենք բոլորի անուններն էլ իմացել ենք։ Քեզ ձեռք չեն տա։ Բայց մենք ոմանց ձեռք կգցենք։ Կբռնենք ոմանց բկից։ Այստեղ շատ իժեր են նստած։ Մնացել են, ամա մտքերը ծուռն են։ Թաքցնում են զենքերը... Դու քո զենքերը հո հանձնե՞լ ես, հը՞։

Ֆոմինը դանդաղկոտ ճառից այնքան արագ անցավ գրոհին, որ Պետրոն մի բոպե շփոթվեց, արյունը նկատելիորեն խփեց դեմքին։

— Դու հո հանձնե՞լ ես, ասա, է՛,— վրա էր տալիս Ֆոմինը՝ թեքվելով սեղանի վրա։

— Հանձնել եմ, իհարկե, Յակով Եֆիմիչ, դու չկարծես թե... Ես սրտաբաց եմ։

— Սրտաբա՞ց։ Մենք գիտենք ձեզ... Ինքս այստեղացի եմ,— նա հարբածորեն աչքով արավ, բացեց տափակ ատամներով լայն բերանը,— հարուստ կազակին մի ձեռքով բարև տուր, մյուս ձեռքումդ դանակ պահիր, թե չէ կխփի... Շնե՛ր։ Դուզ մարդիկ չկան։ Ես շատ մարդ եմ տեսել։ Դավաճանե՛ր։ Բայց դու մի վախենա, քեզ ձեռք չեն տա։ Խոսքս խոսք է։

Դարյան սառնախաշ էր անուշ անում, քաղաքավարությունից համարյա հաց չէր ուտում։ Տանտիրուհին ջանադրությամբ հյուրասիրում էր նրան։

Արդեն իրիկնադեմին Պետրոն մեկնեց հուսադրված և ուրախ։

Պետրոյին ճանապարհ դնելով, Պանտելեյ Պրակոֆևիչը գնաց այցելելու խնամի Կորշունովին։ Նա կարմիրների գալուց առաջ եղել էր վերջինի մոտ։ Լուկինիչնան այն ժամանակ Միտկային ճանապարհ էր գցում, տանը իրարանցում ու խառնափնթորություն էր։ Պանտելեյ Պրակոֆևիչը իրեն ավելորդ զգալով՝ գնացել էր։ Իսկ այս անգամ որոշել էր գնալ և իմանալ, թե արդյո՞ք ամեն ինչ բարեհաջող է, և, ի դեպ, Կորշունովի հետ դարդ դարդի տալով, խոսել վրա հասած ժամանակների մասին։

Նա շուտ չհասավ խուտորի մյուս ծայրը։ Մերացած և

արդեն մի քանի ատամ կորցրած Գրիշակա պապին նրան դիմավորեց բակում։ Կիրակի էր, ու պապին գնալու էր եկեղեցի՝ երեկոյան ժամասացության։ Պանտելեյ Պրակոֆևիչի ոտները թուլացան, երբ նա նայեց խնամուն. վերջինիս չկոճկած մուշտակի տակից երևում էին թուրքական պատերազմի համար ստացած բոլոր խաչերն ու ռեգալիաները (գահանշանները), հնամյա համզգեստի կանգնած օձիքի վրա հանդգնաբար փայլում էին կարմիր մերակները, ծերունու վրա լավ չնստած, լամպասավոր շալվարի ծայրերը կանոնավոր կերպով դրված էին սպիտակ գուլպաների մեջ, իսկ գլխին, հենց մինչև մոմագույն, խոշոր ականջները դրված էր գդականիշով կարտուզը։

— Այդ ի՞նչ է, պապի, հո խելքդ չե՞ս կորցրել, խնամի ջան։ Ախր հիմի ո՞վ է խաչ ու գդականիշ կրում։

— Հը՞,— Գրիշակա պապին ձեռքը դրեց ականջին։

— Գդականիշդ, ասում եմ, հանիր։ Խաչերդ էլ հանիր։ Դրանց համար քեզ կձերբակալեն։ Սովետական իշխանության օրով չի կարելի դրանք կրել, օրենքը արգելում է։

— Ես, աղբեր, հավատով ու ճշմարտությամբ ծառայել եմ իմ սպիտակ թագավորին։ Իսկ այս իշխանությունը ասածուց չէ։ Ես դա իշխանություն չեմ ճանաչում։ Ես Ալեքսանդր թագավորին եմ երդում տվել, իսկ մուժիկներին երդում չեմ տվել. այդպես։— Գրիշակա պապին ծամծմեց խամրած շրթունքները, սրբեց կանաչ երանգավորված բեղերը ու հենակը պարզեց տան կողմը։— Դու Միրոնի մո՞տ ես եկել, հը՞։ Նա տանն է։ Իսկ Միտյուշկային մենք ճանապարհ ենք դրել, նա հեռացել է։ Թող նրան պահպանի երկնային թագավորը... Քո տղաները մնացե՞լ են, հը՞։ Բա ո՛նց է... Ա՛յ թե ինչ տեսակ կազակներ դուրս եկան։ Բա որ երդում են տվել զորաց ատամանի՞ն։ Զորքը մարդկանց կարիք ունի, իսկ նրանք մնացել են կնանոց մոտ... Նատալյուշկան ողջ-առո՞ղջ է։

— Ողջ է... Ես դառ խաչերդ հանիր, խնամի։ Հիմի դրանք թույլատրելի չեն։ Տե՛ր աստված, հո չե՞ս գժվել, խնամի։

— Դեհ, տեր ընդ քեզ։ Ինձ սովորեցնելու համար հլա քահել ես։ Գնա։

Գրիշակա պապին քայլեց հենց դեպի խնամին, ու վեր-

ջինս նրան ճանապարհ տվեց՝ շավիղից անցնելով ձյան մեջ. հետ նայեց, անհուսալի օրորեց գլուխը։

— Մեր զինվորին տեսա՞ր։ Ա՛մա պատիժ է, հա՛-ա։ Աստված առել է նրա խելքը։— Միրոն Գրիգորևիչը, որ նկատելիորեն նիհարել էր այդ օրերին, վեր կացավ խնամուն դիմավորելու։— Կախ տվեց իր զանգուլակները, ծածկեց գդականիշով գլխարկը ու գնաց։ Ջոռով էլ չես հանի դրանք։ Բոլորովին երեխա է դարձել, ոչինչ չի հասկանում։

— Թող ուրախանա, շատ հո չի ապրելու... էհ, ո՞նց են մերոնք։ Մենք լսեցինք, որ իբր թե անարխիստները նեղություն են տվել Գրիշային, հա՞։— Լուկինիչնան նստեց կազակների մոտ, կզակը տխրությամբ դրեց ձեռքին։— Մեզ մոտ, խնամի, տես թե ինչ փորձանք պատահեց... Չորս ձի տարան, թողին մատակ ձին ու բաշը խուզած քուռակը։ Տնաքա՛նդ արեցին։

Միրոն Գրիգորևիչը կկոցեց մի աչքը, կարծես նշան էր բռնում ու, հուզվելով, կուտակված կատաղությամբ ասաց.

— Իսկ ինչո՞ւ կյանքը փուլ եկավ։ Ո՞վ է պատճառը։ Ահա այս սատանի իշխանությունը։ Նա է մեղավոր ամեն բանի համար, խնամի։ Բոլորին հավասարեցնե՞լ, բա գա լինելո՞ւ բան է։ Հոգիս էլ հանես չեմ համաձայնվի։ Ես ամբողջ կյանքումս աշխատել եմ, մեջք ծռել, քրտնքի մեջ լողացել, ու հիմի պիտի հավասա՞ր ապրեմ նրա հետ, ով մատն էլ չի շարժվել կարիքից ազատվելու համար։ Չէ, աղբեր, հլա մի քիչ կսպասենք։ Այս իշխանությունը տնտես մարդու դամարներն է կտրում։ Դրա պատճառով էլ ձեռներս թուլանում են. հիմի էլ ինչո՞ւ դատել, ո՞ւմ համար աշխատել։ Այսօր կդատես, էգուց կգան ու քո դատածը կխլեն... Հա, խնամի, մի բան է՛լ. անցած օրը Մրիխին խուտորից ինձ մոտ եկավ ինձ հետ ծառայած մի մարդ, խոսակցություն ունեցանք... Ֆրոնտը հո հեռու չի, Դոնեցի մոտն է։ Մի՞թե կդիմանա։ Ես, գրուստն ասած, հուսալի մարդկանց բացատրում եմ, որ մենք պետք է օգնենք մերոնց, որոնք Դոնեցի մյուս կողմն են...

— Ո՞նց օգնել,— անհանգստությամբ, հայտնի չէ ինչու, շշնջալով հարցրեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Ոնց օգնե՞լ։ Կոխացնել այս իշխանությանը։ Ու այն-

պես կոխացնել, որ նա էլի ընկնի հենց Տամբովի նահանգը։ Թող այնտեղ մուժիկների հետ հավասարություն անի։ Եվ ամբողջ գույքս կտամ մինչև վերջին թելը, միայն թե ոչնչացվեն այդ թշնամիները։ Պետք է, խնամի, պետք է մարդկանց խելքի բերել։ Ժամանա՛կն է։ Թե չէ ուշ կլինի... Սառայակիցս ասում էր, որ նրանց մոտ էլ են կազակները հուզվում։ Միայն թե միաբանությամբ սկսենք գործը.— ու անցավ արագ, խեղդվող շշնջոցին.— զորամասերն անցել-գնացել են, իսկ ինչքա՞ն են մնացել նրանցից։ Մի քանի մարդ, էլի՛։ Խուտորներում հենց միայն նախագահներն են... Նրանց գլուխները թոցնելը դատարկ բան է։ Իսկ Վեշկիում ի՞նչ կա որ... Բոլորս էլ որ վրա տանք, կտոր-կտոր կանենք։ Մերոնք չեն թողնի, որ կոբչենք, կմիանանք... Հաստատ գործ է, խնամի։

Պանտելեյ Պրակոֆևիչը վեր կացավ։ Կշռադատելով խընամու ասածները, զգուշությամբ խորհուրդ տվեց.

— Տես, կսլկաս, փորձանք կբերես։ Կազակները թեկուզ և տատանվում են, ամա սատանան գիտի, թե ոնց կվարվեն։ Այդ գործերի մասին հիմի չի կարելի ամեն մարդու հետ խոսել... Ջահելներին իսկի չի կարելի հասկանալ, ոնց որ թե աչքակապուկ են խաղում։ Մեկը հեռացել է, մյուսը մնացել։ Դժվարացել է կյանքը։ Հո կյանք չի, տանջանք է։

— Մի՛ կասկածիր, խնամի,— ներողամտությամբ ժըպտաց Միրոն Գրիգորևիչը,— ես կողմնակի մարդուն չեմ ասի։ Մարդիկ ու ոչխարները մեկ են. ղոչը ուր որ գնա, ամբողջ հոտը կհետևի նրան։ Ուրեմն հարկավոր է նրանց ճանապարհ ցույց տալ։ Պետք է նրանց աչքերը բաց անել այս իշխանության հանդեպ։ Թե որ ամպ չլինի, կայծակն էլ չի խփի։ Ես կազակներին ուղղակի ասում եմ՝ պետք է ապստամբել։ Լուր կա, որ նրանք հրաման են տվել՝ բոլոր կազակներին տեղափոխել։ Դա ինչպե՞ս պիտի հասկանալ։

Միրոն Գրիգորևիչի պեպենոտ դեմքը կարմրեց։

— Տարա՛ն։ Հիմի ո՞նց կլինի, Պրակոֆևիչ։ Ասում են, որ գնդակահարություններ են սկսվել... Սա ի՞նչ կյանք է։ Տես, թե ոնց ամեն բան կործանվեց այս տարիներին։ Նավթ չկա, լուցկի չկա, վերջին օրերումը Մոխովը միայն կոնֆետ էր ծախում... Բա ցանքե՞ը։ Առաջվա դիմաց ինչքա՞ն են

ցանում։ Ձիերը հավաքեցին՝ Տարան ինձանից, մյուսից... Տանել գիտեն, հա, իսկ ո՞վ պիտի բուծի։ Առաջ մենք, ես դեռ տղա էի, ուիթսունվեց ձի ունեինք։ Երևի միտդ է, չէ՞։ Այնպիսի ձիեր ունեինք, որ նստեիր, կալմիկի ետևից էլ կհասնեիր։ Այն ժամանակ չալդիկ ճակատով մի շեկո ձի ունեինք։ Ես նրանով նապաստակներ էի ոտնատակ տալի։ Թամքը դնում, նստում ու գնում եմ տափաստան, քոլերի միջից փախցնում եմ նապաստակին ու հարյուր սաժեն էլ դենը չեմ թողնում,— ձիուս ոտների տակ եմ գցում։ Երեկվա պես հիշում եմ.— Միրոն Գրիգորևիչի դեմքով սահեց ջերմ ժպիտը.— Մի անգամ այդպես գնացի քամու աղացների կողմը, մտիկ եմ անում,— նապաստակը վազ է տալի հենց իմ կողմը։ Սլացա նրա վրա, իսկ նա պտույտ արավ, փախավ ներքև ու անցավ Դոնը։ Դա բարեկենդանին էր։ Քամին ձյունը քշել-հավաքել էր Դոնի վրա, սառույցն էլ սըլկուն էր։ Ես ընկա նապաստակի ետևից, ձին սլկաց, ամբողջ թափով ընկավ ու զարկվեց սառույցին ու շրարձրացրեց գլուխը։ Ես դողում էի։ Հանեցի թամքը, վազ տվի տուն։ «Ապի, ձին տակիցս ընկավ ու սպանվեց։ Նապաստակի ետևից էի ընկել»։— «Հասա՞ր»։— «Չէ»։— «Թամքիր սեռուկին, հասիր նրա ետևից, շան որդի»։ Ա՛յ թե ինչ ժամանակներ էին։ Ո՞նց էին ապրում կազակ կնանիքը,— քեֆ էին քաշում։ Ձին սպանվեց, դա հե՛չ, հարկավոր է նապաստակի ետևից հասնել։ Ձիու գինը հարյուր մանեթ էր, նապաստակինը՝ երկու շահի... է՛հ, ո՞ր մեկն ասեմ։

Պանտելեյ Պրակոֆևիչը խնամու տնից դուրս եկավ է՛լ ավելի շփոթված, անհանգստությամբ ու դարդով ամբողջովին թունավորված։ Հիմա նա արդեն լիակատար չափով զգում էր, որ իրեն թշնամի ինչ-որ ուրիշ ուժեր են ձեռնամուխ եղել կյանքի կառավարման։ Եվ եթե առաջ նա իր տնտեսությունն ու կյանքը վարում էր ինչպես ձիարշավի ժամանակ լավ մարզված ձիուն, արգելքների վրայից թռչելիս, ապա այժմ կյանքը նրան տանում էր ինչպես կատաղած-փրփրած մի ձի, ու ինքը արդեն չէր վարում նրան, այլ ակամա ոստոստում էր նրա ցնցվող կոնակի վրա ու ողորմելի ջանքեր թափում, որ չընկնի։

Գալիքը մշուշով էր պատած։ Վաղո՞ւց էր արդյոք, որ Միրոն Գրիգորևիչը շրջակայքում ամենահարուստ տնտեսատերն էր։ Բայց վերջին երեք տարիները քայքայեցին նրա հզորությունը։ Մշակները թողին-հեռացան, ինը անգամ պակասեց ցանքը, հարբածի նման երերվող, արժեքազրկված փողով գոմ ու ախոռից գնացին եզներն ու ձիերը։ Ամեն ինչ կարծես երազում լիներ։ Ու անցավ ինչպես հոսուն մշուշը Դոնի վրա։ Իբրև հիշատակ, մնացել էր միայն տունը՝ գեղազարդ պատշգամբով ու խունացած, քանդակավոր քիվերով։ Սպիտակությունը ժամանակից առաջ գունափոխեց Կորշունովի մորուքի աղվեսային շիկակարմրությունը, անցավ քունքերին ու ապաստանեց այնտեղ,— սկզբում փունջ-փունջ՝ ինչպես ոլոռնաթուփը ավազահողում, հետո էլ հաղթահարեց շիկակարմիր գույնը, ու աղի սպիտակությունը քունքերի վրա տեր ու տիրական դարձավ. ու արդեն նեղնելով շիկակարմրությունը, մազերը մեկ-մեկ հափշտակելով. իր տիրությունը տարածեց ճակատից վերև։ Հենց իրեն, Միրոն Գրիգորևիչի մեջ էլ կատաղաբար պայքարում էին այդ երկու հիմունքները... Ընդվզում էր շիկակարմիր արյունը, քշում աշխատանքի, ստիպում ցանք անել, մարագներ կառուցել, նորոգել ինվենտարը, հարստանալ. բայց թախիծը ավելի ու ավելի հաճախ էր այցելում.— «Ինչի՞ համար հարստություն դիզել։ Կկորչի».— ու ամեն ինչ գունավորում էր անտարբերության սպիտակ, մեռելային գույնով։ Ձեռների դաստակները, որ սարսափելի էին իրենց այլանդակությամբ, առաջվա պես չէին վերցնում մուրճը կամ ձեռքի սղոցը, այլ պարապ ընկնում էին ծնկներին՝ շարժելով աշխատանքից այլանդակված, կեղտոտ մատները։ Ձախորդ ժամանակը ծերություն բերեց։ Ու հողը խորթացավ։ Գարնանը դեպի հողն էր գնում ինչպես չսիրված կնոջ մոտ,— իբրև սովորություն, պարտականություն։ Ու դատում էր առանց ուրախության ու դատածից զրկվում առանց նախկին տխրության... Կարմիրները տարան ձիերը, իսկ նա ցույց էլ չտվեց, թե ցավում է։ Իսկ երկու տարի առաջ քիչ մնաց եղանով խոցեր կնոջը մի դատարկ բանի համար,— եզները կոխկրտել, փչացրել էին դեզը։ «Կորշունովը զխտվում էր ու

կշտանում, հիմի կերածը ետ է տալի»,— նրա մասին ասում էին հարևանները։

Պանտելեյ Պրակոֆևիչը կաղ-կաղ հասավ տուն, պառկեց մահճակալի վրա։ Սրտի գդալը ցավում էր, սուր սրտախառնուքը բռնում կոկորդը։ Իրիկնահաց ուտելով, նա պառավին խնդրեց աղած ձմերուկ բերել։ Կերավ մի պատառ, սկսեց դողալ, հաղիվ հասավ մինչև վառարանը։ Առավոտյան դեմ նա արդեն ընկած էր ուշաթափ, տիֆի տաքությամբ բռնված, անզգայացած։ Նրա արյունոտված շրթունքները ճաքճքում էին, երեսը դեղնել էր, աչքերի սպիտակուցները պատել էին կապույտ էմալով։ Դրոզդիխա տատիկը նրանից արյուն առավ,— ձեռքի երակից երկու ափսե, կպրի պես սև արյուն քամեց։ Բայց ծերուկի գիտակցությունը չվերադարձավ, միայն դեմքը կապտավուն գունատություն առավ ու ավելի լայն բացվեց սև ատամներով բերանը, որը բիկոցով կլանում էր օդը։

XX

Հունվարի 24-ին Իվան Ալեքսեևիչը օկրուգային ռևկոմի հրավերով մեկնեց Վեշենսկայա։ Երեկոյան նա պետք է վերադառնար։ Նրան սպասում էին։ Միշկա Կոշևոյը նստել էր Մոխովի ամայի տանը, տանտիրոջ նախկին առանձնասենյակում, երկտեղ մահճակալի պես լայն սեղանի մոտ։ Պատուհանի գոգի վրա (սենյակում միայն մի աթոռ կար) կիսապառկել էր Վեշենսկուց ուղարկված միլիցիոներ Օլշանովը։ Նա լուռ ծխում էր, հեռու թքում ու ամեն անգամ թուքը ճարտարությամբ գցում բուխարիկի որևէ հախճասալին։ Պատուհաններից երևում էր աստղաշող գիշերվա ցոլքը։ Սառնամանիքային խուլ անդորրություն էր։ Միշկան ստորագրում էր Ստեփան Աստախովի մոտ կատարված խուզարկության արձանագրությունը՝ երբեմնակի նայելով պատուհանից դուրս, թիկունքների ճյուղերին, որոնք ծածկվել էին շաքարի պես սպիտակ եղյամով։

Մեկը մուտքի սանդուղքով ներս անցավ՝ մեղմակի ճրռճրռացնելով թաղյակները։

— Եկավ։

Միշկան վեր կացավ։ Բայց միջանցքից ուրիշի հազ, ուրիշի քայլեր լսվեցին։ Ներս մտավ Գրիգորի Մելեխովը քիպ կոճկած շինելով, սառնամանիքից սփրթնած, հոնքերն ու բեղերը եղյամնակալած։

— Լույսը տեսա, եկա։ Բարի աջողում։

— Եկ, գանգատվիր։

— Գանգատվելու բան չկա։ Եկա մի քիչ զրուցելու և ասելու, որ մեզանից սայլ չուզեն, մեր ձիերը ոտներից հիվանդ են։

— Իսկ եզները.— Միշկան նայեց զուսպ ու շեղակի։

— Եզներով ո՞նց կգնաս։ Ճամփեքը սլկուն են։

Մեկը խոշոր քայլերով բարձրացավ մուտքի սանդուղքից՝ ճքճքացնելով դրա սառած տախտակները։ Իվան Ալեքսեևիչը յափնջիով ու բաշլուղը կնկա պես գլխին փաթաթած, ներս ընկավ սենյակ։ Նրանից հորդեց թարմ, ցուրտ օդը, խոտի ու ծխախոտի մշահոտը։

— Մրսել եմ, մրսել, տղերք... Գրիգորի, բարև։ Ի՞նչ ես գիշերով թրև գալի... Սառանան է հնարել այս յափնջին. միջից քամի է փչում, ոնց որ մաղ լինի։

Հանվեց ու դեռ յափնջին չկախած՝ սկսեց խոսքը.

— Էհ, ես տեսա նախագահին։— Իվան Ալեքսեևիչը փայլող աչքերով, ուրախ մոտեցավ սեղանին։ Նա անհամբերությամբ ուզում էր պատմել։— Մտա նրա կաբինետը։ Նա ինձ ձեռք տվեց ու ասում է՝ «Նստեցեք, ընկեր»։ Օկրուգի նախագահն է այդ ասում, հա՛-ա։ Իսկ առաջ ո՞նց էր։ Մի գեներալ-մայո՞ր։ Նրա առաջ ո՞նց պետք էր կանգնել։ Ահա նա, մեր սիրելի իշխանությունը։ Բոլորն էլ հավասար են։

Նրա աշխուժացած, երջանիկ դեմքը, սեղանի մոտ անհանգիստ նստելը և այդ ցնծալից խոսքերը Գրիգորիի համար անհասկանալի էին։ Գրիգորին հարցրեց.

— Ի՞նչն է քեզ ուրախացրել, Ալեքսեև։

— Ո՞նց թե ինչը.— Իվան Ալեքսեևիչի կզակի փոս ընկած տեղը ցնցվեց.— Ինձ մարդու տեղ դրին, բա ես ո՞նց չուրախանամ։ Ձեռք տվեց ինձ իբրև հավասարի, նստեցրեց...

— Գեներալները նույնպես վերջին ժամանակներս ըսկըսել են պարկերից կարված շապիկներով ման գալ.— Գրիգորին ձեռքի կողով շտկեց բեղը, կկոցեց աչքերը.— Մեկի վրա ես թանաքե մատիտով գծված ուսադիրներ եմ տեսել։ Նրանք է՛լ էին կազակներին ձեռք տալիս...

— Գեներալները ստիպված էին այդպես անել, իսկ սըրանք բնությունից են այդպես անում։ Տարբերություն կա՞։

— Տարբերություն չկա՛.— Գրիգորին օրորից գլուխը։

— Քո կարծիքով ուրեմն իշխանությունն է՞լ նույնն է։ Ապա ինչի՞ համար էինք կռվում։ Հենց դու, ինչի՞ համար էիր կռվում։ Գեներալների համա՞ր։ Բա ասում ես՝ «նույնն է»։

— Ես ինձ համար էի կռվում և ոչ թե գեներալների համար։ Եթե ճիշտն ասենք, նրանք էլ, սրանք էլ իմ խղճին հակառակ են։

— Բա ովքե՞ր։

— Ոչ ոք։

Օլշանովը թքեց ամբողջ սենյակի միջով, համակրանքով ծիծաղեց։ Երևի նրա խղճին էլ ոչ ոք չէր բավարարել։

— Դու առաջ կարծես թե այդպես չէիր մտածում։

Միշկան այդ ասաց Գրիգորիին խայթելու նպատակով, բայց վերջինս բոլորովին էլ ցույց չտվեց, որ այդ դիտողությունը շոշափել է իրեն։

— Ես էլ, դու էլ, մենք բոլորս էլ տարբեր կերպով էինք մտածում...

Իվան Ալեքսեևիչը ուզում էր Գրիգորիին դուրս անելուց հետո Միշկային ավելի մանրամասն հաղորդել իր ճանապարհորդության և նախագահի հետ ունեցած զրույցի մասին, բայց խոսակցությունը սկսեց հուզել նրան։ Առանց երկար մտածելու, օկրուգում իր տեսածի ու լսածի թարմ տպավորության տակ նա վեճի բռնվեց։

— Դու եկել ես մեր գլուխը տանելո՞ւ, Գրիգորի։ Դու ինքդ էլ չգիտես, թե ինչ ես ուզում։

— Չգիտեմ,— սիրով համաձայնեց Գրիգորին։

— Ինչո՞վ պիտի նախատես այս իշխանությանը։

— Իսկ դու ինչո՞ւ ես նրան պաշտպանում։ Այդ ո՞ր ժամանակներից է, որ դու այդպես կարմրել ես։

— Այդ մասին չխոսենք։ Հիմի ինչպես որ կամ, այն եմ։ Հասկացա՞ր։ Իշխանությանն էլ շատ մի շոշափիր, որովհետև ես նախագահ եմ ու այստեղ ինձ վայել չի քեզ հետ վիճել։

— Եկ թողնենք վեճը։ Ես արդեն պետք է գնամ։ Եկել էի, որ խոսեմ մեզանից սայլ վերցնելու մասին։ Իսկ քո իշխանությունը,— ինչ ուզում ես ասա,— գարշելի իշխանություն է։ Դու ինձ ուղղակի ասա, ու մենք կվերջացնենք խոսակցությունը,— նա ի՞նչ է տալիս մեզ, կազակներին։

— Ո՞ր կազակներին։ Կազակները նույնպես տարբեր են։

— Բոլորին, ովքեր որ կան։

— Ազատություն, իրավունքներ... Բայց դու կաց... Սպասիր, դու ինչ-որ...

— Այդպես էին ասում տասնյոթ թվին, հիմա հարկավոր է նոր բան մտածել,— ընդհատեց Գրիգորին,— տալիս է հո՞ղ, ազատությո՞ւն, հավասարեցնո՞ւմ է... Մենք այնքան հո՛ղ ունենք որ։ Ավելի շատ ազատություն պետք չի, թե չէ մարդիկ փողոցում իրար կկոտորեն։ Ատամաններին մենք էինք ընտրում, իսկ հիմի նշանակում են։ Ո՞վ է ընտրել նրան, որը քեզ ուրախացրել է ձեռք տալով։ Այս իշխանությունը կազակներին ոչինչ չի տա բացի տնաքանդությունից։ Մուժիկական իշխանություն է, հենց մուժիկներին էլ հարկավոր է նա։ Բայց մեզ գեներալներն էլ հարկավոր չեն։ Կոմունիստներն է՛լ, գեներալներն է՛լ միևնույն լուծն են։

— Հարուստ կազակներին հարկավոր չի, բա մյուսների՞ն։ Սարսաղի մե՛կը։ Խուտորում հարուստները երեքն են, իսկ չքավորնե՞րը։ Բա բանվորների՞ն ինչ կանես։ Չէ, ես ու դու չենք կարող այդպես դատել։ Թող հարուստ կազակները իրենց կուշտ բերանից մի պատառ կտրեն ու տան սովածին։ Իսկ եթե չտան, միսն էլ հետը կպոկենք։ Հերի՛ք է պանություն անել։ Թալանել են հողը...

— Ոչ թե թալանել են, այլ նվաճել են։ Մեր պապերը արյունով են ողողել այն, գուցեև դրանից է, որ մեր սեահողը պտղաբեր է։

— Միևնույն է, չքավորին պետք է բաժին հանել։ Հավասարեցնել ոնց որ պետք է։ Իսկ դու դատարկ բաներ ես ասում։ Քամին որ կողմը փչե, այն կողմն ես դառնում ոնց

որ կաուրի հողմացույցը։ Այնպիսի մարդիկ, ինչպես դու, պղտորում են կյանքը։

— Կաց, մի՛ հայհոյիր։ Ես հին բարեկամության հիման վրա եկել էի խոսելու, ասելու այն, ինչ որ եռում է կրծքիս տակ։ Դու ասում ես՝ հավասարեցնել... Բոլշևիկներն էլ հենց դրանով են գրավել տգետ մարդկանց։ Լավ խոսքեր թափեցին, ու մարդը գնաց ոնց որ ձուկը դեպի խայծը։ Բա ո՞ւր մնաց այդ հավասարությունը։ Վերցրու Կարմիր բանակը. ա՛յ, գնում էին մեր խուտորի միջով։ Դասակապետը խրոմե սապոգներով է, իսկ բանակայինը փաթաթաններով։ Մի կոմիսար տեսա, ամբողջովին կաշի էր հագել, շալվարն էլ, տուժուրկան էլ կաշվից էին, իսկ մեկ ուրիշի կոշիկների համար էլ կաշին չի հերիքում։ Հլա դեռ նրանց իշխանության մի տարին է անցել, իսկ երբ նրանք արմատավորվեն, էլ ո՞ւր կմնա հավասարությունը... Ֆրոնտում ասում էին՝ «Բոլորս էլ հավասար կլինենք։ Հրամանատարներն ու զինվորները միևնույն ռացիոնը կստանան»... Չէ՛։ Խայծ է միայն։ Եթե պանը վատ է, գյադայից պան դարձածը հարյուր անգամ ավելի վատ է։ Որքան էլ մուտտաս էին սպաները, բայց հենց որ մի որևէ խուժան սպա է դառնում,— պառկիր ու մեռիր, նրանից վատը չկա։ Նա նույնպիսի կրթություն ունի, ինչպես և կազակը,— սովորել է եղների պոչը պտտել, ամարի ու տես, որ մարդ է դառել, իշխանությունից հարբել ու պատրաստ է ուրիշի կաշին քերթել, միայն թե պինդ նստած մնա իր տեղում։

— Քո խոսքերը կոնտր են,— սառն ասաց Իվան Ալեքսեևիչը, բայց չնայեց Գրիգորիին,— դու չես կարող ինձ քո հավատին բերել, իսկ ես չեմ էլ ուզում քեզ վերափոխել։ Ես քեզ վաղուց չեմ տեսել ու չեմ սխալվում,— դու օտարացել ես։ Դու սովետական իշխանության թշնամին ես։

— Քեզանից այդ չէի սպասում... Թե որ ես մտածում եմ իշխանության համար, ուրեմն կո՞նտր եմ, կադե՞տ եմ։

Իվան Ալեքսեևիչը Օլշանովից վերցրեց ծխախոտի տոպրակը, արդեն ավելի մեղմ ասաց.

— Ես ո՞նց կարող եմ քեզ համոզել։ Մարդիկ իրենց խելքով են դրան հասնում։ Սրտով են հասնում։ Ես իմ տգիտության ու քիչ գրագիտության պատճառով չեմ կարող բա-

նը կարգին բացատրել։ Ու շատ բաների շոշափելով եմ հասնում...

— Վերջացրե՛ք,— ցասկոտ գոչեց Միշկան։

Գործկոմից միասին դուրս եկան։ Գրիգորին լուռ էր։ Լռությունից ճնշվելով, շարդարացնելով ուրիշի դեգերումները,— որովհետև դրանցից հեռու էր և ուրիշ կուրգանից էր նայում կյանքի վրա,— Իվան Ալեքսեևիչը հրաժեշտ տալու ժամանակ ասաց.

— Դու այդպիսի մտքերը քո մեջ պահիր։ Թե չէ, թեկուզ և դու ծանոթ ես ինձ և ձեր Պետրոն ինձ քավոր է գալի, բայց ես քո դեմ միջոցներ կգտնեմ։ Չպետք է կազակներին տատանել, նրանք առանց այդ էլ տատանվում են։ Իսկ դու մի փակիր մեր ճամփան։ Ոտի տա՛կ կտանք... Մնաս բարով։

Գրիգորին քայլում էր այնպիսի մի զգացումով, որ կարծես թե մի որևէ օրենք էր խախտել, և այն, ինչ որ անորոշ էր թվում, անապասելիորեն պատկերվեց առավելագույն պայծառությամբ։ Էապես ասած՝ նա տաքացած վիճակում միայն արտահայտել էր այն, ինչի մասին մտածում էր այդ օրերին, ինչ որ կուտակվել էր իր մեջ ու ելք էր փնտրում։ Եվ որովհետև նա կանգ էր առել երկու սկզբունքների պայքարի սահմանում, երկուսն էլ ժխտելով, նրա մեջ ծնունդ առավ խուլ, անզսպելի ջղայնությունը։

Միշկան ու Իվան Ալեքսեևիչը միասին էին գնում։ Իվան Ալեքսեևիչը նորից պատմեց օկրուգի նախագահի հետ հանդիպելու մասին, բայց երբ սկսեց խոսել, թվաց, որ գույներն ու կարևորությունը խամրել են։ Նա փորձեց վերադարձնել առաջվա տրամադրությունը ու չկարողացավ. զգում էր ինչ-որ մի արգելք, որը խանգարում էր ուրախ ապրելուն, ցուրտ, թարմ օդը թոքերով կլանելուն։ Արգելքը Գրիգորին էր, նրա հետ եղած խոսակցությունը։ Վերհիշեց, ատելությամբ ասաց.

— Այնպիսիները, ինչպես Գրիշկան է, տուրուդմբոցի ժամանակ ոտների տակ թպրտում են միայն։ Չի հասնում ափ ու լող է տալի ոնց որ կովի թրիքը սառցածակի մեջ։ Թե որ էլի եկավ, կվոնդեմ վզակոթին տալով։ Իսկ թե սկսի ագիտացիա անել, մենք կնստեցնենք նրան։ Հա, իսկ դու, Միշատկա, ի՞նչ կասես։ Ո՞նց են գործերը։

Միշկան ինչ-որ մտքերով տարված, ի պատասխան մի-այն հայհոյանք թափեց։

Անցան մի թաղ, ու Կոշևոյը դարձավ դեպի Իվան Ալեքսեևիչը, նրա գիրգ, աղջկական շրթունքների վրա դեգերում էր շփոթված ժպիտը։

— Ա՛յ թե ինչ բան է քաղաքականությունը, Ալեքսեևվիչ,— չար է, գրողը տանի։ Ինչի մասին էլ որ խոսես, այսպես արյուն չես պղտորի։ Բայց ահա Գրիշկայի հետ խոսակցություն սկսվեց... Ախր ես ու նա ընկերներ ենք, դպրոցում միասին ենք սովորել, աղջիկների ետևից ընկել, նա ինձ համար աղբոր տեղ է... Բայց ահա սկսեց գլխից դուրս խոսել, ու ես այնքան չարացա, ուղղակի սիրտս ուռավ, ոնց որ թե կրծքիս տակ ձմերուկ դարձավ։ Դողն ընկել է ջանս։ Ասես նա ինձնից մի բան է խլում, ամենասիրելի բանը։ Ասես նա ինձ թալանում է։ Այսպես, նման խոսակցության ազդեցությամբ մարդ էլ կմորթես։ Այս պատերազմի մեջ խնամի ու աղբեր չկա։ Ճամփեդ գտել ես, գնա։— Միշկայի ձայնը դողաց անհանդուրժելի վիրավորանքից։— Ես նրա վրա ձեռիցս խլած ոչ մի աղջկա համար այնպես չեմ բարկացել, ինչպես այդ խոսքերի համար։ Ա՛յ թե բանը որտեղ հասավ։

XXI

Ձյունն իջնում էր և տեղնուտեղը հալչում։ Կեսօրին զառիթափերից խուլ աղմուկով թափվում էին ձյան նստվածքները։ Դոնի մյուս կողմում աղմկում էր անտառը։ Կաղնիների բները հալչում էին, սևանում։ Ճյուղերից պոկվում էին կաթիլները, ձյունը ծակում մինչև գետինը, որը տաքացել էր թափված տերևների փտող ծածկոցի տակ։ Արդեն զգացվում էր գարնան, ձյունահալքի արբեցուցիչ բույրը, այդիներում բուրում էին բալենիները։ Դոնի վրա սառցածակեր բացվեցին։ Ափերի մոտ սառույցը տեղի տվեց, ու կանաչ, ջինջ ջրաշերտերը լցրին ու ծածկեցին սառցածակերը։

Մի գումակ, որ պարկերի պաշար էր տանում դեպի Դոն, Տատարսկում պետք է փոխեր սայլերը։ Ուղեկցող կարմիրբանակայինները ճարպիկ տղաներ էին։ Ավագը մնաց Իվան Ալեքսեևիչին հսկելու. այդպես էլ հայտարարեց նրան. «Կնստեմ քեզ հետ, դու, ո՞վ գիտե, կարելի է փախչես»։—

իսկ մնացածներին ուղարկեց սայլեր գտնելու։ Հարկավոր էր ճարել քառասունյոթ երկձի սայլ։ Եմելյանը Մելեխովներին էլ հասավ.

— Լծեցեք, պետք է արկեր տանել Բոկովսկայա։

Պետրոն բեղն էլ չշարժեց, փնթփնթաց.

— Ձիերը ոտներից հիվանդ են, իսկ զամբիկով ես երկ վիրավորներ տարա Վեշենսկայա։

Եմելյանը առանց մի խոսք ասելու գնաց ախոռ։ Պետրոն գլխաբաց դուրս թռավ ու վազեց նրա ետևից, բղավեց.

— Լսո՞ւմ ես, կա՛ց, է՛... Գուցե ձե՞ռք քաշես։

— Գուցե թողնե՞ս սարսաղությունը.— Եմելյանը շատ լուրջ նայեց Պետրոյին, ավելացրեց.— Ուզում եմ մտիկ անել ձեր ձիերին, այդ ի՞նչ հիվանդություն ունեն։ Հո մուրճով պատահմամբ կամ դիտմամբ չե՞ք ջարդել խաղերը։ Դու իմ աչքին թող մի փչի։ Ես այնքան ձի եմ տեսել, որքան դու՝ ձիու թրիք։ Լծի՛ր։ Ձիերը կամ եզները— միևնույն է։

Գրիգորին գնաց սայլի հետ։ Մեկնելուց առաջ մտավ խոհանոց. համբուրելով երեխաներին, հապճեպ վրա տվեց.

— Ընծաներ կբերեմ, իսկ դուք այստեղ խելոք կացեք, լսեցեք մայրիկին։— Ու դիմեց Պետրոյին.— Դուք իմ մասին չմտածեք։ Ես հեռու չեմ գնա։ Թե որ Բոկովսկուց ավելի հեռու քշեն, կթողնեմ եզները ու ետ կգամ։ Միայն թե խուտոր չեմ մտնի։ Ժամանակ կանցկացնեմ Սինգինում, մորաքրոջս մոտ... Իսկ դու, Պետրո, մեկ-մեկ այցելիր... Մի քիչ վախենում եմ այստեղ սպասելուց,— ու քմծիծաղ տվեց։— Դեհ, ողջ-առողջ լինեք։ Նատաշկա, մի՛ տխրի։

Մոխովի խանութի մոտ, որ պարենի պահեստ էր դարձել, բարձեցին արկերով լեցուն արկղերը, ճանապարհվեցին։

«Նրանք կռվում են, որ ավելի լավ ապրեն, իսկ մենք կռվում էինք մեր լավ կյանքի համար,— շարունակ այդ մասին էր մտածում Գրիգորին եզների հավասարաչափ, օրորուն քայլերին ունկնդրելով, սահնակի վրա կիսապառկած, կապան գլխին քաշած։— Միայն թե արդարություն չկա կյանքում։ Երևում է, որ ով ում հաղթի, նրան էլ կուլ կտա... Իսկ ես հիմար արդարությունն էի փնտրում։ Հոգիս ցավում էր, դես-դեն էի ընկնում... Հնում, գիտենք, թաթարները նեղում էին Դոնը, գալիս էին հողը խլելու, մարդկանց

գերելու։ Հիմի էլ Ռուսիան։ Չէ, ես չեմ հաշտվի։ Նրանք օտար են ինձ ու բոլոր կազակներին։ Կազակները հիմի ուշքի կգան։ Թողին Ֆրոնտը, իսկ հիմի ամեն մեկը ինձ պես ախ է անում, ամա ուշ է»։

Մոտակայքում ճանապարհամերձ քոլերը, ալեձև բլրաշատ տարածությունը, թփոտ ձորակները սողում էին դեմուդեմ, իսկ հեռվում ձյունապատ դաշտերը պտտվելով, սահնակի հետ համընթաց դեպի հարավ էին գնում։ Ճանապարհը ձգվում էր անվերջ, ճնշում ձանձրույթով, քուն էր բերում։

Գրիգորին ծուլորեն բղավում էր եզների վրա, ննջում, շուռումուռ էր գալիս կապված արկղերի կողքին։ Մխելով, երեսը դրեց խոտին, որից չոր իշառվույտի և հունիսյան օրերի քաղցր բույրն էր զգացվում, ու աննկատելիորեն քնեց։ Երազում Ակսինյայի հետ քայլում էր բարձր կանգնած, շըրշուն արտերում։ Ակսինյան գրկի մեջ գուրգուրանքով տանում էր երեխային, կողքից նայում Գրիգորիին հսկող, առկայծուն հայացքով։ Իսկ Գրիգորին լսում էր իր սրտի բաբախումը, հասկերի մեղմօրոր շրշյունը, տեսնում էր խոտաբույսերի հեքիաթային պճնանքը արտերի սահմանում, երկնակամարի ջինջ կապտությունը։ Նրա մեջ ծաղկում, եռում էր սիրո զգացմունքը, նա Ակսինյային սիրում էր առաջվա մաշող սիրով, նա այդ զգում էր ամբողջ մարմնով, սրտի յուրաքանչյուր զարկով ու միևնույն ժամանակ գիտակցում, որ դա արթմնի վիճակում չէ, որ իր աչքերի առաջ մեռյալ անդունդ է, որ դա երազ է։ Եվ ուրախանում էր երազով, այն ընդունում իբրև կյանք։ Ակսինյան նույնն էր, ինչ որ հինգ տարի առաջ, բայց ներթափանցված էր զսպվածությամբ, մի փոքր սառն էր։ Գրիգորին այնպիսի կուրացուցիչ պայծառությամբ, որպիսին երբեք չէր եղել իրականության մեջ, տեսնում էր նրա մազերի ճոխ օղակները պարանոցի վրա (քամին օրորում էր դրանք), սպիտակ գլխաշորի ծայրերը... Նա արթնացավ ցնցումից, զգաստացավ ձայներից։

Դեմուդեմ, նրանց կողքից անցնելով, բազմաթիվ սահնակներ էին գնում։

— Ի՞նչ եք տանում, հայրենակիցներ,— խոպոտ բղավեց Գրիգորիի առջևից գնացող Բոդովսկովը։

Ճռճռում էին սահնակների կողերը, եզների ունելիքանման կճղակները կրճկրճոցով ճզմում էին ձյունը։ Հանդիպակաց սահնակների վրա մարդիկ երկար լռում էին։ Վերջապես, մեկը պատասխանեց.

— Մեռելներ, տիֆից մեռածներ...

Գրիգորին բարձրացրեց գլուխը։ Անցնող սահնակների վրա գորշ շինելներով դիակներ էին կուտակված, բրեզենտով ծածկված։ Գրիգորիի սահնակի կողերը փոսից անցնելիս խփեցին անցնող մի սահնակից ցցված ձեռքին, և դա խուլ, թուջի ձայն արձակեց... Գրիգորին անտարբերությամբ դեմքը շուռ տվեց։

Իշառվույտի քաղցրամեղցր, գրավող բույրը քուն բերեց, Գրիգորիի երեսը դարձրեց դեպի կիսամոռացված անցյալը, ստիպեց մի անգամ էլ սրտով հպվել անցած զգացմունքի սուր սայրին։ Խոցող ու միևնույն ժամանակ քաղցր ցավ զգաց Գրիգորին՝ դարձյալ ընկնելով սահնակին, թուջը հպելով իշառվույտի դեղին ոստին։ Հուշերից հուզված սիրտը արյունով էր լցվում, զարկում անհամաչափ ու երկար վանում քունը։

XXII

Խուտորի ռևկոմի շուրջ խմբվեցին մի քանի հոգի,— գլանիչ Դավիդկան, Տիմաֆեյը, Մոխովի նախկին կառապան Եմելյանը ու չեչոտ կոշկակար Ֆիլկան։ Հենց դրանց վրա էլ հենվում էր Իվան Ալեքսեևիչը իր առօրյա աշխատանքում, օրեցօր ավելի շատ զգալով խուտորից իրեն բաժանող անտեսանելի պարիսպը։ Կազակները այլևս չէին գնում ժողովներին, իսկ եթե գնում էին, ապա լոկ այն դեպքում, երբ Դավիդկան ու մնացածները վազ էին տալիս խուտորով մեկ, տնետուն։ Գալիս էին, լռում, ամեն ինչի հետ համաձայնվում։ Զգալիորեն գերակշռում էին երիտասարդները։ Բայց սրանց մեջ էլ համակրողներ չէին լինում։ Իվան Ալեքսեևիչը հրապարակում ժողովն անցկացնելիս տեսնում էր քարե դեմքեր, խորթ, թերահավատ աչքեր, ծուռ հայացքներ։ Դրանից սառնություն էր առաջանում նրա սրտում, թախ-

ծում էին աչքերը, ձայնը դառնում էր թույլ ու անվստահ։ Զեչոտ Ֆիլկան մի անգամ լրջորեն ասաց.

— Խուտորից մենք բաժանված ենք, ընկեր Կոտլյարով։ Ժողովուրդը թարսացել է, դիվոտել։ Երեկ գնացի, որ սահնակներ վերցնեմ վիրավոր կարմիրբանակայիններին Վեշկի տանելու համար, ոչ մեկը չի գնում։ Բաժանվածների համար մի տան մեջ ապրելը ծանր է ...

— Բայց խմում են սարսաղավարի,— վրա բերեց Եմելյանը՝ թքոտելով փաթաթած թութունի թուղթը,— ամեն մի տանը արաղ են քաշում։

Միշկա Կոշևոյը թթվում էր, իր մտքերը թաքցնում մյուսներից, բայց նա էլ չհամբերեց։ Երեկոյան տուն գնալիս դիմեց Իվան Ալեքսեևիչին.

— Ինձ հրացան տուր։

— Ինչի՞ համար։

— Ա՛յ քեզ բան։ Վախենում եմ դատարկ ձեռքերով գնալ։ Թե՞ ոչինչ չես տեսնում։ Ես կարծում եմ, որ պետք է մի քանիսին... Պետք է ձերբակալել Գրիգորի Մելեխովին, ծերուկ Բոլդիրևին, Մատվեյ Կաշուլինին, Միրոն Կորշունովին։ Նրանք, այդ իժերը, ինչ-որ փսփսում են կազակների ականջներին... Սպասում են, որ Դոնեցի մյուս կողմից գան յուրայինները։

Իվան Ալեքսեևիչը թոթվեց ուսերը, անուրախ շարժեց ձեռքը։

— Է՛-է, եթե այստեղ քարշ տալը սկսենք, շատ փսփսացողներ պիտի քարշ տանք։ Մարդիկ թրև են գալի... Ոմանք էլ համակրում են մեզ, միայն թե Միրոն Կորշունովի կողմն են նայում։ Վախենում են, որ նրա Միտկան կգա Դոնի մյուս կողմից ու կգզի իրենց բուրդը։

Կյանքը կտրուկ շրջադարձ կատարեց։ Մյուս օրը մի հեծյալ սուրհանդակ Վեշենսկուց հրամանագիր բերեց՝ ռազմատուգանք դնել ամենահարուստ տների վրա։ Խուտորին կոնտրոլ թիվ էին տվել,— քառասուն հազար ռուբլի։ Բաժանեցին։ Անցավ մի օր։ Հավաքվեց երկու պարկ փող,— տասնութ հազար ռուբլուց մի քիչ ավելի ռազմատուգանք։ Իվան Ալեքսեևիչը հարցում արավ օկրուգին։ Այնտեղից ուղարկեցին երեք միլիցիոներ և հրամանագիր՝ «Ռազմատուգանքը

չվճարողներին ձերբակալել և հսկողության տակ ուղարկել Վեշենսկայա»։ Չորս բիձայի ժամանակավորապես նստեցրին Մոխովի տան գետնահարկը, ուր առաջ խնձորներն էին ամբարում։

Խուտորը անհանգստացած մեղվանոցի էր նմանվում։ Կորշունովը կտրականապես հրաժարվեց վճարելուց՝ պինդ պահելով էժանացած փողը։ Սակայն նրա համար էլ եկավ լավ կյանքին մնաս բարով ասելու ժամանակը։ Օկրուգից ժամանեցին երկու մարդ,— տեղական գործերի քննիչը,— Վեշենսկու մի երիտասարդ կազակ, որը ծառայել էր 28-րդ գնդում, և մի ուրիշը, որը կաշվե կուրտկայի վրայից քուրք էր հագել։ Նրանք ներկայացրին ռևտրիբունալի մանդատները, Իվան Ալեքսեևիչի հետ փակվեցին կաբինետում։ Քննիչի ուղեկիցը, տարեց ու գլուխը սափրած մի մարդ, գործիմացությամբ ասաց.

— Օկրուգում հուզումներ են նկատվում։ Մնացած սպիտակ գվարդիականությունը գլուխ է բարձրացնում ու սկսում շփոթեցնել աշխատավոր կազակությանը։ Անհրաժեշտ է հեռացնել այն ամենը, ինչ որ առավելապես թշնամի է մեզ։ Եկեք ցուցակագրենք սպաներին, տերտերներին, ատամաններին, ժանդարմներին, հարուստներին, բոլոր նրանց, ովքեր ակտիվորեն պայքարել են մեր դեմ։ Օգնիր քննիչին։ Նա ոմանց ճանաչում է։

Իվան Ալեքսեևիչը նայում էր մաքուր սափրված, կնոջական դեմքին. թվելով ազգանունները, հիշատակեց Պետրո Մելեխովին, բայց քննիչը բացասաբար օրորեց գլուխը.

— Նա մեր մարդն է, Ֆոմինը խնդրել է նրան ձեռք չտալ։ Բոլշևիկորեն է տրամադրված։ Մենք նրա հետ ծառայել ենք քսանութերորդ գնդում։

Սեղանի վրա էր Կոշևոյի ձեռքով գրված, տողած թղթի մի թերթ, որը պոկված էր աշակերտական տետրակից։

Իսկ մի քանի ժամից հետո Մոխովի ընդարձակ բակում, կաղնու գերանների վրա, միլիցիոներների հսկողության տակ արդեն նստել էին ձերբակալված կազակները։ Սպասում էին տներից ուտելիք բերելուն և իրերը տանելու սահնակին։ Միրոն Գրիգորևիչը նոր հագուստը խնամքով հագած, դաբաղած կաշվե կիսաֆուշտակով, քոշերով ու մաքուր, սպիտակ գուլ-

պաներով, շալվարի ծայրերը դրանց մեջ դրած, նստել էր ծայրից, Բոգատիրյով պապի ու Մատվեյ Կաշուլինի կողքին։ Փչան Ավդեիչը անհանգիստ քայլում էր բակում, մերթ անընպատակ նայում ջրհորի մեջ, մերթ բարձրացնում մի որևէ տաշեղ ու էլի քայլում մուտքի սանդուղքից դեպի բակի դուռը, թևքով սրբում խնձորի պես կարմիր, քրտնակալած դեմքը։

Մնացածները լուռ նստած էին։ Գլուխները կախած, հենակներով խազում էին ձյունը։ Կնանիքը հևալով, վազելով մտնում էին բակը, կապոցներ, տոպրակներ էին տալիս ձերբակալվածներին, փսփսում էին։ Լացակումած Լուկինիչնան կոճկում էր իր ծերուկի կիսամուշտակը, նրա օձիքը կապում կնկա սպիտակ լաչակով, ու նայելով նրա մարած, ասես մոխրով պատած աչքերին, ասում էր.

— Դարդ մի՛ արա, Գրիգորիչ։ Կարելի է բանը լավ կըվերջանա։ Ի՞նչ ես այդպես խեղճացել։ Տե՛ր աստված...— Հեկեկանքի ծամածռությունը երկարացնում, տափակ ձգում էր Լուկինիչնայի բերանը, բայց նա ճիգ անելով սեղմում էր շրթունքները, շշնջում.— Կգամ տեսնելու... Կբերեմ Գրիպկային, դու հո նրան շատ ես խղճում...

Դարպասից բղավեց միլիցիոնները.

— Սահնակը եկավ։ Տեղավորել տոպրակները ու շարժվե՛լ։ Կնանիք, դեն քաշվեցեք, կարիք չկա այստեղ թացություն առաջացնել։

Լուկինիչնան իր կյանքում առաջին անգամ համբուրեց Միրոն Գրիգորևիչի շիկամազ ձեռքը, կտրվեց նրանից։

Եզան սահնակը հրապարակի միջով դանդաղ սողաց դեպի Դոն։

Յոթ հոգի կալանավորները ու երկու միլիցիոներ քայլում էին սահնակի ետևից։ Կապելով քոշը, Ավդեիչը ետ մնաց և ապա ջահելի պես վազ տվեց սահնակին հասնելու։ Մատվեյ Կաշուլինը քայլում էր որդու կողքից։ Մայդաննիկովը և Կարալյովը քայլելիս ծխում էին։ Միրոն Գրիգորևիչը բռնել էր սահնակի քթոցից։ Բոլորի ետևից ծանր ու մեծ քայլվածքով գնում էր ծերունի Բոգատիրյովը։ Հանդիպական քամին ծածանում, ետ էր գցում սպիտակ, նահապետական մորուքի

ծայրերը, ու ասես հրաժեշտ տալով՝ թափահարում էր ուսերին գցած շարֆի ծոպերը։

Փետրվարյան այդ նույն ամպամած օրը արտասովոր մի բան պատահեց։

Վերջին ժամանակներում խուտորում սովորական էր դարձել օկրուգից զինվոր մարդկանց ժամանելը։ Ոչ ոքի չհետաքրքրեց այն, որ հրապարակում երևաց երկձի մի սահնակ՝ կառապանի կողքին ցրտից կուչ եկած մի ճամփորդով։ Սահնակը կանգ առավ Մոխովի տան մոտ։ Ճամփորդը իջավ. նա անշտապ շարժումներով, տարեց մի մարդ էր։ Շտկեց հեծելազորային երկար շինելի վրայից կապած զինվորական գոտին, ականջներից բարձրացրեց կազակական կարմիր, մորթե գլխարկի ականջակալները, ու մառուզերի փայտե տուփը բռնած, առանց շտապելու բարձրացավ մուտքի սանդուղքով։

Ռևկոմում գտնվում էին Իվան Ալեքսեևիչը ու երկու միլիցիոներ։ Եկվորը ներս մտավ առանց դուռը ծեծելու, շեմքի մոտ շփեց ալեխառն, կարճ ու լայնատարած մորուքը։ Թավ ձայնով ասաց.

— Նախագահին եմ ուզում տեսնել։

Իվան Ալեքսեևիչը կլորացած, թռչնային հայացքով նայում էր եկվորին, ուզում էր վեր կենալ, բայց չկարողացավ։ Նա ձկան պես միայն բաց էր անում բերանը, հորանջում ու մատներով տնտղում բազկաթոռի քերքրված կողերը։ Ներացած Շտոկմանը կազակական ականջավոր գդակի կարմիր, անհեթեթ բոլորքի տակից նայում էր նրան. Շտոկմանի նեղդիր աչքերը, չճանաչելով, նայում էին Իվան Ալեքսեևիչին, ու հանկարծ դողալով, կկոցվեցին, պայծառացան, անկյուններից կնճիռների ոստայններ սահեցին դեպի ալեզարդ քունքերը։ Նա մոտեցավ Իվան Ալեքսեևիչին, որ դեռ չէր կարողացել վեր կենալ, վստահորեն գրկեց նրան, ու համբուրելով, թաց մորուքը հպելով նրա դեմքին, ասաց.

— Գիտեի։ Մտածում էի՝ եթե կենդանի է մնացել, Տատարսկում նախագահ կլինի։

— Օսիպ Դավիդիչ, զարկ... Զարկ ինձ, շան որդուս։ Ջեմ հավատում աչքերիս,— լացակումած ասում էր Իվան Ալեքսեևիչը։

Արցունքներն այնքա՜ն չէին սազում նրա առնական թուխ դեմքին, որ նույնիսկ միլիցիոները շուռ տվեց դեմքը։

— Իսկ դու հավատա,— ժպտալով ու իր ձեռները մեղմակի ազատելով Իվան Ալեքսեևիչի ձեռներից, ասաց Շտոկմանը։— Այս ի՞նչ է, քեզ մոտ աթոռ է՞լ չկա նստելու։

— Նստիր այն բազկաթոռին... Բա դու ո՞րտեղից բուսար, ասա, է՛։

— Եկա բանակի քաղաքաժնի հետ... Տեսնում եմ, որ դու ոչ մի կերպ չես ուզում հավատալ, որ ես—ես եմ։ Ա՛յ քեզ զարմանալի մարդ։

Ժպտալով, ձեռքը թափթփացնելով Իվան Ալեքսեևիչի ծունկին, Շտոկմանը արագ-արագ վրա տվեց.

— Ամեն ինչ էլ շատ պարզ է, աղբերս։ Այստեղից ինձ տարան, դատապարտեցին, աքսորավայրում դիմավորեցի ռևոլյուցիան։ Մի ընկերոջ հետ Կարմիր գվարդիա կազմակերպեցինք, կռվեցի Դուտովի ու Կոլչակի դեմ։ Է-է՛, բարեկամս, այնտեղ ուրախալի գործեր եղան։ Հիմա, գիտե՞ս, մենք նրան քշել ենք Ուրալից դենը։ Եվ ահա ես ձեր ֆրոնտումն եմ։ Ութերորդ բանակի քաղաքաժինը ինձ ուղարկեց ձեր օկրուգը՝ աշխատանքի համար, որպես մի մարդու, որը մի ժամանակ ապրել է այստեղ, այսպես ասած՝ ծանոթ է պայմաններին։ Եկա Վեշենսկայա, ռևկոմում խոսեցի մարդկանց հետ և առաջին հերթին որոշեցի մեկնել Տատարսկիե Արի,— մտածում եմ,— ապրեմ նրանց մոտ, աշխատեմ, օգնեմ գործը կազմակերպելուն, իսկ հետո կգնամ։ Տեսնո՞ւմ ես, հին բարեկամությունը չի մոռացվում։ Լավ, մենք դրան դեռ կանդրադառնանք, իսկ այժմ եկ խոսենք քո մասին, դրության մասին, ինձ կծանոթացնես մարդկանց ու իրադրության հետ։ Խուտորում բջիջ կա՞։ Ովքե՞ր են քեզ մոտ։ Ովքե՞ր են կենդանի մնացել։ Դեհ, ի՞նչ արած, ընկերներ... ինձ ու նախագահին մի ժամով թողեք միասին։ Փո՛ւ, գրողը տանի, խուտոր մտա թե չէ, հնի հոտն առա... Այո, ինչպիսի՜ ժամանակ էր առաջ և ինչպիսի՜ն է հիմա... Դեհ, պատմիր։

Երեք ժամից հետո Միշկա Կոշևոյը և Իվան Ալեքսեևիչը Շտոկմանին տարան նրա հին բնակարանը,— շլդիկ Լուկեշկայի տունը։ Քայլում էին ճանապարհի դարչնագույն մակերեսով։ Միշկան հաճախ բռնում էր Շտոկմանի շինելի թևքից, կարծես վախենալով, որ ահա Շտոկմանը կանջատվի ու կընչքանա կամ կանհետանա ուրվականի նման։

Լուկեշկան իր հին կենվորին կերակրեց շչիով, նույնիսկ հնությունից ծակծկված մի կտոր շաքար հանեց սնդուկի մի գաղտնի անկյունից։

Բալենու տերևներով պատրաստված թեյից հետո Շտոկմանը պառկեց վառարանի պառկելատեղում։ Նա լսում էր երկուսի խճողված պատմությունները, հարցեր էր տալիս, կրծոտում մուշտուկը և արդեն լուսադեմին աննկատելիորեն քնեց՝ ծխախոտը գցելով ֆլանելե կեղտոտ շապկի վրա։ Իվան Ալեքսեևիչը դեռ տասը րոպե շարունակեց խոսել, ուշքի եկավ՝ երբ իր հարցին Շտոկմանը խոմփոցով պատասխանեց, ու դուրս եկավ՝ քայլելով ոտների մատների վրա, արտասվելու չափ կարմրելով կոկորդից ժայթքող հազը զսպելու փորձերից։

— Հանգստացա՞ր,— կամացուկ, ասես խուտուտից ծիծաղելով, հարցրեց Միշկան, հենց որ իջավ մուտքի սանդուղքից։

Օլշանովը, որ ձերբակալվածներին տարել էր Վեշենսկայա, կեսգիշերին վերադարձավ ուղեկից սահնակով։ Նա երկար ծեծեց այն սենյակի պատուհանը, որտեղ քնած էր Իվան Ալեքսեևիչը։ Արթնացրեց։

— Ի՞նչ կա,— դուրս գալով հարցրեց քնից դեմքը ուռած Իվան Ալեքսեևիչը,— ինչի՞ ես եկել, ծրա՞ր կա։

Օլշանովը խաղացրեց մտրակը։

— Կազակներին գնդակահարեցին։

— Փչում ես, ի՛ժ։

— Մենք նրանց տեղ հասցրինք, միանգամից հարցաքննեցին ու դեռ օրը չմթնած, տարան սոճուտը... Ինքս տեսա։

Չկարողանալով ոտները հեշտությամբ անցկացնել թաղյակների մեջ, Իվան Ալեքսեևիչը հագնվեց, վազեց Շտոկմանի մոտ։

— Այսօրվա մեր ուղարկածներին գնդակահարել են Վեշ-

կիում։ Ես կարծում էի, թե նրանց բանտարկություն կտան, իսկ այդպես ո՞նց կլինի... Այդպիսով մենք այստեղ ոչինչ չենք անի։ Ժողովուրդը կհեռանա մեզանից, Օսի՛պ Դավիդովիչ... Այստեղ բանն այնպես չէ, ինչպես որ պետք է։ Ի՞նչ կարիք կար ոչնչացնել մարդկանց։ Հիմի ի՞նչ կլինի։

Նա սպասում էր, որ իրեն պես Շտոկմանն էլ կվրդովվի պատահած դեպքից, կվախենա հետևանքներից, բայց Շտոկմանը դանդաղ հագնելով շապիկը, դրա միջից գլուխը հանելով, ասաց.

— Դու մի գոռա։ Կզարթեցնես տանտիրուհուն...

Հագնվեց, ծխեց, խնդրեց մի անգամ էլ պատմել, թե ինչ պատճառներով էին ձերբակալվել յոթ հոգին, հետո մի փոքր սառն տոնով ասաց.

— Դու պետք է ըմբռնես ա՛յ թե ինչ, և պետք է լավ ըմբռնես։ Ֆրոնտը գտնվում է մեզանից հարյուր հիսուն վերստ հեռու։ Կազակության հիմնական մասսան դեպի մեզ թշնամաբար է տրամադրված։ Եվ դա այն պատճառով է, որ ձեր կուլակները, կազակ կուլակները, այսինքն ատամանները և այլ վերնախավը աշխատավոր կազակության աչքում ահագին հեղինակություն ունեն, այսպես ասած՝ կշիռ ունեն։ Ինչո՞ւ։ Դեհ, պետք է որ սա քեզ համար հասկանալի լինի։ Կազակները մի առանձին դաս են, զինվորականություն են։ Սերը դեպի աստիճանները, դեպի «հրամանատար հայրերը» պատվաստվել է ցարիզմի կողմից... Ինչպե՞ս է տրված մի զինվորական երգի մեջ. «Եվ ինչ որ մեզ հրամայեն հայր հրամանատարները, մենք գնում ենք, թրատում, խոցում, խփում»։ Այդպե՞ս է թե ինչ։ Ա՛յ, տեսնո՞ւմ ես։ Իսկ այդ հայր-հրամանատարները հրամայում էին ցրել գործադուլավոր բանվորներին... Երեք հարյուր տարի շշմեցրել են կազակների գլուխները։ Քիչ չէ։ Այո։ Իսկ տարբերությունը, ասենք, Ռյազանի նահանգի կուլակի և Դոնի, կազակ կուլակի միջև շատ մեծ է։ Ռյազանի կուլակը,— նրան սեղմել են,— ֆշշում է սովետական իշխանության դեմ, անզոր է, վտանգավոր է միայն մութ անկյունից։ Իսկ Դոնի կուլա՞կը։ Դա զինված կուլակ է։ Դա վտանգավոր ու թունավոր իժ է։ Ուժեղ է։ Նա ոչ միայն կֆշշա, մեզ արատավորող լուրեր կտարածի, կզբաղարտի մեզ, ինչպես քո տեսելով այդ անում

էին Կորշունովը և ուրիշները, այլև կփորձի բացահայտ կերպով դուրս գալ մեր դեմ։ Դե իհա՛րկե, նա կվերցնի հրացանը ու կխփի մեզ։ Քե՛զ կխփի։ Կաշխատի իր ետևից տանել նաև մնացած կազակներին, այսպես ասած՝ միջակ գույքատեր կազակին և նույնիսկ չքավորին։ Նա ձգտում է դրանց ձեռներով խփել մեզ։ Ուրեմն ի՞նչ։ Բռնվա՞ծ է մեր դեմ գործելիս։ Վերջացավ-գնաց։ Երկար խոսելու հարկ չկա,— գնդակահարե՛լ։ Եվ այստեղ չպետք է մեջտեղ բերել ափսոսանքը,— որպես թե լավ մարդ էր, էլի՛...

— Ես հո չեմ ափսոսում, ի՞նչ ես ասում,— Իվան Ալեքսեևիչը թափահարեց ձեռները,— ես վախենում եմ, որ մնացածները կխրտնեն մեզանից։

Շտոկմանը, որ մինչ այդ առերևույթ հանգստությամբ շփում էր սպիտակավուն մազերով ծածկված կուրծքը, տաքացավ, ուժով բռնեց Իվան Ալեքսեևիչի վերնաշապկի օձիքից ու նրան դեպի իրեն քաշելով, արդեն ոչ թե խոսում էր, այլ խռխռացնում՝ խեղդելով հազը.

— Չեն խրտնի, եթե նրանց ներշնչենք մեր դասակարգային ճշմարտությունը։ Աշխատավոր կազակները միայն մեզ հետ կարող են ընթանալ և ոչ թե կուլակության հետ։ Ա՛խ, դո՛ւ... Չէ՞ որ կուլակները նրանց աշխատանքո՛վ, նրանց աշխատանքով են ապրում, ճարպակալում... Ա՛խ, դու, թուլամո՛րթ։ Ետ ես մանել, նեխվել... Ես պետք է ըզբաղվեմ քեզնով։ Այսպես էլ դդում մա՞րդ։ Բանվոր տղա ես, բայց ինտելիգենտական բացբերանություն ես թույլ տալիս... ոնց որ մի որևէ քոսոտ էսէռ։ Տե՛ս, Իվան, զգույշ, հա՛-ա։

Բայց թողեց վերնաշապկի օձիքը, մի քիչ ժպտաց, օրորեց գլուխը, ու վառելով ծխախոտը, կուլ տվեց ծուխը, արդեն ավելի հանգիստ վերջացրեց խոսքը։

— Եթե օկրուգում չբռնոտենք ամենաակտիվ թշնամիներին, ապստամբություն կլինի։ Եթե իր ժամանակին, այժմ մեկուսացնենք նրանց, ապստամբություն կարող է չլինել։ Դրա համար պարտադիր չէ բոլորին գնդակահարել։ Պետք է ոչնչացնել միայն ջոջերին, իսկ մնացածներին, ասենք, գոնե ուղարկել Ռուսաստանի խորքը։ Բայց առհասարակ չպետք է քաշվել թշնամիներին ոչնչացնելուց։ «Ռևոլյուցիան ձեռնոց-

ներով չեն անում»,— ասել է Լենինը։ Արդյոք անհրաժեշտություն կա՞ր տվյալ դեպքում գնդակահարել այդ մարդկանց։ Ես կարծում եմ՝ այո։ Գուցե ոչ բոլորին, բայց, օրինակ, Կորշունովին ուղղելու կարիք չկար։ Դա պարզ է։ Բայց ահա Մելեխովը, թեև ժամանակավորապես, այնուամենայնիվ ծլել է։ Հարկավոր էր հենց նրան վերացնել մեջտեղից։ Նա ավելի վտանգավոր է, քան մնացածները միասին վերցրած։ Դա այդ հաշվի առ։ Այն խոսակցությունը, որ քեզ հետ նա ունեցել է գործկոմում,— վաղվա թշնամու խոսակցությունն է։ Իսկ առհասարակ այստեղ մտատանջվելու կարիք չկա։ Ֆրոնտներում մեռնում են բանվոր դասակարգի լավագույն զավակները։ Հազարներով են մեռնում։ Մենք նրանց համար ենք տխրում, և ոչ թե այնպիսիների համար, ովքեր սպանում են նրանց կամ առիթի են սպասում, որպեսզի հարվածեն թիկունքից։ Կամ նրանք կոչնչացնեն մեզ, կամ մենք՝ նրանց։ Երրորդ ճանապարհ չկա։ Այդպես, աչքիս լույս Ալեքսեևիչ։

XXIII

Պետրոն հենց նոր էր կեր տվել անասուններին ու տուն մտել՝ թաթմանները մաքրելով խոտի քիստերից։ Հենց այդ պահին ճռնչաց հաշտի դռան փականքը։

Սև, գորգանման շալով փաթաթված Լուկինիչնան ոտը շեմքից ներս դրեց։ Առանց բարև տալու, մանր քայլերով մոտեցավ խոհանոցի նստարանի մոտ կանգնած Նատալյային ու նրա առաջ ծունկ չոքեց։

— Մե՛րըս, սիրելիս, ի՞նչ է պատահել...— օտարոտի ձայնով ճչաց Նատալյան՝ փորձելով բարձրացնել մոր ծանրացած մարմինը։

Պատասխանի փոխարեն Լուկինիչնան գլուխը խփեց հողե հատակին, խուլ, աղիողորմ ձայնով լացեց մեռելի վրա.

— Ա-ա՛խ, ա-ազի-իզ ջան, իմ ազի-ի-իզ, ո՞ւմ հույսով թողիր մե-եզ...

Կնանիքը այնպե՛ս միահամուռ կերպով լաց եղան, երեխաները այնպիսի վժվժոց բարձրացրին, որ Պետրոն վառարանի վրայից վերցնելով ծխախոտի պարկը, շեշտակի դուրս թռավ հաշտը։ Նա արդեն գլխի ընկավ, թե ինչ էր եղել։ Մի քիչ կանգնեց մուտքի սանդուղքի հարթակում, ծխեց։ Տանը լռեցին լացողները, ու Պետրոն մեջքի վրա անհաճելի սարսուռ զգալով, մտավ խոհանոց։ Լուկինիչնան դեմքից չվերցնելով բոլորովին թրջված թաշկինակը, մղկտում էր.

— Գնդակահարեցին մեր Միրոն Գրիգորիչին... էլ կենդանի չէ թառլանս... Մենք որբ մնացինք... Հիմի մեզ հավերն է՛լ կուտեն...— Ու նորից անցավ գայլի ձայնին.— Փակվեցին նրա աչիկները... էլ չեն տեսնի լույս-աշխարհքը-ը՛-ը...

Դարյան ջուր էր տալիս նվաղած Նատալյային, Իլյինիչնան գոգնոցով չորացնում էր թշերը։ Օթախից, ուր պառկած էր հիվանդ Պանտելեյ Պրակոֆևիչը, կրճտալի տնքոց ու հազ էր լսվում։

— Խնամի ջան, ի սեր Քրիստոս-աստծո, ի սեր ստեղծողի, ազիզ ջան, գնա Վեշկի, բեր նրան թեկուզ մեռած։— Լուկինիչնան վերցնում էր Պետրոյի ձեռները, դրանք խելակորույս սեղմում իր կրծքին։— Բեր նրան... Ախ, ողորմած տիրամեր, ախ, չեմ ուզում, որ նա այնտեղ փտի առանց թաղվելու։

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ, խնամի,— Պետրոն նրանից ետ էր քաշվում ինչպես ժանդախտով բռնվածից,— ախր ո՞նց գտնեմ նրան։ Կյանքս ինձ համար ավելի թանկ է։ Ո՞րտեղ գտնեմ նրան։

— Մի մերժիր, Պետյուշկա, ի սեր Քրիստոսի, ի սեր Քրիստոսի...

Պետրոն ծամծմեց բեղերը և ի վերջո համաձայնվեց։ Որոշեց Վեշենսկում անցնել մի ծանոթ կազակի մոտ և նրա օգնությամբ փորձել փրկելու Միրոն Գրիգորևիչի դիակը։ Երեկոյան ճանապարհ ընկավ։ Խուտորում վառվում էին լույսերը, ու յուրաքանչյուր խրճիթում արդեն փսփսում էին նորությունը. «Կազակներին գնդակահարել են»։

Պետրոն կանգ առավ նոր եկեղեցու մոտ, հոր հետ մի գնդում ծառայած մի կազակի տանը, նրան խնդրեց օգնել՝

հոգի տակից հանելու իր խնամու դիակը։ Կազակը հաճույքով համաձայնվեց։

— Գնանք։ Ես գիտեմ այդ տեղը։ Խորունկ չեն թաղում։ Միայն թե ո՞նց գտնես նրան։ Այնտեղ հո մենակ նա չի։ Երեկ գդակահարեցին տասներկու դահիճ, որոնք կադետական իշխանության օրով մահապատիժ էին տալի մերոնց։ Միայն մի պայման,— հետո դու պետք է մի քառորդ արաղ առնես, լա՞վ։

Կեսգիշերին վերցնելով բահերը և տարթ կրելու ձեռքի խարակը, նրանք ստանիցայի եզրով, գերեզմանոցի միջով գնացին դեպի սոճիները, որոնց մոտ ի կատար էին ածվում դատավճիռները։ Ցյուն էր տեղում։ Եղյամնակալած կարմիր ուռը ճքճքում էր նրանց ոտների տակ։ Պետրոն ականջ էր դնում յուրաքանչյուր ձայնին ու մտքում անիծում էր իր ճանապարհորդությունը, Լուկինիչնային և նույնիսկ հանգուցյալ խնամուն։ Մատղաշ սոճիների առաջին խմբի մոտ, բարձր ավազաթմբից դենը կազակը կանգ առավ։

— Պետք է որ այստեղ, մոտիկում լինի...

Անցան էլի մի հարյուր քայլ։ Ստանիցայի շների մի ոհմակ ոռնոցով ու հաչոցով հեռացավ նրանցից։ Պետրոն դեն գցեց խարակը, խռպոտ շշնջաց.

— Գնանք ետ։ Ջհաննամը, ես դրա... Մեկ չի՞, թե որտեղ պիտի փտի։ Թյո՛ւ, ախր ի՞նչ գործ ունեի... Գրողի տարածը ստիպեց, էլի՛։

— Ինչի՞ վախեցար։ Գնա՛նք,— քմծիծաղ տվեց կազակը։

Հասան։ Կարմիր ուռի փռված, թառամած մի թփի կողքին ձյունը պինդ ճմռթված էր, ավազի հետ խառնված։ Նրանից ճառագայթաձև հեռանում էին մարդկային հետքերը ու շների շարվեշարան, ցանցակար հետքերը...

...Պետրոն շիկակարմրավուն մորուքից ճանաչեց Միրոն Գրիգորևիչին։ Նա, խնամու լաթագոտուց բռնած, դուրս քաշեց նրան, իրանը գցեց խարակի վրա։ Կազակը հաղալով ծածկում էր փոսը. վերցնելով խարակի բռնակներից, դժգոհ մռթմռթաց.

— Հարկավոր էր սահնակով գալ մինչև սոճիները։ Հիմարներ ենք մենք։ Այս խոզը հենց հինգ փութ կլինի։ Դե հիմի արի ու սլկալով գնա ձյան վրա։

Պետրոն տարածեց մեռելի փայտացած ոտները, վերցրեց խարակի բռնակները։

Մինչև լուսաբաց նա խմում էր կազակի խրճիթում։ Միրոն Գրիգորևիչը ծածկոցով փաթաթված, սպասում էր սահնակում։ Պետրոն հարբած վիճակում ձին կապել էր այդ նույն սահնակին, և ձին ամբողջ ժամանակ կանգնել էր սանձած գլուխը ծայրահեղ չափով երկարած, փնչալով, թափահարելով ականջները։ Զգալով մեռելի ներկայությունը, այնպես էլ չկերավ խոտը։

Արևելքը մի փոքր պարզվեց։ Պետրոն արդեն խուտորումն էր։ Նա գնում էր մարգագետնով, շտապ քշում սահնակը։ Ետևում Միրոն Գրիգորևիչի գլուխը թխկթխկում էր՝ դիպչելով սահնակի տախտակին։ Պետրոն մի-երկու անգամ կանգ առավ, մարգագետնի ճիլ խոտ դրեց նրա գլխի տակ։ Նա խնամուն ուղղակի տուն բերեց։ Մեռած տանտիրոջ առաջ դարպասը բացեց նրա սիրած դուստրը, Գրիպաշկան, ու նետվեց սահնակից դենը, ձնակույտի մեջ։ Պետրոն շալակեց խնամուն ինչպես ալյուրով լիքը ջվալ ու տարավ ընդարձակ խոհանոցը, զգուշությամբ իջեցրեց սեղանի վրա, որ վաղորոք ծածկված էր քաթանով։ Լուկինիչնան, որ արդեն թափել էր բոլոր արցունքները, թափթփված, հերարձակ գալարվում էր ամուսնու ոտների վրա, որոնք մահվան սպիտակ գուլպաներ էին հագած։

— Կարծում էի, որ դու քելելով կմտնես տուն, ա՛յ իմ տեր, ամա քեզ շալակով բերին,— հազիվ լսվում էր նրա շըշընջյունը ու հեկեկանքը, որ օտարոտի կերպով ծիծաղի էր նման։

Պետրոն, Գրիշկա պապի թևը բռնած, նրան դուրս բերեց օթախից։ Մերունին ամբողջովին դողում, ցնցվում էր, կարծես նրա ոտների տակ մորուտի պես երերվում էր հատակը։ Բայց սեղանին մոտեցավ կտրիճաբար, կանգնեց մեռելի գլխավերևում։

— Հը՛, բարև, Միրոն։ Ա՛յ թե ոնց հանդիպեցինք, որդյակս...— խաչակնքեց, համբուրեց դեղին կավով կեղտոտված, սառն ճակատը։— Միրոնուշկա, շուտով՝ ես է՛լ...— նրա ձայնը բարձրացավ մինչև աղիողորմ ճիչը։ Կարծես վախենալով բերանից մի բան թռցնելուց, Գրիշկա պապին ճաթ-

պիկ, ոչ-ծերունական շարժմամբ ձեռքը տարավ բերանին, ընկավ սեղանին։

Փղձկոցը գայլի ճարպկությամբ բռնեց Պետրոյի կոկորդը։ Նա կամացուկ դուրս ելավ բակը ու մոտեցավ մուտքի սանդուղքի մոտ կանգնեցրած ձիուն։

XXIV

Դոնը խորունկ, հանդարտ դետափոսերից ելնում, ցրիվ հոսանք է ընդունում։ Հոսանքը այնտեղ գանգրանում է, գալարվում։ Դոնը ընթանում է ճոճվելով, չափածո, մարմանդ հոսանքով։ Ավազոտ, պինդ հատակի վրա վտառներով արածում են սևափորիկները. ստերլետը գիշերով դուրս է գալիս ծանծաղուտները՝ խայտալու համար, տիղմի առափնյա կանաչ վերնախցերում թպրտում է գետածածանը։ Թառափը և շիղաձուկը հետամտում են սպիտակ ձկան, լոքոն փորփրում է խեցիները. մեկ էլ տեսար շուռ տվեց ջրի կանաչ մի քուլա, երևաց լուսնի համատարած լույսի տակ, շարժեց ոսկեհուր, փայլուն պոչը ու էլի գնաց լայնաճակատ, բեղավոր գլխով քչփորելու խեցիների կուտակները, որպեսզի առավոտյան դեմ կիսաքուն վիճակում պառկի որևէ սև, ջրասույզ ծառի տակին։

Բայց այնտեղ, ուր նեղ է հունը, գերված Դոնը քերքրում է հատակը, խորունկ ճեղք բաց անում, խուլ մռնչոցով շեշտակի քշում փրփուր հագած, սպիտակաբաշ ալիքները։ Բարձրաբերձ հրվանդանների տակին, խորխորատներում հոսանքը ջրապտույտ է առաջացնում։ Ջուրը այնտեղ կախարդոց, սարսափելի պտույտ է անում. նայում ես ու չես կշտանում նայելուց։

Կյանքը հանգիստ օրերի շարանից թափվեց խորխորատի մեջ։ Եռաց Վերին-Դոնի օկրուգը։ Բախվեցին երկու հոսանքները, տարբեր ճանապարհներ բռնեցին կազակները, ու հորդեց, պտտվեց հորձանուտը։ Երիտասարդներն ու չքավորները վարանում էին, լռում, էլի դեռ խաղաղություն էին սպասում սովետական իշխանությունից, իսկ ծերերը հարձակման էին դիմում, արդեն բացահայտ խոսում այն մասին,

թե կարմիրներն ուզում են գլխովին ոչնչացնել կազակությունը։

Փետրվարի 19-ին Իվան Ալեքսեևիչը Տատարսկում ժողով հավաքեց։ Հակառակ սպասածի, շատ մարդ եկավ։ Գուցե դա այն պատճառով էր, որ Շտոկմանը ռևկոմին առաջարկել էր ընդհանուր ժողովում ամենաչքավոր տնտեսությունների վրա բաժանել այն գույքը, որ մնացել էր սպիտակների հետ փախած վաճառականներից։ Ժողովին նախորդեց աղմկալից մի բացատրություն օկրուգային աշխատողներից մեկի հետ։ Նա եկել էր Վեշենսկուց, գրավված հագուստը վերցնելու լիազորություններով։ Շտոկմանը նրան բացատրեց, որ հիմա ռևկոմը չի կարող հանձնել հագուստը, որովհետև հենց նախորդ օրը երեսունից ավելի տաք հագուստ էր տրվել վիրավոր ու հիվանդ կարմիրբանակայինների տրանսպորտին։ Եկվոր երիտասարդ տղան խիստ բարձրացնելով ձայնը, հարձակվեց Շտոկմանի վրա.

— Ո՞վ քեզ թույլ տվեց բաժանել գրավված հագուստը։

— Մենք ոչ ոքից թույլտվություն չենք հարցրել։

— Բայց դու ի՞նչ իրավունք ունեիր հափշտակելու ժողովրդական սեփականությունը։

— Դու մի գոռա, ընկեր, և հիմարություններ մի՛ ասա։ Ոչ ոք ոչինչ չի հափշտակել։ Մենք մուշտակները տվել ենք սահնակավարներին ու ստորագրություններ վերցրել, որպեսզի նրանք, կարմիրբանակայիններին հասցնելով հետևյալ էտապային կայանը, տրված հագուստը ետ բերեն։ Կարմիրբանակայինները կիսամերկ էին, և նրանց ուղարկել միայն շինելներով կնշանակեր ուղարկել մեռնելու։ Ես ինչպե՞ս կարող էի չտալ, մանավանդ որ հագուստը առանց գործածության թափված էր մառանում։

Նա խոսում էր հուզմունքը զսպելով, և գուցե խոսակցությունը հաշտությամբ վերջանար, բայց երիտասարդը սառեցնելով ձայնը, վճռականապես հայտարարեց.

— Դու ո՞վ ես. ռևկոմի նախագա՞հն ես։ Ես քեզ ձերբակալում եմ։ Գործերը հանձնիր տեղակալին։ Հենց հիմա քեզ կուղարկեմ Վեշենսկայա։ Դու այստեղ գույքի կեսը գուցե գողացել ես, իսկ ես...

— Դու կոմունի՞ստ ես,— ծուռ նայելով, մեռելի պես գունատված, հարցրեց Շտոկմանը։

— Քո գործը չի։ Միլիցիոնե՛ր, վերցրու դրան և իսկույն տար Վեշենսկայա։ Ստորագրությամբ կհանձնես օկրուգային միլիցիային։

Երիտասարդը հայացքով չափեց Շտոկմանին։

— Իսկ այնտեղ մենք կխոսենք քեզ հետ։ Դու պատասխան կտաս, ինքնագլուխ մարդ։

— Ա՛յ ընկեր, ցնդվե՞լ ես, ինչ է։ Գիտե՞ս թե ինչ...

— Ո՛չ մի խոսք։ Լռե՛լ։

Իվան Ալեքսեևիչը, որ չէր կարողացել վեճի ընթացքում գեթ մի խոսք ասել, տեսավ, թե ինչպես Շտոկմանը դանդաղ, սարսափելի շարժմամբ ձեռքը տարավ պատից կախված մաուզերին։ Սարսափը առկայծեց երիտասարդի աչքերում։ Զարմանալի արագությամբ նա քամակով բացեց դուռը, ընկնելով՝ մեջքի վրա ներքև գլորվեց մուտքի սանդուղքի բոլոր աստիճաններից ու փովելով սահնակի վրա, երկար ժամանակ, մինչև որ կանցներ հրապարակը, հրում էր սահնակավարի մեջքը ու շարունակ ետ նայում՝ ըստ երևույթին վախենալով հետապնդումից։

Ռևկոմում քրքիջը զլնգալով խփեց պատուհաններին։ Միծաղկոտ Դավիդկան ջղաձգաբար թավալվում էր սեղանի վրա։ Բայց Շտոկմանի կոպը դեռ երկար ցնցվում էր ջղերի լարումից, աչքերը շլում էին։

— Ա՛յ քեզ սրիկա։ Թյո՛ւ, ստոր մարդ,— կրկնում էր նա՝ դողդոջուն մատներով փաթաթելով ծխախոտը։

Նա Կոշևոյի և Իվան Ալեքսեևիչի հետ գնաց ժողովի։ Հրապարակը լեփ-լեցուն էր։ Իվան Ալեքսեևիչը նույնիսկ սրտի վատ դող զգաց. «Մի բան կա, որ նրանք այդպես հավաքվել են... Ամբողջ խուտորը հրապարակումն է»։ Բայց նրա երկյուղն անցավ, երբ, գլխարկը հանելով, մտավ բոլորակի մեջ։ Կազակները սիրով ճանապարհ տվին։ Դեմքերը զուսպ էին, ոմանց աչքերը նույնիսկ ժպտում էին։ Շտոկմանը նայեց կազակներին։ Նա ուզում էր խաղաղացնել մթնոլորտը, ամբոխի հետ խոսակցության բռնվել։ Իվան Ալեքսեևիչի պես նա էլ հանեց իր կարմիր գդակը, բարձրաձայն ասաց.

— Ընկեր կազակներ, անցել է մեկ ու կես ամիս, երբ ձեզ մոտ սովետական իշխանություն հաստատվեց։ Բայց մինչ այժմ մենք, ռևկոմը ձեր կողմից նկատում ենք ինչ-որ անվստահություն դեպի մեզ, նույնիսկ ինչ-որ թշնամություն։ Դուք չեք հաճախում ժողովներին, ձեր մեջ պտտվում են ամեն տեսակ լուրեր, անհեթեթ լուրեր գլխովին գնդակահարությունների մասին, ճնշումների մասին, որ իբր թե ձեր դեմ գործադրում է սովետական իշխանությունը։ Ժամանակն է, որ մենք, ինչպես ասում են, սրտանց խոսենք, ժամանակն է, որ ավելի մոտենանք միմյանց։ Դուք ինքներդ եք ընտրել ձեր ռևկոմը։ Կոտլյարովը և Կոշևոյը ձեր խուտորի կազակներն են և ձեր մեջ չի կարող անհամաձայնություն լինել։ Ամենից առաջ ես վճռականապես հայտարարում եմ, որ կազակների մասսայական գնդակահարությունների մասին մեր թշնամիների տարածած լուրերը ոչ այլ ինչ են, եթե ոչ զրպարտություն։ Այդ զրպարտությունը տարածողների նպատակը պարզ է,— կազակներին կռվեցնել սովետական իշխանության հետ, ձեզ նորից մղել դեպի սպիտակները։

— Կասես գնդակահարություններ չկա՞ն։ Բա յոթ հոգուն ի՞նչ արեցիք,— բղավեցին ետին շարքերից։

— Ընկերներ, ես չեմ ասի, որ գնդակահարություններ չկան։ Մենք գնդակահարել ենք և պետք է գնդակահարենք սովետական իշխանության թշնամիներին, բոլոր նրանց, ում խելքին կփչի մեր վզին փաթաթել կալվածատիրական իշխանությունը։ Դրա համար չէր, որ մենք տապալեցինք ցարին, վերջացրինք պատերազմը Գերմանիայի հետ, ազատագրեցինք ժողովրդին։ Ի՞նչ տվեց ձեզ պատերազմը Գերմանիայի հետ։ Հազարավոր սպանված կազակներ, որբեր, այրիներ, ավերածություն...

— Ճիշտ է։

— Դու այդ դրուստ ես ասում։

— ...Մենք կողմնակից ենք, որ պատերազմ չլինի,— շարունակեց Շտոկմանը։— Մենք ժողովուրդների եղբայրության կողմնակից ենք։ Իսկ ցարական իշխանության օրով կալվածատերերի ու կապիտալիստների համար ձեր ձեռքերով հողեր էին նվաճվում, որպեսզի դրանով հարստանային նույն կալվածատերերն ու գործարանատերերը։ Ահա ձեր

կողքին կար կալվածատեր Լիստնիցկին։ Նրա պապը ութ հարյուր տասներկու թվականի պատերազմին մասնակցելու համար չորս հազար դեսյատին հող էր ստացել։ Իսկ ձեր պապերը ի՞նչ ստացան։ Նրանք իրենց կյանքն էին կորցնում գերմանական հողում։ Նրանք արյունով ողողեցին այդ հողը։

Հրապարակը դժժաց։ Աղմուկը կամաց-կամաց հանդարտվեց, հետո էլ միանգամից որոտաց.

— Ճիշտ է...

Շտոկմանը գդակով սրբեց ճաղատացող գլխի քրտինքը ու, լարելով ձայնը, գոչեց.

— Բոլոր նրանց, ովքեր զինված ձեռք կբարձրացնեն բանվորա-գյուղացիական իշխանության դեմ, մենք կոչնչացնենք։ Ձեր խուտորի այն կազակները, որոնք գնդակահարվել են ռևտրիբունալի դատավճռով, մեր թշնամիներն էին։ Դուք բոլորդ այդ գիտեք։ Բայց ձեզ, աշխատավորներիդ հետ, այն մարդկանց հետ, ովքեր համակրում են մեզ, մենք կգնանք միասին ինչպես վար անող եզները, կգնանք ձեռք-ձեռքի տված։ Միահամուռ կերպով կվարենք ու կտափանենք հողը նոր կյանքի համար, որպեսզի բոլոր հին մոլախոտերը, մեր թշնամիներին, դուրս շպրտենք արտավարից, որպեսզի նրանք նորից արմատներ չարձակեն, որպեսզի չխեղդեն նոր կյանքի աճը։

Շտոկմանը զուսպ աղմուկից, աշխուժացած դեմքերից հասկացավ, որ իր ճառով հուզել էր կազակների սրտերը։ Նա չսխալվեց, սրտանց խոսակցություն սկսվեց։

— Օսիպ Դավիդովիչ, մենք քեզ լավ գիտենք, քանի որ դու մի ժամանակ ապրել ես մեզ մոտ, դու ոնց որ թե մերոնցից լինես։ Առանց մեզանից վախենալու ճիշտ բացատրի, թե նա, այդ իշխանությունը, մեզանից ինչ է ուզում։ Մենք, իհարկե, նրա կողմն ենք, մեր տղերքը թողին ֆրոնտները, բայց մենք անգետ մարդիկ ենք, ամենևին գլուխ չենք հանում նրանից...

Երկար ու անհասկանալի խոսում էր ծերուկ Գրյազնովը, դես ու դեն էր ընկնում, աղվեսի ճարպկություն բանեցնում իր խոսքերի մեջ, ըստ երևույթին վախենալով, որ բերանից մի բան կթռցնի։ Կոնատ Ալյոշկա Շամիլը էլ չհամբերեց.

— Կարելի՞ է մի խոսք ասել։

— Ասա,— թույլ տվեց խոսակցությունից հուզված Իվան Ալեքսեևիչը։

— Ընկեր Շտոկման, դու ինձ առաջուց ասա՝ կարո՞ղ եմ խոսել այնպես, ինչպես ուզում եմ։

— Խոսիր։

— Ինձ չե՞ք բռնի, հը՞։

Շտոկմանը ժպտաց, լուռ թափահարեց ձեռքը։

— Մենակ թե չհերսոտեք, հա՛-ա։ Ես իմ կարճ խելքով, ոնց որ կարող եմ, այնպես էլ կխոսեմ։

Նրա եղբայր Մարտինը ետևից քաշում էր նրա չեքմենի դատարկ թևը, վախեցած շշնջում.

— Սուս արա, սարսաղ։ Մի խոսա, էլի, թե չէ նրանք քո հախիցը կգան։ Ցուցակի մեջ կընկնես, Ալյոշկա։

Բայց կոնատը ուշադրություն չդարձրեց նրա վրա. ցընցելով այլանդակված թուշը, թարթելով աչքերը, երեսով դարձավ դեպի հրապարակը։

— Պարոն կազակներ, ես կասեմ, իսկ դուք դատ արա՛ք մեզ, դրուստ խո՞սք եմ ասում, թե գուցե մոլորվում եմ.— Նա զինվորական ձևով շուռ եկավ կրունկների վրա, դարձավ դեպի Շտոկմանը, խորամանկորեն թարթեց կկոցած աչքը.— Ես այսպես եմ հասկանում. թե որ խոսում ես, դուզ խոսի։ Թե որ խփում ես, թարս խփի։ Ու ես հիմի կասեմ, թե մենք բոլորս, կազակներս, ինչ ենք մտածում և ինչի համար ենք նեղանում կոմունիստներից... Այ, դու, ընկեր, ասացիր, թե դուք հողագործ կազակների դեմ չեք գնում, ովքեր որ ձեզ թշնամիներ չեն։ Դուք ոնց որ թե հարուստների դեմ եք, չքավորների կողմը։ Հապա, ասա, ճի՞շտ էր, որ գնդակահարեցին մեր խուտորցիներին։ Կորշունովի համար չեմ խոսա,— նա ատաման էր, ամբողջ կյանքումը ուրիշի կոնակին նստած՝ ման էր գալի, իսկ Փչան Ավդեիչին ինչո՞ւ գնդակահարեցին։ Բա Մատվեյ Կաշուլինի՞ն, Բաղատիրյովի՞ն, Մայդաննիկովի՞ն։ Բա Կարալյովի՞ն։ Նրանք էլ մեզ պես էին, անգետ, հասարակ, անշառ։ Նրանց սովորեցրել էին մահ բռնել և ոչ թե գիր կարդալ։ Նրանցից ոմանք գրի սև ու սպիտակն էլ էին չոկում։ Այբ, բեն,— ահա և նրանց ամբողջ ուսումը։ Ու եթե այդ մարդիկ բերաններից մի վատ բան էին թռցրել, մի՞թե նրանց պետք էր գնդակահարել.— Ալյոշկան

չունչ առավ, ընկավ դեպի առաջ։ Չեքմենի դատարկ թևքը ընկավ կրծքին, բերանը մի կողմ ծռվեց.— Դուք տարաք նրանց, ովքեր սարսաղավարի դուրս էին տվել, մահով պատժեցիք, իսկ վաճառականներին ձեռ չեք տալիս։ Վաճառականները ձեզ մոտ փողով փրկել են իրենց կյանքը։ Իսկ մենք փրկվելու փող չունենք, մենք մեր ամբողջ կյանքումը հողն ենք փորփրում, ու մեր գրպանները դատարկ են մնում։ Նրանք, որոնց գնդակահարեցին, կարելի է վերջին ՀԷՆ էլ գոմից դուրս բերեին ու տուրը տային, միայն թե կենդանի մնային, բայց նրանցից ռազմատուգանք չպահանջեցին։ Նրանց տարան ու ջնջեցին գլուխները։ Մենք հո բոլորս էլ գիտենք, թե Վեշկիում ինչ է կատարվում։ Այնտեղ վաճառականները, տերտերները—բոլորն էլ ողջ-առողջ են։ Կարգինում էլ է այդպես։ Մենք լսում ենք, թե չորս բոլորը ինչ է կատարվում։ Բարի անունը կորչում է մթնում, իսկ չար անունը՝ աշխարհքով մեկ թնդում։

— Ճի՛շտ է,— ետևից բղավեց մեկը։

Աղմուկը սաստկացավ, կուլ տվեց Ալյոշկայի խոսքերը, բայց վերջինս մի փոքր սպասեց և ուշադրություն չդարձնելով Շտոկմանի բարձրացած ձեռքի վրա, շարունակեց աղաղակել.

— Ու մենք հասկացանք, որ սովետական իշխանությունը գուցեև լավ է, ամա կոմունիստները, որոնք պաշտոններ են վարում, ուզում են մեզ խեղդել մի դալ ջրի մեջ։ Նրանք մեզ վնասում են ինը հարյուր հինգ թվականի համար, մենք այս խոսքերը լսել ենք կարմիր գինվորներից։ Ու մենք մեր մեջ այսպես ենք դատում. կոմունիստները, ուզում են մեզ ոչնչացնել, բոլորովին ջնջել։ Այնպես, որ Դոնումը կազակի իզն ու թոզն էլ չմնա։ Ահա քեզ իմ խոսքը։ Հիմի ես ոնց որ թե հարբած լինեմ. ինչ որ մտածում եմ, ասում եմ։ Իսկ մենք բոլորս էլ հարբած ենք լավ կյանքից, ձեզանից, կոմունիստներից ստացած վիրավորանքից։

Ալյոշկան սուզվեց կիսամուշտակների ծովի մեջ, ու հրապարակում երկար ժամանակ փռվեց շփոթված լռությունը։ Շտոկմանը սկսեց խոսել, բայց ետին շարքերից բղավողները ընդհատեցին նրան.

— Ճիշտ է։ Կազակները նեղանում են։ Դուք լսեցեք, թե

խուտորներում հիմի ինչ երգեր են մոգոնել։ Ամեն մարդ սիրտ չի անի խոսքերով ասել իր միտքը, իսկ երգերը երգվում են, երգը հո չե՞ս պատժի։ Մոգոնել են այս տեսակ մի «խանձորիկ».

Սամավարն է եռում, ձուկը տապակվում,
Կադետները երբ որ գան, պիտի գանգատվենք։

— Ուրեմն գանգատվելու բան կա։

Մեկը անտեղի ծիծաղեց։ Ամբոխը ծածանվեց։ Փսփսոց, խոսակցություններ...

Շտոկմանը զայրանալով, գդակը քաշեց աչքերին ու, գրպանից հանելով մի ժամանակ Կոշևոյի գրած ցուցակը, գոչեց.

— Ո՛չ, ճիշտ չէ։ Վիրավորվելու հիմք չունեն այն մարդիկ, ովքեր ռևոլյուցիայի կողմն են։ Ահա թե ինչի համար են գնդակահարել ձեր խուտորցիներին, սովետական իշխանության թշնամիներին։ Լսեցեք,— և նա սկսեց կարդալ ընդմիջումներով, պարզ ու հասկանալի.

ՑՈՒՑԱԿ

Սովետական իշխանության ձերբակալված թշնամիների, որոնք ուղարկվում են 15-րդ Ինգենյան դիվիզիայի ռետրիբունալին կից հետաքննական հանձնաժողովի տնօրինության.

№ № ը/կ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ինչի համար է ձերբակալված	Ծանոթություն
1	Կարշուհով Միրոն Գրիգորևիչ	Նախկ. տուսման, հարուստ, ուրիշի աշխատանքով հարստացած։	
2	Սինիլին Իվան Ավտեևիչ	Գրոպազանդ էր անում, որ տապալեն սովետական իշխանությունը։	
3	Կաշուլին Մատվեյ Իվանովիչ	Նույնպես։	
4	Մայդանենկով Սեմյոն Գավրիլով	Ուսադիրներ էր կպցնում ուսերին, փողոցում բռավում էր իշխանության կեմ։	

№ № ը/կ	Ազգանուն, անուն, հայրանուն	Ինչի համար է ձերբակալված	Ծանոթություն
5	Մելեխով Պանտելեյ Պրակոֆիևիչ	Ներկայացուցիչների ժողովի անդամ։	
6	Մելեխով Գրիգորի Պանտելեևիչ	Փոխ-յասավուլ, դեմ է տրամադրված։ Վտանգավոր է։	
7	Կաշուլին Անդրեյ Մատվեևիչ	Մասնակցել է Պադտյոլկովի կարմիր կազակների գնդակահարությանն։	
8	Բոդովսկով Ֆեդոտ Նիկիֆորով	Նույնպես։	
9	Բոգատիրյով Արխիպ Մատվեևիչ	Եկեղեցու երեցփոխ։ Պահակատնակում հանդես է եկել իշխանության դեմ։ Ժողովրդին գրգռող և կոնտրռևոլյուցիոներ։	
10	Կարալյով Զախար Լեոնտև	Հրաժարվեց գենք հանձնելուց։ Անհուսալի է։	

Երկու Մելեխովների և Բոդովսկովի անունների դիմաց՝ ծանոթության մեջ, որը չկարդաց Շտոկմանը, պարզ նշված էր.

«Սովետական իշխանության տվյալ թշնամիները չեն ուղարկվում, որովհետև նրանցից երկուսը բացակայում են, մոբիլիզացված են բնակչական սայլերը տանելու համար, փամփուշտներ են տարել Բոկովսկայա կայանը։ Իսկ Մելեխով Պանտելեյը տիֆով հիվանդ պառկած է։ Ժամանելուց հետո երկուսն անմիջապես կձերբակալվեն ու կուղարկվեն օկրուգ։ Երրորդն էլ—հենց որ ոտքի ելնի»։

Ժողովը մի քանի ակնթարթ լռեց, իսկ հետո տեղացին բղավոցները.

— Ճիշտ չէ։

— Սուտ ես ասում, նրանք խոսել են իշխանության դեմ։

— Այդպիսի բաների համար տեղն է։

— Բա չփակեի՞ն նրանց բերանները։

— Բամբասանքներ են նրանց դեմ։

Ու Շտոկմանը նորից խոսեց։ Նրան կարծես թե ուշադրությամբ էին լսում և նույնիսկ հավանության բացականչություններ անում, բայց երբ վերջում նա հարց դրեց սպիտակների հետ փախածների գույքը բաժանելու մասին,— լռությամբ պատասխանեցին։

— Էլ ի՞նչ եք բերաններդ ջուր առել,— սրտնեղությամբ հարցրեց Իվան Ալեքսեևիչը։

Ամբոխը ցրիվ եկող կոտորուքի նման աճապարեց դեպի ելքը։ Զքավորներից մեկը, Սյոմկան, Զուգուն մականունով,— տատանվելով ուզեց առաջ գալ, բայց հետո միտքը փոխեց ու թափահարեց թաթմանը.

— Տերերը կգան, դե արի ու պատասխան տուր...

Շտոկմանը փորձում էր համոզել, որ չցրվեն, իսկ Կաշնվոյը թունդ սփրթնելով, շշնջաց Իվան Ալեքսեևիչի ականջին.

— Ես որ ասում էի, որ չեն վերցնի։ Հիմա ավելի լավ է վառել այդ գույքը, քան թե նրանց տալ...

XXV

Կոշևոյը մտրակը մտազբաղ չմփացնելով սապոգի ճիտքին, գլուխը կախած, դանդաղ բարձրանում էր Մոխովի տան սանդուղքով։ Դռան մոտ, միջանցքում, հենց հատակի վրա թամքեր էին կուտակված։ Երևում էր, որ քիչ առաջ մարդիկ էին եկել. ասպանդակներից մեկի վրա դեռ չէր հալվել ձիավորի ներբանով մամլված, գոմաղբից դեղնած ձյան կտորը. դրա տակ պլպլում էր ջրի լճակը։ Կոշևոյն այս բոլորը տեսավ՝ քայլելով պատշգամբի մաշված հատակի վրա։ Նրա հայացքը սահեց կտրտած կողեր ունեցող, կապույտ, քանդակավոր վանդակի, եղյամի խավոտ շերտի վրայով, որ յասամանագույն եզրակով փռված էր պատի մոտ. նա հարևանցիորեն պատուհաններին էլ նայեց, որոնք քրտնել էին ներսից, մուգ էին ինչպես եզան փուչիկը։ Բայց այն ամենը, ինչ որ նա տեսնում էր, գիտակցության մեջ չէր տպավորվում, սահում էր անորոշ, ճապաղորեն, ինչպես

երազում։ Գրիգորի Մելեխովի նկատմամբ կարեկցությունն ու ատելությունը ցանցել էին Միշկայի պարզ սիրտը...

Ռևկոմի նախասենյակում, ծխախոտի, ձիասարքի, հալված ձյան թունդ հոտ էր գալիս։ Աղախինը, որ սպասավորներից միակն էր տանը մնացել, երբ Մոխովները փախել էին Դոնեցի մյուս կողմը,— վառում էր հոլանդական վառարանը։ Հարևան սենյակում բարձր ծիծաղում էին միլիցիոներները։ «Ծիծաղելի է նրանց համար, ուրախության ժամանակն են գտել...»— վիրավորված մտածեց Կոշևոյը քայլելով սենյակի կողքից, և արդեն սրտնեղությամբ վերջին անգամ մտրակով շրմփացրեց սապոգի ճիտքին, առանց թխկացնելու մտավ տան անկյունի սենյակը։

Իվան Ալեքսեևիչը կոճակներն արձակած, բամբակաբաճկոնով նստել էր գրասեղանի առաջ։ Սև փափախը կըտրիճաբար թեքել էր կողքի, իսկ դեմքը քրտնած էր, հոգնած ու մտահոգ։ Նրա կողքին, պատուհանի գոգի վրա, էլի նույն երկար, հեծելազորային շինելով նստած էր Շտոկմանը։ Նա Կոշևոյին ժպիտով դիմավորեց, ձեռքի շարժմամբ հրավիրեց նստել իր մոտ։

— Հը՛, ի՞նչ կա, Միխայիլ։ Նստիր։

Կոշևոյը նստեց, տարածեց ոտները։ Շտոկմանի հետաքրքրվող-հանգիստ ձայնը զգաստացուցիչ ազդեցություն թողեց նրա վրա։

— Մի հավատարիմ մարդուց լսեցի... Երեկ երեկոյան Գրիգորի Մելեխովը տուն է եկել։ Բայց ես չգնացի նրանց մոտ։

— Դու այդ առթիվ ի՞նչ ես մտածում։

Շտոկմանը պապիրոս էր փաթաթում ու երբեմն շեղակի նայում Իվան Ալեքսեևիչին՝ սպասելով պատասխանի։

— Նստեցնե՞նք նրան թե ոնց,— աչքերը արագ թարթելով, անվճռականորեն հարցրեց Իվան Ալեքսեևիչը։

— Դու մեզ մոտ ռևկոմի նախագահն ես... տես, էլի՛։

Շտոկմանը ժպտաց, խուսափուկ թոթվեց ուսերը։ Նա գիտեր այնպիսի հեգնանքով ժպտալ, որ ժպիտը մտրակի հարվածից քիչ չէր դաղում։ Իվան Ալեքսեևիչի կզակը քըրտնեց։

Ատամներն իրար սեղմելով, նա կտրուկ ասաց.

— Ես նախագահ եմ, ուրեմն նրանց երկուսին, Գրիշկային էլ, եղբորն էլ կձերբակալեմ ու կուղարկեմ Վեշկի։

— Գրիգորի Մելեխովի եղբորը հազիվ թե միտք ունի ձերբակալել։ Նրա թիկունքին սարի պես կանգնած է Ֆոմինը։ Իսկ քեզ հայտնի է, թե սա ինչ հիանալի կարծիք ունի նրա մասին... Իսկ Գրիգորիին պետք է բռնել այսօր, հենց այժմ։ Վաղը մենք նրան կուղարկենք Վեշենսկայա, իսկ նրան վերաբերող նյութերը հենց այսօր ձիավոր միլիցիայով ուղարկիր ռևտրիբունալի նախագահին։

— Գուցե երեկոյա՞ն բռնենք Գրիգորիին, հը՞, Օսիպ Դավիդովիչ։

Շտոկմանը հազաց և միայն հազի մոլուցքից հետո, սրբելով մորուքը, հարցրեց.

— Ինչո՞ւ երեկոյան։

— Ավելի քիչ խոսակցություններ կլինեն...

— Էհ, գիտես, դա... դատարկ բան է։

— Միխայիլ, վերցրու երկու մարդ ու հենց հիմա գնա ձերբակալիր Գրիշկային։ Նրան առանձին կնստեցնես։ Հասկացա՞ր։

Կոշևոյը իջավ պատուհանի գոգից, գնաց միլիցիոներների մոտ։ Շտոկմանը քայլեց սենյակում՝ քստքստացնելով մաշված, սպիտակագորշ թաղյակները. սեղանի դիմաց կանգ առնելով, հարցրեց.

— Հավաքած զենքի վերջին մասնակը ուղարկեցի՞ր։

— Ոչ։

— Ինչո՞ւ։

— Երեկ չհասցրի։

— Ինչո՞ւ։

— Այսօր կուղարկենք։

Շտոկմանը նոթոտվեց, բայց իսկույն բարձրացրեց հոնքերը, արագ հարցրեց։

— Մելեխովները ի՞նչ են հանձնել։

Իվան Ալեքսեևիչը լարելով հիշողությունը, կկոցեց աչքերը, ժպտաց։

— Նրանք հանձնել են երկու հրացան և երկու նագան։ Դու կարծում ես դա բոլո՞ր է։

— Ո՛չ։

— Օհո՛, քեզնից ավելի անխելք մարդ գտար, էլի՛։

— Ես էլ եմ այդպես կարծում.— Շտոկմանը թեթևակի սեղմեց շրթունքները.— եթե ես քո տեղը լինեի, ձերբակալությունից հետո նրա մոտ մանրակրկիտ խուզարկություն կկատարեի։ Դու ի միջի այլոց ասա պարետին։ Դու մտածելը մտածում ես, բայց նաև կատարել է հարկավոր։

Կոշևոյը վերադարձավ կես ժամից հետո։ Նա արագ վազեց պատշգամբով, վայրագորեն շրխկացրեց դռները ու, կանգնելով շեմքին, շունչ առնելով, բղավեց.

— Ո՞նց չէ, գրողը տանի։

— Ինչպե՞ս-ես,— արագ գնալով նրա կողմը, սարսափելի չռելով աչքերը, հարցրեց Շտոկմանը։ Նրա երկար շինելը գալարվում էր ոտների միջև, փեշերը խփվում էին թաղյակներին։

Կոշևոյը նրա մեղմ ձայնից թե էլի ինչ-որ մի բանից կատաղեց, գոռգոռաց.

— Դու աչքերդ մի պլշի...— Ու մայր հայհոյեց.— ասում են Գրիշկան գնացել է Սինգին, մորքուրի մոտ, ես այստեղ ի՞նչ մեղք ունեմ։ Բա դուք ո՞րտեղ էիք, մեխե՞ր էիք դուրս քաշում։ Հը՛մ։ Գրիշկային ձեռքից բաց թողիք, իսկ ինձ վրա գոռալու կարիք չկա։ Իմ գործը հորթի գործ է, կեր ու պառկիր։ Բա դուք ի՞նչ էիք մտածում.— ընկրկելով իրեն հուպ մոտեցող Շտոկմանի առաջ, նա մեջքը դեմ արեց վառարանի հախճասալե կողին ու ծիծաղեց.— Մի՛ վրա տա, Օսիպ Դավիդովիչ, մի՛ վրա տա, թե չէ աստված վկա կգարկեմ։

Շտոկմանը մի փոքր կանգնեց նրա կողքին, ճքացրեց մատները. նայելով Միշկայի սպիտակ ատամներին, ժպիտով ու նվիրվածությամբ նայող նրա աչքերին, քրթմնջաց.

— Սինգինի ճանապարհը գիտե՞ս։

— Գիտեմ։

— Էլ ինչո՞ւ վերադարձար, և դեռ ասում ես, թե գերմանացու դեմ ես կռվել... Փնթի՛.— և շինծու արհամարհանքով կկոցեց աչքերը։

Փռվել էր տափաստանը, ծածկվել կապտավուն ծխանման մուժով։ Դոնի մերձակա մի բլուրի ետևից բարձրանում

էր ծիրանավառ լուսինը։ Նա ժլատ լույս էր սփռում՝ չխավարեցնելով աստղերի ֆոսֆորային լույսը։

Սինգին տանող ճանապարհով վեց ձիավորներ էին գնում։ Ձիերը վազում էին թեթև վարգով։ Կոշևոյի կողքին, դրագունական թամքի վրա ոստոստում էր Շտոկմանը։ Դոնի բարձր, շիկակարմիր նժույգը, որ նստել էր նա, շարունակ խաղում էր, փորձում էր կծել ձիավորի ծունկը։ Շտոկմանը անխռով տեսքով ինչ-որ ծիծաղելի բան էր պատմում, իսկ Միշկան, կռթնելով թամքի ղաշին, ծիծաղում էր մանկական զրնգուն ծիծաղով, շնչասպառ լինում ու զկոտում, շարունակ փորձում նայել Շտոկմանի բաշլուղի տակ, նրա մռայլ, ուշադիր աչքերին։

Սինգինում մանրակրկիտ խուզարկությունը ոչ մի արդյունք չտվեց։

XXVI

Գրիգորիին ստիպեցին Բոկովսկուց գնալ Զեռնիշևսկայա։ Նա վերադարձավ մեկուկես շաբաթից հետո։ Իսկ նրա ժամանելուց երկու օր առաջ ձերբակալել էին հորը։ Պանտելեյ Պրակոֆևիչը տիֆից հետո նոր էր սկսել քայլել։ Վեր էր կացել է՛լ ավելի ճերմակած, ոսկրոտ, ինչպես ձիու կմախքը։ Մազերի արծաթավուն կարակուլը թափվում էր, ասես ցեցն էր կերել այն, մորուքը խճճվել էր ու եզրերից ամբողջովին ծածկվել սպիտակությամբ։

Պատրաստվելու համար տասը րոպե ժամանակ տալով, միլիցիոնները տարավ նրան։ Նախքան Վեշենսկայա ուղարկելը Պրակոֆևիչին բանտարկեցին Մոխովի տան գետնահարկում։ Բացի նրանից, գետնահարկում, ուր տարածված էր անիսոնի խնձորների թունդ հոտը, նստած էին էլի ինը ծերունի և մի պատվավոր դատավոր։

Պետրոն այդ նորությունը հաղորդեց Գրիգորիին, և վերջինս իր սահնակով դեռ չէր մտել բակը, երբ լսեց նրա խորհուրդը.

— Դու, աղբերս, ետ դարձրու քաշանները... Քո մասին հարցուփորձ էին անում, թե երբ ես գալու։ Գնա տաքացիր,

տես երեխաներիդ, իսկ հետո ես քեզ կտանեմ Ռիբնի խուտորը, այնտեղ կթաքնվես ու կսպասես միառժամանակ։ Որ հարցնեն, կասեմ՝ գնացել է Սինգին, մորքուրի մոտ։ Այսանցից յոթ հոգու գնդակահարեցին, լսե՞լ ես։ Չլինի՞ թե հորքս հետ էլ այդպիսի բան պատահի... Իսկ քո մասին խոսելն էլ ավելորդ է։

Գրիգորին կես ժամ նստեց խոհանոցում, հետո էլ, թամբելով իր ձին, գիշերամտին սլացավ Ռիբնի։ Մելեխովների հեռավոր մի ազգականը, սրտաբաց մի կազակ, Գրիգորիին թաքցրեց տարթերի դեզի մեջ։ Այնտեղ Գրիգորին ապրեց երկու օր՝ իր որջից դուրս գալով միայն գիշերները։

XXVII

Փետրվարի 25-ին, Սինգինից ժամանելու երկրորդ օրը, Կոշևոյը մեկնեց Վեշենսկայա, որ իմանար, թե երբ է լինելու կոմբջիջի ժողովը։ Նա, Իվան Ալեքսեևիչը, Եմելյանը, Դավիդկան ու Ֆիլկան որոշել էին ձևակերպել իրենց կուսակցական պատկանելությունը։

Միշկան իր հետ տանում էր կազակների հանձնած զենքի վերջին մասնակը, դպրոցի բակում գտնված մի գնդացիր և Շտոկմանի նամակը օկրուգային ռևկոմի նախագահին։ Վեշենսկու ճանապարհին, գետառում նապաստակներ երևացին։ Պատերազմի տարիներին դրանք այնքան էին բազմացել, և այնքան շատ նապաստակներ էին քոչել այդ կողմերը, որ հանդիպում էին ամեն մի քայլափոխում։ Ոնց որ բոշխի դեղին փունջը, այնպես էլ նապաստակի կոնակը։ Մեկ էլ տեսար սահնակի ճռճռոցից վեր թռավ գորշ, սպիտակափորիկ նապաստակը, ու թարթելով սև խավով բոլորազարդված պոչը, թփթփալով վազեց խոպանում։ Ձիերը քշող Եմելյանը թողնում էր երասանները, վայրագորեն գոռում.

— Զարկ, դեհ, խփիր դրան։

Միշկան թռչում էր սահնակից, ծնկում, մի պահունակ փամփուշտ էր արձակում գորշ, գլորվող գնդիկի վրա, հիասթափված նայում, թե ինչպես գնդակները նրա շուրջ ձյան սպիտակ փոշի էին բարձրացնում, իսկ գնդիկը արագացնում

էր վազքը, թռչում ու թափում քոլերի ձնածածկոցը ու չքանում էր թավուտում։

...Ռևկոմում անհեթեթ խառնաշփոթություն էր։ Մարդիկ անհանգիստ վազվզում էին, ձիավոր սուրհանդակներ էին գալիս, փողոցներն ապշեցնում էին սակավամարդությամբ։ Միշկան զարմանում էր՝ չհասկանալով անհանգիստ իրարանցման պատճառը։ Նախագահի տեղակալը Շտոկմանի նամակը անփույթ կերպով խոթեց գրպանը, և այն հարցի վրա, թե պատասխան կլինի՞, բարկությամբ մոթմոթաց.

— Ձե՛ռ քաշիր, է՞, գրողը տանի։ Ձեզ հետ գլուխ չունեմ։

Հրապարակում վխտում էին պահակային վաշտի կարմիրբանակայինները։ Սուխ արձակելով, անցավ մի դաշտային խոհանոց։ Հրապարակում տարածվեց տավարի մսի և դափնու տերևի հոտը։

Կոշևոյը մտավ ռևտրիբունալ, ծանոթ տղաների մոտ ծխելու, հարցրեց.

— Այս ի՞նչ խառնափնթորություն է ձեզ մոտ։

Տեղական գործերի քննիչներից մեկը՝ Գրոմովը, դժկամ պատասխանեց նրան.

— Կազանսկում ինչ-որ անհանգստություն է տիրում։ Չգիտես, սպիտակնե՞րն են ճեղքել ֆրոնտը, թե՞ կազակներն են ապստամբել։ Լուր կա, որ երեկ այնտեղ կռիվ է եղել։ Հեռախոսային կապը կտրված է։

— Ձիավոր ուղարկեիք այնտեղ։

— Ուղարկեցինք։ Չվերադարձավ։ Այսօր էլ մի վաշտ գնաց Ելանսկայա։ Այնտեղ նույնպես դրությունը լավ չէ։

Նրանք նստել էին պատուհանի մոտ, ծխում էին։ Դրսում (նրանք գտնվում էին տրիբունալի զբաղեցրած վաճառականի մի շքեղաշուք տան մեջ) ձյուն էր տեղում։

Խուլ կրակոցներ ճայթեցին կայարանից դենը, սոճիների մոտ, Ջոռնայայի ուղղությամբ։ Միշկան սփրթնեց, վայր գցեց ծխախոտը։ Տանը գտնվողները բոլորն էլ դուրս նետվեցին։ Կրակոցներն արդեն լիահնչուն ու ծանրակշիռ էին ճայթում։ Համաբարկը խլացրեց սաստկացող հատ-հատ կրակոցները, սվսվացին գնդակները, շրխկալով զարկվեցին մարագների պատերին, դարպասին։ Բակում վիրավորվեց մի կարմիրբանակային։ Գրոմովը վազեց հրապարակ՝

ճմռթելով թղթերը ու դնելով գրպանները։ Ռևկոմի մոտ շարք էին կանգնում պահակային վաշտի մնացորդները։ Կարճ, դաբաղած կաշվե կիսամուշտակով հրամանատարը մակույկի նման թրևում էր կարմիրբանակայինների մեջ։ Նա վաշտը շարասյունով, վազեվազ տարավ դեպի Դոն, վայրէջքը։ Կործանարար խուճապ սկսվեց։ Հրապարակում մարդիկ էին վազվզում։ Գլուխը տնկած, քառատրոփով, առանց ձիավորի սլացավ թամբած մի ձի։

Շվարած Կոշևոյը ինքն էլ չէր հիշում, թե ինչպես ընկավ հրապարակ։ Նա տեսավ, թե ինչպես Ֆոմինը սև յափնջիով, հողմի արագությամբ դուրս թռավ եկեղեցու ետևից։ Նրա բարձրամարմին ձիու պոչից մի գնդացիր էր կապված։ Անվակները չէին պտտվում, գնդացիրը քարշ էր գալիս կողքի ընկած, սրարշավ ընթացող ձին դես ու դեն էր գցում այն։ Ֆոմինը թամքի ղաշին կոթնած, չքացավ սարի տակ՝ իր ետևից թողնելով ձյան փոշու արծաթե մուժը։

«Դեպի ձիերը»,— սա եղավ Միշկայի առաջին միտքը։ Նա կուզեկուզ անցավ փողոցների խաչմերուկները, ոչ մի անգամ շունչ չառավ։ Սիրտը նվաղեց, մինչև որ նա հասավ բնակարանը։ Եմելյանը լծեց ձիերը, վախից չէր կարողանում կցել քաշանները։

— Այս ի՞նչ է, Միխայիլ, ի՞նչ բան է,— թոթովում էր նա՝ դողալուց ճքճքացնելով ատամները։ Լծեց, կորցրեց երասանները։ Սկսեց շարշարվել,— արձակվել էր ձախ կողմի ձիու անուրի փոկը։

Նրանց զբաղեցրած տան բակի դուռը տափաստանի կողմն էր։ Միշկան նայում էր սոճիներին, բայց այնտեղից հետևազորի շղթաներ չէին երևում, չէր սրարշավում հեծելազորը։ Ինչ-որ մի տեղ կրակում էին, փողոցները դատարկ էին, ամեն ինչ առօրյա էր ու ձանձրալի։ Ու միևնույն ժամանակ սարսափելի բան էր կատարվում. հեղաշրջումը փաստ էր դառնում։

Մինչ Եմելյանը ձիերով էր զբաղված, Միշկան տափաստանից աչքը չէր կտրում։ Նա տեսավ, թե ինչպես սև վիրարկուով մի մարդ վազեց մատուռի, այն վայրի կողքից, ուր դեկտեմբերին վառվել էր ռադիոկայանը։ Այդ մարդը սլանում էր ամբողջ ուժով, ցածր, կռանալով դեպի առաջ,

ձեռները կրծքին սեղմած։ Կոշևոյը վերարկուից ճանաչեց քննիչ Գրոմովին։ Նա կարողացավ նաև տեսնել, թե ինչպես ցանկապատի ետևից երևաց մի ձիավորի կերպարանքը։ Միշկան սրան էլ ճանաչեց։ Դա Վեշենսկու կազակ Չերնիշկինն էր, երիտասարդ, հայտնի սպիտակագվարդիական։ Չերնիշկինից հարյուր սաժեն տարածությամբ բաժանված Գրոմովը վազելիս մի երկու անգամ ետ նայեց, գրպանից հանեց ատրճանակը։ Ճայթեց մի կրակոց, հետո մյուսը։ Գրոմովը թռավ ավազաթմբի վրա, էլի կրակեց նագանից։ Չերնիշկինը ձիուց թռավ դրա վազքի պահին. սանձը բռնած, հանեց հրացանը, պառկեց ձնակույտի տակին։ Առաջին կրակոցից հետո Գրոմովը քայլեց կողքի ընկած, ձախ ձեռքով բռնելով ցախի ճյուղերից։ Շրջանցելով ավազաթումբը, նա երեսնիվայր ընկավ ձյան մեջ։ «Սպանեց»,— Միշկան սարսուռ զգաց։ Չերնիշկինը լավագույն հրաձիգն էր և գերմանական պատերազմից բերած ավստրիական կարաբինով ավրեպ խփում էր ամեն մի նպատակի, ինչպիսի հեռավորություն էլ որ դա ունենար։ Արդեն սահնակ նստած, դարպասից դուրս գալով, Միշկան տեսավ, թե ինչպես Չերնիշկինը ձիով սլացավ դեպի ավազաթումբը, թրով կտրատեց սև վերարկուն, որ շեղակի փռած էր ձյան վրա։

Դոնի վրայով Բազկիի կողմը սլանալը վտանգավոր էր։ Դոնի սպիտակ, լայնարձակ տարածության վրա ձիերն ու ձիավորները հիանալի թիրախ կլինեին։

Այնտեղ արդեն ընկել էին պահակային վաշտի երկու կարմիրբանակայիններ, գնդակներով խոցված։ Այս պատճառով էլ Եմելյանը շուտ եկավ լճի վրայով դեպի անտառը։ Սառույցը թաց ձյունով էր ծածկված, ձիերի սմբակների տակից սվսվալով թռչում էին ջրիկ ձյան փաթիլներն ու գնդերը, սահնակի կողերի տակ գամված երկաթաձողերը խոր ակոսներ էին գծում։ Մինչև խուտոր կատաղի թափով էին սլանում։ Բայց երկաթուղու բարյերի մոտ Եմելյանը քաշեց երասանները, քամուց դողված երեսը դարձրեց դեպի Միշկան։

— Ի՞նչ անենք։ Բա որ մեզ մոտ էլ այսպիսի խառնակչություն լինի՞։

Միշկայի աչքերը լցվեցին թախիծով։ Դիտեց խուտորը։

Դոնին ամենամոտ փողոցով սլանում էին երկու ձիավոր։ Ըստ երևույթին Կոշևոյին թվաց, որ դրանք միլիցիոներներ են։

— Քշիր խուտոր։ Էլ ո՞ւր պիտի գնանք,— վճռականորեն ասաց նա։

Եմելյանը մեծ դժկամությամբ քշեց ձիերը։ Անցան Դոնը։ Բարձրացան խուտոր։ Վազեվազ ընդառաջ էին գալիս Անտիպ Փչանովը ու խուտորի վերին ծայրից էլի երկու ծերուկ։

— Ա՛խ, Մի՛շկա,— Եմելյանը Անտիպի ձեռքին հրացան տեսավ, քաշեց երասանները, կտրուկ ետ դարձավ։

— Կանգնե՛լ։

Կրակոց։ Եմելյանը ընկավ՝ ձեռքից բաց չթողնելով երասանները։ Ձիերը թափով խրվեցին ցախե ցանկապատի մեջ։ Կոշևոյը թռավ սահնակից։ Վազեվազ մոտենալով նրան, սայթաքելով քոշեր հագած ոտների վրա, Անտիպը ճռճվեց, կանգ առավ, հրացանի կոթը դեմ արեց ուսին։ Ընկնելով ցանկապատին, Միշկան ծերունիներից մեկի ձեռքում տեսավ երեքմատանի եղանի սպիտակ ատամները։

— Ձա՛րկ դրան։

Կոշևոյն ուսը դաղվելուց առանց ճչալու ընկավ ներքև, ձեռներով ծածկեց աչքերը։ Ծերունին ծանր շնչելով թեքվեց նրա վրա, եղանով խոցեց նրան։

— Վե՛ր կաց, շուն։

Մնացած բոլորը Միշկան հիշում էր ինչպես երազում։ Անտիպը հեկեկալով նետվում էր նրա վրա, քաշքշում կուրծքը...

— Հորքս մեռցրիր, հա՞-ա... Թողեք, բարի մարդիկ, թողեք սատկացնեմ սրան, հովացնեմ սիրտս։

Նրան ետ էին քաշում։ Խմբվեց ամբոխը։ Մեկը հորդորող, խռպոտ ձայնով ասում էր.

— Թողեք տղին։ Ձեր դոշին խաչ չկա՞, ի՞նչ է։ Թո՛ղ, Անտիպ։ Հերդ ետ չի գա, իսկ դու մարդուն զուր տեղը կկործանես... Ցրվեցեք, աղբեր-տղերք։ Հրե՛ն այնտեղ, պահեստում շաքար են բաժանում։ Գնացեք...

Միշկան աչքերը բացեց երեկոյան, նույն ցանկապատի տակ։ Սուր ցավում էր եղանով խոցված կողքը։ Եղանի ատամները ծակել էին կիսամուշտակը ու բամբակաբաճկոնը, ոչ շատ խոր խրվել մարմնի մեջ։ Բայց խոցված տեղերը ցավում էին, դրանց վրա գունդ-գունդ մակարդվել էր արյունը։ Միշկան ոտքի ելավ, ականջ դրեց։ Խուտորում ըստ երևույթին ապստամբների պարեկներ էին շրջում։ Հատուկենտ կրակոցներ էին ճայթում։ Շները հաչում էին։ Հեռվից մոտեցող խոսակցություն էր լսվում։ Միշկան գնաց Դոնի վրա անասունների կոխոտած շավղով։ Հասավ յառի գլուխը ու սող տվեց ցանկապատերի տակին, ձեռներով կառչում էր ձյան կոշտ կեղևից, պոկ էր գալիս ու ընկնում։ Նա չէր ճանաչում այդ տեղերը, յա բախտ էր գնում։ Մարմինը դողում էր ցրտից, ձեռները սառչում էին։ Հենց ցուրտն էլ Կոշևոյին մեկի դարպասից ներս մղեց։ Միշկան բացեց ուռից գործած փակով մի դռնակ, մտավ ետին բակը։ Զախ կողմում երևում էր հարդանոցը։ Նա մտավ այնտեղ, բայց իսկույն քայլեր ու հազ լսեց։

Մեկը, ճռճռացնելով թաղյակները, գալիս էր հարդանոց։ «Հիմի կսպանեն»,— անտարբեր, ասես կողմնակի մարդու մասին, մտածեց Կոշևոյը։ Մի մարդ կանգնեց դռան մթին, լայն շեմքին։

— Ո՞վ է այստեղ։

Ձայնը թույլ էր ու կարծես վախեցած։

Միշկան անցավ պատի ետևը։

— Ո՞վ ես, է՞,— հարցրին արդեն ավելի անհանգիստ ու բարձր։

Ճանաչելով Ստեպան Աստախովի ձայնը, Միշկան հարդանոցից դուրս եկավ։

— Ստեպան, ես եմ, Կոշևոյը... Փրկիր, ի սեր աստծու։ Կարո՞ղ ես աչ ոքի բան չասել։ Օգնիր։

— Ա՛յ թե ով է...— Ստեպանը, որ տիֆից հետո հենց նոր էր ոտքի ելել, թուլացած ձայնով էր խոսում։ Նիհարությունից երկարած նրա բերանը ժպտում էր լայն ու անվրստահ։— Դեհ, ի՞նչ արած, գիշերս անցկացրու, իսկ ցերեկը մի ուրիշ տեղ գնա։ Բա դու ո՞նց ընկար այստեղ։

Միշկան առանց պատասխանելու շոշափեց նրա ձեռքը, մտավ հարդի շեղջի մեջ։ Մյուս երեկոյան, հենց որ իջավ

մինչաղը, նա հանդուգն քայլի դիմելով, գնաց տուն, ծեծեց պատուհանը։ Մայրը բացեց հաշտի դուռը, լացեց։ Նրա ձեռները տնտղում, օղակում էին Միշկայի պարանոցը, իսկ գլուխը լացից դողում էր որդու կրծքի վրա։

— Գնա, ի սեր Քրիստոսի գնա, Միշենկա։ Այսօր առավոտյան կազակներ եկան։ Ամբողջ տունը տակնուվրա արին, քեզ էին փնտրում։ Անտիպկա Փշանը մտրակով ծեծեց ինձ։ «Տղիդ թաքցնում ես, հա՞-ա,— ասում է,— ափսոս որ նրան միանգամից չսպանեցինք»։

Թե որտեղ էին յուրայինները, Միշկան այդ չէր պատկերացնում։ Զգիտեր, թե խուտորում ինչ էր կատարվում։ Մոր կարճ պատմածից հասկացավ, որ Դոնի շրջակա բոլոր խուտորները ապստամբել էին, որ Շտոկմանը, Իվան Ալեքսեևիչը, Դավիդկան ու միլիցիոներները ձի էին նստել ու փախել, իսկ Ֆիլկան ու Տիմաֆեյը դեռ երեկ, կեսօրին սպանվել էին հրապարակում։

— Գնա՛, այստեղ կգտնեն քեզ...

Մայրը լալիս էր, բայց նրա վշտալի ձայնը անհողդողդ էր։ Երկար ժամանակվա ընթացքում առաջին անգամ լացեց Միշկան, երեխայի պես հեծկլտաց, բերանից պղպջակներ արձակեց։ Հետո թամբեց ծնած զամբիկը, որով մի ժամանակ ծառայում էր իբրև ձիարած, դուրս տարավ կալը, ետևից գնում էին քուռակը և մայրը։ Մայրը Միշկային նստեցրեց ձիուն, խաչակնքեց։ Զամբիկը դժկամորեն շարժվեց, երկու անգամ խրխնջաց՝ կանչելով քուռակին։ Ու երկու անգամն էլ Միշկայի սիրտը պոկ եկավ, ասես գլորվեց ներքև։ Բայց նա բարեհաջող կերպով բարձրացավ բլուրը, յորդա սլացավ Հետմանական ճանապարհով դեպի արևելք, Ուստ-Մեդվեդիցայի ուղղությամբ։ Մթին, հենց փախստականի գիշեր էր։ Զամբիկը հաճախ վրնջում էր, վախենալով, որ կկորցնի իր կաթնակերին։ Կոշևոյը ատամներն իրար էր սեղմում, սանձի ծայրով խփում նրա ականջներին, հաճախ կանգ էր առնում ունկնդրելու, թե արդյոք ետևից կամ առջևից ձիերի խուլ վազք չի՞ լսվում, արդյոք վրնջյունը չի՞ գրավել որևէ մեկի ուշադրությունը։ Բայց շուրջը խոր, հեքիաթային լռություն էր փռվել։ Կոշևոյը միայն լսում էր, թե

ինչպես քուռակը, օգտվելով կանգ առնելուց, մոր սև կուրծին կպնած, ետին տոտիկները ձյան մեջ թաղած, ծծում է ու ճպճպացնում, ու ձիու կռնակից զգում էր նրա պահանջկոտ հրոցները։

XXVIII

Տարթանոցը բռնված է չոր գոմաղբի, փտած ծղնոտի խոտի թափթփուկների սուր հոտով։ Ցերեկները գորշ լույս է ընկնում ճիլ խոտով ծածկված կտուրից։ Ցախե դռնից, ինչպես մաղի միջից, երբեմն նայում է արևը։ Գիշերը անթափանց խավար է։ Մկների ճստճստոց։ Լռություն...

Օրական մի անգամ, երեկոյան, տանտիրուհին ուտելիք էր բերում Գրիգորիին։ Տարթերի մեջ դրված էր դույլի տարողությամբ և ջրով լեցուն մի սափոր։ Ամեն ինչ տանելի կլիներ, բայց ծխախոտը վերջացավ։ Գրիգորին առաջին օրերը ծանր տանջվում էր, ու, այլևս չդիմանալով, առավոտները սողում էր հողե հատակի վրա, բռով հավաքում էր ձիու չոր թրիքը, փշրում ու ծխում։ Մի երեկո տանտերը կնկա հետ ուղարկեց ավետարանից պոկած երկու թերթ փտած թուղթ, մի տուփ լուցկի ու մի բուռ ծխելիք,— չոր իշաղուլտի և իր մշակած, չհասունացած դյուբեկ ծխախոտի արմատիկների խառնուրդ։ Գրիգորին ուրախ էր, ծխեց մինչև սիրտը խառնելը և առաջին անգամ պինդ քնեց խորդուբորդ տարթերի վրա, գլուխը փեշով փաթաթած, ինչպես թռչունը թևի տակ։

Առավոտյան նրան արթնացրեց տանտերը։ Սա վազելազ ընկավ տարթանոց, կտրուկ ձայն տվեց.

— Քնե՞լ ես, վեր կաց, Դոնը բարձրացել է...— ու փառփառ ծիծաղեց։

Գրիգորին դեզից ցած թռավ։ Նրա ետևից խուլ դղրդացով փուլ եկան տարթերի փթանոց քառակուսիները։

— Ի՞նչ է պատահել։

— Այս կողմից ապստամբել են ելանցիներն ու վեշենցիները։ Ֆոմինը և ամբողջ իշխանությունը Վեշկիից փախել են Տոկին։ Կարծեմ ապստամբել են Կազանսկայան, Շումի-

լինսկայան, Միգուլինսկայան։ Հասկացա՞ր թե բանը որտեղ է հասել։

Գրիգորիի ճակատի ու պարանոցի վրա ուռճացան երակացանցերը, ակնաբիբերը կանաչավուն կայծեր թափեցին։ Նա չէր կարող թաքցնել ուրախությունը. ձայնը դողաց, սև մատները աննպատակ սահեցին շինելի կոճակների վրայով։

— Բա ձեզ մո՞տ... խուտորո՞ւմ։ Ի՞նչ կա, ո՞նց է։

— Ոչինչ չի լսվում։ Տեսա նախագահին,— ծիծաղում է. «Իմ կարծիքով,— ասում է,— միևնույն է, թե ինչ աստծու կաղոթես, միայն թե աստված լինի»։ Դեհ, դուրս եկ քո որջից։

Նրանք գնացին խրճիթ։ Գրիգորին սաժենանոց քայլեր էր անում։ Կողքից աճապարում էր տանտերը, պատմում էր.

— Ելանսկում առաջինը ոտքի ելավ Կրասնոյարսկի խուտորը։ Երեկ չէ մյուս օրը Ելանսկու քսան կոմունները գնացին Կրիվսկոյ և Պլեշակովսկի, որ ձերբակալեն կազակներին, իսկ Կրասնոյարցիները իմացան այդ բանը, հավաքվեցին ու որոշեցին՝ «Մինչև ե՞րբ պետք է մենք տանենք ծաղը ու ծանակը. մեր հայրերին բռնում են, մեզ էլ կհասնեն։ Թամքեցեք ձիերը, գնանք ազատենք ձերբակալվածներին»։ Հավաքվեց մի տասնհինգ մարդ, բոլորն էլ կտրիճ տղերք։ Նրանց տարավ մարտական կազակ Ատլանովը։ Ունեին միայն երկու հրացան, ոմանք թուր, ոմանք նիզակ, ոմանք էլ դագանակ։ Դոնի վրայով հասան Պլեշակով։ Կոմունները հանգստանում էին Մելնիկովի բակում։ Կրասնոյարցիները հեծյալ շարքով գրոհ տվին բակի վրա, իսկ բակը շրջապատված է քարե ցանկապատով։ Նրանք դեմ առան դրան ու ետ փախան։ Կոմունները սպանեցին մի կազակի, ողորմի նրա հոգուն։ Ետևից խփեցին, նա պոկ եկավ ձիուց ու կախվեց մի ցախե ցակապատից։ Պլեշակովի կազակները նրան իր ձիով տարան ստանիցայի ախոռները։ Մտրակը պոկ չէր գալի խեղճի ձեռից... Ու սկսվեց գործը։ Այդ ժամանակ էլ եկավ սովետական իշխանության վերջը, ես դրա...

Խրճիթում Գրիգորին ագահությամբ կերավ նախաճաշի մնացորդները. տանտիրոջ հետ դուրս եկավ փողոց։ Փողոցների անկյուններում խումբ-խումբ կազակներ էին կանգնած, ասես տոն լիներ։ Գրիգորին ու տանտերը մոտեցան

այդպիսի խմբերից մեկին։ Իրեն պատասխան նրանց բարևվին, կազակները ձեռները տարան փափախներին, զուսպ վերաբերվեցին՝ հետաքրքրությամբ ու սպասողաբար դիտելով Գրիգորիի անծանոթ կերպարանքը։

— Սա մեր մարդն է, պարոն կազակներ։ Դուք սրանից չվախենաք։ Տատարսկու Մելեխովների մասին լսե՞լ եք։ Սա Պանտելեյի տղան է, Գրիգորին։ Ինձ մոտ թաքնվել էր, որ ազատվեր գնդակահարությունից,— հպարտությամբ ասաց տանտերը։

Հենց որ սկսվեց խոսակցությունը, կազակներից մեկը պատմեց, թե ինչպես ռեշետովցիները, դուբրովցիները և չերնովցիները Վեշենսկուց դուրս քշեցին Ֆոմինին, բայց այդ ժամանակ փողոցի ծայրում, որ հասնում էր սպիտակ, լայնաճակատ սարալանջին, երևացին երկու ձիավոր։ Նրանք սլանում էին փողոցով, կանգ առնում կազակների յուրաքանչյուր խմբի մոտ՝ շուռ տալով ձիերը, ու ինչ-որ գոռում էին, թափահարում ձեռքերը։ Գրիգորին ագահությամբ սպասում էր նրանց մոտենալուն։

— Դրանք մերոնցից չեն, ռիբինցիները չեն... Մի տեղից եկած սուրհանդակներ են,— ուշադիր նայելով՝ ասաց կազակը ու ընդհատեց Վեշենսկու գրավման մասին իր պատմածը։

Երկուսը անցնելով հարևան նրբանցքը, մոտ եկան։ Առջևինը, որ մի ծերունի էր չկոճկած կապայով, առանց գդակի, քրտնաթոր, կարմիր դեմքով ու ճակատին թափված ճերմակ գանգուրներով,— կտրիճաբար ետ տվեց ձին. բոլորովին մեջքի վրա ընկնելով, աջ ձեռքը պարզեց դեպի առաջ։

— Կազակնե՛ր, ի՞նչ եք փողոցներում կանգնել ոնց որ կնանիք,— լացակումած բղավեց նա։ Չար արցունքները խեղում էին նրա ձայնը, հուզմունքը դողացնում էր կարմիր թշերը։

Նրա տակին աշխույժ խայտում էր գեղեցիկ զամբիկը, որ շորս տարեկան էր, չծնած, շիկակարմիր, սպիտակաունգ, թել-թել պոչով ու պինդ, ասես պողպատից ձուլված ոտներով։ Փնչալով ու կծոտելով սանձի բերանոցը, նա պպզում էր, ցատկոտում ու ծառս լինում, խնդրում թուլացնել սանձը, որպեսզի դարձյալ սլանար շեշտակի, զրնգուն քառատրոփով, որպեսզի քամին դարձյալ ծալծլեր իր ականջ-

ները, սվսվար բաշի մեջ, որպեսզի սմբակների ողորկ կոնքերի տակ վերստին հեծկլտար սառնամանիքներից չորացած, ճքճքան գետինը։ Զամբիկի բարակ մաշկի տակ խաղում ու շարժվում էր յուրաքանչյուր հոդը և երակը։ Պարանոցի վրա ցնցվում էին երկայնակի, կլորավուն մկանունքները, դողում էր քթարմատի թափանցիկ, կարմրավուն ստորին ու միջին մասը, իսկ ուռուցիկ, սուտակափայլ աչքը շուռ տալով արյունամած սպիտակուցը, պահանջկոտ ու զայրագին նայում էր տիրոջը։

— Ի՞նչ եք կանգնել, խաղաղ Դոնի զավակներ,— մի անգամ էլ գոչեց ծերունին՝ հայացքը Գրիգորիից փոխադրելով մյուսների վրա.— ձեր հայրերին ու պապերին գնդակահարում են, ձեր գույքը վերցնում, ջհուդական կոմիսարները ծաղրում են ձեր հավատը, և դուք սեմիչկա եք շրթում և երգ ու պարի գնում, հա՞-ա։ Սպասում եք, որ ձեր վիզը պարա՞ն գցեն։ Մինչև ե՞րբ պետք է փեշերդ կարեք ձեր կնանոց փեշերին, հը՞։ Ելանսկու ամբողջ հողը մեծից մինչև փոքրը ոտքի է ելել։ Վեշենսկում դուրս են քշել կարմիրներին... Իսկ դո՛ւք, Ռիբինսկու կազակներ։ Ձեզ համար ձեր կյանքը էժանացե՞լ է, հա՞։ Թե՞ ձեր դամարներումը կազակական արյան տեղ մուժիկական կվաս է։ Ելե՛ք, զենք վերցրեք։ Կրիվսկոյ խուտորը մեզ ուղարկել է խուտորները ոտքի հանելու։ Ձի՛ նստեք, կազակնե՛ր, քանի ուշ չէ։— Նա խելագարված աչքերը հառեց մի ծերունու ծանոթ դեմքին, մեծ վիրավորանքով բղավեց.— Բա դու ինչի ես կանգնել, Սեմյոն Խրիստաֆորովիչ, հը՞։ Կարմիրները Ֆիլոնովի մոտ թրատեցին տղիդ, իսկ դու հանգիստ սյառկո՞ւմ ես վառարանի վրա, հը՞։

Գրիգորին մինչև վերջ չլսեց, նետվեց բակը։ Հարդանոցից վարգով դուրս բերեց երկար ժամանակ այնտեղ կանգնած ձին. արյունոտվելու չափ կտրատելով եղունգները, փորփրեց տարթերը, հանեց թամքը ու կատաղածի պես դուրս թռավ դարպասից։

— Գնացի՛նք, Քրիստոս փրկե,— կարողացավ նա բղավել դարպասին մոտեցող տանտիրոջը ու, ընկնելով թամքի առջևի ղաշին, ամբողջովին թեքվելով ձիու պարանոցին, փոչոցով մեկ ձյան փոշու սպիտակ, թաթառանման կեմ

բարձրացրեց՝ երկու կողմից մտրակելով ձին, ամբողջ թափով բաց թողնելով նրա դլուխը։ Նրա ետևից նստում էր ձյան մուժը, ոտների վրա ցատկոտում էին ասպանդակները, ընդարմացած ոտները քսմսվում էին թամքի թևերին։ Ասպանդակների տակ շեշտակիորեն թքթքում էին ձիու սմբակները։ Նա այնպիսի վայրագ, հսկայական ուրախություն, ուժերի ու վճռականության այնպիսի հորդում էր զգում, որ, իր կամքին հակառակ, կոկորդից լալագին, բուռնաթափ խորդյուն էր թռչում։ Նրա մեջ ազատություն էին ստացել գերված, թաքնված զգացմունքները։ Թվում էր, որ այսուհետև պարզ էր իր ուղին ինչպես լուսնի լուսավորված ճանապարհը։

Ամեն ինչ վճռված ու կշռադատված էր այն տաղտկալի օրերին, երբ նա գազանի նման թաքնվել էր տարթե որջում և գազանի նման ունկնդրում էր դրսի յուրաքանչյուր հընչյունին ու ձայնին։ Կարծես թե չէր էլ ապրել ճշմարտության որոնումների, դեգերումների, անցումների ու ներքին ծանր պայքարի օրերը։

Ամպի ստվերի նման սահել ու անցել էին այն օրերը, ու հիմա իր որոնումները իրեն ապարդյուն ու դատարկ էին թվում։ Ինչի՞ մասին էր մտածում։ Ինչո՞ւ էր իր հոգին շուրջկալի ժամանակ հալածվող գայլի նման դեգերում ելք փնտրելով, հակասությունները լուծելու համար։ Դուրս եկավ, որ կյանքը քմծիծաղ է տալիս, իմաստունորեն պարզ է։ Հիմա նրան արդեն թվում էր, որ դրա մեջ երբեք էլ չի եղել այնպիսի ճշմարտություն, որի թևի տակ ամեն ոք կարողանար ջերմանալ, ու ծայրահեղորեն զայրացած, նա մտածում էր՝ յուրաքանչյուր մեկն ունի իր ճշմարտությունը, իր ուղին։ Մի պատառ հացի համար, մի կտոր հողի համար, ապրելու իրավունքի համար միշտ էլ պայքարել են մարդիկ և պետք է պայքարեն՝ քանի դեռ նրանց լույս է տալիս արևը, քանի դեռ երակներում տաք արյուն է հոսում։ Պետք է կռվել այն մարդկանց դեմ, ովքեր ուզում են խլել կյանքդ, ապրելու իրավունքդ. պետք է կռվել ուժգնորեն, չդողալ գընդակահարվողի նման, իսկ ատելության հուրը, հաստատակամությունը կտա պայքարը։ Հարկավոր է միայն չսանձա-

հարել զգացումները, ազատություն տալ նրանց, ինչպես կատաղությանը,— և ուրիշ ոչինչ։

Կազակության ուղիները խաչաձևվեցին հողազուրկ, մուժիկական Ռուսիայի ուղիների հետ, բանվոր մարդկանց ուղիների հետ։ Զարկվե՛լ նրանց հետ։ Մահու գնով նրանց ոտների տակից պոկել Դոնի արգավանդ, կազակական արյունով ողողված հողը։ Մարզի սահմաններից քշե՛լ նրանց, ինչպես թաթարներին։ Ցնցել Մոսկվան, նրա վզին ամոթալի հաշտություն փաթաթել։ Նեղ կածանով իրար դեմ եկողները չեն անցնի. պետք է որ մեկն ու մեկը ցած գցի մյուսին։ Փորձը արված է. կարմիր գնդե՞ր են բաց թողել դեպի զորաց հողը, տեսե՞լ են դրա համը։ Դեհ, հիմա վերցրո՛ւ թուրը։

Կույր ատելությամբ բորբոքված, այդ մասին էր մտածում Գրիգորին, մինչդեռ ձին նրան տանում էր դոնի սպիտակաբաշ ծածկոցի վրայով։ Նրա մեջ մի ակնթարթ գալարվեց հակասությունը՝ «Հարուստները—աղքատների և ոչ թե կազակները Ռուսիայի դեմ... Միշկա Կոշևոյը և Կատլյարովը նույնպես կազակներ են, բայց մինչև ուղն ու ծուծը կարմիր են...» Բայց նա բարկությամբ ձեռք քաշեց այդ մտքերից։

Երևաց Տատարսկին։ Գրիգորին քաշեց սանձը, փրփուրի պղպջակներ թափող ձին քշեց թեթև վազքով։ Խուտորի ծայրին դարձյալ արագացրեց ընթացքը, ձիու կրծքով բացեց ցանկապատի դռնակը, ներս ընկավ բակը։

XXIX

Լուսաբացին հոգնատանջ Կոշևոյը մտավ Ուստ-Խոպերսկայա մեծ ստանիցայի մի խուտորը։ 4-րդ Զատամուրսկի գնդի ուղեկալը կանգնեցրեց նրան։ Երկու կարմիրբանակային նրան տարան շտաբ։ Ինչ-որ մի շտաբային աշխատող երկար ու անվստահությամբ հարցուփորձ էր անում նրան, փորձում էր շշկլեցնել, տալով այնպիսի հարցեր, ինչպես, օրինակ, հետևյալ հարցերը. «Իսկ ձեզ մոտ ո՞վ էր ռևկոմի նախագահ». «Ինչո՞ւ փաստաթղթեր չկան» և այլն։ Միշկան ձանձրացավ հիմար հարցերին պատասխանելուց։

— Դու ինձ մի չարչարի, ընկեր։ Կազակներն ինձ ավելի շատ են չարչարել, ամա բան չի գուրս եկել։

Նա բարձրացրեց շապիկը, ցույց տվեց եղանով խոցված կողը և փորի ստորին մասը։ Ուզում էր կծու խոսքով պաղել շտաբայինին, բայց այդ պահին ներս մտավ Շտոկմանը։

— Անառակ որդի, սատանի ճուտ.— նրա բասք ձայնը խզվեց, ձեռները չանչեցին Միշկայի մեջքը.— ի՞նչ ես սրան հարցուփորձ անում, ընկեր։ Աչք սա մեր տղան է։ Էլ ինչո՞ւ ես հիմարության պոչից բռնել։ Մարդ ուղարկեիր ինձ կամ Կատլյարովին կանչելու, պրծավ-գնաց, ու ոչ մի հարց... Գնանք, Միխայիլ։ Բայց ի՞նչպես ես կենդանի մնացել, ինչպե՞ս, ասա ինձ։ Աչք մենք քեզ ջնջել էինք կենդանի մարդկանց ցուցակից։ Կարծում էինք, որ ընկել ես հերոսի մահով։

Միշկան վերհիշեց, թե ինչպես իրեն գերի վերցրին, վերհիշեց իր անպաշտպան լինելը, սահնակում թողած հրացանը, ու տանջալից կերպով, արտասվելու չափ կարմրեց։

XXX

Գրիգորիի ժամանելու օրը Տատարսկում արդեն կազակների երկու հարյուրյակ էր կազմվել։ Ժողովում որոշել էին մոբիլիզացնել զենք կրելու ընդունակ բոլոր մարդկանց, տասնվեցից մինչև յոթանասուն տարեկան։ Շատերը զգում էին ստեղծված դրության անհուսալիությունը. հրապարակում գտնվում էր թշնամական, բոլշևիկացած Վորոնեժի նահանգը և Խոպերի կարմիր օկրուգը, հարավում՝ ռազմանավատում, որը շուտ-թայով, կարող էր իր հեղեղով ճզմել ապստամբներին։ Առանձնապես զգույշ մի շարք կազակներ չէին ուզում զենք վերցնել, բայց նրանց զոռով էին ստիպում։ Ստեպան Աստախովը կտրականապես հրաժարվեց կռվելուց։

— Ես չեմ գնա։ Վերցրեք ձին, ինչ ուզում եք արեք ինձ հետ, բայց ես չեմ ուզում հրացան վերցնել,— հայտարարեց նա առավոտյան, երբ նրա տունը մտան Գրիգորին, Խրիստոնյան ու Անիկուշկան։

— Ո՞նց թե չես ուզում,— շարժելով ռունգերը, հարցրեց Գրիգորին։

— Հենց այնպես, չեմ ուզում, պրծավ-գնաց։

— Բա որ կարմիրները վերցնեն խուտորը, ո՞ւր պիտի դնաս։ Մեզ հետ կգա՞ս, թե կմնաս։

Ստեպանը սևեռուն, առկայծող աչքերով նայում էր մերթ Գրիգորիին, մերթ Ակսինյային, ու մի քիչ լռելուց հետո պատասխանեց.

— Այն ժամանակ կտեսնենք...

— Որ այդպես է, դուրս եկ։ Վերցրու դրան, Խրիստան։ Հիմի մենք քեզ կգնդակահարենք.— աշխատելով չնայել վառարանին կպած Ակսինյային, Գրիգորին վերցրեց Ստեպանի վերնաշապկի թևքից, քաշեց դեպի իրեն.— գնա՛նք, պրծա՛վ։

— Գրիգորի, հիմարություն մի անի... Թո՛ղ։

Ստեպանը սփրթնում էր, թույլ դիմադրում։ Ետևից նրան գրկեց մռայլված Խրիստոնյան, մռթմռթաց.

— Ուրեմս գնանք, թե որ դու այդ տեսակ մարդ ես։

— Եղբայրնե՛ր...

— Մենք քեզ եղբայրներ չենք, ասում են ե՛կ։

— Թողեք, ես կգրվեմ հարյուրյակի մեջ։ Տիֆից թուլացել եմ...

Գրիգորին ծուռ քմծիծաղ տվեց, բաց թողեց Ստեպանի վերնաշապկի թևքը։

— Գնա, հրացան ստացիր։ Վաղուց պետք էր այդ անել։

Կոճկելով շինելը, առանց հրաժեշտ տալու, նա դուրս ելավ։ Խրիստոնյան չքաշվեց այդ բոլորից հետո մի պապիրոսի ծխախոտ խնդրել Ստեպանից, ու դեռ երկար նստեց, խոսեց, կարծես թե նրանց մեջ ոչինչ էլ չէր պատահել։

Իրիկնադեմին Վեշենսկուց երկու սայլ զենք բերին։ Ութսունչորս հրացան և հարյուրից ավելի թուր։ Շատերը հանեցին իրենց թաքցրած զենքերը։ Խուտորը տվեց երկու հարյուր տասնմեկ մարտիկ։ Հարյուր հիսուն ձիավոր, մնացածները—պլաստուններ։

Ապստամբները դեռ միասնական կազմակերպություն չունեին։ Խուտորներն առայժմ զատ-զատ էին գործում. ինքնուրույն կերպով հարյուրյակներ էին կազմում, ժողովներում առավելապես մարտական կազակներից հրամանատարներ էին ընտրում՝ հաշվի առնելով ոչ թե աստիճանները, այլ նրանց մատուցած ծառայությունները. հարձակողական գործողություններ չէին ձեռնարկում, այլ միայն կապ էին հաստատում հարևան խուտորների հետ ու հեծյալ հետախուզախմբերով զննում էին շրջակայքը։

Տատարսկում դեռ մինչև Գրիգորիի ժամանումը հեծյալ հարյուրյակի հրամանատար ընտրեցին Պետրո Մելեխովին, ինչպես և տասնութ թվականին։ Հետևակ հարյուրյակի հրամանատարությունը իր վրա վերցրեց Լատիշևը։ Հրետանավորները Իվան Տամիլինի գլխավորությամբ մեկնեցին Բազկի։ Այնտեղ գտնվեց կարմիրների թողած, կիսաջարդված մի թնդանոթ առանց պանորամայի և ջարդված անիվով։ Հրետանավորներն էլ հենց գնացել էին այն նորոգելու։

Երկու հարյուր մարդու համար Վեշենսկուց բերին և խուտորում հավաքեցին հարյուր ութ հրացան, հարյուր քառասուն թուր և տասնչորս որսորդական հրացան։ Պանտելեյ Պրակոֆևիչը, որ մյուս ծերունիների հետ ազատվել էր Մոխովի տան գետնահարկից, գետնի միջից հանեց գնդացիրը։ Բայց ժապավեններ չգտնվեցին, և հարյուրյակը չընդունեց գնդացիրը։

Մյուս օրվա իրիկնադեմին հայտնի դարձավ, որ ապրստամբությունը ճնշելու համար Լիխաչևի հրամանատարությամբ Կարգինսկուց գալիս է կարմիր զորքերի պատժիչ մի ջոկատ երեք հարյուր սվինով, յոթ թնդանոթով ու տասներկու գնդացրով։ Պետրոն որոշեց ուժեղ հետախուզախումբ ուղարկել Տոկին խուտորի ուղղությամբ, միաժամանակ հաղորդելով Վեշենսկայային։

Հետախուզախումբը մեկնեց մթնշաղին։ Գրիգորի Մելեխովը տանում էր տատարցիներից երեսուներկու հոգի։ Խուտորից գնացին քառատրոփով ու այդպես էլ սլացան հենց մինչև Տոկին։ Այնտեղից երկու վերստ հեռավորությամբ, ոչ խորունկ մի յառի մոտ, ճանապարհի կողքին Գրիգորին ձիերից իջեցրեց կազակներին, տեղավորեց յառի տակ։ Ձիապահները ձիերը տարան ձորահովիտ։ Այնտեղ խորունկ ձյուն էր պառկած։ Ձիերը իջնելիս մինչև փորերը թաղվում էին փխրուն ձյան մեջ. մեկի հովատակը նախագարնանային գրգռմունքից վրնջում էր, աքացում։ Հարկավոր եղավ առանձին ձիապահ ուղարկել նրան հսկելու համար։

Գրիգորին երեք կազակի՝ Անիկուշկային, Մարտին Շա-

միջին և Պրոխոր Զիկովին ուղարկեց խուտորի ուղղությամբ։ Նրանք ճանապարհվեցին քայլքով։ Հեռվում, սարալանջի տակ, լայն զիգզագով դեպի հարավ-արևելք ձգված, կապույտին էին տալիս Տոկինի պուրակները։ Իջնում էր գիշերը։ Տափաստանի վերևում կուտակվում էին ցածր ամպերը։ Կազակները լուռ նստել էին յառի տակ։ Գրիգորին նայում էր, թե ինչպես երեք ձիավորների կերպարանքները իջնում են զառիվայրով, միաձուլվում ճանապարհի սև լանջին։ Ահա արդեն չեն երևում ձիերը, միայն ձիավորների գլուխներն են նշմարվում։ Դրանք էլ չքացան։ Մի րոպեից հետո այնտեղից բարձր որոտաց գնդացիրը։ Հետո մի տոնով ավելի բարձր, տենորանման ճարճատեց մի այլ, ըստ երևույթին ձեռքի գնդացիր։ Դատարկելով սկավառակը, ձեռքի գնդացիրը լռեց, իսկ առաջինը շունչ քաշելով, արագորեն վերջացրեց էլի մի ժապավեն։ Գնդակների երամները ցրիվ թռչում էին յառի վերևից, մթնշաղային բարձունքում։ Նրանց կենդանի ձայնը քաշալերում էր, ուրախ էր ու նուրբ։ Երեքը ամբողջ թափով սլանում, գալիս էին։

— Ուղեկալի հանդիպեցինք,— հեռվից բղավեց Պրոխոր Զիկովը։ Ձիերի վազքի որոտմունքը խլացրեց նրա ձայնը։

— Ձիապահները պատրաստվե՞ն,— հրաման տվեց Գրիգորին։

Նա թռավ յառի գլուխը, ասես խրամատի պատվարի վրա և, ուշադրության չառնելով գնդակները, որոնք ֆշշալով թաղվում էին ձյան մեջ, գնաց մոտեցող կազակներին ընդառաջ։

— Ոչինչ չտեսա՞ք։

— Լսեցինք, որ այնտեղ իրարանցում սկսվեց։ Ձայներից երևում է, որ շատ են նրանք,— հևալով ասաց Անիկուշկան։

Նա ցատկեց ձիուց, սապոգի թաթը մնաց ասպանդակի մեջ, ու Անիկուշկան հայհոյանք թափեց, կաղաց, ձեռքով ապատեց ոտը։

Մինչդեռ Գրիգորին նրան հարցուփորձ էր անում, ութ կազակ յառից իջան ձորահովիտը. նստեցին ձիերը ու հա՛յդա դեպի տուն։

— Վաղը կգնդակահարենք,— կամացուկ ասաց Գրիգորի

ին՝ ունկնդրելով փախստականների ձիերի հեռացող դոփյունին։

Մնացած կազակները էլի մի ժամ նստեցին յառի տակ, զգուշությամբ լռություն էին պահպանում, ականջ դնում։ Ի վերջո մեկը սմբակների դոփյուն լսեց։

— Գալիս են Տոկինից...

— Հետախուզություն է։

— Չի՛ կարող պատահել։

Խոսում էին շշնջալով։ Բարձրացնելով գլուխները, իզուր փորձում էին որևէ բան նշմարել գիշերային անթափանց խավարում։ Ֆեդոտ Բոգովսկովի կալմիկական աչքերը առաջինը ինչ-որ բան տեսան։

— Գալիս են,— վստահորեն ասաց նա՝ հանելով հրացանը։

Տարօրինակ ձևով էր նա այն կրում. փակը անց էր կացնում վիզը, ինչպես խաչի զայթանը, իսկ հրացանը շեղակի կախված էր կրծքին։ Սովորաբար նա այդպես էլ քայլում էր կամ գնում ձիով՝ ձեռները փողին ու ագուստին դրած, ինչպես ջուր տանող կինը ձեռները գնում է գույլերի լծակին։

Տասը ձիավոր լուռ, ցրված գալիս էին ճանապարհով։ Առջևում կես ձիու չափ երևում էր պարթև, տաք հագնված մի կերպարանք։ Երկարամարմին, կարճապոչ նժույգը քայլում էր վստահորեն ու սիգապանծ։ Ներքևից դիտող Գրիգորին գորշ երկնքի ֆոնի վրա պարզ տեսնում էր ձիերի մարմինների գծերը, ձիավորների ուրվագծերը, նա մինչև իսկ տեսնում էր առջևից եկողի կուբանյան փափախի տափակ, հարթ կաբկաջը։ Ձիավորներն այնքան մոտեցան, որ մինչև յառը տասը սաժեն էր մնում. այնքան փոքր էր տարածությունը նրանց և կազակների միջև, որ թվում էր, թե նրանք պետք է որ լսեին կազակների թե խռպոտ շնչառությունը և թե սրտերի արագ զարկը։

Գրիգորին դեռ առաջ հրամայել էր առանց իր հրամանի չկրակել։ Նա, ինչպես դարանակալած գազանորս, հաշվենկատությամբ և ամեն ինչ ճշտած սպասում էր մոմենտին։ Նա արդեն որոշում էր ընդունել՝ ձայն տալ եկողներին, ու երբ նրանք շփոթմունքից իրար գլխի հավաքվեն, կրակ բանալ։

Ճանապարհի վրա մեղմ ղողղում էր ձյունը։ Սմբակների տակից դեղին լուսատիկի նման մի կայծ թռավ. երևի պայտը սլկաց մերկ կայծքարի վրայով։

— Ովքե՞ր են գալիս։

Գրիգորին թեթև, կատվի նման դուրս թռավ յառից, շըտկվեց։ Նրա ետևից խուլ շրշյունով դուրս թափվեցին կազակները։

Կատարվեց այն, ինչ որ բնավ չէր սպասում Գրիգորին։

— Իսկ դուք ո՞ւմ եք ուզում,— առանց վախի կամ զարմանքի որևէ նշույլի հարցրեց առջևից եկողի թավ, խռպոտ ձայնը։ Ձիավորը ձին դարձրեց, եկավ Գրիգորիի կողմը։

— Ո՞վ է,— կտրուկ գոռաց Գրիգորին առանց տեղից շարժվելու, կիսաթեքված ձեռքով աննշմար բարձրացնելով նագանը։

Նույն բամբ ձայնը ամպագոռգոռ, զայրագին որոտաց.

— Ո՞վ է համարձակվում գոռալ։ Ես պատժիչ զորքերի ջոկատի հրամանատարն եմ։ Ութերորդ Կարմիր բանակի շտաբի կողմից լիազորված եմ ապստամբությունը ճնշելու։ Ո՞վ է ձեր հրամանատարը, թող գա այստեղ։

— Ես եմ հրամանատարը։

— Դո՞ւ ես։ Հը՛մ...

Գրիգորին ձիավորի բարձրացած ձեռքում տեսավ մի սև բան, կարողացավ ընկնել մինչև կրակոցը. ընկնելիս բղավեց.

— Կրա՛կ։

Բրաունինգի բթաքիթ գնդակը շվաց Գրիգորիի գլխավերևում։ Երկու կողմից էլ խլացուցիչ կրակոցներ թափվեցին։ Բոդովսկովը կախվեց անվեհեր հրամանատարի ձիու սանձից։ Բուդովսկովի վրայից ձգվելով, մի ձեռքը ետ պահած, Գրիգորին թրի բութ կողմով խփեց կուբանյան փափախին, թամբից քաշեց ու գցեց ծանր մարմինը։ Երկու բոպեում վերջացավ գոտեմարտը։ Երեք կարմիրբանակայիններ ետ սլացան, երկուսը սպանվեցին, մնացածներին զինաթափեցին։

Գրիգորին կարճ հարցաքննեց գերի բռնված, կուբանյան փափախ դրած հրամանատարին՝ նագանի փողով բոթելով նրա ջարդված բերանը.

— Ի՞նչպես է ազգանունդ, ի՛ժ։

— Լիխաչև։

— Ինչի՞ վրա էիր հույս դնում, երբ դալիս էիր ինը պահապաններով։ Դու կարծում էիր կազակները ձո՞ւնկ կլոքեն, հա՞։ Ներողությո՞ւն կխնդրեն։

— Սպանեցեք ինձ։

— Դրա ժամանակը կգա,— սփոփեց նրան Գրիգորին,— փաստաթղթերդ ո՞ւր են։

— Պայուսակում։ Վերցրու, բանդի՛տ... սրիկա՛...

Գրիգորին ուշադրություն չդարձնելով հայհոյանքին, ինքը խուզարկեց Լիխաչևին. նրա կիսամուշտակի գրպանից հանեց երկրորդ բրաունինգը, հանեց մաուզերը և դաշտային պայուսակը։ Կողքի գրպանում գտավ գազանի խայտաբղետ մորթիով ծածկված մի փոքրիկ պորտֆել, որի մեջ գտնվում էին թղթերը, և մի պորտսիգար։

Լիխաչևը շարունակ հայհոյանք էր թափում, ցավից տընքում։ Գնդակը ծակել էր նրա աջ ուսը, գլուխը սաստիկ վիրավորվել էր Գրիգորիի թրով։ Նա բարձրահասակ էր, բոյով բարձր էր Գրիգորիից, ծանրամարմին էր ու երևի ուժեղ։ Թուխ, նոր սափրված դեմքի վրա, քթարմատի մոտ լայնադիր ու տիրաբար միանում էին կարճ, լայն, սև հոնքերը։ Բերանը մեծ էր, կզակը քառակուսի։ Լիխաչևը հագել էր ծալավոր կիսամուշտակ, գլխին դրել կուբանյան սև փափախ, որը ճխլտվել էր սրի հարվածից, կիսամուշտակի տակ նրա վրա բարեձև նստել էին պաշտպանական գույնի ֆրենչը, լայն գալիֆեն։ Բայց ոտները փոքր էին, նրբագեղ, նա լաքած ճիտքերով, շքեղաշուք սապոգներ էր հագել։

— Հանիր կիսամուշտակդ, կոմիսար,— հրամայեց Գրիգորին,— դու կոկլիկ ես։ Ջաղացել ես կազակական հացով, չես մրսի։

Գերիների ձեռները կապեցին լաթագոտիներով, պախուցներով, նստեցրին հենց նրանց ձիերին։

— Վարգով իմ ետևի՛ց,— հրաման տվեց Գրիգորին ու իր վրա շտկեց Լիխաչևի մաուզերը։

Նրանք գիշերեցին Բազկիում։ Հատակի վրա, վառարանի մոտ, ծղնոտե փռոցի վրա Լիխաչևը տնքում էր, կրճտացնում ատամները, գալարվում։ Գրիգորին լամպի լույսով լվաց ու կապեց նրա վիրավորված ուսը։ Բայց հարցուփոր-

ձից հրաժարվեց։ Երկար նստեց սեղանի առաջ, նայեց Լիխաչևի մանդատները, Վեշենսկու կոնտրռևոլյուցիոներ կազակների ցուցակները, որ փախած ռատրիբունալը հանձնել էր Լիխաչևին, ծոցատետրը, նամակները, քարտեզի վրա արված նշումները։ Երբեմնակի նայում էր Լիխաչևին, շեղբանման իր հայացքները մեխում նրա աչքերին։ Կազակները, որոնք գիշերում էին այդ խրճիթում, ամբողջ գիշերը դես-դեն էին ընկնում, դուրս էին գնում ձիերին նայելու և հաշտում ծխելու, պառկած խոսակցում էին։

Գրիգորին ննջեց առավոտյան դեմ, բայց շուտով արթնացավ, սեղանից բարձրացրեց ծանրացած գլուխը։ Լիխաչևը նստել էր ծղնոտի վրա, ատամներով քանդում էր բինտը, պոկելով վիրակապը։ Նա արյունակալած, կատաղի աչքերով նայում էր Գրիգորիին։ Սպիտակ ատամներով նրա բերանը բացվում էր տանջալից կերպով, ինչպես հոգեվարքի պահին, աչքերը այնպիսի մահացու թախիծ էին արտահայտում, որ Գրիգորիի քանը միանգամից փախավ։

— Հը՛, ի՞նչ կա,— հարցրեց նա։

— Ախր էլ ի՞նչ է քեզ պետք... Մա՛հ եմ ուզում,— մռնչաց Լիխաչևը դալկանալով, գլուխը գցելով ծղնոտին։

Գիշերվա ընթացքում նա մոտ կես դույլ ջուր խմեց։ Մինչև լուսաբաց աչք չփակեց։

Առավոտը Գրիգորին նրան սայլով, կարմ զեկուցագրով ու գրավված բոլոր փաստաթղթերով ուղարկեց Վեշենսկայա։

XXXI

Վեշենսկում երկու հեծյալ կազակների հսկողության տակ սայլը արագ մոտեցավ գործկոմի կարմիր, աղյուսե շենքին։ Լիխաչևը կիսապառկած էր սայլի ետին մասում։ Նա՝ վեր կացավ՝ ձեռքը պահած արյունոտ վիրակապին։ Կազակները իջան ձիերից. ուղեկցելով նրան, մտան տուն։

Հիսունի չափ կազակներ խիտ խմբվել էին ապստամբական միացյալ ուժերի ժամանակավոր հրամանատար Սույարովի սենյակում։ Լիխաչևը ձեռքը վերքին պահած, նրանց

միջով մոտեցավ սեղանին։ Սեղանի առաջ նստած էր Սույարովը,— փոքրամարմին, ոչնչով աչքի չընկնող, բացի դեղին աչքերի հազվագյուտ նենգավոր խորշիկներից։ Նա հեզ նայեց Լիխաչևին, հարցրեց.

— Բերի՞ն աղավնյակին։ Լիխաչևը հենց դո՞ւ ես։

— Ես եմ։ Ահա իմ փաստաթղթերը։— Լիխաչևը պարկի մեջ դրված պորտֆելը գցեց սեղանի վրա, անմատչելիորեն ու խստաբարո նայեց Սույարովին։— Ցավում եմ, որ ինձ չհաջողվեց կատարել իմ ստացած հանձնարարությունը,— ճշմել ձեզ, ինչպես իժերին։ Բայց Սովետական Ռուսաստանը ձեզ կհատուցանի պատշաճը։ Խնդրում եմ ինձ գնդակահարել։

Նա շարժեց գնդակով խոցված ուսը, շարժեց լայն հոնքը։

— Ո՛չ, ընկեր Լիխաչև։ Մենք ինքներս ենք ապստամբել գնդակահարությունների դեմ։ Մեզ մոտ այնպես չէ, ինչպես ձեզ մոտ,— գնդակահարություններ չկան։ Մենք քեզ կբուժենք, և դու գուցե մեզ օգուտ տաս,— մեղմակի, բայց աչքերը փայլեցնելով ասաց Սույարովը։— Ավելորդ մարդիկ դուրս գնացեք այստեղից։ Դեհ, շուտ։

Մնացին Ռեշետովսկու, Ջերնովսկու, Ուշակովսկու, Դուբրովսկու և Վեշենսկու հարյուրյակների հրամանատարները։ Նրանք նստեցին սեղանի մոտ։ Մեկը ոտով հրեց տաբուրետը ու հրամցրեց Լիխաչևին, բայց սա չնստեց։ Հենվեց պատին, գլուխների վրայով նայեց պատուհանին։

— Ա՛յ թե ինչ, Լիխաչև,— սկսեց Սույարովը՝ հայացքներ փոխանակելով հարյուրյակների հրամանատարների հետ,— ասա մեզ, որքան է քո ջոկատը։

— Ջեմ ասի։

— Չե՞ս ասի։ Պետք չի։ Մենք ինքներս կիմանանք քո թղթերից։ Կամ թե չէ, կհարցաքննենք քո պահապան կարմիրբանակայիններին։ Մենք մի բան էլ պիտի խնդրենք (Սույարովը շեշտեց այդ բառը) քեզ. գրիր քո ջոկատին, որ գա Վեշկի։ Մենք ձեզ հետ կռվելու բան չունենք։ Մենք դեմ չենք սովետական իշխանության, այլ դեմ ենք կոմունային ու ջհուդներին։ Մենք քո ջոկատը կզինաթափենք ու կթողնենք տուն։ Քեզ էլ ազատ կարձակենք։ Մի խոսքով, գրի նրանց,

որ մենք էլ իրենց պես աշխատավորներ ենք, թող մեզանից չվախենան, մենք Սովետներին դեմ չենք...

Լիխաչևի թուքը ընկավ Սուլարովի ալեխառն, սուր մորուքին։ Սուլարովը թևքով սրբեց մորուքը, նրա այտերը կարմրեցին։ Հրամանատարներից ոմանք ժպտացին, բայց ոչ ոք վեր չկացավ պաշտպանելու ապստամբական ուժերի հրամանատարի պատիվը։

— Վիրավորում ես մեզ, ընկեր Լիխաչև,— արդեն բացահայտ կեղծավորությամբ ասաց Սուլարովը,— ատամանները, սպաները մեզ ծաղր ու ծանակի էին ենթարկում, թքում էին մեզ վրա, և դու էլ, կոմունիստ լինելով, թքում ես։ Իսկ բոլորդ էլ ասում եք, թե ժողովրդի կողմն եք... Է՛յ, ո՞վ կա այնտեղ... Տարեք կոմիսարին։ Վաղը քեզ կուղարկենք Կազանսկայա։

— Գուցե կմտածե՞ս,— խիստ տոնով հարցրեց հարյուրյակների հրամանատարներից մեկը։

Լիխաչևը արագ շարժմամբ շտկեց ուսերին գցած ֆրենչը, քայլեց դեպի ուղեկցորդը, որ կանգնած էր դռան մոտ։

Նրան չգնդակահարեցին։ Ապստամբները հո պայքարում էին «գնդակահարությունների ու կողոպուտների» դեմ... Մյուս օրը նրան տարան Կազանսկայա։ Նա քայլում էր ձիավոր ուղեկցորդների առջևից, թեթևակի ոտները դնում ձյան վրա, կիտում կարճլիկ մազերով լայն հոնքերը։ Բայց անտառում, անցնելով մահացու սպիտակություն ունեցող մի կեչու կողքից, աշխույժ ժպտաց, կանգ առավ, ձգվեց դեպի վեր և առողջ ձեռքով մի ոստ պոկեց։ Դրա թուխ բողբոջները արդեն լցվել էին մարտ ամսի քաղցր հյութով։ Նրանց նուրբ, հազիվ զգալի բուրմունքը խոստանում էր գարնանային ծաղկում, կյանք, որ կրկնվում է արևի բոլորակի տակ... Լիխաչևը ուռուցիկ բողբոջները դնում էր բերանը, ծամում դրանք, մշուշված աչքերով նայում սառնամանիքից ազատված, բաց գույն առած ծառերին, ու ժպտում էր սափրված շուրթերի անկյունով։

Բողբոջների սև թերթիկները շուրթերին նա մեռավ. վեշենսկուց յոթ վերստ հեռավորությամբ, մռայլ ու խոժոռ ավազաթմբերի վրա ուղեկցորդները գազանաբար թրատեցին նրան։ Կենդանի վիճակում հանեցին նրա աչքերը, կտրեցին թևերը, ականջները, քիթը, թրերով խոցոտեցին դեմքը։ Արձակեցին շալվարի կոճակները և անարգեցին, պղծեցին մեծ, առնական, գեղեցիկ մարմինը։ Անարգեցին արյունահոս կտրվածքը, հետո էլ ուղեկցորդներից մեկը ոտքը դրեց թույլ դողացող կրծքին, մեջքի վրա ընկած մարմնին ու մի հարվածով շեղակի կտրեց գլուխը։

XXXII

Դոնի մյուս կողմից, նրա վերին ավազանից, բոլոր կողմերից լուրեր էին գալիս ապստամբության լայն ծավալման մասին։ Միայն երկու ստանիցայի հողը չէր, որ արդեն ոտքի էր ելել։ Ապստամբեցին Շումիլինսկայա, Կազանսկայա, Միգուլինսկայա, Մեշկովսկայա, Վեշենսկայա, Ելանսկայա, Ուստ-Խոպերսկայա ստանիցաները, հապճեպորեն հարյուրյակներ կազմեցին. պարզապես ապստամբների կողմն էին թեքվում Կարգինսկայա, Բոկովսկայա, Կրասնոկուտսկայա ստանիցաները։ Ապստամբությունը սպառնում էր անցնել նաև հարևան Ուստ-Մեդվեդիցի և Խոպերի օկրուգները։ Արդեն սկսվում էր հուզմունքը Բուկանովսկայա, Սլաշչևսկայա և Ֆեդոսեևսկայա ստանիցաներում. հուզվում էին Վեշենսկուն հարևան Ալեքսեևսկայա ստանիցայի խուտորները... Վեշենսկայան որպես օկրուգային ստանիցա, ապստամբության կենտրոն դարձավ։ Երկար վեճերից ու դատողություններից հետո որոշեցին պահպանել իշխանության նախկին կառուցվածքը։ Օկրուգային գործկոմի կազմի մեջ ընտրեցին առավելապես հարգվող կազակներին, գլխավորապես երիտասարդներին։ Նախագահ նստեցրին հրետանային գերատեսչության զինվորական չինովնիկ Դանիլովին։ Ստանիցաներում ու խուտորներում սովետներ կազմակերպվեցին, և, որքան էլ տարօրինակ է, առօրյա կենցաղում մնաց մի ժամանակ հայհոյական «ընկեր» բառը։ Նետվեց նաև դեմագոգիկ լոզունգ,— «Հանուն սովետական իշխանության, բայց ընդդեմ կոմունայի, գնդակահարությունների և կողոպուտների»։ Հենց դրա համար էլ ապստամբների փափախների վրա մեկ սպիտակ թելի կամ կապի փոխարեն երևացին Լրկուսը,— սպիտակ ու կարմիր, խաչաձև կպցրած...

Ապստամբական միացյալ ուժերի հրամանատարի պաշտոնում Սուլարովին փոխարինեց երիտասարդ, քսանութ տարեկան խորունժի Պավել Կուդինովը,— բոլոր չորս աստիճանների գեորգևյան կավալեր, ճոռոմախոս ու խելոք մի մարդ։ Նա աչքի էր ընկնում իր թույլ բնավորությամբ, և նա չէր, որ այդպիսի փոթորկալից ժամանակներում պիտի կարողանար կառավարել խռովարար օկրուգը, բայց կազակները նրա հետ ոտ մեկնեցին իր պարզության ու լավ վարվեցողության համար։ Գլխավորն այն էր, որ Կուդինովը իր ծագմամբ կազակության բուն իսկ զանգվածից էր ու զերծ էր գոռոզությունից և սպայական ամբարտավանությունից, որը սովորաբար հատուկ է նորելուկներին։ Նա միշտ համեստ էր հագնվում, երկար, կլորաձև կտրված մազեր էր թողնում, մի փոքր կորացած էր և արագախոս։ Նրա նիհար, երկարաքիթ դեմքը մուժիկական էր թվում, ոչնչով աչքի չէր ընկնում։

Շտաբի պետ ընտրեցին փոխ-յասավուլ Իլյա Սաֆոնովին, և ընտրեցին միայն այն պատճառով, որ վախկոտ մարդ էր, բայց հարմար էր իր գրագիտությամբ, քանզի գրագետ էր։ Նրա մասին հենց այդպես էլ ասացին ժողովում.

— Սաֆոնովին նստեցրեք շտաբում։ Շարքում նա անպետք է։ Նա շատ կորուստներ կտա, չի պահպանի կազակներին, ու ինքն էլ, մեկ էլ տեսար, փչացրեց գործը։ Թե գընչուից տերտեր լինի, նրանից էլ կռվող կինի։

Կարճահասակ, կլորավուն Սաֆոնովը այդ դիտողության վրա ուրախ ժպտաց դեզնասպիտակավուն բեղի տակին ու մեծ հաճույքով համաձայնվեց ընդունել շտաբը։

Բայց Կուդինովը և Սաֆոնովը միայն ձևակերպում էին այն, ինչ որ ինքնուրույն կերպով կատարում էին հարյուրյակները։ Ղեկավարելու նկատմամբ նրանց ձեռքերը կապված էին և նրանց ուժերից էլ վեր էր այդպիսի մի մեծ գործ վարել ու ետ չմնալ իրադարձությունների շեշտակի թափից։

4-րդ Զաամուրսկի հեծյալ գունդը, որին միացել էին Ուստ-Խոպերսկայա, Ելանսկայա և մասամբ Վեշենսկայա ստանիցաների բոլշևիկները, կռվով անցավ մի քանի խուտոր, անցավ Ելանսկու սահմանը և տափաստանով, Դոնի ափերով շարժվեց դեպի արևմուտք։

Մարտի 5-ին վեկուցագրով Տատարսկի եկավ մի կազակ։ Ելանցիները շտապ օգնություն էին պահանջում։ Նրանք նահանջում էին համարյա առանց դիմադրության, փամփուշտներ ու հրացաններ չկային։ Նրանց խղճուկ կրակոցներին ի պատասխան զաամուրցիները նրանց վրա գնդացրային կարկուտ էին թափում, խփում երկու մարտկոցներից։ Այսպիսի պայմաններում ժամանակ չկար օկրուգից կարգադրություններ սպասելու։ Եվ Պետրո Մելեխովը որոշեց կռվի ելնել իր երկու հարյուրյակներով։

Նա վերցրեց հարևան խուտորների նաև չորս հարյուրյակների հրամանատարությունը։ Կազակներին առավոտյան դուրս բերեց բլուրի վրա։ Սկզբում, ինչպես այդ սովորաբար լինում է, ընդհարվեցին հետախուզախմբերը։ Կռիվն ավելի ուշ ծավալվեց։

Կարմիր Հովտի մոտ, Տատարսկի խուտորից ութ վերստ հեռավորությամբ, ուր մի ժամանակ Գրիգորին կնոջ հետ վար էր անում և ձմեռը շուտ վրա հասավ, ուր առաջին անգամ նա խոստովանեց Նատալյային, որ չի սիրում նրան,— ձմեռային այդ մռայլ օրը ձյան վրա, խորունկ յառերի կողքին հեծյալ հարյուրյակները իջնում էին ձիերից, շղթաներ էին կազմվում, ձիապահները ձիերը տանում էին թաքստոցներքևից, խորունկ, ընդարձակ հովտից երեք շղթայով գալիս էին կարմիրները։ Հովտի սպիտակ տարածությունը կտրատված էր մարդկանց սև բծերով։ Շղթաներին սայլեր էին մոտենում, վխտում էին հեծյալները։ Կազակները, որոնք հակառակորդից բաժանված էին երկու վերստ տարածությամբ, անշտապ պատրաստվում էին կռվի բռնվելու։

Պետրոն իր պարարտ, մի փոքր քրտնակալած ձիով Ելանսկու հարյուրյակներից, որոնք արդեն շղթաներ էին կազմել, սրարշավ մոտեցավ Գրիգորիին։ Նա ուրախ էր, աշխուժացած։

— Աղբե՛ր տղերք, փամփուշտները զուր չծախսեք։ Խփեցեք, երբ հրաման տամ... Գրիգորի, քո կիսահարյուրյակը տար մի հարյուր հիսուն սաժեն դեպի ձախ։ Վռազիր։ Ձիապահները թող իրար գլխի չհավաքվեն.— նա արավ վերջին, էլի մի քանի կարգադրությունները, հանեց հեռադիտակը.—

Կարծես թե մարտկոց են տեղավորում Մատվեև կուրգանի վրա։

— Ես վաղուց եմ նկատում. հասարակ աչքով է երևում։

Գրիգորին նրա ձեռքից վերցրեց հեռադիտակը, դիտեց։ Կուրգանի ետևում, որի կատարից քամիները քշել-տարել էին ձյունը, սևին էին տալիս սայլերը, երևում էին շատ փոքրիկ թվացող մարդիկ։

Տատարսկի հետևազորը,— «պլաստունիկները», ինչպես կատակով նրանց անվանում էին հեծյալները,— չնայելով իրար գլխի չհավաքվելու խիստ հրամանին, խմբվում էին, իրար մեջ փամփուշտներ բաժանում, ծխում, կատակներ փոխանակում։ Ցածրահասակ կազակներից մի գլխով բարձր ճոճվում էր Խրիստոնյայի փափախը (զրկվելով ձիուց, նա ընկել էր հետևազոր), կարմրին էր տալիս Պանտելեյ Պրակոֆևիչի ականջավոր փափախը։ Հետևազորում մեծ մասամբ գտնվում էին ծերունիները և շատ ջահելները։ Արևածաղկի ցողունների չկտրատված թավուտից դեպի աջ մեկ ու կես վերստի վրա ցրված էին ելևցիները։ Նրանց չորս հարյուրյակներում կար վեց հարյուր մարդ, բայց համարյա երկու հարյուրը ձիերն էին պահում։ Ամբողջ կազմի մեկ երրորդ մասը ձիերի հետ թաքնված էր ձորակների զառիվայր ճյուղերում։

— Պետրո Պանտելևիչ,— բղավում էին հետևակ շարքերից,— տե՛ս, կովում մեզ, հետևակներիս չթողնես ու հեռանաս։

— Հանգիստ եղեք, չենք թողնի,— ժպտաց Պետրոն ու նայելով դանդաղորեն բլուրին մոտեցող կարմիրներին, սկսեց ջղայնոտությամբ խաղացնել մտրակը։

— Պետրո, եկ այստեղ,— խնդրեց Գրիգորին՝ շղթայից անցնելով մի կողմ։

Պետրոն ձին քշեց, մոտեցավ։ Գրիգորին դեմքը կնճռոտելով, նկատելի դժգոհությամբ ասաց.

— Դիրքը իմ սրտովը չի։ Պետք է անցնել այս յառերը։ Թե չէ թևից կշրջանցեն մեզ, փորձանքի մեջ կընկնենք։ Հը՞։

— Ի՞նչ ես ասում, է՞,— սրտնեղությամբ ասաց Պետրոն,— ո՞նց թե մեզ կշրջանցեն։ Ես ռեզերվում մի հարյուրյակ եմ թողել, հետո, թե որ գործը վատ գնա, յառերն էլ պետք կգան։ Նրանք չեն խանգարում։

— Տե՛ս, տղա,— նախազգուշացնող տոնով ասաց Գրիգորին, նորից ու նորից աչքերով արագորեն զննեց տեղանքը։

Նա մոտեցավ իր շղթային, նայեց կազակներին։ Շատերի ձեռների վրա թաթմաններ ու ձեռնոցներ արդեն չկային։ Հուզմունքից դրանք հանել էին։ Ոմանք ձանձրանում էին. մերթ թրերն էին շտկում, մերթ գոտու այվազուկը տեղափոխում, պրկում գոտին։

— Մեր հրամանատարը իջավ ձիուց,— ժպտաց Ֆեդոտ Բոդովսկովը ու հեգնաբար, թեթևակի գլխով արավ Պետրոյի կողմը, որ շորորալով քայլում էր դեպի շղթաները։

— Է՛յ, դու, գեներալ Պլատով,— քրքջաց կոնատ Ալյոշկա Շամիլը, որ միայն թրով էր զինված,— հրամայիր մի-մի թաս արաղ տալ դոնեցիներին։

— Սո՛ւս հարբեցող, մինչև արաղը բերանիդ մոտեցնես, կարմիրները կկտրեն մյուս ձեռքդ։ Քեզ կմնա տաշտից լակել։

— Դե՛հ, դե՛հ։

— Ա՛յ թե կխմեի, հա՛-ա, էժան կնստեր,— հոգոց հանեց Ստեպան Աստախովը և, նույնիսկ ձեռքը բարձրացնելով թրափնջից, ոլորեց շեկլիկ բեղը։

Շղթայով մեկ ստեղծված դրության համեմատ բոլորովին անհարմար խոսակցություններ էին տեղի ունենում։ Ու միանգամից լռեցին, հենց որ Մատվեև կուրգանի ետևից հուժկու որոտաց թնդանոթը։

Բամբ, լիակշիռ ձայնը գնդիկի նման դուրս թռավ թնդանոթի երախից ու երկար շաչեց տափաստանի վրա, ինչպես ծխի սպիտակ քուլա, ու միախառնվեց պայթյունի հրստակ, կարճ ու հատու ձայնին։ Արկը տեղ չհասավ, պայթեց կազակական շղթայից կես վերստ հեռավորությամբ։ Սև ծուխը ձյան սպիտակ, շողուն ֆոնի վրա դանդաղ, պալանպալան գալարվեց դեպի վեր, թափվեց ներքև, փռվեց ու շոքեց քոլերի վրա։ Կարմիր շղթայում իսկույն որոտացին գնդացիրները։ Սառնամանիքը հափշտակում էր ձայնի լիահնչունությունը, գնդացրային հերթերը տկտկում էին գիշե-

բային պահապանի թակիչի նման։ Կազակները պառկեցին ձյան մեջ, քոլերում, արևածաղկի ցցուն, անգլխիկ ցողունների մեջ։

— Ծուխը շատ սև է, ոնց որ թե գերմանական արկից լինի,— բղավեց Պրոխոր Զիկովը՝ նայելով Գրիգորիին։

Հարևան Ելանսկու հարյուրյակում աղմուկ բարձրացավ։ Քամին բերեց մի ճիչ.

— Քավոր Միտրաֆանը սպանվեց։

Ռուբեժինի հարյուրյակի շիկամորուք հրամանատարը, Իվանովը կրակի տակ վազեվազ մոտեցավ Պետրոյին։ Նա փափախի տակին սրբեց ճակատը, շնչասպառ ասաց.

— Ա՛մա թե ձյուն է, հա՛-ա։ Այնքան կպչուն է, որ չես կարենում ոտներդ դուրս քաշել։

— Ի՞նչ ես ուզում,— հոնքերը կիտելով դիմեց նրան Պետրոն։

— Մի բան եմ մտածել, ընկեր Մելեխով։ Դու ցածր տեղերով մի հարյուրյակ ուղարկի Դոնի կողմը։ Շղթայից հանի և ուղարկի։ Թող նրանք իջնեն ցածր տեղով ու վազ տան մինչև խուտոր, իսկ այնտեղից խփեն կարմիրների թիկունքին։ Նրանք կարելի է թե այնտեղ են թողել գումակները... Դե, այնտեղ ինչքա՞ն պահապաններ պիտի լինեն որ։ Ինչքան չլինի, խուճապ կառաջացնեն։

«Մի բանը» դուր եկավ Պետրոյին։ Նա կրակելու հրաման տվեց իր կիսահարյուրյակին, ձեռքով արավ ամբողջ հասակով մեկ կանգնած Լատիշևին ու ճոճվելով քայլեց դեպի Գրիգորին։ Բացատրեց, թե բանն ինչ է, կարճ հրամայեց.

— Տար կիսահարյուրյակդ։ Սեղմիր նրանց պոչը։

Գրիգորին դուրս բերեց կազակներին, ձորահովիտում ձի նստեցին, արագ վարգով, ձյան փոշի բարձրացնելով, սլացան դեպի խուտորը։

Կազակները ամեն մի հրացանից երկու պահունակ փամփուշտ կրակեցին, լռեցին։ Կարմիրների շղթաները պառկեցին։ Գնդացիրները շեշտակի ճարճատում էին, ասես ոմանք չեչոտկա էին պարում՝ ոտները արագ-արագ խփելով հատակին։ Զիապահներից մեկի ձեռքից պոկ եկավ Մարտին Շամիլի սպիտակատ ձին, որը վիրավորվել էր պատահական գնդակով, ու խելագարված, սլացավ Ռուբեժինի կազակների

շղթայի միջով, սարն ի վար գնաց կարմիրների կողմը։ Գնդացրային կրակը խփեց նրան, ու նժույգը ամբողջ թափով սլանալիս վեր գցեց գավակը, փռվեց ձյան մեջ։

— Նշան բռնել գնդացրորդների վրա,— շղթայով մեկ հաղորդեցին Պետրոյի հրամանը։

Նշան բռնեցին։ Կրակում էին միայն ճարտար հրաձիգները, ու հակառակորդին վնաս հասցրին. Վերխնե-Կրիվսկոյ խուտորի անբարետես մի կազակ իրար ետևից գնդակներով խփեց երեք գնդացրորդի, և պատյանում եռացող ջրով «մաքսիմը» լռեց։ Սակայն խփված գնդացրորդներին փոխարինեցին նորերը։ Գնդացիրը դարձյալ որոտաց՝ ցանելով մահվան սերմերը։ Հաճախակի ճայթում էին համազարկերը։ Կազակներն արդեն ձանձրացել էին, ավելի խոր էին թաղվում ձյան մեջ։ Անիկուշկան ձյունը փորփրելով, հասավ մերկ գետնին՝ չդադարեցնելով կատակները։ Նրա փամփուշտները վերջացել էին (դրանք հինգ հատ էին, կանաչ, ժանգոտ պահունակի մեջ դրված), ու նա երբեմնակի գլուխը բարձրացնելով ձյան տակից շրթունքներով այնպիսի ձայն էր հանում, որը շատ նման էր վախեցող արջամկան ճրստճրստոցին։

— Աղխյո՛ւ...— արջամկան պես ճստճստում էր Անիկուշկան՝ հիմար նայվածքը սահեցնելով շղթայի վրա։

Նրա աջ կողմում արտասվելու չափ քրքջում էր Ստեպան Աստախովը, իսկ ձախ կողմում բարկությամբ մայր էր հայհոյում Անտիպկա Փչանը։

— Ձեռ քաշի, ի՛ժ։ Ժամանա՞կ ես գտել հանաք անելու։

— Աղխյո՛ւ...— Անիկուշկան դարձավ նրա կողմը՝ շինծու վախով կլորացնելով աչքերը։

Կարմիրների մարտկոցում հավանորեն արկերի պակասություն էր զգացվում. կրակելով մոտ երեսուն արկ, նա լռեց։ Պետրոն անհամբերությամբ նայում էր ետ, բլուրի կատարին։ Նա երկու բանբեր էր ուղարկել խուտոր, հրամայելով, որ խուտորի ամբողջ չափահաս բնակչությունը զինվի եղաններով, ցցերով, գերանդիներով ու դուրս գա բլուրը։ Նա ուզում էր վախեցնել կարմիրներին ու նույնպես երեք շղթա կազմել։

Շուտով ժողովուրդը հոծ ամբոխներով երևաց բլրագագաթի եզրին ու դեպի ներքև հոսեց։

— Մտիկ արեք, դուրս են թափվել սև ագռավները։

— Ամբողջ խուտորը դուրս է եկել։

— Այնտեղ ոնց որ թե կնանիք էլ կան։

Կազակները բացականչություններ էին փոխանակում, ժպտում էին։ Հրաձգությունը բոլորովին դադարեցրին։ Կարմիրների կողմից գործում էին միայն երկու գնդացիր, երբեմն էլ համազարկեր էին ճայթում։

— Ափսոս, նրանց մարտկոցը ձենը կտրեց։ Մի արկ գցեին կնանոնց զորքի վրա, ա՛յ թե վայնասուն կբարձրանար, հա՛-ա։ Թրջված փեշերով վազ կտային խուտոր,— հաճույքով ասաց կոնատ Ալյոշկան, ըստ երևույթին լրջորեն ցավելով, որ կարմիրները կանանց վրա ոչ մի արկ չեն արձակի։

Ամբոխը սկսեց հավասարվել, մասնատվել։ Շուտով երկու լայն շղթա կազմեց։ Կանգ առավ։

Պետրոն թույլ չտվեց, որ նրանք թեկուզ գնդակի թռիչքի տարածության չափ մոտենան կազակական շղթային։ Բայց նրանց հենց միայն երևալը զգալի ազդեցություն թողեց կարմիրների վրա։ Կարմիր շղթաները սկսեցին ետ քաշվել՝ իջնելով ձորի հատակը։ Կարճ խորհրդակցելով հարյուրյակների հրամանատարների հետ, Պետրոն լքեց աջ թևը,— այնտեղից հանեց ելանցիների երկու շղթա, սրանց հրամայեց ձի նստած գնալ դեպի հյուսիս, Դոնը՝ այնտեղ Գրիգորիի գրոհին օժանդակելու համար։ Հարյուրյակները կարմիրների աչքի առաջ շարժվեցին Կարմիր յառի մյուս կողմում, գնացին ցած, դեպի Դոնը։

Վերսկսվեց հրաձգությունը նահանջող կարմիր շղթաների վրա։

Այդ ժամանակ «ռեզերվից», որ կազմված էր կանանցից, ծերերից ու անչափահասներից, մի քանի հանդուգն կանայք ու մի խումբ երեխաներ սողոսկեցին մարտական շղթայի մեջ։ Կանանց հետ մեջտեղ եկավ նաև Դարյա Մելեխովան։

— Պետյա, տուր մի կրակեմ կարմրի վրա։ Ես հո գիտեմ հրացանը բանեցնել։

Նա խնդրեց որ վերցրեց Պետրոյի կարաբինը. տղամարդու պես, ծնկելով, կարաբինի կոթով վստահորեն սեղմելով կրծքի վերին մասին, նեղ ուսին, երկու անգամ կրակեց։

Իսկ «ռեզերվը» մրսում էր, ոտները խփում գետնին, ցատկոտում, խնչում։ Երկու շղթաներն էլ շարժվում էին դեպի քամուց։ Կանանց այտերն ու շուրթերը կապտում էին. յուրաքանչյուրի լայն փեշերի տակին լկտիաբար տեր ու տնօրինություն էր անում սառնամանիքը։ Հյուծված ծերուկները բոլորովին սառեցին։ Նրանցից շատերին, այդ թվում նաև Գրիշակա պապին, թևանցուկ արած, տարան խուտորի այս կողմում գտնվող դիք բլուրը։ Բայց այստեղ, բլուրի վրա, որ մատչելի էր բարձրից փչող քամիներին, ծերունիները աշխուժացան հեռավոր հրաձգությունից և ցրտից։ Շղթայում, նրանց միջև անվերջ խոսակցություններ էին տեղի ունենում առաջվա պատերազմների ու մարտերի, այժմյան ծանր պատերազմի մասին, ուր եղբայրը եղբոր, հայրը որդու դեմ է կռվում, իսկ թնդանոթները այնքան հեռու տեղից են կրակում, որ հասարակ աչքով դրանք չես է՛լ տեսնի...

XXXIII

Գրիգորին իր կիսահարյուրյակով զզզեց զամուրցիների առաջին կարգի գումակը։ Թրատվեց ութ կարմիրբանակային։ Գրավվեց փամփուշտներով բեռնված չորս սայլ ու երկու հեծկան ձի։ Կիսահարյուրյակը պրծավ նրանով, որ սպանվեց մի ձի և կազակներից մեկը մարմնի վրա չնչին քերծվածք ստացավ։

Բայց, մինչդեռ Գրիգորին ոչ ոքի կողմից չհետապնդվելով և հաջողությունից չափազանց երջանկացած, Դոնի ափերով ետ էր գնում, տանելով գրաված սայլերը,— բլուրի վրա մոտեցավ կռվի վախճանը։ Զամուրցիների մի հեծելավաշտ դեռ մարտից առաջ հեռավոր, շուրջանակի ճանապարհով գնաց շրջանցման, տասը վերստ շրջան կատարեց ու հանկարծակի դուրս գալով բլուրի ետևից, գրոհ տվեց ձիապահների վրա։ Ամեն ինչ իրար խառնվեց։ Ձիապահները ձիերով

դուրս թռան Կարմիր յառի ճյուղից, կարողացան ձիեր տալ մի քանի կազակների, իսկ մնացածների վրա արդեն փայփլեցին զաամուրցիների սրերը։ Բազմաթիվ անգեն ձիապահներ բաց թողին ձիերը, իրենք ձի նստելով, ցրիվ եկան ու փախան։ Հետևազորը զրկվելով կրակելու հնարավորությունից,— վախենալով, որ գնդակները կդիպչեն յուրայիններին,— ինչպես պարկից թափվող սիսեռը, թափվեց յառի տակ, անցավ մյուս կողմը, խառնիխուռն փախավ։ Հեծյալներից նրանք (իսկ դրանք մեծամասնություն էին կազմում), որոնք կարողացել էին բռնել իրենց ձիերը, իրար առաջ կըտրելով, նետվեցին դեպի խուտոր, շափվելով միմյանց հետ, թե «ում ձին է ավելի լավ»։

Պետրոն առաջին պահին, հենց որ ճլոցի վրա շուռ տվեց գլուխը ու տեսավ ձիապահների վրա սլացող հեծյալ զանգվածը, հրաման տվեց։

— Չի նստել։ Հետևազո՛ր։ Լատիշև՛։ Յառի վրայո՛վ...

Բայց նա չկարողացավ հասնել իր ձիապահին։ Նրա ձին պահում էր երիտասարդ տղա Անդրյուշկա Բեսխլեբնովը։ Սա քառատրոփով սլանում էր դեպի Պետրոն. Պետրոյի և Ֆեդոտ Բոդովսկովի ձիերը թռչում էին իրար կողքի, աջ կողմից։ Բայց կողքից Անդրյուշկայի վրա հարձակվեց կոճակներն արձակված, դեղին կիսամուշտակով մի կարմիրբանակային, Քրի թարս հարվածով խփեց նրան, գոռաց.

— Ա՛յ թե կովող ես, հա՛-ա. ես քո...

Անդրյուշկայի բախտից նրա մեջքին թռչկոտում էր հրացանը։ Թուրը փոխանակ կտրելու շարֆով կապված նրա վիզը, կրճկրճալով սահեց հրացանի փողի վրայով, վնասաց, պոկվեց կարմիրբանակայինի ձեռքից ու շտկվող աղեղի նման դեն թռավ։ Անդրյուշկայի տակի տաքարյուն ձին մի կողմ նետվեց, թրխկոցով փախավ։ Պետրոյի ու Բոդովսկովի ձիերը սլացան նրա ետևից...

Պետրոն ախ քաշեց, մի վայրկյան կանգ առավ, սփրթնեց, քրտինքը միանգամից ողողեց նրա դեմքը։ Նա ետ նայեց. տասի չափ կազակներ վազ էին տալիս նրա մոտ։

— Կորա՛նք,— գոռաց Բոդովսկովը։ Սարսափը ծռմռում էր նրա դեմքը։

— Թռեք յառի տակ, կազակներ, եղբայրներ, յառի տա՛կ։

Պետրոն ինքն իրեն հավաքեց. առաջինը վազեց դեպի յառը ու երեսուն սաժենանոց զառիթափով ներքև գլորվեց։ Կառչելով քոլից, նա կիսամուշտակը պատռեց կրծքի գրպանից մինչև փեշի բոլորքը, վեր թռավ, միանգամից ամբողջ մարմնով թափահարվեց շան նման։ Վերևից գլդի-գլոր, շուռ ու մուռ գալով թափվում էին կազակները։

Մի բոպեում ներքև ընկավ տասնմեկ մարդ։ Պետրոն տասներկուերորդն էր։ Այնտեղ, վերևում դեռ ճայթում էին կրակոցները, հնչում ճիչերը, ձիերի դոփյունը։ Իսկ ձորակի հատակում կազակները հիմարաբար թափ էին տալիս փափախներին նստած ձյունն ու ավազը, ոմանք շփում էին մարմինների ցաված տեղերը։ Մարտին Շամիլը հանելով փակաղակը, դուրս էր փչում հրացանի փողի մեջ լցված ձյունը։ Մի տղայի, Մանիցկովի, խուտորի հանգուցյալ ատամանի որդու թշերը, հոսող արցունքներով ողողված, դողում էին մեծ ահից։

— Ի՞նչ անենք, Պետրո, տա՛ր մեզ։ Մահը աչքերիս առաջ է... Ո՞ր շուրն ընկնենք։ Օ՛յ, կկոտորեն մեզ։

Ֆեդոտը չքչքացրեց ատամները, նետվեց ներքև, ձորակի հատակով վազեց դեպի Դոն։

Նրա ետևից ոչխարների պես վազ տվին նաև մնացածները։

Պետրոն դժվարությամբ կանգնեցրեց նրանց։

— Կանգնեցեք, կորոշենք... Մի՛ փախեք, կկրակեն։

Բոլորին դուրս բերեց յառի կարմրակով կողում գտնվող հեղեղների փորած փոսի մոտ ու, կակազելով, բայց աշխատելով հանգիստ տեսք ունենալ, առաջարկեց.

— Ներքև գնալ չի կարելի։ Նրանք մերոնց հեռու կըքշեն... Պետք է այստեղ... Ցրվեցեք ու պառկեք փոսերի մեջ... Երեքը թող այս կողմը անցնեն... Կպաշտպանվենք կրակելով... Այստեղ կարելի է դիմանալ պաշարման...

— Ախր կկորշենք, է՛։ Հայրեր, սիրելիներ, թողեք ինձ այստեղից... Չեմ ուզում... Չեմ ցանկանում մեռնել,— հանկարծ մղկտաց խարտյաշ, դեռ մինչ այդ լացող տղան՝ Մանիցկովը։

Ֆեդոտը կալմիկական աչքերից կայծեր թափելով, հանկարծ բռունցքով ուժգին խփեց Մանիցկովի դեմքին։

Տղայի քթից հորդեց արյունը, նա մեջքով կավ թափեց յառի պատից ու հազիվ մնաց ոտների վրա, բայց լացը դադարեցրեց։

— Ո՞նց թե կրակելով պաշտպանվենք,— հարցրեց Շամիլը՝ բռնելով Պետրոյի թևերից,— բա քանի՞ փամփուշտ ունենք։ Փամփուշտներ չկան։

— Նռնակ կգցեն։ Պրծա՛վ մեր բանը։

— Լավ, բա ի՞նչ անենք.— Պետրոն հանկարծ կապուտակեց, բեղերի տակին, շրթունքների վրա պճպճաց փրփուրը.— Պառկեցե՛ք... Ե՞ս եմ հրամանատարը թե ոչ։ Կսպանե՛մ։

Նա իսկապես որ կազակների գլուխների վրա թափահարեց նագանը։

Նրա սուլող շշնջոցը կարծես կյանք ներշնչեց կազակներին։ Բոդովսկովը, Շամիլը ու էլի երկու կազակ վազեցին յառի մյուս կողմը, պառկեցին մի փոսի մեջ, մնացածները տեղավորվեցին Պետրոյի հետ։

Գարնանը լեռնային ջրի պղտոր հեղեղը, գլորելով բնածին քարերը, ձորակի հատակում խորխորատներ է փորում, քանդում կարմիր կավի շերտերը, յառի պատերի մեջ փոսեր ու անցքեր է փորում։ Հենց դրանց մեջ էլ դարանակալեցին կազակները։

Պետրոյի կողքին, հրացանը պատրաստ պահած, կռացած կանգնել էր Անտիպ Փշանովը, զառանցագին շշնջում էր.

— Ստյոպկա Աստախովը իր ձիու պոչից բռնեց... Նստեց ու ճղեց, իսկ ինձ չհաջողվեց... Հետևակը թողեց մեզ... Կկորչենք, եղբայրներ... Կմեռնենք, աստված վկա...

Վերևից լսվեց վազող քայլերի թփթփոց։ Յառից ձյան ու կավի կտորներ թափվեցին։

— Ահա նրանք,— շշնջաց Պետրոն՝ բռնելով Անտիպկայի թևքից, բայց սա հուսալքված ետ քաշեց թևը, նայեց վերև՝ մատը ձգանի վրա պահած։

Վերևից ոչ ոք չէր մոտենում յառի գլխին։

Այնտեղից լսվեցին ձայներ, բղավոցներ ձիերի վրա...

«Խորհուրդ են անում»,— մտածեց Պետրոն, ու նորից

քրտինքը հոսեց մեջքի, կրծքի փոսի, դեմքի վրայով,— ասես լայն բացվել էին մարմնի բոլոր ծակոտիները...

— Է՛յ, դուք, դուրս եկեք։ Միևնույն է, կխփենք,— գոռացին վերևից։

Յառի գլխից ավելի շատ, կաթի սպիտակ շիթի նման ձյուն էր թափվում։ Ըստ երևույթին ոմանք բոլորովին մոտեցել էին յառի եզրին։

Մի ուրիշ ձայն նույն տեղից վստահորեն ասաց.

— Նրանք այստեղից ցած են թռել, ահա հետքերը։ Ես հո ինքս տեսա։

— Պետրո Մելեխով, դուրս եկ։

Կույր բերկրանքը մի վայրկյան բոցի պես ընդգրկեց Պետրոյին։ «Կարմիրներից ո՞վ է ճանաչում ինձ։ Այդ մերոնք են, նրանց ետ են մղել»։ Բայց այդ նույն ձայնը նրան ստիպեց թեթևակի դողալ.

— Խոսում է Միխայիլ Կոշևոյը։ Առաջարկում ենք կամովին անձնատուր լինել։ Միևնույն է, չեք կարող փախչել։

Պետրոն սրբեց թաց ճակատը, ձեռքի վրա մնացին կարմրավուն, արյունոտ քրտինքի հետքերը։

Անտարբերության մի ինչ-որ տարօրինակ զգացում, որ մոռացման էր հասնում, սողոսկեց նրա մեջ։

Ու նրան օտարոտի թվաց Բոդովսկովի բղավոցը.

— Դուրս կգանք, եթե կխոստանաք բաց թողնել մեզ։ Իսկ եթե ոչ, կրակելով կպաշտպանվենք։ Վերցրեք մեզ։

— Բաց կթողնենք...— մի փոքր լռելով, պատասխանեցին վերևից։

Պետրոն սարսափելի ճիգով թոթափեց իր քնեած թմրությունը։ «Բաց կթողնենք» բառերի մեջ նա անտեսանելի հեգնանք զգաց։ Խուլ բղավեց.

— Ե՛տ դարձեք,— բայց արդեն ոչ ոք չէր հնազանդվում նրան։

Բոլոր կազակները, բացի փոսի մեջ կուչ եկած Անտիպկայից, կառչելով յառի ելուստներից, վերև բարձրացան։

Պետրոն վերջինը դուրս եկավ։ Նրա մեջ, ինչպես երեխան կնոջ սրտի տակ, տիրաբար խաղաց կյանքը։ Ղեկավարվելով ինքնապաշտպանության բնազդով, նա գլխի ընկավ պահեստատուփից դուրս շպրտելու փամփուշտները բարձրա-

ցավ յառի դիք լանջով։ Նրա աչքերը մշուշվում էին, սիրտը բռնել էր ամբողջ կուրծքը։ Ծանր ու հեղձուցիչ էր օդը ինչպես մանկության օրերի մղձավանջային երազում։ Նա պոկեց վերնաշապկի օձիքի կոճակները, պատռեց տակի կեղտոտ շապկի օձիքը։ Քրտինքը լցվում էր նրա աչքերը, ձեռները սլկում էին յառի պաղ ելուստներից։ Խոխռացնելով, նա ելավ յառի գլխի հարթակը, որ տրորված էր ոտներով, հրացանը գցեց գետին, ձեռները վեր բարձրացրեց։ Նրանից առաջ ելած կազակները իրար գլխի էին հավաքվել։ Ենջատվելով հետևակ ու հեծյալ զաամուրցիների մեծ բազմությունից, Միշկա Կոշևոյը քայլեց նրանց կողմը, մոտեցան հեծյալ կարմիրբանակայինները։

Միշկան հուպ մոտեցավ Պետրոյին, կամացուկ, աչքերը գետնից չբարձրացնելով, հարցրեց.

— Կովեցիր-կշտացա՞ր.— սպասելով պատասխանի ու շարունակելով նայել Պետրոյի ոտների տակ, հարցրեց.— Դո՞ւ էիր սրանց հրամանատարը։

Պետրոյի շրթունքները դողացին։ Մեծ հոգնածության ժեստով, դժվարությամբ նա ձեռքը տարավ թաց ճակատին։ Միշկայի երկար, կեռ արտևանունքները դողդողացին, վերին ուռուցիկ շրթունքը, որ ծածկված էր տենդի խոցիկներով, վերև սողաց։ Այնպիսի ուժեղ դողով բռնվեց Միշկայի մարմինը, որ թվում էր, թե նա չի կարողանա կանգնած մնալ, կընկնի։ Բայց նա իսկույն աչքերը հառեց Պետրոյի վրա, նայելով նրա ակնաբիբերին, տարորեն-օտար նայվածքը մեխելով դրանց, ու արագ մոթմոթաց.

— Հանվի՛ր։

Պետրոն արագորեն հանեց կիսամուշտակը, խնամքով ծալեց ու դրեց ձյան վրա. հանեց փափախը, գոտին, պաշտպանական գույնի վերնաշապիկը ու, նստելով կիսամուշտակի փեշին, սկսեց հանել սապոգները, նա յուրաքանչյուր վայրկյան ավելի ու ավելի էր գունատվում։

Իվան Ալեքսեևիչը իջավ ձիուց, մոտեցավ կողքից, ու նայելով Պետրոյին, ատամներն իրար սեղմեց՝ վախենալով հեկեկալուց։

— Սպիտակեղենդ մի՛ հանի,— շշնջաց Միշկան, ու ցընցվելով, հանկարծ սուր ձայնով բղավեց.— Շո՛ւտ արա, է՛...

Պետրոն շշկլվեց, ոտներից հանած բրդե գուլպաները գնդեց ու դրեց սապոգների ճիտքերի մեջ ու, կանգնելով, կիսամուշտակից ձյան վրա դրեց մերկ ոտները, որոնք ձյան վրա շաֆրանե-դեղին գույն ունեին։

— Քավո՛ր,— հազիվ շարժելով շրթունքները, կանչեց նա Իվան Ալեքսեևիչին։ Սա լուռ նայում էր, թե ինչպես է հալչում ձյունը Պետրոյի մերկ գարշապարների տակ։— Քավոր Իվան, դու մկրտել ես իմ երեխային... Քավո՛ր, մի սպանեք ինձ,— խնդրեց Պետրոն, ու տեսնելով, որ Միշկան արդեն նագանը բարձրացրել է իր կրծքի բարձրության չափ, լայնացրեց աչքերը՝ ասես պատրաստվելով ինչ-որ կուրացուցիչ բան տեսնելու, արագորեն խաչակնքելու ձև տվեց մատներին, գլուխն առավ ուսերի մեջ, ինչպես ցատկումից առաջ։

Նա չլսեց կրակոցը, ընկավ մեջքի վրա, ինչպես ուժեղ ցնցումից։

Կոշևոյի մեկնված ձեռքը բռնեց նրա սրտից ու իսկույն այնտեղից քամեց արյունը։ Օրհասական, վերջին ճիգով Պետրոն դժվարությամբ բացեց տակի շապկի օձիքը՝ ձախ պտուկի տակին մերկացնելով գնդակի կտրվածքը։ Մի փոքր հապաղելով, այնտեղից դուրս եկավ արյունը, հետո, ելք գտնելով, սվսվալի հորդեց կպրանման-սև շիթերով։

XXXIV

Լուսադեմին Կարմիր յառ ուղարկված հետախուզախումբը վերադարձավ և լուր բերեց, որ մինչև Ելանսկու սահմանը կարմիրներ չեն հայտնաբերված և որ Պետրո Մելեխովն ու տասը կազակ թրատված-ընկած են այնտեղ, յառի գըլխին։

Գրիգորին կարգադրեց սահնակներ ուղարկել սպանվածներին բերելու, գնաց Խրիստոնյայի մոտ՝ գիշերվա մնացած մասն այնտեղ անցկացնելու։ Մեռածի վրա կանանց ողբը, Դարյայի աղիողորմ լացն ու ձայնը նրան արտաքսեցին տանից։ Մինչև լուսաբաց նա նստեց Խրիստոնյայի խրճի-

թում, վառարանի մոտ։ Ագահությամբ ծխում էր, ու կարծես վախենալով դեմառդեմ մնալ իր մտքերի հետ, Պետրոյի պատճառած վշտի հետ, նորից հապճեպորեն հանում էր ծխախոտի տուպրակը, ամբողջովին ներշնչում բարկ ծուխը, ննջող Խրիստոնյայի հետ շարունակում կողմնակի խոսակցությունները։

Լուսացավ։ Հենց առավոտից սկսվեց հալիլոցը։ Ժամը տասից լճակներ երևացին աղբոտած ճանապարհի վրա։ Կտուրներից ջուր էր կաթում։ Գարնանային զարթոնքով կանչում էին աքաղաղները, մի տեղից հավի կչկչոց էր գալիս ինչպես տոթակեզ կեսօրին։

Բակերի արևոտ կողմում, տաք տեղերում եզները քրսմրսվում էին ցանկապատերին։ Քամին նրանց թուխ մեջքերից տանում էր գարնանը թափվող մազը։ Տարածված էր հալչող ձյան բարկ ու անալի հոտը։ Խրիստոնյայի դարպասի մոտ ճոճվելով խնձորենու մերկ ոստի վրա, ճվողում էր մի փոքրիկ, ձմռանը չչվող երաշտահավ։

Գրիգորին կանգնած էր դարպասի մոտ, սպասում էր, որ բլուրից կերևան սահնակները, ու երաշտահավի ճվողությունը ակամա նմանեցնում էր մանկութ ծանոթ լեզվին։ «Սրի՛ր խոփը, սրի՛ր խոփը»,— ցնծագին դայլայլում էր երաշտահավը, այդ տաք օրը, իսկ սառնամանիքին,— Գրիգորին այդ գիտեր,— փոխվում էր նրա ձայնը. երաշտահավը արագ ճվողում էր ու այսպիսի մի բան էր ստացվում. «Հագիր քոշերդ, հագի՛ր քոշերդ»։

Գրիգորին հայացքը ճանապարհից դարձնում էր թրուչկոտող թռչունի վրա։ «Սրիր խոփը, սրի՛ր խոփը»,— ճլվլում էր այն։ Ու Գրիգորին անակնկալ վերհիշեց, թե ինչպես մանկության օրերում տափաստանում ինքն ու Պետրոն հնդուհավեր էին արածացնում, ու Պետրոն, որ այն ժամանակ բաց շեկլիկ գլխով, շարունակ քերծված, կարճլիկ քթով էր, ճարտարությամբ ընդօրինակում էր հնդուհավերի կոթկրթոցը ու նրանց խոսվածքը նմանեցնում իր մանկական լեզվին։ Նա հմուտ կերպով վերարտադրում էր վիրավորված հնդուհավիկի ծվծվոցը՝ բարակ ձայնով արտասանելով. «Բոլորը կոշիկներով են, իսկ ես ոչ, բոլորը կոշիկներով են, իսկ ես ոչ»։ Ու իսկույն, չռելով աչքերը, ծալում էր ձեռները,

քավթառ հնդաքաղաղի նման կողքի քայլում, կոթկոթում՝ «Գո՛ւռ, գո՛ւռ, գո՛ւռ, բազարում ստահակին սապոգներ գնենք»։ Այն ժամանակ Գրիգորին ծիծաղում էր երջանիկ ծիծաղով, խնդրում էլի խոսել հնդուհավերի լեզվով, ցույց տալ, թե ինչպես մտահոգված ծվծվում է հնդուհավի ձագը, որը խոտաբույսերի մեջ գտել է մի որևէ կողմնակի առարկա, օրինակ, թիթեղի կամ լաթի կտոր...

Փողոցի ծայրում երևաց առջևի սահնակը։ Դրա կողքից մի կազակ էր քայլում։ Առաջինի ետևից դուրս եկան երկրորդը և երրորդը։ Գրիգորին վանեց արցունքը և անկոչ հուշերի մեղմ ժպիտը, հապճեպորեն քայլեց դեպի իրենց դարպասը։ Ուզում էր առաջին սարսափելի րոպեին զսպել վշտից խելագարված մորը և չթողնել, որ սա մոտենա Պետրոյի դիակը բերող սահնակին։ Առաջին սահնակի կողքից առանց գլխարկի քայլում էր Ալյոշկա Շամիլը։ Կտրված թևի մնացորդով նա փափախը սեղմել էր կրծքին, աջ ձեռքով բռնել մազե երասանները։ Գրիգորին երկար չզննելով Ալյոշկայի դեմքը, նայեց սահնակին։ Ծղնոտե փոռոցի վրա, երեսը դեպի վեր պառկել էր Մարտին Շամիլը։ Դեմքը, կանաչ վերնաշապիկը կրծքի ու ներս ընկած փորի վրա ողողվել էին սառած արյունով։ Երկրորդ սահնակով բերում էին Մանիցկովին։ Սրա թրատված դեմքը թաղվել էր ծղնոտի մեջ։ Գլուխը կուչ էր եկել ուսերի արանքում, իսկ ծոծրակը բոլորովին կտրված էր վարժ հարվածից. մազերի սև լուլաները ծոպերի պես եզրակել էին գանգի մերկացած ոսկորները։ Գրիգորին նայեց երրորդ սահնակին։ Նա չճանաչեց մեռածին, բայց նրա աչքովն ընկավ մոմագույն, ծխախոտից դեղնած մատներ ունեցող ձեռքը։ Այն կախվել էր սահնակից, մատներով խազում էր հալչող ձյունը,— դրանք մեռնելուց առաջ խաչակնքելու ձև էին ընդունել։ Մեռելը սապոգներով ու շինելով էր. նույնիսկ փափախն էլ դրված էր կրծքին։ Գրիգորին բռնեց չորրորդ սահնակի ձիու սանձը, դրան վարգով տարավ բակը։ Սահնակի ետևից ներս վազեցին հարևանները, երեխաները, կնանիքը։ Ամբոխը խմբվեց մուտքի սանդուղքի մոտ։

— Ահա նա, մեր սիրելի Պետրո Պանտելեևիչը։ Վախճանվեց, էլի՛,— կաճացուկ ասաց մեկը։

Ստեպան Աստախովը առանց գլխարկի ներս մտավ դարպասից։ Որտեղից-որտեղ երևացին Գրիշակա պապին ու էլի երեք ծերունի։ Գրիգորին շփոթված նայեց շուրջը։

— Եկեք տանենք տուն...

Սահնակավարը փորձեց վերցնել Պետրոյի ոտներից, բայց ամբոխը լուռ բաժանվեց երկու մասի, պատկառանքով ճանապարհ տվեց մուտքի սանդուղքից իջնող Իլյինիչնային։

Նա նայեց սահնակին։ Մահու գունատությունը մթնեցրեց նրա ճակատը, ծածկեց այտերը, քիթը, սողաց կզակի վրայով։ Դողացող Պանտելեյ Պրակոֆևիչը նրան թևանցուկ արեց։ Առաջինը լացուկոծ բարձրացրեց Դունյաշկան, նրան արձագանքեցին տասնյակ ձայներ։ Դարյան դուռը շրխկացնելով, մազերը գգգված, դեմքը ուռած, դուրս թռավ տանից, նետվեց սահնակի վրա։

— Պետյո՛ւշկա, Պետյո՛ւշկա, ազիզս, վե՛ր կաց, վեր կաց։

Գրիգորիի աչքերը մթնեցին։

— Հեռացի՛ր, Դաշկա,— ինքն իրեն կորցրած, վայրագորեն գոռաց նա ու անդիտակցաբար հրեց Դարյայի կուրծքը։

Դարյան ընկավ ձնակույտի մեջ։ Գրիգորին արագորեն վերցրեց Պետրոյի թևերից, սահնակավարը՝ Պետրոյի մերկ կոճիկներից, բայց Դարյան նրանց ետևից չորեքթաթ սողաց սանդուղքի վրայով, նա բռնում, համբուրում էր ամուսնու չծովող, սառած ձեռները։ Գրիգորին ոտներով հրում էր նրան, զգում էր, որ էլի մի ակնթարթ, և ինքը կկորցնի իրենն։ Դունյաշկան զոռով անջատեց Դարյայի ձեռները, նրա ուշագնաց գլուխը սեղմեց իր կրծքին։

. . . . . .

. . . . . .

Խոհանոցում մեռելային լռություն էր տիրում։ Պետրոն պառկած էր հատակի վրա, նա տարօրինակ կերպով փոքր էր, ասես ամբողջովին սմքած։ Նրա քիթը սրվել էր, ցորնագույն բեղերը մթագնել էին, իսկ ամբողջ դեմքը խիստ երկարել էր, գեղեցկացել։ Շալվարի ծայրերից դուրս էին ընկել բոբիկ, մազոտ ոտները։ Մարմինը դանդաղ հալչում էր,

տակին կարմրավուն ջրի լճակ էր գոյացել։ Եվ որքան ավելի էր հալչում գիշերվա ընթացքում սառած մարմինը, այնքան ավելի էր զգացվում արյան աղի հոտը ու դիակային քաղցրամեղցր, տերեփուկային հոտը։

Պանտելեյ Պրակոֆևիչը մարագի չարդախի տակ տախտակներ էր տաշում դագաղի համար։ Կնանիքը օթախում զբաղված էին ուշքի չեկող Դարյայով։ Այնտեղից երբեմն լսվում էր որևէ մեկի բուռն, հիստերիկ հեծկլտոցը, հետո էլ առվակի նման խոխոջում էր «վշտակցելու» համար եկած խնամախոս Վասիլիսայի ձայնը։ Գրիգորին նստել էր նստարանի վրա, եղբոր դիմաց, ծխախոտ էր փաթաթում, նայում Պետրոյի դեմքին, որի եզրերը դեղնած էին, նրա ձեռներին, որոնց մատների եղունգները կլոր ու կապուտկած էին։ Օտարացման մեծ սառնությունը նրան արդեն բաժանում էր եղբորից։ Պետրոն հիմա արդեն օտար էր, կարճ ժամանակվա հյուր, որից նա բաժանվելու էր։ Պառկած է հիմա Պետրոն, թուշը անտարբերությամբ հպել է հողե հատակին, ասես ինչ-որ բան է սպասում անդորը, խորհրդավոր կիսաժպիտով, որը սառել է ցորնագույն բեղերի տակին։ Իսկ վաղը կինը և մայրը նրան կուղեկցեն գերեզմանոց։

Դեռ իրիկվանից մայրը երեք չուգուն ջուր տաքացրեց, իսկ կինը պատրաստեց մաքուր սպիտակեղեն, լավագույն շալվարն ու համազգեստը։ Գրիգորին, նրա հարազատ եղբայրը և նրա հայրը կլողացնեն այլևս նրան չպատկանող, իր մերկությունից շամաչող մարմինը։ Տոնական զգեստ կհագցնեն ու կդնեն սեղանի վրա։ Հետո էլ կգա Դարյան, լայն ու սառցե ձեռների մեջ,— որոնք դեռ երեկ գրկում էին նրան,— կդնի այն մոմը, որը նրանց երկուսին լույս էր տվել եկեղեցում, երբ նրանք քայլել էին գրքակալի շուրջը,— ու կազակ Պետրո Մելեխովը պատրաստ է հուղարկավորվելու այնտեղ, որտեղից մարդիկ չեն վերադառնում հայրենական տները։

«Ավելի լավ կլիներ դու մեռնեիր որևէ մի տեղ, Պրուսիայում, քան այստեղ, մորդ աչքերի առաջ»,— մտքում եղբորը կշտամբանքով ասում էր Գրիգորին, ու նայելով դիակին, հանկարծ սփրթնեց. Պետրոյի թշի վրայով արցունք

սողաց դեպի կախ ընկած բեղը։ Գրիգորին նույնիսկ վեր թռավ տեղից, բայց ավելի ուշադիր նայելով, թեթևացած շունչ առավ. ոչ թե մեռածի արցունք, այլ հալված, գանգուր քյաքուլից հոսող կաթիլ էր, որ ընկել էր Պետրոյի ճակատին, դանդաղ գլորվել թշի վրայով։

XXXV

Վերին Դոնի ապստամբական միացյալ ուժերի հրամանատարի հրամանով Գրիգորի Մելեխովը նշանակվեց Վեշենսկու գնդի հրամանատար։ Գրիգորին տասը հարյուրյակ կազակներին տարավ դեպի Կարգինսկայա։ Շտաբը նրան հրամանագրել էր ինչ կերպ էլ լինի ջախջախել Լիխաչևի ջոկատը և այն դուրս շպրտել օկրուգի սահմաններից, այն հաշվով, որ ոտքի հանվեն Կարգինսկայա ու Բոկովսկայա ստանիցաների բոլոր խուտորները, որոնք գտնվում են Ձիրի ավազանում։

Եվ Գրիգորին մարտի 7-ին տարավ կազակներին։ Ձյունից ազատված, սև, մերկ քոլերով ծածկված մի բլրակի վրա նրա կողքից անցան բոլոր տասը հարյուրյակները։ Ճանապարհի մոտ, ձիու վրա կողքի թեքված, կորացած, նա պինդ քաշում էր սանձը, զսպում տաքարյուն ձին, իսկ նրա կողքից երթական շարասյուներով անցնում էին Դոնի շրջակա խուտորների— Բազկիի, Բելոգորկայի, Օլշանսկու, Մերկուլովի, Գրոմկովսկու, Սեմյոնովսկու, Ռիբինսկու, Վոդյասկու, Լեբյաժու, Երիկի հարյուրյակները։

Գրիգորին ձեռնոց հագած ձեռքով շոյում էր սև բեղերը, շարժում ուրուրի իր քիթը, թևավոր հոնքերի տակից մռայլ, ջուսպ հայացքով ուղեկցում յուրաքանչյուր հարյուրյակը։ Ձիերի բազմաթիվ, թրջված ոտները հունցում էին թուխ, կիսահալ ձյունը։ Ծանոթ կազակներն անցնելիս ժպտում էին Գրիգորիին։ Նրանց փափախների վերևում քուլա-քուլա բարձրանում ու ցնդում էր ծխախոտի ծուխը։ Ձիերից գոլորշի էր բարձրանում։

Գրիգորին միացավ վերջին հարյուրյակին։ Երեք վերստ անցնելուց հետո նրանց դիմավորեց հեծյալ պարեկը։ Դրան գլխավորող ուրյադնիկը ձին քշեց-մոտեցավ Գրիգորիին։

— Կարմիրները նահանջում են Ձուկարինի ճանապարհով։

Լիխաչևի ջոկատը կռվի չբռնվեց։ Բայց Գրիգորին երեք հարյուրյակ ուղարկեց նրանց շրջանցելու և մնացածներով այնպես նեղեց, որ կարմիրբանակայինները արդեն Ձուկարինում սկսեցին թողնել սայլերը, լցարկղերը։ Ձուկարինի ծայրամասում, մի անշուք, փոքրիկ եկեղեցու մոտ, գետակում խրվեց ու մնաց Լիխաչևի մարտկոցը։ Հեծյալ հրետանավորները կտրատեցին քաշանները, տնամերձ ծառաստանների միջով սլացան դեպի Կարգինսկայա։

Կազակներն առանց կռվի անցան տասնհինգ վերստ,— Ձուկարինից մինչև Կարգինսկայա։ Աջ կողմում, Յասենովկայից դենը հակառակորդի հեծյալ պարեկը գնդակոծեց վեշենցիների հետախուզախումբը։ Գործը դրանով էլ վերջացավ։ Կազակներն արդեն սկսեցին կատակել,— «Մինչև Նովոչերկասկ ենք գնալու, հա՛-ա»։

Գրավված մարտկոցը ուրախացրել էր Գրիգորիին։ «Մինչև իսկ չեն կարողացել փականները փչացնել»,— արհամարհանքով մտածեց նա։ Եզներով դուրս քաշեցին խրված հրանոթները։ Հարյուրյակներից իսկույն մարտկոցի անձնակազմ հավաքվեց։ Հրանոթները գնում էին կրկնակի լծասարքով,— վեց զույգ ձիեր մի հրանոթ էին քաշում։ Պաշտպանության համար նշանակված կիսահարյուրյակը ուղեկցում էր մարտկոցին։

Մթնշաղին հարձակմամբ գրավեցին Կարգինսկայան։ Լիխաչևի ջոկատի մի մասը մնացած երեք թնդանոթով և ինը գնդացրով գերի բռնվեց։ Մնացածները Կարգինսկու ուկոմի հետ միասին կարողացան խուտորների վրայով փախչել Բոկովսկայա ստանիցայի ուղղությամբ։

Ամբողջ գիշերն անձրև էր գալիս։ Առավոտյան դեմ հեղեղվեցին հովիտներն ու ձորակները։ Ճանապարհները անանցանելի դարձան. որ հովիտն ասես՝ թակարդ էր։ Ջուր ծծած ձյուը փլչում էր մինչև գետին։ Ձիերը խրվում էին, մարդիկ ընկնում հոգնածությունից։

Բազկիի խորունժի Երմակով Խարլամպիի հրամանատարությամբ երկու հարյուրյակ. որ Գրիգորին ուղարկել էր նա-

հանջող հակառակորդին հետապնդելու, Լատիշևսկի և Վիսլոգուզովսկի կից խուտորներում բռնեցին ետ մնացած մոտ երեսուն կարմիրբանակային. առավոտյան նրանց բերին Կարգինսկայա։

Գրիգորին իջևանել էր տեղական հարուստ Կարգինի հրսկայական տանը։ Գերիներին բերին դրա բակը։ Երմակովը մտավ Գրիգորիի մոտ, բարևեց։

— Գերի եմ վերցրել քսանյոթ կարմիրների։ Բանբերդ այնտեղ ձի է բերել քեզ համար։ Հիմի գնո՞ւմ ես թե ինչ։

Գրիգորին շինելի վրայից կապեց գոտին, հայելու առաջ սանրեց փափախի տակ խճճված մազերը, միայն դրանից հետո դարձավ դեպի Երմակովը։

— Գնանք։ Հիմա պետք է դուրս գալ։ Հրապարակում միտինգ կանենք ու կարշավենք։

— Էլ ինչի՞ է պետք միտինգը.— Երմակովը թոթվեց ուսերը, ժպտաց։— Նրանք բոլորն էլ առանց միտինգի արդեն ձի են նստել։ Հրե՛ն, նայիր, դրանք վեշենցիներ չեն, բայց գալիս են այստեղ։

Գրիգորին նայեց պատուհանից։ Գալիս էին երկու հարյուրյակ, հիանալի կարգով, յուրաքանչյուր շարքում չորս հեծյալ։ Կազակները կարծես ջոկովի էին, ձիերը հիանալի էին,— թեկուզ ստուգատեսի ուղարկեիր։

— Ո՞րտեղից է այդ, ո՞րտեղից դրանց բերեց սատանան,— ցնծությամբ մոթմոթաց Գրիգորին՝ վազելիս կապելով թուրը։ Դարպասի մոտ Երմակովը հասավ նրան։

Առջևի հարյուրյակի հրամանատարը արդեն մոտեցավ դարպասին։ Նա պատկառանքով ձեռքը տարավ փափախի եզրին, չհամարձակվեց այն մեկնել Գրիգորիին։

— Դուք ընկեր Մելեխո՞վն եք։

— Ես եմ։ Ո՞րտեղից եք եկել։

— Ընդունեցեք մեզ ձեր զորամասը։ Միանում ենք ձեզ։ Մեր հարյուրյակն այս գիշեր է կազմվել։ Լիխովիդով խուտորից է, իսկ մյուս երկու հարյուրյակը՝ Գրաչևից, Արխիպովկայից ու Վասիլևկայից։

— Կազակներին տարեք հրապարակ։ Այնտեղ հիմի միտինգ կլինի։

Բանբերը (Գրիգորին բանբեր է վերցրել Պրոխոր Զիկովին) ձին մատուցեց նրան, նույնիսկ բռնեց սանդանակը։ Երմակովը մի առանձին ճարպկությամբ, համարյա չդիպչելով թամքի դաշին ու ձիու բաշին, իր նիհար, երկաթե մարմինը գցեց թամքի վրա, մոտենալով և ըստ սովորականին թամքի վրա հարդարելով շինելի փեշերը, հարցրեց.

— Գերիներին ի՞նչ անենք։

Գրիգորին բռնեց նրա շինելի կոճակից, թամքից կռանալով մոտեցավ նրան։ Աչքերում շիկակարմիր կայծեր փայլեցին, բայց բեղերի տակ շրթունքները ժպտացին,— թեև գազանավարի։

— Հրամայիր տանել Վեշկի։ Հասկացա՞ր։ Այնպես որ հրե՛ն այն կուրգանից դենը չգնան։

Նա մտրակով ցույց տվեց ստանիցայի կողքին բարձրացող ավազոտ կուրգանի ուղղությամբ, քշեց ձին։ «Սա Պետրոյի համար առաջին հատուցումն է նրանց»,— մտածեց նա՝ անցնելով վարգի, ու առանց որևէ պատճառի մտրակով դաղեց ձիու գավակը և սպիտակավուն, ուռուցիկ սպի առաջացրեց։

XXXVI

Գրիգորին Կարգինսկուց արդեն երեք հազար հինգ հարյուր մարդ տարավ դեպի Բոկովսկայա։ Շտաբը և օկրուգի գործկոմը նրա ետևից սուրհանդակներով հրամաններ և կարգադրություններ էին ուղարկում։ Շտաբի անդամներից մեկը մասնավոր գրության մեջ ճոռոմ լեզվով Գրիգորիին գրել էր.

«Հարգելի ընկեր Գրիգորի Պանտելեևիչ, մեզ նենգավոր լուրեր են հասնում, որ իբր թե դու դաժան դատաստան ես տեսնում գերի կարմիրբանակայինների դեմ։ Իբր թե քո հրամանով ոչնչացված, այսինքն թրատված են երեսուն կարմիրբանակայիններ, որոնց գերի էր վերցրել Խարլամպի Երմակովը Բոկովսկու մոտ։ Լուրերի համաձայն, հիշյալ գերիների մեջ կար մի կոմիսար, որը շատ պետք կգար մեզ, նրանց ուժերը լուսաբանելու համար։ Դու, թանկագին ընկեր, վերացրու գերիներ չվերցնելու հրամանդ։ Այդպիսի հրամա-

նը սարսափելի վնասակար է մեզ համար, ու կազակները կարծես թե մինչև իսկ տրտնջում են այդ տեսակ դաժանության դեմ ու վախենում են, որ կարմիրներն էլ կթրատեն գերիներին և կոչնչացնեն մեր խուտորները։ Հրամանատարական կազմը նույնպես ուղարկիր կենդանի վիճակում։ Մենք նրանց կամաց-կամաց մեջտեղից կվերացնենք Վեշկիում կամ Կազանսկում, իսկ դու քո հարյուրյակներով գնում ես ինչպես գրող Պուշկինի պատմական վեպի Տարաս Բուլբան և ամեն ինչ հրի ու սրի ես մատնում ու հուզում կազակներին։ Դու խելոքացիր, խնդրեմ, գերիներին մի՛ տուր մահվան, այլ ուղարկիր մեզ մոտ։ Վերոհիշյալում էլ հենց կլինի մեր ուժը։ Եվ ապա, ողջ լինես։ Ուղարկում ենք քեզ խոնարհ բարև և հաջողություններիր ենք սպասում»։

Գրիգորին նամակը չկարդաց մինչև վերջ, պատռեց, գցեց ձիու ոտների տակ։ Ի պատասխան Կուդինովի հրամանի,— «Անհապաղ ծավալիր հարձակումը դեպի հարավ, Կրուտենկի—Աստախովո—Գրեկովո ճակատամասը։ Շտաբը անհրաժեշտ է համարում միանալ կադետների ճակատին։ Հակառակ դեպքում մեզ կշրջապատեն ու կջարդեն»,— առանց ձիուց իջնելու գրեց.— «Հարձակվում եմ Բոկովսկու վրա, հետապնդում եմ փախչող հակառակորդին։ Իսկ Կրուտենկու վրա չեմ գնա, քո հրամանը հիմար հրաման եմ համարում։ Եվ ինչո՞ւ պիտի գնամ Աստախովոյի վրա հարձակվելու։ Այնտեղ բացի քամուց ու խախոլներից, ոչ ոք չկա»։

Սրանով վերջացավ նրա պաշտոնական գրագրությունը ապստամբական կենտրոնի հետ։ Հարյուրյակները երկու գնդի բաժանված, մոտենում էին Բոկովսկուն սահմանակից Կոյնկով խուտորին։ Մարտական հաջողությունը դեռ երեք օր ժպտում էր Գրիգորիին։ Կովով գրավելով Բոկովսկայան, Գրիգորին ինքնագլուխ շարժվեց դեպի Կրասնոկուտսկայա։ Ջարդեց իր ճանապարհը փակած մի փոքրիկ ջոկատ, բայց չհրամայեց թրատել վրցրված գերիներին, սրանց ուղարկեց թիկունք։

Մարտի 9-ին նա արդեն գնդերը մոտեցնում էր ուկրաինական Ջիստյակովո գյուղին։ Այդ ժամանակ կարմիր հրամանատարությունը թիկունքից սպառնալիք զգալով, ապըստամբության դեմ մի քանի գունդ ու մարտկոցներ նետեց։

Ջիստյակովոյի մոտ վրա հասած կարմիր գնդերը զարկվեցին Գրիգորիի գնդերի հետ։ Մարտը երեք ժամ տևեց։ Վախենալով «ծուղակից», Գրիգորին իր զորամասերով ետ քաշվեց դեպի Կրասնոկուտսկայա։ Բայց մարտի 10-ի առավոտյան կովում խոպերի կարմիր կազակները մի լավ գզգզեցին վեշենցիներին։ Գրոհի ու հակագրոհի պահին երկու կողմից իրար վրա տվին դոնեցիները, թրամարտեցին ինչպես հարկն է, ու Գրիգորին մարտում կորցնելով ձին, թուշը պատռված, գնդերը կովից դուրս բերեց, ետ քաշվեց դեպի Բոկովսկայա։

Երեկոյան նա հարցաքննեց մի գերի խոպերցու։ Նրա առաջ կանգնած էր Տեպիկինսկայա ստանիցայի տարեց մի կազակ, խիստ շիկահեր, նեղ կրծքանի, շինելի ծալի վրա— կարմիր բանտի ծվեններ։ Նա հոժարաբար էր պատասխանում հարցերին, բայց ժպիտը ժլատ ու մի տեսակ ծուռն էր։

— Երեկ կովում ի՞նչ գնդեր կային։

— Ստենկա Ռազինի անվան մեր երրորդ կազակական գունդը։ Նրա մեջ համարյա բոլորն էլ խոպերի օկրուգի կազակներ են։ Հինգերորդ Զաամուրսկի, Տասներկուերորդ հեծելազորային և Վեցերորդ Մցենյան գնդերը։

— Ո՞ւմ ընդհանուր հրամանատարությամբ։ Ասում են Կիկվիձե՞ն էր տանում։

— Ոչ, միացյալ ջոկատի հրամանատարը ընկեր Դոմնինն էր։

— Ձեզ մոտ շա՞տ ռազմամթերք կա։

— Բավական շատ։

— Թնդանոթնե՞ր։

— Կարծեմ ութ հատ։

— Ո՞րտեղից էին բերել գունդը։

— Կամենսկու խուտորներից։

— Բացատրե՞լ էին, թե ուր են ուղարկում։

Կազակը շշկլվեց, բայց և այնպես պատասխանեց։ Գրիգորին ուզեց տեղեկանալ խոպերցիների տրամադրության մասին։

— Կազակներն իրար մեջ ի՞նչ էին ասում։

— Ասում էին, թե չեն ուզում կռիվ գնալ...

— Գնդում գիտե՞ն, թե մենք ինչի դեմ ենք ապստամբել։

— Ո՞ր տեղից իմանան։

— Բա ինչո՞ւ էին չկամությամբ գնում։

— Դուք էլ հո կազակներ եք։ Ախր կռիվը մեր հոգին հանել է։ Երբ որ մենք գնացինք Միրոնովի հետ, այն ժամանակից մինչև հիմի կռվի մեջ ենք։

— Գուցե ծառայե՞ս մեզ մոտ։

Կազակը թոթվեց նեղ ուսերը։

— Ձեր կամքն է, ամա հավես չկա...

— Դեհ, գնա։ Կթողնենք, կերթաս կնկադ մոտ... Կարոտած կլինես, հը՞։

Գրիգորին աչքերը կկոցելով, նայեց հեռացող կազակի ետևից, կանչեց Պրոխորին։ Երկար ծխում էր, լռում։ Հետո մոտեցավ լուսամուտին, ու մեջքով դեպի Պրոխորը կանգնած, հանգիստ հրամայեց.

— Ասա տղերանց, որ հիմի իմ հարցաքննած մարդուն սուսուփուս տանեն այգիները։ Կարմիր կազակներին ես գերի չեմ վերցնում.— Գրիգորին կարուկ շուռ եկավ ծռված կրունկների վրա.— Թող դրան հենց հիմի... Գնա՛։

Պրոխորը գնաց։ Գրիգորին մի բոպե կանգնած էր՝ կոտրատելով պատուհանին դրված խորդենիների փափուկ ոստերը, հետո արագ դուրս եկավ։ Պրոխորը ցածրաձայն խոսում էր կազակների հետ, որոնք նստել էին ամբարի տակ, արևկող տեղում։

— Բաց թողեք գերուն։ Թող նրա համար անցաթուղթ գրեն,— առանց կազակներին նայելու ասաց Գրիգորին ու վերադարձավ սենյակ, կանգնեց հնացած հայելու առաջ, տարակուսանքով տարածեց ձեռները։

Նա չէր կարողանում ինքն իրեն բացատրել, թե ինչու դուրս ելավ ու հրամայեց բաց թողնել գերուն։ Չէ՞ որ նա որոշ չարախինդ զգացում, գոհունակության նմանվող ինչ-որ բան ապրեց, երբ թաքցրած ծաղրանքով ասաց՝ «Կթողնենք, կերթաս կնկադ մոտ... Գնա»,— ինքն էլ գիտեր, որ հիմա կկանչի Պրոխորին ու կհրամայի այգիներում գնդակահարել խոպերցուն։ Նա մի փոքր ջղայնացավ կարեկցության իր զգացմունքի վրա. դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ անգիտակցական կարեկցություն, որը սողոսկել էր նրա գիտակցության մեջ ու դրդել էր ազատել թշնամուն։ Ու միևնույն ժամանակ

այն թարմացուցիչ-խնդաբեր էր... Այդ ինչպե՞ս պատահեց։ Նա չէր կարողանում ինքն իրեն հաշիվ տալ։ Եվ դա առավել ևս տարօրինակ էր նրանով, որ ինքը հենց երեկ ասում էր կազակներին. «Մուժիկը թշնամի է, բայց այն կազակը, որ հիմի կարմիրների հետ է գնում, երկու թշնամի արժե։ Կազակի, որպես լրտեսի դատաստանը կարճ պետք է լինի մեկ, երկու,— և ուղարկիր գրողի ծոցը»։

Հենց այս շլածված, խոցող հակասությամբ, իր գործի անիրավացիության ըմբոստացած զգացումով էլ Գրիգորին հեռացավ բնակարանից։ Մինչ այդ նրա մոտ եկան Ջիրի գնդի հրամանատարը,— բարձրահասակ մի ատամանցի անշնչան, մանր, հիշողությունից ջնջվող դիմագծերով, ու հարյուրյակների երկու հրամանատար։

— Էլի օժանդակ ուժեր են ուղարկել,— ժպտալով հաղորդեց գնդի հրամանատարը,— երեք հազար ձիավորներ Նապոլովից, Յաբլոնևայա ռեչկայից, Գուսինկայից,— չհաշված երկու հետևակ հարյուրյակը։ Ի՞նչ պիտի անես դրանց, Պանտելևիչ։

Գրիգորին գոտուց քարշ արավ մաուզերը և պճնագեղ դաշտային պայուսակը, որոնք մնացել էին Լիխաչևից, ու դուրս ելավ բակը։ Շողում էր տաք արևը։ Երկինքը ամառվա պես բարձր ու կապույտ էր, ու ամառվա պես դեպի հարավ էին սահում փոքրիկ ամպերը։ Գրիգորին մի նրբանցքում հավաքեց բոլոր հրամանատարներին, խորհրդակցելու համար։ Եկան մոտ երեսուն մարդ, նստոտեցին տապալված ցախե ցանկապատի վրա, մեկի ծխախոտի տոպրակը ձեռքից ձեռք անցավ։

— Ի՞նչ պլաններ ենք կազմելու։ Ինչպե՞ս շարդենք այն գնդերը, որոնք մեզ Ջիստյակովոյից ետ քշեցին, և ո՞ր կողմը պիտի գնանք,— հարցրեց Գրիգորին ու միաժամանակ հաղորդեց Կուդինովի հրամանի բովանդակությունը։

— Իսկ մեր դեմ ինչքա՞ն զորք կա, հարցուփորձ արեցի՞ր գերուն,— մի փոքր լռելուց հետո հարցրեց հարյուրյակների հրամանատարներից մեկը։

Գրիգորին թվեց նրանց դեմ կանգնած գնդերը, թռուցիկ կերպով հաշվեց հակառակորդի սվինների ու թրերի հավանական թիվը։ Կազակները լռեցին։ Չէր կարելի խորհրդակ-

ցությանը հանդես գա։ Հիմար, չմտածված խոսքով։ Գրաչևսկու հարյուրյակի հրամանատարը հենց այդպես էլ ասաց.

— Մի քիչ կաց, Մելեխով։ Թող մտածենք։ Սա հո թրով կտրելու բան չի։ Կարող ենք քյալագի մեջ ընկնել։

Նա հենց առաջինը սկսեց խոսել։

Գրիգորին ուշադրությամբ լսեց բոլորին։ Արտահայտվողների մեծամասնության կարծիքն այն էր, որ նույնիսկ հաջողության դեպքում շատ հեռու չգնան և պաշտպանողական պատերազմ մղեն։ Սակայն Չիրի կողմի հրամանատարներից մեկը ջերմորեն պաշտպանում էր ապստամբական ուժերի հրամանատարի հրամանը, ասում էր.

— Մենք չպետք է այստեղ թրև գանք։ Թող Մելեխովը մեզ տանի Դոնեցի կողմը։ Խելքներդ թոցրե՞լ եք, ինչ է։ Մենք շատ քիչ ենք, իսկ մեր դեմ ամբողջ Ռուսաստանն է։ Ո՞նց կարող ենք դիմանալ։ Վրա կտան մեզ, ու կկորչենք։ Պետք է կռվով առաջ անցնել։ Թեկուզև քիչ են մեր փամփուշտները, բայց մենք կճարենք։ Պետք է արշավանքի դուրս գալ։ Վճռեցե՛ք։

— Բա ժողովրդի՞ն ինչ անենք,— կանանց, ծերերին, երեխեքին։

— Թող մնան։

— Քո խելոք գլուխը անխելքի ձեռքն է ընկել։

Մինչ այդ, ցանկապատի ծայրին նստած, հրամանատարները շշնջալով խոսում էին վերահաս գարնան մասին, այն մասին, թե ինչ կլինի տնտեսությունների վիճակը, եթե կռվով առաջ գնան, բայց Չիրի հրամանատարի ճառից հետո բոլորն էլ սկսեցին տաքացած խոսել։ Խորհրդակցությունը միանգամից ընդունեց խուտորային ինչ-որ ժողովի բնույթ։ Նապոլովի զառամյալ մի կազակ մյուսներից ավելի շատ բարձրացրեց ձայնը.

— Մեր ցանկապատերից չենք հեռանա։ Ես առաջինը խուտոր կտանեմ իմ հարյուրյակը։ Թե որ կռվելու ենք, ուրիմըս կռվենք մեր տների մոտ և ոչ թե ուրիշների կյանքը փրկենք։

— Դու շատ մի վրա տա։ Ես հարմար եմ դատում, իսկ դու բղավում ես։

— Էլ ի՞նչ խոսելու բան կա։

— Թող Կուդինովն ինքը գնա Դոնեցի կողմը։

Սպասելով, որ ձայները հանդարտվեն, Գրիգորին վճռական խոսք դրեց վեճի կշեռքի վրա.

— Ֆրոնտը կպահենք այստեղ։ Թե որ Կրասնոկուտսկայան մեր կողմը լինի, նրան էլ կպաշտպանենք։ Առաջ գնալու կարիք չկա։ Խորհրդակցությունը վերջացավ։ Գնացեք ձեր հարյուրյակները։ Հենց հիմի դուրս ենք գալի դիրքերը։

Կես ժամից հետո, երբ հեծելազորի հոծ զանգվածները անվերջ հոսում էին փողոցներով, Գրիգորին սուր կերպով հպարտ ուրախություն զգաց. նա դեռ երբեք այդչափ քանակությամբ մարդկանց հրամանատար չէր եղել։ Բայց իր ինքնասիրությունը շոյող բերկրանքի հետ մեկտեղ նրա մեջ անհանգստություն, բարկ դառնություն առաջացավ. արդյո՞ք նա կկարողանա ղեկավարել այնպես, ինչպես պետք է. արդյո՞ք կբավականանա իր կարողությունը՝ հազարավոր կազակներին կառավարելու։ Ոչ թե մի հարյուրյակ, այլ մի դիվիզիա էր ենթարկվում նրան։ Եվ մի՞թե ինքը, կիսագրագետ մի կազակ, կարող է իշխել հազարավոր մարդկանց վրա և նրանց համար մեծապես պատասխանատու լինել։ «Եվ որ գլխավորն է՝ ո՞ւմ դեմ եմ տանում նրանց. ժողովրդի դեմ... Բա ո՞վ է իրավացի»։

Գրիգորին, ատամները կրճտացնելով, ճանապարհում էր փակ շարքով անցնող հարյուրյակները։ Նրա աչքում հնացել ու դալկացել էր իշխելու արբեցուցիչ ուժը։ Մնացել էին անհանգստությունը, դառնությունը, անտանելիորեն ծանրացել սրտին, կորացրել ուսերը։

XXXVII

Գարունը բացել էր գետերի երակները։ Երկարել էին օրերը, ավելի կարկաչահոս դարձել լեռնային վարար վտակները։ Արևը նկատելիորեն շիկացել էր, թափել անզոր ու դեղին երանգը։ Արեգակնային ճառագայթների քիստերը ավելի էին խավոտել և արդեն խոցում էին տաքությամբ։ Կեսօրին գոլորշի էր արձակում ջեռացած հերկը, անտանելի պրսպրղում ծակոտկեն, թեփուկավոր ձյունը։ Խիտ ու բուրեղ էր օդը, որ հագեցած էր անալի խոնավությամբ։

Արևը տաքացնում էր Գրիգորիի մեջքը։ Տաքացնում էր ամբողջ գունդը։ Թամքերի բարձերը հաճելիորեն տաքացել էին, խոնավաշուրթ քամին թափացնում էր կազակների թուխ այտերը։ Նա երբեմնակի թեթև ցուրտ է՛լ էր բերում ձյունած բլուրից։ Բայց տաքությունը հաղթահարում էր ձմռանը։ Գարնանայնորեն կայտառ թռչկոտում էին ձիերը, նրանցից թափվում էր խունացած մազը, ձիու քրտինքը ավելի սուր էր ծակում մարդկանց պինչերը։

Կազակներն արդեն կապոտում էին ձիերի թել-թել պոչերը։ Ձիավորների մեջքերի վրա արդեն ավելորդ տեղն էին փոփոում ուղտի բրդից պատրաստված բաշլուղները, իսկ փափախների տակին նամանում էին ճակատները, ու մարդիկ կիսամուշտակներով և տաք չեքմեններով արդեն շոգում էին։

Գրիգորին գունդը տանում էր ամառային ճանապարհով։ Հեռվում, հողմաղացի խաչից դենը հոծ զանգվածներով ծավալվում էին կարմիրների հեծելավաշտերը. Սվիրիդով խուտորի մոտ սկսվում էր մարտը։

Գրիգորին դեռ չէր կարողանում հեռվից ղեկավարել, ինչպես այդ ընդունված էր։ Նա ինքն էր կռվի տանում Վեշենցիների հարյուրյակները նրանց նետում ամենավտանգավոր տեղերը։ Ու մարտը տեղի էր ունենում առանց ընդհանուր կառավարման։ Յուրաքանչյուր գունդ, խախտելով նախնական պայմանավորվածությունը, գործում էր հանգամանքների դասավորմանը հարմարվելու միջոցով։

Ռազմաճակատ չկար։ Դա լայն ծավալման ու մանևրներ կատարելու հնարավորություն էր տալիս։

Հեծելազորի շատությունը (Գրիգորիի ջոկատում այն գերակշռում էր) կարևոր առավելություն էր։ Օգտագործելով այդ առավելությունը, Գրիգորին որոշեց պատերազմ մղել «կազակական» եղանակով,— անցնել հակառակորդի թևերը, մանել նրա թիկունքը, ջախջախել գումակները, գիշերային հարձակումներով անհանգստացնել ու բարոյալքել կարմիրներին։

Բայց Սվիրիդովի մոտ նա որոշեց այլ կերպ գործել. հարյուրյակները արագ վարգով դուրս բերեց դիրքերը, նրանցից մեկը թողեց խուտորում, հրամայեց իջնել ձիերից, պուրակներում պառկել,— դարանակալել՝ նախապես ձիապահներին ուղարկելով խուտորի խորքը, բակերը, իսկ մնացած երկու հարյուրյակներով դուրս թռավ բլուրի վրա, ու հողմաղացից կես վերստ հեռավորությամբ հետզհետե կռվի բռնվեց։

Նրա դեմ կար կարմիր հեծելազորի ավելի քան երկու վաշտ։ Դրանք խոպերցիներ չէին, որովհետև Գրիգորին հեռադիտակով տեսավ մանր, ոչ Դոնի ձիեր կտրված պոչերով, իսկ կազակները երբեք չէին կտրում ձիերի պոչերը, չէին փչացնում ձիու գեղեցկությունը։ Հետևաբար հարձակվում էին կամ 13-րդ հեծելազորային գունդը, կամ նոր եկած զորամասեր։

Գրիգորին բլրակից հեռադիտակով դիտում էր տեղանքը։ Ձիու վրայից գետինքը միշտ էլ նրան ավելի լայնարձակ էր թվում, և նա իրեն ավելի վստահ էր զգում՝ երբ սապոգների թաթերը գտնվում էին ասպանդակների մեջ։

Նա տեսավ, թե ինչպես Ձիր գետի մյուս կողմից թմբաձև շարժվում էր երեք հազար հինգ հարյուր կազակների թուխ, երկար շարասյունը։ Վերջինս դանդաղ գալարվելով, բարձրանում էր սարն ի վեր, գնում դեպի հյուսիս, Ելանսկու և Ուստ-Խոպերսկու հողերի սահմանը, որպեսզի այնտեղ հանդիպեր Ուստ-Մեդվեդիցից հարձակվող հակառակորդին և օգներ պայքարում ուժասպառ եղած ելանցիներին։

Գրիգորին մեկ ու կես վերստ տարածությամբ էր բաժանված գրոհի պատրաստվող կարմիրների զանգվածից։ Գրիգորին հապճեպորեն, հին ձևով ծավալեց իր հարյուրյակները։ Կազակներից ոմանց ձեռքին տեգեր չկային, իսկ տեգեր ունեցողները անցան առաջին տողանը, տասը սաժենի չափ առաջ անցան։ Գրիգորին սլացավ առաջին տողանից էլ առաջ, կանգնեց կիսադարձ, հանեց թուրը։

— Կամացուկ վարգով մա՛րշ։

Առաջին րոպեին սայթաքեց նրա ձին՝ ոտը գցելով արջամկան բնի մեջ, որը ձյունով էր լցված։ Գրիգորին շրջվեց թամքի վրա, կատաղությունից սփրթնեց և թրի տափակ կողմով ուժեղ խփեց ձիուն։ Նրա ձին մի վեշենցուց վերցրած հիանալի շարային, կայտառ ձի էր, բայց Գրիգորին ծածուկ անվստահությամբ էր վերաբերվում նրան։ Նա գիտեր, որ

Հին երկու օրում չէր կարող ընտելանալ իրեն, ինքն էլ չէր ուսումնասիրել նրա սովորություններն ու բնավորությունը,— վախենում էր, որ ուրիշի ձին իրեն չի հասկանա կես խոսքից, սանձի թեթև շարժումից, այնպես, ինչպես հասկանում էր Ջիստյակովի մոտ սպանված իր ձին։ Երբ թրի հարվածը տաքացրեց ձիուն, և սա, չհնազանդվելով սանձին, քառատրոփի անցավ, Գրիգորին ներքուստ սարսռեց և նույնիսկ մի փոքր շփոթվեց։ «Սա իմ գլխին փորձանք կբերի»,— ցավով մտածեց նա։ Բայց որքան հեռու և համաչափ էր սլանում ձին իր ուժգնաթափ քառատրոփով, որքան ավելի էր հնազանդվում իր վազքին ուղղություն տվող ձեռքի հազիվ նկատելի շարժման, այնքան ինքնավստահ ու պաղարյուն էր դառնում Գրիգորին։ Մի վայրկյան հայացքը կտրելով դեմուդեմ եկող հակառակորդի երերուն, ցրիվ շարքերից, նա աչքերը սահեցրեց ձիու պարանոցի վրայով։ Ձիու շիկակարմրավուն ականջները պինդ ու բարկացկոտ սեղմված էին գլխին, պարանոցը, որ ձգված էր ասես կառափնարանի վրա, ռիթմիկորեն ցնցվում էր։ Գրիգորին շտկվեց թամքի վրա, ագահությամբ օդ առավ թոքերի մեջ, սապոգները խորունկ խոթեց ասպանդակների մեջ, նայեց շուրջը։ Քանի՞-քանի անգամ նա իր ետևում տեսել էր ձիավորներից ու ձիերից համաձուլված, դղրդալի հեղեղը, ու ամեն անգամ նրա սիրտը կծկվել էր երկյուղից՝ կենդանական վայրի հուզման վերահաս և ինչ-որ անբացատրելի զգացմունքի հանդեպ։ Այն մոմենտից, երբ նա բաց էր թողնում ձիու գլուխը, ու մինչև այն մոմենտը, երբ հասնում էր հակառակորդին, կար ներքին կերպափոխման անըմբռնելի մի ակնթարթ։ Այդ սարսափելի ակնթարթում բանականությունը, պաղարյունությունը, հաշվենկատությունը,— ամեն ինչ թողնում էր Գրիգորիին, և միայն գազանային բնազդն էր տիրաբար ու անբաժանելիորեն վարում նրա կամքը։ Եթե որևէ մեկը կարողանար գրոհի ժամին մի կողմից նայել Գրիգորիին, հավանորեն կկարծեր, որ սառն, չշփոթվող միտքն է կառավարում նրա շարժումները։ Արտաքուստ դրանք այնքա՜ն վրստահ էին, ստույգ ու հաշվարկված։

Երկու կողմի միջև տարածությունը կրճատվում էր թեթևացուցիչ արագությամբ։ Խոշորանում էին ձիավորների, ձիերի կերպարանքները։ Խուտորի արոտավայրի մի կարճ, քուլերով ու ձյունով ծածկված կտոր, որ գտնվում էր հեծյալների երկու հեղեղի միջև, կոխկրտվում էր ձիերի սմբակներով։ Գրիգորին նկատեց մի ձիավոր, որ սլանում էր իր հեծելավաշտի առջևից, մոտավորապես երեք ձիու մարմնի երկարությամբ նրանից հեռու։ Նրա տակի մուգ շագանակագույն, բարձրամարմին ձին գալիս էր գայլի կարճ ցատկումներով։ Ձիավորը օդում թափահարում էր սպայական սուրը, արծաթե պատյանը լիկլիկում էր ու զարկվում ասպանդակին, արևի տակ հրեղեն ցոլքեր արձակում։ Մի վայրկյան անց Գրիգորին ճանաչեց ձիավորին։ Դա Կարգինսկու ոչ կազակ կոմունիստ Պյոտր Սեմիգլազովն էր։ Տասնյոթ թվականին գերմանական պատերազմից նա առաջինը եկավ, այն ժամանակ քսանչորս տարեկան տղա էր, ոտների մինչ այդ չտեսնված փաթաթաններով։ Իր հետ բերեց բոլշևիկյան համոզմունքներ և ճակատային հատատուն կոփվածություն։ Նա բոլշևիկ էլ մնաց։ Ծառայում էր Կարմիր բանակում և ապստամբությունից առաջ եկել էր զորամասից, ստանիցայում սովետական իշխանությունն կազմակերպելու։ Հենց այս Սեմիգլազովն էլ սլանում էր Գրիգորիի վրա՝ վստահորեն քշելով ձին, նկարագեղ թափահարելով սպայական սուրը, որ գրավված էր խուզարկության ժամանակ և պիտանի էր միայն զորահանդեսների համար։

Բանալով միմյանց պինդ սեղմված ատամները, Գրիգորին մի քիչ բարձրացրեց սանձը, ու ձին հնազանդությամբ արագացրեց ընթացքը։

Գրիգորին գիտեր միմիայն իրեն հատուկ մի մանևր, որ նա կիրառում էր գրոհի ժամանակ։ Նա դիմում էր այդ մանևրին, երբ բնազդով ու հայացքով ճանաչում էր ուժեղ հակառակորդին, կամ երբ ուզում էր խոցել դիպուկ, մահացու կերպով, խոցել մի հարվածով, ինչ գնով էլ լինի։ Գրիգորին մանկությունից ձախլիկ էր։ Նա գդալն էլ ձախ ձեռքով էր վերցնում և դրանով խաչակնքում։ Պանտելեյ Պրոկոֆիևիչը դրա համար խիստ ծեծում էր նրան, նույնիսկ հասակակից տղաներն էլ նրան «Ձախլիկ Գրիշկա» էին անվանում։ Ծեծն ու հայհոյանքը ըստ երևույթին ազդեցություն ունեցան փոքրահասակ Գրիշկայի վրա։ Տասը տարեկանից

«Զախլիկ» մականվան հետ չքացավ աջ ձեռքը ձախով փոխարինելու նրա սովորությունը։ Բայց մինչև վերջին ժամանակները նա կարող էր ձախ ձեռքով հաջողությամբ կատարել այն ամենը, ինչ որ կատարում էր աջ ձեռքով։ Եվ ձախ ձեռքն էլ նույնիսկ ավելի ուժեղ էր։ Գրոհի ժամանակ Գրիգորին միշտ էլ անդավաճան հաջողությամբ օգտվում էր այդ առավելությունից։ Նա, ինչպես և սովորաբար բոլորը, ձին ընտրած հակառակորդի վրա քշելիս ձախ կողմն էր անցնում, որ աջ ձեռքով թրատեր. նույն կերպ էր վարվում նաև հակառակորդը, որը պետք է զարկվեր Գրիգորիի հետ։ Եվ ահա, երբ մինչև հակառակորդը ընդամենը մի տասը սաժեն էր մնում, և վերջինս մի քիչ կախվում էր կողքի, բարձրացնելով թուրը,— Գրիգորին կտրուկ, բայց թեթև շրջադարձով անցնում էր աջ կողմը՝ թուրը աջ ձեռքից նետելով ձախ ձեռքը։ Շփոթված հակառակորդը փոխում է դիրքը, նրա համար անհարմար է թրատել աջից ձախ, ձիու գլխի վրայով, նա կորցնում է ինքնավստահությունը, մահը նրա աչքերի առաջ է... Գրիգորին թափ առնելով հասցնում է սարսափելի ուժեղ, կտրող հարվածը։

Այն ժամանակից, երբ Զուբատին Գրիգորիին սովորեցնում էր թրատելը, «բակլանովյան» հարվածը,— շատ ջուր էր հոսել։ Գրիգորին երկու պատերազմի ընթացքում մարզել էր ձեռքը։ Թուրը բանեցնելն ու գութան բանեցնելը մեկ չէ։ Նա շատ բան էր ըմբռնել թրատելու տեխնիկայից։

Նա դաստակը երբեք չէր անցկացնում թրափնչի մեջ, որպեսզի հեշտ լիներ կարճ, անորսալի մի ակնթարթում թուրը մի ձեռքից նետել մյուսին։ Նա գիտեր, որ ուժեղ հարվածի դեպքում, եթե թրի ծովածքը սխալ լինի, թուրը պոկ կգա ձեռքից, դաստակի հոդերն էլ կարող են խախտվել։ Գիտեր շատ քչերին հաջողվող մի պրիոմ, թե ինչպես կարելի է հազիվ նկատելի շարժմամբ դեն շպրտել թշնամու զենքը կամ թե կարճ, ոչ ուժեղ շոշափմամբ կասեցնել նրա ձեռքը։ Գրիգորին շատ բան գիտեր այն գիտությունից, որ սովորեցնում է սառը զենքով մեռցնել մարդկանց։

Ուռուտը թրատելիս ճարպիկ հարվածից ընկնում է շեղակի կտրված շյուղը, չի ցնցվում, չի շարժում պատվանդանը։ Սուր ծայրը փափլիկ խրվում է ավազի մեջ, այն ցողունի

կողքին, որից նրան բաժանել էր կազակական թուրը։ Հենց այդպես էլ կալմիկանման, գեղեցիկ Սեմիգլազովը կախվեց ծառս եղած ձիուց, ընկավ թամքից՝ ձեռները սեղմելով շիզակի թրատված կրծքին։ Մահվան սառնությունը պատեց մարմինը...

Գրիգորին այդ իսկ րոպեին շտկվեց, կիսականգնեց ասպանդակների վրա։ Նրան կուրորեն վրա տվեց երկրորդը՝ այլևս չկարողանալով զսպել սլացող ձիուն։ Ձիու վերջից, փրփրուն մռութից դենը Գրիգորին դեռ չէր տեսնում ձիավորին, բայց տեսնում էր թրի կեռ սայրը, դրա մուգ փորակները։ Գրիգորին ամբողջ ուժով քաշեց սանձը, ընդունեց ու ետ մղեց հարվածը,— աջ սանձափոկը վերցնելով ձեռքը՝ թրով խփեց թեքված, վերևից սափրված, կարմիր պարանոցը։

Նա առաջինը դուրս թռավ խռնված, իրար խառնված ամբոխի միջից։ Աչքերի առաջ—ձիավորների վխտացող կուտակ։ Ձեռքի ափը ջղայնորեն քոր է գալիս։ Թուրը դրեց պատյանը, հանեց մաուզերը, արդեն ամբողջ թափով ձին դեպի ետ քշեց։ Կազակները սլացան նրա ետևից։ Հարյուրյակները ցրված էին գնում։ Մերթ այնտեղ, մերթ այստեղ երևում էին ձիերի պարանոցներին ընկած փափախներն ու ականջավոր գդակները՝ սպիտակ կապերով։ Գրիգորիի կողքից սլանում էր ծանոթ մի ուրյադնիկ աղվեսի մորթու փափախով, խակի գույնի կիսամուշտակով։ Նրա ականջը և այտը մինչև կզակը թրատված էին։ Կրծքի վրա ասես հասունացած բալով լեցուն մի զամբյուղ էին ճզմել։ Ատամները բացված էին ու արյունով ողողված։

Կարմիրբանակայինները, որոնք ընկրկել էին ու կիսով չափ նույնպես փախուստի դիմել, շուռ տվին ձիերը։ Կազակների նահանջը նրանց դրդեց անցնել հետապնդման։ Ետ մնացած մի կազակի ասես քամին քշեց ձիու վրայից, և սա ընկավ ձիերի ոտների տակ, ճզմվեց ձյան մեջ։ Ահա, ահա խուտորը, այգիների սև խմբերը, մի մատուռ բլրակի վրա, լայն փողոցը։ Մնում էր ոչ ավելի քան հարյուր սաժեն մինչև ա՛յն պուրակի ցանկապատերը, ուր դաբանակալել էր հարյուրյակը... Ձիերի մեջքերին—փրփուր ու արյուն։ Գրիգորին, որ սլանալիս զայրագին սեղմել էր մաուզերի հրահանը,

չկրակող այդ զենքը խոթեց տուփի մեջ (փամփուշտը ծրագիծք էր տվել), ահեղ գոռաց.

— Բաժանվե՜ք։

Կազակական հարյուրյակների համաձույլ հոսանքը, որպես ժայռին հանդիպող սրընթաց մի գետ, սահուն կերպով բաժանվեց երկու բազուկի՝ մերկացնելով կարմիրբանակային հեղեղը։ Դարանակալած հարյուրյակը ցանկապատի ետևից նրա վրա տվեց մի համազարկ, ապա երկրորդը, երրորդը... Ձի՛։ Կարմիրբանակային հեծած մի ձի գլորվեց գլխի վրա։ Մի այլ ձիու ծնկները ծալվեցին, մռութը մինչև ականջները թաղվեց ձյան մեջ։ Գնդակները թամքերից գցեցին էլի երեք թե չորս կարմիրբանակայինի։ Մինչդեռ մնացածներն ամբողջ թափով սլանալիս կուտակվեցին, ետ դարձրին ձիերը, կազակները նրանց վրա մի-մի պահունակ փամփուշտ արձակեցին ու լռեցին։ Գրիգորին նոր էր խրոպոտված ձայնով բղավել «Հարյու-ուր-յա՜-ակ...»— երբ ձիերի հազարավոր ոտներ, փոփրելով ճանապարհի կարճ պտույտի ձյունը, շուռ եկան ու սլացան նահանջողների ետևից։ Բայց կազակները դժկամորեն էին հետապնդում. ձիերը կանգ առան։ Մեկ ու կես վերստ անցնելուց հետո կազակները վերադարձան։ Հանեցին սպանված կարմիրբանակայինների շորերը, սպանված ձիերի թամքերը։ Կոնատ Ալյոշկա Շամիլը սպանեց վիրավորված երեք կարմիրբանակայինի։ Նրանց կանգնեցրեց երեսները դեպի ցանկապատը, հերթով թրատեց։ Սրանց կողքին հետո երկար ժամանակ խռնվում էին կազակները, ծխում, զննում դիակները։ Երեքի վրա էլ միատեսակ նշաններ կային,— իրաններին շեղակի ճեղքված էին անրակներից մինչև գոտկատեղերը։

— Երեքը վեց դարձրի,— պարծենում էր Ալյոշկան՝ թարթելով աչքը, ցնցելով թուշը։

Նրան քծնողաբար հյուրասիրում էին ծխախոտով, չթաքցրած հարգանքով նայում Ալյոշկայի փոքրիկ, բողկի չափ բռունցքին, ուռուցիկ կրծքին, որի վրա իրար չէին հասնում շեքմենի եզրերը։

Ցանկապատի մոտ դողում էին քրտնակալած, շինելներով ծածկված ձիերը։ Կազակները ձգում էին նրանց փորքաշները։ Նրբանցքում, ջրհորի մոտ ջրի հերթ էին կանգնել։ Շատերը սանձերից քաշելով տանում էին հոգնած, ոտները քարշ տվող ձիերը։

Գրիգորին Պրոխորի և հինգ կազակի հետ առաջ գնաց։ Կարծես նրա աչքերից ընկել էր կապը։ Դարձյալ, ինչպես և գրոհից առաջ, նա տեսավ աշխարհը լուսավորած արևը, կիսահալ ձյունը ծղնոտի դեզերի կողքին, լսեց ճնճղուկների գարնանային, խուտորով մեկ ծլվլոցը, զգաց շեմքին կանգնած գարնան օրերի նրբագույն բույրերը։ Կյանքը վերադարձավ ոչ թե դալկացած, ոչ թե քիչ առաջ թափած արյունից խամրած, այլ նա է՛լ ավելի էր հմայում ժլատ ու խաբուսիկ բերկրանքներով։ Ձյունից ազատված հողի սև ֆոնի վրա միշտ ավելի հրապուրիչ կերպով ու ավելի պայծառ է սպիտակին տալիս մնացած մի կտոր ձյունը...

XXXVIII

Վարարող ջրի նման բարձրացավ ու ծավալվեց ապստամբությունը, հեղեղեց Դոնի ամբողջ շրջանը, անդրդոնյան տափաստանային երկրամասերը՝ չորս հարյուր վերստ շրջագծով։ Քսանհինգ հազար կազակ ձի էին նստել։ Վերին Դոնի օկրուգի խուտորները տասը հազարանոց հետևազոր էին հանել։

Պատերազմը մինչ այդ չտեսնված ձևեր էր ընդունում։ Ինչ-որ մի տեղ, Դոնեցի մերձակայքում ճակատ էր պահում Դոնի բանակը՝ պաշտպանելով Նովոչերկասկը, պատրաստվելով վճռական գոտեմարտի։ Իսկ նրա դեմ կանգնած 8-րդ ու 9-րդ Կարմիր բանակների թիկունքում փոթորկվում էր ապստամբությունը՝ անվերջ բարդացնելով Դոնին տիրանալու առանց այն էլ դժվարին խնդիրը։

Ապրիլին ռեսպուբլիկայի Ռազմառևոլյուցիոն խորհրդի առաջ ամբողջ բացահայտությամբ ծառացավ սպիտակների ֆրոնտին ապստամբների միանալու սպառնալիքը։ Պահանջվում էր ինչ կերպ էլ լինի ճզմել ապստամբությունը, քանի դեռ թիկունքից այն չէր քայքայել կարմիր ճակատի տեղամասը ու չէր միացել Դոնի բանակին։ Ապստամբության դեմ սկսեցին փոխադրվել լավագույն ուժերը. էքսպեդիցիոն զորքերին էին միացվում բալթյան ու սևծովյան նավաստիների

անձնակազմերը, ամենահուսալի գնդերը, զրահագնացքների զորախմբերը, առավելապես խիզախ հեծելազորային մասերը։ Ռազմաճակատից ամբողջովին հանվեցին Բոգուչարյան մարտական դիվիզիայի հինգ գնդերը, որոնք ունեին մոտ ութ հազար սվին, մի քանի մարտկոց ու հինգ հարյուր գնդացիր։ Ապրիլին ապստամբական ճակատի Կազանսկու տեղամասում արդեն անսահման արիությամբ կռվում էին Ռյազանի ու Տամբովի կուրսերը, հետագայում ժամանեց Համառուսական Կենտգործկոմի դպրոցի մի մասը, Շումիլինսկու մոտ ապստամբների դեմ կռվում էին լատիշական հրաձիգները։

Կազակները շնչահեղձ էին լինում մարտական հանդերձանքի պակասությունից։ Սկզբում չկային բավականաչափ քանակությամբ հրացաններ, վերջանում էին փամփուշտները։ Դրանք պետք էր ձեռք բերել արյան գնով, դրանք պետք էր գրավել գրոհով կամ գիշերային հարձակումով։ Եվ գրավում էին։ Ապրիլին ապստամբները արդեն ունեին լրիվ քանակությամբ հրացաններ, վեց մարտկոց և մոտ հարյուր հիսուն գնդացիր։

Ապստամբության սկզբում Վեշենսկու պահեստում մնացել էր հինգ միլիոն անգնդակ փամփուշտ։ Օկրուգի սովետը մոբիլիզացրեց լավագույն դարբիններին, փականագործներին, հրացանագործներին։ Վեշենսկում կազմակերպվեց գնդակների ձուլման արհեստանոց, բայց արճիճ չկար, գնդակներ ձուլելու նյութ չկար։ Այն ժամանակ օկրուգային սովետի կոչով բոլոր խուտորներում սկսեցին արճիճ ու պղինձ հավաքել։ Շոգեաղացներից վերցրին արճճի ու բաբբիտի բոլոր պաշարները։ Ջիավոր սուրհանդակներով հետևյալ կարճ կոչն ուղարկեցին խուտորները.

«Ձեր ամուսինները, որդիներն ու եղբայրները կրակելու համար փամփուշտներ չունեն։

Նրանք կրակում են միայն այն, ինչ որ խլում են անիծված թշնամուց։ Հանձնեցեք այն ամենը, ինչ որ կա ձեր տնտեսություններում և պիտանի է գնդակներ ձուլելու համար։ Քամհարներից հանեցեք արճճե մաղերը»։

Մի շաբաթ անց ամբողջ օկրուգում ոչ մի քամհարի վրա մաղ չմնաց։

«Ձեր ամուսինները, որդիները, եղբայրները կրակելու համար փամփուշտներ չունեն»... Եվ կանայք խուտորների սովետներն էին տանում այն ամենը, ինչ որ պիտանի էր և ոչ այն խուտորների երեխաները, ուր կռիվներ էին տեղի ունենում, պատերը փորփրելով կարտեչ էին հանում, փորփրում էին հողը, արկի բեկորներ փնտրում։ Բայց այս գործում ևս հաստատուն միասնություն չկար. կանանցից ոմանց, որոնք չքավորներից էին և չէին ցանկանում զրկվել տնտեսական վերջին մանրուքից, «կարմիրներին համակրելու» համար ձերբակալեցին և ուղարկեցին օկրուգ։ Տատարսկում ունևոր ծերունիները ծեծելով արյունլվիկ արեցին զորամասից արձակուրդ եկած Սեմյոն Զուգունին, հենց միայն հետևյալ անզգույշ խոսքերի համար. «Հարուստները թող քանդեն քամհարները։ Նրանց համար կարմիրները երևի տնաքանդությունից ավելի սարսափելի են»։

Արճճի պաշարները հալեցվում էին Վեշենսկու արհեստանոցում, բայց ձուլված գնդակները զուրկ լինելով նիկելե շապկից նույնպես հալչում էին... Կրակոցից հետո ինքնագործ գնդակը փողից դուրս էր թռչում իբրև հալված արճճե գնդիկ, թռչում էր վայրենի ոռնոցով ու ֆսֆսոցով, բայց խոցում էր միայն հարյուր, հարյուր քսան սաժենի վրա։ Դրա փոխարեն այդ գնդակներից առաջացած վերքերը զարհուրելի էին։ Կարմիրբանակայինները իմանալով բանի էությունը, երբեմն, մոտիկից հանդիպելով կազակների պարեկներին, բղավում էին. «Բղեզներով եք կրակում... Անձնատուր եղեք, միևնույն է, բոլորիդ կկոտորենք»։

Երեսունհինգ հազար ապստամբները կազմում էին հինգ դիվիզիա և մի առանձին բրիգադա։ Մեշկովսկայա—Սետրակով—Վեժա տեղամասում Եգորովի հրամանատարությամբ կռվում էր 3-րդ դիվիզիան։ Կազանսկայա—Դոնեցկոյե-Շումիլինսկայա տեղամասը գրավել էր 4-րդ դիվիզիան։ Նրան առաջնորդում էր տեսքով խիստ մռայլ, մարտում լավ թրատող ու աներկյուղ փոխ-խորունժի Կոնդրատ Մեդվեդևը։ 5-րդ դիվիզիան կռվում էր Սլաշչևսկայա—Բուկանովսկայա ճակա-

տում, նրա հրամանատարը Ուշակովն էր։ Ելանսկու խուտորների—Ուստ-Խոպերսկայա—Գորբատով ուղղությամբ իր 2-րդ դիվիզիայով կռվում էր վախմիստր Մերկուլովը։ Այնտեղ էր նաև 6-րդ միավորումը,— առանձին բրիգադան, որը լավ էր կազմակերպված, կորուստներ համարյա չէր տալիս, որովհետև նրա հրամանատարը, Մակսաևի կազակ, աստիճանով փոխ-խորունժի Բոգատիրյովը շրջահայաց էր, զգույշ, երբեք ռիսկ չէր անում և մարդկանց ապարդյուն կորուստ չէր տալիս։ Ձիրի ափերին իր 1-ին դիվիզիան էր ցրիվ տվել Մելեխով Գրիգորին։ Նրա տեղամասը ճակատային դիրք ուներ, նրա վրա հարավից հարձակվում էին ճակատից կտրվող կարմիր զորամասերը, բայց նա կարողանում էր ոչ միայն ետ մղել հակառակորդի գրոհը, այլև օժանդակել ավելի քիչ կայուն 2-րդ դիվիզիային,— հետևակ և հեծյալ հարյուրյակներ ուղարկել նրան օգնելու։

Ապստամբությանը չհաջողվեց ընդգրկել Խոպերի և Ուստ-Մեդվեդիցկի օկրուգների ստանիցաները։ Այնտեղ էլ հուզմունք կար, այնտեղից էլ սուրհանդակներ էին գալիս՝ խընդրելով ուժեր ուղարկել դեպի Բուզուլուկ և Խոպերի վերին ավազանը, կազակներին ոտքի հանելու համար. բայց ապստամբական հրամանատարությունը որոշեց դուրս չգալ Վերին Դոնի օկրուգի սահմաններից, գիտենալով, որ խոպերցիների հիմնական մասսաները սովետական իշխանության հենարան են հանդիսանում և զենք չեն վերցնի։ Սուրհանդակներն էլ հաջողություններ չէին խոստանում, ճշմարտացի պատմում էին, որ խուտորներում կարմիրներից դժգոհ մարդիկ այնքան էլ շատ չեն, որ Խոպերի օկրուգի խուլ անկյուններում մնացած սպաները թաքնվում են, չեն կարող ապստամբությանը համակրող զգալի ուժեր հավաքել, որովհետև ճակատայինները կամ իրենց տներումն են, կամ Միրոնովի հետ են, իսկ ծերունիներին նեղն են լծել ոնց որ հորթանոց քշվող հորթերին, ու նրանք արդեն ոչ ուժ ունեն, ոչ էլ առաջվա կշիռը։

Հարավում ուկրաինացիներով բնակեցված ոլոստներում կարմիրները մոբիլիզացրին երիտասարդությանը, և սա, լրացվելով Բոգուչարյան մարտական դիվիզիայի գնդերը, մեծ սիրով կռվում էր ապստամբների դեմ։ Ապստամբությունը

ներփակվել էր Վերին Դոնի օկրուգի շրջանում։ Ու ապստամբական հրամանատարությունից սկսած՝ բոլորի համար հետզհետե պարզ էր դառնում, որ հույրենի տները երկար պաշտպանել չի հաջողվի. վաղ թե ուշ Կարմիր բանակը Դոնեցից շուռ գալով, կճզմի ապստամբությունը։

Մարտի 18-ին Կուդինովը Գրիգորի Մելեխովին կանչեց Վեշենսկայա՝ խորհրդակցության։ Դիվիզիայի հրամանատարությունը հանձնարարարելով իր օգնական Ռյաբչիկովին, Գրիգորին վաղ առավոտյան իր հանձնատարի հետ մեկնեց օկրուգ։

Նա շտաբ ժամանեց հենց այն պահին, երբ Կուդինովը Սաֆոնովի ներկայությամբ բանակցություններ էր վարում Ալեքսեևսկայա ստանիցայի սուրհանդակներից մեկի հետ։ Կուդինովը կորացած նստել էր գրասեղանի առաջ, լղար, թուխ մատներով տնտղում էր իր կովկասյան գոտու ծայրը, ու չբարձրացնելով ուռած, անքուն գիշերներից շաղախվող աչքերը, հարցրեց իր դիմաց նստած կազակին։

— Բա դուք ինքներդ ի՞նչ եք անում։ Ի՞նչ եք մտածում։

— Դե մենք էլ, հարկ է որ... Մեր ձեռից ոնց որ թե քիչ բան է գալի... Ով գիտի թե ինչ կա մյուսների մտքում։ Գիտես, էլի, թե ինչ տեսակ մարդիկ են։ Վախում են։ Համ ուզում են կռվել, համ էլ վախում են...

— «Ուզում են կռվե՛լ», «Վախո՛ւմ են»,— բարկությունից սփրթնելով բղավեց Կուդինովը ու բազկաթոռի վրա անհանգիստ շարժումներ արեց, ասես նրա տակը կրակ թափեցին.— Դուք բոլորդ էլ ոնց որ սիրուն աղջիկներ լինեք. համ ուզում եք. համ չեք ուզում, մայրիկն էլ հակառակ է։ Դեհ ուրեմն գնա ձեր Ալեքսեևսկայան, ասա ձեր ծերուկներին, որ մենք մի դասակ էլ չենք ուղարկի ձեր հողը, քանի դեռ դուք ինքներդ չսկսեք։ Թեկուզ կարմիրները մեկ-մեկ կախեն ձեզ։

Հսկայամարմին կազակի կարմրավուն ձեռքը աղվեսի մորթու պսպղուն գդակը դժվարությամբ քշեց ծոծրակին։ Քրտինքը շեշտակի հոսեց ճակատի խորշոմներով, ինչպես գարնանային ջուրը—առուների միջով. կարճ, խարտյաշ արտևանունքները արագ թարթում էին, իսկ աչքերը նայում ժպտալով ու մեղավորաբար։

— Դե, հարկ է, որ ժանտախտն էլ ձեզ չի ստիպի գալ

մեր կողմը։ Ամա այստեղ ամբողջ գործը նախաձեռնությունը է։ Փողից է՛լ թանկ է այդ նախաձեռնությունը...

Գրիգորին, որ ուշադրությամբ լսում էր խոսակցությունը, մի կողմ քաշվեց. առանց դուռը ծեծելու միջանցքից սենյակ մտավ կաշվե կիսամուշտակով, ցածրահասակ, սև բեղերով մի մարդ։ Նա գլխի շարժմամբ բարևեց Կուդինովին, նստեց սեղանի մոտ՝ թուշը դնելով սպիտակ ձեռքին։ Գրիգորին, որ բոլոր շտաբայիններին ճանաչում էր դեմքերից, սրան առաջին անգամ տեսավ, զննեց հայացքով։ Նրբորեն գծված, թուխ, բայց չհողմահարված ու արևից չսևացած դեմքը, ձեռների մեղմ սպիտակությունը, ինտելիգենտական շարժուձևը,— այս ամենը ցույց էր տալիս, որ նա տեղացի մարդ չէ։

Կուդինովը աչքերով ցույց տալով անծանոթին, դիմեց Գրիգորիին.

— Ծանոթացիր, Մելեխով։ Սա ընկեր Գեորգիձեն է։ Նա...— ու կանգ առավ, տնտղեց գոտու սևանախշ արծաթե ձողիկը, վեր կենալով ու դիմելով Ալեքսեևսկայա ստանիցայի սուրհանդակին, ասաց.— Դեհ, աղբերս, գնա։ Մենք հիմի գործեր ունենք։ Գնա տուն և իմ խոսքերը հաղորդիր ում որ պետք է։

Կազակը աթոռից վեր կացավ։ Աղվեսի մորթու վառ շիկակարմիր, սևախավ փափախը համարյա հասավ առաստաղին։ Եվ սենյակը միանգամից փոքր ու նեղ թվաց կազակի լայն ուսերի առկայությամբ, որոնք ծածկեցին լույսը։

— Օգնություն խնդրելո՞ւ ես եկել,— հարցրեց Գրիգորին՝ ձեռքի վրա դեռևս տհաճությամբ զգալով կովկասցու ձեռնասեղմումը։

— Ըհը՛մ, օգնության համար։ Ամա, արի ու տես, թե ինչ է դուրս գալի...— Կազակը ուրախացած դարձավ դեպի Գրիգորին՝ աչքերով պաշտպանություն փնտրելով։ Իր փափախի կարկաչի պես կարմիր նրա դեմքը այնքա՛ն շփոթված էր, քրտինքն այնքա՛ն առատորեն էր ողողել այն, որ նույնիսկ մորուքի և կախ ընկած շիկակարմիր բեղերի վրա կարծես մանր ուլունքներ էին թափված։

— Ձեզ է՞լ դուր չեկավ սովետական իշխանությունը,— Գրիգորին շարունակեց հարցեր տալ, ձևացնելով, թե չի նկատում Կուդինովի անհամբեր շարժումները։

— Նա, աղբերս, ուշի՛նչ,— խելամտորեն, բամբ ձայնով ասաց հսկա կազակը,— ամա վախում ենք, որ բանն ավելի վատ կգնա։

— Ձեզ մոտ գնդակահարություններ եղա՞ն։

— Չէ, աստված չանի։ Այդպիսի բան չի լսվում։ Դեհ, մի խոսքով, ձի, հաց տարան, հարկ է, որ բռնոտեցին դեմ խոսողներին։ Մի խոսքով, վախենալու բան է։

— Իսկ եթե վեշենցիները գային ձեզ մոտ, ոտքի կելնե՞ք, բոլորդ էլ կկռվե՞ք։

Կազակի մանր, արևից ոսկեջրված աչքերը խորամանկորեն կկոցվեցին, խուսափեցին Գրիգորիի աչքերից, փափախը սողաց այդ ակնթարթում մտածմունքի ծալերով ու թմբերով ծանրացած ճակատի վրա։

— Բոլորի մասին ո՞նց ասեմ... Դե, հարկ է, որ մեծ տնտեսություն ունեցողները կկռվեին։

— Բա չքավորնե՞րը, մեծ տնտեսություն չունեցողնե՞րը։

Գրիգորին, որ մինչ այդ իզուր էր փորձում բռնել խոսակցի հայացքը, հանդիպեց մանկականորեն զարմացած, ուղիղ իրեն նայող նրա աչքերին։

— Հը՛մ... Ծույլերը ինչի՞ պիտի գնան որ։ Հենց կյանքը ինքն է նրանց տանում այդ իշխանության կողմը, ա՛յ թե ինչ։

— Որ այդպես է, տո՛, պոլոզ սատանա,— արդեն չթաքցրած բարկությամբ գոռաց Կուդինովը, ու նրա տակին երկար ճոճռաց բազկաթոռը,— որ այդպես է, էլ ինչի՞ ես եկել մեր գլուխը տանելու, հը՞։ Թե՞ ձեզ մոտ բոլորն էլ հարուստ են։ Այդ ի՞նչ տեսակ ապստամբություն է, եթե խուտորում երկու-երեք տուն է ոտքի ելնելու, հը՞։ Հեռացի՛ր այստեղից, գնա, ասում եմ քեզ։ Տապակած աքլորը հլա դեռ չի կտցել ձեր քամակը, ամա որ կտցի, առանց մեր օգնության էլ կկռվեք։ Սովորել եք, շան որդենիք, ուրիշի մեջքին նստած՝ վար անել։ Ձեր բանն է զխտվել ու փռվել վառարանի վրա... Դեհ, գնա՛, գնա։ Քեզ պես սատանին նայելիս մարդու սիրտ է խառնում։

Գրիգորին մոայլվեց, դեմքը շուռ տվեց։ Կուդինովի դեմքի վրա հետզհետե ավելի պարզ էին երևում կարմիր բծերը։ Գեորգիձեն բեղն էր ոլորում, շարժում խիստ սապատավոր, ասես ոանդած քթի պնչերը։

— Որ այդպես է, ներողություն ենք խնդրում։ Իսկ դու, ձերդ բարեծնողություն, մի՛ գոռա ու մի վախեցնի, այստեղ գործը կամովին է։ Ես ձեզ հաղորդեցի մեր ծերունիների խնդիրքը ու ձեր պատասխանն էլ կտանեմ նրանց, էլ գոռա՞լը որն է։ Եվ մինչև ե՞րբ պիտի գոռան ուղղափառների վրա։ Սպիտակները գոռում էին, կարմիրները գոռում էին, հիմի էլ դու ես գոռում, ամեն մեկն իր իշխանությունն է ցույց տալիս ու հլա դեռ ուզում է սֆաթդ էլ տաքացնել... Է՛հ, գյուղացու կյանք, մունտրիկ շան լիզած կյանք...

Կազակը, չարանալով, փափախը քաշեց աչքերին, քարի կտորի պես դուրս ընկավ միջանցքը, կամացուկ ծածկեց դուռը. բայց միջանցքում արձակեց բարկության ձեռները ու այնպես շրխկացրեց դրսի դուռը, որ սվաղը հինգ բոպե թափվում էր հատակին ու պատուհանների գոգերին։

— Ա՛յ թե ինչ տեսակ մարդիկ կան, է՛,— արդեն ուրախ ժպտում էր Կուդինովը, խաղում գոտիով, հետզհետե բարի տեսք ընդունում։— Տասնյոթ թվականի գարնանը գնում եմ կայարան, վարի ժամանակն էր, զատկի մոտերքը։ Վար են անում ազատ կազակները և ուղղակի խելքները թռցրել են այդ ազատությունից, էլ ճանապարհ չի մնացել, որ չվարեն,— կարծես թե իրենց հողը քիչ էր։ Տոկինսկի խուտորից դենը կանչում եմ այդ տեսակ մի հողագործի, մոտենում է իմ տարանտասին։ «Է՛յ, դու ինչի՞ ես ճանապարհը վարել, հը՞»։ Վախեցավ տղան։ «Էլ չեմ վարի,— ասում է,— շատ ներողություն եմ խնդրում, կարող եմ մինչև իսկ վարածս տափտփել»։ Այսպես վախեցրի էլի երկու թե երեք հոգու։ Անցանք Գրաչևից դենը,— էլի՛ ճանապարհը վարած է, ու հենց այնտեղ մի տղա գնում է գութանի ետևից։ Ձեն եմ տալի նրան՝ «Հապա, եկ այստեղ»։ Մոտենում է։ «Դու ի՞նչ իրավունք ունես ճանապարհը վարելու, հը՞»։ Նա մտիկ արեց ինձ, կտրիճ կազակ էր, աչքերն էլ պայծա՛ռ ու պայծառ, իսկ հետո սուսուփուս շուռ եկավ ու վազ տվեց դեպի եզները։ Հասավ, լծից հանեց երկաթե սամին ու էլի թռավ ինձ մոտ։ Բռնեց տարանտասի կողմից, ոտը դնում է ոտնատեղը։ «Դու,— ասում է,— ինչացո՞ւ ես, հը՞, մինչև ե՞րբ պետք է դուք մեր արյունը ծծեք։ Ուզո՞ւմ ես,— ասում է,— հենց հիմի գլուխդ կտոր-կտոր անեմ»։ Ու թափ է տալի սամին։ Ես

նրան ասում եմ՝ «Ի՞նչ ես անում, Իվան, ես հանաք արեցի»։ Նա էլ թե՝ «Ես հիմի ոչ թե Իվան եմ, այլ Իվան Օսիպիչ, ես քո մուրթը կջարդեմ կոպտությանդ համար»։ Հավատո՞ւմ ես, հազիվ պրծա նրա ձեռից։ Այնպես էլ սա, ֆսֆսում ու գլուխ էր տալի, ամա վերջը ցույց տվեց իր բնավորությունը։ Մարդիկ հպարտությունից չգիտեն ինչ են անում։

— Ոչ թե հպարտությունը, այլ գոհկությունն է արթնացել նրա մեջ ու դուրս թափվել։ Գոհկությունը օրինականության իրավունք է ստացել,— հանգիստ ասաց կովկասցի փոխգնդապետը և առարկությունների չսպասելով, վերջացրեց խոսակցությունը.— Խնդրում եմ սկսել խորհրդակցությունը։ Ես կուզենայի հենց այսօր հասնել գունդ։

Կուդինովը ծծեց պատը, բղավեց.

— Սաֆոնով,— ու դիմեց Գրիգորիին,— դու մնա մեզ հետ, միասին խորհուրդ կանենք։ Գիտե՞ս առածը՝ «Մի խելքը լավ է, երկուսը ավելի լավ»։ Մեր բախտից ընկեր Գեորգիձեն պատահմամբ մնացել է Վեշկիում, իսկ հիմի օգնում է մեզ։ Նա աստիճանով փոխգնդապետ է, գլխավոր ակադեմիան է ավարտել։

— Բա դուք ինչպե՞ս եք մնացել Վեշենսկում,— հայտնի չէ ինչու ներքուստ սառչելով և ուշադրությունը լարելով, հարցրեց Գրիգորին։

— Հիվանդացել էի տիֆով, երբ սկսվեց նահանջը Հյուսիսային ֆրոնտից, ինձ թողին Դուդորևսկի խուտորում։

— Ո՞ր զորամասում էիք։

— Ե՞ս։ Ոչ, ես շարքային չեմ։ Հատուկ խմբի շտաբումն էի։

— Ո՞ր խմբի։ Գեներալ Սիտնիկովի՞։

— Ոչ...

Գրիգորին ուզում էր էլի ինչ-որ բան հարցնել, բայց փոխգնդապետ Գեորգիձեի դեմքի մի տեսակ լարված, կնճռոտ արտահայտությունը ստիպեց զգալ հարցուփորձի անտեղիությունը, ու Գրիգորին կես խոսքի վրա լռեց։

Շուտով եկան շտաբի պետ Սաֆոնովը, 4-րդ դիվիզիայի հրամանատար Կոնդրատ Մեդվեդևը և սպիտակ ատամներով, կարմրաթուշ փոխ-խորունժի Բոգատիրյովը,— 6-րդ հատուկ բրիգադայի հրամանատարը։ Սկսվեց խորհրդակցու-

թյունը։ Կուդինովը ամփոփագրերի համաձայն ռազմամակատի դրության մասին կարճ ինֆորմացիա տվեց հավաքվածներին։ Առաջինը խոսք խնդրեց փոխգնդապետը։ Սեղանի վրա դանդաղ բաց անելով երեք վերստանոց քարտեզը, նա խոսեց սահուն ու վստահորեն, հազիվ նկատելի ակցենտով.

— Ամենից առաջ ես բացարձակապես անհրաժեշտ եմ համարում Երրորդ և Չորրորդ դիվիզիաների մի քանի ռեզերվային զորամասերը տեղափոխել այն տեղամասը, որ գրավում են Մելեխովի դիվիզիան և փոխ-խորունժի Բոգատիրյովի հատուկ բրիգադան։ Մեզ մոտ եղած գաղտնի տեղեկություններից և գերիների հարցաքննությունից միանգամայն ակներև կերպով պարզվում է, որ կարմիր հրամանատարությունը հատկապես Կամենկա—Կարգինսկայա—Բոկովսկայա տեղամասում մեր դեմ լուրջ հարված է պատրաստում։ Փախստականների ու գերիների ասածներից պարզվել է, որ Իններդ Կարմիր բանակի շտաբը Օբլիվից և Մորոզովսկուց ուղարկել է երկու հեծելազորային գունդ, որոնք վերցրված են Տասներկուերորդ դիվիզիայից, հինգ փակոցային ջոկատ, դրանց միացրած երեք մարտկոցով և գնդացրային խմբերով։ Կոպիտ հաշվով այդ համալրումները հակառակորդին կտան հինգ հազար հինգ հարյուր մարտիկ։ Այսպիսով թվական գերակշռությունը, անկասկած, նրանց կողմը կլինի, էլ չխոսենք այն մասին, որ սպառազինության գերակշռությունը նրանց կողմն է։

Պատուհանի շրջանակով խաչաձև կտրված արևածաղկի պես դեղին արևը հարավից ընկել էր սենյակը։ Ծխի կապույտ ամպը անշարժ կախվել էր առաստաղի տակ։ Տնային մշակության ծխախոտի դառնավուն հոտը լուծվել էր նամացած սապոգների սուր գարշահոտության մեջ։ Որտեղից-որտեղ, առաստաղի տակ հուսալքված տզզում էր ծխախոտի ծխով թունավորված մի ճանճ։ Գրիգորին քնկոտ նայում էր պատուհանին (նա երկու գիշեր բոլորովին չէր քնել), ուռչում էին արճճի պես ծանրացած կոպերը, տաք վառած սենյակի ջերմության հետ քունը ներխուժում էր նրա մարմնի մեջ, հարբած հոգնածությունը թուլացնում էր նրա կամքը և գիտակցությունը։ Դրսում ծառս էին լինում ու գալարվում

էին ցածրից փչող գարնանային քամիները, Բազկիի բլուրի վրա վարդամած շողում ու պսպղում էր վերջին ձյունը, Դոնի մյուս կողմում բարդիների գագաթները քամուց այնպես էին ճոճվում, որ նրանց նայելիս Գրիգորիին թվում էր, թե այնտեղից անլռելի, բամբ դղրդյուն է գալիս։

Փոխգնդապետի հստակ, հաստատուն ձայնը գրավում էր Գրիգորիի ուշադրությունը։ Գրիգորին լսում էր լարվելով, ու քնկոտությունը աննկատելիորեն չքացավ, կարծես հալվեց։

— ...Առաջին դիվիզիայի ֆրոնտում հակառակորդի ակտիվության թուլացումը և նրա համառ փորձերը—հարձակման անցել Միգուլինսկայա — Մեշկովսկայա գծով — մեզ ստիպում են աչալուրջ լինել։ Ես կարծում եմ...— փոխգնդապետը հազաց «ընկերներ» բառի վրա, ու արդեն չարացած թափահարելով կանացիորեն սպիտակ, բարակ ձեռքը, բարձրացրեց ձայնը,— որ հրամանատար Կուդինովը Սաֆոնովի աջակցությամբ խոշորագույն սխալ է կատարում՝ հալած յուղի տեղ ընդունելով կարմիրների մանևրները, թուլացնելով Մելեխովի գրաված ճակատամասը։ Ներեցեք, պարոններ, ախր դա ստրատեգիայի այբուբենն է,— հակառակորդի ուժերը քաշել մի տեղ՝ մի այլ տեղում նրա վրա նետվելու համար...

— Բայց ռեզերվային գունդը Մելեխովին հարկավոր չէ,— ընդհատեց Կուդինովը։

— Ընդհակառակը. մենք պետք է Երրորդ դիվիզիայի ռեզերվների մի մասը ձեռքի տակ ունենանք, որպեսզի ճեղքվածքի դեպքում կարողանանք ծածկել այն։

— Կուդինովը երևի չի ուզում ինձ հարցնել՝ ռեզերվ կըտա՞մ իրեն թե ոչ,— ցասկոտելով ասաց Գրիգորին.— Իսկ ես չեմ տա, մի հարյուրյակ է՛լ չեմ տա։

— Է-է՛, աղբերս, դա...— ձայնը երկարացրեց Սաֆոնովը՝ ժպտալով ու շփելով շեկլիկ-դեղնավուն բեղերը։

— Ոչ մի «աղբերս»։ Չեմ տա, պրծավ-գնաց։

— Օպերատիվ տեսակետից...

— Դու ինձ օպերատիվ տեսակետներ մի՛ ասա։ Ես պատասխանատու եմ իմ ճակատամասի և իմ մարդկանց համար։

Փոխգնդապետ Գեորգիձեն դադարեցրեց այդպես ան-

սպասելիորեն ծագած վեճը։ Նրա ձեռքի կարմիր մատիտը կետաշարով նշեց սպառնալիքի տակ գտնվող ճակատամասը, ու երբ խորհրդակցողների գլուխները միմյանց մոտենալով կախվեցին քարտեզի վրա, բոլորի համար էլ անհերքելիորեն պարզ եղավ, որ կարմիր հրամանատարության կողմից պատրաստվող հարվածը իրոք որ հնարավոր է հարավային ճակատամասում, որպես Դոնեցին ամենամոտիկ և հաղորդակցության նկատմամբ շահավետ ճակատամաս։

Խորհրդակցությունը վերջացավ մի ժամից հետո։ Մռայլ, գայլի տեսք և գայլի սովորություն ունեցող Կոնդրատ Մեդվեդևը, որ հազիվ էր գրի սևն ու սպիտակը ջոկում, խորհրդակցության ժամանակ լուռ մնալով, շարունակելով խեթ-խեթ նայել բոլորին, ի վերջո ասաց.

— Մելեխովին օգնելը մենք կօգնենք։ Ավելորդ մարդիկ կան։ Միայն թե մի անիծված միտք հանգիստ չի տալի։ Բա որ բոլոր կողմերից մեզ հուպ տան, այն ժամանակ ի՞նչ պիտի անենք։ Մեզ կխփեն, կհավաքեն իրար գլխի, ու մենք կընկնենք լորտուի դրության մեջ, ոնց որ լորտուներ վարարած ջրերում, մի որևէ փոքրիկ կղզու վրա։

— Լորտուները լողալ գիտեն, իսկ մենք լողալու տեղ էլ չունենք,— քրքջաց Բոգատիրյովը։

— Մենք դրա մասին մտածել ենք,— մտախոհ ասաց Կուդինովը,— էհ, ի՞նչ արած, թե որ նեղը լծեցին, կթողնենք բոլորին, ովքեր զենք կրելու ընդունակ չեն, կթողնենք ընտանիքներս և կովով կգնանք Դոնեցի կողմը։ Մեր ուժը քիչ չէ, երեսուն հազար է։

— Իսկ կադետները կընդունե՞ն մեզ. նրանք ոխ ունեն վերին դոնեցիների դեմ։

— Հավը բնի մեջ է, իսկ հավկիթը... մեջ։ Կարիք չկա դրա մասին խոսել։— Գրիգորին ծածկեց փափախը, դուրս ելավ միջանցք։ Դռան միջից լսում էր, թե ինչպես Գեորգիձեն խշշացնելով ծալվող քարտեզը, պատասխանում էր.

— Վեշենցիները և առհասարակ բոլոր ապստամբները Դոնի և Ռուսաստանի առաջ կքավեն իրենց մեղքը, եթե շարունակեն արիաբար պայքարել բոլշևիկների դեմ...

«Ասում է ու ինքն իր մեջ ծիծաղում, ի՛ժ»,— լսելով այդ խոսքերը, մտածեց Գրիգորին։ Ու վերստին, ինչպես սկզբում, Վեշենսկում անսպասելիորեն հայտնված այդ սպային հանդիպելիս, Գրիգորին ինչ-որ անհանգստություն և անադիթ բարկություն զգաց։

Շտաբի դարպասի մոտ Կուդինովը հասավ նրան։ Միաժամանակ քայլում էին լուռ։ Աղբոտած հրապարակում քամին տատանում ու սարսռացնում էր լճակները։ Իրիկնանում էր։ Հարավից դանդաղ, կարապների պես սահում էին քուլա-քուլա ծանր ամպերը, որոնք սպիտակ էին ինչպես ամառը։ Կենարար ու թունդ էր ձյունից ազատված հողի խոնավ բույրը։ Ցանկապատերից դենը կանաչին էին տալիս մերկացած խոտաբույսերը և արդեն իրոք քամին Դոնի մյուս ափից բերում էր բարդիների հուզիչ շրշյունը։

— Շուտով Դոնը կազատվի սառույցից,— հազալով ասաց Կուդինովը։

— Այո։

— Գրո՛ղը տանի... Կկորչենք առանց ծխելու։ Մի բաժակ տնական թութունին քառասուն ռուբլի Կերենսկու փող կտայի։

— Դու ասա ա՛յ թե ինչ,— քայլելիս դառնալով դեպի Կուդինովը, խիստ տոնով հարցրեց Գրիգորին,— այդ սպան, չերքեզը, քեզ մոտ ի՞նչ է անում։

— Գեորգիձե՞ն։ Օպերատիվ վարչության պետն է։ Ա՛մա գլուխ ունի անպիտանը, հա՛-ա։ Նա է մշակում պլանները։ Ստրատեգիայից մեզ բոլորիս էլ կկտրի։

— Նա միշտ Վեշկի՞ումն է։

— Ո-ո՛չ... Մենք նրան գործուղել ենք Չերնովյան գունդը, գումակը։

— Բա նա ինչպե՞ս է հետևում գործերին։

— Գիտե՞ս ինչ, նա հաճախ է գալիս։ Համարյա ամեն օր։

— Բա ինչո՞ւ դուք նրան չեք բերում Վեշկի,— փորձելով ըմբռնել այդ, հարցուփորձ էր անում Գրիգորին։

Կուդինովը էլի հազալով, ձեռքը տանելով բերանին, դրժկամ պատասխանեց.

— Անհարմար է կազակների առաջ։ Գիտե՞ս թե ինչ տեսակ են նրանք, այդ աղբերացուները։ «Ահա,— կասեն,— խցկվել են սպաները, իրենց ուզածն են անում։ Էլի՛ ուսադիրներ...»— և այլն։

— Նրա պես էլ ուրիշ մարդիկ կա՞ն զորքի մեջ։

— Կազանսկում կան երկուսը թե երեքը... Դու, Գրիշա, շատ մի՛ տխրի։ Ես գիտեմ, թե ինչ ես մտածում։ Մենք, հոգիս, բացի կադետներից, ուրիշ նեցուկ չունենք։ Այդպես է, չէ՞։ Թե՞ դու մտածում ես տասը ստանիցայից քո ռեսպուբլիկան կազմակերպել։ Այստեղ կարիք չկա դեռ-դեն ընկնել... Կմիանանք, մեղավոր գլխով կգնանք Կրասնովի մոտ։ «Մի՛ դատի, Պետրո Միկոլայիչ,— կասենք,— մի քիչ մոլորվել էինք մենք, թողնելով ֆրոնտը»...

— Մոլորվե՞լ էինք,— հարցրեց Գրիգորին։

— Բա ո՞նց,— անկեղծ զարմանքով պատասխանեց Կուդինովը և զգուշությամբ շրջանցեց լճակը։

— Իսկ ես միտք եմ անում...— Գրիգորին մռայլվեց, բռնազբոսիկ ժպտաց.— Իսկ ես կարծում եմ, որ մենք մոլորվել էինք, երբ ապստամբություն բարձրացրինք... Լսեցի՞ր թե ինչ էր ասում խոպերցին։

Կուդինովը լռեց, կողքից հետաքրքրությամբ նայեց Գրիգորիին։

Փողոցների խաչմերուկում, հրապարակի մյուս կողմում նրանք բաժանվեցին։ Կուդինովը դպրոցի կողքից քայլեց դեպի իր բնակարանը։ Գրիգորին վերադարձավ շտաբ, նշան արավ, որ հանձնատարը բերի ձիերը։ Արդեն թամքին նըստած, դանդաղ վերցնելով սանձը, շտկելով հրացանի փոկը, նա դեռ էլի փորձում էր ինքն իրեն հաշիվ տալ տհաճության ու կասկածանքի այն անհասկանալի զգացման նկատմամբ, որը տածում էր շտաբում հայտնված փոխգնդապետի հանդեպ, ու հանկարծ սարսափով մտածեց. «Իսկ ի՞նչ կլինի, եթե կադետները դիտմամբ մեզ մոտ թողած լինեն այդ գիտուն սպաներին, որպեսզի կարմիրների թիկունքում մեզ ոտքի հանեն, որպեսզի այդ սպաները իրենց ուղածի պես, իրենց գիտությամբ ղեկավարեն մեզ»,— ու գիտակցությունը չարախինդ պատրաստակամությամբ ենթադրություններ ու փաստարկներ էր մեջտեղ բերում։ «Զասաց, թե որ զորամասից է... քաշվեց... Շտաբային է, իսկ այստեղից շտաբներ չեն էլ անցել... Ո՞ր սատանան է դրան բերել Դուդորևսկի. այդ տեսակ խուլ անկյունը։ Հը՛մ, այստեղ մի բան կա։ Ամա՛ թե գործեր ենք բռնել...» Ու այլևայլ ենթադրություններ անելով, տանջալից կերպով, ցավագնորեն եզրակացրեց.— «Ուսումնական մարդիկ շշկլեցրել են մեզ... Շշկլեցրել են պարոնները։ Կապել են կյանքի ոտները ու մեր ձեռքերով իրենց գործերն են կատարում։ Դատարկ բանի մեջ էլ ոչ ոքի չի կարելի հավատալ...»

Դոնի մյուս կողմում ձին քշեց արագ վարգուլ։ Ետևից ճռճռում էր հանձնատարի թամքը. հանձնատարը Օլշանսկի խուտորից էր, լավ կռվող ու խիզախ մի կազակ։ Գրիգորին հենց այդպիսիներին էր ջոկում, որպեսզի իր ետևից «հրի ու սրի» դեմ գնային, իրեն շրջապատում էր հենց այդպիսի մարդկանցով, որոնք կոփվել էին դեռ գերմանական պատերազմում։ Հանձնատարը, որ անցյալում հետախույզ էր, ամբողջ ճանապարհին լռում էր, քամու տակ, վարգելիս վառում ծխախոտը՝ կայծքարը զարկելով ահագին բռի մեջ պահած, արևածաղկի մոխրի մեջ թրծված, հոտավետ աբեթին։ Տոկին խուտորը իջնելիս նա Գրիգորիին խորհուրդ տվեց.

— Թե որ վռազելու կարիք չկա, արի այստեղ գիշերենք։ Ձիերը բեզարել են, թող հանգստանան։

Գիշերեցին Ջուկարինում։ Խարխուլ մի խրճիթում, որի բոլոր շենքերը մի ընդհանուր կտուրի տակ էին, ցուրտ քամուց հետո զգացվում էր տնային հարմարակեցությունը և տաքությունը։ Հողե հատակից գալիս էր հորթերի ու այծերի մեզի շոռ հոտը, վառարանից՝ կաղամբի տերևների վրա թխված, ասես անալի-խանձրահամած հացի հոտը։ Գրիգորին դժկամորեն էր պատասխանում հարցուփորձ անող տանտիրուհուն, որը մի պառավ կազակուհի էր և իր երեք որդուն ու ամուսնուն ապստամբության էր ճամփել։ Պառավը խոսում էր թավ ձայնով, հովանավորական տոնով ընդգծելով իր տարիքի առավելությունը, ու առաջին իսկ խոսքերից կատարյալ հայտարարեց Գրիգորիին.

— Շատ է՛լ դու մեծավոր ես ու գիժ կազակների հրամանատար ես, ամա ինձ՝ պառավիս վրա իշխանությունն չունես և ինձ տղի տեղ ես գալիս։ Խոսա ինձ հետ, կտրիճ, բարի եղիր։ Դու հա՛ հորանջում ես, ոնց որ թե չես ուզում զրույցով պատիվ անել պառավիս։ Պատիվ արա, էյ՛։ Հրե՛ն, ես ձեր կռվին,— ջհաննամը գնա այդ կռիվը,— ղրկել եմ երեք տղիս ու հլա դեռ մեղքի մեջ ընկել, ալևորիս էլ եմ ղրկել։

Դու նրանց վրա հրամանատար ես, իսկ ես նրանց, այսինքն տղերքիս աշխարհք եմ բերել, պահել, մեծացրել, փեշիս տակ մանածել, բոստան ու բախչա տարել, չարչարանք եմ քաշել։ Բա այդ հե՞շտ բան է, հը՞։ Դու քիթդ մի՛ ցցի, մի՛ գոռոզանա, մի կարգին ասա ինձ, շո՞ւտ կպրծնի կռիվը։

— Շո՛ւտ... Լավ կլիներ քնեիր, նանի։

— Շուտ ու չո՛ւշտ։ Բա ե՞րբ է, է՞։ Դու ինձ մի՛ քնացրու, այստեղ տան կնիկը ես եմ, ոչ թե դու։ Ես հլա դեռ պիտի գնամ բակից բերեմ ուլերն ու գառները։ Գիշերները դրանց բերում ենք բակից, հլա դեռ մատղաշ են։ Հա՛, մինչև զատիկ կհաշտվե՞ք։

— Կվռնդենք կարմիրներին ու կհաշտվենք։

— Ա՛յ քեզ բա՛-ան.— պառավը գոսացած ծնկների սուր անկյուններին էր խփում ձեռները, որոնց դաստակները ուռած էին, մատները ծռմռվել էին աշխատանքից ու ռևմատիզմից, դառնությամբ ծամծմում էր կինամոնագույն ու չորացած, բալենու կեղևը հիշեցնող շրթունքները.— Ախր նրանք ձեր ինչի՞ն են պետք, է՞։ Ինչի՞ եք նրանց հետ կռիվ անում։ Մարդիկ դիվոտել են, էլի՛... Հրացանից կրակելն ու ձիով ջիրիդ խաղալը ձեզ դուր է գալի, հա՞, անիծվածներ, բա մայրերի հա՞լը ոնց կլինի։ Բա որ կոտորում են նրանց զավակների՞ն։ Գլխներիցդ կռիվ-մռիվ եք հանել, էլի՛...

— Բա մենք մայրերի զավակներ չե՞նք, թե՞ շան զավակներ ենք,— չարացած ու խռպոտ մռմռաց Գրիգորիի հանձնատարը՝ սաստիկ վրդովվելով պառավի խոսքերից.— Մեզ սպանում են, իսկ դու «ձիով ջիրիդ խաղալու» մասին ես խոսում։ Ոնց որ թե մայրերի վիճակն ավելի ծանր է, քան սպանվողների վիճակը, հա՞-ա։ Այդքան ապրել ես, աստծու դմբո, մազերդ ճերմակել են, ամա սարսաղ բաներ ես դուրս տալի... Դեսից ու դենից ես բռնում, չես թողնում, որ մարդիկ քնեն...

— Կքնես, խելառ, դո՞ւ ինչի մեջ ընկար։ Գելի պես սուսուփուս էիր ու մեկ էլ հերսոտեցիր։ Ի-ի՞հ, քիչ է մնում տրաքվես չարությունից։

— Սա չի թողնի, որ մենք քնենք, Գրիգորի Պանտելևիչ,— հուսահատորեն քրթմնջաց հանձնատարը ու ծխախոտը վառելիս այնպես խփեց արեթին, որ կայծքարի տակից կայծերի մի ամբողջ խուրձ թռավ։

Մինչդեռ արեթը բռնկում, հոտ ու ծուխ էր արձակում, հանձնատարը կծու կոթեց շաղակրատ տանտիրուհուն։

— Ա՛մա կծող ես դու, ա՛յ տատի, ոնց որ փաղիժ լինես։ Թե որ ալևորիդ կռվում սպանեն, մեռնելիս երևի կուրախանա։ «Է՛հ,— կասի,— փառք աստծու, ազատվեցի պառավիցս, թող կարապի բմբուլի պես թեթև լինի նրա հողը»։

— Լեզո՛ւդ լալկի, սադայե՛լ։

— Քնիր, տատո, ի սեր Քրիստոսի։ Մենք երեք գիշեր չենք քնել։ Քնի՛ր։ Այդ տեսակ գործքիդ համար կմեռնես առանց հաղորդվելու։

Գրիգորին զոռով հաշտեցրեց նրանց։ Քուն մտնելիս նա հաճույքով զգում էր իր վրա գցած ոչխարենու մուշտակի թթվաշ տաքությունը, քնի միջից լսեց, թե ինչպես շրխկաց դուռը, և ցուրտն ու գոլորշին պարուրեցին նրա ոտները։ Հետո ականջի վերևում զի՛լ մայեց մի գառ, հատակի վրա թքթքացին ուլերի փոքրիկ կճղակները ու զգացվեց խոտի, ոչխարի տաք-տաք կաթի թարմ ու բերկրալի բույրը, դրսի ցուրտը, գոմ ու փարախի հոտը...

Կեսգիշերին փախավ նրա քունը։ Գրիգորին երկար պառկած էր բաց աչքերով։ Ցածրիկ վառարանում, արևակնագույն մոխրի տակին կարմրավառ պլպլում էին ածուխի կտորները։ Հենց կրակի մոտ, վառարանի դռնակի կողքին իրար գլխի հավաքվել, պառկել էին գառները։ Կեսգիշերային լուռ անդորրության մեջ լսվում էր, թե ինչպես նրանք քնեած վիճակում ղռճղռճացնում են ատամները, երբեմնակի փրոշտում ու փնչում։ Պատուհանից նայում էր հեռո՛ւ-հեռավոր լիալուսինը։ Հողե հատակի վրա, լույսի դեղին քառակուսու մեջ ցատկոտում ու աքացում էր անհանգիստ, սև մի ուլիկ։ Շեղակի ձգվել էր լուսնի լույսի տակ մարգարտաշող փոշին։ Խրճիթում դեղնակապտավուն, համարյա ցերեկային լույս էր։ Բուխարիկի վրա կայծկլտում է մի կտոր հայելի, միայն առջևի անկյունում մթին ու աղոտ ուրվագծվում է սրբապատկերի արծաթած ծածկոցը... Գրիգորին դարձյալ մտածեց Վեշենսկու խորհրդակցության, Խոպերի սուրհան-

գակի մասին՝ վերհիշելով փոխգնդապետին, նրա օտարոտի, ինտելիգենտային արտաքինը և խոսելու ձևը, ու անհաճո, տաղտուկ հուզմունք զգաց։ Ուլիկը բարձրանալով մուշտակի, Գրիգորիի փորի վրա, երկար ու հիմարաբար աչք ածեց, շարժեց ականջները, հետո, սիրտ առնելով մի երկու անգամ ցատկոտեց ու հանկարծ իրարից հեռացրեց փրչոտ տոտիկները։ Բարալիկ շիթը վշշալով, գլորվեց ոչխարենուց ու թափվեց Գրիգորիի կողքին քնած հանձնատարի պարզած ձեռքի վրա։ Վերջինը մռմռաց, արթնացավ, ձեռքը քսմսեց շալվարին ու դառնությամբ օրորեց գլուխը։

— Թրջեց անիծվածը... Քը՜շշ,— ու հաճույքով շրմփացրեց ուլիկի ճակատին։

Սուր մկկալով, ուլիկը մուշտակից դեն ցատկեց, հետո մոտեցավ ու պուճուրիկ, խորդուբորդ և տաք լեզվով երկար լիզեց Գրիգորիի ձեռքը։

XXXIX

Տատարսկից փախչելուց հետո Շտոկմանը, Կոշևոյը, Իվան Ալեքսեևիչը և էլի մի քանի կազակներ, որոնք ծառայել էին իբրև միլիցիոներներ, միացան 4-րդ Զաամուրսկի գնդին։ Այս գունդը տասնութ թվականի սկզբին գերմանական ճակատից վերադառնալիս միացավ կարմիր գվարդիայի ջոկատներից մեկին և քաղաքացիական պատերազմի ճակատներում մեկուկես տարվա մարտերի ընթացքում դեռ պահպանել էր հիմնական կադրերը։ Զաամուրցիները հիանալի հանդերձավորված էին. նրանց ձիերը կուշտ էին ու լավ մարզված։ Գունդը աչքի էր ընկնում իր մարտունակությամբ, բարոյական կայունությամբ ու մարտիկների հեծելազորային լավ պատրաստությամբ։

Ապստամբության սկզբում զաամուրցիները 1-ին Մոսկովյան հետևակ գնդի օժանդակությամբ համարյա մենակ էին դիմադրում ապստամբների ճնշման, որոնք ձգտում էին կռվով անցնել դեպի Ուստ-Մեդվեդիցա. հետո օժանդակ ուժեր եկան, ու գունդը առանց ցրիվ գալու վերջանականապես գրավեց Ուստ-Խոպերսկիի ճակատամասը՝ Կրիվայա գետակի ափերին։

Մարտի վերջին ապստամբները Ելանսկայա ստանցիայի հողից դուրս մղեցին կարմիր զորամասերը՝ գրավելով Ուստ-Խոպերսկիի խուտորների մի մասը։ Ստեղծվեց ուժերի որոշ հավասարակշռություն, որի հետևանքով ճակատը գրեթե երկու ամիս անշարժ մնաց։ Արևմուտքից պաշտպանելով Ուստ-Խոպերսկայան, Մոսկովյան գնդի մի դումարտակը իրեն տրված մարտկոցով գրավեց Դոնի ափին գտնվող Կրուտովսկի խուտորը։ Դոնի մերձակա բլրաշարքի մի ճյուղից, որ ձգվում է Կրուտովսկուց դեպի հարավ, կարմիր մարտկոցը, դաշտային մի կալում քողարկվելով, ամեն օր առավոտից մինչև երեկո ռմբակոծում էր աջափնյա բլրակների վրա կուտակվող ապստամբներին՝ օժանդակելով Մոսկովյան գնդի շղթաներին, հետո կրակը փոխադրում էր ու սփռում Ելանսկի խուտորի վրա, որ գտնվում էր Դոնի մյուս կողմում։ Խիտ կուտակված տների վերևում բարձր ու ցածր բռնկվում ու արագ ցնդում էին շրապնելի պայթյունների փոքրիկ ամպիկները։ Արկերը մերթ ընկնում էին խուտորի վրա,— ու փողոցներով մեկ վայրի սարսափով բռնված, ջարդոտելով ցանկապատերը, փախչում էին անասունները, կռացած վազում մարդիկ,— մերթ պայթում էին հնածեսների գերեզմանոցից դենը, հողմաղացների մոտ, ամայի ավազաթմբերի վրա՝ վեր թռցնելով թուխ, չհալված ու գունդ-գունդ հողը։

Մարտի 15-ին Շտոկմանը, Միշկա Կոշևոյը ու Իվան Ալեքսեևիչը Չերոտարյով խուտորից մեկնեցին Ուստ-Խոպերսկայա,— լսել էին, որ այնտեղ գուգազ է կազմակերպվում ապստամբական ստանիցաներից փախած կոմունիստներից ու սովետական աշխատողներից։ Նրանց տանում էր մի հնածես կազակ, այնպիսի մաքուր, մանկականորեն կարմիր դեմքով, որ նույնիսկ Շտոկմանը, նայելով նրան, ժրպտալիս առանց պատճառի սեղմում էր շրթունքները։ Չնայելով կազակի ջահելության, նրա մորուքը փարթամ էր, գանգուր, բաց շեկլիկ, դրա միջին ձմերուկի դիլիմի պես վարդագունել էր թարմ, կարմիր բերանը, աչքերի կողքին ոսկեփայլում էր աղվամազը, ու ճոխ մորուքից էր թե լիարյուն կարմրությունից,— աչքերը մի առանձին հստակությամբ էին կապույտին տալիս։

Միշկան ամբողջ ճանապարհին քթի տակ երգեր էր եր-

գում, Իվան Ալեքսեևիչը նստել էր ետևում, հրացանը ծունկներին դրած, մռայլ կուչ եկած, իսկ Շտոկմանը սահնակավարի հետ խոսակցություն սկսեց դատարկ բաներից.

— Առողջությունիցդ հո չե՞ս գանգատվում, ընկեր,— հարցրեց նա։

Եվ ուժով ու առողջությամբ լի հնածեսը, բանալով ոչխարենու կիսամուշտակը, ջերմ ժպտաց.

— Չէ, աստված հլա թողություն է տալի մեղքերիս։ Ինչի՞ պիտի անառողջ լինենք։ Կյանքերումս չենք ծխել, արաղ, իհարկե, խմում ենք, փոքրուց ցորենհաց ենք ուտում։ Էլ որտեղի՞ց պիտի հիվանդություն լինի։

— Հը՛մ, իսկ ծառայության մեջ եղե՞լ ես։

— Մի քիչ եղել եմ։ Կադետները քարշ տվին։

— Բա ինչո՞ւ Դոնեցից դենը չես գնացել։

— Զարմանք բան ես ասում, ընկեր.— հնածեսը գցեց ձիու մազից հյուսված երասանները, հանեց կաշվե, անասատառ ձեռնոցները ու սրբեց բերանը՝ նեղացած կկոցելով աչքերը.— Ինչի՞ պիտի գնայի այնտեղ, նոր երգեր լսելո՞ւ։ Ես կադետների մոտ էլ չէի ծառայի, եթե նրանք զոռով չըտանեին։ Ձեր իշխանությունը արդար է, միայն թե դուք մի քիչ սխալ բան արեցիք...

— Ի՞նչ սխալ բան։

Շտոկմանը ծխախոտ փաթաթեց, ծխեց ու երկար սպասեց պատասխանի։

— Ինչի՞ ես փստացնում այդ թունավոր խոտը,— երեսը շուռ տալով ասաց կազակը,— տես, թե չորս բոլորը ինչպիսի գարնանային մաքուր հոտ է, իսկ դու կուրծքդ պղծում ես գարշահոտ ծխով... Դուրս չի գալի։ Իսկ թե ինչ սխալ բան եք արել, կասեմ։ Դուք նեղեցիք կազակներին, անխելք բան արեցիք, թե չէ ձեր իշխանությանը ոչ մի վնաս էլ չէր հասնի։ Ծուռ մարդիկ շատ կան ձեզ մոտ, դրա պատճառով էլ ապստամբություն եղավ։

— Ո՞նց թե անխելք բան. այսինքն, քո կարծիքով, հիմարություններ արեցինք, հա՞։ Ի՞նչ հիմարություններ։

— Ինքդ էլ երևի գիտես... Գնդակահարում էիք մարդկանց։ Այսօր մեկին, վաղն էլ մյուսին... Ո՞ւմ համար է հետաքրքիր իրեն հերթին սպասել։ Երբ որ եզը տանում են

մորթելու, նա է՛լ է գլուխը թափ տալի։ Այսպես օրինակ, Բուկանովսկայա ստանիցայում... Հրե՛ն, երևում է, տեսնո՞ւմ ես, հրե՛ն նրանց եկեղեցին։ Մտիկ տուր, ուր որ մտրակովս ցույց եմ տալի, տեսնո՞ւմ ես... Այ թե ինչ են պատմում. նստել է նրանց մոտ կոմիսարն իրեն ջոկատով, ազգանունը Մալկին։ Եվ ի՞նչ, արդա՞ր է վարվում ժողովրդի հետ։ Ա՛յ, հիմի կպատմեմ։ Խուտորներից հավաքում է ալևորներին, տանում է ցախուտ, այնտեղ հանում նրանց հոգիները, բոլորովին տկլորացնում ու չի թողնում, որ հարազատները նրանց թաղեն։ Նրանց դժբախտությունն այն է եղել, որ մի ժամանակ նրանց ընտրել էին ստանիցայի պատվավոր դատավորներ։ Իսկ դու գիտես, թե նրանք ինչ տեսակ դատավորներ էին։ Մեկը զոռով է ստորագրում իրեն ազգանունը, մյուսն էլ կամ մատն է թաթախում թանաքի մեջ, կամ խաչ է դնում։ Այդ տեսակ դատավորները շատ անգամ հենց միայն ձևի համար են նստում։ Նրա ամբողջ արժանավորությունը երկար մորուքն է, իսկ նա ծերությունից շալվարը կոճկելն էլ է մոռանում։ Նրանից ի՞նչ պահանջես. ինչ որ կարելի է պահանջել փոքր երեխից։ Եվ ահա այդ Մալկինը, ոնց որ աստված, տնօրինում է ուրիշների կյանքը. մի անգամ հրապարակով գնում է մի ալևոր, մականունը՝ Թոկամտրակ։ Սանձը ձեռին գնում է նա իրեն կալը, որ ձին արձակի ու տանի, իսկ տղերքը հանաքով նրան ասում են՝ «Գնա, Մալկինը քեզ կանչում է»։ Թոկամտրակս իրեն հերետիկոսական ձևով խաչակնքում է,— նրանք բոլորն էլ նոր հավատով են ապրում, փափախը հանում է դեռ հրապարակում։ Ներս է մտնում, վախում է։ «Կանչե՞լ եք»,— ասում է։ Մալկինը ծիծաղում է, ձեռները դնում կողքերին։ «Հը՛մ,— ասում է,— թուչունն իրեն թևով եկավ։ Քեզ ոչ ոք չի կանչել, ամա որ եկել ես, թող այդպես լինի։ Տարեք, ընկերներ, սրան—երրորդ կատեգորիայով»։ Դե, իհարկե, բռնում են նրան ու տանում ցախուտը։ Պառավը սպասում է ու սպասում— չկա։ Գնաց ու կորավ պապին։ Սանձը ձեռքին թռավ երկնային արքայություն։ Մի ուրիշ ալևորի էլ, Անդրիանովսկի խուտորցի Միտրոֆանին, Մալկինը ինքը տեսավ փողոցում, կանչում է իր մոտ. «Ո՞րտեղացի ես, ո՞նց է ազգանունդ,— ու քոքռում է,— հլա տես,— ասում է,— ո՞նց է երկարացրել.

մորուքը, ասես աղվեսի պոչ լինի։ Դու քո մորուքով շատ նման ես Նիկոլա արդարին։ Մենք,— ասում է,— քեզանից, քեզ պես չաղ խոզից սապոն կպատրաստենք։ Սրան—երրորդ կատեգորիայով»։ Դրուստ որ, այդ պապի մորուքը թարսի պես ոնց որ կորեկի ծղնոտի ավել լիներ։ Ու գնդակահարեցին մենակ նրա համար, որ երկարացրել էր մորուքը ու թարս ժամին երևացել Մալկինի աչքին։ Բա դա ծաղր չի՞ ժողովրդի նկատմամբ։

Միշկան դեռ հնածեսի պատմածի սկզբում ընդհատեց երգը և վերջում բարկությամբ ասաց.

— Անհաջող ես փչում, ա՛յ քեռի։

— Դու ավելի լավ փչիր։ Նախքան սուտը բռնելը իմացիր բանը, հետո խոսիր։

— Իսկ դու այդ բանը հաստա՞տ գիտես։

— Մարդիկ էին ասում։

— Մարդի-ի՞կ։ Մարդիկ ասում են, թե հավերին կթում են, իսկ դրանք ծիծ չունեն։ Վայրահաչություններ ես լսել ու բլբլացնում ես կնկա պես։

— Ծերուկները հանգիստ էին...

— Էլ ո՞նց չէ, հանգի-ի՞ստ էին,— վրդովվելով, տնազ արեց Միշկան,— քո այդ հանգիստ ծերուկները երևի ապրստամբություն էին պատրաստում, կարելի է այդ դատավորների բակերում գետնի մեջ գնդացիրներ էին թաղված, իսկ դու ասում ես, թե մորուքի պատճառով կամ թե հանաքի համար նրանց գնդակահարեցին... Բա քեզ ինչո՞ւ չեն գնդակահարել մորուքիդ համար։ Քո մորուքը հո այդքան լայն է, ոնց որ քավթառ էծի մորուքը։

— Ես ինչքանով որ առել եմ, այնքանով էլ ծախում եմ։ Սատանեն գիտի, կարելի է թե մարդիկ ստում են, կարելի է թե ծերուկները վատ գործ էին բռնել իշխանության դեմ...— շփոթված մռթմռթում էր հնածեսը։

Նա սահնակից ցած թռավ, սկսեց երկար քայլել ճանապարհի կողքից, ճլմփացող, հալված ձյան միջով։ Նրա ոտները սլկում էին, ճեղքում թացությունից կապտած, փափլիկ ձյունը։ Արևը փաղաքուշ լուսավորել էր տափաստանը։ Բաց կապույտ երկինքը հուժկու գրկել էր հեռուներում երևացող բլուրներն ու լեռնանցքները։ Ձեփյուռի թույլ, դանդաղ շարժման մեջ զգացվում էր մոտալուտ գարնան բուրավետ շունչը։ Արևելքում, Դոնի շրջակա լեռների սպիտակավուն, ծուռումուռ շարքից դենը, կապույտին տվող օդացոլքերում աստիճանաձև բարձրանում էր Ուստ-Մեդվեդիցկի լեռան գագաթը։ Կռթնելով հորիզոնին, այնտեղ, հեռո՜ւ-հեռվում վիթխարի, ալեձև ծածկոցի նման երկրի վրա փռվել էին սպիտակ, փոքրիկ ամպերը։

Սահնակավարը թռավ սահնակի վրա, մի փոքր կոպտացած դեմքը դարձրեց դեպի Շտոկմանը, նորից սկսեց խոսել.

— Իմ պապը, նա մինչև հիմի էլ կենդանի է, հիմի նա հարյուր ութ տարեկան է, պատմում էր,— նրան էլ իրեն պապն էր պատմել,— որ նրա, այսինքն իմ պապի պապի օրով Պյոտր ցարը մեր Դոնի վերին կողմն էր ուղարկել մի իշխան,— տեր աստված, միտս գցի, էլի,—չգիտեմ Դլիննորուկով թե Դոլգորուկով։ Ու այս իշխանը զինվորներով իջնում էր Վորոնեժից, քարուքանդ անում կազակական շեները, այն պատճառով, որ կազակները չէին ուզում նիկոնյան մուտտառ հավատը ընդունել ու ցարի ուզածով շարժվել։ Կազակներին բռնոտում էին, քթները կտրում, ոմանց էլ կախում լաստերի վրա ու դրանք բաց թողնում Դոնի վրայով դեպի ներքև։

— Դու այդ ինչի՞ համար ես ասում,— խստորեն լարելով ուշադրությունը, հարցրեց Միշկան։

— Նրա համար, որ ցարը նրան այդ տեսակ իրավունքներ չէր տվել, թեկուզև նա Դլիննորուկի (Երկայնաբազուկ) էր։ Իսկ կոմիսարը Բուկանովսկում, զորօրինակ, այդպես էր անում. միթամ թե՝ «Ես ձեզ, շան որդենիք, կապակազակացնեմ, այնպես որ, ձեր ամբողջ կյանքում այդ կհիշեք...» Բուկանովսկում, հրապարակում այդպես էլ ասում էին ամբողջ ստանիցայի ժողովի առաջ։ Իսկ սովետական իշխանությունը մի՞թե նրան այդպիսի իրավունքներ է տվել։ Հենց այդ է բանը, է՛։ Հո մանդատներ չեն տրված այդպիսի գործերի համար, որ բոլորին մի արշինով չափեն։ Կազակները զանազան տեսակի են...

Շտոկմանի այտերի մաշկը կիտվեց, գուն-գունդ եղավ։

— Ես քեզ լսեցի, հիմի դու ինձ լսիր։

— Կարելի է, որ ես անխելքությունից ավելորդ բան ասի, դուք ինձ ներողություն արեք։

— Սպասիր, սպասիր... Ուրեմն այսպես։ Այն, որ դու պատմեցիր ինչ-որ կոմիսարի մասին, իսկապես որ ճըշմարտության նման չէ։ Ես այդ կստուգեմ։ Եվ եթե դա այդպես է, եթե նա ծաղրում էր կազակներին ու խևությունանում, ապա մենք նրան չենք ների։

— Օ՜խ, դժվա՜ր թե։

— Ոչ, հենց այդպես էլ կլինի։ Երբ ֆրոնտը անցնում էր ձեր խուտորով, մի՞թե կարմիրբանակայինները չգնդակահարեցին հենց իրենց զորամասի կարմիրբանակայինին այն բանի համար, որ նա թալանել էր մի ինչ-որ կազակուհու։ Այդ մասին ինձ ասել են ձեր խուտորում։

— Հա՜. նա Պերֆելևնայի սնդուկն էր մաքրազարդել։ Այդ եղել է։ Դրուստ է։ Կարելի է որ... Խիստ էին։ Դու դրուստ ես ասում,— կալերից դենը սպանեցին նրան։ Հետո մեզ մոտ երկար վիճեցին, թե նրան որտեղ պետք է թաղել։ Ոմանք ասում էին՝ գերեզմանոցում, մյուսներն էլ թե՝ դրանով կըպղծվի գերեզմանոցը։ Խեղճին այնպես էլ թաղեցին կալի մոտ։

— Եղե՞լ է այդպիսի դեպք.— Շտոկմանը արագ-արագ ծխախոտ էր փաթաթում։

— Եղել է, եղել է, չեմ ուրանա,— աշխուժանալով համաձայնվեց կազակը։

— Հապա դու ինչո՞ւ ես կարծում, թե կոմիսարին չենք պատժի, եթե պարզենք նրա մեղքը։

— Սիրելի ընկեր, գուցե ձեզ մոտ նրա գլխին մեծավոր էլ չի գտնվի։ Ախր այս սպանվածը զինվոր էր, իսկ նա կոմիսար է...

— Ուրեմն է՛լ ավելի խիստ կվարվենք նրա հետ, հասկացա՞ր։ Սովետական իշխանությունը դատաստան է տեսնում միայն թշնամիների դեմ, և մենք անողոքաբար պատժում ենք սովետական իշխանության այն ներկայացուցիչներին, որոնք անարդարացիորեն նեղում են աշխատավոր բնակչությանը։

Թնդանոթի որոտը փլվածքի դղրդյունի նման ճղմեց մարտի տափաստանային կեսօրվա անդորրությունը, որ խախտվում էր միայն սահնակի հիմնաձողերի սվսվոցով ու ձիերի սմբակների չփչփող զարկերով։ Առաջին կրակոցին հավասար ընդմիջումներով հետևեց էլի երեք կրակոց։ Կրուտովսկուց մարտկոցը վերսկսեց Դոնի ձախ ափի հրակոծությունը։

Սահնակի վրա խոսակցությունը ընդհատվեց։ Հրանոթային որոտը չներդաշնակվող գամմայի պես ներխուժեց ու խախտեց նախագարնանային տառապանքում նիրհող տափաստանի դալուկ հմայքը։ Նույնիսկ ձիերն էլ քայլեցին ավելի արագ, աշխույժ՝ թեթևակի շարժելով ու փոխելով ոտները, գործունեաբար թափահարելով ականջները։

Դուրս եկան Հետմանական ճանապարհը, ու սահնակին նստածների աչքերի առաջ փռվեց Անդրդոնի լայնարձակ տարածությունը, որ վիթխարի էր, բծաշատ ու խայտաբղետ, դեղին ավազուտների հալված բացուտներով, ուռենիների և լաստենու անտառի հրվանդաններով ու գորշ-կապտավուն կղզիներով։

Ուստ-Խոպերսկում սահնակը մոտեցավ ռևկոմի շենքին, որի կողքին էր Մոսկովյան գնդի շտաբը։

Շտոկմանը խառնշտելով գրպանը, քսակից հանեց Կերենսկու քառասուն ռուբլիանոց մի թղթադրամ, տվեց կազակին։ Վերջինս ուրախ ժպտաց՝ թաց բեղերի տակից բաց անելով դեղնավուն ատամները, ու շփոթվելով ասաց.

— Ի՞նչ եք անում, ընկեր, Քրիստոս փրկե։ Չարժե փող տալ։

— Վերցրու, քո ձիերի աշխատանքի դիմաց։ Իսկ իշխանության մասին դու մի՛ կասկածիր։ Հիշիր, որ մենք պայքարում ենք բանվորների և գյուղացիների իշխանության համար։ Ձեզ ապստամբության են դրդել մեր թշնամիները,— կուլակները, ատամանները, սպաները։ Նրանք ապըստամբության հիմնական պատճառն են։ Իսկ եթե մերոնցից որևէ մեկը անարդարացիորեն նեղել է աշխատավոր կազակին,— որը համակրում է մեզ, օգնում ռևոլյուցիային,— ապա նեղողի դեմ կարելի է դատաստան տեսնել։

— Գիտե՞ս ինչ է ասում առածը, ընկե՛ր. աստված բարձրը է, իսկ թագավորը հեռու... Միևնույն է, ձեր թագավորն էլ է հեռու... Ուժեղի դեմ մի՛ կռվի, հարուստի հետ մի՛ դատվի, իսկ դուք և՛ ուժեղ եք, և՛ հարուստ.— Ու խորամանկ

ժպտաց.— Մտի՛կ, է՛, քառասուն մանեթ տվեց, իսկ ճապարհ գալու իսկական գինը մի հնգանոց է։ Էհ, Քրիստոս, փրկե։

— Նա խոսելուդ համար այդքան տվեց,— ժպտաց Միշկա Կոշևոյը՝ ցած թռչելով սահնակից ու հարդարելով շալվարը,— մեկ էլ դուրեկան մորուքիդ համար։ Գիտե՞ս, թե ում ես բերել, դդմագլուխ. նա կարմիր գեներալ է։

— Հա՞։

— Հա ու քեզ հայրապետի մախաթ։ Դուք էլ միթամ մարդ եք, էլի... Թե որ քիչ տան, ղալմաղալ ես անում՝ «Հրես, ընկերներին տարա, մի հնգանոց տվին, ա՛մա մարդիկ են հա՛-ա»։ Ամբողջ ձմռանը նեղացած կլինես։ Թե որ շատ են տվել, էլի ներսդ վառվում է. «Ի՞նչ հարուստ մարդիկ են, է՛։ Քառասուն մանեթ ցնծաց։ Անհաշիվ փող ունի...» Ես քեզ մի քոռ գռոշ էլ չէի տա։ Թեկուզ նեղանաս։ Մեկ է քեզ չեն գոհացնի։ Դեհ, գնանք... Գնաս բարով, մորուք։

Միշկայի թունդ խոսքի վերջում նույնիսկ նոթոտ Իվան Ալեքսեևիչն էլ ժպտաց։

Շտաբի բակից սիբիրյան փրչոտ ձիով դուրս թռավ հեծյալ հետախուզախմբի մի կարմիրբանակային։

— Ո՞րտեղից է սահնակը,— հարցրեց նա՝ քաշելով կարճ սանձը ու շուռ տալով ձին։

— Դու ի՞նչ ես ուզում,— հարցրեց Շտոկմանը։

— Պետք է փամփուշտներ տանել Կրուտովսկի։ Թե՛ր սահնակը։

— Ո՛չ, ընկեր, այս սահնակը մենք բաց կթողնենք։

— Իսկ դուք ո՞վ եք։

Կարմիրբանակայինը, որ ջահել գեղեցիկ մի տղա էր, բոլորովին մոտեցավ։

— Մենք Ջաամուրսկի գնդից ենք։ Սահնակը մի պահի։

— Ա՛-ա... Դե լավ, թող գնա։ Ազա՛տ ես, ծերուկ։

XI.

Ստուգումից պարզվեց, որ Ուստ-Խոպերսկում ոչ մի գուգազ էլ չի կազմակերպվում։ Կազմակերպվել էր մի գուգազ, բայց ոչ թե Ուստ-Խոպերսկում, այլ Բուկանովսկում։ Գուգազը կազմակերպել էր հենց այն կոմիսար Մալկինը, որը 9-րդ Կարմիր բանակի շտաբի կողմից ուղարկվել էր Խոպերի ստորին ստանիցաները և որի մասին ճանապարհին պատմում էր հնածես կազակը։ Ելանսկու, Բուկանովսկու, Սլաշչևսկու և Կումիլժենսկու կոմունիստներն ու սովետական աշխատողները, կարմիրբանակայիններով համալրված, կազմում էին բավական պատկառելի մարտական մի միավոր, որ ուներ երկու հարյուր հետևակ և, բացի այդ, նրան էին միացրել հեծյալ հետախուզախումբը,— մի՛ քանի տասնյակ թուր։ Գուգազը ժամանակավորապես գտնվում էր Բուկանովսկում, Մոսկովյան գնդի մի վաշտի հետ դիմադրում էր կուլակներին, որոնք փորձում էին հարձակվել Ելանկա գետակի վերին ավազանից և Զիմովնուց։

Բանակցելով շտաբի պետի հետ, որը նախկին կադրային սպա էր, մռայլ ու քայքայված մի մարդ, և քաղկոմիսարի հետ, որը Մոսկվայի բանվոր էր Միխելսոնի գործարանից, Շտոկմանը որոշեց մնալ Ուստ-Խոպերսկում, միանալ գնդի 2-րդ գումարտակին։ Մաքուր սենյակում, որ լիքն էր փաթաթաններով, հեռախոսալարի կծիկներով և այլ ռազմական գույքով, Շտոկմանը երկար խոսեց քաղկոմիսարի հետ։

— Գիտե՞ս ինչ, ընկեր,— դանդաղ խոսում էր կարճահասակ դեղնադեմ կոմիսարը, որը տառապում էր կույր աղիքի սուր հիվանդության նոպաներից,— այստեղ գոյություն ունի բարդ մեխանիկա։ Մեր տղերքը մեծ մասամբ մոսկվացի և ոյազանցիներ են, մի քիչ էլ կան նիժնինովգորոդցիներ։ Պինդ տղերք են, մեծամասնությունը բանվորներ են։ Մեզ մոտ էր միրոնովյանների մի հեծելավաշտ, 14-րդ,— Միրոնովի դիվիզիայից. սրանք դանդաղեցնում էին գործը։ Հարկավոր եղավ նրանց վերադարձնել Ուստ-Մեդվեդիցա... Դու մնա, աշխատանք շատ կա։ Հարկավոր է աշխատել բը-

նակչության մեջ, բացատրել։ Դու հասկանում ես, որ այդ կազակները... Այստեղ պետք է սուր պահել ականջը

— Այդ ամենը ես հասկանում եմ քեզանից ոչ պակաս,— ժպտալով կոմիսարի խնամակալական տոնի վրա ու նայելով նրա տառապալից աչքերի դեղնած սպիտակուցներին, ասաց Շտոկմանը.— Իսկ դու ինձ ասա, այդ ի՞նչ կոմիսար է Բուկանովսկում։

Կոմիսարը սղալում էր խուզած բեղերի գորշ խոզանը, ալարկոտ պատասխանում՝ երբեմնակի բարձրացնելով կապտավուն, բարակ կոպերը։

— Նա այնտեղ մի ժամանակ չափն անց էր կացնում։ Նա լավ տղա է, բայց այնքան էլ գլուխ չի հանում քաղաքական իրադրությունից։ Բայց ախր երբ անտառը կտրում են, տաշեղները դես-դեն են թռչում... Այժմ նա ստանիցաների տղամարդ բնակչությանը տեղափոխում է Ռուսաստանի խորքը... Անցիր տնտեսվարի մոտ, նա ձեզ հաշվի կառնի ապրուստի համար,— ասում էր կոմիսարը տանջալից կերպով դեմքը կնճռոտելով, կեղտոտ, բամբակուն շալվարը ծեռքով պահած։

Առավոտյան 2-րդ գումարտակը հավաքվեց «ի զեն» հրամանով, տեղի ունեցավ մարդկանց առկայության ստուգում։ Մի ժամից հետո գումարտակը երթային շարասյունով շարժվեց դեպի Կրուտովսկի խուտորը։

Չորս հոգուց բաղկացած շարքերից մեկում իրար կողքի քայլում էին Շտոկմանը, Կոշևոյը և Իվան Ալեքսեևիչը։

Կրուտովսկուց ձիավոր հետախուզախումբ ուղարկեցին Դոնի մյուս կողմը։ Շարասյունը նրա ետևից անցավ Դոնը։ Կակղած, գոմաղբի դարչնագույն, կամ թափթփուկներով պատած ճանապարհին ջրափոսեր կային։ Դոնի սառույցը խամրած, պղպջակավոր կապտություն ուներ։ Առափնյա վարարած ջրաշերտերը անցնում էին ցանկապատերի վրայով։ Ետևից, սարից մարտկոցը արկեր էր տեղում բարդինների պուրակների վրա, որոնք երևում էին Ելանսկի խուտորի ետևում։ Մի կողմ թողնելով կազակների լքած Ելանսկի խուտորը, գումարտակը պետք է շարժվեր Ելանսկայա ստանիցայի ուղղությամբ, ու կապվելով 1-ին գումարտակի մի վաշտի հետ, որ հարձակվում էր Բուկանովսկուց, գրավեր

Անտոնով խուտորը։ Դիսպոզիցիայի համաձայն, գումարտակի հրամանատարը պարտավոր էր իր զորամասը տանել Բեզբորոդով խուտորի ուղղությամբ։ Հեծյալ հետախուզախումբը շուտով հաղորդեց, որ Բեզբորոդովում հակառակորդը չի հայտաբերված, իսկ խուտորի աջ կողմում, դրանից չորս վերստ հեռավորությամբ հրացանային արագ փոխհրաձգություն է տեղի ունենում։

Կարմիրբանակայինների շարասյան գլուխների վրայով, ինչ-որ բարձրության վրա կրճատելով ու դղրդալով թռչում էին արկերը։ Նոնակների (արկերի) ոչ հեռու պայթյունները ցնցում էին գետինը։ Ետևում, Դոնի վրա զրնգալով շարժվեց սառույցը։ Իվան Ալեքսեևիչը ետ նայեց։

— Երևի ջուրը վարարում է։

— Հիմար բան է այս ժամանակ Դոնն անցնելը։ Մեկ էլ տեսար սառույցը շարժվեց,— նեղանալով մոթմոթաց Միշկան, որ ոչ մի կերպ չէր ընտելանում հետևազորի նման հրստակ ու համաքայլ քայլելուն։

Շտոկմանը նայում էր առջևից գնացողների մեջքերին, որոնց վրա պինդ կապված էին գոտիները, ռիթմիկորեն ճոճվող հրացանների փողաբերաններին, որոնց վրա ամրացված էին գորշ-սևավուն, նամակալած սվիները։ Ետ նայելով, նա տեսնում էր կարմիրբանակայինների լուրջ ու անտարբեր դեմքերը, որոնք այնպե՛ս տարբեր և այնպե՛ս անխախտելիորեն նման էին միմյանց, տեսնում էր հնգաթև կարմիր աստղերով ու մոխրագույն գդակների ճոճուն շարժումը, գորշ շինելները, որոնցից հները դեղնավուն էին, իսկ նորերը՝ բաց գույնի ու խավոտ. լսում էր մարդկանց մասսայի ճլմփացող ու ծանր երթային քայլքը, խուլ ասուլիսը, տարբեր ձայներ արձակող հազը, ջրամանների զնգոցը. զգում էր նամացած սապոգների, մախորկայի, փոկեղեն հանդերձանքի սուր հոտը։ Կիսափակելով աչքերը, նա աշխատում էր համաքայլ գնալ, ու զգալով ներքին բուռն, մեծ ջերմություն դեպի այդ բոլոր, դեռ երեկ իրեն անծանոթ և օտար տղաները, մտածում էր՝ «Լավ, հապա ինչո՞ւ այժմ սրանք ինձ համար դարձան առանձնապես սիրելի ու խղճալի։ Ի՞նչն է կապում. դե՛, ընդհանուր իդեան... Ո՛չ, անշուշտ այստեղ էլ ոչ միայն իդեան է, այլև գործը։ Հապա էլ ի՞նչ։ Գուցե

վտանգի ու մահվան մոտիկությո՞ւնը։ Ու մի տեսակ առանձնապես հարազատ են...» Նա աչքերով ժպտաց։ «Մի՞թե ծերանում եմ»։

Շտոկմանը հայրական զգացմունքին նմանվող հաճույքով նայում էր իր առջևից քայլող կարմիրբանակայինի հուժկու, ուղիղ, խոշոր մեջքին, պատանիորեն կլոր պարանոցի կարմիր ու մաքուր մի հատվածին, որ երևում էր օձիքի ու փափախի արանքից, ապա հայացքը փոխադրեց իր հարևանի վրա։ Թուխ, սափրված դեմք արյան պես կարմիր այտերի սալերով, նուրբ, առնացի բերան, ինքը բարձրահասակ, սակայն բարեկազմ ինչպես աղավնին. գնում է՝ ազատ ձեռքը համարյա առանց թափահարելու, ու շարունակ մի տեսակ հիվանդագին կերպով կնճռոտում է դեմքը, իսկ աչքերի անկյուններում—ծերունական խորշոմների ոստայն։ Ու Շտոկմանը ցանկացավ խոսակցություն սկսել։

— Վաղո՞ւց ես, բանակում, ընկեր։

Հարևանի բաց կինամոնագույն աչքերը սառն ու զննողաբար, մի քիչ ծուռը սահեցին Շտոկմանի վրայով։

— Տասնութ թվից,— դժկամ ասաց նա։

Զուսպ պատասխանը չսառեցրեց Շտոկմանին։

— Ո՞րտեղացի ես։

— Հայրենակի՞ց ես փնտրում, հայրիկ։

— Հայրենակցին ուրախությամբ կհանդիպեմ։

— Մոսկվացի եմ։

— Բանվո՞ր։

— Ըհը՛մ։

Շտոկմանը անցողակի նայեց հարևանի ձեռքին։ Ժամանակը դեռ չէր ջնջել երկաթի վրա աշխատելու հետքերը։

— Մետաղագո՞րծ ես։

Ու էլի կինամոնագույն աչքերը սահեցին Շտոկմանի դեմքի, նրա մի փոքր ճերմակած, անմաքուր մորուքի վրայով։

— Մետաղի ճախարակագործ եմ։ Դու է՞լ.— Ու կարծես ջերմացան խիստ, կինամոնագույն աչքերի անկյունները։

— Ես փականագործ եմ եղել... Այդ ի՞նչ է ընկեր, դեմքը շարունակ կնճռոտում ես։

— Սապոգներս հարում են, սմքել են։ Գիշերը գաղոնքում էի, ոտներս թրջվեցին։

— Չե՞ս վախենում,— կռահողաբար ժպտաց Շտոկմանը։

— Ինչի՞ց։

— Դե, չէ որ մարտի ենք գնում...

— Ես կոմունիստ եմ։

— Իսկ կոմունիստները մահից չե՞ն վախենում, ինչ է։ Նրանք նույնպիսի մարդիկ չե՞ն,— խոսակցությանը միջամտեց Միշկան։

Շտոկմանի հարևանը ճարպկությամբ վեր գցեց հրացանը, առանց Միշկային նայելու, մտածելով, պատասխանեց.

— Դու, աղբերս, այս գործերի մեջ դեռ խամ ես։ Ես չեմ կարող վախենալ։ Ինքս եմ ինձ հրամայել, հասկացա՞ր։ Եվ դու առանց մաքուր ձեռնոցների մի՛ մտնի իմ հոգու մեջ... Ես գիտեմ, թե ինչի համար և ում դեմ եմ կռվում, գիտեմ, որ մենք կհաղթենք։ Իսկ դա գլխավորն է։ Մնացածը դատարկ բան է։— Ու ինչ-որ հուշից ժպտալով, նայելով Շտոկմանի պրոֆիլին, պատմեց.— Անցյալ տարի ես Կրասավցևի ջոկատումն էի, Ուկրաինայում, կռիվներ էին տեղի ունենում։ Մեզ շարունակ նեղում էին Կորուստներ։ Սկսեցին վիրավորներին թողնել-հեռանալ։ Եվ ահա Ժմերինկայի մոտերքում մեզ շրջապատում են։ Հարկավոր էր գիշերով անցնել սպիտակների դիրքերի միջով և նրանց թիկունքում պայթեցնել մի գետակի կամուրջը, որ նրանց զրահագնացքը չկարողանար անցնել. իսկ մենք պետք է կռվով անցնեինք երկաթուղագիծը։ Ցանկացողներ են կանչում։ Այդպիսիներ չկան։ Կոմունիստները,— մենք շատ չէինք,— ասում են՝ «Եկեք վիճակ գցենք, թե մեզանից ով գնա»։ Ես մտածեցի ու հանձն առա։ Վերցրի պայթուցիկ գլաններ, քուղ, լուցկի, հրաժեշտ տվի ընկերներիս, գնացի։ Գիշերը մթին էր, մշուշոտ։ Անցա մի հարյուր սաժեն, սկսեցի սողալ։ Սողում եմ չհնձած տարեկանի, հետո ձորակի միջով։ Դուրս եմ գալի ձորակից, միտս է, թե ինչպես քթիս տակից թռավ մի ինչ-որ թռչուն։ է-է-է՛... Անցա պահպանական խմբի կողքից, նրանից տասը սաժեն հեռավորությամբ, մոտեցա կամուրջին։ Գնդացրային մի ուղեկալ պահպանում էր կամուրջը։ Երկու ժամ պառկեցի, սպասում էի հարմար մոմենտին։ Գլաններ

տեղավորեցի, փորձեցի փեշիս տակ վառել լուցկին,— նամ-
մացել է, չի վառվում։ Ախր ես փորիս վրա էի սող տվել։
ցողից թրջվել էի, շորերս մզեիր, ջուր կթափվեր, լուցկու
գլխիկները թաց էին։ Եվ ահա, բիձա ջան, այդ ժամանակ ես
սարսափեցի։ Շուտով լուսանալու է, իսկ իմ ձեռքերը դո-
ղում են, քրտինքը լցվում է աչքերս։ «Կորա՛վ ամեն ինչ»,—
մտածում եմ։ «Եթե չպայթեցնեմ, ինքնասպան կլինեմ»։
Զարշարվեցի, չարշարվեցի, ու մի կերպ վառեցի ու հեռացա։
Երբ կամուրջը պայթեց, ես պառկած էի երկաթգծի հողա-
թմբի ետևում, վահանների տակ. նրանց մոտ աղմուկ բարձ-
րացավ։ Տագնապ։ Կրակեցին երկու գնդացրից։ Իմ կողքից
շատ ձիավորներ թռան, բայց գիշերով ո՞նց գտնեին։ Վա-
հանների տակից դուրս ելա ու մտա արտերի մեջ։ Ու գի-
տե՞ս, միայն այստեղ թուլացան ոտներս ու ձեռներս, իսկի
շարժվել էլ չեմ կարողանում։ Պառկեցի։ Երբ գնում էի այն-
տեղ, ոչինչ, լավ էի զգում ինձ, իսկ վերադառնալիս ա՛յ թե
ինչ պատահեց... Ու գիտե՞ս, սիրտս սկսեց խառնել, ինչ որ
կար թափեցի։ Զգում եմ, որ էլ ոչինչ չկա, բայց էլի խառ-
նում է։ է-է-հե՛... Բայց և այնպես, իհարկե, հասա մե-
րոնց։— Ու աշխուժացան, տարօրինակ կերպով ջերմացան
և գեղեցկացան վառ փայլող, կինամոնագույն աչքերը։—
Առավոտը, կռվից հետո, տղերանց պատմում եմ, թե լուցկու
հետ ինչ պատահեց, իսկ մի ընկերս ասում է՝ «Բա բոցա-
հանը Սերգեյ, մի՞թե կորցրել էիր»։ Ձեռքս տանում եմ
կրծքիս գրպանը,— այստե՛ղ է։ Հանեցի, չխկացրի,— երևա-
կայիր իսկույն վառվեց։

Բարդիների հեռավոր կղզուց քամու ուղղությամբ բարձր
ու շեշտակի թռչում էին երկու ագռավ։ Քամին քշում, ճոռ-
ճում էր նրանց։ Նրանք արդեն շարասյունից մի հարյուր սա-
ժեն հեռու էին գտնվում, երբ Կրուտովսկու սարի վրա, մի
ժամվա ընդմիջումից հետո, նորից որոտաց հրանոթը, հրա-
ձգության ճշտման արկը սկսեց մոտենալ ուժգին, սաստ-
կացող կրճկրճոցով, ու երբ նրա ոռնոցը կարծես թե մեծա-
գույն լարվածության էր հասել, ավելի բարձր թռչող ագռա-
վը հանկարծ կատաղաբար պտույտ եկավ հողմի քշած տա-
շեղի նման ու, թևերը շեղակի տարածած, պարուրաձև պտ-

տրտվելով, դեռ փորձելով դիմանալ, ընկավ մի ահագին, սև
տերևի նման։

— Թռչում էր մեռնելու,— հրճվանքով ասաց Շտոկմանի
ետևից քայլող կարմիրբանակայինը,— ո՞նց ֆռռաց, հա՛-ա,
մազալու բան է։

Վաշտի հրամանատարը շարասյան գլխից սլացավ բարձ-
րամարմին, թուխլիկ ձիով, որի ոտների տակից հալված
ձյան կտորներ էին թռչում։

— Շղթա՛ կազմել։

Լուռ քայլող Իվան Ալեքսեևիչի վրա ձյան փաթիլներ
շպրտելով, կողքից սլացան երեք սահնակ գնդացիրներով։
Փոսից անցնելիս գնդացրորդներից մեկը պոկվեց ետին
սահնակից, ու կարմիրբանակայինների հուժկու և զրնգուն
քրքիջը հնչեց այնքան ժամանակ, մինչև որ ձիավոր գնդաց-
րորդը ճարպկությամբ շուռ տվեց ձիերը և ընկած գնդացրոր-
դը թռավ կանգ չառած սահնակի վրա։

XLI

Կարգինսկայա ստանիցան 1-ին ապստամբական դիվի-
զիայի համար հենակետ էր դարձել։ Գրիգորի Մելեխովը
հիանալիորեն հաշվի առնելով Կարգինսկայային մոտիկ
դիրքի ստրատեգիական շահավետությունը, որոշեց ոչ մի
դեպքում այն չթողնել։ Ջիր գետի ձախ ափով ձգված լեռնե-
րը այն իշխող բարձունքներն էին, որոնք պաշտպանվելու
հիանալի հնարավորություն էին տալիս կազակներին։ Ներ-
քևում, Ջիրի մյուս կողմում, փռված էր Կարգինսկայան,
նրանից դենը փափլիկ գորգի նման դեպի հարավ էր ձգվում
տափաստանը, որ տեղ-տեղ լայնակի կտրատված էր ձորակ-
ներով ու հովիտներով։ Գրիգորին սարի վրա ինքը տեղ ընտ-
րեց երեք թնդանոթանոց մարտկոցը տեղավորելու համար։
Մոտիկում կար մի շատ լավ դիտակետ,— տեղանքի վրա
իշխող, կիտովի մի կուրգան, որը պաշտպանված էր կաղնու
անտառով և բլրաշատ շրջակայքով։

Ամեն օր Կարգինսկայայի մերձակայքում մարտեր էին
տեղի ունենում։ Կարմիրները սովորաբար հարձակվում էին

երկու կողմից,— տափաստանով, հարավից, ուկրաինական Աստախովո մեծ գյուղի կողմից և արևելքից, Բոկովսկայա ստանիցայից, առաջանում Ջիր գետով դեպի վեր, համատարած խուտորներով։ Կազակական շղթաները պառկած էին Կարգինսկուց հարյուր սաժեն դենը, ուշ-ուշ էին կրակում։ Կարմիրների անողոք կրակը համարյա միշտ էլ նրանց ստիպում էր նահանջել դեպի ստանիցան և ապա նեղ ձորակների դիք յառերի տակից՝ դեպի սարը։ Կարմիրները բավականաչափ ուժ չունեին հետապնդումը շարունակելու համար։ Նրանց հարձակողական գործողությունների հաջողության վրա խիստ բացասաբար էր անդրադառնում հարկավոր քանակությամբ հեծելազոր չունենալը, որ կարողանար թևերի շրջանցումով ստիպել կազակներին շարունակել նահանջը ու, շեղելով հակառակորդի ուժերը, արձակել հետևազորի ձեռները, և հետևազորը տատանվելով թրևում էր ստանիցայի մատույցներում։ Հետևազորը չէր կարող օգտագործվել նման մանևրի համար, որովհետև թույլ էր նրա շարժունակությունը, նա անընդունակ էր արագ մանևրներ կատարելու, իսկ կազակների ուժերը բաղկացած էին գլխավորապես հեծելազորից, որ կարող էր ուզած պահին հետևազորի երթի ժամանակ հարձակվել նրա վրա ու այդպիսով նրան շեղել հիմնական խնդրից։

Ապստամբների առավելությունները նաև այն էին, որ նրանք, հիանալի գիտենալով տեղանքը, չէին կորցնում առիթը՝ աննկատելիորեն հեծյալ հարյուրյակներ տեղափոխել ձորակների միջով, դեպի հակառակորդի թևերն ու թիկունքը, մշտապես սպառնալ նրան ու կասեցնել նրա հետագա առաջշարժումը։

Մարտի 20-ի նախօրյակին Գրիգորին կարմիրներին ջախջախելու պլան կազմեց։ Նա ուզում էր կեղծ նահանջով նրանց քաշել Կարգինսկայա, միաժամանակ Ռյաբչիկովին հեծյալ գնդով, արևմուտքից Գուսինսկու ձորակով և արևելքից Գրաչիի վրայով նետել նրանց թևի վրա, շրջապատել նրանց և խորտակիչ հարված հասցնել։ Պլանը մանրակրկիտ կերպով էր մշակված։ Երեկոյան խորհրդակցության ժամանակ ինքնուրույն զորամասերի բոլոր հրամանատարները ճշգրիտ հրահանգներ ու հրամաններ ստացան։ Գրիգորիի

մտքով շրջանցման շարժումը պետք է սկսվեր լուսաբացին, լավագույն կերպով քողարկվելու համար։ Ամեն ինչ պարզ էր ինչպես տամա խաղալիս։ Ու Գրիգորին մանրակրկիտորեն ստուգելով և կշռադատելով բոլոր հնարավոր պատահականությունները, այն ամենը, ինչ որ չնախատեսված կերպով կարող էր խանգարել իր պլանի իրականացման, երկու բաժակ տնական օղի խմեց, առանց հանվելու փռվեց մահճակալի վրա. շինելի թաց փեշը քաշելով գլխին, քնեց մեռածի նման։

Հետևյալ օրվա առավոտյան ժամը մոտ չորսին կարմիր շղթաները արդեն գրավում էին Կարգինսկայան։ Կազակական հետևազորի մի մասը դիտավորյալ կերպով ստանիցայի միջով փախավ դեպի սարը. Կարգինսկայայի ծայրին կանգ առած երկու գնդացիր, արագորեն շուռ տալով ձիերը, սայլակների վրայից կրակ բացեցին փախչողների վրա։ Կարմիրները դանդաղ ցրվում էին փողոցներում։

Գրիգորին կուրգանի ետևումն էր, մարտկոցի մոտ։ Նա տեսնում էր, թե ինչպես կարմիր հետևազորը գրավում է Կարգինսկայան ու կուտակվում Ջիրի ափին։ Պայմանավորվել էին, որ առաջին թնդանոթային կրակոցից հետո կազակների երկու հարյուրյակները, որոնք պառկած են սարի տակ, այգիներում, կանցնեն հարձակման, իսկ այդ ժամանակ այն գունդը, որ գնացել էր շրջանցման, կսկսի թևանցումը։ Մարտկոցի հրամանատարը ուզում էր ուղիղ նշանառությամբ խփել Կլիմովսկու բլուրով արագությամբ դեպի Կարգինսկայա սլացող, գնդացրով բեռնված սայլակին, երբ դիտորդը հաղորդեց, որ Նիժնի-Լատիշևսկի խուտորում, կամրջի վրա, երեք և կես վերստ հեռավորությամբ երևացել է մի թնդանոթ. կարմիրները միաժամանակ հարձակվում էին նաև Բոկովսկու կողմից։

— Հրասանդից կրակեցեք նրանց վրա,— խորհուրդ տվեց Գրիգորին՝ աչքերից չհեռացնելով Ցեյսի հեռադիտակը։

Նշանառուն մի քանի խոսք փոխանակելով վախմիստրի հետ, որը մարտկոցի հրամանատարի պարտականությունները էր կատարում, արագությամբ տեղադրեց նշանոցը։ Հրետանավորները պատրաստվեցին կրակելու, և չորս ու կես դյույմանոց հրասանդը,— ինչպես այդ որոշել էին կազակ-

ները,— որոտալից ճայթեց՝ ետևից փորելով հերկած հողը։ Հենց առաջին արկը խփեց կամրջի ծայրին։ Կարմիր մարտկոցի երկրորդ հրանոթը այդ միջոցին անցնում էր կամրջի վրա։ Արկը դես-դեն շպրտեց ձիերի լծասարքը, վեց ձիուց,— ինչպես պարզվեց հետագայում,— ողջ մնաց միայն մեկը, բայց արկաբեկորը կտրեց այդ ձիու վրա նստած հրետանավորի գլուխը։ Գրիգորին տեսավ, թե ինչպես հրանոթի առաջ բռնկեց ծխի դեղնագորշ քուլան, ծանր պայթեց արկը, ու ծխով պատած, ծառս լինելով, կտրված ծառի պես ընկան ձիերը. ընկնելով՝ փախչում էին մարդիկ։ Մի հեծյալ կարմիրբանակային, որ արկն ընկնելու պահին հրանոթի առաջքի մոտ էր, ձիու և կամրջի բազրիքի հետ միասին թռավ ու զարկվեց սառույցին։

Մարտկոցավորները այդպիսի հաջող դիպում չէին սպասում։ Կուրգանի տակ, հրանոթի կողքին մի րոպե լռություն տիրեց. միայն մոտիկում գտնվող դիտորդը, վեր թռչելով ու ծնկաչոք լինելով, ինչ-որ բղավում էր ու թափահարում ձեռները։

Ու իսկույն ներքևից, բալենու այգիների ու պուրակների խիտ ծառուտներից լսվեց աններդաշնակ «ուռռա»-ն, հրացանային կրակոցների անհամաչափ ճարճատյունը։ Մոռանալով զգուշությունը, Գրիգորին վազեվազ բարձրացավ կուրգանի վրա։ Փողոցներով վազում էին կարմիրբանակայինները, այնտեղից գալիս էին ձայների անկարգ դժժոցը, հրամանների հատու բղավոցները, հրաձգության մրրկաթափ բռնկոցները։ Գնդացրավոր սայլակներից մեկը փորձեց սլանալ դեպի բլրագագաթը, բայց գերեզմանոցին մոտիկ տեղում իսկույն ևեթ կտրուկ շուռ եկավ ու գնդացիրը վազող ու վազելիս ընկնող կարմիրբանակայինների գլուխների վրայով կրակ բացեց կազակների վրա, որոնք այգիներից դուրս էին թափվում։

Գրիգորին իզուր էր ջանում հորիզոնում տեսնել կազակական ցրիվ շարքերը։ Հեծելազորը, որ Ռյաբչիկովի հրամանատարությամբ շրջանցման էր գնացել, դեռևս չէր երևում։ Զախ թևում եղած կարմիրբանակայինները արդեն Զաբուրոնի հովտի միջով վազում էին դեպի կամուրջը,

որը Կարգինսկայան միացնում էր կից խուտորին,— Արխիպովսկուն, մինչդեռ աջթևայինները դեռ փախչում էին ստանիցայի երկայնքով ու ընկնում կազակների կրակոցներից, իսկ կազակները գրավել էին Ջիրին մոտիկ երկու փողոց։

Վերջապես, բլուրի ետևից երևաց Ռյաբչիկովի առաջին հարյուրյակը, ապա՝ երկրորդը, երրորդը, չորրորդը... Ցրիվ գալով ու շղթա կազմելով, հարյուրյակները կտրուկ դարձան դեպի ձախ, կտրեցին բլրալանջով Կլիմովկա փախչող կարմիրբանակայինների ճանապարհը։ Գրիգորին ձեռների մեջ ճմռթելով ձեռնոցները, հուզված հետևում էր կռվի ընթացքին։ Նա թողեց հեռադիտակը և արդեն հասարակ աչքով նայում էր, թե ինչպես են ցրիվ շարքերը շեշտակի մոտենում Կլիմովսկու ճանապարհին, ինչպես են կարմիրբանակայինները շփոթված ետ դառնում և խումբ-խումբ ու մեկ-մեկ փախչում դեպի Արխիպովկայի տները ու, հանդիպելով կազակական հետևազորի կրակին,— իսկ այդ հետևազորը ծավալում էր հետապնդումը Ջիրի հոսանքով դեպի վեր,— նորից վազում են դեպի ճանապարհը։ Կարմիրբանակայինների միայն մի աննշան մասին հաջողվեց անցնել Կլիմովկա։

Բլուրի վրա սկսվեց թրատումը, որ սարսափելի էր իր լռությամբ։ Ռյաբչիկովի հարյուրյակները շուռ եկան Կարգինսկու կողմը ու կարմիրբանակայիններին ետ քշեցին, ինչպես քամին՝ տերևները։ Զաբուրոնոու կամրջի կողքին մի երեսուն հոգի կարմիրբանակայիններ, տեսնելով, որ շրջապատված են ու ելք չկա, սկսեցին կրակելով պաշտպանվել։ Նրանք ունեին հաստոցավոր մի գնդացիր, ժապավենների ճեծ պաշար։ Հազիվ էր այգիներից երևում ապստամբների հետևազորը, երբ գնդացիրը սկսում էր աշխատել տենդային արագությամբ, և կազակներն ընկնում էին, սողսող անցնում չարդախների ու բակերի քարաշեն ցանկապատերի տակ։ Բլուրից երևում էր, թե ինչպես կազակները Կարգինսկայայի միջով վազեվազ քարշ էին տալիս իրենց գնդացիրը։ Արխիպովկայի կողմի ծայրամասի տներից մեկի մոտ նրանք դանդաղեցրին ընթացքը, հետո ներս վազեցին բակը։ Շուտով այդ բակի ամբարի կտուրից աշխույժ տկտկոց լսվեց։ Հեռադիտակը ուղղելով այնտեղ, Գրիգորին տեսավ նաև գնդացրորդներին։ Մեկը պառկել էր կտուրի վրա, ոտները

տարածած, շալվարի ծայրերը սպիտակ գուլպաների մեջ դըրած, վահանի տակ կուչ եկած. երկրորդը բարձրանում էր սանդուղքով, գնդացրային ժապավենով փաթաթված։ Հրետանավորները որոշեցին օգնության հասնել հետևազորին։ Շրապնելը խփեց կարմիրների դիմադրող խմբի կենտրոնացման կետին։ Վերջին, չարդուփշուր անող արկը պայթեց հեռվում, ստանիցայից դուրս։

Քառորդ ժամից հետո Զաբուրուննու մոտ կարմիրների գնդացիրը հանկարծակի լռեց, ու իսկույն թնդաց կարճատև «ուռա»-ն։ Ուռենիների մերկ բների արանքներում երևացին հեծյալ կազակների կերպարանքները։

Ամեն ինչ վերջացած էր։

Գրիգորիի հրամանով Կարգինսկայայի և Արխիպովկայի բնակիչները կեռերով ու կարթաձողերով քարշ տվին հարյուր քառասունյոթ թրատված կարմիրբանակայիններին ու լցրին մի փոսի մեջ, Զաբուրուննու մոտ ու ծածկեցին հողի բարակ շերտով։ Ոյոբչիկովը գրավեց փամփշտի վեց երկանիվ սայլակ, ձիերով ու փամփուշտներով հանդերձ, ու գնդացրի մի սայլակ՝ առանց փականքի գնդացրով։ Կլիմովկայում վերցրեց ռազմական գույքով բեռնված քառասուներկու սայլ։ Կազակներից սպանվեց չորս և վիրավորվեց տասնհինգ մարդ։

Կռվից հետո Կարգինսկայայում մի շաբաթ անդորրություն էր տիրում։ Հակառակորդը հարձակումը փոխադրեց ապստամբների 2-րդ դիվիզիայի վրա ու շուտով, նրան նեղելով, դրավեց Միգուլինսկայա ստանիցայի մի շարք խուտորները,— Ալեքսեևսկին, Ջերնիցկայա մեծ գյուղը, ու մոտեցավ Վերխնե-Չիրսկի խուտորին։

Այնտեղից ամեն օր առավոտյան արշալույսին թնդանոթային որոտմունք էր լսվում, բայց մարտերի ընթացքի վերաբերյալ հաղորդագրությունները մեծ ուշացումով էին ստացվում և պարզ պատկերացում չէին տալիս 2-րդ դիվիզիայի ռազմաճակատի դրության մասին։

Այդ օրերում Գրիգորին սկսեց խմել՝ փորձելով այդ կերպ վանել սև մտքերը, խլացնել գիտակցությունը, չմտածել այն մասին, ինչ որ տեղի էր ունենում շուրջը և ինչի ականավոր մասնակիցն էր նա։ Եթե ապստամբները ցորենի հսկայական

պաշարներով հանդերձ ալյուրի սուր կարիք էին զգում (աղացները չէին հասցնում բանակի համար կատարվող իրենց աշխատանքը), ապա արաղի պակասություն չկար։ Հեղեղի պես հոսում էր տնային արտադրության արաղը։ Դոնի մյուս կողմում Դուդարևսկի կազակների մի հարյուրյակ հեծյալ շարքով, բոլորովին հարբած վիճակում ճակատից գրոհ տվեց գնդացիրների վրա և կիսով չափ ոչնչացվեց։ Հարբած վիճակում դիրքերը դուրս գալու դեպքերը սովորական երևույթ էին դարձել։ Գրիգորիին ծառայակամորեն արաղ էին բերում։ Արաղ ձեռք բերելու մեջ առանձնապես աչքի էր ընկնում Պրոխոր Զիկովը։ Կարգինսկու ճակատամարտից հետո, Գրիգորիի խնդրանքով, նա դույլանոց երեք սափորով արաղ բերեց, հավաքեց երգիչներին, ու Գրիգորին զգալով ազատ լինելու իրականությունից ու մտորումներից կտրվելու բերկրանքը, մինչև առավոտ խմեց կազակների հետ։ Առավոտյան խումար ընկավ, չափազանց շատ խմեց, ու իրիկնադեմին նորից հարկավոր եղան երգիչները, ձայների ուրախ դժժոցը, մարդկային զվարճությունները. պարը,— այն ամենը, ինչ որ իսկական ուրախության պատրանք էր ստեղծում ու սքողում զգաստ, անողոք իրականությունը։

Հետո էլ հարբեցողության պահանջը կարճ ժամանակվա ընթացքում սովորական բան դարձավ։ Առավոտը սեղան նստելով, Գրիգորին արդեն օղի կուլ տալու անհաղթահարելի ցանկություն էր զգում։ Նա շատ էր խմում, բայց չափը չէր անցկացնում, միշտ էլ ոտների վրա պինդ էր կանգնում։ Նույնիսկ առավոտյան դեմ, երբ մնացածները սրտերը թափելով, քնած էին լինում սեղանի շուրջը և հատակի վրա, շինելներով ու տապճակներով ծածկված,— նա զգաստ տեսք էր ունենում, միայն ավելի շատ էր գունատվում, աչքերը մռայլվում էին, ձեռներով սեղմում էր գլուխը՝ խուճուճ քյաքուլը կախած։

Չորս օրվա անընդհատ խրախճանքների ընթացքում նա զգալիորեն կորացավ, դեմքը ուռավ. աչքերի տակ կապուտակեցին պարկանման ծալերը, նայվածքում ավելի և ավելի հաճախ էր փայլում անմիտ դաժանության կայծը։

Հինգերորդ օրը Պրոխոր Զիկովը բազմախոսությամբ ժպիտով առաջարկեց.

— Գնա՞նք Լիխովիդով, մի լավ կնկա մոտ։ Հը՞, ուզո՞ւմ ես։ Միայն թե դու, Գրիգորի Պանտելևիչ, ձեռքիցդ բաց չթողնես։ Քաղցր կնիկ է, ոնց որ ձմերուկ։ Թեև ես նրան չեմ փորձել, ամա գիտեմ։ Միայն թե խլշկոտող է անիծվածը, գիժ է։ Մի անգամից բան չի դուրս գա, չի թողնում, որ գուրգուրես։ Ամա այնպիսի արաղ է քաշում, որ դրանից ավելի լավը չես գտնի։ Առաջին արաղ քաշողն է ամբողջ Ջիրի վրա։ Նրա մարդը փախել է Դոնեցի մյուս կողմը,— որպես թե ի միջի այլոց խոսքը վերջացրեց Պրոխորը։

Երեկոյան մեկնեցին Լիխովիդով։ Գրիգորիին ուղեկցում էին Ռյաբչիկովը, Խարլամպի Երմակովը, թևը կտրած Ալյոշկա Շամիլը և չորրորդ դիվիզիայի հրամանատար Կոնդրատ Մեդվեդևը, որ եկել էր իր ճակատամասից։ Պրոխոր Զիկովը առջևից էր գնում։ Խուտորում նա դանդաղեցրեց ձիու վազքը, անցավ քայլքի, շուռ եկավ մի նրբանց, բացեց մի կալի դարպասը։ Գրիգորին ձին քշեց նրա ետևից, Պրոխորի ձին ցատկեց դարպասի մոտ կուտակված, կիսահալված ձյան վրայից, առջևի ոտներով թաղվեց ձյան մեջ ու, փնչալով, շրջվեց, անցավ ձնակույտի վրայով, որ ծածկել էր դարպասը ու ցանկապատը՝ մինչև դրա կատարը։ Ռյաբչիկովը իջավ ձիուց և տարավ սանձից բռնած։ Գրիգորին Պրոխորի հետ հինգ բոպե ձիով գնաց ծղնոտի ու խոտի դեզերի կողքից, հետո բալենիների մերկ այգու միջով, ուր լսվում էր սառույցի, ասես ապակու ջրնգոցը։ Երկնքում, կապտությամբ լցված, թեք կախվել էր նորալուսնի ոսկե թասը, երերվում էին աստղերը, տիրում էր թովիչ անդորրություն, ու շների հեռավոր հաչոցը և ձիերի սմբակների քստքստոցը չխախտելով այդ անդորրությունը, միայն ընդգծում էին այն։ Բալենիների խիտ ծառուտի ու խնձորենիների լայնատերև ճյուղերի միջից դեղնափայլեց լույսը, աստղաշող երկնքի ֆոնի վրա պարզ երևաց եղեգնով ծածկված մի մեծ խրճիթի ուրվապատկերը։ Պրոխորը, թամքից կռանալով, ծառայակամությամբ բաց արեց բակի դռնակը։ Մուտքի սանդուղքի մոտ, սառած լճակի մեջ երերվում էր արտացոլված լուսինը։ Գրիգորիի ձին սմբակով ջարդեց լճակի եզրի սառույցը ու կանգնեց, միանգամից շունչ առավ։ Գրիգորին թռավ ձիուց, սանձը կապեց բազրիքին, մտավ խավար հաշտը։ Ետևից Ռյաբ-

չիկովն ու կազակները, իջնելով ձիերից, խոսում էին, ցածրաձայն երգում։

Գրիգորին շոշափելով գտավ դռան բռնակը, ներս մտավ ընդարձակ խոհանոցը։ Ջահել, ցածրահասակ, սակայն կաքավի պես բարեկազմ, թխադեմ ու սև, ներկած հոնքերով մի կազակուհի, մեջքը վառարանին դարձրած, գուլպա էր գործում։ Վառարանի վրա թևերը տարածած քնել էր բաց շիկահեր, մոտ ինը տարեկան մի աղջիկ։

Գրիգորին առանց հանվելու նստեց սեղանի մոտ։

— Արաղ կա՞։

— Բա բարևել հարկավոր չի՞,— հարցրեց տանտիրուհին առանց Գրիգորիին նայելու և շարունակելով արագ բանեցնել գործելու ճաղերը։

— Բարև, եթե ուզում ես։ Արաղ կա՞։

Կինը բարձրացրեց արտևանունքները, կլոր, շագանակագույն աչքերով ժպտաց Գրիգորիին՝ ականջ դնելով հաշտից լսվող խոսակցության ու քայլերի դոփյունին։

— Արաղ կա։ Իսկ դուք, գիշերելու եկածներդ շա՞տ եք։

— Շատ ենք։ Ամբողջ դիվիզիան...

Ռյաբչիկովը շեմքից ներս մտավ պզզապարելով, թուրը քարշ տալով, փափախը խփելով սրունքներին։ Դռան մոտ խմբվեցին կազակները. նրանցից մեկը փայտե դափով հրաշալիորեն պարեղանակ էր նվագում։

Շինելների մի ամբողջ կույտ գցեցին մահճակալի վրա, զենքերը դրին նստարաններին։ Պրոխորը ջանադրությամբ օգնում էր տանտիրուհուն՝ սեղան գցելու։ Կոնատ Ալյոշկա Շամիլը գնաց մառան, կաղամբի թթու բերելու, վերադառնալիս սայթաքեց սանդուղքից, չեքմենի փեշով բերեց ջարդված ափսեի կտորտանքները և մի կույտ թաց կաղամբ։

Մինչև կեսգիշեր խմեցին երկու դույլ տնական արաղ, անհաշիվ կաղամբ կերան ու որոշեցին ոչխար մորթել։ Պրոխորը փարախում խարխափելով բռնեց մի թոխլի, իսկ Խարլամպի Երմակովը,— նույնպես ճարտար մի թրամարտիկ,— թրով կտրեց թոխլու գլուխը և հենց չարդախի տակ քերթեց կաշին ու մաքրեց փորոտիքը։ Տանտիրուհին վառեց վառարանը, դույլանոց չուգունով միսը դրեց եփելու։

Նորից դափով պարեղանակ նվագեցին, ու Ռյաբչիկովը

թռավ՝ շուռումուռ անելով ոտները, ձեռները պինդ-պինդ շրմփացնելով սապոգների ճիտքերին, երգելով իր սուր, բայց հաճելի տենորով.

Ա՛յ, մենք հիմի պիտի խմենք, քեֆ անենք,
Երբ մալ չկա, որ գոմիցը դուրս հանենք...

— Ուզում եմ քե՛ֆ անել,— մռնչում էր Երմակովը ու շարունակ առիթ էր փնտրում թրով փորձելու պատուհանների շրջանակների ամրությունը։

Գրիգորին, որ սիրում էր Երմակովին նրա բացառիկ քաջության և կազակական խիզախության համար, սաստում էր նրան՝ պղնձե բաժակը խփելով սեղանին.

— Խարլամպի, գժություն մի՛ անի։

Խարլամպին հնազանդությամբ թուրը գցում էր պատյանի մեջ, բաժակով ագահությամբ կոնծում արաղը։

— Այս տեսակ քեֆից հետո մեռնելն էլ սարսափելի չէ,— ասաց Ալյոշկա Շամիլը՝ նստելով Գրիգորիի մոտ։— Գրիգորի Պանտելևիչ, դու մեր պարծանքն ես, քեզանով է միայն, որ մենք ապրում ենք աշխարհքում։ Եկ մի անգամ էլ չխկացնենք բաժակներս... Պրոխո՛ր, արա՛ղ։

Թամքերը շհանած ձիերը կանգնած էին դեզի մոտ և ուզածների չափ ուտում էին խոտը։ Մարդիկ հերթով դուրս էին գնում նրանց նայելու։

Միայն լուսաբացից քիչ առաջ Գրիգորին զգաց, որ հարբել է։ Նա ասես հեռվից էր լսում ուրիշների խոսքերը, ծանր պտտում աչքերի արյունամած սպիտակուցները և կամքի հսկայական լարումով զսպում դիտակցությունը։

— Էլի մեր գլխին ոսկե ուսադրավորներն են կանգնած, իշխանությունը իրենց ձեռքն են վերցրել,— բղավեց Երմակովը՝ գրկելով Գրիգորիին։

— Ինչ ուսադիրներ,— ետ մղելով Երմակովի ձեռները՝ հարցրեց Գրիգորին։

— Վեշկիում։ Դու չգիտե՞ս, ինչ է։ Կովկասցի մի կնյազ է նստել։ Գնդապետ է... Կթրատեմ, Մելեխով։ Կմեռնեմ քո ոտների տակ, մի՛ թող, որ մենք կորչենք։ Կազակները հուզվում են։ Տա՛ր մեզ Վեշկի, ամեն բան ջարդ ու փշուր կանենք, մոխիր կդարձնենք։ Իլյուշկա Կուդինովին, գնդապետին—բոլորին կոչնչացնենք։ Հերիք է նրանք մեզ դաղեն։ Արի կռվենք թե՛ կարմիրների և թե՛ կադետների դեմ։ Ա՛յ թե ինչ եմ ուզում։

— Գնդապետին կսպանենք։ Նա դիտմամբ է մնացել... Խարլա՛մպի, եկ սովետական իշխանության ոտներն ընկնենք. մեղավոր ենք մենք...— Գրիգորին մի բոպե զգաստանալով, ծուռ ժպտաց.— Ես հանաք եմ անում, Խարլամպի, խմի՛ր։

— Ինչ հանաք, Մելեխով։ Դու հանաք մի՛ անի, այստեղ լուրջ գործ կա,— խիստ տոնով խոսեց Մեդվեդևը.— Մենք ուզում ենք թափ տալ իշխանությունը։ Բոլորին էլ կփոխենք ու քեզ կնստեցնենք։ Ես խոսել եմ կազակների հետ, նրանք համաձայն են։ Կուդինովին ու նրա թիկնապահներին սիրով կասենք՝ «Հեռացեք իշխանությունից։ Դուք մեզ պետք չեք»։ Ինչ-որ բան,— լավ, իսկ եթե ոչ, գունդը կտանենք Վեշկիի վրա ու նրանց գրողի ծոցը կուղարկենք։

— Էլ չխոսե՛լ դրա մասին,— կատաղած բղավեց Գրիգորին։

Մեդվեդևը թոթվեց ուսերը, սեղանից ետ քաշվեց ու դադարեցրեց խմելը։ Իսկ անկյունում, փրչոտված գլուխը նըստարանից կախած, ձեռքը կեղտոտ հատակին քսմսելով, Ռյաբչիկովը աղիողորմ երգում էր.

Դո՛ւ, ա՛յ տղա, վախլուկ տղա,
Օ՛յ, դու թեքիր գլուխդ, էլի,
Թեքիր, էլի՛, քո գլուխը...
Թեքիր էլի՛, մեկ աջ կողմը,
Մեկ աջ կողմը, մեկ ձախ կողմը,
Թեքի՛ր դոշիս, ճերմակ դոշիս։

Եվ մի խուլ, բամբ ձայնը, որ կանացիորեն հուզիչ ու լալագին էր, խառնելով Ռյաբչիկովի բարակ ձայնին, Ալյոշկա Շամիլը երգում էր.

Կրծքիս վրա երբ պառկած էր,
Ծանր-ծանր թառանչում էր...
Ծանր-ծանր թառանչում էր, վերջը ասավ՝
«Առաջվա սեր, բարով մնա,
Առաջվա սեր, սև սատանա...»

Դրսում կապույտին էր տալիս արշալույսը, երբ տանտիրուհին Գրիգորիին տարավ օթախը։

— Հերիք է խմացնեք սրան։ Ձեռ քաշի, սարսաղ, չե՞ս տեսնում թե ոնց է հալից ընկել,— ասաց տանտիրուհին՝ դժվարությամբ ոտքի վրա պահելով Գրիգորիին, մյուս ձեռքով ետ հրելով Երմակովին, որը գնում էր նրանց ետևից, արաղով լի բաժակը ձեռքին։

— Քնեցնելո՞ւ ես, ինչ է,— աչքով էր անում Երմակովը, ճոճվում ու բաժակից թափթփում արաղը։

— Հա՛, էլի՛, քնեցնելու։

— Դու հիմի դրա հետ մի պառկի, բան չի դուրս գա...

— Քո գործը չի։ Կեսրա՞րս ես, ինչ է։

— Գդալից բռնի,— ընկնելով անզուսպ ծիծաղի մոլուցքից, հռհռաց Երմակովը։

— Ի-ի՛-ի՛հ, անամոթ, գրողի տարած։ Աչքերը կարմրացրել է ու ինչե՛ր է դուրս տալի։

Տանտիրուհին Գրիգորիին տարավ օթախը, պառկեցրեց մահճակալի վրա, աղջամուղջում գարշանքով ու կարեկցությամբ զննեց նրա դեմքը, որ մեռելային գունատությամբ էր պատած, աչքերը բաց էին ու չէին տեսնում։

— Գուցե խոշա՞ք կխմես։

— Բեր։

Տանտիրուհին բալի մի բաժակ սառը խոշաք բերեց ու, նստելով մահճակալին, այնքան տնտղեց ու շոյեց Գրիգորիի խճճված մազերը, մինչև որ վերջինս քնեց։ Տանտիրուհին իր համար անկողին գցեց վառարանի վրա, աղջկա կողքին, բայց Շամիլը չթողեց քնել։ Գլուխը արմունկին գցած, Շամիլը խռխռացնում էր վախեցած ձիու նման, հետո հանկարծ արթնանում էր ասես ցնցումից ու խռպոտ մոմռում էր.

...Ծառայու-թյո՛ւ-նից տուն դարձա-ա՛նք,
Ուսադիրնե-րը կըրծ-քերիս,
Ու խաչերը—ուսերիս...

Գլուխը գցում էր թևերի վրա, իսկ մի քանի րոպեից հետո, խլշկոտած նայելով շուրջը, դարձյալ սկսում էր.

Ծառայությունից տուն դարձա-անք...

XLII

Առավոտյան արթնանալով, Գրիգորին վերհիշեց Երմակովի ու Մեդվեդևի հետ ունեցած խոսակցությունը։ Գիշերը նա այնքան էլ հարբած չէր ու առանց մի առանձին լարվածության հիշողության մեջ վերականգնեց իշխանությունը փոխելու վերաբերյալ խոսակցությունները։ Նրա համար պարզ էր, որ Լիխովիդովում կերուխումը կազմակերպվել էր ակնհայտ նպատակով,— իրեն դրդել հեղաշրջման. Կուդինովի դեմ, որը բացահայտ կերպով ցանկություն էր հայտնում գնալ դեպի Դոնեց ու միանալ Դոնի բանակին, ինտրիգներ էին լարում ձախ տրամադրված կազակները, որոնք գաղտուկ երազում էին վերջնականապես անջատվել Դոնից և իրենց մոտ կազմել սովետական իշխանության պես ինչ-որ մի բան առանց կոմունիստների։ Գրիգորիին էլ ուզում էին իրենց կողմը քաշել, չհասկանալով ապստամբական լագերի ներսում երկպառակության ամբողջ կործանարարությունը, երբ ամեն րոպե կարմիր ճակատը Դոնեցի մոտ քայքայվելու դեպքում կարող էր առանց դժվարության նրանց ճզմել իրենց «անմիաբանության» հետ միասին։ «Ներեխայական խաղ է»,— մտքում ասաց Գրիգորին ու թեթև վեր կացավ մահճակալից։ Հագնվելով, նա արթնացրեց Երմակովին ու Մեդվեդևին, նրանց կանչեց օթախը, պինդ փակեց դուռը։

— Ա՛յ թե ինչ, տղերք. գլխներիցդ դեն գցեք երեկվա խոսակցությունը ու մի՛ փսփսացեք, թե չէ ձեր բանը վատ կլինի։ Բանն այն չէ, թե ով է հրամանատարը։ Բանը Կուդինովը չէ, այլ այն է, որ մենք օղակի մեջ ենք, մենք ոնց որ թե տակառ լինենք հեցերի մեջ։ Վաղը-մյուս օրը հեցերը մեզ կճզմեն։ Գնդերը պետք է տանել ոչ թե Վեշկիի, այլ Միգուլինի, Կրասնակուտսկու վրա,— նշանակալից կերպով շեշտեց Գրիգորին՝ աչքերը չկտրելով Մեդվեդևի մռայլ, անտարբեր դեմքից.— Այդպես ուրեմն, Կոնդրատ, չպետք է ջուրը պղտորել։ Դուք լավ մտածեցեք ու հասկացեք, որ եթե սկսենք խոտանել հրամանատարությունը ու ինչ-որ հեղաշրջումներ սարքել, կկործանվենք։ Հարկավոր է միանալ կամ սպիտակ-

ներին, կամ կարմիրներին։ Մեջտեղում չի կարելի մնալ,— կճզմեն։

— Խոսակցությունը մեր մեջ մնա, հա՛-ա,— երեսը շուռ տալով՝ խնդրեց Երմակովը։

— Մեզ հետ է՞լ կմեռնի, բայց պայմանով, որ դուք այլևս չխառնակեք կազակներին։ Իսկ Կուդինովն ու իր խորհրդականներն ի՞նչ են որ։ Նրանք լրիվ իշխանություն չունեն. ես ոնց որ կարող եմ, այնպես էլ կառավարում եմ իմ դիվիզիան։ Վատ են նրանք, ի՞նչ խոսք ու մեզ էլի կմիացնեն կադետներին, ոնց որ մի բաժակ ջուր տաս։ Բայց ախր ո՞ւր պիտի գնանք։ Մեր ճամփեքը բոլոր կողմերից կտրված են։

— Այդպես է, էլի՛...— դժվարությամբ համաձայնվեց Մեդվեդևը և խոսակցության ընթացքում առաջին անգամ արջի իր փոքրիկ, բարկությամբ լեցուն աչիկները բարձրացրեց Գրիգորիի վրա։

Դրանից հետո Գրիգորին էլի երկու օր անընդհատ խմում էր Կարգինսկուն մոտիկ խուտորներում՝ կյանքը ֆոիկի նման պտտեցնելով հարբեցողության մոլուցքում։ Նույնիսկ նրա թամքի քրտնաքաշից էլ օղու հոտ էր գալիս։ Կնանիքը և աղջկական թարմությունը կորցրած աղջիկները Գրիգորիի ձեռքն էին ընկնում՝ նրա հետ վայելելով կարճատև սերը։ Բայց առավոտյան դեմ, հերթական վայելքի ջերմությամբ լիովին հագեցած, Գրիգորին զգաստ ու անտարբեր մտածում էր ասես կողմնակի մարդու մասին՝ «Ապրեցի ու ամեն ինչ փորձեցի անցած ժամանակ։ Շատ կնանիք ու աղջիկներ սիրեցի, լավ ձիերով... է-է-հե՛... ոտնատակ արեցի տափաստանը, ուրախանում էի երեխաներովս ու սպանում մարդկանց, ինքս մահվան դեմ էի գնում, աչքի էի ընկնում։ Կյանքը էլ ի՞նչ նորություն ցույց կտա ինձ. նոր բան չկա. կարելի է և մեռնել։ Սարսափելի չէ։ Կարելի է և պատերազմի խաղ անել և առանց ռիսկի, ոնց որ հարուստը։ Շատ բան չեմ տանուլ տա»։

Կապույտ, արևաշող օրվա պես սահում էր մանկությունը անկապ հուշերում,— սարյակները քարակույտերում, իր բոբիկ ոտները տաք փոշու մեջ, վեհորեն սահող Դոնը իր ջրերում անգրագարձած կանաչ անտառով, ընկերների մանկական դեմքերը, ջահել, վայելչակազմ մայրը... Գրիգորին ձեռքով ծածկում էր աչքերը ու նրա մտքի հայացքի առջևից անցնում էին ծանոթ դեմքերը, իրադարձությունները,— երբեմն շատ մանր, բայց հայտնի չէ ինչու հիշողության մեջ անջնջելիորեն տպավորված,— հիշողության մեջ հնչում էին կորուսյալ մարդկանց մոռացված ձայները, խոսակցությունների հատվածները, մեկի կամ մյուսի ծիծաղը։ Հիշողությունը հուշերի ճառագայթը ուղղում էր վաղուց մոռացված, մի ժամանակ տեսած դաշտապատկերի վրա, ու հանկարծ Գրիգորիի առջև կուրացուցիչ պայծառությամբ պատկերանում էին լայնարձակ տափաստանը, ամառային ճանապարհը, սայլը, դրա առջևի մասում նստած հայրը, եզները, հնձած հացի ոսկեվուն խոզանը արտում, սերմնաքաղների սև ցրոնքը ճանապարհի վրա... Գրիգորին ուռկանացանցի պես խճճված մտքերում շուռումուռ էր անում անցածը, անդարձ հեռացած այդ կյանքում հանդիպում էր Ակսինյային, մտածում. «Սիրելի, անմոռանալի»,— ու զզվանքով դեն էր քաշվում կողքին պառկած կնոջից, հառաչում էր, անհամբերությամբ սպասում լուսաբացին, ու հենց որ արևը սկսում էր կարմրավառ ցոլքերով, ոսկե բաֆթայով նախշել արևելքը,— վեր էր կենում, լվացվում, շտապում դեպի ձին։

XLIII

Ամեն ինչ կլանող տափաստանային հրդեհի նման մոլեգնում էր ապստամբությունը։ Ռազմաճակատների պողպատե օղակը սեղմվում էր անհնազանդ ստանիցաների շուրջ։ Դատապարտվածության ուրվականը դրոշմվել էր մարդկանց վրա։ Կազակները խաղում էին իրենց կյանքի հետ ինչպես արծվախաղ խաղալիս և քիչ չէր այն մարդկանց թիվը, որոնց ոչ թե «արծիվը», այլ «գիրն» էր ընկնում։ Ջահելները բուռն սիրով էին տարվում, ավելի հասակավորները տրաքվելու չափ արաղ էին խմում, փողով ու փամփուշտներով թուղթ խաղում (ըստ որում փամփուշտները թանկից էլ թանկ էին գնահատվում), մեկնում էին տուն, որ գեթ մի բոպե, խորթացած հրացանը դեմ անելով պատին, վերցնեին

կացինը կամ ռանդան, որ հանգստացնեին սրտերը,— հոտավետ կարմիր ուռով նորոգեին ցանկապատը կամ տափանը և սայլը պատրաստեին գարնանային աշխատանքի համար։ Ու շատերը հանգիստ ուտելով ու խմելով, հարբած վերադառնում էին զորամաս և զգաստանալով, չարանալով «բնավեր կյանքի վրա, հետևակ շարքով, ճակատ առ ճակատ գրոհ էին տալիս գնդացիրների վրա, կամ թե չէ, կատաղությամբ բռնկված, վայրագորեն սլանում էին գիշերային հարձակում գործելու, չզգալով, որ ձիերի վրա են, ու գերիներ վերցնելով, դաժանորեն, նախնադարյան վայրենությամբ ծանակում էին նրանց, սպանում թրերով, խնայելով փամփուշտները։

Իսկ այն տարվա գարունը շողշողում էր չտեսնված պերճանքներով։ Ապրիլին օրերը պարզ էին, ասես ապակիացած, եղանակը հիանալի էր։ Երկնքի անհաս, կապույտ անհունում ճախրում, դեպի հյուսիս էին սլանում վայրի սագերի, պղնձաձայն կռունկների երամները՝ անցնելով ամպերից։ Տափաստանի դալկականաչ ծածկոցի վրա, լճակների կողքին շաղ տրված մարգարտի նման կայծկլտում էին քջուջ անելու համար նստած կարապները։ Դոնի կողքին գետառները հեծկլտում էին թռչունների կռնչյունից ու աղմուկից։ Հեղեղված մարգագետիններում, թմբերի ու ջրից դուրս մնացած գետնի վրա ձայն ձայնի էին տալիս սագերը՝ պատրաստվելով հեռանալու, ուռուտներում անլռելի ֆշշում էին սիրային տարփանքով բռնված արու բադերը։ Ուռենիների վրա կանաչին էին տալիս կատվիկները, ուռճանում էին բարդու մածուցիկ, բուրավետ բողբոջները։ Անպատմելի հրապույրով էր լցվել տափաստանը, որը մի քիչ կանաչել էր, պարուրվել ձյունից ազատված սևահողի հնադարյան ու մատղաշ խոտաբույսերի հավերժորեն թարմ բուրմունքով։

Ապստամբական պատերազմը հաճելի էր նրանով, որ յուրաքանչյուր մարտիկի կողքին գտնվում էր հայրենի խրճիթը։ Երբ ձանձրացնում էր ուղեկալ ու գաղոնք գնալը, երբ ձանձրացնում էր հեծյալ պարեկի կազմում բլուրից բլուր և լեռնանցքից լեռնանցք թրևելը, կազակը թույլտվություն էր վերցնում հարյուրապետից, գնում էր տուն, իսկ իր փոխարեն շարային ձիով ուղարկում էր իր ալևոր պապին կամ

անչափահաս որդուն։ Հարյուրյակները միշտ էլ ունենում էին մարտիկների լրիվ քանակ և միշտ հոսուն կազմ։ Բայց ոմանք էլ այսպիսի խելք էին բանեցնում. մայրամուտից առաջ մեկնում էին հարյուրյակի գրաված վայրից, քառատրոփով քշում ձին, ու անցնելով երեսուն, նույնիսկ քառասուն վերստ, վերջալույսը մարելու պահին արդեն տանն էին լինում։ Գիշերը քնելով իրենց կանանց կամ սիրուհիների հետ, երկրորդ աքլորականչից հետո թամբում էին ձիերը, ու դեռ համաստեղությունները չմարած, նորից լինում էին հարյուրյակում։

Շատ մասխարա մարդիկ էլ ուրախությունից չէին կըշտանում, կռվելով հայրենի ցանկապատերի մոտ։ «էլ մեռնե՞լս որն է»,— կատակում էին կազակները, որոնք հաճախակի այցելում էին իրենց կանանց։

Հրամանատարությունը առանձնապես վախենում էր դաշտային աշխատանքների սկզբում սպասվելիք դասալքությունից։ Կուդինովը հատուկ շրջագայություն էր կատարում զորամասերում և իր համար անսովոր հաստատակամությամբ հայտարարում.

— Ավելի լավ է մեր դաշտերում քամիները արածեն, ավելի լավ է մի հատիկ էլ չցցենք հողի մեջ, իսկ կազակներին զորամասերից բաց թողնել չեմ թույլ տալի։ Ինքնակամ գնացողներին կքոթակենք ու կգնդակահարենք։

XLIV

Գրիգորիին վիճակվեց Կլիմովկայի մոտ եղած մի կռվի էլ մասնակցել։ Կեսօրին ծայրամասերի տների մոտ փոխհրաձգություն սկսվեց։ Մի քիչ հետո կարմիրբանակայինների շղթաները մտան Կլիմովկա։ Ձախ թևում սև բաճկոններով համաչափ առաջանում էին նավաստիները—Բալթյան տորմիղի մի ինչ-որ նավի անձնակազմը։ Անընդհատ գրոհով նրանք խուտորից դուրս քշեցին Կարգինի ապստամբական գնդի երկու հարյուրյակ, ձորակի միջով նրանց ետ մղեցին դեպի Վասիլևսկի։

Երբ գերակշռությունը սկսել էր թեքվել կարմիրբանակա-

յին զորամասերի կողմը, Գրիգորին, որ բլրակից դիտում էր մարտը, ձեռնոցով նշան արավ Պրոխոր Զիկովին, որը նրա ձիու հետ կանգնել էր փամփուշտների սայլակի մոտ, վազվազ թռավ ձիու վրա։ Սրարշավ շրջանցելով ձորակը, արագ վարգով սլացավ Գուսինկայի վայրէջքի ուղղությամբ։ Այնտեղ,— նա գիտեր,— գտնվում էր 2-րդ գնդի ռեզերվային մի հեծյալ հարյուրյակը՝ պուրակներով քողարկված։ Այգիների ու ցախե ցանկապատերի միջով գնաց հարյուրյակի գրաված վայրը։ Հեռվից տեսնելով ձիերից իջած կազակներին ու ձիակապարանի մոտ եղած ձիերը, հանեց թուրը, բղավեց։

— Զի՛ նստել։

Երկու հարյուր ձիավորները մի րոպեում նստեցին ձիերը։ Հարյուրյակի հրամանատարը սլացավ Գրիգորիին ընդառաջ։

— Կռվի՞ ենք ելնում։

— Վաղուց էր պետք, քնա՛ծ ես.— Գրիգորիի աչքերը կայծկլտեցին։

Զին ետ տալով, նա իջավ ու թարսի պես ուշացավ՝ պինդ ձգելով փորքաշը (քրտնակալած ու տաքացած ձին վեր-վեր էր թռչում, չէր թողնում, որ նա պրկեր թամքի միջով ձգված փորքաշը, ցասկոտում էր, խռխռացնում ու, բարկությամբ ատամները բացած, փորձում էր առջևից հրել Գրիգորիին)։ Հուսալիորեն թամքը ամրացնելով, Գրիգորին ոտը խոթեց ասպանդակի մեջ. առանց նայելու հարյուրյակի շփոթված հրամանատարին, որ ականջ էր դնում սաստկացող հրաձգության, գոչեց.

— Հարյուրյակը ես եմ տանելու։ Մինչև խուտորից դուրս գալը—դասակային շարքերո՞վ, վարգո՞վ։

Խուտորից դենը Գրիգորին հարյուրյակը տարավ ցրիվ շարքով. փորձեց, թե արդյո՞ք թուրը պատյանից հեշտությամբ է դուրս գալիս. երեսուն սաժենի չափ անջատվելով հարյուրյակից, քառատրոփով սլացավ դեպի Կլիմովկա։ Հարավային կողմով Կլիմովկա իջնող բլուրի կատարին մի վայրկյան դանդաղեցրեց ձիու ընթացքը, հայացքով զննեց շրջակայքը։ Խուտորում ձիերով սլանում ու վազում էին նահանջող հեծյալ ու հետիոտն կարմիրբանակայինները, սլանում առաջին կարգի գումակի երկանիվ սայլակներն ու բրիչկաները։ Գրիգորին կիսով չափ դարձավ դեպի հարյուրյակը.

— Թրերը հանե՛լ, գրոհե՛լ, եղբայրնե՛ր, իմ ետևի՛ց.— Թեթև դուրս քաշեց թուրը, առաջինը գոռաց՝ ուռա-ա՛-ա...— ու ամբողջ մարմնի մեջ զգալով սարսուռ և ծանոթ թեթևությունը, բաց թողեց ձիու գլուխը։ Զախ ձեռքի մատների մեջ դողում էր լարի պես պրկված սանձը, գլխից վեր բարձրացրած սուսերը սվսվալով ճեղքում էր հանդիպական քամու հոսանքը։

Գարնանային քամու թևերով քուլա-քուլա բարձրացող, վիթխարի մի ամպ մի րոպե ծածկեց արևը, ու նրա գորշ ստվերը Գրիգորիից առաջ սահելով, առերևույթ դանդաղությամբ սողաց բլուրի վրա։ Գրիգորին հայացքը Կլիմովկայի մոտեցող տներից դարձրեց թուխ, չչորացած գետնով սահող ստվերի վրա, առաջ սլացող բաց դեղնավուն, բերկրառատ լուսաշերտի վրա։ Հանկարծ առաջացավ անբացատրելի ու անգիտակցական մի ցանկություն—հասնել գետնի վրայով վազող լույսին։ Խթանելով ձին, Գրիգորին նրա գլուխը բաց թողեց ու սլացավ ամբողջ թափով,— վրա տալով, մոտեցավ լույսը ստվերից բաժանող հոսուն սահմանին։ Մի քանի վայրկյան կատաղի վազք, և ահա ձիու մեկնված գլուխը շաղված է լուսավառ ճառագայթների խուրձով, ու նրա շիկակարմիր բուրդը հանկարծ բռնկում է պայծառ, կուրացուցիչ փայլով։ Այն պահին, երբ Գրիգորին անցնում էր ամպի ստվերի աննշմար եզրը, նրբանցքից խուլ ճայթեցին կրակոցները։ Քամին շեշտակի բերում էր ձայների պատառիկները, մոտեցնում դրանք և ուժեղացնում։ Էլի մի ինչ-որ անորսալի ակնթարթ,— և Գրիգորին իր ձիու սմբակների թափվող դոփյունի մեջ, գնդակների սվսվոցի և ականջներում վայող քամու մեջ այլևս չէր լսում ետևից եկող հարյուրյակի թփթփոցը։ Նրա լսողությունից ասես ընկավ ձիերի զանգվածի ծանր, հուժկու, չչորացած խոպան գետինը ցնցող ոստյունը,— կարծես սկսեց հեռանալ, լռել։ Այդ միջոցին հանդիպական հրաձգությունը ճարճատեց ինչպես խարույկ, որի մեջ չոր ցախ են գցում, սվսվացին գնդակների երամները։ Գրիգորին շվարած, ահով ետ նայեց։ Շփոթվածությունը և ցասումը ջղաձգություններով այլանդակեցին

նրա դեմքը։ Հարյուրյակը ձիերը շուռ տալով, թողնելով նրան, Գրիգորիին, ետ էր սլանում։ Մոտիկ տեղում հրամանատարը ձիու վրա դես-դեն էր դառնում, անհեթեթ թափահարում թուրը, լալիս էր ու ինչ-որ գոռում կերկերուն, խըռպված ձայնով։ Միայն երկու կազակ էին մոտենում Գրիգորիին, ու մեկ էլ Պրոխոր Զիկովը, քաշելով կարճ սանձը, ձին շուռ տվեց ու քշեց հարյուրյակի հրամանատարի կողմը։ Մնացածները ցրիվ շարքով ետ էին սլանում՝ թրերը պատյանների մեջ դրած, մտրակելով ձիերը։

Լոկ մի վայրկյան Գրիգորին դանդաղեցրեց ձիու վազքը, փորձելով պարզել, թե ինչ կատարվեց ետևում, ինչո՞ւ հարյուրյակը կորուստներ չտալով հանդերձ, անսպասելիորեն փախուստի դիմեց։ Եվ այդ կարճ ակնթարթում գիտակցությունը նրան դրդեց ոչ թե ետ դառնալ, փախչել, այլ առաջ ընթանալ։ Նա տեսավ, որ մի նրբանցքում, իրենից հարյուր սաժեն հեռավորությամբ, ցանկապատից դենը, գնդացրի սայլակի մոտ իրար էին անցնում մի յոթ հոգի կարմիրբանակայիններ։ Նրանք փորձում էին սայլակը շուռ տալ այնպես, որ գնդացրի փողաբերանը ուղղված լիներ իրենց վրա գրոհող կազակների կողմը, բայց ըստ երևույթին նեղլիկ նրբանցքում այդ նրանց չէր հաջողվում. գնդացիրը լռում էր ու ավելի ուշ-ուշ էին ճայթում հրացանների կրակոցները, գընդակների տաք սվսվոցը ավելի քիչ էր դաղում Գրիգորիի ականջները։ Զին առաջ քշելով, Գրիգորին որոշեց մտնել այդ նրբանցքը տապալված ցանկապատի վրայով, որով մի ժամանակ շրջապատված էր եղել պուրակը։ Նա հայացքը կտրեց ցանկապատից, ու ինչ-որ հանկարծակի ու պարզ կերպով, ասես հեռադիտակի միջով արդեն իրեն մոտիկ տեղում տեսավ նավաստիներին, որոնք հապճեպորեն լծից արձակում էին ձիերը, տեսավ նրանց սև, ցեխոտված բաճկոնները անհովար գլխարկները, որոնք պինդ քաշած էին ճակատներին տարօրինակ կլորություն էին տալիս նրանց դեմքերին։ Երկուսը կտրում էին քաշանները, երրորդը գլուխն ուսերի մեջ առած, զբաղված էր գնդացրով, մնացածները հրացաններից կանգնած ու ծնկած կրակում էին Գրիգորիի վրա։ Վրա հասնելով, Գրիգորին տեսնում էր, թե նրանց ձեռներն ինչպես էին բանեցնում հրացանների փակաղակները, ու լսում

էր հատու, դեմառդեմ կրակոցները։ Կրակոցներն այնքան արագ էին հաջորդում միմյանց, հրացանների կոթերն այնքան շուտ-շուտ էին դեմ արվում ու սեղմվում ուսերին, որ քրտնքից ամբողջովին թրջված Գրիգորիին ջերմացրեց բերկրալի մի վստահություն՝ «Կվրիպեն»։

Ցախե ցանկապատը ճքճքաց ձիու սմբակների տակ, մնաց ետևում։ Գրիգորին բարձրացրեց թուրը, կկոցված աչքերով ընտրեց առջևի նավաստուն։ Երկյուղի դարձյալ մի բռնկոց կայծակնաթափ խարկեց նրան. «Կխփեն դեմառդեմ... Զիս—ծառս կլինի... շուռ կգա... կսպանեն...» Արդեն դեմառդեմ երկու կրակոց. «Կենդանի կբռնենք»,— բղավեցին կարծես հեռվից։ Առջևում—բացված ատամներ առնացի, մերկաճակատ մի դեմքի վրա, անհովար գլխարկի թռչկոտող ժապավեններ, բոլորքի խունացած մակագրության դժգույն ոսկին... Ասպանդակների սեղմում, թափ,— ու Գրիգորին զգում է, թե թուրն ինչպես է մածուցիկ խրվում նավաստու փափուկ, տեղի տվող մարմնի մեջ։ Երկրորդը, որ հաստավիզ ու հաղթանդամ էր, կարողացավ գնդակով խոցել Գրիգորիի ձախ ուսի փափուկ տեղը և նույն պահին Պրոխոր Զիկովի թրով շեղակի ճեղքված գլխով ընկավ գետին։ Մոտիկից փակաղակի շրխկոց լսելով, Գրիգորին շուռ եկավ։ Հրացանի փողաբերանի սև աչքը սայլակի ետևից ուղիղ նրա դեմքին էր նայում։ Ուժգնաթափ նետվելով ձախ կողմը, այնպես, որ շարժվեց թամքը ու ճռճվեց խոխոջող, խեղլագարված ձին, նա խույս տվեց մահից գլխավերևից վզզալով թռած գնդակից, ու այն պահին երբ ձին ցատկեց սայլակի առեղի վրայով, նա թրատեց կրակողին, որի ձեռքը այնպես էլ չհասցրեց երկրորդ փամփուշտը փակաղակով մղել հրացանի փողի մեջ։

Անզգալիորեն կարճ մի ակնթարթում (հետո Գրիգորիի գիտակցության մեջ այն մարմնացավ իբրև երկար ժամանակամիջոց) նա թրատեց չորս նավաստի, ու լսելով Պրոխոր Զիկովի բղավոցները, փորձեց ընկնել հինգերորդի ետևից, որ չքացել էր նրբանցքի շրջադարձից դենը։ Բայց հարյուրյակի հրամանատարը, վրա հասնելով, կտրեց նրա առաջը, բռնեց Գրիգորիի ձիու սանձից։

— Ո՞ւր, է՞։ Կսպանեն՝... Այնտեղ, մարագների ետևում նրանց մյուս գնդացիրն է։

Էլի երկու կազակ ու Պրոխորը, իջնելով ձիերից, վազ-վազ մոտեցան Գրիգորիին, զոռով քաշեցին ու իջեցրին ձիուց։ Գրիգորին սկսեց թպրտալ նրանց ձեռքերի մեջ, գոռաց.

— Թողե՛ք, իժե՛ր... Նավաստի-մավաստիներին... Բոլորին... Կթրատե՛մ...

— Գրիգորի Պանտելևիչ, ընկե՛ր Մելեխով,— ախր ուշքի եկեք, է՛,— հորդորում էր Պրոխորը։

— Թողե՛ք, եղբայրնե՛ր,— արդեն ուրիշ, նվազած ձայնով խնդրեց Գրիգորին։

Նրան բաց թողին։ Հարյուրյակի հրամանատարը ՀՀնջալով ասաց Պրոխորին.

— Սրան ձի նստեցրու և տար Գուսինկա. երևում է, որ հիվանդացել է։

Իսկ ինքը քայլեց դեպի իր ձին, հրաման տվեց հարյուրյակին.

— Ձի՛ նստե՛լ...

Բայց Գրիգորին փափախը շպրտեց ձյան վրա, մի փոքր կանգնեց ճոճվելով ու, հանկարծ կոճտացնելով ատամները, սարսափելի հեծկլտաց, դեմքը ծռմռվեց, ու նա սկսեց պոկոտել շինելի կոճակները։ Հարյուրյակի հրամանատարը մի քայլ էլ չէր արել նրա կողմը, երբ Գրիգորին կանգնած տեղում երեսնիվայր, մերկացած կրծքով ընկավ ձյան վրա։ Հեկեկալով, հեծեծանքից ցնցվելով, նա շան պես սկսեց բիրանել ձյունը, որ մնացել էր ցանկապատի տակ։ Հետո, գիտակցության հրեշավոր պայծառացման ինչ-որ րոպեում փորձեց վեր կենալ, բայց չկարողացավ ու, արտասվաթոր, ցավից այլանդակված դեմքը դարձնելով իր շուրջը խմբված կազակներին, տանջալից, օտարոտի հնչող ձայնով գոռաց.

— Ո՛ւմ թրատեցի ես...— Ու կյանքում առաջին անգամ ընկավ ամենածանր ուշագնացության մեջ՝ ճչոցներ արձակելով, փրփրակալած շրթունքների միջից հեծկլտալով.— Եղբայրներ, ինձ ներել չկա... Սպանեցեք, ի սեր աստծու... աստծու մերը... Մեռցրեք ինձ...

Հարյուրյակի հրամանատարը վազելով մոտեցավ Գրիգորիին, նա և դասակների հրամանատարը ընկան Գրիգորիի վրա, կտրեցին թրի փոկը և դաշտային պայուսակը, փակեցին բերանը, ոտները սեղմեցին գետնին։ Բայց Գրիգորին նրանց տակին դեռ երկար թպրտում էր, ծռվում աղեղի նման, ջղաձգաբար շտկած ոտներով փորփրում հատիկավոր ձյունը ու, մրմնջալով, գլուխը խփում սմբակներով փորփրված, պարարտ, սևահողով փայլող գետնին, որի վրա ծնվել ու ապրել էր, ցավ ու կսկիծով հարուստ ու բերկրանքներով աղքատ կյանքից լիաչափ վերցնելով այն ամենը, ինչ որ պատրաստված էր իր համար։

Գետնի վրա լոկ խոտաբույսն է աճում անտարբերությամբ ընդունելով արևն ու վատ եղանակը, սնվելով երկրային կենարար հյութերով, հլու կորանալով մրրիկների կործանարար շնչից։ Հետո էլ սերմը քամուն տալով, մեռնում է նույնպիսի անտարբերությամբ, իր թորշոմած ցողունների շրշյունով ողջունում մահ ճառագայթող աշնանային արևը...

XLV

Մյուս օրը Գրիգորին դիվիզիայի հրամանատարությունը հանձնելով իր գնդերի հրամանատարներից մեկին, Պրոխոր Զիկովի ուղեկցությամբ մեկնեց Վեշենսկայա։

Կարգինսկիից դենը, Ռոգոժկինի լճակում, որ գտնվում է խոր հովտում, խիտ լողում էին հանգստի համար նստած վայրի սագերը։ Պրոխորը մտրակով ցույց տալով լճակի կողմը, քմծիծաղ տվեց.

— Ի՞նչ լավ կլիներ, Գրիգոր Պանտելևիչ, մի հատ վայրի սագ զարկեինք։ Ո՞նց կուտեինք ու արաղ կխմեինք, հա՞-ա։

— Արի մոտ գնանք, ես կփորձեմ զարկել հրացանով։ Մի ժամանակ վատ չէի կրակում։

Նրանք իջան հովիտը։ Պրոխորը ձիերով կանգ առավ մի բլրակի ետևում, իսկ Գրիգորին հանեց շինելը, հրացանի ձգանը դրեց պահպանակին ու սողաց ծանծաղ հեղեղատով, որ ծածկված էր նախորդ տարվա գորշ քոլախոտով։ Նա սողում էր երկար, համարյա առանց գլուխը բարձրացնելու, սողում էր այնպես, ինչպես հետախուզության ժամանակ, դեպի թշնամու գաղոնքը, ինչպես գերմանական ճակատում այն օրերին, երբ Ստոխոդի մոտ բռնեց թե տպանեց գերմա-

նական ժամապահին։ Պաշտպանական գույնի խունացած վերնաշապիկը իր գույնով միախառնվում էր գետնի թուխ-կանաչավուն գույնի հետ. հեղեղատը Գրիգորին քողարկում էր հսկող արու սագի սրատես աչքերից,— այդ սագը կանգնած էր մի ոտի վրա, ջրի մոտ, գարնանային ջրի բերած հողի դարչնագույն թմբին։ Գրիգորին սողեսող մոտեցավ մոտիկից կրակելու, մի քիչ բարձրացավ տեղից։ Հսկող արու սագը դես ու դեն էր շուռ տալիս քարի պես գորշ, օձային կազմվածք ունեցող գլուխը, աչալուրջ նայում էր շուրջը։ Նրանից դենը թուխ-մոխրագույն ծածկոցի նման ջրի վրա ցրիվ նստոտել էին սագերը, մեջեմեջ—վայրի բադերն ու սուլաբադերը։ Լճակից լսվում էր մեղմ կռնչյուն, կռթկռթոց, ջրի ճողփյուն։ «Կարելի է մշտական նշանոցից»,— մտածեց Գրիգորին՝ տրոփող սրտով հրացանի կոթը սեղմելով ուսին՝ նշան բռնելով հսող սագի վրա։

Կրակելուց հետո Գրիգորին վեր թռավ սագերի երամի կռթկռթոցից, նրանց թևերի շփշփոցից խլացած։ Այն սագը, որի վրա կրակել էր նա, սարսափահար վեր էր բարձրանում, մնացածները թռչում էին լճակի վերևում, բարձանում խիտ ամպի նման։ Վշտացած Գրիգորին երկու անգամ էլ կրակեց հենց դեպի վեր ճախրող երամի վրա, հայացքով հետևեց, թե արդյոք մեկն ու մեկը չի՞ ընկնում, ու գնաց Պրոխորի մոտ։

— Մտիկ արա, մտիկ արա...— բղավեց վերջինս՝ թռչելով ու ամբողջ հասակով մեկ կանգնելով ձիու վրա, մտրակը տնկելով կապույտին տվող եթերում հետզհետե հեռացող սագերի երամի կողմը։

Գրիգորին շուռ եկավ ու ցնցվեց ուրախությունից, որսորդական հուզումից. մի սագ, անջատվելով արդեն շարք կազմած սագերի երամից, իջնում էր արագ թափով, թևերը թափահարում դանդաղությամբ և ընդհատումներով։ Ոտների մատների վրա բարձրանալով, ձեռքը տանելով աչքերին, Գրիգորին հայացքով հետևում էր նրան։ Սագը անհանգստությամբ աղմկող երամից մի կողմ էր թռչում դանդաղորեն իջնելով, թուլացնելով թռիչքը, ու հանկարծ մեծ բարձրությունից քարի պես ընկավ գետին, երևաց միայն սպիտակ թևը, որ արևի տակ կուրացուցիչ փայլ արձակեց։

— Չի՛ նստել։

Պրոխորը բերանաբաց ժպտալով, ձիերը քշեց, մոտեցավ ու սանձը գցեց Գրիգորիին։ Նրանք քառատրոփով բարձրացան բլուրը, վազելով անցան մի ութսուն սաժեն։

— Ահա նա։

Սագը ընկել էր վիզը երկարացրած, թևերը փռած, ասես վերջին անգամ գրկել էր այդ անսիրալիր հողը։ Գրիգորին առանց ձիուց իջնելու կռացավ, վերցրեց որսը։

— Գնդակը դրա ո՞ր տեղն է կծոտել,— հետաքրքրվեց Պրոխորը։

Պարզվեց, որ գնդակը ծակել էր սագի կտուցի ստորին մասը, աչքի կողքին շուռ տվել ոսկորը։ Մահը արդեն թռիչքի ժամանակ վրա էր հասել ու նրան խլել եռանկյունաձև շարք կազմած երամից, գցել գետին։

Պրոխորը սագը կապեց թամքին։ Գնացին։

Դոնը անցան նավակով, ձիերը թողին Բազկիում։

Վեշենսկում Գրիգորին իջևանեց ծանոթ մի ծերուն։ բնակարանում, հրամայեց անմիջապես տապակել սագ։ իսկ ինքն առանց շտաբ ներկայանալու Պրոխորին ուղարկեց արաղի։ Խմեցին մինչև երեկո։ Խոսակցության ժամանակ տանտերը բերանից գանգատի խոսքեր թոցրեց.

— Մեզ մոտ, Վեշկիում, Գրիգորի Պանտելևիչ, իշխանությունը շատ է նեղություն տալի։

— Ի՞նչ իշխանություն։

— Ինքն իրեն հաստատած իշխանությունը, էլի՛... Կուդինովը ու մեկ էլ ուրիշները։

— Ի՞նչ են անում որ։

— Ոչ կազակ բնակիչներին հա՛ հուպ են տալի։ Ովքեր գնացել են կարմիրների հետ, նրանց ընտանիքներից տանում ու նստեցնում են կնանոնց, աղջիկներին, ալևորներին։ Խնամուս կնկանը նստացրին նրա տղի պատճառով։ Բա այդ ինչի՞ է պետք։ Դե, ոնց ասեմ, թե որ դուք, զորօրինակ, կադետների հետ գնայիք Դոնեցից դենը, ու կարմիրները ձեր հորը, Պանտելեյ Պրակոֆիչին ծակը կոխեին, այդ բանը հոսխալ կլիներ չէ՞։

— Իհարկե։

— Իսկ այստեղի իշխանությունները նստեցնում են

Կարմիրները գալիս էին, ոչ ոքի նեղություն չէին տալի, իսկ սրանք շնացել են, կատաղել, չափն անցկացրել։

Գրիգորին վեր կացավ, մի քիչ ճոճվեց՝ ձեռքը տանելով մահճակալից կախված շինելին։ Նա միայն թեթևակի էր հարբած։

— Պրոխոր, թո՛ւրս, մաուզե՛րս։

— Ո՞ւր, Գրիգորի Պանտելևիչ։

— Քո գործը չի, տուր, ինչ որ ասի։

Գրիգորին կապեց թուրը, մաուզերը, կոճկեց շինելը, կապեց գոտին, գնաց ուղիղ դեպի հրապարակը, բանտը։ Ժամապահը, որ ապաշար կազակներից էր ու կանգնել էր դռան մոտ, փորձեց փակել նրա ճանապարհը։

— Անցաթուղթ կա՞։

— Թող, դեն քաշվիր ասում եմ։

— Առանց անցաթղթի ոչ ոքի չեմ կարող ներս թողնել։ Չի թույլատրվում։

Գրիգորին կիսով չափ էլ չէր հանել թուրը, երբ ժամապահը դռնից ներս ծլկվեց։ Գրիգորին թրի կոթը բռնած, նրա ետևից մտավ միջանցքը։

— Բանտապետին կանչել այստե՛ղ,— գոռաց նա։

Նրա դեմքը գունատվեց, սապատավոր քիթը գիշատչաբար ծռվեց, հոնքը շարժվեց...

Վրա վազեց մի ինչ-որ կաղ կազակ, որ վերակացուի պաշտոն էր կատարում, գրասենյակից դուրս նայեց մի փոքրը տղա,— գրագիրը։ Շուտով եկավ նաև քնաթաթախ, բարկացկոտ բանտապետը։

— Առանց անցաթղթի՝. գիտե՞ս ինչ կլինի դրա համար,— որոտաց նա, բայց ճանաչելով Գրիգորիին և դիտելով նրա դեմքը, վախենալով կմկմաց.— Այդ դո՞ւք եք, ձերը դ... Ընկեր Մելեխով։ Ինչո՞ւմն է բանը։

— Կամերաների բանալինե՛րը։

— Կամերաների՞։

— Քառասուն անգա՞մ պիտի կրկնեմ, հը՞։ Դեհ, տուր բանալիները, շան որդի։

Գրիգորին մի քայլ արեց դեպի բանտապետը, սա ետ-ետ գնաց, բայց բավական հաստատուն կերպով ասաց.

— Բանալիները չեմ տա։ Իրավունք չունեք։

— Իրավու-ո՞ւնք..

Գրիգորին ատամները կրճտացրեց, քաշեց թուրը։ Նրա ձեռքում թուրը միջանքի ցածր առաստաղի տակ սվսվալով մի շողշողուն շրջան կատարեց։ Գրագիրն ու վերակացուները դես-դեն թռան ինչպես վախեցած ճնճղուկներ, իսկ բանտապետը սեղմվեց պատին, նրա դեմքը պատից ավելի սպիտակ գույն առավ, նա քթի տակին մռթմռթաց.

— Ինչ ուզում եք արեք, ահա բանալիները... Իսկ ես կգանգատվեմ։

— Ես քեզ գանգա՛տ ցույց կտամ։ Սովորե՛լ եք թիկունքում շնթռել... Կնանոնց ու ալևորներին նստեցնելու համար քաջ եք... Այստեղ ես բոլորիդ էլ թափ կտամ։ Գնա՛ դիրքերը, իժ, թե չէ հիմի կթրատեմ։

Գրիգորին թուրը դրեց պատյանի մեջ, բռունցքով խփեց սարսափահար բանտապետի վզակոթին. ծնկով ու բռունցքներով նրան դուրս հրելով, գոռաց.

— Դեպի ֆրո՞նտ... Գնա՛... Գնա՛-ա՛... Ես ձեր... Թիկունքի ոջիլ...

Բանտապետին դուրս հրելով ու բանտի ներքին բակից աղմուկ լսելով, վազեց այնտեղ։ Խոհանոցի դռան առաջ կանգնած էին երեք վերակացու. մեկը քաշքշում էր ճապոնական հրացանի ժանգոտած փակաղակը, տաքացած, արագ-արագ բղավում էր.

— ...Հարձակում կատարեց... Պետք է հարձակումը ետ մղել... Հին կանոնագրքում ո՞նց է ասված։

Գրիգորին քաշեց մաուզերը, ու վերակացուները իրար առաջ կտրելով նետվեցին խոհանոց։

— Դո՛ւրս եկե-ե-ք... Գնացեք ձեր տները...— Բաբձրաձայն գոչում էր Գրիգորին՝ բանալով լիք լցված բանտախցերի դռները, թափահարելով բանալիների կապոցը։

Նա բաց թողեց բոլոր (մոտ հարյուր հոգի) կալանավորներին, նրանց, ովքեր վախենում էին դուրս գալ, զոռով դուրս քշեց փողոց, փակեց դատարկ բանտախցերը։

Ժողովուրդն սկսեց հավաքվել բանտի դռան մոտ։ Կալանավորները դռնից դուրս թափվեցին հրապարակը. նայելով իրենց շուրջը, կուչ գալով, գնում էին իրենց տները։ Թրերը բռնած, շտաբից դեպի բանտ էին վազում պահակային դա-

սակի կազակները. սայթաքելով գալիս էր ինքը Կուդինովը։

Գրիգորին վերջինը հեռացավ դատարկված բանտից։ Անցնելով ճանապարհ բացած ամբոխի միջով, մայր հայհոյեց նորությունների ծարավ, փսփսող կանանց, ու կորանալով, դանդաղ քայլեց Կուդինովին ընդառաջ։ Պահակային դասակի վազ տվող կազակներին, որոնք ճանաչեցին ու ողջունեցին նրան, բղավելով ասաց.

— Տո, բուղաներ, գնացեք ձեր շենքը, էլի։ Էլ ի՞նչ եք վազ տալի, դիվոտե՞լ եք, ինչ է։ Մա՛րշ։

— Մենք կարծում էինք, թե բանտում բունտ են անում, ընկեր Մելեխով։

— Այն պստիկ գրագիրը վազեվազ եկավ, ասում է՝ «Մի սև մարդ հարձակվեց, ջարդում է կողպեքները»։

— Սուտ տագնապ եղավ, էլի՛։

Ծիծաղելով ու խոսքեր փոխանակելով, կազակները ետ դարձան։ Կուդինովը հապճեպ մոտենում էր Գրիգորիին՝ քայլելիս շտկելով գլխարկի տակից դուրս թափված, երկար մազերը։

— Բարև, Մելեխով։ Ինչո՞ւմն է բանը։

— Բարև, Կուդինով։ Ձեր բանտը տակնուվրա արեցի։

— Ի՞նչ հիման վրա։ Դա ի՞նչ բան է։

— Բոլորին էլ բաց թողի, պրծավ-գնաց... Դե, ի՞նչ ես չռել աչքերդ։ Դուք այստեղ ի՞նչ հիման վրա եք նստեցնում ոչ կազակուհի կնանոց ու ծերունիներին, հը՞։ Դա ի՞նչ բան է։ Դու խելոք կաց, հա՛-ա, Կուդինով։

— Չհամարձակվես քեզանից բաներ հնարել։ Դա ինքնագլխությո՛ւն է։

— Ես քեզ ցո՛ւյց կտամ ինքնագլխությունը, ես քո.. Հիմի ես Կարգինսկուց կկանչեմ իմ գունդը, և դուք գրողի ծոցը կգնաք։

Գրիգորին հանկարծ բռնեց Կուդինովի լսնակոնած կովկասյան գոտուց, ճոճեց, թափահարեց նրան, սառն կատաղությամբ շշնջաց.

— Ուզո՞ւմ ես հենց հիմի բաց անեմ ֆրոնտը։ Ուզո՞ւմ ես հենց հիմի թոցնեմ հոգիդ։ Ի-ի՞-ի՛հ, քոսոտ...— Գրիգորին կրճտացրեց ատամները, բաց թողեց մեղմ ժպտացող Կուդինովին.— Ի՞նչ ես բաց անում ատամներդ։

Կուդինովը շտկեց գոտին, թևանցուկ արեց Գրիգորիին։

— Գնանք ինձ մոտ։ Էլ ինչո՞ւ ես շարացել։ Մի նայեիր վրադ. ինչի՞ ես նման... Մենք այստեղ կարոտել ենք քեզ, աղբերս։ Իսկ ինչ վերաբերում է բանտին, այդ դատարկ բան է... Դե, բաց թողիր նրանց, ի՞նչ մեծ փորձանք է որ... Ես կասեմ տղերանց, որ իրոք մի քիչ հանդարտվեն։ Թե չէ քարշ են տալի բոլոր ոչ կազակուհի կանանց, որոնց ամուսինները կարմիրների մեջ են... Բայց ախր դու ինչո՞ւ ես մեր հեղինակությունը գցում։ Ախ, Գրիգորի, ինչքա՛ն գիժ ես դու։ Կգայիր, կասեիր՝ «Էհ, այ թե ինչ, հարկավոր է բանտը թեթևացնել, բաց թողնել այսինչ ու այսինչ մարդկանց»։ Մենք կնայեինք ցուցակները ու ոմանց կազատեինք։ Իսկ դու բոլորին էլ միանգամից։ Լավ է որ կարևոր հանցագործներն առանձին են նստած, բա որ դու նրանց էլ բաց թողնե՞ր։ Տաքարյուն ես դու.— Կուդինովը տփտփացրեց Գրիգորիի ուսին, ծիծաղեց.— Արի ու քեզ հակառակ բան ասա այսպիսի դեպքում,— կտրաս կսպանես։ Կամ թե, ո՛վ գիտի, կխառնակես կազակներին...

Գրիգորին թևը դուրս քաշեց Կուդինովի թևից, կանգ առավ շտաբի տան մոտ։

— Դուք բոլորդ էլ քաջեր եք դարձել այստեղ, մեր թիկունքում։ Բանտը լիք լցրել եք մարդկանցով... Դու քո ընդունակությունները թող ցույց տայիր այնտեղ, դիրքերում։

— Ես, Գրիշա, իր ժամանակին դրանք քեզանից վատ չեմ ցույց տվել։ Թեկուզև հիմա. դու եկ իմ տեղը, իսկ ես կվերցնեմ քո դիվիզիան...

— Օ՛, ոչ, շնորհակալ եմ։

— Հենց այդ է, է՛։

— Դե, ես քեզ հետ երկար խոսելու բան չունեմ։ Հիմի ես գնում եմ տուն, մի շաբաթ հանգստանալու։ Ոնց որ թե հիվանդացել եմ... Այստեղ էլ ուսրս մի քիչ վիրավորեցին։

— Ինչո՞վ ես հիվանդացել։

— Դարդով,— ծուռ ժպտաց Գրիգորին։— Սիրտս հուզված է...

— Չէ՛, հանաք մի անի, ի՞նչ հիվանդություն ունես։ Մեզ մոտ մի լավ բժիշկ կա, գուցե թե մինչև իսկ պրոֆեսոր է։ Գերի է։ Մերոնք նրան բռնել էին Շումիլինսկու մոտերքում,

երբ գնում էր նավաստիների հետ։ Ծանր ու մեծ տեսքով է, սև ակնոցներով։ Գուցե նայի քեզ, հը՞։

— Է-է՛հ, թող կորչի։

— Դե ի՞նչ արած, գնա, հանգստացիր։ Դիվիզիան ո՞ւմ ես հանձնել։

— Ռյաբչիկովին։

— Սպասիր, է՛, ո՞ւր ես շտապում։ Պատմիր, այնտեղ ո՞նց են գործերը։ Ասում են, դու նրանց մի լավ թրատել ես, հա՞։ Երեկ գիշեր մեկն ինձ հաղորդեց, որ դու Կլիմովկայի մոտ շատ նավաստիներ ես բրթել։ Ճի՞շտ է։

— Մնաս բարով։

Գրիգորին գնաց, բայց մի քանի քայլ հեռանալով, կիսադարձ կանգ առավ, ձայն տվեց Կուդինովին.

— Է՛յ, եթե լսեմ, որ էլի նստեցնում եք...

— Ո՛չ, ոչ։ Խնդրեմ չանհանգստանաս։ Գնա հանգստացիր։

Օրը չվում էր դեպի արևմուտք, արևի ետևից։ Դոնից, վարարած ջրից սառնություն փչեց։ Գրիգորիի գլխավերևից սվսվալով թռավ մրտիմների երամը։ Նա արդեն բակն էր մտնում, երբ վերևից, Դոնի հոսանքով դեպի ներքև, Կազանսկու հողի ինչ-որ վայրից ջրի վրայով իրեն հասավ թընդանոթային համազարկի ձայնը։

Պրոխորն արագությամբ թամբեց ձիերը. սանձերը քաշելով, դրանք մոտ բերեց, հարցրեց.

— Մեր կո՞ղմն ենք գնում, Տատարսկի՞։

Գրիգորին լուռ ընդունեց սանձը, լուռ պատասխանեց գլխի շարժումով։

XLVI

Տատարսկին առանց կազակների դատարկ ու ձանձրալի էր։ Տատարցիների հետիոտն հարյուրյակը ժամանակավորապես միացված էր 5-րդ դիվիզիայի գնդերից մեկին, տեղափոխված էր Դոնի ձախ կողմը։

Մի ժամանակ կարմիր զորամասերը, որոնք համալրվել էին Բալաշովից ու Պովարինից եկած օժանդակ զորամասերով, ուժեղ հարձակում գործեցին հյուսիս-արևելքից, գրավեցին Ելանսկայա ստանիցայի մի շարք խուտորներ ու մոտեցան հենց Ելանսկայա ստանիցային։ Ստանիցայի մատույցներում բռնկված կատաղի մարտում ապստամբները հաղթեցին։ Հաղթեցին, որովհետև խոշոր օժանդակ ուժեր էին ուղարկվել Ելանսկի և Բուկանովսկի գնդերին օգնելու, որոնք նահանջում էին Մոսկովյան կարմիրբանակայինի գընդի ու հեծելազորի երկու վաշտի ճնշման տակ։ Դոնի ձախ կողմով, Վեշենսկուց դուրս եկան ու Ելանսկուն մոտեցան 1-ին դիվիզիայի 4-րդ ապստամբական գունդը (որի կազմում նաև տատարցիների հարյուրյակը), երեք թնդանոթով մի մարտկոց ու երկու ռեզերվային հեծյալ հարյուրյակ։ Բացի դրանից, Դոնի աջ ափով զգալի օժանդակ ուժեր ուղարկվեցին դեպի Պլեշակով և Մատվեևսկի խուտորները, որտեղից մինչև Ելանսկայա ստանիցան—Դոնի վրայով—երեք-հինգ վերստ է։ Կրիվսկու բլուրի վրա տեղավորվեց հրանոթային մի դասակ։ Նշանառուներից մեկը, Կրիվսկի խուտորի մի կազակ, որ հռչակված էր անվրեպ հրաձգությամբ, հենց առաջին կրակոցով ջախջախեց կարմիրբանակային գնդացրային բունը ու շրապնելի մի քանի հերթով,— որը թափվեց կարմիր ուռուտում պառկած կարմիրբանակային շղթայի վրա,— ոտքի հանեց այն։ Մարտը վերջացավ հօգուտ ապստամբների։ Վրա տալով նահանջող կարմիր զորամասերին, ապստամբները նրանց քշեցին Ելանկա գետակի մյուս կողմը, հետապնդելու համար նետեցին հեծելազորի տասնմեկ հարյուրյակ, ու մի բլուրի վրա, Զագոլովսկի խուտորի մերձակայքում այն վրա հասավ և ամբողջովին սրախողխող արեց կարմիրբանակայինների հեծելավաշտը։

Այդ ժամանակից Տատարսկի «պլաստունները» թրևում էին Դոնի ձախ, ավազոտ ափերին։ Հարյուրյակի կազակները համարյա արձակուրդ չէին գալիս։ Միայն զատկին, ասես պայմանավորված լինելով, համարյա հարյուրյակի կեսը եկավ խուտոր։ Կազակները մի օր ապրեցին խուտորում, ուտեցի խորակներ անուշ արին ու, փոխելով ոպիտակեղենը, տներից վերցնելով ճարպ, պաքսիմատ և այլ ուտելիք, անցան Դոնի մյուս կողմը, խմբովին, ինչպես ուխտավորներ (միայն թե ցուպերի փոխարեն հրացաններ վերցրած), ճանապարհ ընկան Ելանսկու ուղղությամբ։ Կանայք, մայրերը,

քույրերը Տատարսկի բլուրից, առափնյա սարից ճանապարհեցին նրանց։ Կնանիքը լալիս էին, լաչակների ու շալերի ծայրերով սրբում լացակումած աչքերը, խնչում տակի յուրկանների փեշերի մեջ... Իսկ Դոնի մյուս կողմում, վարաբած ջրով հեղեղված անտառից դենը, ավազակույտերի վրայով գնում էին կազակները,— Խրիստոնյան, Անիկուշկան, Պանտելեյ Պրակոֆևիչը, Ստեպան Աստախովը և մյուսները։ Հրացանների ծայրերին ամրացված սվիններն վրա ճոճվում էին ուտելիքով լեցուն, քաթանե տոպրակները, քամու թեվերին թռչում էին ծոթորի բույրի պես տրտում տափաստանային երգերը, կազակների միջև ալարկոտ խոսակցություն էր տեղի ունենում... Նրանք քայլում էին անուրախ, բայց կուշտ էին, շորերը լվացված։ Տունից առաջ կնանիքը ու մայրերը ջուր էին տաքացրել, լվացել նրանց մարմիններին կպած կեղտը, մաքրել արյունոռուշտ սալդաթական ոջիլները։ Ինչո՞վ ասես, որ չէր կարելի լավ ապրել տանը, քեֆ քաշել։ Բայց ահա պետք է մահվան դեմ գնալ... Ու գնում են։ Ջահելները, տասնվեց-տասնյոթ տարեկան տղաները, որոնք հենց նոր էին կանչվել ապստամբական շարքերը, սապոգներն ու քոշերը հանած, քայլում են տաք ավազի վրա։ Հայտնի չէ ինչու ուրախ են նրանք, աշխույժ խոսք ու զրույց էլ է տեղի ունենում նրանց միջև, երգեր էլ են մղմղացնում բեկուն, չհասունացած ձայներով։ Պատերազմը նրանց համար նորույթ է, ասես մանկական խաղ լինի։ Նրանք առաջին օրերին գնդակների սվվոցին էլ ականջ են դնում գլուխները բարձրացնելով փոքրիկ խրամատը պաշտպանող թաց հողաթմբից։ «Խոխա՛»,— արհամարհանքով անվանում են նրանց ճակատային կազակները, գործնականում սովորեցնելով, թե ինչպես պետք է խրամատներ փորել, ինչպես կրակել, երթի ժամանակ ինչպես կրել զինվորի ունեցվածքը, ինչպես լավ թաքստոց ընտրել, ու նույնիսկ սովորեցնելով, թե ինչպիսի վարպետությամբ պետք է կրակի վրա թափ տալ ոջիլները ու փաթաթանները այնպես փաթաթել ոտներին, որ ոտը հոգնածություն չզգա «տուչիկե» ոտնամանների մեջ։ Սովորեցնում են չհասկացող ջահելներին։ Ու «խամ տղան» զարմացած, թռչնային հայացքով այնքան է դիտում իրեն շրջապատող պատերազմի աշխարհը, այնքան է բարձրացնում

գլուխն ու նայում խրամատից, վառվելով հետաքրքրությունից, փորձելով տեսնել «կարմիրներին»,— մինչև որ կարմիրբանակայինի գնդակը խփում է նրան։ Եթե մահացու է խփում, մեկնվում է այդ տեսակ տասնվեց տարեկան «ռազմիկը», ու ոչ մի կերպ նրան չես տա իր կարճատև տասնվեց տարին։ Ընկած է լինում այդպիսի մեծ երեխան իր տղայական խոշոր թևերով, ցցված ականջներով ու բարակ, չառնացած վզի վրա ադամախնձորի սաղմով։ Կտանեն նրան հայրենի խուտորը, կթաղեն գերեզմանոցում, ուր փտել են նրա պապերն ու նախապապերը, ձեռներն իրար զարկելով նրան կդիմավորի մայրը ու երկար լաց ու կոծ կանի մեռելի վրա, ալեզարդ գլխից կպոկի մազերը։ Հետո էլ, երբ կթաղեն ու փոքրիկ գերեզմանի վրա կչորանա կավը, նա զառամած, մայրական անքթիթ վշտից գետնին կռացած, կսկսի եկեղեցի գնալ, հիշել իր «սպանված Վանյուշկային» կամ «Սյոմուշկային»։

Հո այնպես էլ է լինում, որ գնդակը մահացու չի խփում մի որևէ Վանյուշկայի կամ Սյոմուշկայի. միայն այստեղ է նա ըմբռնում պատերազմի անողոք դաժանությունը։ Ցընցվում են մթին խավով պատած նրա շուրթերը, ծոմովում։ Ճչում է «ռազմիկը» մանկական ճչոցին նմանվող, նապաստակային ճիչով՝ «Ազիզ մերիկ ջան», ու աչքերից բուռ-բուռ արցունքներ են թափվում։ Սանիտարական սայլը կցնցահարի նրան, կտանի ճանապարհազուրկ դար ու փոսերով, կվնասի վերքը։ Հարյուրյակի փորձված բուժակը կմաքրի գնդակի կամ արկաբեկորի կտրվածքը ու, քմծիծաղ տալով, կսփոփի նրան, ինչպես երեխային. «Կատուն ցավ զգա, կաչաղակը ցավ զգա, իսկ Վանյուշկայի վերքը լավանա»։ Իսկ «ռազմիկ» Վանյուշկան լաց կլինի, կխնդրի իրեն տուն ուղարկել, կկանչի մորը։ Բայց եթե վերքը լավանա և նա կրկին լինի հարյուրյակում, ապա արդեն այստեղ կսովորի վերջնականապես հասկանալ պատերազմը։ Մի երկու շաբաթ կլինի շարքում, մարտերում և ընդհարումներում, սիրտը կկոշտանա, հետո էլ, աչքդ բարին տեսնի, մի կերպ կցցվի գերի կարմիրբանակայինի առաջ ու, մի ոտը ետ դրած, մի կողմ թքելով, որևէ չախկալ վախմիստրի նմանվելով, կըմբոթմոթա ատամների միջից, կհարցնի կոտրատվող, թավ ձայնով.

— Է՛, մուժիկ, ես քո մերը, բռնվեցի՞ր, հը՞։ Ըհը՛ըմ։ Հո՞ղ էիր ուզում, հա՞. հավասարությո՞ւն։ Դու հո կոմբունիստ ես, չէ՞։ Խոստովանիր, իժ,— ցանկանալով ցույց տալ իր կտրիճությունը, «կազակական խիզախությունը», կը-բարձրացնի հրացանը, կսպանի նրան, ով ապրեց և մահ ընդունեց Դոնի հողում՝ կռվելով սովետական իշխանության համար, կոմունիզմի համար, այն բանի համար, որ երկրի վրա այլևս երբեք պատերազմներ չլինեն։

Ու Մոսկվայի կամ Վյատկայի նահանգի որևէ վայրում, Սովետական մեծ Ռուսաստանի որևէ հեռավոր գյուղում կարմիրբանակայինի մայրը ծանուցում ստանալով, որ նրա որդին «զոհվեց սպիտակգվարդիականության դեմ և կալվածատերերի ու կապիտալիստների լծից աշխատավոր ժողովրդին ազատագրելու պայքարում...», կսկսի ողբը, լաց ու կոծը... Այրող վիշտը կհոշոտի մայրական սիրտը, խամրած աչքերից կթափվեն արցունքները, ու ամեն օր, միշտ, մինչև մահը կհիշի որդուն, որին մի ժամանակ կրել էր արգանդում, ծնել արյան մեջ ու կանացի տանջանքներում և որն ընկավ թշնամու ձեռքից, հեռո՛ւ-հեռվում, Դոնի անհայտ հողում...

Գնում էր Տատարսկի՝ ռազմաճակատը լքած հետևազորի կիսահարյուրյակը։ Գնում էր առափնյա ավազուտներով, շողուն, կարմրագույն ուռուտներով։ Ջահելները քայլում էին ուրախ, առանց մտահոգվելու, ծերունիները, որոնց ծաղրաբար «հայդամակներ» էին անվանում քայլում էին ախ ու վախով, խորունկ թաքցրած արցունքով. անցնում էր վարելու, ցանելու, հողը մշակելու ժամանակը. հողը կանչում էր դեպի իրեն, կանչում անդադար, գիշեր-ցերեկ, իսկ այստեղ հարկավոր էր պատերազմել, ուրիշների խուտորներում մեռնել հարկադրական անգործությունից, ահից, կարիքից ու ձանձրույթից։ Հենց այդ պատճառով էլ մորուքավորներին այրում էր արցունքը, հենց այդ պատճառով էլ նրանք նոթոտ էին քայլում։ Ամեն մեկը հիշում էր իր լքած տնտեսությունը, գույքը, ինվենտարը։ Ամեն ինչի համար տղամարդու ձեռքեր էին պահանջվում, ամեն ինչ ողբալի էր առանց տնտեսատիրոջ հոգատարության։ Իսկ կանանցից ի՞նչ պահանջեսն։ Կշորանա հողը, ցանքը գլուխ չեն բերի, սովով կվախեցնի

հետևյալ տարին։ Հո իզուր չի ասում ժողովրդական առածը, որ «տնտեսության մեջ հալից ընկած ծերուկն ավելի պետք կգա, քանց ջահել կնիկը»։

Ավազուտներով լուռ քայլում էին ծերունիները։ Աշխուժացան, երբ երիտասարդներից մեկը կրակեց նապաստակի վրա։ Ծերունիները որոշեցին իզուր տեղը փամփուշտ վատնելու համար (որ խստորեն արգելվում էր ապստամբական ուժերի հրամանատարի հրամանով) պատժել մեղավորին։ Իրենց բարկությունը թափեցին երիտասարդի վրա, մի լավ թակեցին նրան։

— Ճիպոտի քառասուն հարված դրա տկլոր քամակին,— առաջարկեց Պանտելեյ Պրակոֆևիչը։

— Շա՛տ կլինի։

— Հետո նա տեղ չի հասնի։

— Տաս-նը-վե՛ց,— թնդաց Խրիստոնյան։

Համաձայնվեցին տասնվեց,— զույգ թվով հարված տալ։ Ջանցառուին պառկեցրին ավազի վրա, իջեցրին փոխանը։ Խրիստոնյան մի երգ դունդունալով, փոքրիկ դանակով ճիպոտներ էր կտրում, որոնք ծածկված էին դեղին, խավոտ բողբոջներով, իսկ Անիկուշկան ձաղկում էր։ Մնացածները նստել էին շուրջը, ծխում էին։ Հետո շարունակեցին գնալ։ Բոլորի ետևից ոտները քարշ տվեց պատժվածը՝ սրբելով արցունքները, պինդ ձգելով վարտիքի կապը։

Հենց որ անցան ավազուտները ու հասան գորշ, ավազախառն հողերին, սկսվեցին խաղաղ խոսակցությունները։

— Հրես, սիրած հողը, տիրոջն է սպասում, իսկ տերը ժամանակ չունի, սատանաները նրան բլրեբլուր են քշում, կռիվ է անում,— հոգոց հանեց բիձաներից մեկը՝ մատնացույց անելով աշնանավարի մի չորացող հողամաս։

Գնում էին հերկի կողքից, ու ամեն մեկը կռանում էր, վերցնում չոր, գարնանային արև բուրող մի կտոր հող, տրորում ձեռների մեջ, խեղդում ախ ու վախը։

— Հասունացել է հողը։

— Հենց հիմի ցաքանելու ժամանակն է։

— Երեք օր ուշացնես, էլ չի կարելի ցանել։

— Մեզ մոա, այն կողմերում քիչ շուտ է։

— Հա՛, էլի, շո՛ւտ է։ Մտիկ արա, հրեն, Դոնի մոտերքում յառերի վերև դեռ ձյուն է նստած։

Հետո կեսօրին կանգ առան հանգստանալու, հաց ուտելու։ Պանտելեյ Պրակոֆիևիչը ծեծված տղային հյուրասիրում էր քամած, «ճամփի» մածնով։ (Նա այն տանում էր տոպրակի մեջ լցրած, որ կապել էր հրացանի ծայրին, ու ամբողջ ճանապարհին տոպրակից ջուր էր կաթկթում։ Անիկուշկան ծիծաղում էր նրա վրա. «Քեզ, Պրոկոֆիչ, կարելի է գտնել քո թողած հետքով, քո ետևից թաց ճիզ է մնում, ոնց որ եզան ետևից»)։ Հյուրասիրում էր ու լրջորեն ասում.

— Դու ծերուկներից մի՛ նեղանա, դմբո։ Լավ, թակեցին, ի՞նչ մեծ փորձանք է որ։ Մեկ ծեծվածը երկու չծեծված մարդ արժե։

— Թե որ քեզ այսպես ծեփեին, Պանտելեյ պապի, կարելի է ուրիշ ձենով երգեիր։

— Ինձ ավելի վատ էին ծեփում, տղա։

— Ավելի վա՛տ։

— Հա, էլի, ավելի վատ։ Պարզ բան է, հնում այդպես չէին թակում։

— Թակո՞ւմ։

— Հարկ է որ, թակում էին։ Հերըս, տղա, մի անգամ սայլի քաշանով խփեց մեջքիս, ու ես դիմացա։

— Քաշանո՞վ։

— Ասում եմ քաշանով, ուրեմս քաշանով։ Է-է՛, դանդալոշ։ Մածուն կեր, էլի, ի՞նչ ես մտիկ անում բերանիս։ Գդալդ առանց կոթի է, ջարդե՞լ ես, հը՞։ Հայվա՛ն։ Այսօր քի՞չ թակեցին քեզ, հա՞, շան որդենի։

Կեսօրվա հացն ուտելուց հետո որոշեցին մի քիչ քնել գարնանային թարմ, գինու պես արբեցուցիչ օդում։ Պառկեցին մեջքերը արևին դեմ արած, մի քիչ խոմփացրին, հետո էլ դարձյալ գնացին գորշ տափաստանով, անցյալ տարվա խոզաններով, կարճ ճանապարհով, մի կողմ թողնելով բանուկ ճանապարհները։ Գնում էին սերթուկներ, շինելներ, կապաներ ու դաբաղած մորթու կիսամուշտակներ հագած, ոտներին — սապոգներ, քոշեր, շալվարների ծայրերը սպիտակ գուլպաների մեջ դրած, ոմանք էլ առանց ոտնամանների։ Սվիններով ծայրերին ճոճվում էին ուտելիքի տոպրակները։

Այնքա՛ն ողորմելի, ոչ զինվորական տեսք ունեին հարյուրյակ վերադարձող դասալիքները, որ նույնիսկ արտույտները, երկնքի կապույտ անհունում վերջացնելով իրենց գեղգեղանքը, անցնող կիսահարյուրյակի կողքին ընկնում էին խոտաբույսերի մեջ։

Գրիգորի Մելեխովը խուտորում կազակներից ոչ մեկին չգտավ։ Առավոտյան նա մի քիչ մեծացած իր Միշատկային նստեցրեց ձիուն, հրամայեց տանել Դոն ու ջրել, իսկ ինքը Նատալյայի հետ գնաց այցելելու Գրիշակա պապին ու զոքանչին։

Լուկինիչնան արցունքներով դիմեց փեսային.

— Գրիշենկա, որդյակս, մենք կկորչենք առանց մեր Միրոն Գրիգորևիչի, ողորմի նրա հոգուն... Ո՞վ պիտի աշխատի մեր արտերում։ Ամբարները լիքն են հացահատիկով. ամա ցանող չկա։ Վա՛յ իմ գլխին, վա՛յ, որբ մնացինք, ոչ ոքի էլ հարկավոր չենք, բոլորին էլ օտար ենք, ավելորդ ենք... Դու հլա մտիկ արա, թե ոնց է բրիշակ եղել մեր տուն ու տեղը։ Ձեռներս ոչ մի բանի չեն հասնում...

Իրոք որ տուն ու տեղը արագ թափով դեպի անկում էր դնում. եզները խփում ու տապալում էին բակերի ցախե ցանկապատերը, տեղ-տեղ ընկել էին արորները. քանդվել էր մարագի սամանե պատը,— գարնանային ջուրը փորփրել էր դրա տակը. կալի ցանկապատը քանդված էր, բակը մաքրված չէր. մարագի չարդախի տակ դրված էր մի ժանդոտած, հասարակ հնձիչ մեքենա, նույն տեղում ընկած էր դրա ջարդված կտրիչը... Ամենուրեք ամայացման ու քայքայման հետքեր էին երևում։

«Առանց տիրոջ ամեն բան շուտ է ավերվել»,— անտարբերությամբ մտածեց Գրիգորին՝ շրջելով Կորշունովների բակում։

Նա վերադարձավ տուն։

Նատալյան շշնջալով մի բան էր ասում մորը, բայց տեսնելով Գրիգորիին, լռեց, քծնությամբ ժպտաց։

— Գրիշա, մայրիկը խնդրում է... Դու ոնց որ թե պատ-

բաստվում էիր դաշտ գնալու... Կարելի է տրանց համար էլ մի դեսյատին ցանք անես։

— Ցանքը ձեր ինչի՞ն է պետք, մայրիկ,— հարցրեց Գրիգորին,— ձեր ամբարները հո լիքն են ցորենով։

Լուկինիչնան ձեռներն իրար զարկեց։

— Գրիշենկա, բա հողը ի՞նչ անենք։ Ախր մեր ողորմած հոգին աշնանը երեք հողամաս էր հերկել։

— Դե, հողին ի՞նչ կլինի որ, հո չի՞ փտի։ Սաղ լինենք, եկող տարի կցանենք։

— Ո՞նց կլինի։ Հողը պարապ կմնա։

— Ֆրոնտները կհեռանան, այն ժամանակ կցանենք,— Գրիգորին փորձեց համոզել զոքանչին։

— Բայց վերջինս պնդեց իր ասածի վրա, նույնիսկ կարծես նեղացավ Գրիգորիից և ի վերջո ծռմռեց շրթունքները։

— Էհ, թե որ դու ժամանակ չունես, կամ գուցե չես ուզում մեզ օգնել...

— Դե լավ, հա։ Վաղը կերթամ մեզ համար ցանելու և ձեզ համար էլ մի երկու դեսյատին կցանեմ։ Այդ էլ հերիք է ձեզ... Իսկ Գրիշակա պապը կենդանի՞ է։

— Շնորհակալ եմ, զավակս,— ուրախացավ պայծառացած Լուկինչինան.— Այսօր Գրիպաշկային կասեմ, որ տանի սերմացուն... Պա՞պը. աստված նրան չի տանում, էլի՛։ Կենդանի է, ամա ոնց որ թե խելքը սկսել է ցնգել։ Նստում է գիշեր-ցերեկ, սուրբ գիրքն է կարդում։ Մեկ էլ տեսար բըլբըլացրեց, բլբլացրեց, միայն թե բան չես հասկանա, եկեղեցական լեզվով է... Դու գնայիր նրան տեսնելու։ Նա օթախումն է։

Նատալյայի լիքը թշի վրայով արցունքի մի կաթիլ սողաց։

Արցունքների միջից ժպտալով, Նատալյան ասաց.

— Հիմի ես մտա նրա մոտ, իսկ նա ասում է՝ «Խորամանկ դուստրըս, ինչի՞ չես գալի մոտս։ Շուտով ես կմեռնեմ, սիրելիս... Քեզ համար, Թոռնիկիս համար, հենց որ գնացի, աստծուն մի խոսք կասեմ։ Ուզում եմ հող մտնել, Նատալյուշկա... Հողը կանչում է ինձ։ Ժամանակն է»։

Գրիգորին մտավ օթախը։ Խնկի, բորբոսի ու նեխածության հոտը, ծերունի, անմաքուր մարդու հոտը թունդ խփեց նրա քթածակերին։ Գրիշակա պապին էլի նույն բանակային մոխրագույն համազգեստով, որի օձիքի ծալերի վրա կարմրին էին տալիս մերակները, նստել էր պառկելատեղի վրա։ Նրա լայն շալվարը խնամքով կարկատած էր, բրդե գուլպաների ծակերը թելով լցրած։ Պապին խնամելը անցել էր մեծացած Գրիպկայի ձեռքը, և սա սկսել էր նրան հետևել նույնպիսի ուշադրությամբ և սիրով, ինչպես մի ժամանակ Նատալյան, երբ աղջիկ էր։

Գրիշակա պապին Աստվածաշունչը դրել էր ծնկներին։ Պղնձե խունացած շրջանակ ունեցող ակնոցի տակից նա նայեց Գրիգորիին, ժպտալով բացեց սպիտակատամ բերանը.

— Զինվո՛ր տղա, սա՞ղ ես։ Աստված պաշտպանե՞լ է չար գնդակից։ Էհ, փառք աստծու։ Նստիր։

— Քեֆդ-հալդ ո՞նց է, պապի։

— Հը՞։

— Ասում եմ ո՞նց է առողջությունդ։

— Ա՛յ քեզ բան, մազալու ես, դրուստ խոսք։ Իմ հասակումը ի՞նչ առողջություն կարող է լինել։ Ախր ես արդեն մոտ հարյուր տարեկան եմ։ Ըհը՛մ, հարյուր տարեկան... Ո՛նց ապրեցի—չիմացա։ Ոնց որ թե երեկ էի ման գալի շեկլիկ քյաքուլով, ջահել ու առողջ։ Հիմի էլ զարթնեցի. և ահա այսպես եմ, էլ ի՞նչ մնաց... Եկավ ու գնաց կյանքս ոնց որ ամառվա եռուզեռը, ու չկա նա... Տկարացել է մարմինս։ Քանի՞ տարի է, որ ճաղրս դրված է անբարում. ամա, երևում է, որ աստված մոռացել է ինձ։ Ես, մեղավորս, մեկ էլ տեսար աղաչում եմ նրան՝ «Տեր ողորմած աչքդ դարձրու քո ծառա Գրիգորիի վրա։ Ես ավելնորդ եմ երկրում, և նա ինձ»...

— Հլա դեռ կապրես, պապի՛։ Ա՛յ, բերանդ լիքն է ատամներով։

— Հը՞։

— Հլա շատ ատամ ունես։

— Ատա՞մ։ Ա՛յ քեզ ասրսա՛ղ,— հեգնոտեց Գրիշակա պապին,— ատամներով հո չես պահի հոգիդ, եռա նա թողնի մարմինդ... Դու էլի կուվո՞ւմ ես, ա՛յ գիժ։

— Կռվում եմ։

— Մեր Միտյուշկան էլ է կռվում, ճարպիկ է, հա՛-ա, արյունն էլ տաք է։

— Ճարպիկ է։

— Ես էլ այդ եմ ասում։ Իսկ ի՞նչ պատճառով եք կռվում։ Դուք էլ չեք իմանում։ Ամեն բան աստծո հրամանով է կատարվում։ Մեր Միրոնը ի՞նչ պատճառով մահ ընդունեց։ Այն պատճառով, որ աստծո դեմ գնաց, մարդիկ բունտարին իշխանության դեմ։ Իսկ ամեն մի իշխանություն աստծուց է։ Թեկուզև նա հակառակ է Քրիստոսին, ամա մեկ է, աստծուց է տրված։ Ես նրան դեռ այն ժամանակ ասում էի՝ «Միրոն, դու կազակներին մի՛ խառնակի, մի՛ գրգռի իշխանության դեմ, մեղքի մեջ մի՛ գցի»։ Իսկ նա ասում է ինձ՝ «Չէ, ապի, չեմ համբերի, պետք է ապստամբել, ոչնչացնել այս իշխանությունը, նա մեզ մուրացկան է դարձնում։ Մարդավարի ապրում էինք, ամա ճգնավորներ կդառնանք»։ Տես թե չհամբերելուց ինչ դուրս եկավ։ Թուրը քաշողը թրից էլ կմեռնի։ Ճշմարիտ խոսք։ Մարդիկ ասում են, թե դու, Գրիշկա, գեներալի աստիճան ունես, դիվիզիայի հրամանատար ես։ Ճի՞շտ է թե ոչ։

— Ճիշտ է։

— Դիվիզիայի հրամանատա՞ր ես։

— Հա, էլի։

— Բա ո՞ւր են էպոլետներդ։

— Մենք դրանք վերացրել ենք։

— Է-է՜, սարսաղներ։ Վերացրե՞լ ենք։ Բա էլ ի՞նչ գեներալ ես դու։ Վա՛յ, վա՛յ։ Առաջ է՛լ գեներալներ կային. մտիկ տայիր քեֆդ կգար. չաղ էին, հաստափոր, ծանր ու մեծ։ Իսկ դու հիմի... Թյո՛ւ, և ուրիշ ոչինչ։ Հենց մենակ շինելն է վրեդ, այն էլ կեղտոտ, ոչ էպոլետ կա ուսիդ, ոչ էլ սպիտակ դայթաններ՝ դոշիդ։ Շորերիդ կարերն էլ երևի լիքն են ոջիլներով։

Գրիգորին քա՜հ-քա՜հ ծիծաղեց։ Բայց Գրիշկա պապին տաքացած շարունակեց.

— Դու մի ծիծաղի, մունդռիկ։ Մարդկանց դեպի մահ ես տանում, ոտքի ես հանել իշխանության դեմ։ Մեծ մեղք ես գործում ու հլա դեռ ատամներդ էլ ես բաց անում։ Հը՞... Ա՜յ, հենց այդ է բանը։ Մեկ է, ձեզ չարդ ու փշուր կանեն,

մեզ էլ ձեզ հետ։ Աստված ինքը ձեզ ցույց կտա իր ճանապարհը։ Մեր խառնակ ժամանակների մասին չէ՞, որ ասում է Աստվածաշունչը։ Հապա, լսիր, կարդամ Երեմիա մարգարեի ասածը...

Ծերունին դեղին մատով թերթեց Աստվածաշնչի դեղին էջերը. դանդաղ, վանկը վանկից անջատելով, կարդաց.

— «Պատմեսցե՛ հազգս և լու արարեք, նշան կանգնեսցեք, լսելի արարեք, մի ծածկեցեք, ասասջիք՝ առավ Բաբելոն, համոթ եղել Բել, բեկավ Մերովդաք, համոթ եղեն կուռք նորա, բեկան գարշելիք նորա։ Զի ել ի վերա նորա ազգ ի հյուսիսոն, նա դիցե զերկիր նորա հապականություն և ոչ ոք իցե, որ բնակեսցե ի նմա ի մարդո մինչև հանասուն. զի խախտեցան և գնացին»... Հասկացա՞ր, Գրիշենկա։ Հյուսիսից կգան ու կտան ձեր, բաբելոնացիների վզակոթին։ Հետո, լսիր. «Հավուրսն այնոսիկ և ի ժամանակին հայնմիկ, ասեն տեր, եկեսցեն որդիքն Իսրայելի ինքյանք և որդիքն Հուդա ի միասին, շրջեսցեն և լալով գայցեն առ տեր աստված յուրյանց խնդրեսցեն։ Իբրև զոչխարս կորուսյալս եղև ժողովուրդ իմ, հովիվք նոցա մոլորեցուցեն զնոսա, ի վերա լեռանց, ի լեռնե ի բլուր գնացին»։

— Դրա միտքը ի՞նչ է, ո՞նց հասկանալ,— հարցրեց Գրիգորին, որ լավ չէր հասկանում սլավոնական լեզուն։

— Միտքը այն է, մունդռիկ, որ դուք, խառնակիչներդ սարեսար պիտի ընկնեք։ Որովհետև դուք ոչ թե կազակների հոգևոր հովիվներ եք այլ անբան ու անխելք ոչխարներից էլ վատ եք, չեք հասկանում, թե ինչ եք անում... Է՛լի լսիր. «Մոռացան զմատաղատերս յուրյանց, ամենեքյան որ գտանեին, ուտեին զնոսա»։ Եվ սա դրուստ է. հիմի ոջիլը չի՞ ուտում ձեզ։

— Ոջիլից փրկություն չկա,— խոստովանեց Գրիգորին։

— Հենց դրա համար էլ այստեղ դրուստ է ասված։ Լսիր. «Եվ թշնամիք նոցա ասացին՝ մի ներեսցուք նոցա, փոխանակ զի մեղան տյառն։ Խույս տուք ի միջո Բաբելոնի և հերկրեդ քաղդեացոց ելեք և եղերուք իբրև զնոխազս առաջի խաշանց։ Զի ահավասիկ ես հարուցից և ածիցի վերա բաբելացվոց զժողովս ազգաց մեծամեծաց հերկրե հյուսիսո. և ճակատեսցին զնովով, և անտի ըմբռնեցի, իբրև զնետ

իմաստուն պատերազմողի, որ ոչ դարձցի ունայն։ Եվ եղիցի երկիրն քաղդեացվոց հավար և ամենայն ավարառուքն նորա հագեսցին, ասե տեր. զի ուրախ լինիք և պարծիք հափշտակել զժառանգություն իմ»...

— Գրիգոր պապի, դու ինձ ռուսերեն լեզվով ասեիր, թե չէ չեմ հասկանում,— ընդհատեց Գրիգորին։

Բայց ծերունին ծամծմեց շրթունքները, բացակայող հայացքով նայեց նրան, ասաց.

— Հիմի կվերջացնեմ, լսիր. «...Խայտացիք զի խայտացիք իբրև զվարակս ի վերա դալարո և ոգորեցիք իբրև զցուլս։ Համոթ եղեվ մայրն ձեր հույժ, մայրն, որ ի բարություն էր. ահավադիկ վախճան ազգաց՝ ավեր անջուր և անապատ։ Ի բարկութենե տյառն մի բնակեսցի, այլ եղիցի հապականություն առհասարակ, և ամենայն, որ անցանիցե ընդ Բաբելոն, տրտմեսցի և շչեսցե ի վերա ամենայն հարվածոց նորա»։

— Իսկ դա ի՞նչպես հասկանալ,— նորից հարցրեց Գրիգորին, զգալով, որ մի փոքր վրդովվում է։

Գրիշակա պապը չպատասխանեց, ծածկեց Աստվածաշունչը ու թեքվեց պակելատեղի վրա։

«Եվ ահա ի բնե մարդիկ այդպես են,— մտածում էր Գրիգորին՝ դուրս գալով օթախից.— ջահել ժամանակ դիվոտում են, արաղ են լափում և ուրիշ մեղքեր են գործում, իսկ ծերանալով, այնքան շատ գժություններ անելուց հետո աստծու փեշի տակ են խցկվում։ Ա՛յ, թեկուզ Գրիշակա պապին։ Ատամները ոնց որ գիլի ատամներ լինեն։ Ասում են ջահել ժամանակ, երբ որ եկավ ծառայությունից, բոլոր կնանիքը նրա ձեռից լաց էին լինում, էլ ով ասես, որ նրա ճանկը չի ընկել։ Իսկ հիմի... էհ, թե որ ինձ հաջողվի ապրել մինչև ծերություն, ես այդ ախմախ բանը չեմ կարդալու ես աստվածաշնչերի հետ գլուխ չունեմ»։

Գրիգորին վերադառնում էր զոքանչի տունից՝ մտածելով Գրիշակա պապի հետ ունեցած խոսակցության մասին, Աստվածաշնչի խորհրդավոր, անհասկանալի «ասմունքների» մասին։ Նատալյան նույնպես լուռ էր քայլում։ Այս անգամ նա ամուսնուն ընդունեց անսովոր խոժոռությամբ. ըստ երևույթին նրան էլ էր հասել այն լուրը, թե Գրիգորին Կարգինսկայա ստանիցայի խուտորներում ինչպես էր քեֆանում ու կենակցում կանանց հետ։ Գրիգորիի ժամանելու օրը, երեկոյան նա Գրիգորիի համար անկողին պատրաստեց օթախում, մահճակալի վրա, իսկ ինքը պառկեց սընդուկի վրա, ծածկվեց մուշտակով։ Բայց կշտամբանքի ոչ մի խոսք չասաց, ոչինչ չհարցրեց։ Գիշերը լուռ անցկացրեց նաև Գրիգորին, որոշելով, որ ավելի լավ է առայժմ նրան հարցափորձ չանել իրենց փոխհարաբերություններում չտեսնված այդչափ սառնության պատճառների մասին...

Նրանք լուռ քայլում էին դատարկ փողոցով, միմյանց ավելի օտար, քան երբևէ։ Հարավից տաք, հաճելի քամի էր փչում, արևմուտքում կուտակվում էին խիտ, գարնանայնորեն սպիտակ ամպերը։ Նրանց շաքարային-կապտավուն կատարները քուլա-քուլա բարձրանալով, փոխում էին իրենց ուրվագծերը, սահում ու դիզվում Դոնի առափնյա կանաչած լեռան ծայրին։ Թնդաց առաջին որոտը, ու ծառերի բողբոջները, ձյունից ազատված գետնքի թարմ սևահողը խուտորով մեկ հմայական, կենարար բույր սփռեցին։ Սահում էին վարարած Դոնի փրփրաբաշ ալիքները, ցածրից փչող քամին բերում էր մեղմակի, զվարթացուցիչ խոնավությունը, փտող սաղարթի ու թաց ծառերի փոթոթահամ բույրը։ Աշնանահերկի մի երկայնակի հողամաս, որ թավշյա-սև կարկատանի նման փռված էր բլրալանջին, գոլորշի էր արձակում, հոսանուտ մուժը բարձրանում ու սահում էր Դոնի շրջակա բլրագագաթների վրա, հենց ճանապարհի վրա զմայլանքով գեղգեղում էր արտույտը, բարալիկ ձայնով ճստճստում էին ճանապարհի լայնքով վազող գետնասկյուռները։ Եվ ամբողջ այդ աշխարհի վերևում, որ ներլեցուն էր մեծ արգավանդությամբ ու կենսաստեղծ ուժերի առատությամբ, շոռում էր բարձր և սիգապանծ արեգակը։

Խուտորի մեջտեղում, կամրջի մոտ, որի տակից հեղեղատի միջով, մանկական ուրախ թոթովանքով դեռևս դեպի Դոն էր վազում գարնանային, լեռնային ջուրը,— Նատալյան կանգ առավ։ Կռանալով իբր թե քոշի փոկիկը կապելու համար, բայց իրոք Գրիգորիից թաքցնելով դեմքը, հարցրեց.

— Ինչո՞ւ ես լռում։

— Բա ինչի՞ մասին խոսեմ քեզ հետ։

— Խոսելու բան կա... Պատմեիր, թե ոնց էիր հարբեցողություն անում Կարգինսկու մոտերքում, ոնց էիր մուտավում բ... հետ...

— Իսկ դու արդեն գիտե՞ս...— Գրիգորին հանեց ծխախոտի տոպրակը, սկսեց ծխախոտ փաթաթել։ Տնային թութունի հետ խառնված իշավույտը քաղցր բուրմունք արձակեց։ Գրիգորին ներս քաշեց ծուխը, էլի հարցրեց.— Ուրեմն գիտե՞ս։ Ո՞ւմից ես իմացել։

— Որ ասում եմ, գիտեմ։ Ամբողջ խուտորը գիտի, ով ասես կհայտներ։

— Դե, եթե գիտես, էլ ի՞նչ պատմեմ։

Գրիգորին լայնացրեց քայլերը։ Կամրջակի փայտե ծածկի վրայով, գարնանային հստակ անդորրում պարզ դըմբդըմբացին նրա դանդաղ քայլերը ու նրա ետևից աճապարող Նատալյայի թքթքացող քայլվածքի արձագանքները։ Կամրջակն անցնելուց հետո Նատալյան լուռ էր, սրբում էր հաճախակի հեղվող արցունքները, հետո էլ, կուլ տալով հեկեկանքը, կմկմալով հարցրեց.

— Էլի հնի պոչի՞ց ես բռնում։

— Թո՛ղ, Նատալյա։

— Անիծված, անկուշտ որձ շուն, ինչո՞ւ ես էլի տանջում ինձ։

— Լավ կլիներ քիչ հավատայիր սուտ-մուտ բաներին։

— Ինքդ խոստովանեցիր։

— Երևում է, որ քո ականջին ավելի շատ բան են փչել, քանց թե իսկապես եղել է։ Էհ, մի քիչ մեղավոր եմ քո առաջ... Կյանքը ինքն է մեղավորացնում, Նատաշկա... Ամբողջ ժամանակ մահվան սպառնալիքի տակ ես գտնվում, դե պատահում է, որ չափն անց ես կացնում...

— Երեխաներդ, հրե՛ն, ինչքա՛ն են մեծացել։ Բա ի՞նչ խղճով ես նայում նրանց։

— Օ-հո՛-ո, խի՛ղճ.— Գրիգորին ժպտալիս բացեց սպիտակափայլ ատամները, ծիծաղեց.— Ես դրա մասին մտածելն էլ եմ մոռացել։ Էլ խի՞ղճ կարող է լինել, երբ ամբողջ կյանքը տակնուվրա եղավ... Սպանում ես մարդկանց... Հայտնի չէ ինչի համար է այս ամբողջ խառնափնթորությունը... Ախր ո՞նց ասեմ քեզ. չես հասկանա։ Քո մեջ հենց միայն կնկա հերսն է վառվում, միտքդ չի հասնում այն բանին, ինչ որ սիրտս է մաշում, արյունս ծծում։ Ես էլ արաղին զոռ տվի։ Անցած օրը ուշաթափ եղա։ Սիրտս մի քանի վայրկյան կանգ առավ ու մարմնովս սարսուռ անցավ...— Գրիգորին սփրթնեց, ծանր էր արտասանում բառերը.— Դժվար է իմ բանը, դրա համար էլ միտք եմ անում, թե ինչով մոռանալ այդ բոլորը, արաղո՞վ, կնկանո՞վ... Կա՛ց, է՛, թող ասեմ. ա՛յ, այստեղ ինձ շարունակ մի բան է կրծում ու կրծում, մաշում ինձ... Սխալ է կյանքի ընթացքը, կարելի է դրա համար ես էլ եմ մեղավոր... Հիմի հարկավոր է հաշտվել կարմիրների հետ ու գնալ կադետների վրա։ Իսկ ինչպե՞ս։ Մեզ ո՞վ կմիացնի սովետական իշխանության հետ։ Ո՞նց կատարես մեր ընդհանուր վիրավորանքների հաշիվը։ Կազակների կեսը Դոնեցի մյուս կողմումն է, իսկ ովքեր մնացել են այստեղ, կատաղել են, իրենց տակի հողն են կըրծում... Գլխիս մեջ ամեն բան խառնափնթոր է եղել, Նատաշկա... Ա՛յ, քո Գրիշկա պապն էլ կարդաց Աստվածաշունչը ու ասում է, թե մենք սխալ բան ենք արել, հարկավոր չէր ապստամբել։ Հորըդ էր հայհոյում։

— Պապս արդեն խելքը թոցրել է։ Հիմի հերթը քոնն է։

— Դու էլ հենց միայն այդպես կարող ես դատել։ Խելքդ ուրիշ բանի չի հասնի...

— Խոսքը կտուրը մի՛ գցի, հա՛-ա։ Կեղտոտություն ես արել, մեղք ես գործել, հիմի էլ պատերազմն ես մահանա դարձնում։ Դուք բոլորդ էլ այդպես եք։ Քի՞չ եմ քեզ պես գրողի տարածի պատճառով փորձանքի մեջ ընկել, հա՞, ափսոս, երանի թե այն ժամանակ մեռած լինեի...

— Քեզ հետ խոսելու էլ բան չկա։ Թե որ քեզ համար ծանր է, մի քիչ տզզա. կնկա արտասուքը միշտ էլ թեթևացնում է դարդը։ Իսկ ես հիմի քեզ մխիթարող չեմ։ Ես այնքան եմ արնոտվել ուրիշի արյունով, որ էլ ոչ ոքի չեմ կարող խղճալ։ Երեխեքին էլ համարյա չեմ խղճում, իսկ իմ մասին չեմ էլ մտածում։ Պատերազմն ամեն ինչ քամել է ինձնից։ Ինքս էլ սարսափելի եմ ինձ համար... Մտիկ տուր հոգուս մեջ, այնտեղ մութն է ոնց որ դատարկ ջրհորում...

Նրանք համարյա տուն էին հասել, երբ վրա հասած գորշ

ամպից շեղակի ու խոշոր անձրև տեղաց։ Անձրևը կերավ ճանապարհի թեթև, արևաբույր փոշին, շխկշխկաց կտուրների վրա, թարմություն, սարսռալի զովություն բուրեց։ Գրիգորին արձակեց շինելի կոճակները, փեշով ծածկեց հոնգուր-հոնգուր լացող Նատալյային, գրկեց նրան։ Գարնանային աշխույժ անձրևի տակ նրանք այդպես էլ բակ մտան միմյանց պինդ սեղմված, մի շինելով ծածկված։

Գրիգորին երեկոյան բակում կարգի բերեց թեթև արորը, ստուգեց ցանիչի թևերը։ Սեմյոն Զուգունի տասնհինգ տարեկան որդին, որ սովորել էր դարբինի արհեստը և ապստամբության օրից մնացել էր Տատարսկում իբրև միակ դարբինը, մի կերպ սարքեց Մելեխովների հին գութանի խոփը։ Ամեն ինչ պատրաստված էր գարնանային աշխատանքի համար։ Եզները գարուն էին ելել չաղացած, նրանց համար լիովին հերիք էր Պանտելեյ Պրակոֆևիչի պատրաստած խոտը։

Գրիգորին առավոտյան պատրաստվում էր գնալ տափաստան։ Իլյինիչնան ու Դունյաշկան դեռ գիշերվանից վառել էին վառարանը, որպեսզի մինչև լուսաբաց ուտելիք պատրաստեին մաճկալի համար։ Գրիգորին մտածում էր աշխատել մի հինգ օր, ցանել իրենց և զոքանչի համար, մի երկու դեսյատին վար անել բոստանի ու արևածաղկի համար, հետո էլ հարյուրյակից կանչել հորը, որպեսզի սա վերջացներ ցանքը։

Տան ծխնելուզից գալարվելով բարձրանում էր յասամանագույն ծուխը, բակում վազվզում էր աղջիկ տեղովը փարթամացած Դունյաշկան, շոր ցախ հավաքում կպչանի համար։ Գրիգորին նայում էր նրա կլորացած իրանին, պիրկ ցցված ստինքներին, տխրությամբ ու սրտնեղությամբ մտածում էր՝ «Ա՛մա թե աղջիկ է դառել, հա՛-ա։ Թռչում է կյանքը ոնց որ կայտառ ձի։ Վաղո՞ւց է, որ Դունյաշկան փոքրիկ, խլնքոտ աղջիկ էր. մեկ էլ տեսար վազվզում էր, իսկ մեջքի վրա թռչկոտում էին պստիկ ծամերը ոնց որ մկների պոչերը, իսկ հիմի տես թե ինչ է դառել, թեկուզ հենց հիմի մարդու տուր։ Իսկ իմ մազերն արդեն ճերմակում են, հայ-հայս գնում վայ-վայս է մնում... Դրուստ էր ասում Գրիշկա պապին՝ «Եկավ ու գնաց կյանքս, ոնց որ ամառվա եռուզեռը»։ Կյանքում առանց այն էլ կարճ է կտրած մարդու ճամփեն, ամա արի ու տես, որ այստեղ այդ կարճ միջոցից էլ պիտի զրկվես... Գրողի ծոցը գնա այս տեսակ վիճակը։ Թե որ սպանելու են, թող շուտ սպանեն»։

Դարյան մոտեցավ նրան։ Պետրոյի մահից հետո նա զարմանալի կերպով շուտ էր մոռացել վիշտը։ Սկզբում թախծում էր, վշտից դեղնում և նույնիսկ կարծես պառավում։ Բայց հենց որ փչեց գարնանային զեփյուռը, հենց որ արևը մի քիչ տաքացրեց երկիրը, Դարյայի վիշտը չքացավ հալված ձյան հետ։ Նրա երկարավուն թշերը ծաղկեցին նորբին կարմրությամբ, փայլեցին մինչ այդ մի փոքր խամրած աչքերը, քայլվածքը ստացավ առաջվա կոտրատվող թեթևությունը... Վերադարձան նաև հին սովորությունները. նրա հոնքերի բարակ աղեղները էլի ծածկվեցին սև ներկով, թշերը փայլեցին ճարպից. վերադարձավ նաև կատակելու, Նատալյային անպարկեշտ խոսքով շփոթեցնելու ցանկությունը. նրա շրթունքների վրա ավելի ու ավելի հաճախ էր երևում ինչ-որ սպասումով մշուշված ժպիտը... Բուռնաթափ կյանքը հաղթանակ տարավ։

Դարյան մոտեցավ Գրիգորիին, ժպտալով կանգ առավ... Նրա գեղեցիկ դեմքից վարունգի օծանելիքի արբեցուցիչ հոտ էր գալիս։

— Գուցե մի բանով օգնեմ, Գրիշենկա։

— Օգնելու կարիք չկա։

— Ախ, Գրիգորի Պանտելևիչ, ինչքա՞ն խիստ եք դարձել ինձ հետ, այրի կնկա հետ։ Չեք ժպտում և մինչև իսկ ուսդ էլ չեք շարժում։

— Գնայիր եփել-թափելու, օյինբազ։

— Ախ, դա ինչի՞ է պետք։

— Օգնեիր Նատալյային։ Հրեն, Միշատկան վազվզում է կեղտի մեջ կորած։

— Ակաս-մակաս այդ էր պակաս։ Դուք նրանց վաստակեք, իսկ ես կեղտը լվամ, հա՞։ Ո՞նց չէ։ Քո Նատալյան ճագարի պես բեղմնավոր է։ Նա հլա դեռ մի տասը հատ էլ կբերի։ Թե որ ես դրանց բոլորին մաքրեմ, էլ ձեռներիս մեջ հալ չի մնա։

— Լավ, հերիք է, գնա՛։

— Գրիգոր Պանտելեիչ, հիմի խուտորում կա միայն մի կազակ,— դուք եք։ Մի՛ վռնդեք, թողեք գոնե հեռվից մտիկ անեմ ձեր սև, գրավիչ բեղերին։

Գրիգորին ծիծաղեց, քրտնած ճակատից ետ գցեց մազերը։

— Ամա թե զուչաղ ես, հա՛-ա։ Պետրոն ո՞նց էր ապրում քեզ հետ... Դու երևի ձեռդ ընկածին բաց չես թողնում։

— Այդպես էլ իմացեք,— հպարտությամբ հաստատեց Դարյան, ու խաղացկուն, կկոցված աչքերով Գրիգորիին նայելով, շինծու վախով դարձավ դեպի տունը.— Վա՛յ, ինձ այնպես թվաց, թե Նատալյան դուրս եկավ... Այնքան խանդոտ է,— ուղղակի չտեսնված բան։ Այսօր, երբ ճաշ էինք անում, ես մի անգամ նայեցի քեզ, ու նրա երեսը թունդ մթնեց։ Իսկ ինձ երեկ ջահել կնանիքն ասում էին. «Սա ի՞նչ քամբախտություն է, կազակներ չկան, իսկ ձեր Գրիշկան եկել է տուն ու կնկանից պոկ չի գալիս։ Բա մենք,— ասում են,— ո՞նց պիտի ապրենք։ Թեկուզ նա շատ վերքեր է ստացել, թեկուզ առաջվա Գրիգորիի կեսն է մնացել, ամա մենք այդ կեսով էլ բավական կլինեինք։ Ասա նրան, որ գիշերը խուտորում ման չգա, թե չէ կբռնենք, գլխին փորձանք կգա»։ Ես էլ նրանց ասի՝ «Չէ, կնանիք, մեր Գրիշկան միայն ուրիշ խուտորներում է կամքից թույլ, իսկ տանը փեշը կարել է Նատալյայի փեշին ու չի հեռանում նրանից։ Մոտիկ ժամանակներից նա սուրբ է դառել...»

— Ամա՛ թե փուչն ես, հա՛-ա,— ծիծաղելով, անչար ասաց Գրիգորին,— լեզուդ իսկը ցախավել է։

— Ինչ որ կամ, այս եմ։ Իսկ քո սիրունիկ, չքսվող Նատաշենկան երեկ վռնդեց քեզ, հա՞։ Տեղն է քեզ, բուղա, էլ օրենքի սահմանից չես անցնի։

— Այ թե ինչ... Դու գնա, Դաշկա։ Ուրիշի գործերին մի խառնվի։

— Ես չեմ խառնվում։ Նրա համար եմ ասում, որ քո Նատալյան հիմար է։ Մարդը եկել է, իսկ նա փքվում է, կոտրատվում ոնց որ կոպեկանոց բլիթ, սնդուկի վրա պառկեց... Իսկ ես հիմի կազակից չէի հրաժարվի։ Թե որ ձեռս ընկներիր... Ես քեզ պես քաջին էլ կվախեցնեի։

Դարյան կրճտացրեց ատամները, քրքջաց ու քայլեց դեպի տուն՝ նայելով ծիծաղող ու շփոթված Գրիգորիին, փայլեցնելով ոսկե գինդերը։

«Բախտավորվեցիր որ մեռար, Պետրո աղբերս...— մտածում էր ուրախացած Գրիգորին,— սա ոչ թե Դարյա է, այլ իսկական սատանա։ Միևնույն է, վաղ թե ուշ սրա երեսից կմեռնեիր»։

XLVII

Բախմուտկին խուտորում մարում էին վերջին լույսերը։ Թեթև սառնամանիքը սառույցի ամենաբարակ թաղանթով էր ծածկում ջրափոսերը։ Խուտորից, արոտավայրից դենը, նախորդ տարվա խոզանի վրա գիշերելու էին իջել ուշացած կռունկները։ Հյուսիս-արևելքից փչող թեթև քամին խուտոր էր բերում նրանց զուսպ, հոգնած կռնչոցը։ Եվ դա մեղմակի նրբերանգում, ընդգծում էր ապրիլյան գիշերվա խաղաղ անդորրությունը։ Այգիներում խիտ ստվերներ էին կուտակվում. որտեղից-որտեղ բառաչեց մի կով. հետո ամեն ինչ լռեց։ Կես ժամի չափ խուլ անդորրություն էր տիրում, որը միայն երբեմնակի խախտվում էր գիշերն էլ թռչող կտցարների թախծոտ փոխականչով ու բադերի անհամար թևերի շառաչուն սվսվոցով. բադերի երամները թռչում էին, շտապում՝ հասնելով վարարած Դոնի առափնյա, հեղեղված, լայնարձակ մարգագետինները... Հետո էլ խուտորի ծայրափողոցում մարդկային ձայներ հնչեցին, փաթաթած պապիրոսների կարմիր կայծեր երևացին, լսվեց ձիու փնչոց, ձիերի սրմբակներով կոխկրտվող, կիսասառած ցեխի կրճկրճոց։ Հեծյալ պարեկը վերադարձավ խուտոր, որտեղ գտնվում էր 6-րդ առանձին բրիգադի կազմի մեջ մտնող կազակական ապստամբական երկու հարյուրյակ։ Կազակները տեղավորվեցին խուտորի ծայրում գտնվող մի խրճիթի բակում. խոսքեր փոխանակելով, ձիերը կապեցին բակի մեջտեղում ընկած սահնակին, նրանց կեր տվին։ Մեկը խռպոտ, հաստ ձայնով սկսեց մի պարերգ՝ հստակորեն արտասանելով բառերը, հոգնածությամբ ու դանդաղ երգելով.

Կամաց-կամաց գնում էի,
Գնում էի շունչս պահած,
Ու առաջվա սիրով տարված,
Աղջկա հետ կատակ արի...

Ու իսկույն ձայնակցողի աշխույժ, բարակ ձայնը թըռչունի պես թռավ շաչող, թավ ձայնից էլ վեր և ուրախ, եռանդով սկսեց.

Թունդ հերսոտեց իմ անուշս,
Սիլլա տվեց, գաղեց թուշս,
Ու իմ սիրտը կազակական
Խիստ դառնացավ, ատեց նրան...

Երգին միացան էլի մի քանի թավ ձայներ, նրա տեմպն արագացավ, աշխուժացավ, ու ձայնակցողի տենորը բարձր նոտաներ վերցնելով, արդեն ավելի ուժեղ և խիստ ուրախ էր հնչում.

Ես աչ ձեռքս վեր քշտեցի,
Իր ականջին պինդ դմբեցի,
Է՛խ, երեսը նրա մարջան
Կաս-կարմրեց ոնց պորինջան։
Կաս-կարմրեց, ինքն էլ տզզաց,
Ու դարձավ ինձ այսպես ասաց.
«Ի՞նչ ընկեր ես դու ինձ հիմա,
Երբ սիրում ես օխտը կնկա,
Ութերորդն էլ որբևայրի,
Իններորդն էլ կինդ է, էլի՛,
Ես էլ տասը, չան որդենի...»

Հողմաղացից դենը պահպանական հսկողություն կատարող կազակները լսում էին թե՛ կռունկների կռնչոցը ամայացած արտերում, թե՛ կազակների երգը և բադերի թեվերի սվսվոցը գիշերային անթափանց խավարում։ Նրանց համար ձանձրալի էր գիշերով պառկել պաղ, սառնամանիքից կոշտացած գետնին։ Ոչ կարող էին ծխել, ոչ խոսել, ոչ էլ տաքանալ քայլելով կամ մուշտակովով։ Պառկի՛ր հա պառկիր արևածաղկի նախորդ տարվա ցողունների մեջ, նայիր խավարով պատած տափաստանին, լսիր՝ ականջդ գետնին դրած։ Իսկ տասը քայլ հեռավորությամբ ոչինչ չի երևում, ապրիլյան գիշերն էլ այնքան հարուստ է շշուկներով, մթության միջից այնքան շատ, կասկածելի ձայներ են գալիս, որ դրանցից յուրաքանչյուրը անհանգստություն է առաջացնում. «Չի՞ գալիս արդյոք, չի՞ սողում կարմիրբանակային հետախուզախումբը»։ Կարծես թե հեռվից լսվում է կոտրըվող քոլի ճքոցը, զուսպ հնոց... Երիտասարդ կազակ Վիպրյաժկինը ձեռնոցով սրբում է լարվածությունից առաջացած արցունքի կաթիլը, արմունկով բոթում հարևանին։ Վերջինս ննջում է գունդ ու կծիկ եղած, կաշվե փամփշտանոցը գլխատակին դրած. ճապոնական փամփշտակալը ցավեցնում է նրա կողերը, բայց նա ծուլանում է ավելի հարմար պառկել, չի ուզում, որ գիշերային ցրտի հոսանքը թափանցի շինելի պինդ ծածկած փեշերի տակ։ Քոլախոտերի խշշոցը և հնոցը սաստկանում են ու անսպասելիորեն հնչում հենց Վիպրյաժկինի կողքին։ Նա քիչ բարձրանում է արմունկի վրա, տարակուսանքով նայում խիտ քոլախոտերի միջով ու դժվարությամբ նշմարում մի մեծ ոզնու ուրվագծերը։ Ոզնին արագորեն առաջ է շարժվում մկան հետքով, խոզի փոքրիկ մռութը կախած, ֆսսալով ու ասեղային մեջքը քսելով քոլախոտերի չոր ցողուններին։ Հանկարծ նա զգում է ինչ-որ թշնամական բանի ներկայությունը իրենից մի քանի քայլ հեռավորությամբ, ու բարձրացնելով գլխիկը, տեսնում է իրեն նայող մարդուն։ Մարդը թեթևացած արտաշնչում է օդը, շշնջում.

— Մունդրի՛կ սատանա։ Ո՞նց վախեցրեց, է՛...

Իսկ ոզնին շեշտակիորեն բարձրացնում է գլուխը, ներս է քաշում տոտիկները ու մի բոպե պառկում է մորթու փշերի մեջ կծկված, հետո դանդաղ ձգվում է, ոտներով շոշափում պաղ գետինը ու գլորվում սահող, գորշ գնդի նման՝ դիպչելով արևածաղկի ցողուններին, ճմռթելով փտած պատատուկի չոր մնացորդները։ Ու նորից իջնում է լռությունը։ Գիշերն էլ հեքիաթի պես է...

Խուտորում հնչեց երկրորդ աքլորականչը։ Երկինքը պարզվեց։ Ամպերի նոսր ծածկոցի միջից երևացին առաջին աստղերը։ Հետո քամին քշեց ամպերը, ու երկինքը անթիվ ու անհամար ոսկե աչքերով նայեց երկրին։

Հենց այդ ժամանակ էլ Վիպրյաժկինը լսեց ձիու պարզորոշ քայլք, քոլախոտերի շրշյուն, ինչ-որ մետաղե առարկայի

շաչյուն, մի քիչ հետո էլ՝ թամքի ճռռոց։ Լսեցին նաև մյուս կազակները։ Մատները դրին հրացանների հրահաններին։

— Պատրաստվեք,— շշնջաց դասակապետի օգնականը։

Աստղալից երկնքի ֆոնի վրա ուրվագծվեց մի ձիավորի որոշակի սիլուետը։ Մեկը ձին քայլեցնելով գալիս էր խուտորի կողմը։

— Կա՛նգ առ... Ո՞վ է գալիս... Ի՞նչ է անցաբանը...

Կազակները վեր թռան, պատրաստվելով կրակելուց։ Ձիավորը կանգ առավ, ձեռները վեր բարձրացրեց։

— Ընկերնե՛ր, մի՛ կրակեք։

— Ի՞նչ է անցաբանը։

— Ընկերնե՛ր...

— Ի՞նչ է անցաբանը։ Դա-սա՛կ...

— Սպասեք... Ես մենակ եմ... Անձնատուր եմ լինում...

— Սպասեք, տղերք։ Չկրակե՛լ... Կենդանի կբռնենք...

Դասակապետի օգնականը վազելով մոտեցավ ձիավորին։ Վիպրյաժկինը բռնեց նրա ձիու սանձից։ Ձիավորը ոտն անցկացրեց թամքի վրայից, իջավ ձիուց։

— Ո՞վ ես, կարմի՞ր ես։ Ըհը՛մ, տղերք, նա է։ Հրե՛ս, փափախի վրա աստղ կա։ Բռնվեցիր, հա՛-ա...

Ձիավորը ճմլկոտելով ոտները, արդեն հանգիստ ասաց.

— Ինձ տարեք ձեր պետի մոտ։ Ես նրան մեծ կարևորություն ունեցող լուր եմ հաղորդելու։ Ես Սերդորյան գնդի հրամանատարն եմ ու եկել եմ բանակցություններ վարելու համար։

— Հրամանատա-ա-ա՞ր... Տղերք, սպանենք սրան, իժին։ Լուկա, թող ես հիմի սրան...

— Ընկերներ, դուք ինձ միշտ էլ կարող եք սպանել, բայց նախ՝ թողեք ես ձեր պետին հաղորդեմ այն, ինչի համար եկել եմ։ Կրկնում եմ, սա ահագին կարևորություն ունեցող գործ է։ Խնդրեմ, վերցրեք իմ զենքերը, եթե վախենում եք, որ ես կփախչեմ...

Կարմիր հրամանատարը սկսեց արձակել թրակալը։

— Հանի, հանի,— նրան շտապեցնում էր կազակներից մեկը։

Հանած նագանն ու թուրը ընկան դասակապետի օգնականի ձեռքը։

— Խուզարկեցեք սերդորյան հրամանատարին,— հրամայեց նա՝ նստելով կարմիր հրամանատարին պատկանող ձիուն։

Բռնվածին խուզարկեցին։ Դասակապետի օգնականը և կազակ Վիպրյաժկինը նրան տարան դեպի խուտորը։ Բռնվածը ոտով էր գնում, նրա կողքից քայլում էր Վիպրյաժկինը՝ ավստրիական հրացանը հորիզոնադիր բռնած, իսկ ետևից ձիով գնում էր դասակապետի գոհ օգնականը։

Տասը բոպե լուռ էին գնում։ Բռնվածը հաճախակի կանգ առնելով, վառում էր ծխախոտը, շինելի փեշի տակ վառում լուցկին, որպեսզի քամին չհանգցներ այն։ Ընտիր ծխախոտի հոտը համբերությունից հանեց Վիպրյաժկինին։

— Տուր ինձ էլ,— խնդրեց նա։

— Խնդրեմ։

Վիպրյաժկինը վերցրեց ծխախոտով լեցուն, երթային կաշվե պորտսիգարը, դրա միջից մի սիգարետ հանեց, իսկ պորտսիգարը դրեց իր գրպանը։ Կարմիր հրամանատարը լռեց, բայց մի քիչ հետո, երբ մտան խուտոր, հարցրեց.

— Դուք ինձ ո՞ւր եք տանում։

— Այնտեղ կիմանաս։

— Բայց և այնպե՞ս։

— Հարյուրյակի հրամանատարի մոտ։

— Դուք ինձ տարեք բրիգադի հրամանատար Բոգատիրյովի մոտ։

— Նա այստեղ չի։

— Ինչպես թե այստեղ չի։ Ինձ հայտնի է, որ նա երեկ շտարի հետ ժամանել է Բախմուտկին և հիմա այստեղ է։

— Դա մեզ հայտնի չի։

— Դե լավ, էլի, ընկերներ։ Ինձ հայտնի է, իսկ ձեզ հայտնի չէ... Դա ռազմական գաղտնիք չէ, մանավանդ որ այդ մասին արդեն իմացել են ձեր թշնամիները։

— Գնա, գնա։

— Ես գնում եմ։ Դե ուրեմն ինձ տարեք Բոգատիրյովի մոտ։

— Լռիր, ծառայության կանոններով ինձ չի թույլատրվում քեզ հետ խոսել։

— Իսկ պորտսիգարը վերցնելը թույլատրվո՞ւմ է ծառայության կանոններով։

— Շատ էլ չի թույլատրվում... Գնա ու սուս արա, թե չէ հիմի շինելդ էլ կհանեմ։ Ի՜հ, նեղացողիս մտիկ։

Հարյուրյակի հրամանատարին հազիվ զարթեցրին։ Նա բռունցքներով երկար տրորում էր աչքերը, հորանջում, դեմքը կնճռոտում և ոչ մի կերպ չէր կարողանում ըմբռնել այն, ինչ որ նրան ասում էր դասակապիտի ուրախացած օգնականը։

— Ո՞վ ես։ Սերդոբյան գնդի հրամանատա՞րը։ Հո չե՞ս փչում։ Տուր փաստաթղթերդ։

Մի քանի րոպեից հետո նա կարմիր հրամանատարի հետ գնաց բրիգադի հրամանատար Բոգատիրյովի բնակարանը։ Բոգատիրյովը հենց որ լսեց, թե բռնված ու բերված է Սերդոբյան գնդի հրամանատարը, վեր թռավ բոլորովին սթափված։ Նա կոճկեց շալվարը, տաբատակալը գցեց իր ամրակազմ ուսերին, վառեց հինգ գծանի լամպիկը, հարցրեց դռան մոտ ձիգ կանգնած կարմիր հրամանատարին.

— Դուք Սերդոբյան գնդի հրամանատա՞րն եք։

— Այո, ես Սերդոբյան գնդի հրմանատար Վորոնովսկին եմ։

— Նստեցեք։

— Շնորհակալ եմ։

— Ձեզ ինչպե՞ս... ի՞նչ պայմաններում բռնեցին։

— Ես ինքս էի գալիս ձեզ մոտ։ Ես ուզում եմ ձեզ հետ առանձին խոսել։ Հրամայեցեք, որ կողմնակիները դուրս գնան։

Բոգատիրյովը ձեռքով արավ, և կարմիր հրամանատարի հետ եկած հարյուրապետն ու բերանը բաց կանգնած տանտերը, որ շիկակարմիր մորուքով մի հնդավան էր,— դուրս ելան։ Բոգատիրյովը շփելով բոլորովին կնճռած, թուխ ու ձմերուկի պես կլոր գլուխը, միայն տակի կեղտոտ շապկով նստել էր սեղանի առաջ։ Նրա դեմքը, որ ուռած թշերով էր և անհարմար քնից առաջացած կարմիր բծերով, զուսպ հետաքրքրություն էր արտահայտում։

Վորոնովսկին, ցածրահասակ, ամրակազմ մի մարդ, որ քիչ նստած շինելով էր և ուսերից գցած սպայական փոկերով, շտկեց ուղիղ ուսերը. նրա սև, ծայրատ բեղերի տակին սահեց ժպիտը։

— Հուսով եմ, որ սպայի հետ պատիվ ունեմ խոսելու, այո՞։ Թույլ տվեք երկու խոսք իմ մասին, հետո արդեն խոսենք այն միջադեպի մասին, որով ես ձեզ մոտ եմ եկել... Ես ծագումով ազնվական եմ և ցարական բանակի շտաբս-կապիտան։ Գերմանիայի հետ եղած պատերազմի տարիներին ծառայում էի հարյուր տասնյոթերորդ Լյուբոմիրյան հրաձիգ գնդում։ Հազար ինն հարյուր տասնութ թվականին մոբիլիզացվել էի սովետական կառավարության դեկրետով իբրև կադրային սպա։ Ներկայումս, ինչպես արդեն ձեզ հայտնի է, Կարմիր բանակում Սերդոբյան գնդի հրամանատարն եմ։ Գտնվելով Կարմիր բանակի շարքերում, ես վաղուց առիթ էի փնտրում անցնել ձեր... բոլշևիկների դեմ պայքարողների կողմը։

— Երկար եք առիթ փնտրել, պարոն շտաբս-կապիտան...

— Այո, բայց ես ուզում էի քավել իմ մեղքը Ռուսաստանի առաջ և ոչ միայն անձնապես անցնել (այդ կարելի էր վաղուց իրագործել), այլև ինձ հետ բերել կարմիրբանակային զորամասը, իհարկե առավելապես առողջ նրա այն տարրերը, որոնք խաբված էին կոմունիստների կողմից ու ներգրավված էին այս եղբայրասպան պատերազմին։

Նախկին շտաբս-կապիտան Վորոնովսկին նեղլիկ, գորշ աչքերով նայեց Բոգատիրյովին ու, նկատելով նրա անվրստահ ժպիտը, շիկնեց աղջկա նման, վրա տվեց.

— Բնական է, պարոն Բոգատիրյով, որ դուք կարող եք որոշ անվստահություն տածել դեպի ինձ և իմ խոսքերը... Ակներև է, որ եթե ես ձեր տեղը լինեի, նույնպիսի զգացումներ կապրեի։ Դուք ինձ թույլ տվեք դա ապացուցել փաստերով... Անհերքելի փաստերով...

Շուռ տալով շինելի փեշը, նա պաշտպանական գույնի շալվարի գրպանից հանեց մի փոքրիկ դանակ, կռացավ այնպես, որ ճռճռացին ուսերից անցկացրած փոկերը, ու զգուշությամբ սկսեց քանդել շինելի պինդ կարված բոլորքը։ Մի բոպեից հետո քանդած տեղից հանեց դեղնած թղթեր և մի փոքրիկ լուսանկար։

Բոգատիրյովը ուշադրությամբ կարդաց փաստաթղթերը

Դրանցից մեկում ասված էր՝ «Սույն ներկայացնողը իրոք 117-րդ Լյուբոմիրյան հրաձիգ գնդի պորուչիկ Վորոնովսկին է, որը բուժումից հետո երկու շաբաթվա արձակուրդով մեկնում է իր բնակավայրը,— Սմոլենսկի նահանգը»։ Վկայականը կնքված էր և այն ստորագրել էր 14-րդ Սիբիրյան հրաձիգ դիվիզիայի № 8 շրջիկ հոսպիտալի գլխավոր բժիշկը։ Վորոնովսկու անվան մյուս փաստաթղթերը անժխտելիորեն ցույց էին տալիս, որ Վորոնովսկին իրոք սպա էր եղել, իսկ լուսանկարից Բոգատիրյովին նայեցին երիտասարդ փոխպորուչիկ Վորոնովսկու ուրախ, նեղլիկ աչքերը։ Պաշտպանական գույնի գեղեցիկ ֆրենչի վրա շողում էր սպայական գեորգևյան խաչը, և ուսադիրների կուսական սպիտակությունը է՛լ ավելի պարզ էր երանգավորում փոխպորուչիկի թուխ այտերը, բեղերի մուգ շերտը։

— Ուրեմն ի՞նչ,— հարցրեց Բոգատիրյովը։

— Ես եկել եմ ձեզ հաղորդելու, որ ես իմ օգնականի, նախկին պորուչիկ Վոլկովի հետ միասին ագիտացիա եմ մղել կարմիրբանակայինների մեջ, ու Սերդոբյան գնդի ամբողջ կազմը, իհարկե բացառությամբ կոմունիստների, պատրաստ է ուղածդ բոպեին անցնել ձեր կողմը։ Կարմիրբանակայինները համարյա բոլորն էլ Սարատովի ու Սամարայի նահանգների գյուղացիներ են։ Նրանք համաձայն են կռվել բոլշևիկների դեմ։ Մեզ անհրաժեշտ է ձեզ հետ իսկույն ևթ համաձայնության գալ գնդի անձնատուր լինելու պայմանների մասին։ Գունդը այժմ գտնվում է Ուստ-Խոպերսկում, ունի մոտ հազար երկու հարյուր մարտիկ, կոմբջիջում կան երեսունութ մարդ, պլյուս երեսուն հոգի տեղական կոմունիստներից կազմված դասակը։ Մենք կվերցնենք մեզ միացրած մարտկոցը, ըստ որում հավանորեն հարկավոր կլինի ոչնչացնել անձնակազմը, որովհետև այնտեղ գերակշռող մեծամասնությունը կոմունիստներ են։ Իմ կարմիրբանակայինների մեջ հուզմունք է տեղի ունենում այն ծանրությունների պատճառով, որ նրանց հայրերը կրում են շնորհիվ պարենային մասնատրման։ Մենք օգտվեցինք այդ հանգամանքից և նրանց համոզեցինք անցնել կազակների կողմը... այսինքն՝ ձեր կողմը։ Իմ զինվորները վախենում են, որ չլինի թե գնդի անձնատուր լինելու ժամանակ

նրանց դեմ բռնություն գործադրվի... Ահա այս հարցի շուրջը ես պետք է պայմանագրվեմ ձեզ հետ, իսկ դրանք, իհարկե, մասնավոր բաներ են։

— Ի՞նչ բռնություն կարող է լինել։

— Դե, սպանություններ, կողոպուտներ...

— Ոչ, այդ չենք թույլ տա։

— Ու մի բան էլ. զինվորները պահանջում են, որ Սերդոբյան գունդը պահպանվի իր կազմով ու բոլշևիկների դեմ կռվի ձեզ հետ միասին, բայց որպես ինքնուրույն մարտական միավոր։

— Ես այդ մասին ձեզ...

— Գիտեմ, գիտեմ։ Դուք կբանակցեք ձեր բարձրագույն հրամանատարության հետ և կհայտնեք մեզ։

— Այո, ես պետք է հաղորդեմ Վեշկի։

— Ներեցեք, ես խիստ քիչ ժամանակ ունեմ, ու եթե մի ավելորդ ժամ ուշանամ, գնդի կոմիսարը կարող է նկատել իմ բացակայությունը։ Ես գտնում եմ, որ մենք համաձայնության կգանք անձնատուր լինելու պայմանների մասին։ Շտապեցեք հաղորդել ինձ ձեր հրամանատարության որոշումը։ Գունդը կարող են փոխադրել Դոնեցի կողմը կամ նոր համալրում կուղարկեն, ու այդպիսով...

— Այո, ես հենց հիմա հատուկ ձիավոր կուղարկեմ Վեշկի։

— Մի բան էլ. հրամայեցեք ձեր կազակներին, որ վերադարձնեն իմ զենքերը։ Ինձ ոչ միայն զինաթափեցին,— Վորոնովսկին կտրեց իր կոկիկ խոսքը և կիսով չափ շփոթվելով ժպտաց,— այլև վերցրին... պորտսիգարս։ Այդ, իհարկե, դատարկ բան է, բայց պորտսիգարը ինձ համար թանկ է իբրև գերդաստանական առարկա...

— Ձեզ ամեն ինչ կվերադարձնեն։ Ինչպե՞ս հաղորդեմ ձեզ, երբ Վեշկիից պատասխան ստանամ։

— Երկու օրից հետո Ուստ-Խոպերսկից մի կին կգա ձեզ մոտ, Բախմուտկին։ Նշանաբանը... ասեք թող լինի «միություն»։ Նրան էլ կհաղորդեք։ Անպայման բանավոր կերպով...

Կես ժամից հետո Մակսաևի հարյուրյակի կազակներից մեկը քառատրոփով սլանում էր դեպի արևմուտք, Վեշենսկայա....

Մյուս օրը Կուդինովի անձնական սուրհանդակը ժամանեց Բախմուտկին, գտավ բրիգադի հրամանատարի բնակարանը և նույնիսկ չկապելով ձին, մտավ տուն, Գրիգորի Բոգատիրյովին տվեց մի ծրար՝ «Խիստ շտապ։ Բոլորովին գաղտնի» մակագրությամբ։ Բոգատիրյովը բուռն հետաքրքրությամբ կոտրտեց զմուռսե կնիքը։ Վերին Դոնի օկրուգային խորհրդի բլանկի վրա պոչավոր տառերով, հենց Կուդինովի ձեռքով գրված էր.

«Բարի աջողում, Բոգատիրյով։ Խիստ ուրախալի նորություն է։ Քեզ լիապորում ենք բանակցություններ մղել սերդոբցիների հետ և ամեն կերպ համոզել նրանց, որ անձնատուր լինեն։ Առաջարկում եմ զիջումներ անել նրանց ու խոստանալ, որ գունդը ամբողջովին կընդունենք և նույնիսկ չենք դինաթափի։ Անվերապահ պայման դիր, որ բռնվեն ու հանձնվեն գնդի կոմունիստները, կոմիսարը և որ գլխավորն է՝ մեր Վեշենսկու, Ելանսկու և Ուստ-Խոպերսկու կոմունիստները։ Թող անպայման բերեն մարտկոցը, զումակը, նյութական մասը։ Ամեն կերպ արագացրու այդ գործը։ Որքան կարելի է շատ ուժ կենտրոնացրու այնտեղ, ուր ժամանելու է գունդը, կամաց-կամաց շրջապատիր և իսկույն սկսիր զինաթափումը։ Եթե դիմադրեն, կոտորիր բոլորին մինչև վերջին մարդը։ Գործիր զգուշությամբ, բայց վճռականորեն։ Հենց որ զինաթափես, ամբողջ գունդը ուղարկիր Վեշենսկայա։ Նրանց քշիր Դոնի աջ կողմով, այդպես ավելի հարմար է, որովհետև այդ կողմից թե՛ ֆրոնտը հեռու կլինի և թե՛ տափաստանն էլ մերկ է,— չեն կարողանա փախչել, եթե խելքներին փչի այդպիսի փորձ անել։ Նրանց ուղարկիր Դոնի ափով, խուտորների միջով, իսկ նրանց ուղեկցելու համար երկու հեծյալ հարյուրյակ կարգիր։ Վեշկիում մենք նրանցից երկուական, երեքական մարտիկ կուղարկենք հարյուրյակները. կտեսնենք, թե ոնց կխփեն յուրայիններին։ Հետո արդեն մեր գործը չի, թե ինչ կլինի. կմիանանք մերոնց, որոնք Դոնեցի մյուս կողմումն են, այն ժամանակ մերոնք թող դատեն նրանց ու ինչպես ուզենան, այնպես էլ վարվեն նրանց հետ։ Ինձ համար մեկ է,— թեկուզ բոլորին էլ կախեն։ Ջեմ ափսոսի։ Ուրախանում եմ քո հաջողությամբ։ Ամեն օր հաղորդիր հատուկ սուրհանդակով։ Կուդինով»։

Նամակին ավելացրած էր.

«Եթե սերդոբցիները հանձնեն մեր տեղական կոմունիստներին, պանց ուժեղ հսկողության տակ քշիր Վեշկի, նույնպես խուտորների միջով։ Բայց ոչկրում ուղարկիր սերդոբցիներին։ Հանձնարարիր ուղեկցող նշանակել ամենահուսալի կաղակներին (ովքեր ավելի դաժան են ու ծեր են), թող դրանք քշեն-տանեն նրանց և վաղորոք այդ մասին լայն չափով հաղորդեն ժողովրդին։ Հարկ չկա, որ մենք ձեռներս աղտոտենք նրանց վրա, կնանիքը նրանց կկոտորեն ցցերով, եթե գործը հմուտ ու խելացի կերպով դրվի։ Հասկացա՞ր։ Այս քաղաքականությունը մեզ ավելի ձեռնտու է. եթե նրանց գնդակահարենք, լուրը կարմիրներին էլ կհասնի, կասեն՝ կարմիրներին գնդակահարում ենք. իսկ այդպես ավելի լավ է,— ժողովրդին դրգռել նրանց դեմ, մարդկանց բարկությունը, ոնց որ կապած շանը, բաց թողնել նրանց վրա։ Ինքնադատաստան, պրծավ-գնաց։ Ոչ քեզ հարցնող կլինի, ոչ էլ պատասխան կտաս»։

XLVIII

Ապրիլի 12-ին Առաջին Մոսկովյան գունդը չարաչար տուժեց ապստամբների դեմ մղած կռվում, Ելանսկայա ստանիցայի Անտոնով խուտորի մերձակայքում։

Լավ ծանոթ չլինելով տեղանքին, կարմիրբանակային շղթաները կռվով մտան խուտոր։ Կազակական ցաք ու ցրիվ տները գտնվում էին ավազախառն, պինդ, փոքրիկ հողամասերի, ասես կղզիների վրա, իսկ ցախով հատակած փողոցներն ու նրբանցքները ձգվում էին անանցելի, ճահճային խրուտներով։ Խուտորը ընկղմված էր լաստենու խիտ մացառուտների մեջ, ճլոտ, ճահճային տեղանքում։ Նրա ծայրից հոսում էր Ելանկա գետակը, որ ծանծաղ էր, բայց տիղմոտ, խրուտ հատակով։

Առաջին Մոսկովյան գնդի հրաձիգները շղթա կազմած շարժվեցին խուտորի միջով, բայց հենց որ անցան առաջին տները ու մտան լաստենուտը, պարզվեց, որ անկարելի է շղթայով անցնել լաստենուտից։ 2-րդ գումարտակի հրամանատարը,— կամակոր մի լատիշ,— չլսեց մի վաշտապետի փաստարկները, որ հազիվ էր ազատել խորունկ տիղմի մեջ խրված իր ձին, հրաման տվեց՝ «Դեպի առա՛ջ», ու առաջինը համարձակորեն ընթացավ թույլ, երերուն գետնի վրայով։ Փոքր-ինչ տատանվելով, կարմիրբանակայինները հետևեցին նրան ձեռների վրա տանելով գնդացիրները։ Մինչև ծնկները տիղմի մեջ թաղվելով, անցան մի հիսուն սաժեն, ու հենց այստեղ աջ թևից շղթայով մեկ հաղորդեցին՝ «Շրջանցո՛ւմ են», «Կազակնե՛րը», «Շրջապատեցի՛ն»։

Ապստամբական երկու հարյուրյակ իսկապես շրջանցեցին գումարտակը, խփեցին թիկունքից։

1-ին ու 2-րդ գումարտակները լաստենուտում կորցրին իրենց կազմի համարյա մեկ երրորդ մասը, նահանջեցին։

Այս մարտում Իվան Ալեքսեևիչը ոտքից վիրավորվեց ապստամբների ինքնագործ գնդակով։ Միշկա Կոշևոյը նրան գրկած՝ դուրս բերեց կռվից և սվինահար անելու սպառնալիքով մի կարմիր բանակայինի ստիպեց նրան վերցնել փամփուշտների իր սայլակի վրա, որ սլանում էր թմբի վրայով։

Գունդը ետ շպրտվեց, քշվեց մինչև Ելանսկի խուտորը։ Պարտությունը կործանարար հետևանք ունեցավ Դոնի ձախ կողմով առաջացող կարմիրբանակային զորամասերի հարձակման համար։ Մալկինը ստիպված եղավ Բուկանովսկուց դեպի վերստ ետ քաշվել դեպի Հյուսիս, Սլաշչևսկայա ստանիցան. հետո էլ, նեղվելով ապստամբական ուժերից, որոնք կատաղի հարձակում էին գործում ու թվով բազմապատիկ չափով գերազանցում էին նրա գուգազից, սառցահոսանքից մի օր առաջ անցավ Խոպերը, ջրասույզ անելով մի քանի ձի, ու շարժվեց դեպի Կումիլժենսկայա ստանիցան։

1-ին Մոսկովյան գունդը, որի ճանապարհը Խոպերի գետաբերանում փակել էր սառցահոսանքը, Դոնի վրայով անցավ նրա աջ ափը. սպասելով համալրման, կանգ առավ Ուստ-Խոպերսկայա ստանիցայում։ Շուտով Սերդոբյան գունդը ժամանեց այնտեղ։ Նրա կադրերն իրենց կազմով խիստ տարբերվում էին 1-ին Մոսկովյան գնդի կադրերից։ Բանվորները,— մոսկվացիները, տուլացիները, Նիժնի-Նովգորոդցիները, որոնք Մոսկովյան գնդի մարտական միջուկն էին կազմում,— կռվում էին արիաբար, համառորեն, հաճախ ձեռնամարտի էին բռնվում ապստամբների հետ, ամեն օր ոչնչացված ու վիրավորված տասնյակ մարտիկների կորուստ էին ունենում։ Միայն Անտոնովսկում պատրաստված թանկարդը ժամանակավորապես շարքից հանեց գունդը, բայց, նահանջելով, նա ոչ մի գումակային փամփշտատար սայլակ. ոչ մի արկղ փամփուշտ չթողեց թշնամիներին։ Իսկ սերդոբցիների մի վաշտ Յագոդինսկի խուտորի մոտ հենց առաջին կռվում չդիմացավ ապստամբների հեծելազորային

գրոհին. տեսնելով կազակների հոծ շղթան, թողեց խրամատները և անկասկած ամբողջովին կթրատվեր, եթե չլինեին գնդացրորդ կոմունիստները, որոնք գնդացրային մբրրկանման կրակով ետ մղեցին գրոհը։

Սերդոբյան գունդը հապճեպորեն կազմվել էր Սերդոբսկ քաղաքում։ Կարմիրբանակայինների մեջ, որոնք բոլորն էլ Սարատովի նահանգի չափահաս գյուղացիներ էին, պարզապես այնպիսի տրամադրություններ էին նկատվում, որոնք բնավ չէին նպաստում մարտական ոգու բարձրացման։ Վաշտերում չափից դուրս շատ էին անգրագետները և գյուղի ունևոր-կուլակային տարրերին պատկանողները։ Գնդի հրամկազմի կեսը կազմված էր նախկին սպաներից. կոմիսարը,— թույլ բնավորություն ունեցող և կամքից զուրկ մի մարդ,— կարմիրբանակայինների մեջ հեղինակություն չուներ. իսկ դավաճանները,— գնդի հրամանատարը, շտաբի պետը և երկու վաշտապետ, մտադրված լինելով գունդը հանձնել ապստամբներին, ոչինչ չտեսնող բջիջի աչքի առաջ, կոնտրռևոլյուցիոն կերպով տրամադրված, գնդի մեջ խցկված կուլակների միջոցով հանցավոր աշխատանք էին կատարում կարմիրբանակային մասսայի բարոյալքման համար, հմուտ կերպով ագիտացիա էին մղում կոմունիստների դեմ, թերահավատություն էին սերմանում ապստամբության ճնշման պայքարի հաջողության նկատմամբ՝ նախապատրաստելով գնդի անձնատուր լինելը։

Շտոկմանը, որ երեք սերդոբցիների հետ մի բնակարանում էր գտնվում, անհանգստությամբ հետամուտ էր լինում կարմիրբանակայիններին և վերջնականապես համոզվեց գնդի վրա կախված լրջագույն սպառնալիքի հարցում, երբ մի անգամ խիստ ընդհարվեց սերդոբցիների հետ։

Ամսի 14-ին, արդեն մթնշաղին 2-րդ վաշտի երկու սերդոբցի եկան նրա բնակարանը։ Նրանցից մեկը, Գորիգաև՝ ազգանունով, առանց բարև տալու, նողկալի ժպիտը երեսին նայելով Շտոկմանին և մահճակալի վրա պառկած Իվան Ալեքսեևիչին, ասաց.

— Ա՛յ թե կռվելով ուր հասանք։ Տանը մեր հարազատներից վերցնում են հացը, իսկ այստեղ ստիպված ես կռվել հայտնի չէ ինչի համար...

— Քեզ հայտնի չէ՞, թե ինչի համար ես կռվում, հա՞-ա,— խիստ տոնով հարցրեց Շտոկմանը։

— Այո, հայտնի չէ։ Կազակները նույնպիսի հողագործներ են, ինչպես և մենք։ Գիտենք, թե նրանք ինչի դեմ են ապստամբել։ Գիտենք...

— Իսկ դու գիտե՞ս, սրիկա, թե ում լեզվով ես խոսում. սպիտակ գվարդիականի լեզվո՛վ,— տաքացավ սովորաբար զուսպ Շտոկմանը։

— Դու սրիկա ասելուց վազն արի, հա՛-ա, թե չէ կշրմփացնեմ բեղերիդ... Լսո՞ւմ եք, տղերք, հլա սրա՛ն մտիկ։

— Կամաց, կամաց, մորուքավոր։ Մենք շատ ենք տեսել ձեզ նմաններին,— մեջ մտավ մի ուրիշը, որ ցածրահասակ էր, պինդ՝ ինչպես ալյուրով լեփ-լեցուն չվալը.— Կարծում ես եթե կոմունիստ ես, ուրեմն մեր բկի՞ն պիտի չոքես։ Զգո՛ւշ, թե չէ կզարկենք ու դուրս կթափենք քո եռանդը։

Նա իր մարմնով պաշտպանեց լղարիկ Գորիգասովին, քշեց Շտոկմանի վրա՝ կարճլիկ, ուժեղ ձեռները մեջքին դրած, խաղացնելով աչքերը։

— Այդ ի՞նչ է... Բոլորդ էլ սպիտակների պե՞ս եք տրամադրված,— շնչասպառ հարցրեց Շտոկմանը և ուժով ետ հրեց իրեն վրա տվող կարմիրբանակայինին։

Վերջինս ճոճվեց, կարմրատակեց, ուզում էր բռնել Շտոկմանի թևից, բայց Գորիգասովը զսպեց նրան.

— Թող, գործ չունես։

— Դրանք կոնտրռևոլյուցիոն խոսքեր են։ Մենք ձեզ կդատենք իբրև սովետական իշխանության դավաճանների։

— Ամբողջ գունդը հո չե՞ս ուղարկի տրիբունալ,— պատասխանեց այն կարմիրբանակայիններից մեկը, որոնք Շտոկմանի հետ միևնույն բնակարանում էին գտնվում։

Այդ կարմիրբանակայինին պաշտպանեցին.

— Կոմունիստներին շաքար էլ են տալիս, պապիրոս է՛լ։ Իսկ մեզ համար չկա։

— Սուտ ես ասում,— գոչեց Իվան Ալեքսեևիչը՝ քիչ բարձրանալով մահճակալի վրայից,— ստանում ենք նույնը, ինչ որ դուք...

Շտոկմանը առանց մի խոսք ասելու հագնվեց, դուրս գնաց։ Նրան չպահեցին, բայց ետևից ծաղրական բացականչություններ արեցին։

Շտոկմանը գնդի կոմիսարին գտավ շտաբում։ Նրան կանչեց մի ուրիշ սենյակ, հուզված հաղորդեց կարմիրբանակայինների հետ ունեցած ընդհարումը, առաջարկեց ձերբակալել նրանց։ Կոմիսարը թիմարելով վառ-շիկակարմիր մորուքը, լսեց նրան, անվճռականորեն շտկեց եղջերային շրջանակով ակնոցը։

— Վաղը կհրավիրենք բջջի ժողով, կքննարկենք դրությունը։ Իսկ այդ տղաներին ձերբակալելը տվյալ պայմաններում ես հնարավոր չեմ համարում...

— Ինչո՞ւ,— կտրուկ հարցրեց Շտոկմանը։

— Գիտե՞ք, ընկեր Շտոկման... Ես ինքս եմ նկատում, որ մեր գնդում դրությունը անբարենպաստ է, հավանորեն գոյություն ունի մի ինչ-որ կոնտրռևոլյուցիոն կազմակերպություն, բայց չի հաջողվում այն հայտաբերել։ Իսկ գնդի մեծամասնությունը նրա ազդեցության տակ է։ Գյուղացիական տարերք է, ի՞նչ կարող ես անել։ Ես հաղորդել եմ կարմիրբանակայինների տրամադրության մասին և առաջարկել եմ ետ տանել ու լուծել գունդը։

— Ինչո՞ւ դուք հնարավոր չեք համարում հենց այժմ ձերբակալել սպիտակգվարդիականության այդ գործակալներին և ուղարկել դիվիզիայի ռևտրիբունալը։ Ախր նման խոսակցությունները ուղղակի դավաճանություն են։

— Այո, բայց դա կարող է անցանկալի էքսցեսներ և նույնիսկ ապստամբություն առաջացնել։

— Ահա թե ի՛նչ։ Հապա ինչո՞ւ դուք, տեսնելով մեծամասնության այդպիսի տրամադրությունը, վաղուց չեք հաղորդել քաղաքային։

— Ես ձեզ ասացի, որ հաղորդել եմ։ Չգիտես ինչու Ուստ-Մեդվեդիցայից դեռ պատասխան չի գալիս։ Հենց որ գունդը ետ կանչեն, մենք խստորեն կպատժենք կարգապահության բոլոր խախտողներին, և մասնավորապես այն կարմիրբանակայիններին, որոնք ասել են այժմ ձեր հաղորդածը...— Կոմիսարը կիտեց հոնքերը, շշնջալով ավելացրեց.— Ես կասկածում եմ Վորոնովսկուն և... շտաբի պետ Վոլկովին։ Հենց վաղը, բջջի ժողովից հետո ես կմեկնեմ Ուստ-Մեդվե-

դիցս։ Հարկավոր է շտապ միջոցներ ձեռք առնել այդ վտանգը լիկվիդացնելու համար։ Խնդրում եմ ձեզ գաղտնի պահել մեր խոսակցությունը։

— Բայց ինչո՞ւ չի կարելի այժմ կոմունիստների ժողով հրավիրել։ Չէ՞ որ ժամանակը չի սպասում, ընկե՛ր։

— Ես հասկանում եմ։ Բայց այժմ անկարելի է։ Կոմունիստների մեծամասնությունը գտնվում է ուղեկալներում և գաղոնքներում... Ես եմ այդ բանը պահանջել, որովհետև այսպիսի վիճակում անպարտիականներին վստահելն անըզգուշություն կլինի։ Մարտկոցն էլ, որտեղ մեծամասնությունը կոմունիստներ են, միայն այս գիշեր կժամանի Կրուտովսկուց։ Կանչել եմ գնդում տիրող այս հուզումների կապակցությամբ։

Շտոկմանը վերադարձավ շտաբից, գնդի կոմիսարի հետ ունեցած խոսակցությունը կարճ հաղորդեց Իվան Ալեքսեևիչին և Միշկա Կոշևոյին։

— Դու դեռ չե՞ս կարող քայլել,— հարցրեց նա Իվան Ալեքսեևիչին։

— Կաղում եմ։ Առաջ վախենում էի վերքը վնասել, իսկ հիմի ուզես-չուզես պետք է քայլես։

Շտոկմանը գիշերով մանրամասն հաղորդագրություն գրեց գնդի դրության մասին, ու կեսգիշերին արթնացրեց Կոշևոյին։ Ծրարը դնելով նրա ծոցը, ասաց.

— Իսկույն ձի գտիր ու թռիր Ուստ-Մեդվեդիցա։ Մեռիր, բայց այս նամակը հանձնիր Տասնչորսերորդ դիվիզիայի քաղբաժնին... Քանի՞ ժամից հետո կլինես այնտեղ։ Ո՞րտեղ պիտի ձի գտնես։

Միշկան տնքալով, թուխ-կարմրավուն սապոգները քաշեց ոտներին, պաուզաներով պատասխանեց.

— Ձին կգողանամ... ձիավոր հետախույզներից, իսկ Ուստ-Մեդվեդիցա կհասնեմ... ամենաշատը... երկու ժամում։ Հետախուզության ձիերը լավ չեն, թե չէ... մեկուկես ժամում էլ կհասնեի։ Ծառայել եմ իբրև ձիարած... Գիտեմ, թե ինչպես պետք է քամել... ձիու ամբողջ կայտառությունը։

Միշկան ծոցից հանեց ծրարը, դրեց շինելի գրպանը։

— Ինչո՞ւ այդպես,— հարցրեց Շտոկմանը։

— Որ շուտ հանեմ, եթե սերդոբյինները բռնեն։

— Հետո՞,— դեռ չհասկացավ Շտոկմանը։

— Էլ ի՞նչ «հետո»։ Հենց որ բռնեն, կհանեմ ծրարը և կուլ կտամ։

— Ապրե՛ս.— Շտոկմանը մի քիչ ժպտաց, մոտեցավ Միշկային, ու կարծես ծանր նախազգացումից նեղվելով, պինդ գրկեց նրան, ուժեղ համբուրեց սառն, դողդոջուն շրթունքներով.— Դե գնա։

Միշկան դուրս գնաց, ձիակապարանից բարեհաջող կերպով արձակեց հեծյալ հետախուզախմբի լավագույն ձիերից մեկը, քայլքով անցավ ուղեկալի կողքից՝ շարունակ ցուցամատը բոլորովին նոր հեծելազորային հրացանի հրահանին պահած, դաշտերի միջով հասավ ճանապարհը։ Միայն այնտեղ նա հրացանի փոկը գցեց ուսին, սկսեց սարատովյան կարճապոչ ձիուկից ամբողջ թափով «քամել» դրան ոչ հաստուկ կայտառությունը։

XLIX

Լուսաբացին մանր անձրև սկսվեց։ Աղմկեց քամին։ Արևելքից բարձրացավ սև, փոթորկաբեր մի ամպ։ Այն սերդոբյինները, որոնք Շտոկմանի ու Իվան Ալեքսեևիչի հետ մի բնակարանում էին ապրում, հենց որ լույսը մի քիչ բացվեց, վեր կացան, գնացին։ Կես ժամից հետո վազելով եկավ Ելանսկու կոմունիստ Տոլկաչևը, որը, ինչպես և Շտոկմանը իր տղերքի հետ, միացել էր Սերդոբյան գնդին։ Բանալով դուռը, նա հևալով գոչեց.

— Շտոկման, Կոշևոյ, տա՞նն եք, դուրս եկեք։

— Ի՞նչ է պատահել։ Եկ այստեղ.— Շտոկմանը դուրս ելավ նախասենյակ՝ քայլելիս հագնելով շինելը.— Եկ այստեղ։

— Փորձա՛նք,— շշնջաց Տոլկաչևը՝ Շտոկմանի ետևից մտնելով երկրորդ սենյակը.— Հիմա հետևազորը ստանիցայի մոտ... ստանիցայի մոտ ուզում էր զինաթափել Կրուտովսկուց եկած մարտկոցը։ Փոխհրաձգություն եղավ...

Մարտկոցավորները ետ մղեցին հարձակումը, հանեցին թընդանոթների փականքները ու նավակներով անցան Դոնի մյուս կողմը...

— Հետո՞, հետո՞,— շտապեցրեց Իվան Ալեքսեևիչը՝ տնքալով ու սապոգը հագնելով վիրավորված ոտին։

— Իսկ այժմ եկեղեցու մոտ միտինգ է... Ամբողջ գունդը...

— Պատրաստվիր, շո՛ւտ,— հրամայեց Շտոկմանը Իվան Ալեքսեևիչին ու բռնեց Տոլկաչևի տաք կուրտկայի թևքից.— Ո՞րտեղ է կոմիսարը, ո՞րտեղ են մյուս կոմունիստները...

— Չգիտեմ... Ոմանք փախան, իսկ ես եկա ձեզ մոտ։ Հեռագրատունը գրավված է, ոչ ոքի չեն թողնում... Պետք է փախչել։ Բայց ինչպե՞ս փախչել.— Տոլկաչևը իրեն կորցրած, ընկավ սնդուկին՝ ձեռները տանելով ծնկների արանքը։

Այդ ժամանակ մուտքի սանդուղքի վրա քայլեր դմբդմբացին, վեց հոգի կարմիրբանակային սերդոբցիներ խմբով ներխուժեցին խրճիթը։ Նրանց դեմքերը բորբոքված էին, չար վճռականություն էին արտահայտում։

— Կոմունիստնե՛ր, եկեք միտինգի, շո՛ւտ։

Շտոկմանը մի հայացք փոխանակեց Իվան Ալեքսեևիչի հետ, բարկությամբ իրար սեղմեց շրթունքները.

— Գնանք։

— Ձենքերը թողեք։ Կռվելու չեք գնում,— առաջարկեց սերդոբցիներից մեկը, բայց Շտոկմանը, որպես թե չլսելով, հրացանը կախեց ուսից, առաջինը դուրս եկավ։

Հազար հարյուր կոկորդները տարբեր ձայներով դժժում էին հրապարակում։ Ուստ-Խոպերսկայա ստանիցայի բնակիչները չէին երևում։ Նրանք թաքնվել էին տներում՝ վախենալով իրադարձություններից (դրանից մի օր առաջ ստանիցայում համառ լուրեր էին պտտվում, թե գունդը միանում է ապստամբներին, և ստանիցայում կարող է կռիվ լինել կոմունիստների հետ)։ Շտոկմանը առաջինը մոտեցավ կարմիրբանակայինների խուլ աղմկող բազմությանը, դես ու դեն նայեց՝ որոնելով գնդի հրամանատարական կազմից որևէ մեկին։ Նրա կողքից անցկացրին գնդի կոմիսարին։ Երկու կարմիրբանակային բռնել էին նրա թևերից։ Գունատ կոմիսարը, որին հրում էին ետևից, մտավ շարք չկանգնած

կարմիրբանակայինների բազմության մեջ։ Շտոկմանը մի քանի րոպե նրան կորցրեց աչքից, հետո էլ տեսավ արդեն ամբոխի մեջտեղում, ինչ-որ մեկի տանից բերված թղթախաղի սեղանի վրա կանգնած։ Շտոկմանը նայեց շուրջը։ Իր ետևում, հրացանին հենված, կանգնել էր կաղ դարձած Իվան Ալեքսեևիչը, իսկ վերջինիս կողքին—այն կարմիրբանակայինները, որոնք եկել էին նրանց տանելու։

— Ընկեր կարմիրբանակայիններ,— թույլ հնչեց կոմիսարի ձայնը,— միտինգ անել այսպիսի ժամանակ, երբ թշնամին այնքան մոտիկ է գտնվում... Ընկերնե՛ր։

Նրան թույլ չտվին շարունակել ճառը։ Սեղանի մոտ, ասես քամուց ծածանվելով, ճոճվեցին կարմիրբանակայինների մոխրագույն փափախները, օրորվեց սվինների սև անտառը, դեպի սեղանը մեկնվեցին սեղմված բռունցքները, հրապարակով մեկ, ինչպես կրակոցներ, հնչեցին կատաղի, կարճ ճչոցները.

— Ընկերնե՛ր դարձանք։

— Հլա հանի՛ կաշվե տուժուրկադ։

— Խաբեց, էլի՛։

— Ո՞ւմ դեմ եք կռվի տանում։

— Քաշի՛ դրա ոտներից։

— Շրմփացրո՛ւ։

— Սվինով խփեք։

— Պրծավ դրա կոմիսարությունը։

Շտոկմանը տեսավ, թե ինչպես մի վիթխարի, տարեց կարմիրբանակային բարձրացավ սեղանի վրա, ձախ ձեռքով բռնեց կոմիսարի կարճ, շիկակարմիր, լայն մորուքից։ Սեղանը ճոճվեց, և կարմիրբանակայինն ու կոմիսարը ընկան սեղանի շուրջը կանգնածների մեկնված ձեռների վրա։ Այնտեղ, ուր քիչ առաջ թղթախաղի սեղանն էր, եռաց շինելների գորշ զանգվածը. կոմիսարի մենավոր, հուսահատական ճիչը մարեց ձայների միաձույլ որոտմունքում։

Շտոկմանը անմիջապես նետվեց այնտեղ։ Անողոքաբար հբելով, աքացելով գորշ շինել հագածների մեջքերը, նա համարյա վազելավազ անցնում էր այնտեղ, որտեղից խոսել էր կոմիսարը։ Նրան չէին կանգնեցնում, այլ բռունցքներով ու հրացանների կոթերով հրում, խփում էին մեջքին, ծոծրակին,

ուսից պոկեցին հրացանը, գլխից՝ կարմիր կարկաչով կազակական փափախը։

— Ո՞ւր ես քշում, սատանա...— զայրույթով բղավեց կարմիրբանակայիններից մեկը, որի ոտը սեղմել ու ցավ էր պատճառել Շտոկմանը։

Ոտները վերև շուռ տված սեղանի մոտ կարճահասակ մի դասակապետ փակեց Շտոկմանի ճանապարհը։ Գորշ գառնեանու նրա փափախը ընկել էր ծոծրակին, շինելի կոճակները արձակված էին. աղյուսագույն-կարմիր դեմքից քրտինք էր հոսում, բորբոքված, վայրագ կատաղությունից կայծկլտող աչքերը ծուռ հայացքներ էին նետում։

— Ո՞ւր ես զոռում, է՛։

— Խոսք տվեք, խոսք տվեք շարքային մարտիկին...— խոպոտ գոչեց Շտոկմանը հազիվ շունչ առնելով, ու սեղանը վայրկենապես դրեց ոտների վրա։ Նրան նույնիսկ օգնեցին սեղանի վրա բարձրանալու։ Բայց հրապարակով մեկ դեռ թնդում էր ցասկոտ մռնչոցը, ու Շտոկմանը ձայնալարերի ամբողջ զորեղությամբ գոռաց.— Լռե՛ք...— ու կես րոպեից հետո, երբ աղմուկը մի քիչ մեղմացավ, նա կերկերուն ձայնով, հազը խեղդելով, սկսեց խոսել.— Կարմիրբանակայիննե՛ր, ամոթ ձեզ։ Ամենածանր րոպեին դուք դավաճանում եք ժողովրդի իշխանությանը։ Դուք տատանվում եք, երբ հարկավոր է պինդ ձեռքով հարվածել թշնամու հենց սրտին։ Դուք միտինգ եք անում, երբ Սովետական երկիրը շընչասպառ է լինում թշնամիների օղակի մեջ։ Դուք կանգնած եք ուղղակի դավաճանության սահմանին։ Ինչո՞ւ-ուս Ձեր դավաճան հրամանատարները ձեզ ծախել են կազակական գեներալներին։ Նրանք, նախկին սպաները, շարդարացրին սովետական իշխանության վստահությունը, և օգտվելով ձեր տգիտությունից, ուզում են գունդը հանձնել կազակներին։ Ուշքի եկեք։ Ուզում են ձեր ձեռքով օգնել՝ խեղդելու բանվորա-գյուղացիական իշխանությունը։

2-րդ վաշտի հրամանատարը, նախկին պրապորշչիկ Վեյստմինստերը, որ կանգնած էր սեղանից քիչ հեռու, բարձրացրեց հրացանը, բայց Շտոկմանը նկատելով նրա շարժումը, գոռաց.

— Չհամարձակվե՛ս։ Սպանել միշտ էլ կարող ես։ Խոսքը

կոմունիստ-մարտիկինն է։ Մենք, կոմունիստներս մեր ամբողջ կյանքը... մեր ամբողջ արյունը... կաթիլ կաթիլ...— Շտոկմանի ձայնը վերածվեց սարսափելի լարվածությամբ լեցուն տենորի, դեմքը մահու գունատություն ստացավ ու ծռմռվեց,— տվել ենք բանվոր դասակարգին... Ճնշված գյուղացիությանը ծառայելու գործին։ Մենք սովոր ենք անվեհեր կերպով նայել մահվան։ Դուք կարող եք սպանել ինձ...

— Լսե՛լ ենք։

— Հերիք է խարեք։

— Թողեք ասեմ։

— Դեհ, ասկի՛ր։

— ...սպանել ինձ, բայց ես կրկնում եմ՝ ուշքի եկեք։ Հարկավոր է ոչ թե միտինգ անել, այլ գնալ սպիտակների դեմ.— Շտոկմանը նեղլիկ աչքերով նայեց կարմիրբանակայինների հանդարտած բազմությանը և իրենից քիչ հեռու տեսավ գնդի հրամանատար Վորոնովսկուն։ Սա ուս-ուսի տրված կանգնել էր մի ինչ-որ կարմիրբանակայինի հետ. բրոնազբոսիկ ժպտալով, ինչ-որ շշնջում էր նրա ականջին.— Ձեր գնդի հրամանատարը...

Շտոկմանը պարզեց ձեռքը՝ ցույց տալով Վորոնովսկուն, բայց վերջինս ձեռքը տանելով բերանին, անհանգստությամբ ինչ-որ շշնջաց իր կողքին կանգնած կարմիրբանակայինին, ու Շտոկմանը դեռ չէր վերջացրել նախադասությունը, երբ խոնավ օդում, որ հագեցված էր թարմ անձրևի ապրիլյան զովությամբ, խուլ ճայթեց կրակոցը։ Հրացանի կրակոցի ձայնը լիահնչուն չէր, ցածր էր, ասես մտրակի ծայրով էին հարված տվել, բայց Շտոկմանը ձեռները տանելով կրծքին, ընկավ ծնկների վրա, կախեց բաց, ալեխառն գլուխը... Եվ իսկույն, ճոճվելով, նորից ոտքի ելավ։

— Օսիպ Դավիդովիչ,— հառաչեց Իվան Ալեքսեևիչը՝ տեսնելով վեր թռած Շտոկմանին, ջանալով մոտենալ նրան, բայց արմունկներից բռնեցին իրեն, շշնջացին.

— Լռիր, տա՛զ արա։ Տո՛ւր այստեղ հրացանդ, սրիկա՛։

Իվան Ալեքսեևիչին զինաթափեցին, խառնիստեցին նրա գրպանները. տարան հրապարակից։ Դրա զանազան մասերում զինաթափում ու ձերբակալում էին կոմունիստներին։ Նրբանցքում, վաճառականական մի ցածր տան մոտ գիշ

ճայթեց հինգ թե վեց կրակոց. սպանեցին մի կոմունիստ գնդացրորդի, որը չէր հանձնում Լյուիսի գնդացիրը։

Իսկ այդ ժամանակ Շտոկմանը վարդագույն արյամբ ողողված շուրթերով, ջղաձգաբար ցնցվելով, մեռելի պես ամբողջովին սպիտակ, մի բոպե ճոճվեց թղթախաղի սեղանի վրա, ու լարելով վերջին, չքացող ուժերը, կամքի մնացորդը, դեռ կարողացավ բղավել.

— ...Ձեզ մոլորեցրել են... Դավաճանները... Նրանք իրենց համար կվաստակեն ներումն, սպայական նոր աստիճաններ... Բայց կոմունիզմը կապրի... Ընկերներ... Խելքի եկեք...

Ու Վորոնովսկու կողքին կանգնած կարմիրբանակայինը նորից հրացանի կոթը դեմ արեց ուսին։ Երկրորդ կրակոցը Շտոկմանին գցեց երեսի վրա, սեղանի վրայից նա քնկավ կարմիրբանակայինների ոտների տակ։ Իսկ սերդոբցիներից մեկը, որ երկար բերանով էր, տափակ ատամներով, ծաղիկ հիվանդությունից չեչոտած դեմքով, ջահելավարի թռավ սեղանի վրա, հնչեղ ձայնով գոռաց.

— Մենք այստեղ զանազան խոստումներ շատ ենք լսել, բայց այդ բոլորը, թանկագին ընկերներ, հենց միայն փչոց ու սպառնալիք է։ Գլորված, ընկած է այս մորուքավոր հոետորը, բայց շունը շան մահով էլ մեռնում է։ Մա՛հ կոմունիստներին, աշխատավոր գյուղացիության թշնամիներին։ Ընկերներ, թանկագին մարտիկներ, ես կասեմ, որ մեր աչքերը հիմա բաց են։ Մենք գիտենք, թե ում դեմ պետք է գնալ։ Զորօրինակ, մեզ մոտ, Վալսկի գավառում ի՞նչ էր ասված. ժողովուրդների հավասարություն, եղբայրություն. այ թե ինչ էին ասել խաբեբա կոմունիստները... Իսկ հետո ի՞նչ դուրս եկավ։ Այ, թեկուզ իմ հայրիկը. մեզ ուղարկել է տեղեկություն ու արտասվալի մի նամակ, գրում է, թե օրը ցերեկով խայտառակ թալան է կատարվում։ Նույն այդ իմ հայրիկի ամբողջ հացը սրբել-տարել են ու աղացը վերցրել, իսկ դեկրետը այդպե՞ս է խոսում աշխատավոր գյուղացիության մասին։ Եթե այդ պտիկ աղացը իմ ծնողների աշխատավորական քրտինքով է ձեռք բերված, ապա, ես ձեզ հարցնում եմ, բա դա կոմունիստների թալանը չի՞։ Խփե՛լ նրանց, ջարդել ու արյունլվիկ անել։

Հոետորին չվիճակվեց վերջացնել ճառը։ Արևմուտքից ապստամբական երկու հեծյալ հարյուրյակ վարգելով մտան Ուստ-Խոպերսկայա ստանիցան, Դոնի շրջակա լեռների հարավային լանջերից իջնում էր կազակական հետևազորը, մի կիսահարյուրյակի պահպանությամբ իր շտաբի հետ գալիս էր 6-րդ ապստամբական առանձին բրիգադի հրամանատար խորունժի Բոգատիրյովը։

Ու իսկույն արևելքից վրա հասած ամպից անձրև տեղաց, հեռվում, Դոնի մյուս կողմում, Խոպերի վրա փռվեց որոտի խուլ գոռոցը։

Սերդոբյան գունդը սկսեց հապճեպորեն շարժվել. քաղաքներ կազմել։ Ու հենց որ սարից երևաց Բոգատիրյովի շտաբային հեծյալ խումբը, նախկին շտաբս-կապիտան Վորոնովսկին կարմիրբանակայիններին մինչ այդ անսովոր, ամպագորգոռ մռնչոցով, դմբդմբալի ձայնով հրաման տվեց, բոռաց.

— Գու-ո՛ւ-նդ, զգա-ա-ա՛ստ...

L

Գրիգորի Մելեխովը հինգ օր ապրեց Տատարսկում, այդ ժամանակվա ընթացքում իրենց և զոքանչի համար մի քանի դեսյատին հաց ցանեց, հետո էլ, հենց որ տնտեսության կարոտից նիհարած, ոջլոտած Պանտելեյ Պրակոֆևիչը եկավ հարյուրյակից,— պատրաստվեց մեկնելու իր զորամասը, որ առաջվա պես գտնվում էր Ջիրի ափերին։ Կուդինովը գաղտնի նամակով հաղորդել էր նրան Սերդոբյան գնդի հրամանատարության հետ սկսված բանակցությունների մասին, խնդրել էր վերադառնալ, ընդունել դիվիզիայի հրամանատարությունը։

Այդ օրը Գրիգորին պատրաստվեց մեկնել Կարգինսկայա։ Մեկնելուց առաջ կեսօրին ձին տարավ Դոն, շրելու, և իջնելով դեպի ջուրը, որ բարձրացել-հասել էր համարյա մինչև բանջարանոցների ցանկապատերը, տեսավ Ակսինյային։ Արդյո՞ք Գրիգորիին այդպես թվաց, թե՞ Ակսինյան իսկապես դիտմամբ էր հապաղում՝ ծուլորեն ջուր վերցնելով, սպա-

սելով նրան,— բայց Գրիգորին ակամա արագացրեց քայլերը, ու բոպեապես, մինչև հուպ մոտեցավ Ակսինյային, իր առջևից սլացավ տխուր հուշերի պայծառ երամը...

Լսելով քայլերի ձայնը, Ակսինյան շուռ եկավ, նրա դեմքի վրա զարմանք արտահայտվեց, որը, անկասկած, շինծու էր, բայց հանդիպումի բերկրանքը, բայց վաղուցվա կսկիծը մատնեցին նրան։ Նա ժպտաց իր հպարտ դեմքին չսազող այնպիսի ողորմելի, շփոթված ժպիտով, որ Գրիգորիի սիրտը դողաց կարեկցությունից ու սիրուց։ Կարոտով խայթված, վրա տվող հուշերով պաշարված, նա կանգնեցրեց ձին, ասավ.

— Բարև, թանկագին Ակսինյա։

— Բարև։

Ակսինյայի մեղմ ձայնի մեջ հնչեցին ամենաօտարոտի զգացումների, և՛ զարմանքի, և՛ փայփայանքի, և՛ դառնության նրբերանգները...

— Վաղուց մենք իրար հետ չենք խոսել։

— Վաղուց։

— Ես արդեն ձենդ էլ եմ մոռացել...

— Այդքան շո՛ւտ։

— Մի՞թե շուտ է։

Գրիգորին բռնել էր իրեն վրա տվող ձիու սանձը, Ակսինյան գլուխը ծռած, լծակի կեռը գցում էր դույլի ունկին, ոչ մի կերպ չէր կարողանում դրանք միացնել։ Մի բոպեի չափ լուռ կանգնեցին։ Նրանց գլխավերևից, ասես պարսատիկով նետված, սվսվալով թռավ վայրի մի բադ։ Դարափուլի տակ ալիքները խփում, անհագորեն լիզում էին կապույտ կավճասալերը։ Վարարած ջրերում, որ հեղեղել էին անտառը, խռնվում էին սպիտակագեղմ ալիքները։ Քամին մանրագույն ջրափոշի, քաղցրավուն բույր էր բերում Դոնից, որը ուժգնաթափ հոսանքով սլանում էր դեպի ցածրավայրերը։

Գրիգորին իր հայացքը Ակսինյայի դեմքից փոխադրեց Դոնի մյուս կողմը։ Ջրերի մեջ կանգնած դալկաբուն բարդիները օրորում էին մերկ ճյուղերը, իսկ ուռենիները բողբոջներով—աղջկական դինդերով խավակալած, փարթամորեն խոյանում էին ջրերի վրա՝ որպես ամենաթեթև, արտասո-

վոր կանաչ ամպեր։ Թեթև սրտնեղում ու դառնություն արտահայտող ձայնով Գրիգորին հարցրեց.

— Ի՞նչ է... Ես ու դու մի՞թե խոսելու նյութ էլ չունենք։ Ինչո՞ւ ես լռում։

Բայց Ակսինյան կարողացավ հավաքել ինքն իրեն. նրա պաղած դեմքի վրա էլ ոչ մի մկան չդողաց, երբ նա պատասխանեց.

— Մենք ոնց որ թե արդեն խոսել-պրծել ենք...

— Այդպե՞ս է։

— Դե, երևում է, որ այդպես է։ Ծառը հո տարենը մի անգամ է ծաղկում...

— Կարծում ես մեր ծառը թոռոմե՞լ է։

— Բա չէ՞։

— Զարմանք բան է այդ բոլորը...— Գրիգորին ձին մոտեցրեց ջրին, ու նայելով Ակսինյային, տխուր ժպտաց.— Իսկ ես, Կսյուշա, իսկի չեմ կարողանում սիրտս քեզնից կտրել։ Երեխաներս արդեն մեծացել են, մազերս էլ ճերմակել են կիսով չափ, այսքան տարիներ են անցել ու մեր մեջ անդունդ բացել... Ամա էլի քո մասին եմ մտածում։ Երազումս տեսնում եմ քեզ, մինչև օրս էլ սիրում եմ։ Մեկ էլ տեսար միտք արի քո մասին, սկսեցի հիշել, թե ոնց էինք ապրում Լիստնիցկիների մոտ... ոնց էինք սիրում իրար... ու այդ հիշողություններից... Մեկ էլ տեսար, մտաբերելով ողջ կյանքդ, մտիկ ես անում, տեսնում ես, որ նա ոնց որ թե ցատարկ, թարս շուռ տված գրպան լինի...

— Ես է՛լ... Պետք է գնամ... Շատ խոսեցինք։

Ակսինյան վճռականապես բարձրացրեց դույլերը, գարնանային արևից մի քիչ թուխ գույն առած ձեռները դրեց լծակի աղեղնաձև մեջքին, սկսեց բարձրանալ վերև, սակայն հանկարծ դեմքը դարձրեց դեպի Գրիգորին, ու թարմ, նըրբին կարմրությունը հազիվ նկատելի գունազարդեց նրա այտերը։

— Կարծեմ թե մեր սերը, Գրիգորի, սկսվեց հենց այստեղ, այս նավամատույցի մոտ։ Մի՞տք է։ Այն օրը կազակներին ճամբար էին ուղարկում,— ժպտալով ասաց նա, և նրա ձայնը ավելի հաստատուն, ուրախ հնչեց։

— Բոլորը միտս է։

Գրիգորին ձին տարավ ախոռ, կապեց մսուրին։ Պանտելեյ Պրակոֆևիչը, որ Գրիգորիին ճամփելու համար առավոտից չէր գնացել ցանքերը տափանելու, դուրս եկավ մարագի շարդախի տակից, հարցրեց.

— Հը՛, շո՞ւտ ես գնալու։ Ջիուն գարի տա՞մ։

— Ո՞ւր գնամ.— Գրիգորին անուշադիր նայեց հորը։

— Բարի աչողո՛ւմ։ Բա Կարգին էիր գնալու։

— Ես այսօր չեմ գնա։

— Ինչո՞ւ։

— Այնպես էլ՛... միտքս փոխեցի...— Գրիգորին լիզեց ներքին ջերմությունից չորացած շրթունքները, հայացքը սահեցրեց երկնքով մեկ.— Ամպեր են հավաքվում, երևի անձրև կլինի, իսկ ինձ համար ի՞նչ հաշիվ է թրջվել անձրևի տակ։

— Հաշիվ չէ,— համաձայնեց ծերունին, բայց չհավատաց Գրիգորիին, որովհետև մի քանի րոպե առաջ անասնոցի բակից տեսել էր նրան ու Ակսինյային նավամատույցում խոսելիս։ «Էլի սկսվեց սիլի-բիլին,— անհանգստությամբ մտածում էր ծերուկը,— չլինի՞ թե էլի ծուռ գործ բռնի Նատալյայի հանդեպ... Ա՛խ, քո հերն անիծվի, Գրիշկա։ Եվ ո՞ւմ է քաշել այս բուղան, մի՞թե ինձ»։ Պանտելեյ Պրակոֆևիչը դադարեցրեց կեչու բունը կացնով տաշելը,— դա պետք է մեխեր սայլակին,— նայեց հեռացող որդու կորացած մեջքին, ու հապճեպորեն քրքրելով հիշողությունը, մտաբերեց, թե նա ինչպես էր փոքր ժամանակ, ու որոշեց. «Ինձ է քաշել սատանի ճուտը։ Հորից էլ դեռն է անցել այդ շան պոչը։ Թակե՛լ դրան, որ էլի չսկսի Ակսինյայի ետևից ընկնել, ընտանիքի մեջ խառնակչություն գցել։ Ամա ո՞նց թակես դրան»։

Մի ուրիշ ժամանակ Պանտելեյ Պրակոֆևիչը տեսնելով, որ Գրիգորին Ակսինյայի հետ խոսում է առանձնացած, մարդկանցից հեռու, առանց երկար մտածելու կհասցներ նրա քամակին որևէ առարկայով, ինչ որ ձեռքն ընկներ, իսկ այս միջոցին շփոթվեց, ոչինչ չասաց և նույնիսկ ցույց էլ չտվեց, թե հասկացել է այն իսկական պատճառները, որոնք Գրիգորիին դրդել էին հանկարծակի հետաձգել մեկնումը։ Եվ այդ բոլորը այն պատճառով, որ Գրիգորին հիմա արդեն

ոչ թե «Գրիշկա» էր, խենթ ու խելառ մի ջահել կազակ, այլ դիվիզիայի հրամանատար էր, «գեներալ» էր, թեպետև առանց ուսադիրների, ու նրան հազարավոր կազակներ էին ենթարկվում ու բոլորն էլ հիմա նրան անվանում էին ոչ այլ կերպ, քան Գրիգորի Պանտելեևիչ։ Ինքը, Պանտելեյ Պրակոֆևիչը, որ ընդամենը «ուրյադնիկի» աստիճան ուներ, էլ ինչպե՞ս կարող էր ձեռք բարձրացնել գեներալի, թեկուզև հարազատ որդու վրա։ Ենթակարգությունը Պանտելեյ Պրակոֆևիչին թույլ չէր տալիս նույնիսկ մտածել այդ մասին, դրա համար էլ Գրիգորիի նկատմամբ նա իրեն զգում էր կաշկանդված, մի տեսակ օտարացած։ Ամեն ինչի մեղավորը Գրիգորիի աստիճանի արտասովոր բարձրացումն էր։ Նույնիսկ վար անելիս, մի երկու օր առաջ, երբ Գրիգորին հերսոտ ձայն տվեց նրան՝ «Է՛յ, ի՞նչ ես բերանդ բացել, քշի՛ր գութանը...»— Պանտելեյ Պրակոֆևիչը հանդուրժեց այդ, մի խոսք է՛լ չասաց... Վերջին ժամանակներում նրանց դերերը կարծես փոխվել էին. Գրիգորին բղավում էր ծերացած հոր վրա, իսկ վերջինս, զգալով նրա ձայնի հրամայական շեշտը, դես-դեն էր ընկնում, կաղում էր վնասված ոտքից, աշխատում էր գոհացնել...

«Անձրևի՞ց վախեցավ։ Անձրև չի լինի, ո՞րտեղից պիտի լինի, երբ քամին արևելքից է ու երկնքի մեջտեղում մենակ մի ամպ է թրև գալիս։ Ասեմ Նատալյային»։

Իր ըմբռնողությամբ աշխուժացած, Պանտելեյ Պրակոֆևիչը աճապարեց դեպի խրճիթ, բայց միտքը փոխեց. վախենալով անախորժությունից, վերադարձավ ու վերսկսեց տաշել կեչու չորսուն...

Իսկ Ակսինյան հենց որ տուն եկավ, դատարկեց դույլերը, մոտեցավ վառարանի պատին կպցրած հայելուն, ու երկար, հուզված դիտեց իր պառաված, բայց դեռևս գեղեցիկ դեմքը։ Դա ուներ էլի նույն արյատավոր ու հմայիչ գեղեցկությունը, բայց կյանքի աշունը արդեն դալուկ գույներ էր առաջացրել այտերի վրա, դեղնեցրել էր կոպերը, սպիտակության նոսր ոստայն էր ներհյուսել սև մազերի մեջ, մարել աչքերը։ Դրանք արդեն տխուր հոգնածություն էին արտահայտում։

Ակսինյան մի փոքր կանգնեց, իսկ հետո մոտեցավ մահ-

ճակատին, ընկավ երեսի վրա ու լացեց այնպիսի հորդառատ թեթևացուցիչ ու քաղցր արցունքներով, որոնցով վաղո՛ւց վաղուց չէր լացել...

Զմռանը Դոնի առափնյա լեռան զառիվայրի, վայրէջքի կորնթարդ լանջի վրա, որ հասարակ լեզվով «ղռաջ» է անվանվում, թափառում, ոռնում են ձմեռային ցուրտ քամիները։ Դրանք լերկ քարերով ծածկված բլրակից տանում են ձյան սպիտակ փշուրը, կուտակում մի տեղ, ձյան ահագին շերտեր առաջացնում։ Վիթխարի ձնակույտը կախվում է դարափուլի վերևից, արևի տակ նա շաքարափայլ-կայծկլտուն է, մթնշաղին՝ բաց կապույտ, առավոտները՝ դալուկ-յասամանագույն ու արևածագին՝ վարդագույն։ Իր լռությամբ ահավոր, նա կկախվի առժամանակ, մինչև որ ձնահալքը տակից կքայքայի նրան, կամ ի՛ր իսկ ծանրությամբ բեռնված, կշարժվի կողքից փչող քամուց։ Ու այն ժամանակ մղվելով դեպի ներքև. կգահավիժվի խուլ ու մեղմակի դղրդյունով, իր ճանապարհին քարուքանդ անելով փշենու մանր թփերը, ջարդոտելով լանջի վրա վախլուկ կուչ եկած մլենու ծառերը, իր ետևից շեշտակի քարշ տալով ձյան փոշու ահագին, դեպի երկինք բարձրացող, արծաթե փեշը։

Ակսինյայի բազմամյա զգացմունքին, որ կուտակվել էր ձյան կիտվածքի նման, հարկավոր էր ամենափոքր մի ազդակ։ Եվ ազդակ հանդիսացավ հանդիպումը Գրիգորիի հետ, վերջինիս փաղաքուշ խոսքը՝ «Բարև, թանկագին Ակսինյա»։ Իսկ Գրիգորի՞ն։ Մի՞թե նա թանկագին չէր Ակսինյայի համար։ Մի՞թե այդ բոլոր տարիների ընթացքում Ակսինյան նրան չէր հիշում ամեն օր, ամեն ժամ, սևեռուն մտքերով շարունակ վերադառնում նրան։ Ու ինչի մասին էլ որ մտածեր, ինչ էլ որ աներ, միշտ էլ իր մտորումներում անբաժանելիորեն գտնվում էր Գրիգորիի կողքին։ Այդպես ջրհան հարմարանքի կողքից քայլում է կույր ձին՝ առանցքի շուրջը պտտելով ոռոգիչ անիվը...

Ակսինյան մինչև երեկո պառկեց մահճակալի վրա, հետո վեր կացավ արցունքներից ուռած աչքերով, լվացվեց, սանրվեց, ու ինչպես աղջիկը հարսնատեսից առաջ, սկսեց հագնվել տենդային արագությամբ։ Հագավ մաքուր շապիկ,

բորդո գույնի բրդե շրջազգեստը, ծածկվեց շալով, հարևանցիորեն նայեց հայելուն, դուրս ելավ։

Տատարսկու վրա իջել էր մթնակապույտ մթնշաղը։ Հեռվում, վարարած ջրերի վրա անհանգիստ կռնչում էին վայրի սագերը։ Դոնի առափնյա բարդիների ետևից բարձրանում էր տկար ու դալուկ լուսնյակը։ Ջրի վրա ձգված էր լուսնի լույսի երերուն, կանաչավուն շավիղը։ Տափաստանից դեռ լույսով վերադարձել էր նախիրը։ Բակերում բառաչում էին մատղաշ կանաչից չկշտացած կովերը։ Ակսինյան չկթեց իր կովը։ Հորթանոցից նա դուրս քշեց սպիտակառունգ հորթը, թողեց մոր մոտ, ու հորթը շրթունքները ագահությամբ սեղմեց կովի կուրծին՝ խաղացնելով պոչը, լարված տարածելով ետին ոտները։

Դարյա Մելեխովան հենց նոր էր կթել կովը և կաթքամն ու դույլը ձեռքին գնում էր խրճիթ, երբ նրան ձայն տվին ցանկապատի ետևից.

— Դա՛շա։

— Այդ ո՞վ է։

— Ես եմ, Ակսինյան... Մի բոպե արի ինձ մոտ։

— Այդ ինչի՞ համար ես քեզ հարկավոր եղա։

— Շատ ես հարկավոր։ Արի, ի սեր Քրիստոսի։

— Հիմի կաթը կքամեմ, կգամ։

— Դեհ, ես քեզ կսպասեմ բակի մոտ։

— Լավ։

Քիչ հետո Դարյան դուրս եկավ։ Ակսինյան նրան սպասում էր իրենց բակի դռան մոտ։ Դարյայից գալիս էր թարմ կաթի տաք բույրը, գոմի հոտը։ Նա զարմացավ՝ Ակսինյային տեսնելով ոչ թե փեշը քշտած ,այլ զուգված, մաքուր։

— Գործդ շուտ ես պրծել, հարևանուհի։

— Առանց Ստեպանի գործս քիչ է։ Մի կով եմ կթում, համարյա բան չեմ եփում... Այնպես, էլի, մի կտոր շոր բան եմ ուտում, ու պրծավ-գնաց...

— Ինչո՞ւ ես կանչել ինձ։

— Մի բոպե արի մեր տուն, կասեմ։ Գործ կա...

Ակսինյայի ձայնը դողում էր։ Դարյան մի քիչ կռահելով խոսակցության նպատակը, լուռ գնաց նրա ետևից։

Ակսինյան հենց որ մտավ օթախը, առանց լույսը վառե-

լու բացեց սնդուկը, խառնխտեց այն, ու իր չոր, տաք ձեռներով վերցնելով Դարյայի ձեռքը, սկսեց հապճեպորեն մի մատանի անցկացնել նրա մատին։

— Այս ի՞նչ ես անում։ Ոնց որ թե մատանի է, հը՞։ Ի՞նձ ես տալի, թե ինչ...

— Քե՛զ, քեզ։ Ինձանից... հիշատակ...

— Ոսկի՞ է,— գործարար տոնով հարց տվեց Դարյան՝ մոտենալով լուսամուտին, լուսնի աղոտ լույսի տակ զննելով իր մատին անցկացրած մատանին։

— Ոսկի է։ Պահիր մատիդ։

— Էհ, Քրիստոս փրկե... Քեզ ի՞նչ է հարկավոր, ինչի՞ համար ես նվիրում։

— Կանչիր... կանչիր ձեր Գրիգորիին։

— Էլի՞, հա՞,— Դարյան գլխի ընկավ, ժպտաց։

— Չէ, չէ, օ՛յ, ի՛նչ ես ասում,— վախեցավ Ակսինյան՝ արտասվելու չափ կարմրատակելով,— ես նրա հետ պետք է խոսեմ Ստեպանի մասին... Կարելի է նրա համար արձակուրդ հաջողացնի...

— Բա դու ինչի՞ չեկար մեզ մոտ։ Այնտեղ էլ կխոսեիր հետը, թե որ գործ ունեիր,— նենգամտորեն ասաց Դարյան։

— Չէ, չէ... Նատալյան կարող էր ուրիշ բան մտածել... Անհարմար է...

— Դե լավ, կասեմ թող գա։ Ի՞նձ ինչ։

. . . . . .

Գրիգորին վերջացրեց ընթրիքը։ Վար դրեց գդալը, ծծեց ու ձեռքով սրբեց խոշաբով թրջված բեղերը։ Զգալով, որ սեղանի տակ մեկի ոտը դիպչում է իր ոտին, նայեց շուրջը, ու նկատեց, որ Դարյան հազիվ նկատելի կերպով իրեն աչքով արավ։

«Եթե սա ուզում է հանգուցյալ Պետրոյին ինձանով փոխարինել և հիմի դրա մասին որևէ բան ասի, կծեծեմ։ Կտանեմ կալը, յուրկան կկապեմ գլխին ու շան պես կթակեմ»,— շարացած մտածեց Գրիգորին, որ այդ ամբողջ ժամանակ մռայլ դեմքով էր ընդունում հարսի խնամքը։ Բայց, սեղանից վեր կենալով ու վառելով ծխախոտը, նա դանդաղ դուրս ելավ։ Համարյա անմիջապես դուրս ելավ նաև Դարյան։

Հաշտում անցնելով Գրիգորիի կողքից, քայլելիս կուրծքը հպելով նրան, շշնջաց.

— Փո՛ւ, անզգամ։ Կանչում էր քեզ... Գնա՛, էլի՛։

— Ո՞վ,— շունչ առնելով հարցրեց Գրիգորին։

— Նա։

Մի ժամից հետո, երբ Նատալյան քնել էր երեխաների հետ, Գրիգորին քիպ կոճկած շինելով Ակսինյայի հետ դուրս եկավ Աստախովների բակի դռնից։ Նրանք լուռ կանգնեցին խավար նրբանցքում ու նույնպես լուռ գնացին տափաստան, որը նրանց կանչում էր իր լռությամբ, խավարով, մատաղաշ խոտաբույսերի արբեցուցիչ բույրով։ Շինելի փեշը ետ գցելով, Գրիգորին Ակսինյային սեղմում էր իրեն ու զգում, թե ինչպես է դողում նա, ինչպես է կոֆտայի տակին ուժեղ, դանդաղ զարկերով բաբախում նրա սիրտը...

LI

Մյուս օրը մեկնելուց առաջ Գրիգորին կարճ բացատրվեց Նատալյայի հետ։ Վերջինս նրան մի կողմ կանչեց, շշնջալով հարցրեց.

— Գիշերը ո՞ւր էիր գնացել։ Այնքան ուշ ո՞րտեղից վերադարձար։

— Ոնց էր ուշ։

— Բա չէ՞։ Ես զարթեցի, աքլորները կանչեցին, իսկ դու դեռ չկայիր...

— Կուդինովն էր եկել։ Գնացել էի նրա մոտ, մեր զինվորական գործերի մասին խորհուրդ անելու։ Դա քո խելքի, կնկա խելքի բանը չի։

— Բա ինչո՞ւ նա չեկավ մեզ մոտ գիշերելու։

— Շտապում էր վերադառնալ Վեշկի։

— Աբոշչենկովների մոտ։ Նրանք կարծեմ իրեն հեռու ազգականներ են գալի։

Նատալյան էլ ոչինչ չհարցրեց։ Նա մի տեսակ տատանվում էր, բայց աչքերը ծածկամտություն էին արտահայտում, ու Գրիգորին այնպես էլ չհասկացավ՝ հավատա՞ց թե ոչ։

Գրիգորին արագ նախաճաշեց։ Պանտելեյ Պրոկոֆիևիչը

գնաց ձին թամբելու, իսկ Իլյինիչնան խաչակնքելով ու համբուրելով Գրիգորիին, շուտասելուկով շշնջաց.

— Դու աստծուն, աստծուն մի՛ մոռանա, որդյակս։ Մենք լուր էինք իմացել, որ դու թրատել ես ինչ-որ նավաստիներ... Տե՛ր աստված, ախր դու, Գրիշենկա, խելքի արի, է՛։ Հրեն, մտիկ արա, թե ինչ տեսակ երեխեք ունես, ախր նրանք էլ, որոնց դու սպանել ես, կարելի է երեխեք են թողել... Բա այդ ո՞նց կլինի։ Փոքր հասակումդ դու այնպես խելոք ու լավ էիր, իսկ հիմի նոթերդ կիտած ես ապրում։ Մտիկ արա, սիրտդ ոնց որ թե գիլի սիրտ է դարձել... Լսի՛ր մորդդ, Գրիշենկա։ Ախր դու էլ հո կախարդված չես, քո վզի համար էլ մի քաջ մարդու թուր կգտնվի...

Գրիգորին անուրախ ժպտաց, համբուրեց մոր չորացած ձեռքը, մոտեցավ Նատալյային։ Վերջինս սառն գրկեց նրան, շուռ եկավ, ու Գրիգորին նրա չոր աչքերում ոչ թե արցունքներ տեսավ, այլ կսկիծ և գաղտուկ ցասում... Հրաժեշտ տվեց երեխաներին, դուրս եկավ...

Ոտը դնելով ասպանդակին, բռնելով ձիու կոշտ բաշից, հայտնի չէ ինչու մտածեց՝ «Ըհը՛մ, կյանքը էլի նոր ձևով շուռ եկավ, իսկ սիրտս էլի սառն ու դատարկ է... Երևում է, որ հիմի Ակսյուտկան էլ չի կարող լցնել այդ դատարկությունը»...

Երեսը շուռ չտալով ու չնայելով հարազատներին, որոնք խմբվել էին դարպասի մոտ, նա քայլքով գնաց փողոցով, ու Աստախովների խրճիթի կողքից անցնելիս շեղակի նայեց պատուհաններին, օթախի ծայրի պատուհանում տեսավ Ակսինյային։ Վերջինս ժպտալով, թափահարեց ասեղնագործած թաշկինակը ու իսկույն ճմլեց այն, սեղմեց բերանին, անքուն գիշերից մթնած ակնախոռոչներին...

Գրիգորին սլացավ դաշտային արագ վարգով։ Բարձրացավ բլուրը և այստեղ տեսավ ամառային ճանապարհով դանդաղորեն եկող երկու ձիավոր ու մի սայլ։ Հանձին ձիավորներին նա ճանաչեց Անտիպ Փչանովին և Ստրեմյանիկովին,— խուտորի վերին ծայրի երիտասարդ սևավուն ու առույգ կազակին։ «Սպանվածներ են բերում»,— գլխի ընկավ Գրիգորին՝ նայելով եզներ լծած սայլին։ Դեռ բոլորովին չմոտեցած՝ հարցրեց կազակներին.

— Ո՞ւմ եք տանում։

— Ալյոշկա Շամիլին, Տամիլին Իվանին ու Յակով Պոդկովային։

— Սպանվա՞ծ են։

— Սպանված ու մեռած։

— Ե՞րբ։

— Երեկ, արևը մայր մտնելուց առաջ։

— Մարտկոցը անվնա՞ս է։

— Անվնաս է։ Կարմիրները սրանց, մեր հրետանավորներին ձեռք գցեցին Կալինով հովիտում, որտեղ մենք կանգ էինք առել հանգստանալու։ Իսկ Շամիլին թրատեցին այնպես, էլի... իր սարսաղությունի պատճառով։

Գրիգորին հանեց փափախը, իջավ ձիուց։ Սայլվոր կինը, որ տարեց մի կազակուհի էր Ջիրի կողմերից, կանգնեցրեց եզները։ Սայլի վրա իրար կողքի պառկել էին թրատված կազակները։ Գրիգորին դեռ չէր մոտեցել սայլին, երբ քամին արդեն բերեց քաղցրավուն, անհաճո հոտը։ Ալյոշկա Շամիլը պառկել էր մեջտեղում։ Նրա մուգ կապույտ, հնամաշ շեքմենը բացված էր, դատարկ թևքը դրված էր թրատված գլխի տակ, իսկ վաղուց կտրված թևի մնացորդը, որ փաթաթված էր կեղտոտ լաթով և որը միշտ էլ այնքա՛ն շարժունակ էր,— ջղաձգաբար սեղմվել էր անշունչ կրծքի կորնթարդ խուփին։ Ալյոշկայի բաց, սպիտակ ատամներով բերանին առմիշտ սառել էր վայրագ կատաղությունը, բայց կիսաբաց աչքերը հանգիստ և կարծես տխուր մտախոհությամբ նայում էին կապույտ երկնքին, տափաստանի վերևում սահող ամպիկին...

Տամիլինի դեմքն անճանաչելի էր. իսկապես ասած՝ այդ ոչ թե դեմք էր, այլ այնպես, էլի, կարմիր ու անձև մի բան՝ սրի հարվածով շեղակի տաշված։ Կողքի ընկած Յակով Պոդկովան շաֆրանե-դեղին դեմքով էր, ծուռվիզ, նրա գլուխը համարյա բոլորովին կտրել էին։ Պաշտպանական գույնի վերնաշապկի արձակված օձիքի տակից ցցված էր կտրատված անրակի սպիտակ ոսկորը, իսկ ճակատի վրա, աչքի վերևում սև, ճառագայթավոր աստղի նման բացված էր գնդակի արյունոտ վերքը։ Կարմիրբանակայիններից մեկը, ըստ երևույթին խղճալով դժվարությամբ մեռնող կազակին, հա-

մարյա քիպ կրակել էր նրա վրա, այնպես որ Յակով Պոդկովայի մեռյալ դեմքի վրա մնացել էին նույնիսկ այրվածքը և պայթած վառոդի սև բծերը։

— Դեհ, ի՞նչ արած, եղբայրներ, եկեք ողորմի ասենք մեր խուտորցիներին, ծիսենք նրանց հոգու հանգստության համար,— առաջարկեց Գրիգորին ու անցնելով մի կողմ, թուլացրեց ձիու փորքաշը, հանեց սանձի բերանոցը, ու սանձը փաթաթելով նրա առջևի ձախ ոտին, թողեց արածելու մետաքսանման, սլաքաձև վեր ձգված կանաչը։

Անտիպը և Ստրեմյաննիկովը հաճույքով իջան ձիերից, կապեցին ձիերի երեք ոտները, թողին արածելու Պառկոտեցին։ Ծխեցին։ Գրիգորին նայելով բրդոտ, դեռ չմազաթափված եզան, որ դունչը մեկնում էր դեպի նոսր ջղախոտը, հարցրեց.

— Շամիլը ինչպե՞ս սպանվեց։

— Հավատո՞ւմ ես, Պանտելևիչ, իրեն հիմարության պատճառով։

— Ինչպե՞ս։

— Ա՛յ թե բանը ոնց եղավ,— սկսեց Ստրեմյաննիկովը.— Երեկ կեսօրին, մենք գնացինք հետախուզության։ Պլատոն Ռյաբչիկովը ինքը մեզ ուղարկեց մի վախմիստրի հրամանատարությամբ... Անտիպ, ո՞վ էր նա, այն վախմիստրը, որի հետ երեկ գնացինք։

— Սատանան գիտի։

— Հա՛, ինչևիցե։ Նա մեզ անծանոթ էր, ուրիշ հարյուրյակից էր։ Ըհը՛մ... Ուրեմն, գնում ենք, էլի, տասնչորս կազակ ենք, Շամիլն էլ մեզ հետ է։ Նա երեկ ամբողջ օրը այնպես ուրա՛խ էր, ուրեմն սիրտը ոչ մի վատ բան չէր կարող զգալ։ Գնում ենք, իսկ նա կտրած թևի մնացորդն է թափ տալի, սանձը գցում է թամքի ղաշին ու ասում՝ «Է՛խ, բա ե՞րբ է գալու մեր Գրիգորի Պանտելևը։ Մի անգամ էլ խմենք նրա հետ ու երգենք»։ Ու այսպես, մինչև կհասնեինք Լատիշևսկու բլուրը, նա շարունակ մղմղացնում էր.

Մորեխի պես առաջ նետվում,
Թռչում էինք մենք սարեսար,
Ռերդաններից կրակ թափում։
Ամեն մեկս—Դոնի կազակ։

Ու այսպես հասանք մի ցածրիկ տեղ, որը հենց խրուտ ձորի կողքին է, ու վախմիստրն էլ ասում է՝ «Տղերք, կարմիրները ոչ մի տեղ չեն երևում։ Նրանք երևի դեռ դուրս չեն եկել Աստախովա գյուղից։ Մուժիկները ծույլ են, շուտ չեն վեր կենա, երևի մինչև հիմի ճաշվա հացն են ուտում, խախոլների հավերն են եփում-ուտում։ Եկեք մենք էլ մի քիչ հանգստանանք, թե չէ մեր ձիերն էլ արդեն քրտնախաշ են եղել».— «Էհ, ի՞նչ կա որ, ասում ենք, լա՛վ»։ Ու իջանք ձիերից, պառկեցինք կանաչ խոտի վրա, մեկին էլ բլուրի վրա դետք կարգեցինք։ Պառկած ենք, մտիկ եմ անում, Ալյոշկան, հանգուցյալը, իրեն ձիու մոտ մլուլ է տալի, արձակում է դրա փորքաշը։ Ես նրան ասում եմ՝ «Ալեքսեյ, լավ կլիներ չարձակեիր փորքաշը, թե չէ, աստված չանի, մեկ էլ տեսար ձի նստեցինք ու թռանք, բա դու, ա՛յ կռնատ, էլ ե՞րբ պիտի պնդացնես այդ փորքաշը»։ Ամա նա ատամներն է ցույց տալի. «Քեզանից էլ շուտ ձի կնստեմ։ Դու ի՞նչ ես, որ ինձ սովորացնես, ա՛յ խոխա»։ Հա՛, արձակեց փորքաշը, հանեց ձիու սանձը։ Պառկած ենք, ոմանք ծխում են, ոմանք հեքիաթ-մեքիաթ ասում, ոմանք էլ ննջում են։ Մեր դետքն էլ այդ ժամին նույնպես ննջել էր։ Պառկել է կուրգանի տակին, ես նրա այսինչը, ու երազներ է տեսնում։ Մեկ էլ ի՞նչ եմ լսում,— ոնց որ թե հեռվից ձիու փնչոց է գալի։ Ալարում էի վեր կենալ, բայց էլի վեր կացա, այն փոս տեղից ելա բլուրը։ Մտիկ եմ անում,— մեզանից մի հարյուր սաժեն դենը, ձորի միջով ձիավոր կարմիրներ են գալի։ Առջևից շեկլիկ-կարմիր ձիով, գալիս է հրամանատարը։ Ոնց որ թե ձիու վրա մեծացած լիներ։ Հետներն էլ—վահանով գնդացիր։ Ես այստեղ գլդիգլոր թռա փոսը, բղավում եմ՝ «Կարմիրնե՞րը, ձի՛ նստել»։ Նրանք կարող էին ինձ տեսած լինել։ Հիմի էլ լսում ենք՝ նրանց մոտ հրաման են տալի։ Մենք ընկանք ձիերի վրա, վախմիստրը հանեց թուրը, ուզում էր գրոհ տալ։ Էլ ո՞րտեղից,— մենք տասնչորս էինք, նրանք կես հարյուրյակի չափ, հլա դեռ գնդացիր էլ ունեին։ Մենք փախանք ձիերին նստած, նրանք տկտկացրին գնդացիրը, ամա տեսան, որ գնդացրով բան չի դուրս գա, որովհետև ձորը փրկում է մեզ։ Ու նրանք ընկան մեր ետևից։ Բայց մեր ձիերը ավելի յորղա են, ետ փախանք, բավական հեռացանք, իջանք ձիե-

ից ու սկսեցինք կրակելով պաշտպանվել։ Ու միայն այս տեղ ենք տեսնում, որ Ալյոշկա Շամիլը մեզ հետ չի։ Նա էլ, ուրեմն, երբ իրարանցում էր բարձրացել, վազ է տալի դեպի ձին, սաղ ձեռքով բռնում թամքի ղաշից, ու հենց ոտը դնում է ասպանդակին, թամքը ընկնում է ձիու փորի տակ։ Չկարացավ նստել ձին ու մնաց դեմառդեմ կարմիրների հետ, ձին էլ հասավ մեզ, քթածակերից ասես կրակ է դուրս գալի, թամքն էլ ճոճվում է փորի տակին։ Այնպես է կատաղել, որ չի թողնում մարդ մոտենա, խռխռացնում է ինչպես սատանա։ Ա՛յ թե ինչ ախմախություն արավ Ալեքսեյը։ Թե որ փորքաշը չարձակեր, սաղ կմնար, թե չէ ի՞նչ դուրս եկավ...— Ստրեմյաննիկովը ժպտաց սև բեղիկների տակին, վերջացրեց.— Դրանից առաջ հա՛ դունդունում էր.

Ա՛յ դու պապի, վհուկ պապի,
Ա՛ռ կովիկս, առ ու մորթի,
Իմ գլուխը դու ազատի...

Ահա և ազատեցին նրա գլուխը... Երեսը չես ճանաչի։ Այնտեղ սրանից այնքան արյուն էր դուրս եկել, ինչքան մորթած եզից... Հետո, երբ կարմիրներին ետ քշեցինք, վազ տվինք այն փոսը, տեսնում ենք՝ ընկած է։ Տակին՝ արյան ահագին լճակ, լող էր տվել դրա մեջ։

— Դե, շո՞ւտ ենք գնալու,— անհամբեր հարցրեց սայլվոր կինը՝ շրթունքներից դեն տանելով գլխաշորը, որով նա երեսը պաշտպանում էր արևից։

— Մի վռազի, քույրիկ, սուս արա։ Հիմի կերթանք։

— Բա ո՞նց չվռազես, հը՞։ Այս սպանվածներից այնպիսի ծանր հոտ է գալի, որ քիչ է մնում ուշքդ գնա։

— Բա ո՞րտեղից պիտի թեթև հոտ լինի։ Հանգուցյալները միս էլ էին ուտում, կնանոնց էլ ճմռում։ Ով այդ գործերով է զբաղվում, նա հլա դեռ չմեռած՝ սկսում է հոտ արձակել։ Ասում են միթամ կան սրբեր, որոնք մեռնելուց հետո գոլորշի են արձակում, ամա ինձ որ հարցնես, դա պոչով սուտ է։ Ինչ տեսակ սուրբ էլ որ լինի, մեկ է, մեռնելուց հետո, բնական օրենքով պետք է հոտ գա նրանից, ոնց որ հասարակական արտաքնոցից։ Մեկ է, նրանք էլ, սրբերն էլ, փորերը լցնում են ուտելիքով, ու նրանց մեջ էլ կան մարդուս համար աստծու որոշած երեսուն արշին աղիքները...— մտազբաղ ասաց Անտիպը։

Բայց Ստրեմյաննիկովը հայտնի չէ ինչու տաքացավ, բղավեց.

— Ախր նրանք քո ինչի՞ն են պետք, հը՞։ Ի՞նչ գործ ունես սրբերի հետ։ Հա՛յդա, գնացինք։

Գրիգորին հրաժեշտ տվեց կազակներին, մոտեցավ սայլին, որ հրաժեշտ տա իրենց խուտորի մեռելներին, ու միայն այստեղ նկատեց, որ դրանք երեքն էլ ոտաբոբիկ են, իսկ երեք զույգ սապոգների ճիտքերը դրված են ոտների տակ։

— Ինչո՞ւ եք հանել մեռածների կոշիկները։

— Դա մեր կազակներն են արել, Գրիգորի Պանտելևիչ... Սրանց, հանգուցյալների վրա լավ ոտնամաններ կային, դե, հարյուրյակումն էլ այսպես խորհուրդ տվին. լավը հանել ու տալ նրանց, ում ոտնամանները վատ են, իսկ վատը տանել խուտոր։ Մեռածները հո ընտանիքներ ունեն։ Դե, նրանց երեխեքն էլ բարով կմաշեն վատ ոտնամանները... Անիկուշկան այդպես էլ արավ. «Մեռելները ոչ քելելու են, ոչ էլ ձի են նստելու։ Տվեք ինձ Ալյոշկայի սապոգները, դրանց տակերը շատ հուսալի են։ Թե չէ մինչև ես կարմրից կոշիկներ հանեմ, կարող եմ մրսել ու շանսատակ լինել»։

Գրիգորին մեկնեց և հեռանալիս լսում էր, թե ինչպես կազակների միջև վերսկսվեց վեճը։ Ստրեմյաննիկովը հընչեղ, բարակ ձայնով բղավում էր.

— Սուտ ես ջարդում, տո Փչանով։ Դրա համար էլ հերըդ Փչան էր, էլի՛։ Կազակներից սրբեր չե՞ն եղել։ Դրանք բոլորն էլ մուժիկական ցեղիցն են։

— Չէ, եղել են։

— Շան պես հաչում ես։

— Չէ, եղել են։

— Ովքե՞ր։

— Բա սուրբ Գևորգը ի՞նչ է։

— Փիա՜-ա, խաչ հանի, սարսաղ։ Բա նա կազա՞կ է, հը՞։

— Դոնի զուտ կազակ, ցածի ստանիցայից է, կարծյոք Սեմիկարակորսկից։

— Ա՛մա ծռում ես, հա՛-ա։ Գոնե առաջ բուղը տայիր, հետո ծռեիր։ Նա կազակ չէ։

— Կազակ չէ՞։ Բա ինչի՞ են նրան մզրախով նկարում, հը՞։

Գրիգորին էլ ոչինչ չլսեց։ Զին քշեց վարգով, իջավ մի ձորակ, ու կտրելով Հետմանական ճանապարհը, տեսավ, որ սայլը և ձիավորները բլուրից դանդաղ իջնում են խուտորն։

Գրիգորին համարյա մինչև Կարգինսկայա վարգով էր գնում։ Թեթև քամին փոփոացնում էր ոչ մի անգամ չքրտնած ձիու բաշը։ Թուխ, երկար գետնասկյուռները վազում էին ճանապարհի մի կողմից մյուս կողմը, անհանգիստ ճրստճրստում էին։ Նրանց սուր, նախազգուշացուցիչ ճստճստոցը տարօրինակ կերպով ներդաշնակվում էր տափաստանում տիրող վեհասքանչ անդորրության հետ։ Բլուրների, ճանապարհամերձ թմբերի վերևում սավառնում էին արու արոսները։ Ցյունափառ, արևի տակ կայծկլտող մի արոսիկ շրփշրփալի ու արագ թափահարելով թևերը, երկինք էր բարձրանում ու հասնելով զենիթին, ասես լողում էր կապուտաշող անհունում՝ շեշտակիորեն թռչելիս ձգելով թավշանմանսև, հարսանեկան մանյակով պատած պարանոցը, յուրաքանչյուր վայրկյան հեռանալով գետնից։ Մի հարյուր սաժեն բարձրանալով, իջնում էր, է՛լ ավելի արագ շփշփացնում թևերը, ասես տեղնուտեղը կանգ էր առնում։ Բուն իսկ գետնի մոտ, բազմապիսի խոտաբույսերի կանաչ ֆոնի վրա վերջին անգամ սպիտակ կայծակի նման շողում էին թևերի վառվառման փետուրները ու մարում. արոսը չքանում էր,— խոտաբույսերը կլանում էին նրան։

Արուների կանչող, անզսպելիորեն կրքոտ «ճթվթոցը» լսվում էր ամենուրեք։ Ձիրի առափնյա բլուրի հենց կատարին, ճանապարհից մի քանի քայլ հեռավորությամբ Գրիգորին ձիու վրայից տեսավ արոսների տափտափած մի փոքրիկ տեղ,— գետնի հավասարաչափ մի կլորակ, մեկ ու կես արշին տրամագծով, պինդ տափտափած էր էգի համար կռվող արոսների ոտներով։ Այնտեղ չկար և ոչ մի ցողուն. միայն գորշ փոշին, որ ծածկված էր խաչաձև հետքերով, հավասարաչափ շերտով փռված էր այնտեղ, ու շուրջը, քոլախոտի և օշինդրի չոր ցողունների վրա, քամուց օրորվելով,

կախվել էին արոսների դալուկ-խայտաբղետ, վարդերանգ փետուրները, որոնք պոկվել էին կռվում, մարտնչող արոսների մեջքերից ու պոչերից։ Մոտիկ տեղից, բնից դուրս թռավ գորշ, անբարետես մի էգ արոս։ Պառավի նման կորանալով, արագ փոխելով տոտիկները, նա վազեվազ մտավ նախորդ տարվա թառամած իշառվույտի թփի տակ, ու սիրտ չանելով բարձրացնել թևերը, թաքնվեց այնտեղ։

Տափաստանում ծավալվում էր աննշմարելի, գարնան բեղմնավորած, եռուն տրոփյունով առլեցուն ու հզորաղոր կյանքը. բուռն թափով աճում էին խոտաբույսերը. մարդկային գիշատչական աչքից հեռու, տափաստանային գաղտուկ ապաստարաններում զուգավորվում էին թռչունների, մեծ ու փոքրիկ գազանների ամուսնական զույգերը. վարելահողերը ծածկվում էին բարձրացող ծլերի անհամար սայրերով։ Միայն իր կյանքն ապրած՝ նախորդ տարվա քոլախոտը,— երնջնակը,— տխուր կորացել էր տափաստանում ցրված պահպանական կուրգանների լանջերին, կուչ էր գալիս գետընքին, փրկություն որոնում, բայց կենարար, զով քամին անողոքաբար նրան կոտրատելով ու պոկելով չորացած արմատից, քշում, գլորում էր նրան այս ու այն կողմ, արևով պայծառացած, կյանք առած տափաստանում։

Գրիգորի Մելեխովը իրիկնադեմին ժամանեց Կարգինսկայա։ Ծանծաղուտով անցավ Ձիր գետը. Արխաջում, կազակական ավանի մոտ գտավ Ռյաբչիկովին։ Առավոտյան նրանից ընդունեց իր 1-ին դիվիզիայի զորամասերի հրամանատարությունը, որոնք ցրված էին խուտորներում ու, կարդալով շտաբից ուղարկված վերջին ամփոփագրերը, խորհրդակցելով իր դիվիզիայի շտաբի պետ Միխայիլ Կոպիլովի հետ, որոշեց հարձակվել դեպի հարավ, Մինչև Աստախովո գյուղը։

Զորամասերում փամփուշտների սուր պակասություն էր զգացվում։ Անհրաժեշտ էր դրանք կռվով ձեռք բերել։ Հենց այդ էր Գրիգորիի ձեռնարկելիք հարձակման հիմնական նպատակը։

Իրիկնադեմին Կարգինսկայա բերվեցին հեծելազորի երեք գունդ և հետևազորի մի գունդ։ Որոշվեց դիվիզիայում եղած քսաներկու հաստոցավոր և ձեռքի գնդացիրներից վերցնել

միայն վեցը. մնացածների համար փամփշտի ժապավեններ չկային։

Ապրիլի 22-ի առավոտը դիվիզիան սկսեց հարձակումը։ Գրիգորին ճանապարհին թողնելով շտաբը, իր վրա վերցրեց 3-րդ հեծյալ գնդի հրամանատարությունը, ձիավոր պարեկներ ուղարկեց դեպի առաջ, երթակարգով շարժվեց հարավային ուղղությամբ, Պոնամարյովկա ավանի կողմը, որտեղ, հետախուզության տեղեկություններով, կենտրոնանում էին կարմիրբանակային 101-րդ և 103-րդ հետևակ գնդերը, որոնք իրենց հերթին պատրաստվել էին հարձակվել Կարգինսկայայի վրա։

Ստանիցայից երեք վերստ հեռավորությամբ մի հատուկ սուրհանդակ հասավ նրան, հանձնեց Կուդինովի հետևյալ նամակը.

«Սերդոբյան գունդը 2-ին մեզ անձնատուր եղավ։ Բոլոր զինվորներն էլ զինաթափված են, նրանցից քսանհինգ հոգու, որոնք հակառակում էին, Բոգատիրյովը այն աշխարհն ուղարկեց. հրամայեց թրատել։ Մեզ հանձնեցին չորս թնդանոթ (բայց անիծված կոմունիստ հրետանավորները կարողացել էին հանել փականները), ավելի քան 200 արկ և 9 գնդացիր։ Մեզ մոտ մեծ ցնծություն է։ Կարմիրբանակայիններին կխցկենք հետևակ հարյուրյակների մեջ, կստիպենք կռվել յուրայինների դեմ։ Ո՞նց է քեզ մոտ։ Լա՛, քիչ մնաց մոռանայի։ Բռնված են քո հայրենակից կոմունիստները,— Կոտլյարովը, Կոշևոյը ու շատ ելանցիներ։ Վեշկիի ճանապարհին դրանց բոլորին կբրթեն։ Եթե փամփուշտների մեծ կարիք ես զգում, հաղորդի սույնը հանձնողի միջոցով, կուղարկենք մի 500 հատ։

Կուդինով»։

— Կանչե՛լ հանձնատարին,— բղավեց Գրիգորին։

Պրոխոր Զիկովը անմիջապես մոտեցավ ձիով, բայց տեսնելով, որ Գրիգորիի դեմքը գունատված է, վախենալուց նույնիսկ զինվորական պատիվ տվեց.

— Ի՞նչ ես հրամայում։

— Կանչե՛լ Ռյաբչիկովին։ Ո՞րտեղ է Ռյաբչիկովը։

— Շարասյան պոչումն է։

— Թռիր, շո՛ւտ բեր այստեղ։

Պլատոն Ռյաբչիկովը ձին թեթև վազեցնելով երթային շարասյան կողքից, հասավ Գրիգորիին։ Նրա սպիտակաբեղ

դեմքի վրա քամիները քերծել էին մաշկը, գարնանային արևից խանձված բեղերն ու հոնքերը աղվեսի մորթու շիկավուն երանգ էին ստացել։ Նա ժպտում էր, ընթանալիս փրոտացնում ծխախոտը։ Մուգ կարմրավուն նժույգը, որ պարարտ մարմնով էր ու բնավ չէր նիհարել գարնանային ամիսներին, աշխույժ շորորալով քայլում էր նրա տակին՝ պսպղացնելով կրծապանակը։

— Վեշկիից նամա՞կ է եկել,— հարցրեց Ռյաբչիկովը՝ Գրիգորիի մոտ տեսնելով սուրհանդակին։

— Այո, նամակ,— զուսպ պատասխանեց Գրիգորին.— Ընդունիր գունդը և դիվիզիան։ Ես գնում եմ։

— Ի՞նչ կա որ, գնա։ Իսկ ինչո՞ւ ես շտապում։ Ի՞նչ են գրում։ Ո՞վ։ Կուդինո՞վը։

— Ուստ-Խոպերում Սերդոբյան գունդը անձնատուր է եղել...

— Հա՛-ա-ա՞։ Ապրում ենք, էլի՛։ Հիմի գնո՞ւմ ես։

— Հենց հիմի։

— Է՛հ, աստված քեզ հետ։ Մինչև վերադառնաս, մենք արդեն Աստախովոյում կլինենք։

«Կենդանի բռնել Միշկային, Իվան Ալեքսեևին... իմանալ, թե ով էր սպանել Պետրոյին... ու մահից ազատել Իվանին, Միշկային։ Ազատել... Մեր մեջ արյուն է թափվել, բայց մենք հո օտար չե՞նք»,— մտածում էր Գրիգորին՝ կատաղաբար մտրակելով ձին, սրարշավ իջնելով բլուրից։

LII

Հենց որ ապստամբական հարյուրյակները մտան Ուստ-Խոպերսկայա ու շրջապատեցին միտինգի հավաքված սերդոբցիներին, 6-րդ բրիգադի հրամանատար Բոգատիրյովը Վորոնովսկու և Վոլկովի հետ գնաց խորհրդակցության։ Դա տեղի ունեցավ հենց այնտեղ, հրապարակի կողքին, վաճառականական տներից մեկում, ու կարճատև եղավ։ Բոգատիրյովը ձեռքից չհանելով մտրակը, բարևեց Վորոնովսկուն, ասաց.

— Ամեն ինչ լավ է։ Սա ձեզ համար հաշվի կառնվի։

Բայց դուք ինչպե՞ս չկարողացաք պահպանել հրանոթները։

— Պատահականություն է, զուտ պատահականություն, պարոն խորունժի։ Հրետանավորները համարյա բոլորն էլ կոմունիստներ էին, նրանք մերոնց կատաղի դիմադրություն ցույց տվին, երբ սկսվեց նրանց զինաթափումը. սպանեցին երկու կարմիրբանակայինի ու, հանելով փականները, փախան։

— Ափսո՛ս.— Բոգատիրյովը սեղանի վրա գցեց պաշտպանական գույնի գլխարկը, որի բոլորքի վրա պարզ երևում էր մինչ այդ հանած սպայական գլխարկանիշի հետքը, ու կեղտոտ թաշկինակով սրբելով բոլորովին կնտած գլուխը, թուխ գույն ստացած դեմքի քրտինքը, զուսպ ժպտաց.— Էհ, այսքանն էլ լավ է։ Դուք հիմա գնացեք ու ասացեք ձեր զինվորներին... Կարգին խոսեցեք նրանց հետ, որ նրանք... դես-դեն չանեն... որ նրանք հանձնեն բոլոր զենքերը։

Վորոնովսկին կազակական սպայի իշխողական տոնից տհաճություն զգալով, կմկմալով, հարցրեց.

— Բոլոր զենքե՞րը։

— Դե, ես հո չե՞մ կրկնելու։ Ասացի բոլորը, ուրեմն բոլորը։

— Սակայն չէ՞ որ դուք, պարոն խորունժի, և ձեր հրամանատարությունը ընդունել էիք գունդը չզինաթափելու պայմանը։ Ինչպե՞ս թե այդպես... Դե, ես հասկանում եմ, պարզ է, որ գնդացիրները, հրանոթները, ձեռնանռնակները,— այդ բոլորը մենք անպայման պետք է հանձնենք, իսկ ինչ վերաբերում է կարմիրբանակայինների զենքերին...

— Հիմի կարմիրբանակայիններ չկա՛ն,— շարացած վերև տալով սափրած շրթունքը, Բոգատիրյովը բարձրացրեց ձայնը ու հյուսած մտրակով շրմփացրեց սապոգի ցեխոտված ճիտքին.— Կարմիրբանակայիններ հիմի չկան, այլ կան զինվորներ, որոնք պիտի պաշտպանեն Դոնի հողը։ Հա՛ս-կանալի՞ է... Իսկ եթե չպաշտպանեն, մենք կստիպենք նրանց։ Կարիք չկա օյին խաղալ։ Կեղտոտություն եք արել այստեղ, մեր հողում, ու դեռ գլխիդ ինչ-որ պայմաններ ես հանում։ Մեր մեջ ոչ մի պայման չկա։ Հա՛ս-կա-նալի՞ է...

Սերդոբյան գնդի շտաբի պետը, երիտասարդ պոբուչիկ

Վոլկովը վիրավորվեց։ Մատները հուզված խաղացնելով իր սև, մահուդե բլուզի կանգուն օձիքի կոճակների վրա, խճճելով գանգուր, սև քյաքուլի կարակուլե խոպոպիկները, նա խիստ տոնով հարցրեց.

— Ուրեմն դուք մեզ գերիներ եք համարում, այդպե՞ս է, թե ինչ։

— Ես քեզ այդ չասացի, ուրեմն կարիք չկա մեջտեղ բերել քո ենթադրությունները,— կոպիտ կերպով ընդհատեց նրան կազակական բրիգադի հրամանատարը, անցնելով «դու»-ի և արդեն պարզապես ցույց տալով, որ իր խոսակիցները ուղղակի և լիակատար կախում ունեն իրենից։

Սենյակում մի բոպե լռություն տիրեց։ Հրապարակից խուլ աղմուկ էր լսվում։ Վորոնովսկին մի քանի անգամ ետ ու առաջ քայլեց, ճքացրեց մատները, հետո էլ կոճկեց իր տաք, կանաչ-շագանակագույն ֆրենչի բոլոր կոճակները, ու ջղայնորեն թարթելով աչքերը, դիմեց Բոգատիրյովին.

— Ձեր խոսելաձևը վիրավորական է մեզ համար և չի սազում ձեզ, իբրև ռուսական սպայի։ Ես սա շիտակ եմ ասում ձեզ։ Եվ մենք դեռ կտեսնենք, եթե դուք մեզ դրա համար եք կանչել... Կտեսնենք, թե ինչպես պիտի վարվենք... Պորուչիկ Վո՛լկով, հրամայում եմ ձեզ՝ գնացեք հրապարակ և ասացեք ավագներին, որ ոչ մի դեպքում զենքերը չհանձնեն կազակներին։ Հրամայեցեք, որ գունդը պատրաստ պահի հրացանները։ Ես հիմա խոսակցությունը կվերջացնեմ այս... այս պարոն Բոգատիրյովի հետ ու կգամ հրապարակ։

Բարկությունը իր սև թաթով մռայլեց Բոգատիրյովի դեմքը, բրիգադի հրամանատարը ուզեց ինչ-որ բան ասել, բայց արդեն գիտակցելով, որ շատ է չափն անցկացրել, զսպեց իրեն և անմիջապես բոլորովին փոխեց իր վարվեցողությունը։ Ձեռքի հատու շարժմամբ գլխարկը քաշելով աչքերին, դեռևս վայրագորեն խաղացնելով ծոպավոր մտրակը, խոսեց, ու նրա ձայնի մեջ անսպասելի մեղմություն ու քաղաքավարություն նկատվեց.

— Պարոններ, դուք բարեհաճեցիք ճիշտ չհասկանալ ինձ։ Ես, իհարկե, առանձնապես դաստիարակություն չեմ ստացել, յունկերների դպրոցում գիտություններ չեմ անցել, ու գուցե թե այնպես չէի բացատրվում, ինչպես որ պետք է,

բայց հո ամեն բան չպիտի՞ լուրջ ընդունել։ Մենք հո ինչ-քան չլինի մոտիկ մարդիկ ենք։ Մեր մեջ վիրավորանք չպետք է լինի։ Ես ո՞նց ասացի։ Ես միայն ասացի, որ հարկավոր է հենց հիմի զինաթափել ձեր կարմիրբանակայիններին, մանավանդ նրանց, որոնք մեզ համար էլ, ձեզ համար էլ անհուսալի են... Ես հենց դրանց մասին էի խոսում։

— Ախր թույլ տվեք, է՛։ Հարկավոր էր ավելի պարզ բացատրվել, պարոն խորունժի։ Եվ հետո, համաձայնվեցեք, որ ձեր զայրացուցիչ տոնը, ձեր ամբողջ վարվեցողությունը...— Վորոնովսկին թոթվեց ուսերը և արդեն ավելի հաշտ, բայց չսառած ցասման երանգավորումով շարունակեց.— Մենք ինքներս էինք մտածում, որ տատանվողներին, անկայուններին պետք է զինաթափել և հանձնել ձեր տնօրինության...

— Ա՛յ, ըհը՛մ, հենց այդպես։

— ...Ախր ես էլ այդ եմ ասում, որ մենք որոշել ենք ինքներս զինաթափենք նրանց։ Իսկ ինչ վերաբերում է մեր մարտական միջուկին, մենք այն կպահպանենք։ Ինչ կերպ էլ որ լինի, կպահպանենք։ Ես ինքս կամ ահա պորուչիկ Վոլկովը, որին դուք, հետը ծանոթ չլինելով հանդերձ, թույլատրելի համարեցիք «դու» ասել... Մենք մեր վրա կվերցնենք հրամանատարությունը և կկարողանանք պատվով ջնջել մեր վրայից Կարմիր բանակի շարքերում մեր գտնվելու խայտառակությունը։ Դուք պետք է մեզ տաք այդ հնարավորությունը։

— Քանի՞ սվին կլինի ձեր այդ միջուկում։

— Մոտավորապես երկու հարյուր։

— Դե, ի՞նչ արած, լա՛վ,— դժկամ համաձայնեց Բոգատիրյովը։ Նա վեր կացավ, կիսով չափ բացեց միջանցք տանող դուռը, հնչեղ ձայնով բղավեց.— Տանտիրուհի,— ու երբ դռան մոտ երևաց տաք շալով ծածկված, տարեց մի կին, հրամայեց,— կաթ բերեք, շո՛ւտ։

— Մենք կաթ չունենք, ներեցեք խնդրեմ։

— Կարմիրների համար երևի կար, իսկ մեզ համար չկա՞,— թթու ժպտաց Բոգատիրյովը։

Սենյակում վերստին անհարմար լռություն տիրեց։ Պորուչիկ Վոլկովը ընդհատեց այն.

— Ես գնա՞մ։

— Այո,— շունչ առնելով պատասխանեց Վորոնովսկին,— գնացեք և հրամայեցեք, որ զինաթափվեն նրանք, որոնք նշված են մեր ցուցակներում։ Ցուցակները Գորիգասովի և Վեյստմինստերի մոտ են։

Միայն սպայական վիրավորված ինքնասիրությունը նրան դրդեց ասել, որպես թե «մենք դեռ կտեսնենք, թե ինչպես պիտի վարվենք»։ Իրոք շտաբս-կապիտան Վորոնովսկին շատ լավ էր հասկանում, որ իր խաղն ավարտված է, և արդեն նահանջելու տեղ չկա։ Նրա ունեցած տեղեկություններով Ուստ-Մեդվեդիցայից արդեն շարժվել էին և ժամառժամ գալու էին այն ուժերը, որ բանակի շտաբը ուղարկել էր Սերդոբյան խառնվարար գունդը զինաթափելու համար։ Բայց Բոգատիրյովն էլ արդեն գիտակցել էր, որ Վորոնովսկին հուսալի և բացարձակապես անվտանգ մարդ է, որ հիմա այլևս չի կարող ետ մանել։ Բրիգադի հրամանատարը իր պատասխանատվությամբ համաձայնեց գնդի հուսալի մասից ինքնուրույն մարտական միավոր կազմել։ Դրանով վերջացավ խորհրդակցությունը։

Իսկ այդ ժամանակ հրապարակում ապստամբները առանց սպասելու խորհրդակցության հետևանքներին, արդեն եռանդուն գործողություններ էին դիմել սերդոբցիներին զինաթափելու համար։ Կազակական ագահ աչքերն ու ձեռները տնտղում էին գնդի սայլերն ու փամփշտի սայլակները, ապստամբները իրար ձեռքից խլում էին ոչ միայն փամփուշտները, այլև կարմիրբանակային հաստաներբան, դեղին կոշիկները, սրնքափաթաթանները, տաք կուրտկաները, բամբկուն շալվարները, մթերքները։ Մի քանի հոգի սերդոբցիներ ակնառու կերպով համոզվելով, թե ինչ բան է կազակական ինքնագլխությունը, փորձեցին դիմադրություն ցույց տալ։ Նրանցից մեկը հրացանի կոթով խփեց իրեն խուզարկող ապստամբին, որ կարմիրբանակայինի քսակը հանգիստ կերպով խոթել էր իր գրպանը, ու բղավեց.

— Թալանչի՛։ Ի՞նչ ես վերցնում։ Ետ տուր, թե չէ կխփեմ սվինով։

Ընկերները պաշտպանեցին նրան։ Ցասումնալի աղաղակ բարձրացավ.

— Ընկերներ, ի զե՞ն։

— Մեզ խաբել են։

— Հրացանները չտա՛լ։

Սկսվեց ձեռնամարտը, ու դիմադրող կարմիրբանակայիններին ետ մղեցին դեպի ցանկապատը. հեծյալ ապըստամբները 3-րդ հեծյալ հարյուրյակի հրամանատարի կողմից խրախուսված, երկու բոպեում թրատեցին նրանց։

Երբ պորուչիկ Վոլկովը եկավ հրապարակ, զինաթափումը է՛լ ավելի հաջող գնաց։ Հորդ անձրևի տակ խուզարկում էին շարք կանգնեցրած կարմիրբանակայիններին։ Հենց այնտեղ, շարքից քիչ հեռու դարսում էին հրացանները, նռնակները, գնդի հեռախոսային խմբի գույքը, հրացանի փամփուշտների ու գնդացրային ժապավենների արկղերը...

Բոգատիրյովը հապճեպ եկավ հրապարակ և սերդոբցիների շարքի առաջ իր տաքացած, թռչկոտող ձիով շուռ գալով բոլոր կողմերը, գլխից վեր սպառնագին բարձրացնելով հաստ, հյուսած մտրակը, գոռաց.

— Լսեցե՛ք, դուք այսօրվանից կռվելու եք չարագործ կոմունիստների ու նրանց զորքերի դեմ։ Ով միշտ կգնա մեզ հետ, նա կներվի, իսկ ով կհակառակի, նա հրե՛ն այն տեսակ վարձ կստանա.— նա մտրակով ցույց տվեց թրատված կարմիրբանակայիններին, որոնց հագուստը, սպիտակեղենով հանդերձ, ա՞ռդեն հանել էին կազակները և որոնցից անձև, անձրևի տակ թրջվող սպիտակ կույտ էր կազմվել։

Կարմիրբանակայինների շարքերով անցավ կամացուկ փսփսոցը, բայց ոչ ոք լիահնչուն ձայնով չասաց բողոքի ոչ մի խոսք, ոչ մեկը չխախտեց շարքերի համաչափությունը...

Ամենուրեք խմբերով ու ցրիվ թրևում էին հետիոտն ու հեծյալ կազակները։ Նրանք պինդ օղակով շրջապատում էին հրապարակը։ Իսկ եկեղեցու ցանկապատի կողքին, թմբի վրա դրված էին կարմիրբանակայինների շարքերի կողմը դարձրած, կլորերախ, կանաչ ներկած սերդոբյան գնդացիրները, ու դրանց մոտ, վահանակների ետևում պատրաստակամ պպզել էին անձրևից թրջված կազակ-գնդացրորդները...

Մի ժամից հետո Վորոնովսկին ու Վոլկովը ցուցակներով ջոկեցին «հուսալիներին»։ Դրանք հարյուր իննսուն հոգի էին։ Նոր կազմված զորամասը անվանվեց «1-ին ապստամբական առանձին գումարտակ», և հենց այդ օրը գնաց դիրքերը, դեպի Բելավինսկի խուտորը, որտեղից հարձակվում էին 23-րդ Միրոնովյան դիվիզիայի գնդերը, որոնք ուղարկված էին Դոնեցի կողմից։ Լուրերի համաձայն, գալիս էին Միրոնովի հետևյալ գնդերը. 15-րդը — Բիկադորովի հրամանատարությամբ և 32-րդ — հռչակավոր Միշկա Բլինովի հրամանատարությամբ։ Գալիս էին նրանք՝ ջախջախելով դիմադրող ապստամբական հարյուրյակները։ Սրանցից մեկը, որ կռվի էր դուրս եկել Ուստ-Խոպերսկու հողի մի ինչ-որ խուտորից, բոլորովին ջարդեցին։ Բոգատիրյովը որոշել էր հենց Բլինովի դեմ հանել Վորոնովսկու գումարտակը, մարտական մկրտության միջոցով փորձել դրա տոկունությունը...

Մնացած սերդոբցիները, թվով ավելի քան ութ հարյուր մարդ, ոտով, Դոնի ափերով ուղարկվեցին Վեշենսկայա,— այնպես, ինչպես իր ժամանակին Բոգատիրյովի անունով ուղարկված նամակում հրամայել էր ապստամբական ուժերի հրամանատար Կուդինովը։ Նրանց հեռվից հսկելու համար Դոնի առափնյա բլուրներով գնում էին երեք հեծյալ հարյուրյակներ, որոնք զինված էին սերդոբյան գնդացիրներով։

Ուստ-Խոպերսկայայից մեկնելուց առաջ Բոգատիրյովը եկեղեցում մաղթանք կատարեց ու հենց որ վերջացավ տերտերի աղոթքը «քրիստոսասեր կազակական զինվորությանը» հաղթանակ շնորհելու մասին,— դուրս ելավ։ Նրա համար ձի բերին։ Նստեց, կանչեց այն հարյուրյակներից մեկի հրամանատարին, որոնք իբրև առաջակալ թողնված էին Ուստ-Խոպերսկում, ու ձիու վրայից թեքվելով, շշնջաց նրա ականջին,

— Կոմունիստներին ավելի խիստ հսկիր, քան վառոդի նկո՛ւղը։ Վաղը առավոտից հուսալի ուղեկցորդով նրանց քշիր Վեշենսկայա։ Իսկ այսօր սուրհանդակներ ուղարկիր խուտորները, որ իմաց տան, թե ինչ տիպի մարդկանց ենք քշում։ Ժողովուրդը նրանց կդատի իր դատաստանով։

Այնուհետև մեկնեց։

LIII

Ապրիլի 20-ի կեսօրին Վեշենսկայա ստանիցայի Սինգին խուտորի վերևում մի սավառնակ երևաց։ Լսելով մոտորի խուլ դղրդոցը, երեխաները, կանայք ու ծերունիները խրճիթներից դուրս վազեցին. գլուխները վեր ցցած, ձեռները վահանակների պես տանելով աչքերին, երկար նայում էին, թե ինչպես սավառնակը ամպամած երկնքում ծռմռվելով, ուրուրի պտույտներ է կատարում։ Մոտորի դղրդյունը ավելի սաստկացավ, ավելի հնչեղ դարձավ։ Սավառնակը ցածրանում էր, վայրէջքի հարթ տեղ ընտրում խուտորից դուրս, արոտավայրում։

— Հիմի կսկսի ռումբ գցել, զգույշ եղեք,— վախեցած բղավեց մի ինչ-որ բանիմաց պապի։

Ու նրբանցքում հավաքված ամբոխը դես ու դեն փախավ։ Կանայք քարշ տվին լաց ու կոծ բարձրացրած երեխաներին։ Ծերունիները այծի վարժունությամբ ու ճարպկությամբ ցատկում էին ցանկապատերի վրայից, փախչում ծառուտները։ Նրբանցքում մնաց միայն մի պառավ։ Սա էլ փորձեց փախչել, բայց արդյո՞ք ոտները թուլացան վախից, թե՞ սայթաքեց գուղձի վրա, միայն թե ընկավ ու այնպես էլ պառկած մնաց՝ անպարկեշտորեն տնկելով լղոզ ոտները, կերկերաձայն հեծկլտալով.

— Օ՛յ, ազատեք, մատաղ ձեզ, օ՛յ, մեռա ես։

Ոչ ոք չվերադարձավ պառավին ազատելու։ Իսկ սավառնակը սարսափելի դղրդալով, փոթորկի մռնչյունով ու սուլոցով անցավ հենց ամբարի վերևից, մահվան սարսափից շոված պառավական աչքերից իր թևավոր ստվերով մի վայրկյան ծածկեց լույս աշխարհը, սլացավ ու անիվները փափլիկ խփելով խուտորի արոտավայրի խոնավ գետնին, վազ տվեց դեպի տափաստան։ Հենց այդ միջոցին էլ պառավը մանկական մեղք գործեց։ Նա ընկել էր կիսամեռ, ոչինչ չզգալով ու չտեսնելով ոչ իր տակին, ոչ էլ իր շուրջը։ Հասկանալի է, որ նա չէր կարող տեսնել, թե ինչպես հեռվում, գետնին իջած սարսափելի թռչունի միջից դուրս եկան սև, կաշվե հագուստով երկու մարդ, ու անվճռականորեն թրևելով տեղում, նայելով շուրջը, քայլեցին դեպի խուտորը։

Բայց պառավի ամուսինը, որ թաքնվել էր ծառուտում, մոշի նախորդ տարվա մացառուտում, քաջարի մի ծերուկ էր։ Թեպետև նրա սիրտը դողում էր ինչպես բռնված ճնճղուկի սիրտը, բայց և այնպես նա դիտելու համարձակություն ուներ։ Հենց նա էլ ճանաչեց իր տանը մոտեցող մարդկանցից մեկին,— սպա Պետրո Բոգատիրյովին, որը իր որդու հետ ծառայել էր մի գնդում։ Պյոտրը, որ Գրիգորի Բոգատիրյովի՝ ապստամբական 6-րդ առանձին բրիգադի հրամանատարի հորեղբորորդին էր, սպիտակների հետ նահանջել էր Դոնեցի մյուս կողմը։ Բայց այդ անկասկած նա էր։

Ծերունին մի բոպեի չափ խորազնին նայում էր նապաստակի պես պզված ու ձեռները քարշ արած։ Վերջնականապես համոզվելով, որ դանդաղ, շորորալով եկողը հենց Պետրո Բոգատիրյովն է որ կա, նույնպես կապուտաչյա, ինչպես տեսել էր նրան նախորդ տարում, միայն մի փոքր բուսապատված դեմքով, վաղուց չսափրած մազ ու մորուքով,— ծերունին ոտքի ելավ, փորձեց, թե արդյոք ոտները կարո՞ղ են իրեն պահել։ Ծնկատակի ջլերը միայն մի քիչ դողում էին, բայց ոտները կարգին պահում էին ծերուկին, և սա շորորալով, մանրաքայլ դուրս եկավ ծառուտից։

Նա չմոտեցավ գետնին փռված իր պառավին, այլ ուղղակի գնաց դեպի Պետրոն և սրա ուղեկիցը, հեռվից, ճաղատ գլխից հանեց իր խունացած կազակական գլխարկը։ Պյոտր Բոգատիրյովն էլ ճանաչեց նրան, ողջունեց ձեռքի թափահարումով, ժպիտով։ Մոտեցան իրար։

— Թույլ տվեք իմանալ, դրո՞ւստ որ այդ դուք եք, Պետրո Գրիգորիչ։

— Հենց ես եմ որ կամ, պապի։

— Աստված հաջողեց, ծեր հասակումս թռչող մեքենա տեսա։ Ամա մենք ո՞նց վախեցանք դրանից, հա՛-ա։

— Մոտիկ տեղերում կարմիրներ չկա՞ն, պապի։

— Չկան, չկան, սիրելիս։ Նրանց քշել են շատ հեռու, Ջիրից դենը, խախոլների հողերը։

— Մեր կազակներն է՞լ են ապստամբել։

— Ոտքի ելնելը ելել են, ամա շատերին էլի պառկեցրել են։

— Ինչպե՞ս։

— Այսինքն կոտորել են։

— Ա՜-ա... Իմ ընտանիքը, հայրս, բոլորը կենդանի՞ են։

— Բոլորը։ Իսկ դուք Դոնեցի այն կողմի՞ց եք եկել։ Իմ Տիխոնին այնտեղ չե՞ք տեսել։

— Դոնեցի մյուս կողմից։ Տիխոնից բարև եմ բերել։ Էհ, պապի, դու մտիկ արա մեր մեքենային, որ երեխաները ձեռք չտան, իսկ ես գնամ տուն... Գնանք։

Պյոտր Բոգատիրյովը և նրա ուղեկիցը գնացին։ Իսկ ծառուտներից, չարդախների տակից, մառաններից ու ամեն տեսակ ծակ ու ծուկից դուրս եկավ այնտեղ թաքնված, սարսափահար ժողովուրդը։ Ամբոխը շրջապատեց սավառնակը, որ դեռ տաք մոտորի ջերմություն և բենզինի ու յուղի խանձահոտ էր արձակում։ Քաթանով պատած դրա թևերը շատ տեղերից ծակծկված էին գնդակներով և արկերի բեկորներով։ Ջտեսնված մեքենան կանգնել էր լուռ և տաք՝ ինչպես երկար ժամանակ քշած ձի։

Պապին, որ առաջինն էր դիմավորել Պյոտր Բոգատիրյովին, աճապարեց դեպի նրբանցքը, ուր պառկած էր նրա սարսափահար պառավ կինը, ուզեց նրան ուրախացնել որդու, Տիխոնի մասին իմացած տեղեկություններով, որը դեկտեմբերին նահանջել էր օկրուգային վարչության հետ։ Նրբանցքում պառավը չկար։ Նա կարողացել էր հասնել տուն ու մտնելով մառանը, հապճեպ փոխում էր հագուստը՝ շապիկը և յուրկան։ Ծերունին դժվարությամբ գտավ նրան, բղավեց.

— Պետկա Բոգատիրյովն է թռել-եկել։ Տիխոնից շատ կարոտով բարև է բերել,— ու անասելի վրդովվեց, տեսնելով, որ իր պառավը փոխում է շորերը.— Այդ ի՞նչ ես զուգվում, ա՛յ քավթառ ագռավ, հը՞։ Թյո՛ւ, գրողի բաժին դառնաս։ Ախր ո՞ւմ ես պետք, քաչալ սատանա։ Ջահե՞լ ես ինչ է։

...Շուտով ծերունիները եկան Պետրո Բոգատիրյովի հոր տունը։ Նրանցից ամեն մեկը ներս մտնելիս հանում էր գդակը, խաչակնքում սրբապատկերների առաջ և ծանր ու մեծ բազմում նստարանի վրա՝ հենվելով դագանակին։ Սկսվեց խոսակցությունը։ Պյոտր Բոգատիրյովը բաժակից խմելով սերը չքաշած, պաղ կաթը, պատմեց, որ եկել է Դոնի կառավարության հանձնարարությամբ, որ իր խնդիրն է կապ

հաստատել վերին Դոնի ապստամբածների հետ և նրանց օգնել կարմիրների դեմ ուղղված պայքարում,— ինքնաթիռներով փամփուշտներ և սպաներ բերել։ Հաղորդեց, որ շուտով Դոնի բանակը ամբողջ ֆրոնտով հարձակման կանցնի ու կմիանա ապստամբների բանակին։ Բոգատիրյովը միաժամանակ կշտամբեց ծերունիներին, որ թույլ ազդեցություն էին ունեցել երիտասարդ կազակների վրա, որոնք լքել էին ֆրոնտը ու կարմիրներին ճանապարհ տվել դեպի իրենց հողը։ Նա իր խոսքը այսպես վերջացրեց.

— ...Բայց քանի որ դուք արդեն խելքի եք եկել և ստանիցաներից քշել եք սովետական իշխանությունը, ուստի Դոնի կառավարությունը ներում է ձեզ։

— Բայց մեզ մոտ, Պետրո Գրիգորիչ, ախր հիմի սովետական իշխանություն է առանց կոմունիստների։ Մեզ մոտ դրոշակն էլ հո երեք գույնի չէ, այլ կարմիր ու ճերմակ է,— անվճռականորեն հաղորդեց ծերունիներից մեկը։

— Մինչև իսկ իրար հետ խոսելիս էլ մեր ջահել-ջուհուլները, այդ անհնազանդ շան որդենիքը միմյանց «ընկեր» են ասում,— ավելացրեց մեկ ուրիշը։

Պյոտր Բոգատիրյովը ժպտաց ծայրատ, շիկավուն բեղերի տակին ու հեգնոտ կկոցելով կլոր, կապույտ աչքերը, ասաց.

— Ձեր սովետական իշխանությունը գարնան գլխի սառույց է։ Հենց որ արևը տաքացնի, դա կհալվի։ Իսկ այն դրդիչներին, որոնք Կալաչի մոտ թողել էին ֆրոնտը, հենց որ վերադառնանք Դոնեցի մյուս կողմից, թունդ կքոթակենք։

— Քոթակել, արյունլվիկ անել այդ անիծվածներին։

— Անպատճառ այդպես վարվել։

— Քոթակե՛լ, քոթակել։

— Ամբողջ ժողովրդի առաջ ձաղկել, մինչև որ նրանց տակը թրջվի,— ուրախացած աղմկեցին ծերունիները։

. . . . . .

Իրիկնադեմին, ձիավոր սուրհանդակի միջոցով լուր ստանալով, ապստամբական զորքերի հրամանատար Կուդինովը և շտաբի պետ Իլյա Սաֆոնովը եռաձի կառքով ժամանեցին

Սինգին. ձիերը արագ վազքից կորել էին քաշ ու քրտնքի մեջ։

Առանց թափ տալու սապոգների և բրեզենտե պլաշչների կեղտը, Բոգատիրյովի ժամանելուց անսահման ուրախացած, նրանք համարյա վազելով մտան Բոգատիրյովի խրճիթը։

LIV

Այն քսանհինգ կոմունիստները, որ Սերդոբյան գունդը հանձնել էր ապստամբներին, ուժեղ հսկողության տակ դուրս եկան Ուստ-Խոպերսկուց։ Փախչելու մասին չէր էլ կարելի մտածել։ Իվան Ալեքսեևիչը, կաղ-կաղ քայլելով գերիների բազմության մեջտեղում, տխրությամբ ու ատելությամբ էր նայում ուղեկցորդ կազակների զայրույթից քարացած դեմքերին, մտածում էր՝ «Կկորցնեն մեզ. եթե դատ չլինի, կորած ենք»։

Ուղեկցորդների մեջ գերակշռում էին հասակավորները։ Նրանց հրամանատարը մի հնադավան ծերունի էր, Ատամանյան գնդի վախմիստր։ Հենց սկզբից, երբ դուրս եկան Ուստ-Խոպերսկուց, նա գերիներին հրամայեց չխոսել, չծխել, հարցեր չտալ ուղեկցորդներին։

— Աղոթք արեք, սաղայելի ծառաներ։ Մեռնելու եք գնում, մեղք մի գործեք մնացած ժամերին։ Ի-ի-ի՜հ։ Մոռացել եք աստծուն, սատանային եք հանձնվել։ Չար հոգու բաժին եք դարձել։— Ծերուկը մերթ բարձրացնում էր նագանը, մերթ տնտղում դրա հյուսած, վզից գցած քուղը։

Գերիների մեջ միայն երկու կոմունիստ կային, որոնք Սերդոբյան գնդի հրամկազմից էին. մնացած բոլորը, բացի Իվան Ալեքսեևիչից, Ելանսկայա ստանիցայի ոչ կազակ բնակիչներ էին, պարթևահասակ ու առողջ տղերք, որոնք պարտիայի մեջ էին մտել այն միջոցին, երբ սովետական զորքերը եկել էին այդ ստանիցան, և որոնք ծառայել էին իբրև միլիցիոներներ, խուտորների ռևկոմների նախագահներ, ապստամբությունից հետո փախել էին Ուստ-Խոպերսկայա ու մտել Սերդոբյան գունդը։

Անցյալում նրանք համարյա բոլորն էլ եղել էին արհեստավորներ,— ատաղձագործներ, հյուսներ, տակառագործներ, քարտաշներ, վառարանագործներ, կոշկակարներ, դերձակներ։ Նրանցից ամենամեծը տեսքով երեսունհինգ տարեկանից ավելի չէր, ամենափոքրը՝ մոտ քսան տարեկան։ Ամրակազմ, գեղեցիկ ու առողջ, ֆիզիկական ծանր աշխատանքից կոշտացած, խոշոր ձեռքերով, լայնաթիկունք ու կրծքեղ այդ մարդիկ իրենց արտաքին տեսքով խիստ տարբերվում էին կորացած ծերուկ ուղեկցորդներից։

— Մեզ դատելո՞ւ են, ի՞նչ ես կարծում,— շշնջաց Ելանսկի կոմունիստներից մեկը, որ քայլում էր Իվան Ալեքսեևիչի կողքից։

— Հազիվ թե։

— Կկոտորե՞ն։

— Երևի։

— Բայց չէ՞ որ սրանց մոտ գնդակահարություններ չկան։ Կազակներն այդպես էին ասում, հիշո՞ւմ ես։

Իվան Ալեքսեևիչը լռեց, բայց քամու թոցրած կայծի նման նրա սրտումն էլ շողաց հույսը. «Դրուստ որ, նրանք չեն կարող մեզ գնդակահարել։ Նրանց, սրիկաների մոտ լոզունգ էր նետված՝ «Կորչեն կոմունան, թալանն ու գնդակահարությունները»։ Նրանք, լուրերի համաձայն, միայն տաժանակրության էին դատապարտում... Կդատապարտեն ճիպոտահարության, տաժանակիր աշխատանքի։ Էհ, դա սարսափելի չէ։ Տաժանակրության մեջ կմնանք մինչև ձմեռ, իսկ ձմռանը, հենց որ Դոնը սառչի, մերոնք էլի վրա կտան սրանց...»։

Առկայծեց հույսը ու մարեց ինչպես քամու թոցրած կայծը. «Չէ, կկոտորեն։ Կատաղել են սրիկաները։ Մնաս բարով, կյանք... Էհ, այսպես չպիտի լիներ։ Կռվում էի նրանց դեմ ու հենց նրանց էլ խղճում էի... Հարկավոր էր ոչ թե խըղճալ, այլ ջարդել ու արմատախիլ անել ամեն ինչ»։

Նա սեղմեց բռունցքները, անզոր ցասումով շարժեց ուսերը ու հենց այդ պահին սայթաքեց, քիչ մնաց ընկներ ետևից գլխին հասցրած հարվածից։

— Ի՞նչ ես բռունցքներդ սեղմում, պոռնիկ գել։ Հարցնում եմ, ի՞նչ ես բռունցքներդ սեղմում, հը՞,— ձիով նրան վրա տալով, բոռաց վախմիստրը, ուղեկցորդի պետը։

Նա մի անգամ էլ մտրակով խփեց Իվան Ալեքսեևիչին, շեղակի ճեղքեց նրա դեմքը հոնքավերևի ոսկորից մինչև պիրկ, մեջտեղը փոս կզակը։

— Ո՞ւմ ես զարկում, ինձ խփիր, հայրիկ, ի՞նձ։ Նա վիրավորված է, ինչո՞ւ ես նրան խփում,— աղերսագին ժպիտով, կերկերաձայն գոչեց ելանցիներից մեկը ու, դուրս գալով խմբի միջից, դեմ արեց ատաղձագործի իր պիրկ կուրծքը՝ պաշտպանելով Իվան Ալեքսեևիչին։

— Քեզ է՛լ կհասնի։ Խփեցեք սրանց, կազակներ, խփեցեք կոմունիստներին։

Մտրակը այնպիսի թափով պատռեց ելանցու պաշտպանական գույնի ամառային վերնաշապկի ուսը, որ ծվենները ոլորվեցին ինչպես կրակից խանձված տերևներ։ Թրջելով ծվենները, վերքից, արագորեն ուռչող սպիից հոսեց սև, սպանդային արյունը...

Կատաղությունից շնչատպառ լինելով, գերիներին ձիով ոտնատակ անելով, վախմիստրը մտավ խմբի մեջտեղը, սկսեց անողոքաբար խփել մտրակով...

Էլի մի հարված տրվեց Իվան Ալեքսեևիչին։ Նրա աչքերում կարմիր կայլակներ շողացին, ճոճվեց գետինը ու ասես կտցավ կանաչ անտառը, որ եզերել էր գետի հակադիր, ավազոտ ափը։

Իվան Ալեքսեևիչը իր ոսկրոտ ձեռքով բռնեց ասպանդակից, ուզեց ձիուց գցել գազանացած վախմիստրին, բայց թրի բութ կողմով հասցրած հարվածը նրան գետին գլորեց, հեղձուցիչ, թանձր, անալի փոշին լցվեց նրա բերանը, քթից ու ականջներից բխեց տաք արյունը...

Ուղեկցորդները ոչխարների պես նրանց իրար գլխի հավաքելով, խփում էին, երկար ու դաժանորեն ծեծում։ Ճանապարհին ընկած Իվան Ալեքսեևիչը ասես երազի միջից լսում էր խուլ ճիչերը, ոտների թնդաձայն դոփյունն իր շուրջը, ձիերի կատաղի փնչոցը։ Ձիու փրփուրի մի քուլա ընկավ նրա բաց գլխին ու համարյա նույն ակնթարթում շատ մոտ տեղից, հենց իր գլխավերևից տղամարդու կարճ ու սարսափելի հեկեկանք ու ճիչ լսվեց.

— Սրիկաներ, խփում եք անզեն մարդկանց...Օ՛-օֆ...

Մի ձի ոտը դրեց Իվան Ալեքսեևիչի վիրավորված ոտին, պայտի բութ սեպերը խրվեցին սրունքի փափուկ մսի մեջ, գլխավերևում շաչում էին հարվածների թնդաձայն ու արագորեն իրար հաջորդող շրմփոցները։ Եվս մի րոպե, ու այնուհետև ծանր, թաց մի մարմին, դառն քրտնքի ու արյան աղի հոտ արձակելով, ընկավ Իվան Ալեքսեևիչի կողքին, և սա դեռ վերջնականապես գիտակցությունը չկորցրած, լսեց, թե ինչպես ընկած մարդու կոկորդից, ինչպես գլխիվայր շուռ տված շշի բկից, կլկլալով դուրս հոսեց արյունը...

Հետո էլ գերիների խումբը քշեցին Դոն, ստիպեցին լվալ արյունը։ Մինչև ծնկները ջրի մեջ կանգնած, Իվան Ալեքսեևիչը թրջում էր հարվածներից առաջացած, սուր ցավող վերքերը և ուռուցքները, բռով վերցնում ի՛ր իսկ արյան հետ խառնված ջուրը, ագահությամբ խմում էր այն, վախենալով, որ չի կարողանա հագեցնել շարունակ սաստկացող ծարավը։

Ճանապարհին նրանց հասավ ձիավոր մի կազակ։ Մուգ կարմրավուն նրա ձին, գարնանային վառ պլպլալով կշտությունից ու քրտնքից, գալիս էր արագ, աշխույժ վարգով։ Ձիավորը չքացավ մի խուտորում, ու գերիները դեռ չէին հասել առաջին տները, երբ ժողովրդի բազմությունները դուրս թափվեցին նրանց ընդառաջ։

Իվան Ալեքսեևիչը նայելով վազելով մատեցող կազակներին ու կանանց, հասկացավ, որ դա մահ է։ Հասկացան նաև մյուս բոլոր գերիները։

— Ընկերնե՛ր, եկեք միմյանց հրաժեշտ տանք,— գոչեց կոմունիստ սերդոբցիներից մեկը։

Մոտենում էր ամբոխը, որ զինված էր եղաններով, քլունգներով, ցցերով, սայլերի երկաթե կողերով...

Այնուհետև ամեն ինչ տեղի ունեցավ ինչպես ամենածանր երազում։ Երեսուն վերստ գնում էին համատարած խուտորներով, յուրաքանչյուր խուտորում հանդիպելով խոշտանգող ամբոխին։ Մերուկները, կնանիքը, երեխաները խփում, թքում էին գերի կոմունիստների ուռած, արյունլվիկ դեմքերին, քարեր ու չորացած հողակոշտեր էին գցում նրանց վրա, փոշի ու մոխիր շպրտում ծեծից արյունակալած նրանց աչքերին։ Առանձնապես մոլեգնում էին կնանիքը՝ նրանց ենթարկելով ամենադաժան խոշտանգումների։ Քսանհինգ դատապարտվածները անասելի տանջանքներ էին կրում։ Ի վերջո

նրանք անճանաչելի դարձան, մարդկանց չէին նմանվում, այնքա՜ն հրեշավոր կերպով էին այլանդակվել նրանց մարմիններն ու դեմքերը, ուռել, կապուտկել, արյունակալել, ծածկվել արյան հետ խառնված ցեխով։

Սկզբում քսանհինգից ամեն մեկը աշխատում էր ուղեկցորդներից հեռու քայլել, որպեսզի քիչ հարվածներ ստանար. յուրաքանչյուր մեկը ձգտում էր ընկնել իրենց խառնված շարքերի մեջտեղը, դրանից էլ քայլում էին պինդ սեղմված խմբով։ Բայց նրանց շարունակ բաժանում էին, դես-դեն հրում։ Եվ նրանք կորցրին հարվածներից գեթ որևէ չափով իրենց պահպանելու հույսը, արդեն ցրված էին քայլում, ու յուրաքանչյուրը միայն մեկ տանջալից ցանկություն ուներ. հաղթահարել ինքն իրեն, վայր չընկնել, որովհետև ընկածը այլևս անկարող կլիներ վեր կենալ։ Նրանք անտարբեր դարձան։ Իսկ սկզբում ամեն մեկը ձեռներով ծածկում էր դեմքն ու գլուխը, անզոր կերպով ձեռները տանում աչքերին, երբ հենց բիբերի առաջ ցցվում էին եռատամ եղանների երկաթե ծայրերը կամ աղոտ նշմարվում էր ցցի բութ, գորշ քիթը, ծեծվող գերիների խմբի միջից լսվում էին և՛ աղերսանքներ գութ անելու մասին, և՛ հեծեծանքներ ու հայհոյանքներ, և՛ խոր, կենդանական մռնչոց՝ անտանելի ցավից։ Կեսօրին բոլորն էլ լռեցին։ Ելանցիներից միայն մեկը, ամենաջահելը, անցյալում զվարճախոս և վաշտի սիրելին, ճչում էր, երբ գլխին հարված էր տրվում։ Նա քայլում էր ասես կրակի վրայով, ցատկոտելով, ցնցելով ամբողջ մարմինը, քարշ տալով ձողից ջարդված ոտը...

Իվան Ալեքսեևիչը Դոնում լվացվելուց հետո հոգեպես ամրապնդվեց։ Տեսնելով իրենց ընդառաջ վազող կազակներին ու կանանց, հապճեպորեն հրաժեշտ տվեց կողքից քայլող ընկերոջը, կամացուկ ասաց.

— Դե, ի՞նչ արած, եղբայրներս, մենք կարողանում էինք կռվել, պետք է կարողանանք և հպարտությամբ մեռնել... Մինչև վերջին շունչը պետք է հիշենք մի բան. մեզ մնում է մտքով մխիթարվել, որ թեև մեզ կկոտորեն, ամա սովետական իշխանությունը հո ցցով չես սպանի։ Կոմունիստներ, եղբայրնե՛ր, մեռնե՛նք քաջաբար, որ թշնամիները չծիծաղեն մեզ վրա։

Ելանցիներից մեկը չդիմացավ. երբ Բոբրովսկի խուտորում ծերունիները սկսեցին վարժ ու դաժանորեն ծեծել նրան, նա տղայական աղիողորմ ճչոցներ արձակեց, պատռեց վերնաշապկի օձիքը, կազակներին ու կանանց ցույց տվեց փոքրիկ մի խաչ, որ կեղտից ու քրտնքից սևացած դայթանով կախել էր վզից։

— Ընկերներ, ես նոր եմ մտել պարտիայի մեջ... Խնայեցեք, ես հավատում եմ աստծուն... Ես երկու երեխա ունեմ... Գութ արեք, դուք էլ երեխաներ ունեք...

— Մենք քեզ ի՞նչ «ընկերներ» ենք։ Ձե՛նդ։

— Երեխեքի՞դ միտդ բերիր, կռապաշտ իժ։ Խա՞չ ես ցույց տալի, հա՞։ Կակղեցի՞ր։ Բա որ մերոնց գնդակահարում, թրատում էիր, հիշո՞ւմ էիր աստծուն, հը՞,— շունչ առնելով հարցրեց նրան կարճաքիթ, ականջողով մի ծերունի, որը խփել էր երկու անգամ։ Ու պատասխանի չսպասելով, նորից թափ առավ, խփեց գլխին։

Իվան Ալեքսեևիչը անզգայացել էր այն ամենի վերաբերմամբ, ինչ որ տեսնում էր, լսում, գիտակցում, նրա ուշադրությունը ոչ մի բանի վրա չէր կանգ առնում։ Կարծես քարացել էր սիրտը, բայց լոկ մի անգամ դողաց այն։ Կեսօրին նրանք մտան Տյուկովնովսկի խուտորը, գնացին փողոցով, ամբոխի շարքերի միջով, նրանց վրա անեծքներ ու հարվածներ էին թափվում։ Եվ ահա հենց այստեղ Իվան Ալեքսեևիչը, շեղակի նայելով մի կողմ, տեսավ, թե ինչպես յոթ տարեկան մի տղա կպավ մոր փեշին, ու ծոմոված թշերից կարկտի նման գլորվող արցունքներով, հեծկլտալով, աղիողորմ ճչաց.

— Մայրիկ, մի խփի դրան, օ՛յ, մի խփի... Մեղքս գալիս է, վախենում եմ, նա արյունլվիկ է եղել...

Կինը, որ ցիցը բարձրացրել էր մի ելանցու վրա, հանկարծ ճչաց, դեն գցեց ցիցը, ու բռնելով տղայի ձեռքից, գլխապատառ նետվեց նրբանցքը։ Մանկական լացից, երեխայական հուզիչ կարեկցությունից սրտաշարժված Իվան Ալեքսեևիչի աչքերից կաթեց անկոչ արցունքը, աղեց կտրատված, արյունակալած շուրթերը։ Նա կարճ հեծկլտաց՝ հիշելով իր տղային, կնոջը, ու կայծակի պես բռնկված այդ հիշողությունից առաջացավ անհամբեր մի ցանկություն՝ «Միայն թե նրանց աչքի առաջ չսպանեն։ Եվ... թող շուտ սպանեն...»

Գնում էին ոտները հազիվ քարշ տալով, ճռճվելով հոգ-

նածությունից և հոդերը ծակծկող ցավից։ Խուտորից դենը, արոտավայրում տեսնելով տափաստանային մի ջրհոր, խընդրեցին ուղեկցորդի պետին, որ թույլ տա ջուր խմել։

— Ջուր խմե՞ս որն է, առանց այդ էլ ուշացել ենք, քայլե՛լ,— բոռաց վախմիստրը։

Բայց ծերունի ուղեկցորդներից մեկը պաշտպանեց գերիներին.

— Խիղճ արա, Ակիմ Սազոնիչ, ախր սրանք էլ մարդիկ են։

— Ի՞նչ մարդիկ, է՞։ Կոմունիստները մարդիկ չեն։ Դու ինձ մի սովորեցնի։ Ե՞ս եմ այստեղ պետը թե՞ դու։

— Քեզ պես պետեր շատ կան։ Ելեք խմելու, տղերք։

Ծերունին իջավ ձիուց, մի դույլ ջուր հանեց ջրհորից։ Գերիները շրջապատեցին նրան, քսանհինգ զույգ ձեռքեր միանգամից մեկնվեցին դեպի դույլը, փայլեցին բորբոքված, ուռած աչքերը, հնչեց խոպոտ, կցկտուր շշնջյունը.

— Տուր ինձ, պապի։

— Գոնե մի քիչ...

— Մի կում, էլի՛...

— Ընկերներ, բոլորդ միանգամից չմոտենաք։

Ծերուկը տատանվեց, չիմացավ առաջինը ում տար ջուրը։ Մի քանի տաղտկալի վայրկյան սպասելուց հետո նա ջուրը լցրեց անասունների փորածո, գետնի մեջ թաղած տաշտը, ետ քաշվեց, բղավեց.

— Ի՞նչ եք եզների պես վրա տալի։ Կարգով խմեցեք։

Ջուրը հոսելով տաշտի կանաչ-մամռակալած, բորբոսնած հատակով, լցվում էր արևից տաքացած, թաց փայտի հոտ արձակող դրա անկյունը։ Գերիները վերջին ուժերը լարած, նետվեցին դեպի տաշտը։ Ծերունին իրար ետևից տասնմեկ դույլ ջուր հանեց, ու խղճահարությունից մռայլվելով, նայելով գերիներին, լցրեց տաշտը։

Իվան Ալեքսեևիչը խմեց ծնկաչոք, ու բարձրացնելով թարմացած գլուխը, առավելագույն, գրեթե շոշափելի պայծառությամբ տեսավ կրաքարային փոշու եղյամանման-սպիտակ ծածկոցը Դոնի առափնյա ճանապարհի վրա, կապույտ տեսիլքի նման հեռվում ուրվագծվող կավճոտ լեռնաճյուղերը, իսկ դրանց վերևում, ալեծուփ Դոնի հոսուն ժապավենի վերևում, երկնքի անծայրածիր, վեհաքանչ լազուրում, ամենաանմատչելի բարձունքում՝ փոքրիկ մի ամպ։ Քամուց թևավորված, առագաստի պես սպիտակ, առկայծուն կատարով ամպիկը շեշտակի սահում էր դեպի հյուսիս, որ Դոնի հեռավոր ոլորանում արտացոլվում էր նրա արևակնային ստվերը։

LV

Ապստամբական ուժերի գերագույն հրամանատարության գաղտնի խորհրդակցությունում որոշվեց օգնություն խնդրել Դոնի կառավարությունից, ատաման Բոգաևսկուց։

Կուդինովին հանձնարարվեց նամակ գրել և զրջում ու ցավ հայտնել, որ 1918 թվականի վերջում վերինդոնեցիները բանակցությունների մեջ էին մտել կարմիրների հետ, լքել էին ռազմաճակատը։ Կուդինովը նամակ գրեց։ Վերին Դոնի ապստամբած ամբողջ կազակության անունից նա խոստանում էր հետագայում տոկունությամբ, մինչև հաղթանակ տանելը կռվել բոլշևիկների դեմ, խնդրում էր օգնել ապստամբներին,— ֆրոնտի վրայից սավառնակներով ուղարկել հրացանի փամփուշտներ և կադրային սպաներ՝ զորամասերը ղեկավարելու համար։

Պյոտր Բոգատիրյովը մնաց Սինգինում, ապա մեկնեց Վեշենսկայա։ Օդաչուն Կուդինովի նամակով վերադարձավ Նովոչերկասկ։

Այն օրվանից Դոնի կառավարության և ապստամբական հրամանատարության միջև սերտ կապ հաստատվեց։ Համարյա ամեն օր Դոնեցի մյուս կողմից ժամանում էին բոլորովին նոր, ֆրանսիական գործարանների արտադրած սավառնակներ, որոնք բերում էին սպաներ, հրացանի փամփուշտներ և աննշան քանակությամբ արկեր երեք դյույմանոց հրանոթների համար։ Օդաչուները նամակներ էին բերում Վերին Դոնի այն կազակներից, որոնք նահանջել էին Դոնի բանակի հետ, հարազատների պատասխանները Վեշենսկուց տանում էին այդ կազակներին,— Դոնեցի մյուս կողմը։

Հաշվի առնելով ռազմաճակատի դրությունը, իր ստրատեգիական պլանները, Դոնի բանակի նոր հրամանատար գենե-

բալ Սիդորինը սկսեց Կուդինովին ուղարկել շտաբի մշակած գործողությունների պլանները, հրամաններ, ամփոփագրեր, տեղեկություններ ապստամբական ճակատ փոխադրվող կարմիրբանակային զորամասերի մասին։

Կուդինովը Սիդորինի հետ ունեցած նամակագրության մասին հաղորդում էր միայն մի քանի ընտրյալ մարդկանց, իսկ մնացածներից այդ ամենը խիստ գաղտնի էր պահվում։

LVI

Ցերեկվա ժամը հնգին գերիներին բերին Տատարսկի։ Արդեն մոտիկ էր գարնանային արագընթաց մթնշաղը, արևը արդեն մոտենում էր մայրամուտին, բոցավառ սկավառակով շոշափում արևմուտքում փռված փրշոտ, կապտավուն ամպի ծայրը։

Փողոցում, հասարակական հսկայական ամբարի շվաքում նստած ու կանգնած էր տատարցիների հետևակ հարյուրյակը։ Նրանց տեղափոխել էին Դոնի աջ կողմը, Ելանսկու հարյուրյակներին օգնելու համար, որոնք դժվարությամբ էին դիմադրում Միրոնովի հեծելազորի գրոհին, և տատարցիները դիրքերը գնալիս ամբողջ հարյուրյակով մտան խուտոր, որպեսզի այցելեն հարազատներին և ուտելիք վերցնեին։

Այդ օրը նրանք պետք է ճանապարհվեին, բայց իմացան, որ գերի կոմունիստներին տանում են Վեշենսկայա, որ նրանց մեջ են գտնվում Միշկա Կոշևոյն ու Իվան Ալեքսեևիչը, որ գերիները քիչ հետո պետք է ժամանեն Տատարսկի,— դրա համար էլ որոշեցին սպասել։ Կոշևոյին ու Իվան Ալեքսեևիչին հանդիպելու վրա առանձնապես պնդում էին այն կազակները, որոնք առաջին մարտում Պետրո Մելեխովի հետ սպանվածների ազգականներն էին։

Տատարցիները ալարկոտ խոսակցելով, հրացանները ամբարի պատին հենած, նստել ու կանգնել էին, ծխում էին, սեմիչկա չրթում. նրանց շրջապատել էին կնանիքը, ծերերն ու երեխաները։ Ամբողջ խուտորը դուրս էր թափվել փողոց, իսկ տղաները խրճիթների կտուրներից դիտում էին, թե արդյոք չե՞ն գալիս գերիները։

Եվ ահա մանկական մի ձայն ազդարարեց.

— Երևացի՜ն։ Բերո՜ւմ են։

Ռազմիկները աճապարանքով ոտքի ելան, ժողովուրդն իրար անցավ, աշխուժացած խոսակցության խուլ դժժոց բարձրացավ, լսվեց գերիներին ընդառաջ վազող երեխաների ոտնաձայնը։ Ալյոշկա Շամիլի այրին դեռ չհանդարտված վրշտի թարմ տպավորության տակ սկսեց ճղճղալ ընկնավորի նման։

— Բերում են թշնամիներին,— թավ ձայնով ասաց մի ինչ-որ ծերունի։

— Կոտորել դրանց, այդ սատանաներին։ Էլ ի՞նչ եք մտիկ անում, կազակներ։

— Դատե՛լ նրանց։

— Մերոնց սպանել էին, է՛։

— Չվանով կախե՛լ Կոշևոյին ու նրա ընկերոջը։

Դարյա Մելեխովան կանգնել էր Անիկուշկայի կնոջ կողքին։ Նա առաջինը ճանաչեց Իվան Ալեքսեևիչին խոշտանգված գերիների մոտեցող բազմության մեջ։

— Ձեր խուտորցուն ենք բերել։ Հապա մտիկ արեք նրան, շան որդուն, քրիստոսահամբույր տվեք նրան,— վայրագորեն ուժեղացող, կցկտուր խոսակցությունից, կանանց ճղճղոցից ու լացից էլ բարձր, խռպոտ բղավեց վախմիստրը, ուղեկցորդի պետը, ու մեկնեց ձեռքը՝ ձիու վրայից ցույց տալով Իվան Ալեքսեևիչին։

— Իսկ մյուսը ո՞ւր է։ Ո՞ւր է Կոշևոյ Միշկան։

Անտիպ Փչանովը անցավ ամբոխի միջով, քայլելիս ուսից հանելով հրացանի փոկը, ճռճվող հրացանի կոթն ու սվինը դիպցնելով մարդկանց։

— Ձեր խուտորից միայն մեկն է, ուրիշը չկար։ Այսքանն էլ հերիք է կտոր-կտոր անելու համար, ամեն մեկիդ հո մի կտոր կընկնի՞...— ասաց ուղեկցորդ-վախմիստրը՝ կարմիր թաշկինակով սրբելով ճակատի առատ քրտինքը, ոտը ծանր անցկացնելով թամքի ղաշի վրայից։

Կանանց ճղճղոցներն ու աղմուկը սաստկանալով, լարվածության ծայրահեղ աստիճանին հասան։ Դարյան անցավ դեպի ուղեկցորդները և իրենից մի քանի քայլ հեռավորությամբ, մի ուղեկցորդի ձիու թաց գավակից դենը տեսավ

Իվան Ալեքսեևիչի՝ ծեծից թշացած դեմքը։ Հրեշավոր կերպով ուռած նրա գլուխը, որի մազերը չորացած արյունով իրար էին կպել, ուղիղ դրած դույլի բարձրություն ուներ։ Ճակատի մաշկը ուռել էր ու ճաքճքվել, այտերը պլպլան կարմրություն ունեին, իսկ կարկաչի վրա, որ դոնդողանման աղտեղությամբ էր ծածկված, ընկած էին բրդե ձեռնոցները։ Ինչպես երևում է, նա դրանք դրել էր գլխին, որպեսզի լայն վերքը ծածկեր արևի խայթող ճառագայթներից, ճանճերից և օդում վխտացող մոծակներից։ Ձեռնոցները կպել էին վերքին ու այնպես էլ մնացել գլխի վրա...

Նա հոգնատանջ նայում էր այս ու այն կողմ՝ որոնելով ու վախենալով գտնել իր կնոջը կամ փոքրիկ որդուն, ուզում էր դիմել որևէ մեկին ու խնդրել, որ նրանց հեռացնեն, եթե նրանք այստեղ են։ Նա արդեն հասկացավ, որ Տատարսկից դենը չի գնա, որ այստեղ կմեռնի, ու չէր ուզում, որ հարազատները տեսնեն իր մահը, իսկ մահվանը նա սպասում էր շարունակ սաստկացող, ագահ անհամբերությամբ։ Կուչ գալով, դանդաղ ու դժվարությամբ պտտելով գլուխը, հայացքներ էր նետում խուտորցիների ծանոթ դեմքերին և ոչ մի հանդիպական հայացքում ցավակցություն կամ համակրանք չկարդաց. ծուռ և դաժան էին կազակների ու կանանց հայացքները։

Նրա խունացած, պաշտպանական գույնի վերնաշապիկը ուռչում, շրշում էր ամեն անգամ, երբ նա շուռ էր գալիս։ Ամբողջ վերնաշապիկը ծածկված էր արյան մուգ բծերով, արյունոտված էին նաև կարմիրբանակային բամբկուն մգդակած շալվարը և բոբիկ, խոշոր ոտները՝ տափակ գարշապարներով ու ծռմռված մատներով։

Դարյան կանգնել էր նրա դիմաց։ Շնչասպառ լինելով կոկորդը կծկող ատելությունից, կատաղությունից, տաղտկալի սպասումից, որ ահա, հենց այժմ ինչ-որ սարսափելի բան է կատարվելու,— նայում էր նրա դեմքին ու ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ՝ արդյո՞ք տեսնում է ու ճանաչում նրան։

Իսկ Իվան Ալեքսեևիչը դարձյալ անհանգստությամբ, հուզված տնտղում էր ամբոխին օտարոտի փայլող մի աչքով

(մյուս աչքը ծածկվել էր ուռուցքով), ու հանկարծ, հայացքը ուղղելով իրենից մի քանի քայլ հեռու գտնվող Դարյայի դեմքին, սաստիկ հարբածի պես մի անհաստատ քայլ արեց դեպի առաջ։ Նրա գլուխը պտտվում էր արյան մեծ կորստից, գիտակցությունը թողնում էր նրան, բայց այս անցողիկ վիճակը, երբ ամբողջ շրջապատը անիրական է թվում, երբ դառն շշմածությունը գլուխ է պտտեցնում ու մթագնում աչքերի լույսը,— անհանգստություն էր պատճառում, և նրա հսկայական լարվածությամբ դեռ մնում էր ոտների վրա կանգնած։

Տեսնելով ու ճանաչելով Դարյային, մի քայլ արավ, ճոճվեց։ Ժպիտին հեռավոր նմանություն ունեցող ինչ-որ մի բան շոշափեց երբեմնի պիրկ, այժմ այլանդակված նրա շուրթերը։ Եվ ահա ժպիտի նմանվող հենց այդ ծամածռությունը Դարյայի սրտին ստիպեց թնդալ, բաբախել արագ. նրան թվում էր, թե սիրտը ինչ-որ մի տեղ, հենց կոկորդի կողքին է տրոփում։

Արագ և սաստիկ հևալով, վայրկյան առ վայրկյան ավելի ու ավելի գունատվելով, նա հուպ մոտեցավ Իվան Ալեքսեևիչին։

— Հը՛, բարև, սանահեր։

Նրա ձայնի զրնգուն, բուռն տեմբրը, արտասովոր շեշտավորումը ամբոխին ստիպեցին հանդարտվել։

Ու անդորրության մեջ խուլ, բայց հաստատ հնչեց պատասխանը.

— Բարև, քավորկին Դարյա։

— Հապա պատմիր, սիրելի սանահեր, թե ոնց քո քավորին... մարդուս...

Դարյան շնչահեղձ եղավ, ձեռներով բռնեց կուրծքը։ Նրա ձայնը կտրվում էր։

Անշշուկ, պիրկ լարված լռություն էր տիրում, և այդ չարագուշակ, քար լռության մեջ նույնիսկ ամենահեռու շարքերում էլ լսեցին, թե ինչպես Դարյան հազիվ ըմբռնելի վերջացրեց հարցը.

— ...ոնց սպանեցիր մարդուս, Պետրո Պանտելեևիչին։

— Չէ, քավորկին, ես չեմ սպանել նրան։

— Ո՞նց չես սպանել.— Դարյայի հեծկլտող ձայնը է՛լ

ավելի բարձրացավ.— Ախր դու և Միշկա Կոշևոյը սպանեցիք կազակներին։ Դո՛ւք։

— Չէ՛, քավորկին... Մենք նրան... Ես նրան չեմ սպանել...

— Բա ո՞վ նրան զրկեց լույս աշխարհից։ Հը՞, ո՞վ, ասա՛։

— Զաամուրյան գունդը այն ժամանակ...

— Դու, դու ես սպանել... Կազակները ասում էին, որ քեզ տեսել են բլուրի վրա։ Դու ճերմակ ձիով էիր։ Ուրանո՞ւմ ես, անիծված։

— Ես էլ այն կռվումն էի...— Իվան Ալեքսեևիչի ձախ ձեռքը դժվարությամբ բարձրացավ մինչև գլխի մակարդակը, շտկեց վերքին կպած ձեռնոցները։ Նրա ձայնի մեջ պարզապես անվստահություն արտահայտվեց, երբ նա ասաց.— Ես էլ եղա այն ժամանակվա կռվում, բայց քո մարդուն ոչ թե ես սպանեցի, այլ Միխայիլ Կոշևոյը։ Նա կրակեց Պետրոյի վրա։ Ես քավոր Պետրոյի համար պատասխանատու չեմ։

— Բա դու, սատանա, մեր խուտորցիներից ո՞ւմ սպանեցիր, հը՞։ Դու ինքդ ո՞ւմ երեխաներին որբ ու անտեր թողիր աշխարհքում,— ամբոխի միջից սուր ձայնով բղավեց Յակով Պոդկովայի այրին։

Ու վերստին, լարելով առանց այն էլ լարված մթնոլորտը, լսվեցին կանացի հիստերիկ հեկեկանքներ, ճչոցներ և «գեշ ձայնով» լաց ու կոծ՝ մեռելի վրա...

Հետագայում Դարյան ասում էր, որ չի հիշում, թե ինչպես և որտեղից իր ձեռքն ընկավ հեծելազորի մի հրացան, ով իր ձեռքը ճխտեց այդ հրացանը։ Բայց երբ կնանիքը լաց ու կոծ բարձրացրին, նա իր ձեռքերի մեջ զգաց կողմնակի առարկայի առկայությունը, առանց նայելու, շոշափելով գլխի ընկավ, որ դա հրացան է։ Նա սկզբում հրացանը բռնեց փողից, որպեսզի դրա կոթով խփեր Իվան Ալեքսեևիչին, բայց հրացանի հատիկը խրվեց ձեռքի ափի մեջ ու ցավ պատճառեց, և նա մատները տարավ փողակալին, հետո էլ հրացանը շուռ տվեց, բարձրացրեց և նույնիսկ նշան բռնեց Իվան Ալեքսեևիչի կրծքի ձախ կողմի վրա։

Դարյան տեսավ, թե ինչպես նրա ետևում կազակները դես-դեն փախան ու երևաց ամբարի դորշ, գերանաշեն պատը։

լսեց վախից արձակած ճիչերը՝ «Փիա՛, գժվե՞լ ես, ինչ է, մեզոնց կխփես, կա՛ց, մի՛ կրակի»։ Ու խրախուսվելով ամբոխի գազանաբարո, լարված սպասումից, իր վրա կենտրոնացած հայացքներից, ամուսնու մահվան վրեժն առնելու ցանկությունից ու մասամբ հանկարծակի ծագած սնափառության այն մտքից, որ ահա այժմ ինքը բոլորովին այնպես չէ, ինչպես մյուս կնանիքը, որ կազակները զարմանքով և նույնիսկ վախենալով են նայում իրեն ու սպասում գործի վախճանին, որ այդ պատճառով էլ ինքը մի ինչ-որ անսովոր, առանձնահատուկ բան պետք է անի, որը կարող է սարսափեցնել բոլորին, միաժամանակ այս բոլոր տարատեսակ զգացմունքներից դրդված, երկյուղ ազդող արագությամբ մոտենալով իր գիտակցության խորքում կանխորոշված ինչ-որ մի բանի, որի մասին ինքը չէր ուզում և չէր կարող մտածել այդ պահին, նա մի փոքր հապաղեց՝ զգուշությամբ շոշափելով Հրահանը, ու հանկարծ իրեն համար էլ անսպասելի կերպով ուժեղ սեղմեց այն։

Ետահարումը նրան ստիպեց խիստ ցնցվել, կրակոցի ձայնը խլացրեց նրան, բայց կկոցած աչքերով նա տեսավ, թե ինչպես մի ակնթարթում սարսափելի ու անուղղելի կերպով փոխվեց Իվան Ալեքսեևիչի դողդոջ դեմքը, ինչպես վերջինս տարածեց ու ծալեց ձեռները՝ ասես պատրաստվելով մեծ բարձրությունից նետվել ջրի մեջ, հետո էլ ընկավ երեսնիվայր, ու տենդային արագությամբ ցնցվեց նրա գլուխը, դողդողացին տարածած ձեռների մատները, եռանդով քերքրեցին հողը...

Դարյան դեն գցեց հրացանը՝ դեռևս ինքն իրեն պարզ հաշիվ չտալով, թե ինչ արեց այդ միջոցին. մեջքը դարձրեց սպանվածի կողմը ու իր առօրյա պարզությամբ անբնական շարժմամբ շտկեց գլխաշորը, հավաքեց թափթփված մազերը։

— Զարկվածը դեռ շնչում է...— ասաց կազակներից մեկը՝ չափից անց պատրաստակամությամբ ճանապարհ տալով իր կողքից անցնող Դարյային։

Վերջինս ետ նայեց, չհասկանալով, թե այդ ում մասին և ինչ են ասում, լսեց ծոր տվող, միալար, հոգեվարքի զգտոն-

ցով ընդհատվող տնքոցը, որ ելնում էր ոչ թե կոկորդից, այլ կարծես հենց ընդերքից։ Եվ միայն այն ժամանակ գիտակցեց, որ իր ձեռքից մահ ընդունած Իվան Ալեքսեևիչն է տընքում։ Դարյան արագ ու թեթև քայլեց ամբարի կողքից, ոմանց հայացքների ուղեկցությամբ գնաց դեպի հրապարակ։

Մարդկանց ուշադրությունը կենտրոնացավ Անտիպ Փչանովի վրա։ Սա, ինչպես վարժական ստուգատեսի ժամանակ, արագորեն, միմիայն ոտնաթաթերի վրա մոտեցավ գետնին ընկած Իվան Ալեքսեևիչին, հայտնի չէ ինչու քամակի վրա թաքցնելով ճապոնական հրացանի դաշույնաձև սվինը։ Նրա շարժումները հաշվի առնված և ստույգ էին։ Պպզեց, սվինի սայրը ուղղեց Իվան Ալեքսեևիչի կրծքին, ցածրաձայն ասաց.

— Դեհ, շունչդ փչիր, Կոտլյարով,— ու ամբողջ ուժով սեղմեց սվինի կոթը։

Դժվարությամբ ու երկար էր մեռնում Իվան Ալեքսեևիչը։ Նրա առողջ, պինդ մարմինը դժկամորեն էր հեռանում կյանքից։ Նույնիսկ սվինի երրորդ հարվածից հետո էլ նա դեռ էլի բաց էր անում բերանը, ու արյունով ողողված, ցցված ատամների տակից ծոր տվող, խռպոտ ձայնով կանչում էր։

— Ա-ա՜-ա։

— Ամա՜ թե մորթող ես, կորի՜ դենը,— Փչանովին ետ հրելով ասաց վախմիստրը, ուղեկցորդի պետը, ու բարձրացրեց նագանը, բանիմաց կերպով կկոցեց ձախ աչքը, նշան բռնեց։

Կրակոցից հետո, որ ասես ազդանշան դարձավ, գերիներին հարցաքննող կազակները սկսեցին ծեծել նրանց։ Գերիները դես-դեն նետվեցին։ Զոր, կարճ ճայթեցին հրացանների կրակոցները՝ խառնվելով ճիչերի հետ։

Մի ժամից հետո Գրիգորի Մելեխովը ձիով ժամանեց Տատարսկի։ Նա մահացու կերպով արագ էր քշել ձին և սա ընկել էր Ուստ-Խոպերսկու ճանապարհին, երկու խուտորների միջև ձգվող ուղեմասում։ Թամքը քարշ տալով մինչև ամենամոտ խուտորը, Գրիգորին այնտեղ մի վատ ձի էր վերցրել։ Եվ ուշացավ... Տատարցիների հետևակ հարյուրյակը բլուրների վրայով գնացել էր Ուստ-Խոպերսկու խուտորները, Ուստ-Խոպերսկու հողի սահմանը, որտեղ Միրոնովի դիվիզիայի զորամասերի հետ կռիվներ էին տեղի ունենում։ Խուտորում լռություն էր տիրում, մարդ չէր երևում։ Գիշերը սև քողի նման ծածկել էր շրջակա բլուրները, Դոնի ափերը, շրջող բարդիներն ու հացենիները...

Գրիգորին ձիով մտավ բակը, ձին թողեց, մտավ տուն։ Լույս չկար։ Թանձր մթության մեջ բզզում էին մոծակները, առջևի անկյունում աղոտ փայլում էին ոսկեզրած սրբապատկերները։ Ներշնչելով հայրենական տան հուզիչ, մանկությունից ծանոթ հոտը. Գրիգորին հարցրեց.

— Ո՞վ կա տանը։ Մայրի՜կ, Դունյաշկա։

— Գրիշա, դո՞ւ ես, հա՞,— օթախից լսվեց Դունյաշկայի ձայնը։

Բոբիկ ոտների սվսվուն քայլեր, բաց դռնից երևացող Դունյաշկայի սպիտակ կերպարանքը. նա հապճեպ կապում էր տակի յուրկայի գոտին։

— Ինչո՞ւ եք այդպես շուտ պառկել։ Մերս ո՞ւր է։

— Այստեղ, մեզ մոտ է...

Դունյաշկան լռեց, ու Գրիգորին լսեց, թե ինչպես նա արագ, հուզված է շնչում։

— Ի՞նչ կա այստեղ։ Գերիներին վաղո՞ւց են տարել։

— Կոտորեցին նրանց։

— Ինչպե-ե-ե՞ս...

— Կազակները կոտորեցին... Օ՜յ, Գրիշա, մեր Դաշկան, այդ անիծված փուչը...— Դունյաշկայի ձայնը կերկերաց զայրույթից.— ...Նա ինքը սպանեց Իվան Ալեքսեևիչին... կրակեց նրա վրա...

— Ի՞նչ ես դուրս տալի,— վախեցած բռնելով քրոջ ասեղնագործ շապկի օձիքից, գոռաց Գրիգորին։

Դունյաշկայի աչքերի սպիտակուցները փայլեցին արցունքներից, և նրա ակնաբիբերում նշմարվող վախից Գրիգորին հասկացավ, որ սխալ չէր լսել։

— Բա Միշկա Կոշևո՞յը, Շտոկմա՞նը։

— Նրանք գերիների հետ չէին։

Դունյաշկան կարճ, կցկտուր պատմեց գերիներին կոտորելու, Դարյայի մասին։

— ...Մայրիկը վախեցավ նրա հետ գիշերել մի տան մեջ, գնաց հարևանների մոտ, իսկ Դաշկան չգիտեմ որտեղից եկավ հարբած... Ցեխից էլ փիս տեսքով եկավ։ Հիմի քնած է...

— Որտե՞ղ։

— Ամբարում։

Գրիգորին մտավ ամբար, բոլորովին բացեց դուռը. Դարյան անպատկառ կերպով փեշը վեր քաշած, քնել էր հատակի վրա։ Նրա բարակ թևերը փռված էին, աջ թուշը թքով առատորեն ողողված, պլպլում էր, բաց բերանից տնական արաղի թունդ հոտ էր փչում։ Նա պառկել էր գլուխը անհարմար դրած, ձախ թուշը սեղմել հատակին, շնչում էր ծանր, ֆսֆսալով։

Գրիգորին դեռ երբեք թրատելու այդպիսի վայրագ ցանկություն չէր զգացել։ Հառաչելով ու ճռճվելով, ատամները պինդ սեղմելով իրար, նա մի քանի վայրկյան կանգնեց Դարյայի գլխավերևում, անհաղթահարելի զզվանքի ու նողկանքի զգացումով դիտելով այդ փռված մարմինը։ Հետո մի քայլ արեց, սապոգի երկաթած կրունկը դրեց Դարյայի երեսին, որի վրա սևին էին տալիս աղեղնաձև, բարձր հոնքերը, ու խոպոտ մռմռաց.

— Ի-ի-ի՜-ժ։

Դարյան սկսեց տնքալ, հարբած վիճակում ինչ-որ մրթմրթալ, իսկ Գրիգորին գլուխն առավ ձեռների մեջ ու արագորեն, շրխկացնելով թրի պատյանը, դուրս վազեց։

Հենց այդ գիշեր, առանց մորը տեսնելու, նա մեկնեց ռազմաճակատ։

LVII

8-րդ և 9-րդ կարմիր բանակները մինչև գարնանային վարարումների սկիզբը, չկարողանալով կոտրել Դոնի բանակի զորամասերի դիմադրությունը և անցնել Դոնեցի մյուս կողմը, դեռևս փորձում էին առանձին ճակատամարտերում հարձակման անցնել։ Այս փորձերը մեծ մասամբ անհաջող էին վերջանում։ Նախաձեռնությունը անցնում էր Դոնի հրամանատարության ձեռքը։

Մայիսի կեսին Հարավային ճակատում դեռևս նկատելի փոփոխություններ չկային։ Բայց շուտով դրանք կատարվելու էին։ Դոնի բանակի նախկին հրամանատար գեներալ Դենիսովի և նրա շտաբի պետ գեներալ Պոլյակովի մշակած պլանի համաձայն Կամենսկայա և Ուստ-Բելոկալիտվենսկայա ստանիցաների շրջանում ավարտվում էր այսպես կոչված հարվածային խմբի կենտրոնացումը։ Ճակատի այդ մասում կենտրոնացվեցին երիտասարդ բանակի ուսուցված կադրերից կազմված լավագույն ուժերը, ստորին Դոնի Գունդարովյան, Գեորգիևյան և այլ մարզված գնդերը։ Կոպիտ հաշվով այդ հարվածային խմբի ուժերը բաղկացած էին տասնվեց հազար սվինից ու սրից, քսանչորս հրանոթից և հարյուր հիսուն գնդացրից։

Գեներալ Պոլյակովի մտադրությամբ խումբը գեներալ Ֆիցխելաուրովի զորամասերի հետ համատեղ պետք է հարված տար Մակեևկա ավանի ուղղությամբ, ետ մղեր 12-րդ կարմիր դիվիզիան ու թևանցելով և շրջանցելով 13-րդ և Ուրալյան դիվիզիաները, պետք է կռվով դուրս գար Վերին-Դոնի օկրուգի տերիտորիան, որպեսզի միանար ապստամբական բանակին, հետո արդեն գնար Խոպերի օկրուգը, որպեսզի «առողջացներ» բոլշևիզմով հիվանդացած կազակներին։

Դոնեցի մոտ ինտենսիվ նախապատրաստություն էր կատարվում հարձակվելու, ճեղքվածք բանալու համար։ Հարվածային խմբի հրամանատարությունը հանձնարարվել էր գեներալ Սեկրետևին։ Հաջողությունը սկսում էր պարզապես թեքվել Դոնի բանակի կողմը։ Այդ բանակի նոր հրամանատարը, գեներալ Սիդորինը, որ փոխարինել էր պաշտոնաթող եղած գեներալ Դենիսովին, Կրասնովի թևարկյալին, ինչպես և նոր նշանակված զորական ատաման գեներալ Աֆրիկան Բոգաևսկին, դաշնակցային կողմնորոշման կողմնակիցներ էին։ Անգլիական ու ֆրանսիական ռազմական միսիաների ներկայացուցիչների հետ համատեղ արդեն Մոսկվայի վրա

արշավելու, Ռուսաստանի ամբողջ տերիտորիայում բոլշևիզմը լիկվիդացնելու լայն պլաններ էին մշակվում։

Զենքերով բեռնված փոխադրանավեր էին ժամանում Սև ծովի ափի նավահանգիստները։ Օվկիանոսային շոգենավերը բերում էին ոչ միայն անգլիական ու ֆրանսիական սավառնակներ, տանկեր, թնդանոթներ, գնդացիրներ, հրացաններ, այլև լծկան ջորիներ և Գերմանիայի հետ կնքված հաշտությամբ արժեքազրկված պարեն ու հագուստ։ Անգլիական մուգ կանաչ հեծելազորային շալվարների ու ֆրենչների հակերը,— որոնց պղնձե կոճակների վրա բրիտանական ծառս եղած առյուծ էր քանդակված,— լցրին Նովորոսիյսկի համբարանոցները։ Պահեստները լեփ-լեցուն էին ամերիկյան ալյուրով, շաքարով, շոկոլադով, գինիներով։ Կապիտալիստական Եվրոպան բոլշևիկների համառ կենսունակությունից վախեցած, առատաձեռնությամբ դեպի հարավային Ռուսաստան էր ուղարկում արկեր ու փամփուշտներ, հենց այն արկերն ու փամփուշտները, որ դաշնակից զորքերը դեռ չէին արձակել գերմանացիների վրա։ Միջազգային ռեակցիան գալիս էր խեղդելու արյունաքամ Սովետական Ռուսաստանը... Անգլիական ու ֆրանսիական հրահանգիչ սպաները, որոնք ժամանում էին Դոն և Կուբան, որպեսզի կազակական սպաներին և Կամավորական բանակի սպաներին սովորեցնեին տանկերը վարելու, անգլիական հրանոթներից կրակելու արվեստը, արդեն նախաճաշակում էին Մոսկվա մտնելու հանդեսները...

Իսկ այդ ժամանակ Դոնեցի մոտ տեղի էին ունենում այն իրադարձությունները, որոնք վճռեցին Կարմիր բանակի 1919 թվականի հարձակման հաջողությունը։

Անկասկած է, որ Կարմիր բանակի անհաջող հարձակման հիմնական պատճառը վերին դոնեցիների ապստամբությունն էր։ Երեք ամսվա ընթացքում դա, ինչպես խոց, մաշում էր կարմիր ճակատի թիկունքը, պահանջում էր շարունակ զորամասեր փոխադրել, խոչընդոտում էր ռազմամթերքի ու պարենի անընդհատ առաքմանը, դժվարացնում վիրավորներին ու հիվանդներին թիկունք ուղարկելը։ Ապստամբությունը

ճնշելու համար միայն 8-րդ և 9-րդ կարմիր բանակներից մոտ քսան հազար կարմիրբանակային էր ուղարկված։

Ռեսպուբլիկայի Ռազմա-ռևոլյուցիոն խորհուրդը բավականաչափ տեղյակ չլինելով ապստամբության իսկական չափերի մասին, իր ժամանակին բավականաչափ եռանդուն միջոցներ չձեռնարկեց դրա ճնշման համար։ Սկզբում ապստամբության դեմ նետեցին առանձին մեծ ու փոքր ջոկատներ (այսպես, օրինակ, Համառուսական Կենտգործկոմի դպրոցը առանձնացրեց երկու հարյուր հոգուց բաղկացած մի ջոկատ), լրիվ չկոմպլեկտավորված զորամասեր, սակավաթիվ փակոցային ջոկատներ։ Փորձում էին մարել մեծ հրդեհը և դրա համար ջուրը բաժակներով էին հայթայթում։ Կարմիրբանակային ցաք ու ցրիվ զորամասերը շրջապատում էին ապստամբական տերիտորիան, որի տրամագիծը հարյուր իննսուն կիլոմետրի էր հասնում, գործում էին ինքնուրույն կերպով, ընդհանուր օպերատիվ պլանից դուրս, ու չնայելով, որ ապստամբների դեմ կռվողների քանակը քսանհինգ հազար սվինի էր հասնում, էֆեկտիվ արդյունքներ չկային։

Ապստամբությունը ճնշելու համար մեկը մյուսի ետևից ուղարկվեցին տասնչորս երթական վաշտ, տասնյակ փակոցային ջոկատներ. կուրսանտների ջոկատներ էին գալիս Տամբովից, Վորոնեժից, Ռյազանից։ Եվ արդեն այն ժամանակ, երբ ապստամբությունը ծավալված էր, երբ ապստամբները զինվել էին կարմիրբանակայիններից գրաված գնդացիրներով ու հրանոթներով, 8-րդ և 9-րդ բանակները իրենց կազմից առանձնացրին մեկական էքսպեդիցիոն դիվիզիա, հրանոթներով ու գնդացրային խմբերով հանդերձ։ Ապստամբները խոշոր կորուստ ունեցան, բայց չջախջախվեցին։

Վերին Դոնի հրդեհի կայծերը թռան նաև հարևան Խոպերի օկրուգը։ Սպաների ղեկավարությամբ այնտեղ կազակական աննշան խմբերի մի քանի ելույթ տեղի ունեցավ։ Ուրյուպինսկայա ստանիցայում զորական ավագ Ալիմովը իր շուրջը հավաքեց զգալի թվով կազակներ և թաքնված սպաներ։ Ապստամբությունը պետք է տեղի ունենար մայիսի լույս 1-ի գիշերը, բայց իր ժամանակին հայտնաբերվեց դավադրությունը։ Ալիմովը և իր գործակիցների մի մասը, բռնվելով

Պրեբրաժենսկայա ստանիցայի խուտորներից մեկում, ռազմական դատավճռով գնդակահարվեցին, իր ժամանակին գլխատված ապստամբությունը տեղի չունեցավ, և այսպիսով Խոպերի օկրուգի կենտրոնությունը տարրերին չհաջողվեց միանալ Վերին Դոնի օկրուգի ապստամբներին։

Մայիսի սկզբներին Չերտկովո կայարանում, ուր մի քանի կարմիրբանակային համահավաք գնդեր էին կանգնած, գնացքից իջավ Համառուսական Կենտգործկոմի դպրոցի ջոկատը։ Չերտկովոն մեկն էր Հարավ-արևելյան երկաթուղու այն ծայրակայարաններից, որոնք անմիջականորեն սահմանակից էին ապստամբական ֆրոնտի արևմտյան ճակատամասին։ Միգուլինսկայա, Մեշկովսկայա և Կազանսկայա ստանիցաների կազակները այն ժամանակ ձիավորների հսկայական մասսաներով կուտակվում էին Կազանսկայա ստանիցայի հողի սահմանում, կատաղի մարտեր էին մղում հարձակման անցած կարմիրբանակային զորամասերի դեմ։

Կայարանում լուրեր տարածվեցին, թե կազակները շրջապատել են Չերտկովոն և աննկատելիորեն հարձակում կսկսեն։ Ու չնայելով, որ մինչև ճակատը առնվազն մի հիսուն վերստ կլիներ, որ առջևում կային կարմիրբանակային զորամասեր, որոնք կհաղորդեին, եթե կազակները ճեղքեին ճակատը,— այնուամենայնիվ կայարանում խուճապ սկսվեց։ Կարմիրբանակային շարքերն իրար անցան։ Որտեղից որտեղ, եկեղեցուց դենը թնդաց հրամանի հնչեղ ձայնը՝ «Ի հրացա-ա-ան»։ Փողոցներում գլխապատառ վազվզեցին մարդիկ։

Խուճապը սուտ դուրս եկավ։ Կազակների տեղ էին ընդունել կարմիրբանակայինների մի հեծելավաշտ, որը Մայնկովո գյուղի կողմից մոտենում էր կայարանին։ Կուրսանտները երկու համահավաք գնդով արշավանքի ելան Կազանսկայա ստանիցայի ուղղությամբ։

Մեկ օրից հետո կազակները համարյա ամբողջապես ոչնչացրին նոր ժամանած Կրոնշտադտյան գունդը։

Կրոնշտադտցիների հետ առաջին իսկ կռվից հետո գիշերով հարձակում գործեցին։ Գունդը ուղեկալներ և գաղոնքներ կարգելով, գիշերում էր տափաստանում՝ ոիսկ չանելով գրավել ապստամբների լքած խուտորը։ Կեսգիշերին կազակական

մի քանի հեծյալ հարյուրյակներ շրջապատեցին գունդը, կատաղի կրակ բացեցին՝ լայնորեն օգտագործելով ինչ-որ մեկի հնարած ահաբեկիչ միջոցը՝ փայտե ահագին չաչանակները։ Գիշերները այդ չաչանակները ապստամբների համար գնդացիրների տեղ էին ծառայում. համենայն դեպս դրանց հանած ձայները համարյա չէին տարբերվում իսկական գնդացրային հրաձգությունից...

Եվ ահա երբ շրջապատված կրոնշտադտցիները գիշերային անթափանց խավարում լսեցին բազմաթիվ «գնդացիրների» ճարճատյունը, իրենց ուղեկալների անկանոն կրակոցները, կազակական հարայհրոցը ու ցրիվ շարքերով մոտեցող հեծելազորի թնդաձայն դմբդմբոցը, նետվեցին դեպի Դոն, կռվով առաջ անցան, բայց հեծյալ գրոհով ետ մղվեցին։ Գնդի ամբողջ կազմից փրկվեցին միայն մի քանի մարդիկ, որոնք կարողացան լողալով անցնել գարնանային վարարումից բարձրացած Դոնը։

Մայիսին Դոնեցի կողմից նորանոր օժանդակ ուժեր էին ժամանում ապստամբական ճակատ։ Եկավ 33-րդ Կուբանյան դիվիզիան, ու Գրիգորի Մելեխովը առաջին անգամ զգաց իսկական հարվածի ամբողջ ուժը։ Կուբանցիները անդադար ետ էին քշում նրա 1-ին դիվիզիան։ Գրիգորին մեկը մյուսի ետևից թողնում էր խուտորները՝ նահանջելով հյուսիսային ուղղությամբ, դեպի Դոն։ Չիրի բնագծում, Կարգինսկայայի մերձակայքում նա կանգ առավ մի օրով, իսկ հետո հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ ստիպված եղավ ոչ միայն հանձնել Կարգինսկայան, այլև շտապ կարգով օժանդակ զորք պահանջել։

Կոնդրատ Մեղվեդևը իր դիվիզիայից նրան ուղարկեց ութ հեծյալ հարյուրյակ։ Նրա կազակները հիանալի հանդերձավորված էին։ Բոլորն էլ ունեին բավականաչափ փամփուշտներ, կանոնավոր հագուստ և լավորակ ոտնամաններ,— այդ ամենը խլել էին գերի կարմիրբանակայիններից։ Կազանսկու շատ կազակներ, չնայելով շոգին, կաշվե կուրտկաներ էին հագնում, գրեթե ամեն մեկն էլ կամ նագան ուներ, կամ հեռադիտակ... Կազանսկու կազակները որոշ ժամանակ կանգնեցրին անընդհատ առաջացող 33-րդ Կուբանյան դիվիզիայի

հարձակումը։ Օգտվելով դրանից, Գրիգորին, որոշեց մի օրով գնալ Վեշենսկայա, որովհետև Կուդինովը նրան շարունակ խնդրում էր գալ խորհրդակցության։

LVIII

Վաղ առավոտյան նա ժամանեց Վեշենսկայա։

Դոնի վարարած ջուրը սկսել էր իջնել։ Օդը հագեցված էր ծաղկող կաղամախիների քաղցրամեղցր, մածուցիկ բույրով։ Դոնի մոտ քնեած շրշում էին կաղնիների հյութեղ, մուգ կանաչ տերևները։ Հողի մերկացած ածուները գոլորշի էին արձակում։ Դրանց վրա արդեն բարձրացել էր սրածայր կանաչը, իսկ փոս տեղերում դեռ պսպղում էր լճացած ջուրը, թավ ձայնով կոկռում էին ջրացուլերը, և տիղմի ու ցեխի խոտով լեցուն, խոնավ օդում խիտ վխտում էին մժղուկները, չնայելով, որ արդեն ծագել էր արևը։

Շտաբում չխչխկում էր հին գրամեքենան, շենքը լիքն էր մարդկանցով ու ծխախոտի ծխով։

Գրիգորին Կուդինովին գտավ տարօրինակ վիճակում. Կուդինովը առանց նայելու կամացուկ ներս մտնող Գրիգորիին, լուրջ ու մտախոհ տեսքով պոկում էր բռնված մի մեծ, զմրուխտ-կանաչ ճանճի տոտիկները։ Պոկում է, սեղմում չոր բռունցքի մեջ, ու բռունցքը մոտեցնելով ականջին, լրջախոհ թեքելով գլուխը, լսում է ճանճի մերթ թավ, մերթ բարակ բզզոցը։

Տեսնելով Գրիգորիին, ճանճը զզվանքով ու բարկությամբ շպրտեց սեղանի տակ, ձեռքը քսմսեց շալվարին, հոգնածորեն թիկնեց բազկաթոռի մեջքին, որը պլպլում էր մաշվածությունից։

— Նստիր, Գրիգորի Պանտելեևիչ։

— Բարև պետ։

— Էհ, բարևը լավ բան է, ամա, ոնց որ ասում են, բանը բուրդ է։ Ո՞նց է քեզ մոտ։ Հո՞ւպ են տալի։

— Շատ են հուպ տալի։

— Ջիրի մոտ դաղարեցրի՞ր նահանջը։

— Դե, ո՞վ գիտի ինչքան ժամանակով։ Կազանցիները փրկեցին։

— Ա՛յ թե ինչ, Մելեխով,— Կուդինովը իր կովկասյան գոտու լսնակոնած փոկիկը փաթաթեց մատին և շինծու ուշադրությամբ զննեց մի քիչ սևացած արծաթը. շունչ առավ.— Ոնց որ երևում է, մեր գործերը է՛լ ավելի կվատանան։ Դոնեցի մոտ ինչ-որ բան է կատարվում։ Այնտեղ կամ մերոնք են թունդ կոխացնում կարմիրներին ու ճեղքում նրանց ֆրոնտը, կամ թե կարմիրները հասկացել են, որ իրենց համար մենք ենք չարիքի ամբողջ արմատը, և ուզում են մեզ աքցանի մեջ առնել։

— Բա կադետների մասին ի՞նչ լուր կա։ Վերջին այերոպլանով ի՞նչ էին հաղորդում։

— Առանձին ոչինչ չկա։ Նրանք, աղբերս, ինձ ու քեզ չեն պատմի իրենց ստրատեգիաների մասին։ Սիդորինը ուստա մարդ է, հա՛-ա։ Նրանից բան իմանալը դժվար է։ Նրանք այսպիսի պլան ունեն,— ճեղքել կարմիրների ֆրոնտը և մեզ օգնություն ուղարկել։ Խոստացել են օգնել։ Բայց խոստումները հո միշտ էլ չե՞ն կատարվում։ Ֆրոնտ ճեղքելն էլ հեշտ գործ չի, գիտեմ, ինքս եմ ճեղքել գեներալ Բրուսիլովի հետ։ Ես ու դու ի՞նչ իմանանք, թե Դոնեցի վրա կարմիրները ինչ ուժեր ունեն։ Կարելի է նրանք Կոլչակի ֆրոնտից մի քանի կորպուս են հանել ու քշել այստեղ, հը՞։ Իսկի բան չենք իմանում։ Ու մեր քթից դենը ոչինչ չենք կարենում տեսնել։

— Բա դու ինչի մասին էիր ուզում խոսել, ի՞նչ խորհրդակցություն է,— ձանձրույթից հորանջելով՝ հարցրեց Գրիգորին։

Նրա հոգին չէր ցավում ապստամբության ելքի համար։ Այդ նրան ինչ-որ չէր հուզում։ Օրը օրին, ինչպես կալսիչ գլուդոնը կալում քարշ տվող ձի, նա գլուխ էր ջարդում այդ իսկ հարցի շուրջը ու վերջապես, մտքում ձեռ քաշեց դրանից. «Սովետական իշխանության հետ հիմի մեզ չես հաշտեցնի, մենք էլ, նա էլ շատ ենք իրար արյուն թափել, իսկ կադետական իշխանությունը հիմի շոյում է, հետո էլ կքերթի մեզ։ Կորչի՛ է։ Բանն ինչով որ վերջանալու է, թող վերջանա»։

Կուդինովը փռեց քարտեզը. դարձյալ առանց Գրիգորիի աչքերին նայելու ասաց.

— Այստեղ մենք առանց քեզ խորհուրդ արինք ու որոշեցինք...

— Այդ ո՞ւմ հետ ես խորհուրդ արել, կնյազի՞ հետ, թե ոնց,— ընդհատեց Գրիգորին, հիշելով հենց այդ սենյակում ձմռանը կայացած խորհրդակցությունը և կովկասցի փոխգնդապետին։

Կուդինովը մռայլվեց, դալկացավ։

— Նա արդեն կենդանի չէ։

— Ո՞նց թե,— աշխուժացավ Գրիգորին։

— Բա մի՞թե ես քեզ չեմ ասել։ Սպանեցին ընկեր Գեորգիձեին։

— Ախր նա ինձ ու քեզ ի՞նչ ընկեր է... Քանի դեռ դաբաղած կաշվե կիսամուշտակ էր հագնում, ընկեր էր։ Ամա,— աստված չանի,— թե որ մենք միանայինք կադետների հետ ու նա էլ կենդանի մնար, հենց մյուս օրը բեղերին պոմադ կքսեր, կկոկլիկանար ու քեզ կբարևեր ոչ թե ձեռքով, այլ այսպես, էլի, ճկույթով,— Գրիգորին ետ տարավ իր թուխլիկ ու կեղտոտ մատը և հոհոաց՝ ցույց տալով փայլող ատամները։

Կուդինովը է՛լ ավելի մռայլվեց։ Նրա հայացքը և ձայնը ակնհայտ դժգոհություն, սրտնեղություն, զսպված բարկություն արտահայտեցին։

— Այստեղ ծիծաղելու բան չկա։ Ուրիշի մահվան վրա չեն ծիծաղում։ Դու ոնց որ թե Վանյուշկա-խելառին ես նմանվում։ Մարդուն սպանել են, իսկ դու մտածում ես՝ «ջհաննամը գնաց, էլի՛»։

Մի փոքր վիրավորվելով, Գրիգորին բոլորովին ցույց չտվեց, որ Կուդինովի ասածը շոշափել է իրեն. քմծիծաղ տալով՝ պատասխանեց.

— Այդ տեսակ մարդիկ դրուստ որ պետք է «ջհաննամը գնան»։ Ես իսկի էլ չեմ խղճում այդ պպիտակ երեսով ու սպիտակ ձեռներով մարդկանց։

— Հա, սպանեցին նրան...

— Կովի մե՞ջ։

— Ո՛նց ասեմ... Մութ պատմություն է, արի ու իմացիր իսկությունը։ Ախր նա իմ հրամանով գումակի հետ էր լինում։ Դե, կազակների հետ յոլա չգնաց։ Դուդարևկայից դենը կռիվ սկսվեց, գումակը, որի հետ գնում էր նա, երկու վերստ հեռու էր կրակի գծից։ Նա, Գեորգիձեն, նստած էր բրիչկայի առեղի վրա (այսպես էին ինձ պատմում կազակները), ու որպես թե չարաճճի գնդակը խփել էր քներակին։ Միթամ թե տեղնուտեղը մեռել էր... Երևի կազակները, այն սրիկաները սպանեցին նրան...

— Լավ արեցին, որ սպանեցին։

— Թող, է՛։ Հերիք է դուրս տաս։

— Մի բարկանա։ Հանաք եմ անում։

— Մեկ էլ տեսար գլխիցդ հիմար կատակներ ես հանում... Դու ոնց որ եզ լինես, որտեղ կերար, այնտեղ էլ կեղտոտում ես։ Քո ասելով ի՞նչ է դուրս գալի, պետք է սպանե՞լ սպաներին։ Էլի «կորչե՞ն ուսադիրները», հա՞։ Բա ժամանակը չի՞, որ դու խելքի գաս, Գրիգորի։ Կաղում ես կաղա, միայն թե մի ոտից։

— Դես-դեն մի ընկնի, պատմիր։

— Ի՞նչ պատմեմ։ Հասկացա, որ կազակներն են սպանել, գնացի այնտեղ ու սրտանց խոսեցի նրանց հետ։ Այսպես էլ ասացի՝ «էլի հին օյինների պոչի՞ց եք բռնել, շան որդենիք։ Էլի սկսել եք խփե՞լ սպաներին, շուտ չէ՞։ Աշնանն է՛լ էիք գնդակահարում նրանց, իսկ հետո, երբ ձեր սանձը քաշեցին,— սպաներն էլ պետք եկան։ Հենց դուք,— ասում եմ,— ինքներդ էիք գալի ու ծնկաչոք աղաչում՝ «Քեզ վրա վերցրու հրամանատարությունը, զեկավարիր»։ Իսկ հիմի էլի հի՞նը։ Դե, ամաչեցրի, նախատեցի։ Նրանք ուրացան, միթամ՝ «մենք իսկի էլ նրան չենք սպանել, աստված չանի»։ Իսկ նրանց բ... աչքերից տեսնում եմ, որ սուտ են ասում։ Ի՞նչ պահանջես նրանցից։ Որ աչքերին միզես, կասեն անձրև է։— Կուդինովը ջղայնացած ճմռթեց գոտու ծայրը, կարմրատակեց։— Սպանեցին գիտուն մարդուն, իսկ ես հիմի առանց նրան ոնց որ առանց ձեռների լինեմ։ Ո՞վ պիտի պլան կազմի, ո՞վ պիտի խորհուրդ տա։ Քեզ հետ ինչքան ասես կխոսենք, իսկ երբ բանը ստրատեգիային ու տակտիկային հասավ,

մենք բոլորովին անպետք կլինենք։ Շնորհակալություն Պետրո Բոգատիրյովին,— եկավ, թե չէ մարդ չգիտի ում հետ խոսի... է-է՛, գրողը տանի, հերիք եղավ։ Ա՛յ թե ինչ. եթե մեր ոնք Դոնեցից ֆրոնտը չճեղքեն, մենք այստեղ չենք կարող դիմանալ։ Ոնց որ առաջ էլ ասում էին, որոշված է ամբողջ երեսուն հազարանոց բանակով ճեղքել ֆրոնտը։ Եթե քեզ ետ քշեն, նահանջիր հենց մինչև Դոն։ Աջ կողմը, Ուստ-Խոպերից մինչև Կազանսկայա կմաքրենք նրանց համար, Դոնի ափերին խրամատներ կփորենք ու կպաշտպանվենք։

Դուռը պինդ ծեծեցին։

— Մտի՛ր, ո՞վ է,— բղավեց Կուդինովը։

Ներս մտավ 6-րդ բրիգադի հրամանատար Գրիգորի Բոգատիրյովը։ Նրա պիրկ, կարմիր դեմքը պլպլում էր քրտնքից, խունացած, շեկ հոնքերը բարկությունից կիտված էին։ Չհանելով գլխարկը, որի կարկաչը թրջվել էր քրտնքից, նա նստեց սեղանի մոտ։

— Ինչո՞ւ ես եկել,— հարցրեց Կուդինովը, զուսպ ժպիտով նայեց Բոգատիրյովին։

— Փամփուշտ տուր։

— Տրված էր, էլի՛։ Հերիք չէ՞ր քեզ։ Ես այստեղ փամփուշտի գործարա՞ն ունեմ, ինչ է։

— Ի՞նչ էր տրված, մարդուն մի փամփո՞ւշտ։ Ինձ վրա գնդացիրներից կարկուտ են թափում, իսկ ես հենց միայն մեջքս եմ ծռում ու տապ եմ գալի։ Սա պատերա՞զմ է։ Սա միայն... լաց ու կոծ է, ա՛յ թե ինչ...

— Դու կաց, Բոգատիրյով, այստեղ մենք լուրջ խոսակցություն ունենք,— ու տեսնելով, որ Բոգատիրյովը պատրաստվում է գնալ, ավելացրեց.— Սպասիր, մի գնա, քեզնից գաղտնիքներ չկան... Հա, Մելեխով, եթե այս կողմում չդիմանանք, կճեղքենք հակառակորդի օղակը ու կհեռանանք։ Կթողնենք բոլորին, ովքեր բանակում չեն, կթողնենք բոլոր զումակները, հետևակը կնստեցնենք բրիչկաներին, մեզ հետ կվերցնենք երեք մարտկոց ու կովով կանցնենք դեպի Դոնեց։ Մենք ուզում ենք, որ դու առջևից գնաս։ Դեմ չե՞ս։

— Ինձ համար մեկ է։ Բա մեր ընտանիքնե՞րը։ Կկորչեն աղջիկները, կնանիքը, ծերունիները։

— Ուրիշ կերպ չի լինի։ Ավելի լավ է միայն նրանք կորչեն, քան մենք բոլորս։

Կուդինովը նոթերը կիտելով, երկար լռեց, հետո սեղանի արկղից մի լրագիր հանեց։

— Հա, մի նորություն է՛լ. գլխավոր հրամանատարը եկել է զորքերը ղեկավարելու։ Լսեցինք, որ նա հիմի Միլլերովոյումն է թե Կանտեմիրովկայում։ Ա՛յ թե ոնց են մեզ նեղում։

— Իսկապե՞ս եկել է,— կասկածեց Գրիգորի Մելեխովը։

— Ճի՛շտ, ճիշտ։ Ա՛յ, կարդա։ Կազանցիներն են ուղարկել ինձ։ Երեկ առավոտ Շումիլինսկուց դենը մեր ձիավոր պարեկը հարձակվեց երկու ձիավորի վրա։ Երկուսն էլ կարմիր կուրսանտներ էին։ Կազակները նրանց թրատեցին։ Ասում էին, թե մեկը տեսքով մեծահասակ էր, կարելի է թե կոմիսար էր. նրա գծագրոցում գտան այս լրագիրը, որ կոչվում է «Վը պուտի», այս ամսի տասներկուսինն է։ Նրանք հրաշալի են նկարագրում մեզ.— Կուդինովը լրագիրը մեկնեց Մելեխովին. լրագրի մի անկյունը այծի ոտի չափ կտրված էր։

Գրիգորին թռուցիկ կերպով նայեց քիմիական մատիտով նշված մի հոդվածի վերնագիրը, սկսեց կարդալ.

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Դոնի կազակության մի մասի ապստամբությունը արդեն մի քանի շաբաթ է տևում։ Ապստամբությունը բարձրացրել են Դենիկինի գործակալները՝ կոնտրռևոլյուցիոն սպաները։ Դա հենարան է գտել կազակ կուլակության միջավայրում։ Կուլակներն իրենց ետևից տարել են միջակ կազակների մի զգալի մասը։ Միանգամայն հնարավոր է, որ այս կամ այն դեպքում կազակները ինչ-ինչ անարդարություններ են տեսել սովետական իշխանության առանձին ներկայացուցիչների կողմից։ Դրանից հմուտ կերպով օգտվել են Դենիկինի գործակալները, որպեսզի հրահրեն խռովության բոցը։ Սպիտակգվարդիական սրիկաները ապստամբության ռայոնում սովետական իշխանության կողմնակիցներ են ձևանում, որպեսզի ավելի հեշտությամբ ձեռք բերեն միջակ կազակի վստահությունը։ Այսպիսի ճանապարհով կոնտրռևոլյուցիոն խաբեբայությունները, կուլակական շահերը և կազակության մասսայի տգիտությունը առժամապես ի մի են ձուլվել և հարավային ֆրոնտի մեր բանակների թիկունքում անիմաստ ու հանցավոր խռովության են վերածվել։ Ռազմիկի թիկունքում խռովությունը նույնն է, ինչ որ պալարը մշակի ուսի վրա։ Պատերազմելու, սովետական երկիրը պաշտպանելու, կալվածատիրական-դենիկինյան հրոսակախմբերը վերջնականապես չարդելու համար անհրաժեշտ է ունենալ

հուսալի, հանգիստ, բանվորագյուղացիական միահամուռ թիկունք։ Դրա համար էլ այժմ կարևորագույն խնդիրն է Դոնը մաքրել խռովությունից և խռովարարներից։

Կենտրոնական սովետական իշխանությունը հրամայել է ամենակարճ ժամանակամիջոցում լուծել այս խնդիրը։ Հիանալի օժանդակ ուժեր են ժամանել ու ժամանում են իբրև օգնություն էքսպեդիցիոն զորքերին, որոնք գործում են կոնտրռևոլյուցիոն ստոր խռովության դեմ։ Լավագույն աշխատողներ, կազմակերպիչներ են ուղարկվում այստեղ՝ անհետաձգելի խնդիրը լուծելու համար։

Հարկավոր է վերջ տալ խռովությանը։ Մեր կարմիրբանակայինները պետք է համակվեն այն պարզ գիտակցությամբ, որ Վեշենսկայա կամ Ելանսկայա, կամ Բուկանովսկայա ստանիցաների խռովարարները սպիտակ գվարդիական գեներալներ Դենիկինի և Կոլչակի ուղղակի օգնականներ են հանդիսանում։ Որքան երկար տևի ապստամբությունը, այնքան շատ զոհեր կլինեն երկու կողմից։ Արյունահեղությունը կարելի է նվազեցնել միայն մի ճանապարհով. արագ, դաժան, չախչախիչ հարված հասցնել։

Պետք է վերջ տալ խռովության։ Պետք է հերձել ուսի պալարը և այն դաղել շիկացած երկաթով։ Այն ժամանակ կազատվի հարավային ֆրոնտի ձեռքը՝ թշնամուն մահացու հարված հասցնելու համար»։

Գրիգորին վերջացրեց ընթերցումը, մռայլ քմծիծաղ տվեց։ Հոդվածը նրա սիրտը լցրեց չարացումով ու բարկությամբ։ «Ճռճռացրել են գրիչը ու միանգամից հավասարացրել Դենիկինին, նրա օգնականներ դարձրել...»

— Հը՛, ո՞նց է, հիանալի է, չէ՞։ Ուզում են շիկացած երկաթով դաղել։ Հը՛մ, մենք դեռ կտեսնենք, թե ով ում կդաղի. ճի՞շտ է, Մելեխով.— Կուդինովը սպասեց պատասխանի ու դիմեց Բոգատիրյովին.— Փամփո՞ւշտ է հարկավոր. կտանք։ Բրիգադի ամեն մի ձիավորին — երեսուն հատ։ Հերի՞ք է... Գնա պահեստ, ստացիր։ Օրդերը կգրի մատակարարման բաժնի պետը, անցիր նրա մոտ։ Միայն թե դու, Բոգատիրյով, այնտեղ ավելի շատ զոռ տուր թրին, խորամանկություն բաներեցրու, այդ լավ բան է։

— Քոստոտ ոչխարից, մի՝ կտոր բուրդ պոկելն էլ խեր է,— ժպտաց ուրախացած Բոգատիրյովը ու հրաժեշտ տալով՝ դուրս գնաց։

Դեպի Դոն սպասվելիք նահանջի վերաբերմամբ Կուդինովի հետ պայմանավորվելուց հետո Գրիգորի Մելեխովն էլ գնաց։ Գնալուց առաջ հարցրեց.

— Եթե ես ամբողջ դիվիզիան բերեմ Բազկի, ինչո՞վ պիտի անցնենք Դոնը։

— Բա՛ն ասացիր, էլի՛։ Ամբողջ հեծելազորը լողալով կանցնի Դոնը։ Ո՞րտեղ է տեսնված, որ հեծելազորը որևէ բանով անցնի։

— Ինձ մոտ դոնեցիները քիչ են, նկատի ունեցիր։ Իսկ Ձիրի կազակները լող տվողներ չեն։ Ամբողջ կյանքը տափաստանում են անցկացնում, էլ ո՞նց պիտի լող տալ իմանան։ Նրանք մեծ մասամբ ծանր ու անճոռնի մարդիկ են։

— Ձի նստած կանցնեն։ Պատահում էր, մանևրների ժամանակ լող էին տալի, գերմանական ֆրոնտում էլ այդպես էր լինում։

— Ես հետևակի մասին եմ խոսում։

— Լաստ կա։ Նավակներ կպատրաստենք, մի՛ անհանգստանա։

— Բնակիչներն էլ կգան։

— Գիտեմ։

— Դու բոլորի համար ապահովիր գետանցը. թե չէ հոգիդ կհանեմ, հա՛-ա։ Հո հանաք բան չի՞, եթե մեր ժողովուրդը մնա։

— Կանեմ, կանեմ, էլի՛։

— Բա թնդանոթնե՞րը։

— Հրասանդները պայթեցրու, իսկ երեք դյույմանոցները բեր այստեղ։ Մենք մեծ նավակներ կսարքենք և մարտկոցները այս կողմը կբերենք։

Գրիգորին իր կարդացած հոդվածի տպավորության տակ դուրս եկավ շտաբից։

«Մեզ Դենիկինի օգնականներ են անվանում... Բա ո՞վ ենք մենք։ Դուրս է գալի, որ հենց օգնականներ ենք, էլ ինչի՞ նեղանալ։ Մայր-ճշմարտությունը աչք ծակեց...»։ Նա վերհիշեց հանգուցյալ Ցակով Պոդկովայի խոսքերը։ Մի անգամ Կարգինսկում, ուշ երեկոյան տուն վերադառնալով, Գրիգորին մըտավ հրետանավորների մոտ, որոնք տեղավորված էին հրապարակի տներից մեկում. հաշտում ավելով ոտները սրբելով, լսեց, թե ինչպես Ցակով Պոդկովան, մեկի հետ վիճելով, ասում էր. «Ասում ես անջատվեցի՞նք։ Ոչ մեկի իշխանության տակ չպիտի՞ լինենք։ Է՛-է, քո ուսերի վրայինը ոչ թե գլուխ է,

այլ չուտվող դդում։ Եթե ուզում ես իմանալ, մենք հիմի ոնց որ անտուն-անտեր շուն լինենք. որևէ մի շուն չի գոհացնի տիրոջը կամ կեղտոտություն կանի, կփախչի տանից, բայց ո՞ւր պիտի գնա։ Գայլերին չի միանա, վախենում է, ու գիտե, որ դրանք գազանների ցեղից են, տիրոջ մոտ չի կարող վերադառնալ,— սա կթակի կեղտոտության համար։ Այդպես էլ մենք։ Դու միտդ պահի իմ խոսքերը. պոչներս կքաշենք, մըտրակի պես կկապենք փորերիս ու կսողանք կադետների մոտ։ «Ընդունեցեք մեզ, եղբայրներ, գութ արեք»։ Այ թե ինչ է լինելու»։

Այն կովից հետո, երբ Գրիգորին Կլիմովկայի մոտ թրատեց նավաստիներին, նա ամբողջ ժամանակ ապրում էր իրեն տիրաբար համակած սառն, բութ անտարբերության վիճակում։ Ապրում էր գլուխը տրտում քարշ արած, անժպիտ, անուրախ։ Մի ինչ-որ օրով նրան ցնցեցին ցավն ու ցավակցությունը սպանված Իվան Ալեքսեևիչի նկատմամբ, իսկ հետո այդ էլ անցավ։ Միակ բանը, որ նրա համար մնացել էր կյանքում (գոնե այդպես էր թվում նրան), դա նոր ու անզուսպ ուժով բռնկված կիրքն էր դեպի Ակսինյան։ Միայն սա էր գրավում նրան, ինչպես աշնանային ցուրտ, սև գիշերին ճամփորդին գրավում է տափաստանում վառվող հեռավոր խարույկի երերուն լույսը։

Եվ ահա այժմ էլ, վերադառնալով շտաբից, նա հիշեց Ակսինյային, մտածեց. «Մենք կճեղքենք ֆրոնտը ու կգնանք, իսկ նա ի՞նչ անի.— ու առանց տատանվելու և երկար միտք անելու որոշեց.— Նատալյան կմնա երեխաների, մորքս հետ, իսկ Ակսյուտկային կտանեմ։ Նրան ձի կտամ, թող իմ շտաբի հետ գնա»։

Նա Դոնի վրայով անցավ Բազկի, մտավ իր բնակարանը, ծոցատետրից պոկեց մի թերթիկ, գրեց.

«Կսյո՛ւշա, գուցե մենք ստիպված լինենք նահանջել Դոնի ձախ կողմը, դու թող ինչ որ ունես ու գնա Վեշկի։ Այնտեղ ինձ կգտնես, կլինես ինձ հետ»։

Երկտողը ծրարեց բալի ջրիկ սոսնձով, հանձնեց Պրոխոր Զիկովին, ու կարմրատակելով, մռայլվելով, շինծու խստության տակ Պրոխորից թաքցնելով իր շփոթմունքը, ասաց.

— Կգնաս Տատարսկի, այս երկտողը կտաս Ակսինյա Աստախովային։ Բայց այնպես տուր, որ... դե, զորօրինակ, մերոնցից, իմ ընտանիքից ոչ ոք չտեսնի։ Հասկացա՞ր։ Ավելի լավ է գիշերը տանես ու տաս։ Պատասխան հարկավոր չէ։ Եվ հետո, ա՛յ թե ինչ. երկու օրով քեզ արձակուրդ եմ տալի։ Դեհ, գնա։

Պրոխորը գնաց ձի նստելու, բայց Գրիգորին հանկարծ սթափվելով, նրան ետ կանչեց։

— Անցիր մերոնց մոտ ու մորքս կամ Նատալյային ասա, որ նրանք վաղօրոք այս կողմը ուղարկեն հագուստը և ուրիշ բաներ, ինչ որ արժեքավոր է։ Հացը թող հորեն, իսկ անասունները լող տալով անցկացնեն Դոնից։

LIX

Մայիսի 22-ին սկսվեց ապստամբական զորքերի նահանջը Դոնի աջ ափերով։ Զորամասերը կովով ետ էին քաշվում՝ կանգ առնելով յուրաքանչյուր բնագծում։ Տափաստանային գոտու խուտորների բնակչությունը խուճապահար փախչում էր դեպի Դոն։ Մերունիները և կնանիքը լծում էին տնտեսության մեջ եղած ամբողջ լծկանը, սայլերի վրա էին գցում սնդուկները, կահույքը, հացը, նստեցնում երեխաներին։ Նախիրներից ու հոտերից ջոկում էին կովերն ու ոչխարները, քշում ճանապարհների կողքից։ Հսկայական գումակները բանակից առաջ անցնելով, գնում էին Դոնի առափնյա խուտորները։

Հրամանատարի շտաբի հրամանով հետևազորը նահանջը սկսեց մի օր առաջ։ Տատարսկի պլաստունները և Վեշենսկու ոչ կազակական գուգազը մայիսի 21-ին դուրս եկավ Ուստ-Խոպերսկայա ստանիցայի Զեբոտարյով խուտորից, անցան ավելի քան քառասուն վերստ, գիշերելու համար տեղավորվեցին Վեշենսկայա ստանիցայի Ռիբնի խուտորում։

Ամսի 22-ին երկինքը ծածկվեց դժգույն մուժով։ Նրա մշուշված տարածության վրա ոչ մի ամպ չկար, միայն հարավում, Դոնի մերձակա լեռնանցքի վերևում արևածագից առաջ երևաց մի փոքրիկ, վարդաշող ամպիկ։ Դրա արևելյան կողմից ասես արյուն էր հեղվում, կարմրավառ լույս էր ծո-

բում։ Արևը ծագեց ձախափնյա ավազոտ, ցողից հետո զով թմբերի ետևից, ու ամպիկը չքացավ։ Մարգագետնում ավելի բարձր աղմկեցին արքայալորերը, սրաթև ձկնկուլները կապույտ փաթիլների նման ընկնում էին Դոնի վարարած ջուրը, բարձրանում վերև, գիշատչական կտուցներով արծաթաշող ձկնիկներ տանում։

Կեսօրին մայիսի համար արտասովոր շոգ էր։ Արևը վառում էր ինչպես անձրևից առաջ։ Դեռ մինչև արշալույսը Դոնի աջ կողմով դեպի Վեշենսկայա ձգվեցին փախստականների բազմաքանակ գումակները։ Հետմանական ճանապարհին անլռելի դղրդում էին բրիչկաների անիվները։ Ձիերի վրնջյունը, եզների բառաչը ու մարդկանց խոսակցությունը սարից մինչև գետառ էին հասնում։

Վեշենսկու ոչ կազակական գուգազը, որ ուներ մոտ երկու հարյուր մարտիկ, դեռևս գտնվում էր Ռիբնիում։ Առավոտյան ժամը տասին Վեշենսկուց հրաման ստացվեց, որ գուգազը անցնի Բոլշոյ Գրոմոկ խուտորը, Հետմանական ճանապարհի վրա ու փողոցներում ուղեկալներ կարգի, բոնի Վեշենսկայա եկող զինվորական հասակի բոլոր կազակներին։

Դեպի Վեշենսկայա ընթացող սայլերի հոսանքը մոտեցավ Գրոմոկին։ Փոշոտված, արևից սևացած կնանիքը քշում էին անասունները, ճանապարհների կողքից գնում էին ձիավորները։ Անիվների ճռնչոցը, ձիերի փնչոցը, ոչխարների մայունը, կովերի բառաչը, երեխաների լացը, տիֆով հիվանդների տընքոցը,— որոնց նույնպես տանում էին իրենց հետ,— դեն շպրտեցին բալենու այգիներում գաղտուկ ծվարած խուտորի անդորր լռությունը։ Այնքան արտասովոր էր այդ բազմապիսի ու համաձույլ աղմուկը, որ խուտորի շները բոլորովին խռպոտեցին հաչելուց և արդեն չէին հարձակվում յուրաքանչյուր հետիոտն մարդու վրա, ինչպես այդ անում էին սկզբում, փողոցներով չէին ուղեկցում սայլերին՝ ձանձրույթից մի ամբողջ վերստ ընկնելով դրանց ետևից։

Պրոխոր Զիկովը երկու օր մնաց տանը, Գրիգորիի երկտողը հանձնեց Ակսինյա Աստախովային, բանավոր հանձնարարությունը հաղորդեց Իլյինիչնային և Նատալյային ու քսաներկուսին մեկնեց Վեշենսկայա։

Նա հույս ուներ իր հարյուրյակը գտնել Բազկիում։ Բայց ընդանրային խուլ որոտմունք էր լսվում հեռվից, կարծես նաև Ջիրի ափերից։ Պրոխորը չուզեց գնալ այնտեղ, ուր բռնկվել էր մարտը, և նա որոշեց հասնել Բազկի, այնտեղ սպասել, մինչև որ Գրիգորին իր 1-ին դիվիզիայով կմոտենար Դոնին։

Մինչև Գրոմոկ ամբողջ ճանապարհին փախստականների սայլերը հասնում էին Պրոխորին ու նրանից առաջ անցնում։ Նա գնում էր առանց շտապելու, համարյա շարունակ քայլքով։ Նա շտապելու կարիք չուներ։ Ռուբեժինից սկսած՝ նա գնում էր Ուստ-Խոպերսկու նոր կազմված գնդի շտաբի հետ։

Շտաբը տեղափոխվում էր միաքեղի, երկձի, զսպակավոր սայլակով և երկու բրիչկայով։ Շտաբայինները տանում էին վեց ձի, որոնք թամբած ու կապված էին սայլերի ետին մասերին։ Մի բրիչկայով տանում էին ինչ-որ թղթեր և հեռախոսի ապարատներ, իսկ սայլակով գնում էր վիրավորված, տարիքավոր մի կազակ ու մի ուրիշը, որը սարսափելի նիհարած էր, սապատաքիթ, թամքի բարձիկից չէր բարձրացնում գլուխը, որ ծածկված էր մոխրագույն, կարակուլե սպայական փափախով։ Ըստ երևույթին նա հենց նոր էր ապաքինվել տիֆից։ Պառկել էր մինչև կզակը շինելով ծածկված. փոշին թեթև քրտնքի նման նստում էր նրա կորնթարդ, դալուկ ճակատին, բարակ, կանոնավոր քթին, նա շարունակ խնդրում էր ոտները փաթաթել որևէ տաք բանով, ու ոսկրոտ, ջլուտ ձեռքով ճակատի քրտինքը սրբելով, հայհոյանք էր թափում.

— Սրիկաներ, լրբեր, ոտներիս տակ փչում է, լսո՞ւմ եք։ Պոլիկարպ, լսո՞ւմ ես։ Ծածկեցեք կարպետով։ Երբ առողջ էի, հարկավոր էի, իսկ հիմա...— ու խիստ, օտարոտի հայացքով, ինչպես ծանր հիվանդությունից ապաքինված բոլոր մարդիկ, նա այս ու այն կողմ էր նայում։

Այն մարդը, որին նա Պոլիկարպ էր անվանում, բարձրահասակ, կորովի մի հնագավան էր, նա իջնում էր ձիուց, մոտենում սայլակին։

— Դուք կարող եք խիստ մրսել, Սամոյլո Իվանովիչ։

— Ծածկիր ինձ, ասում եմ։

Պոլիկարպը հնազանդությամբ կատարում էր հրամանը, հեռանում էր։

— Ո՞վ է դա,— նրան հարցրեց Պրոխորը՝ աչքերով ցույց տալով հիվանդին։

— Ուստ-Մեդվեդիցկու սպա է։ Մեզ մոտ, շտաբումն էր գտնվում։

Շտաբի հետ գնում էին նաև Ուստ-Խոպերսկու, Տյուկովնի, Բոբրովսկի, Կրուտովսկի, Զիմովնի և այլ խուտորների փախըստականները։

— Հը՛, ձե՞զ ուր է տանում սատանան,— հարցրեց Պրոխորը մի փախստական ծերունու, որ բազմել էր այլևայլ իրերով լեփ-լեցուն, երկար ու մեծ սայլին։

Կուզենք Վեշկի գնալ։

— Խնձո՞ր էին ղրկել, որ Վեշկի գնաք։

— Դե, հարկ է որ չէին ղրկել, ամա ո՞վ կուզի մեռնել։ Աչքդ որ վախեցավ, կերթաս։

— Ես հարցնում եմ՝ աթոր ինչի՞ եք Վեշկի քշում։ Ելանսկում կանցնեիք գետը, պրծավ-գնաց։

— Ինչո՞վ։ Մարդիկ ասում էին, որ այնտեղ լաստ չկա։

— Իսկ Վեշկիում ինչո՞վ պիտի անցնեիք։ Քո փալաս-մալասի համար լա՞ստ կտան, հա՞։ Զորամասերը կթողնեն ափին, իսկ ձեզ ձեր սայլերո՞վ կանցկացնեն։ Է-է՛, պապի, անխելք մարդիկ եք։ Գնում են սատանան գիտե թե ուր և հայտնի չէ ինչի համար։ Աթոր ինչի՞ ես այդքան լցրել քո սայլը,— բարկությամբ հարցնում էր Պրոխորը՝ ձին քշելով սայլի կողքից, մտրակով ցույց տալով կապոցները։

— Շատ էլ շատ բան կա այստեղ։ Շոր էլ կա, անուրներ էլ, ալյուր և ուրիշ բաներ, որոնք հարկավոր են տան համար... Չէր կարելի թողնել։ Ետ կերթայի ու տունը դատարկ կտեսնեի։ Դե, ես էլ լծեցի մի լուծ ձի, երեք լուծ եզ, ինչ որ կարելի էր բարձեցի, կնանոնց էլ նստեցրի ու ճամփա ընկա։ Աթոր, սիրելիս, այս բոլորը մեջք ծռելով եմ դատել, արցունքով ու քրտինքով դատել, ո՞նց թողնեի։ Եթե կարելի լիներ, տունս էլ կբերեի, որ կարմիրների ձեռքը չընկներ, խոլերա՛ն տանի նրանց։

— Լավ, զորօրինակ, այդ քարմաղը ինչի՞ ես տանում, կամ թե աթոռները ինչի՞դ են պետք գալու։ Դրանք կարմիրներին իսկի էլ հարկավոր չեն։

— Աթոր չէր կարելի թողնել, է՛։ Մազալու մարդ ես դու... Որ թողնեի, նրանք կամ կչարդեին, կամ կվառեին։ Չէ, ինձանից բան չեն պոկի։ Թող սևանան նրանց հոգիները։ Ինչ որ կար վերցրի։

Ծերունին մտրակը թափահարեց ալարկոտ քայլող կուշտ ձիերի վրա, շուռ եկավ ու մտրակի կոթով ցույց տալով ետևից եկող երրորդ եզասայլը, ասաց.

— Հրեն, եզները քշող, շալ գցած այն աղջիկը իմ դուստրն է։ Նրա սայլի վրա խոզ ու գոճի կա։ Խոզը ծանրած էր, երևի մենք նրան ճմլել էինք, երբ կապում էինք ու դնում սայլին։ Գիշերս անտերը ծնեց հենց սայլի վրա։ Լսո՞ւմ ես, թե ոնց են խանչում գոճիները։ Չէ, կարմիրները ինձանից շատ խեր չեն տեսնի, մահըս տանի նրանց։

— Թե դու ինձ կպատահես լաստի մո՛տ, ա՛յ պապի,— ասաց Պրոխորը՝ բարկությամբ նայելով ծերունու քրտնած, լայն սֆաթին,— թե դու կպատահես քո խոզերը, գոճիները և ուրիշ ինչ որ ունես, կշպրտվեն Դոնի մեջ։

— Ինչի՞ համար, է՞,— սարսափելի զարմացավ ծերունին։

— Նրա համար, որ մարդիկ կոտորվում են, ամեն բանից զրկվում, իսկ դու, գրողի տարած քավթառ, սարդի պես ամեն բան քաշում-տանում ես քո ետևից,— բղավեց սովորաբար անվրդով ու մեղմ Պրոխորը.— Ես այդպիսի անպետքներին իսկի չեմ սիրում։ Դա սուր դանակի պես ծակում է սիրտս։

— Անցիր, անցիր-գնա,— չարացավ ծերունին՝ ֆսսալով ու շուռ տալով երեսը,— գլխիս իշխա՞ն գտնվեց, ուրիշի ունեցածը կգցի Դոնի մեջ... Ես խոսում եմ միթամ լավ մարդու հետ... Իմ վախմիստը տղեն հիմի հարյուրյակի հետ կարմիրների դեմ է կանգնած... Անցիր-գնա, աղբեր։ Ուրիշի բարիքի հետ գործ չունես։ Թող դու էլ դատեիր, այն ժամանակ նախանձից չէիր տրաքվի։

Պրոխորը ձին քշեց վարգով։ Ետևից սուր, բարակ ձայնով խանչեց խոճկորը, անհանգստությամբ մռթմռթացրեց խոզը։ Վերջին խանչոցը բզի պես ծակեց մարդկանց ականջները։

— Սա ի՞նչ է, է՞, գրողը տանի, ո՞րտեղից է այդ խոճ-

կորը։ Պոլիկա՛րպ...— հիվանդագին կնճռոտելով դեմքը ու գրեթե լալով բղավեց սայլակի վրա պառկած սպան։

— Գոճին ընկավ սայլից, անիվը ճզմեց նրա ոտները,— ձին մոտ քշելով՝ պատասխանեց Պոլիկարպը։

— Ասա նրանց... Գնա ասա գոճու տիրոջը, որ մորթի դրան։ Ասա, որ այստեղ հիվանդներ կան... Առանց այդ էլ ծանր է դրությունս, ու հիմա էլ այդ ճղճղոցը։ Շո՛ւտ, գնա։

Հասնելով սայլակին, Պրոխորը տեսնում էր, թե սպան ինչպես էր կնճռոտում դեմքը, անշարժ հայացքով ականջ դնում խոճկորի ճղճղոցին, ինչպես էր ապարդյուն փորձ անում ականջները ծածկել իր կարակուլե փափախով... Վրա հասավ Պոլիկարպը։

— Նա չի ուզում մորթել, Սամոյլո Իվանիչ։ Ասում է, թե գոճին կսաղանա, իսկ եթե ոչ, ասում է, իրիկունը կմորթենք։

Սպան սփրթնեց, ճիգ անելով քիչ բարձրացավ ու նստեց սայլակի վրա՝ կախելով ոտները։

— Որտե՞ղ է բրաունինգս։ Կանգնեցրու ձիերը։ Ո՞րտեղ է խոճկորի տերը։ Ես հիմա ցույց կտամ... Ո՞ր սայլի վրա է։

Տնտեսարար ծերունուն այնուամենայնիվ ստիպեցին մորթել խոճկորը։

Պրոխորը քթի տակ ծիծաղելով, ձին նորից քշեց վարգով, Ուստ-Խոպերսկու սայլերից առաջ անցավ։ Առջևում, մի վերստ հեռավորությամբ, ճանապարհով նորանոր սայլեր ու ձիավորներ էին գնում։ Սայլերը առնվազն երկու հարյուր հատ էին, ձիավորները, որոնք ցաք ու ցրիվ էին գնում, մի քառասուն հոգի կլինեին։

«Լաստի մոտ Սոդոմ-Գոմոր կլինի» — մտածեց Պրոխորը։

Հասավ սայլերին։ Ընթացող գումակի առջևից մուգ կարմիր, հիանալի ձիով, քառատրոփով նրան ընդառաջ էր գալիս մի կին։ Հասնելով Պրոխորին, քաշեց սանձը։ Նրա ձին թամբած էր շքեղ թամքով, աստղաձև կրծապանակը և սանձը շողում էին արծաթի նման, թամքի թևերն անգամ որևէ չափով մաշված չէին, իսկ թամբակալներն ու թամբի բարձիկը պըլպլան, լավորակ կաշուց էին։ Կինը հմուտ ու ճարպիկ կերպով նստել էր թամքին, հուժկու, թուխ ձեռքով պինդ բռնել էր

կանոնավոր պահած սանձը, սակայն բարձրամարմին զինվորական ձին, ինչպես երևում էր, արհամարհում էր իր տիրուհուն. ձին շուռ ու մուռ էր անում արյունամած աչքի խնձորը, ծռմռում վիզը, ու բաց անելով ատամնաշարի դեղին սալը, փորձում էր հափռել կնոջ կլորիկ, յուրկայի տակից դուրս եկած ծունկը։

Կնոջ դեմքը մինչև աչքերը ծածկված էր նոր լվացած, լեղակից կապտած գլխաշորով։ Գլխաշորը շուրթերից դեն տանելով, հարցրեց.

— Բիձա, դու վիրավորներով սայլեր չտեսա՞ր։

— Շատ սայլ եմ տեսել։ Ի՞նչ կա որ։

— Փորձանք է պատահել,— ձայնը երկարացնելով ասաց կինը,— մարդուս չեմ գտնում։ Նա լազարեթի հետ գալիս է Վուստ-Խոպերից։ Ոտը վիրավորված էր։ Հիմի էլ ոնց որ թե թարախակալել է վերքը, նա խուտորցիների միջոցով հայտնել էր ինձ, որ ձի բերեմ։ Սա նրա ձին է,— կինը մտրակով խփեց ձիու պարանոցին, որ ծածկված էր քրտնքի կաթիլներով,— ես թամքեցի ձին, գնացի Վուստ-Խոպեր, իսկ լազարեթն այնտեղ չկար, գնացել էր։ Եվ ահա ինչքան էլ դես-դեն եմ ընկնում, նրան ոչ մի կերպ չեմ գտնում։

Պրոխորը կազակուհու կլոր, գեղեցիկ դեմքով զմայլված, բավականությամբ ունկնդրելով նրա ցածր, կոնտրայլտ ձայնի մեղմ տեմբրին, հոգոց հանեց.

— Է՛-է, քուրիս, մարդուդ փնտրելը ինչի՞դ է պետք։ Թող նա գնա լազարեթի հետ, իսկ քեզ, այդ տեսակ սիրունիկին ով ասես կառնի, այն էլ այդ տեսակ օժիտով,— քո խորոտիկ ձիով։ Մինչև իսկ ես էլ ոիսկ կանեի։

Կինը դժկամ ժպտաց, ու թեքելով չաղլիկ իրանը, յուրկայի փեշը քաշեց մերկացած ծնկների վրա։

— Դու առանց սիլի-բիլիի ասա, լազարեթը ճանապարհին չե՞ս տեսել։

— Հրե՛ն, այն սայլերի վրա հիվանդներ է՛լ կան, վիրավորներ էլ,— հոգոց հանելով պատասխանեց Պրոխորը։

Կինը թափահարեց մտրակը, նրա ձին միանգամից շուռ եկավ միայն ետին ոտների վրա, փրփուր թափեց ոտների

արանքը, վազեց անհամաչափ քայլերով, անցնելով քառատրոփի։

Սայլերը դանդաղ էին ընթանում։ Եզները ծուլորեն թափահարում էին պոչերը, քշում բզզող պիծակներին։ Այնքան շոգ էր, մինչամպրոպային օդն այնքան հեղձուկ ու ծանր էր, որ ճանապարհի կողքին կծկվում ու թոշնում էին ցածր արևածաղիկների մատաղ տերևները։

Պրոխորը էլի գումակի կողքից էր գնում։ Երիտասարդ կազակների մեծ քանակը ապշեցնում էր նրան։ Դրանք կամ կտրվել էին իրենց հարյուրյակներից, կամ ուղղակի դասալքել էին, միացել ընտանիքներին ու նրանց հետ գնում էին Դոնն անցնելու։ Ոմանք շարային ձիերը սայլերին կապած, պառկել էին դրանց վրա, կանանց հետ խոսքեր էին փոխանակում, խնամում երեխաներին, մյուսները գնում էին ձիով, իրենց վրայից չհանելով ոչ հրացանները, ոչ էլ թրերը։ «Թողել են զորամասերն ու փախչում են»,— եզրակացրեց Պրոխորը՝ նայելով կազակներին։

Ձիու և եզան քրտնքի, սայլերի տաքացած փայտի, տնային լրեղենի, անիվների քսուքի հոտ էր գալիս։ Եզները քայլում էին ալարկոտ, ծանր շարժելով կողերը։ Նրանց դուրս ընկած լեզուներից լորձի պլպլան թելեր էին կախվում փոշոտ ճանապարհի վրա։ Գումակը մի ժամում չորս-հինգ վերստ էր անցնում։ Ձի լծած սայլերը եզներից առաջ չէին անցնում։ Բայց հենց որ հեռո՛ւ-հեռվում, հարավում մեղմիվ փովեց թնդանոթի կրակոցը, ամեն ինչ իրար անցավ. խախտելով ընթացքի կարգը, սայլերի երկար շարանից շեղվեցին երկձի ու միաձի սայլակները։ Ձիերը վազ տվին, գործի դրվեցին մտրակները, լսվեցին տարբեր ձայներ՝ «Դեհ, արագ», «Հը-ը՛-ը, սատանի ճուտեր», «Թռե՛ք»։ Ճիպոտներն ու մտրակները պինդ զարկվում էին եզների մեջքերին, անիվներն ավելի աշխույժ ճռնչացին։ Վախը արագացրեց ընթացքը։ Ծանր, գորշ փոշին քուլա-քուլա բարձրանում էր ճանապարհից ու սահում դեպի ետ, նստում հացաբույսերի ու խոտաբույսերի ցողուններին։

Պրոխորի փոքրիկ ձիուկը դունչը երկարացնում էր խոտաբույսերին, շրթունքներով պոկում մերթ իշաուլության մի շյուղ, մերթ կանճրակի դեղին պսակը, մերթ մանանեխի թփիկը. պոկում էր և ուտում՝ շարժելով լարված ականջները, աշխատելով բերանից դուրս գցել զրնգուն լինդերը հարող բերանոցը։ Բայց թնդանոթային կրակոցից հետո Պրոխորը կրունկներով թրմփացրեց նրան, ու ձիուկը սիրով անցավ շորորուն վարգին, կարծես հասկանալով, որ հիմա կեր ուտելու ժամանակը չի։

Թնդանոթային որոտմունքը սաստկանում էր։ Միախառնվում էին կրակոցների հուժկու, որոտալից ձայները, հեղձուկ օդում արձագանքվում էր որոտալից, ամպրոպային դղրդյունը։

— Տե՛ր Հիսուս,— սայլի վրա խաչակնքում էր մի ջահել կին՝ երեխայի բերանից հանելով դարչնագույն-կարմրավուն, կաթից պլպլող ծծակը, պիրկ, դեղնավուն ստինքը թաքցնելով շապկի տակ։

— Մերո՞նք են խփում, թե ով, է՛յ, զինվոր տղա,— հարցրեց Պրոխորին եզների կողքից քայլող մի ծերունի։

— Կարմիրներն են, պապի։ Մերոնք արկեր չունեն։

— Հը՛մ, երկնային թագավորը փրկե մերոնց։

Ծերունին ձեռքից բաց թողեց եզների երասանը, հանեց հնամաշ կազակական գլխարկը. քայլելիս խաչակնքելով, երեսը դարձրեց դեպի արևելք։

Հարավում, ուշ ցանված եգիպտացորենի սլաքաձև ծիլերով ծածկված բլրաշարքի ետևից երևաց նոսր, սև մի ամպ։ Ամպը բռնեց հորիզոնի կեսը, մուժի ծածկոցով վարագուրեց երկինքը։

— Մեծ հրդեհ է, մտիկ արեք,— սայլի վրայից բղավեց մեկը։

— Այդ ի՞նչ կարող է լինել։

— Ո՞րտեղ է հրդեհը,— հնչեցին ձայները անիվների ճռճռան աղմուկում։

— Ձիրի ափերին է։

— Կարմիրները այնտեղ վառում են խուտորները։

— Զորություն է, աստված չանի...

— Տե՛ս ինչ սև ամպ է բարձրացել։

— Վառվողը մի խուտոր չի։

— Ձիրի վրա, Կարգինսկուց ներքև կրակ ու բոց է երևում, հիմի այնտեղ կռիվ է...

— Կարելի է Զորնայա գետակի մոտ է։ Քշիր, Իվան։

— Ամա՛ վառվում է, հա՛-ա...

Սև մեզը լայնակի տարածվում էր, հետզհետե ավելի մեծ տարածություն բռնում։ Գնալով սաստկանում էր թնդանոթային որոտմունքը։ Իսկ կես ժամից հետո հարավային քամին դեպի Հետմանական ճանապարհը բերեց հրդեհի դառն ու տագնապալից խանձահոտը. հրդեհը ծավալվում էր ճանապարհից երեսունհինգ վերստ հեռավորությամբ, Զիրի խուտորներում։

LX

Բոլշոյ Գրոմոկում ճանապարհը մի տեղ անցնում էր գորշ սալ-քարից կառուցված ցանկապատի կողքից, հետո միանգամից շուռ էր գալիս դեպի Դոն, իջնում էր ոչ խորունկ, չոր մի հեղեղատ, որի վրա գերաններից կամուրջ էր կառուցված։

Չոր եղանակին հեղեղատի հատակը պսպղում էր դեղին ավազով, գույնզգույն, ողորկ քարերով, իսկ ամառային տարափից հետո բլուրից շեշտակիորեն դեպի հեղեղատն էին հոսում պղտոր անձրևաջրերը. միախառնվում էին. հեղեղը սլանում էր ներքև, լվանում ու գլորում քարերը, աղմուկով թափվում Դոն։

Այդպիսի օրերին կամուրջը հեղեղվում էր, բայց կարճ ժամանակով. մեկ-երկու ժամից հետո լեռնային կատաղի ջուրը, որ քիչ առաջ ավերել էր բանջարանոցները և սյուների հետ միասին պոկել ցախե ցանկապատերը, իջնում էր, հեղեղատի մերկացած հատակում թարմ պլպլում էին թաց կավճի ու խոնավության հոտ արձակող, լվացված գլաքարերը, հեղեղատի եզրերին դարչնագույն փայլով փայլում էր ջրաբեր տիլը։

Հեղեղատի կողքերին խիտ աճել էին բարդիները և ուռենիները։ Ամառային օրվա նույնիսկ ամենաշոգ ժամերին էլ նրանց ստվերում հով էր լինում։

Զով տեղը գրավել էր Վեշենսկու ոչ կազակ բնակիչների ուղեկալը, որը տեղավորվել էր կամրջի մոտ։ Ուղեկալում կար

տասնմեկ մարդ։ Քանի դեռ խուտորում չէին երևում փախստականների սայլերը, գուգազավորները կամրջի տակ պառկած՝ թուղթ էին խաղում, ծխում, ոմանք տկլորացած, շապիկ-վարտիքների կարերը մաքրում էին սալդաթական անկուշտ ոջիլներից. երկուսը թույլտվություն խնդրեցին դասակապետից, գնացին Դոնում լողանալու։

Բայց հանգիստը կարճատև էր։ Շուտով սայլերը մոտեցան կամրջին։ Դրանք գալիս էին անընդմեջ հոսանքով, ու քնեած, ստվերախիտ փողոցը միանգամից դարձավ մարդաշատ, աղմկոտ, հեղձուկ, ասես սայլերի հետ միասին Դոնի առափնյա բլուրից խուտոր էր թափվել նաև տափաստանային բարկ տոթը։

Ուղեկալի պետը, գուգազի 3-րդ դասակի հրամանատարը, բարձրահասակ, նիհար մի ենթասպա ծայրատ, թուխ մորուքով ու մեծ, տղայի ականջների պես ցցված ականջներով,— կանգնել էր կամրջի մոտ, ձեռքը դրել նագանի մաշված պատյանին։ Նա անարգել բաց թողեց մի երկու տասնյակ սայլ, բայց մի սայլի վրա տեսնելով ջահել, մոտ քսանհինգ տարեկան մի կազակ, կարճ հրամայեց.

— Կա՛նգ առ։

Կազակը քաշեց երասանները, մոայլվեց։

— Ո՞ր զորամասից ես,— հուպ մոտենալով սայլին, խստորեն հարցրեց դասակապետը։

— Իսկ դուք ի՞նչ եք ուզում։

— Ո՞ր զորամասից ես, հարցնում եմ։ Հը՞։

— Ռուբեժինի հարյուրյակից եմ։ Բա դո՞ւք ով եք։

— Իշիր։

— Դուք ո՞վ եք, է՞։

— Իշիր, ասում եմ քեզ։

Դասակապետի կլոր ականջակոնքերը թունդ կարմրեցին։ Նա բացեց պատյանը, հանեց նագանը ու առավ ձախ ձեռքը։ Կազակը երասանները տվեց կնոջը, ցած թռավ սայլից։

— Ինչո՞ւ զորամասում չես, ո՞ւր ես գնում,— հարցրեց նրան դասակապետը։

— Հիվանդացել էի։ Հիմի գնում եմ Բազկի... Մեր ընտանիքի հետ եմ գնում։

— Հիվանդության մասին փաստաթուղթ կա՞։

— Ո՛րտեղից կարող է լինել։ Հարյուրյակում բուժակ չկար...

— Հը՛մ, չկա՞ր... Հապա, Կարպենկո, սրան տար դպրոց։

— Ախր դուք ովքե՞ր եք, է՞։

— Այնտեղ մենք քեզ ցույց կտանք, թե ովքեր ենք։

— Ես պետք է գնամ իմ զորամասը։ Ինձ բռնելու իրավունք չունես։

— Մենք ինքներս կուղարկենք քեզ։ Ձենքերդ մո՞տդ են։

— Միայն մի հրացան։

— Վերցրու, շուտ արա, թե չէ հիմի կգլորեմ։ Այդքան ջահել ես, ղշա՛-ան որդի, ու կընկաղ փեշի տակ ես մտնում, թաքնվում։ Մե՞նք պետք է պաշտպանենք քեզ, հա՞։— Ու ետևից արհամարհանքով շպրտեց.— Կազակի-ի՛ս մտիկ։

Կազակը կարպետի տակից հանեց հրացանը, վերցրեց կնոջ ձեռքը, մարդկանց ներկայությամբ չհամբուրվեց, միայն ձեռքի մեջ մի բոպե պահեց կնոջ կոշտ ձեռքը, ինչ-որ ղշնջաց, գուգազավորների հետ գնաց խուտորի դպրոցը։

Փողոցում հավաքված սայլերը գոգոալով անցան կամուրջը։

Ուղեկալը մի ժամում հիսունի չափ դասալիք բռնեց։ Նրանցից ոմանք բռնելու ժամանակ դիմադրում էին, մանավանդ մեկը,— Ելանսկայա ստանիցայի Նիժնի-Կրիվսկոյ խուտորի տարիքավոր, երկարաբեղ, տեսքով կորովի մի կազակ։ Լսելով ուղեկալի պետի հրամանը,— իջնել բրիչկայից,— նա մտրակով խփեց ձիերին։ Երկու գուգազավոր բռնեցին ձիերի սանձերից, կանգնեցրին արդեն կամրջի մյուս կողմում։ Այդ ժամանակ կազակը առանց երկար մտածելու փեշի տակից հանեց ամերիկական վինչեստեր հրացանը, կոթը դեմ արեց ուսին։

— Ճանապա՛ր... Կսպանեմ, սրիկա։

— Իջեք, իջեք։ Ով չի ենթարկվում, մենք նրա վրա կրակելու հրաման ենք ստացել։ Մենք քեզ ավելի շուտ կգնդակահարենք։

— Մուժիկնե-ե-ե՛ր... Երեկ կարմիր էիք, իսկ այսօր կազակների՞ն եք բան սովորեցնում... Հոտա՛ծ հոպոպ... Դեն քաշվի, կգարկեմ...

Գուգազավորներից մեկը, որ բոլորովին նոր, ամեռային փաթաթաններով էր, կանգնեց բրիչկայի առջևի անիվին և կարճատև ծեծկռտոցից հետո կազակի ձեռքից խլեց վինչեստերը։ Վերջինը կատվի նման կորացավ, ձեռքը տարավ վերնազգեստի տակ, պատյանից դուրս քաշեց թուրը. ծնկաչոք լինելով, ձգվեց կցովի, նախշած օրորանի վրայով ու քիչ մնաց թրի ծայրով խփեր գուգազավորի գլխին. վերջինը կարողացավ իր ժամանակին ետ ցատկել։

— Տիմոշա, թող. Տիմոնյուշկա։ Օֆ, Տիմոշա... Պետք չի... Գործ չունես դրանց հետ, կսպանեն քեզ...— Լալիս, փոթոթվում էր կատաղած կազակի նիհար, տգեղադեմ կինը։

Բայց կազակը ամբողջ հասակով մեկ կանգնելով բրիչկայի վրա, դեռ երկար թափահարում էր կապույտ փայլ արձակող մերկ թուրը, չէր թողնում, որ գուգազավորները մոտենան բրիչկային, խռպոտ ձայնով մայր էր հայհոյում, աչքերը կատաղաբար դես-դեն դարձնում։ «Դե՛ն քաշվեք... Կթրատեմ»։ Նրա թուխ-սևավուն դեմքը ջղաձգվում էր, երկար, դեղնավուն բեղերի տակին եռում էր փրփրուն լորձունքը, աչքերի կապտավուն սպիտակուցները հետզհետե ավելի շատ էին արյունով լցվում։

Նրան դժվարությամբ զինաթափեցին, գցեցին գետին, կապեցին։ Ճարպիկ կազակի կռվարարությունը շատ պարզ էր բացատրվում. բրիչկան խառնխտեցին ու ամենաթունդ տնական թարմ արաղով լիք լցված դույլանոց մի սափոր գտան...

Փողոցում խռնվածք առաջացավ։ Սայլերը այնքան խիտ կուտակվեցին, որ պահանջվեց արձակել եզներն ու ձիերը, սայլերը ձեռքով քարշ տալ դեպի կամուրջը։ Ճքճքում, կոտրվում էին առեղներն ու քաշանները, չարանում, խլշկոտում էին պիծակներից տառապող ձիերն ու եզները, չհնազանդվելով տերերի բզավոցներին, ձանձրույթից գժվելով, բարձրանում էին ցախե ցանկապատերի վրա։ Կամրջի մոտ դեռ երկար լսվում էր հայհոյանք, ճի՛ ու աղաղակ, մտրակների շրմփոց, կանանց վայնասուն։ Ետին սայլերը ետ դարձան, որտեղ այդ հնարավոր էր, ու նորից բարձրացան մեծ ճանապարհը, որպեսզի Բազկիի միջով իջնեն Դոն։

Կալանավորված դասալիքներին ուղեկցորդի հսկողությամբ ուղարկեցին Բազկի, բայց որովհետև նրանք բոլորն էլ զինված էին, ուղեկցորդը չկարողացավ նրանց պահել։ Կամբրջից քիչ հեռու ուղեկցորդների ու բռնվածների միջև տուրուդմփոց եղավ։ Մի քիչ հետո գուդազավորները վերադարձան, իսկ դասալիքները իրենք կազմակերպված կարգով գնացին Վեշենսկայա։

Պրոխոր Զիկովին նույնպես բռնեցին Գրոմոկում։ Նա ներկայացրեց Գրիգորի Մելեխովի տված արձակուրդի թուղթը և նրան անարգել բաց թողին։

Իրիկնադեմին նա հասավ Բազկի։ Բոլոր փողոցները և նրբանցքները լեփ-լեցուն էին Զիրի խուտորներից եկած հազարավոր սայլերով։ Դոնի ափին աննկարագրելի իրարանցում էր։ Փախստականների սայլերը երկու վերստ տարածությամբ բռնել էին ամբողջ ափը։ Հիսուն հազար մարդ, անտառում ցրված, սպասում էին գետն անցնելուն։

Վեշենսկու դիմաց լաստով անց էին կացնում մարտկոցները, շտաբները և զորական դույքը։ Հետևազորը փոքրիկ նավակներով էին անցնում։ Դոնի վրա տասնյակ այդպիսի նավակներ էին աշխատում, ամեն մեկը երեք-չորս մարդ էր փոխադրում։ Հենց ջրի ափին, նավամատույցի մոտ վայրենի հրմշտոց էր տեղի ունենում։ Հեծելազորը, որ մնացել էր իբրև վերջապահ, դեռ չէր եկել։ Զիրից դարձյալ թնդանոթային որոտմունք էր լսվում ու է՛լ ավելի սուր կերպով էր զգացվում բարկ, դառն խանձահոտը։

Գետանցումը տեղի ունեցավ մինչև լուսադեմ։ Գիշերվա ժամը տասներկուսին մոտեցան առաջին հեծյալ հարյուրյակները։ Լույսը բացվելուն պես նրանք պետք է սկսեին գետանցումը։

Իմանալով, որ 1-ին դիվիզիայի հեծյալ զորամասերը դեռ չեն ժամանել, Պրոխոր Զիկովը որոշեց Բազկիում սպասել իր հարյուրյակին։ Նա սանձը բռնած, ձին դժվարությամբ անցկացրեց սայլերի կողքից, որոնք անընդմեջ կուտակվել էին տեղական հիվանդանոցի ցանկապատի մոտ, առանց թամքը հանելու ձին կապեց մեկի սայլի չորսուից, հանեց սանձի բերանոցը, իսկ ինքը քայլեց սայլերի արանքով՝ ծանոթներ փնտրելու։

Ամբարտակի մոտ հեռվից տեսավ Ակսինյա Աստախովային։ Վերջինս մի փոքրիկ կապոց կրծքին սեղմած, տաք կոֆտան ուսերին գցած, գնում էր դեպի Դոն։ Նրա պայծառ, աչքի ընկնող գեղեցկությունը գրավում էր գետափին խմբված հետևակների ուշադրությունը։ Նրանք ինչ-որ անպատկառ խոսքեր էին ասում Ակսինյային, քրտնած փոշոտ դեմքերի վրա, ժպիտների մեջ սպիտակափայլում էին ատամները, փառ-փառ ծիծաղ ու բացականչություններ էին լսվում։ Բարձրահասակ, սպիտակահեր մի կազակ, որ առանց գոտու էր, վերնաշապկով ու ծոծրակին քշած փափախով, ետևից գբրկեց Ակսինյային, շրթունքները հպեց նրա թուխ, կոկլիկ վզին։ Պրոխորը տեսավ, թե ինչպես Ակսինյան ուժով ետ հրեց կազակին, ցածր ձայնով ինչ-որ բան ասաց նրան՝ գիշատչաբար բաց անելով ատամները։ Շուրջը հոհոացին, իսկ կազակը հանեց փափախը, խոպոտ ձայնով ասաց. «Ա՛խ, քույրիկ ջան, գոնե մի անգամ, էլի՛»։

Ակսինյան արագացրեց քայլերը, անցավ Պրոխորի կողքից։ Նրա գիրգ շուրթերի վրա դողում էր արհամարհական քմծիծաղը։ Պրոխորը ձայն չտվեց նրան, նա աչքերով զննում էր ամբոխը, փնտրում իրենց խուտորցիներին։ Դանդաղ շարժվելով սայլերի միջև,— որոնք դեպի երկինք էին ցցել անշարժ քաշաններն ու առեղները, լսեց հարբած ձայներ, ծիծաղ։ Մի սայլի տակ, փռված քաթանի վրա երեք ծերունի էին նստել։ Նրանցից մեկի ոտների արանքում դրված էր աբաղով լեցուն մի դույլ։ Քեֆովցած ծերունիները թնդանոթի պարկուճից շինած պղնձե բաժակով հերթով արաղ էին վերցնում, խմում, չորացած ձուկ ուտում, տնական արաղի սուր հոտը և աղած ձկան շոռ հոտը քաղցած Պրոխորին ստիպեցին կանգ առնել։

— Զինվոր աղբեր, արի խմենք, որտեղ լավ մարդ կա— մեր կենացը,— դիմեց նրան ծերունիներից մեկը։

Պրոխորը չստիպեց երկար խնդրել իրեն, նստեց, խաչակնքեց, աղ ու հացով ծերունու ձեռքից ընդունեց քաղցրաբույր օղիով լեցուն բաժակը։

— Խմի՛, քանի սաղ ես։ Հրես, ձուկ-մուկ կեր։ Ծերունիներից չպետք է փախչես, տղա։ Ծերունիները խելոք մարդիկ

են։ Դուք, ջահելներդ, հլա դեռ մեզանից պետք է սովորեք, թե ոնց պիտի անցկացնել կյանքը և... ոնց արաղ խմել,— ընդգծեց թափված քթով ու մինչև լինդերը մաշված վերին շրթունքով մի ուրիշ պապի։

Պրոխորը խմեց՝ վախենալով և շեղակի նայելով անքիթ պապին։ Երկրորդ բաժակից հետո, մինչև երրորդը էլ չհամբերեց, հարցրեց.

— Քեֆ անելո՞ւց ես կորցրել քիթդ, պապի։

— Չէ-է՛, հոգիս։ Սա մրսելուց է եղել։ Դեռ երեխա ժամանակս շատ էի հիվանդանում մրսելուց, դրանից էլ քիթս փչացավ։

— Ես էլ քիչ մնաց մեղք գործեի քո դեմ, մտածում եմ՝ չլինի՞ թե քիթդ գեշ հիվանդությունից է թափվել։ Մեկ էլ տեսար վարակվեցիր դրանով,— անկեղծորեն խոստովանեց Պրոխորը։

Ծերունու հավաստիացումից հանգստանալով, նա շրթունքները ագահությամբ հպեց բաժակին և արդեն առանց վախենալու, առանց շունչ առնելու քամեց բաժակը մինչև հատակը։

— Կկորչի կյանքդ. ո՞նց չիմես, բղավում էր արաղի տերը, ամրակազմ ու առողջ մի բիձա.— հետս բերել եմ երկու հարյուր փութ ցորեն, հազար փութ էլ տանն եմ թողել։ Հինգ լուծ եզ եմ բերել, ու այդ բոլորը ճարահատյալ պիտի թողնեմ այստեղ, հո չե՛մ կարող Դոնից անցկացնել։ Ինչ որ ունեմ, կորչում է։ Երգե՛լ եմ ուզում։ Քեֆ արեք, կազակնե՛ր.— Ծերունին կարմրեց, աչքերը թրջվեցին արցունքներից։

— Մի՛ բղավի, Տրոֆիմ Իվանիչ։ Մոսկվան—նա շատ լի հավատում արտասուքներին։ Սաղ լինենք, էլի՛ կունենանք,— համոզում էր ոնդախոս ծերուկն իր բարեկամին։

— Ախր ո՞նց չբղավեմ, է՞,— արտասվելուց աղճատված դեմքով բարձրացրեց ձայնը ծերունին.— Հացը կորչում է, եզները կսատկեն, տունս կվառեն կարմիրները, աշնանը սպանեցին տղիս, էլ ո՞նց կարող եմ չբղավել։ Ո՞ւմ համար եմ ես գցել, հը՞։ Ամառը պատահում էր, որ քրտնքիցս տասը շապիկ էր փտում, իսկ հիմի մնում եմ տկլոր ու բոբիկ... Խմե-ե՞նք։

Պրոխորը խոսակցության ժամանակ կերավ վառարանի

խուփի պես լայն մի կարմրաձուկ, յոթ բաժակ արաղ խմեց, այնքան զխտվեց, որ չափազանց մեծ դժվարությամբ ոտքի ելավ։

— Զինվո՞ր տղա, մեր պաշտպան, ուզո՞ւմ ես ձիուդ համար վարսակ տամ։ Ինչքա՞ն ես ուզում։

— Մի պա՛րկ,— մոթմոթաց Պրոխորը, որ անտարբեր էր դեպի ամբողջ շրջապատը։

Ծերունին նրա համար մի խոտե ջվալ ընտիր վարսակ լցրեց, տվեց շալակը։

— Ջվալը բեր, չմոռանաս, ի սեր Քրիստոսի,— խնդրում էր նա, գրկում Պրոխորին ու լալիս էր հարբած մարդու արցունքներով։

— Չէ, չեմ բերի։ Ասում եմ չեմ բերի, ուրեմս չեմ բերի...— հայտնի չէ ինչու համառում էր Պրոխորը։

Նա շորորալով հեռացավ սայլից։ Ջվալը կորացնում էր նրան, դես ու դեն գցում։ Պրոխորին թվում էր, թե գնում է սլկուն սառույցով պատած գետնի վրայով. նրա ոտները դողում ու թուլանում էին ինչպես չպայտած, սառույցի վրա քայլող, զգույշ ձիու ոտները։ Էլի մի քանի անհաստատ քայլ անելով, կանգ առավ։ Ոչ մի կերպ չէր կարողանում հիշել՝ գլխին գդակ կա՞ր թե ոչ։ Բրիչկային կապված, սպիտակաճակատ, կոտած մի ձի զգաց վարսակի հոտը, գլուխը երգարացրեց դեպի ջվալը, կծեց դրա ծայրը։ Մեղմակի խշշալով ջվալի ճեղքած տեղից թափվեց վարսակը։ Պրոխորը թեթևացավ ու նորից գնաց։

Վարսակի մնացորդը գուցեև հասցներ իր ձիուն, բայց ահագին մի եզ, որի կողքից նա անցնում էր, հանկարծ կողքից, իր եզային սովորությամբ, աքացեց նրան։ Եզանը տանջել էին բոռերն ու մոծակները, նա գժվել էր շոգից ու ձանձրույթից, չէր թողնում, որ մարդիկ մոտենան իրեն։ Պրոխորը, որ այդ օրը եզան կատաղության առաջին զոհը չէր, թռավ մի կողմ, գլուխը զարկվեց անիվի թոփին, և նա իսկույն քնեց։

Կեսգիշերին արթնացավ։ Նրա վերևում, մթնակապտավուն բարձունքում շեշտակիորեն դեպի արևմուտք էին սլանում քուլա-քուլա, գորշ-կապարագույն ամպերը։ Դրանց արանքից մի ակնթարթ նայում էր թեք ընկած նորալուսինը, ու երկինքը

կրկին վարագուրվում էր ամպերի ծածկոցով, ու մթության մեջ կարծես սաստկանում էր սուր, պաղ քամին։

Հեծելազորը գնում էր հենց այն սայլի կողքից, որի մոտ պառկած էր Պրոխորը։ Գետինքը տնքում ու հառաչում էր բազմաթիվ ձիերի պայտած սմբակների տակին։ Զգալով մոտալուտ անձրևը, փնչում էին ձիերը. թրերը շրխկալով դիպչում էին ասպանդակներին, բռնկվում էին ծխախոտի կարմիր կայծերը։ Անցնող հարյուրյակներից ձիու քրտնքի հոտ, փոկե հանդերձանքի թթվաշ հոտ էր գալիս։

Պրոխորը, ինչպես և ամեն մի զինծառայող կազակ, պատերազմի տարիներում ընտելացել էր այդ խառն, միայն հեծելազորին հատուկ հոտին։ Կազակները այն տարել էին բոլոր ճանապարհներով։ Պրուսիայից ու Բուկովինայից մինչև Դոնի տափաստանները, և դա, հեծելազորային զորամասի անխախտ հոտը նույնքան մոտիկ ու ծանոթ էր, որքան և հայրենի խրճիթի հոտը։ Ագահությամբ շարժելով պինչերը, Պրոխորը քիչ բարձրացրեց ծանր գլուխը։

— Սա ո՞ր զորամասն է, աղբեր-տղերք։

— Հեծելազորային...— մթության միջից կատակով պատասխանեց մի թավ ձայն։

— Հարցնում եմ՝ ո՞ւմ զորամասն է։

— Պետլյուրայի...— պատասխանեց նույն թավ ձայնը։

— Ա՛յ քեզ սրիկա.— Մի քիչ սպասեց, կրկնեց հարցը.— ո՞ր գունդն է, ընկերներ։

— Բոկովսկու։

Պրոխորն ուզում էր վեր կենալ, բայց արյունը ծանր խփում էր գլխին, սիրտը խառնում էր։ Պառկեց, էլի քնեց։ Արշալույսին Դոնից խոնավություն և ցուրտ էր փչում։

— Մեռե՞լ է,— քնի միջից, գլխավերևից լսեց նա մի ձայն։

— Տաք է... ու հարբած է,— հենց Պրոխորի ականջի վերևում պատասխանեց մեկը։

— Քարշ տուր դրան գրողի ծոցը։ Փռվե՛լ է լեշի նման։ Հապա, մի հատ հասցրու քիթ ու մռութին։

Մի ձիավոր տեգի կոթով ցավագին հրեց դեռ ուշքի չեկած Պրոխորի կողքը, մեկի ձեռները հափռեցին նրա ոտները, քարշ տվին մի կողմ։

— Դեն քշեք սայլերը։ Սատկե՛լ են։ Քնելու ժամանա՛կ են գտել։ Կարմիրները հրես պոչերս են կոխոտում, իսկ սրանք քնել են ոնց որ տանը։ Դե՛ն տարեք սայլերը, հիմի մարտկոցն է անցնելու։ Շո՛ւտ... Փակե՛լ են ճամփեն... Ի՛նչ մարդիկ են, է՛,— որոտաց ազդու մի ձայն։

Սայլերի վրա և սայլերի տակ քնած փայստականները շարժվեցին։ Պրոխորը վեր թռավ։ Նրա վրա ոչ հրացան կար, ոչ էլ թուր, չկար նաև աջ ոտքի սապոգը. երեկվա կոնծաբանությունից հետո նա այդ բոլորը կորցրել էր։ Տարակուսանքով շուրջը նայելով, ուզում էր դրանք փնտրել սայլի տակ, բայց վրա հասած, մարտկոցի ձիերից իջած ձիավարները և համարները անողոքաբար դեն շպրտեցին սայլը դրա վրա եղած սնդուկների հետ միասին, բոպեապես անցք բացեցին հրանոթների համար։

— Անցնե-ե՞-ել...

Ձիավորները թռան ձիերի վրա։ Պիրկ դողալով, ձգվեցին լայն, ամուր քաշանները։ Փոսից անցնելիս շրխկացին պատյանով ծածկված հրանոթի բարձր անիվները։ Լցարկղի սոնին խփեց բրիչկայի առեղին, կոտրեց այն։

— Թողնում եք ֆրոնտը, հա՞-ա։ Ձեզ պես կովողների հոր կարկա՛ջը,— բրիչկայի վրայից բղավեց ոնգախոս ծերունին, որի հետ երեկոյան խմում էր Պրոխորը։

Հրետանավորները լուռ անցնում էին, շտապում դեպի գետանցը։ Պրոխորը վաղորդյան աղջամուղջում երկար փընտրում էր հրացանն ու ձին։ Այնպես էլ չգտավ։ Մակույկների մոտ մյուս սապոգն էլ հանեց, շպրտեց ջրի մեջ ու երկար թրջեց անտանելի ցավից տրաքվող գլուխը։

Արևածագին հեծելազորը սկսեց անցնել գետը։ Ձիերից իջած կազակները 1-ին հարյուրյակի հարյուր հիսուն ձիերը, թամքերը հանած, քշեցին դեպի Դոն, գետածնկից վերև, որտեղից Դոնը ուղիղ անկյան տակ դառնում է դեպի արևելք։ Հարյուրյակի հրամանատարը, որի դեմքը մինչև աչքերը ծածկված էր շիկակարմիր, խիտ մազ ու մորուքով և որը սապատաքիթ էր և վայրագ տեսք ուներ,— ապշեցուցիչ կերպով նման էր վայրի խոզին։ Նրա ձախ թևը կախված էր կեղտոտ,

արյունոտած կապից, աջ ձեռքը անդադար խաղացնում էր մտրակը։

— Զթողնե՛լ, որ ձիերը ջուր խմեն։ Քշե՛լ, քշել դրանց։ Է՛յ, ի՞նչ բանի ես... մերըդ... մե՛ըդ... քո մերը... Վախենո՞ւմ ես ջրից, ինչ է... Քշիր ձիդ, մտիր ջուրը... Նա շաքար չի, չի հալվի...— բղավում էր նա կազակների վրա, որոնք ձիերը քշում էին ջրի մեջ, ու նրա շիկակարմիր բեղերի տակին բացվում էին ժանիքանման, սպիտակ ատամները։

Ձիերը խռնվում էին, տհաճությամբ էին մտնում պաղ ջուրը, կազակները աղմկում էին, մտրակներով ձաղկում նրանց։ Առաջինը լողանալով գնաց սևաթույր, սպիտակ ոունգներով, ճակատի վրա լայն ու կարմրավուն բծով մի ձի։ Ըստ երևույթին առաջին անգամ չէր, որ լող էր տալիս։ Ալիքները ողողում էին կախ հետույքով նրա գավակը, մի կողմ քշում թել-թել պոչը, իսկ վիզը և մեջքը ջրից դուրս էին։ Նրա ետևից գնում էին մնացած ձիերը, ճեղքում հոսանքը, ճլմփալով ու փնչալով սուզվում փրփրուն ջրի մեջ։ Կազակները վեց նավակով գնացին նրանց ետևից։ Ուղեկցողներից մեկը նավակի առջևի ծայրին կանգնած, համենայն դեպս պատրաստ էր պահում օղապարանը։

— Առաջ չանցնե՛լ։ Ձիերը քշել շեղակի ուղղությամբ։ Զթողնել, որ ջուրը նրանց տանի։

Հարյուրյակի հրամանատարի մտրակը աշխուժացավ, մի շրջան գծեց, շրխկալով զարկվեց կավճոտած սապոգի ճիտքին։

Արագ հոսանքը քշում էր ձիերը։ Սևաթույրը հեշտությամբ լողում էր ձիու երկու մարմնի չափ մյուսներից առաջ։ Նա առաջինը հասավ ձախ ափի ավազահատակ ծանծաղուտը։ Այդ միջոցին կաղամախիների խիտ ճյուղերի ետևից նայեց արևը, վարդագույն ճառագայթը ընկավ սևաթույր ձիու վրա, ու ջրից պլպլացող նրա բուրդը մի ակնթարթ բռնկվեց սև, պայծառ բոցով։

— Հետևել Մրիխինի զամբիկին, օգնե՛լ նրան... Նրա վրա սանձ կա։ Դեհ, թիավարեցեք, է՛, թիավարեցեք...— խռպոտ բղավում էր վայրի խոզին նմանվող հարյուրապետը։

Ձիերը բարեհաջող կերպով անցան գետը։ Մյուս ափում կազակները նրանց էին սպասում։ Ամեն մեկը վերցնում ու սանձում էր իր ձին։ Այս կողմից սկսեցին փոխադրել թամքերը։

— Երեկ ո՞րտեղ հրդեհ եղավ,— հարցրեց Պրոխորը մի կազակի, որը դեպի նավակն էր տանում թամքը։

— Ձիրի ափերին։

— Արկի՞ց էր վառվել հրդեհը։

— Ի՞նչ արկից,— խիստ տոնով պատասխանեց կազակը,— կարմիրներն են հրդեհ գցում...

— Ինչ որ կա վառո՞ւմ են,— զարմացավ Պրոխորը։

— Չէ-է՛... Հարուստ տներն են վառում, որոնք երկաթե կտուրով են, լավ տուն ու տեղն են վառում։

— Ո՞ր խուտորներն են վառվել։

— Վիսլոգուզովից մինչև Գրաչևը։

— Իսկ առաջին դիվիզիայի շտաբը հիմի ո՞րտեղ է, չգիտե՞ս։

— Զուկարինսկումն է։

Պրոխորը վերադարձավ փախստականների սայլերի մոտ։ Անծայրածիր ձգված քարավանի վերևում ամենուրեք քամուց գալարվում, բարձրանում էր խարույկների դառն ծուխը, որոնք պատրաստվում էին չոր ցախից, քանդած ցախե ցանկապատերից և անասունների չոր փթիրից. կնանիքը նախաճաշ էին եփում։

Գիշերվա ընթացքում էլի մի քանի հազար փախստականներ էին եկել աջափնյա տափաստանային գոտուց։

Խարույկների մոտ, սայլերի ու արաբների վրա՝ ձայների մեղվային դժժոց.

— Ի՞րբ պետք է գետն անցնելու հերթը մեզ հասնի, է՛։ Մեռանք սպասելով։

— Թող աստված պատժի ինձ,— հացը կթափեմ Դոնը, որ կարմիրների ձեռքը չընկնի։

— Լաստի մոտ անհաշիվ ժողովուրդ է կանգնած։

— Կնիկ ջան, բա մենք սնդուկները ո՞նց թողնենք գետափին։

— Ետ գցինք, ետ գցինք ու... Տե՛ր Հիսուս, մեր փրկիչ։

— Մեր լաստը ունենայինք, հո կանցնեինք...

— Սատանեն բերեց այդ Վեշկիի կողմը, ա՛խ։

— Ասում էին, որ Կալինովը բոլորովին վառել են։

— Դե արի ու լաստին հասիր...

— Է՛, որ մնայիր, կներեի՞ն, հա՞։

— Նրանց մոտ հրաման կա՝ թրատել բոլոր կազակներին, վեց տարեկանից մինչև ալևորները։

— Մեզ վրա կտան այս կողմում... Այն ժամանակ ի՞նչ կլինի։

— Ինչքա՞ն միս են ձեռք գցելու...

Ուկրաինական խայտաբղետ մի բրիչկայի մոտ ճառաբանում է վայելչակազմ, հոնքերը ճերմակած մի ծերունի, նրա տեսքը և տիրական շարժումները ցույց են տալիս, որ նա խուտորի ատաման է, երկար տարիներ կրել է պղնձե գլխով ատամանական գավազանը.

— ...հարցնում եմ՝ «Ուրեմս ժողովուրդը պիտի կործանվի՞ գետի ափին, հա՞։ Բա մենք ե՞րբ պիտի կարողանանք մեր փալաս-փուլուսով անցնել մյուս կողմը։ Ախր կարմիրները կկոտորեն մեզ»։ Իսկ նորին բարեծննդությունը ասում է ինձ՝ «Մի՛ կասկածի, հայրիկ։ Այնքան ժամանակ դիրք կբռնենք ու կպաշտպանվենք, մինչև որ ամբողջ ժողովուրդն անցնի գետը։ Կմեռնենք, ամա չենք թողնի, որ մեր կնանիքը, երեխեքն ու ալևորները կորչեն»։

Ծերունիներն ու կանայք շրջապատում են ճերմակ հոնքերով ատամանին։ Մեծագույն ուշադրությամբ լսում են նրա խոսքը, հետո ընդհանուր, խառնաշփոթ աղմուկ է բարձրանում.

— Բա ինչի՞ մարտկոցը ծլկեց։

— Քիչ մնաց ոտնատակ անեին մարդկանց, վռազ-վռազ գնում էին գետն անցնելու...

— Հեծելազորն է՛լ եկավ...

— Ասում էին, թե Գրիգորի Մելեխովը թողել է ֆրոնտը։

— Սա ի՞նչ կարգ է։ Բնակիչներին թողին, իսկ իրե՞նք...

— Ձորքերն իրենց գլուխն են պրծացնում...

— Մեզ ո՞վ պիտի պաշտպանի։

— Հրե՛ն, հեծելազորը լող տալով անցավ...

— Առաջ մորթուս, հետո որդուս...

— Հենց այդ է, է-է՛։

— Բոլորն էլ դավաճանեցին մեզ։

— Կործանումը մոտ է, ա՛յ թե ինչ։

— Պետք է կարմիրների մոտ բիձա-միձա ղրկել աղ ու հացով։ Կարելի է գութ անեն, չկոտորեն։

Փողոցի մուտքում, հիվանդանոցի աղյուսե մեծ շենքի մոտ երևում է մի ձիավոր։ Նրա հրացանը կախված է թամքի առջևի դաշից, կողքին ճոճվում է տեգի կանաչ ներկած ձողակը։

— Ախր դա իմ Միկիշկան է,— ուրախացած ճչում է շալով պինդ փաթաթված, տարեց մի կին։

Նա վազում է դեպի ձիավորը, ցատկում առեղների վրայից, անցնում սայլերի ու ձիերի արանքից։ Մարդիկ բռնում են ձիավորի ասպանդակից, կանգնեցնում նրան։ Նա գլխավերևն է բարձրացնում զմուսե կնիքով մի ծրար, բղավում է.

— Զեկուցագիր եմ տանում գլխավոր շտաբը։ Ճանապարհ տվեք։

— Միկիշենկա, որդիս,— հուզված բղավում է տարեց կինը։ Նրա մազերի գզգզված, ալեխառն խոպոպներն ընկնում են ուրախությունից փայլող դեմքին։ Նա դողդոջ ժպիտով, ամբողջ մարմնով սեղմվում է ասպանդակին, ձիու քրտնած կողին, հարցնում է.

— Մեր խուտորում եղա՞ր։

— Եղա։ Հիմի այնտեղ կարմիրներն են...

— Բա մեր տո՞ւնը...

— Մեր տունը անվնաս է, իսկ Ֆեդոտի տունը վառեցին։ Կրակը ընկավ մեր մարագը, բայց կարմիրներն իրենք հանգցրին։ Ֆետիսկան այնտեղից վազեվազ եկավ, պատմեց, որ կարմիրների մեծը ասել է՝ «Ոչ մի չքավորի տուն չպետք է վառվի, իսկ բուրժույներինը վառեցեք»։

— Փառք քեզ, տեր։ Քրիստոս փրկե նրանց,— խաչակնքում է մի կին։

Մռայլադեմ մի ծերունի զայրացած ասում է.

— Այդ ի՞նչ ես ասում, խորոտիկս, հարևանի տունը կրակ տվին, ուրեմն «փառք քեզ տեր», հա-ա՞։

— Նրան գրողն էլ չի տանի,— տաքացած ու արագ

բլբլում է կինը,— նա իրեն համար էլի սուն կշինի, իսկ ես ինչո՞վ պիտի շինեմ, եթե վառեին։ Ֆեդոտը մի ղութիկ ոսկի է թաղել գետնի մեջ, իսկ ես... ամբողջ կյանքումս ուրիշների դռներն եմ ընկնում, խեղդվում կարիքի մեջ։

— Թող, մերըս, ես պետք է վազ տեղ հասցնեմ ծրարը,— ձիուց թեքվելով՝ խնդրում է ձիավորը։

Մայրը գնում է ձիու կողքից, քայլելիս համբուրում որդու ձեռքը, որ սևացել է արևից, վազում է դեպի իրեն արաբան, իսկ ձիավորը պատանեկական բարակ ձայնով ճվում է.

— Դեն գնացեք, ծրար եմ տանում հրամանատարին, ճանապարհ տվեք։

Նրա ձին տաքանում է, դես-դեն գցում գավակը, թռչկոտում։ Մարդիկ տհաճությամբ են ճանապարհ տալիս, ձիավորը գնում է առերևույթ դանդաղությամբ, բայց շուտով չքանում է արաբաներից, եզների ու ձիերի մեջքերից դենը, ու միայն տեգն է ճոճվում բազմամարդ ամբոխի գլխավերևում՝ մոտենալով Դոնին։

LXI

Օրվա ընթացքում ապստամբական բոլոր զորամասերը և փախստականները փոխադրվեցին Դոնի ձախ ափը։ Վերջինը անցնում էին Գրիգորի Մելեխովի 1-ին դիվիզիայի Վեշենսկու գնդի հնձյալ հարյուրյակները։

Գրիգորին մինչև երեկո տասներկու ընտիր հարյուրյակներով դիմադրում էր Կուբանյան 33-րդ կարմիր դիվիզիայի գրոհին։ Ժամի հնգին Կուդինովից լուր ստացավ, որ զորամասերն ու փախստականները անցել են գետը, ու միայն այդ ժամանակ նահանջելու հրաման տվեց։

Վաղօրոք մշակված պլանի համաձայն, Դոնի շրջակայքի ապստամբական հարյուրյակները պետք է Դոնն անցնեին ու տեղավորվեին յուրաքանչյուրն իր խուտորի դիմաց։ Կեսօրից զեկուցագրեր էին ստացվում հարյուրյակներից։ Դրանց մեծամասնությունը արդեն տեղավորվել էր ձախ ափին, իրենց խուտորների դիմաց։

Շտաբը առափնյա տափաստանային գոտու կազակներից բաղկացած հարյուրյակներ ուղարկեց այնտեղ, ուր խուտորների միջև միջանցներ կային։ Կրուժիլինսկու, Մակսաև-Սինգինի, Կարգինսկու հետևակ և Լատիշևսկու, Լիխովիդովի ու Գրաչևսկու հարյուրյակները գրավեցին Պեգարևկայի, Վեշենսկու, Լեբյաժինսկու, Կրասնոյարսկու միջանցները, մնացածները ետ քաշվեցին դեպի թիկունքը, Դոնի ձախ ափի Դուբրովկա, Զորնի, Գորոխովկա խուտորները և, ըստ Սաֆոնովի մտադրության, պետք է կաղմեին այն ռեզերվը, որը ճեղքվածքի դեպքում պետք էր գալու հրամանատարությանը։

Դոնի ձախ կողմում, Կազանսկայա ստանիցայի արևմտյան ամենահեռու խուտորներից մինչև Ուստ-Խոպեր հարյուր հիսուն վերստ տարածությամբ ձգվեց ապստամբական ճակատը։

Դոնն անցած կազակները դիրքային մարտերի էին պատրաստվում. շտապ կերպով խրամներ էին փորում, կտրում ու սղոցում բարդիները, ուռենիները, կաղնիները, բլինդաժներ ու գնդացրային բներ էին շինում։ Փախստականների մոտ գտնված բոլոր դատարկ պարկերը լցնում էին ավազով, տեղավորում խրամների անընդմեջ գծի առջևում իբրև պատվար։

Իրիկնագեմին ամենուրեք ավարտված էր խրամներ փորելը։ Վեշենսկու հետևում, սոճու ծառուտներում քողարկվեցին ապստամբական 1-ին ու 3-րդ մարտկոցները։ Ութ թնդանոթի համար ընդամենը կար հինգ արկ։ Վերջանալու վրա էին նաև հրացանների փամփուշտները։ Կուդինովը հատուկ ձիավոր սուրհանդակով հրաման ուղարկեց, որով խստորեն արգելվում էր կրակելով պաշտպանվելը։ Հրամանով առաջարկվում էր հարյուրյակներից առանձնացնել մեկական, երկուական առավելապես դիպուկ կրակող հրաձիգներ, բավականաչափ քանակությամբ փամփուշտներ տալ նրանց, այն հաշվով, որ գերդիպուկ կրակող այդ հրաձիգները ոչնչացնեին կարմիր գնդացրորդներին և այն կարմիրբանակայիններին, որոնք կերևան աջափնյա խուտորների փողոցներում։ Մնացածներին թույլատրվում էր կրակել միայն այն դեպքում, եթե կարմիրները Դոնն անցնելու փորձեր ձեռնարկեին։

Գրիգորի Մելեխովը արդեն մթնշաղին ձիով շրջագայեց

Դոնի ափերին ցրված իր 1-ին դիվիզիայի զորամասերում, գիշերելու համար վերադարձավ Վեշենսկայա։

Գետառում կրակ վառելն արգելված էր։ Լույսեր չկային նաև Վեշենսկում։ Դոնի ամբողջ ձախ ափը ընկղմած էր կապտավուն մշուշի մեջ։

Վաղ առավոտյան Բազկիի բլուրի վրա երևացին առաջին կարմիր պարեկները։ Շուտով նրանք նշմարվեցին աջափնյա բոլոր կուրգանների վրա, Ուստ-Խոպերսկուց մինչև Կազանսկայա։ Կարմիր ճակատը հզորազոր հեղեղով մոտենում էր Դոնին։ Հետո պարեկները անհայտացան ու մինչև կեսօր բլուրների վրա ծանր լռություն և ամայություն էր տիրում։

Հետմանական ճանապարհի վրա քամին փոշու սպիտակավուն սյուներ էր բարձրացնում ու պտտում։ Հարավում գեռևս կանգնած էր հրդեհների կարմրավուն-սև մառախուղը։ Քամու ցրած ամպերը նորից կուտակվում էին։ Մի բլուրի վրա ամպի թեավոր ստվեր ընկավ։ Շողաց ցերեկվա լույսում սպիտակ կայծակը։ Արծաթափայլ, ծուռումուռ գծով նա մի ակնթարթ ճեղքեց կապույտ ամպը, շողշողուն նիզակի նման նետվեց ներքև ու խփեց պահպանական կուրգանի պիրկ, կորնթարդ լանջին։ Որոտը կարծես ճղեց կախված, վիթխարի ամպը. դրա ընդերքից թափվեց անձրևը։ Քամին ծռում էր այն, սպիտակավուն, երերուն ալիքներով տանում առափնյա լեռնաճյուղերի կավճոտ լանջերով, շոգից թոշնած արևածաղիկների, գլխիկոր հացաբույսերի վրայով։

Անձրևը լվաց մատղաշ, բայց փոշուց գորշացած սաղարթը։ Հյութեղ փայլեցին գարնանացանի ծիլերը, դեղնադեմ արևածաղիկները բարձրացրին կլոր, հատիկավորված գլուխները, բանջարանոցներից տարածվեց ծաղկող դդումի մեղրաբույրը։ Ծարավը հագեցրած գետինքը երկար ժամանակ գոլորշի էր արձակում...

Կեսօրին պահպանական, կիտովի կուրգանների վրա, որոնք նոսր շղթայով ընկած են առափնյա բլրաշարքերին ու Դոնի ափերով ձգվում են մինչև Ազովյան ծովը,— նորից երևացին կարմիրբանակայինների պարեկները։

Կուրգաններից տասնյակ վերստերի վրա երևում էր Դոնի տափարակ ձախ ափը իր դեղնավուն ավազաթմբերով, ծառուտների կանաչ կղզիներով։ Կարմիրբանակային պարեկները սկսեցին զգուշությամբ իջնել խուտորները։ Բլուրներից շղթաներով շարժվեց հետևազորը։ Պահպանական կուրգանների ետևում, որոնց վրա մի ժամանակ պոլովիցների[1] ու ռազմասեր բրոդնիկների[2] դետքերը հսկում էին Ֆշնամու գալուն, տեղավորվեցին կարմիր մարտկոցները։

Բելոգորսկայա լեռան վրա տեղավորված մարտկոցը սկսեց ռմբակոծել Վեշենսկայան։ Առաջին արկը պայթեց հրապարակում, հետո էլ արկերի պայթյունների գորշ ծուխը ու շրապնելների կաթնանման-սպիտակ, քամուց ցրվող ծուխը ծածկեց ստանիցան։ Էլի երեք մարտկոց սկսեցին ռմբակոծել Վեշենսկայան ու Դոնի մոտ եղած կաղաքական խրամները։

Բոլշոյ Գրոմոկում զայրույթով ճարճատեցին գնդացիրները։ Երկու «գոչկիսները» խփում էին կարճ հերթերով, իսկ բարիտոնաձայն «մաքսիմը» անլռելի երկաթե կարկուտ էր թափում, նշանառությունը ճշտելով՝ կրակում Դոնի մյուս կողմում վազելազք կատարող ապստամբական հետևազորի օղակների վրա։ Գումակները մոտենում էին բլուրներին։ Տատասկով պատած լեռնալանջերի վրա խրամատներ էին փորվում։ Հետմանական ճանապարհի վրա թխկթխկում էին փամփշտատար և բեռնատար սայլերի անիվները, նրանց ետևից երկար, քուլա-քուլա փեշով փոշի էր բարձրանում։

Ամբողջ ճակատով մեկ որոտում էին թնդանոթները։ Դոնի շրջակա, տեղանքի վրա իշխող լեռներից կարմիր մարտկոցները մինչև ուշ երեկո հրակոծում էին ձախ ափը։ Ապստամբների խրամներով կտրատված գետառը լռում էր ամբողջ տարածության վրա, Կազանսկուց մինչև Ուստ-Խոպերսկայա։ Զիապահները թաքնվել էին եղեգնի, բոշխի ու պրտուի անանց մացառներով պատած ծառուտներում։ Այնտեղ միջատ-

---

[1] Պոլովցիները թուրքական ժողովուրդ էին։ XI դարում Միջին Ասիայից գաղթեցին Արևելյան Եվրոպա և մինչև թաթարների արշավանքը մնում էին իբրև Սև ծովի մերձական բոլոր տափաստանների տերեր, Դոնից մինչև Դանուբ։

[2] Բրոդնիկները XII—XIII դդ. քոչվոր ժողովուրդ էին հարավ-արևելյան Ռուսաստանի տափաստաններում և Հունգարիայում։ Տարեգրություններում հիշատակվում են պոլովեցների հետ միասին։

ները չէին անհանգստացնում ձիերին, վայրի գայլուկով ցանցված թավուտում զով էր։ Ծառերը և բարձր, սպիտակ ուռերը մարդկանց հուսալի կերպով թաքցնում էին կարմիրբանակային դիտորդներից։

Ոչ ոք չկար գետառի կանաչ մարգագետնում։ Միայն երբեմնակի մարգագետնում երևում էին Դոնից հեռացող, վախից կռացած փախստականների կերպարանքները։ Կարմիրբանակային գնդացիրը մի քանի հերթով փամփուշտներ էր արձակում նրանց վրա, գնդակների ահավոր սվսվոցը սարսափած փախստականներին տափում էր գետնին։ Նրանք մինչև մթնշաղ պառկում էին խիտ խոտաբույսերի մեջ և միայն դրանից հետո վազում դեպի անտառը, առանց ետ նայելու աճապարում դեպի հյուսիս, ծառուտները, որոնք նրանց հյուրընկալաբար թաքցնում էին չափազանց խիտ բուսած լաստենիների ու կեչիների տակ։

Վեշենսկայան երկու օր հրետանային ուժեղ հրակոծության էր ենթարկվում։ Բնակիչները նկուղներից ու գետնահարկերից դուրս չէին գալիս։ Ստանիցայի փողոցները, արկերով փորփրված, միայն գիշերով էին աշխուժանում։

Շտաբում ենթադրություններ էին անում, որ այդչափ ինտենսիվ հրակոծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հարձակվելու, գետն անցնելու նախապատրաստություն։ Երկյուղ կար, որ կարմիրները գետանցումը կսկսեն հենց Վեշենսկու դիմաց, նպատակ ունենալով գրավել այն ու ճեղքելով ուղիղ գծով ձգված ճակատը, դա երկու մասի բաժանել և ապա Կալաչից ու, Ուստ-Մեդվեդիցայից թևային հարձակման անցնելով, վերջնականապես ջախջախել ապստամբներին։

Կուդինովի հրամանով Վեշենսկում, Դոնի մոտ կենտրոնացված էր քսանից ավելի գնդացիր՝ բավականաչափ քանակությամբ գնդացրային ժապավեններով։ Մարտկոցների հրամանատարները հրաման ստացան մնացած արկերը կրակել միայն դեպքում, երբ կարմիրները փորձեն անցնել գետը։ Լաստը և բոլոր նավակները տարված էին գետածոցը, Վեշենսկուց վերև, այնտեղ հսկողության տակ էին գտնվում։

Շտաբայինների երկյուղը Գրիգորի Մելեխովին անհիմն

էր թվում։ Մայիսի 24-ին տեղի ունեցած խորհրդակցությունում նա ծաղրից Իլյա Սաֆոնովի ու սրա համախոհների ենթադրությունները։

— Վեշկիի դիմաց նրանք ինչո՞վ պիտի անցնեն գետը,— ասում էր նա.— Մի՞թե հնարավոր է անցնել այդ տեղից։ Ախր մտիկ արեք. այն կողմում ափը դափի պես մերկ է, ավազոտ, հարթ ցամաքաշերտ, Դոնի ափին էլ ոչ անտառ կա, ոչ թուփ։ Ախր ո՞ր հիմարը քիթը կխոթի այնտեղ, գետն անցնելու համար։ Միայն Իլյա Սաֆոնովը իր ընդունակություններով կարող էր իրեն զգել այդպիսի մի անդունդ... Գնդացիրները բոլորին էլ կհնձեն այդպիսի մերկ ափում։ Եվ դու չկարծես, Կուդինով, որ կարմիր հրամանատարները ինձանից ու քեզանից ավելի հիմար են։ Նրանց մեջ մեզանից ավելի լավ գլուխ ունեցողներ կան։ Նրանք ճակատ առ ճակատ չեն գա Վեշկիի վրա, ու մենք գետանցումը պետք է սպասենք ոչ թե այստեղ, այլ այնտեղ, ուր գետը խորունկ չէ, ուր ցրիվ ավազի վրա ծանծաղուտ է առաջացել, կամ թե այնտեղ, ուր տեղանքը թաքստոցներով է, անհարթ և անտառոտ։ Պետք է խիստ հսկել այդպիսի սպառնալի տեղերը, մանավանդ գիշերը. կազակներին պետք է նախազգուշացնել, որ չվրիպեն, զգույշ կենան, իսկ վտանգավոր տեղերը պետք է առաջուց ռեզերվներ տանել, որ կարելի լինի դեմ կանգնել փորձանքի դեպքում։

— Ասում ես չե՞ն գա Վեշկիի վրա։ Բա ինչո՞ւ են մինչև իրիկուն թնդանոթներով հրակոծում ստանիցան,— հարց տվեց Սաֆոնովի օգնականը։

— Այդ նրանց հարցրու։ Միայն Վեշկիի վրա՞ են կրակում, ինչ է։ Կազանկային էլ են խփում, Երինսկուն էլ, հրեն, Սեմյոնովսկայա սարից էլ են կրակում։ Նրանք ամեն տեղ հրակոծում են թնդանոթներով։ Երևի նրանց մոտ արկերը մի քիչ ավելի են, քանց մեզ մոտ։ Մեր ք... հրետանին է, որ հինգ արկ ունի. այն էլ դրանց բաժակները կաղնուց են շինված։

Կուդինովը հոհոաց.

— Ա՛յ, հենց բուն կետին խփեց։

— Այստեղ քննադատության կարիք չկա,— նեղացավ

3-րդ մարտկոցի հրամանատարը, որ ներկա էր խորհրդակցության։— Այստեղ պետք է գործի մասին խոսել։

— Խոսիր, ո՞վ է կապում լեզուդ.— Կուդինովը մռայլվեց, խաղացրեց գոտու ծայրը.— Քանի՞-քանի անգամ էր ասված ձեզ, անիրավներիդ՝ «Անօգուտ մի՛ ծախսեք արկերը, պահեցեք կարևոր դեպքերի համար»։ Չէ ու չէ, կրակում էիք ինչի վրա ասես, մինչև իսկ գումակների վրա էլ էիք կրակում։ Իսկ այժմ, երբ դանակը ոսկորին է հասել, խփելու հնար չկա։ Էլ ինչի՞ նեղանալ քննադատությունից։ Լա՛վ արեց Մելեխովը, որ ծաղրեց ձեր փայտե հրետանին։ Ձեր հանդերձանքը ճիշտ որ ծիծաղի է արժանի։

Կուդինովը բռնեց Գրիգորիի կողմը՝ վճռականապես պաշտպանելով նրա առաջարկը,— ուժեղ հսկողություն ունենալ գետանցման համար առավելապես հարմար տեղերի վրա և ռեզերվային զորամասեր կենտրոնացնել սպառնալից ճակատամասերին անմիջականորեն մոտիկ գտնվող վայրերում։ Որոշվեց հենց Վեշենսկում եղած գնդացիրներից առանձնացնել մի քանի հատ, Մելոգորսկու, Մերկուլովսկու և Գրոմոկի հարյուրյակներին հանձնելու համար, որոնց ճակատամասերում առավելապես հնարավոր էր գետանցումը։

Գրիգորիի այն ենթադրությունը, թե կարմիրները փորձ չեն անի Վեշենսկու դիմաց գետն անցնելու, այլ դրա համար ավելի հարմար տեղ կընտրեն,— հաստատվեց հենց մյուս օրը։ Գրոմոկի հարյուրյակի հրամանատարը առավոտյան հաղորդեց, որ կարմիրները պատրաստվում են գետն անցնելու։ Դոնի մյուս կողմից ամբողջ գիշերը լսվում էր աղմուկ, մուրճերի թխկթխկոց, անիվների ճռինչ։ Որտեղից-որտեղ բազմաթիվ սայլերով դեպի Գրոմոկ տախտակներ էին բերում, թափում, ու աղոցները անմիջապես սկսում են սվսվալ, լսվում էր, թե ինչպես էին թրխկում կացինները և մուրճերը։ Այդ ամենից կարելի էր դատել, որ կարմիրները ինչ-որ բան են կառուցում։ Կազակները սկզբում ենթադրում էին, թե նավակամուրջ է կառուցվում։ Երկու համարձակներ գիշերը կես վերստ վերև անցան այն տեղից, որտեղից գալիս էր ատաղձագործական աշխատանքի աղմուկը, մերկացան ու իրենց վրա կապած թփերով քողարկված, հոսանքի ուղղությամբ

կամացուկ լողացին դեպի ներքև։ Նրանք հենց ափի մոտ էին, նրանցից քիչ հեռու խոսքեր էին փոխանակում ուռենիների տակ տեղավորված գնդացրային ուղեկալի կարմիրբանակայինները, խուտորից պարզ լսվում էին ձայները և կացինների թրխկոցը, բայց ջրի վրա ոչինչ չէր երևում։ Կարմիրները եթե որևէ բան էին կառուցում, ապա համենայն դեպս դա կամուրջ չէր։

Գրոմոկի հարյուրյակի հրամանատարը ուժեղացրեց հսկողությունը թշնամու կողմի վրա։ Արշալույսին դիտորդները, որոնք անընդհատ նայում էին հեռադիտակով, երկար ժամանակ ոչինչ չէին տեսնում։ Բայց շուտով նրանցից մեկը, որ դեռ գերմանական պատերազմում գնդի լավագույն հրաձիգն էր համարվում վաղորդյան աղջամուղջում նկատեց մի կարմիրբանակայինի, որ երկու թամբած ձիով իջնում էր Դոն։

— Մի կարմիրբանակային դեպի ջուրն է իջնում,— ՀՀնջաց կազակն ընկերոջը և մի կողմ դրեց հեռադիտակը։

Ձիերը մինչև ծնկները մտան ջուրը, սկսեցին խմել։

Կազակը հրացանի երկարացրած փոկը գցեց ձախ ձեռքի արմունկին, բարձրացրեց նշանոցը, երկար ու մանրակրկիտորեն նշան բռնեց...

Կրակոցից հետո ձիերից մեկը դանդաղ ընկավ կողքի վրա, մյուսը վազ տվեց սարն ի վեր։ Կարմիրբանակայինը կռացավ, որպեսզի սպանված ձիուց հաներ թամբը։ Կազակը կրակեց երկրորդ անգամ, կամացուկ ծիծաղեց. կարմիրբանակայինը արագ շտկվեց, փորձեց փախչել-հեռանալ Դոնից, սակայն հանկարծ ընկավ։ Ընկավ երեսի վրա ու այլևս ոտքի չելավ։

Գրիգորի Մելեխովը հենց որ լուր ստացավ, որ կարմիրները պատրաստվում են գետն անցնելու, թամբեց ձին, գնաց Գրոմոկի հարյուրյակի ճակատամասը։ Ստանիցայից դենը նա անցավ ծանծաղ, նեղ լճից, Դոնի գետաբազուկից, որ ձգվում էր մինչև ստանիցայի ծայրը, ու սլացավ անտառի միջով։

Ճանապարհն անցնում էր մարգագետնով, բայց մարգագետնով գնալը վտանգավոր էր, դրա համար էլ Գրիգորին մի փոքր ավելի երկար շուրջանակի ճանապարհ ընտրեց. ան-

տապի միջով անցավ մինչև Ռասսոխով լճի ծայրը, գուղձերի և սպիտակ ուռուտի միջով հասավ մինչև Կալմիցկի ջուրը (նեղ վտակ, որի ափերը խիտ ծածկված էին ջրաշուշաններով, եղինջով ու եղեգով և որ մարգագետնի լճակներից մեկը միացնում էր Պողոտոյլիցա լճին), և միայն տիղմոտ Կալմիցկի ջուրը անցնելուց հետո կանգնեցրեց ձին, մի քանի րոպե հանգիստ տվեց նրան։

Մինչև Դոն ուղիղ գծով մոտ երկու վերստ էր։ Մարգագետնով գնալ դեպի խրամները նշանակում էր հրակոծության ենթարկվել։ Կարելի էր սպասել երեկոյան մթնշաղին ու մթնով անցնել մարգագետնի հարթ, բաց տարածությունը, բայց Գրիգորին, որ չէր սիրում սպասել ու միշտ ասում էր, թե «աշխարհքում ամենավատ բանը, դա սպասելն ու մյուսների ետևից հասնելն է», որոշեց իսկույն գնալ։ «Քառատրոփով, ինչքան կարելի է արագ կքշեմ ձիս, գուցե թե գնդակ չդիպչի,— մտածեց նա՝ դուրս գալով թփերից։

Որոշեց գնալ կանաչ, սաղարթախիտ ուռենիների կողքից, որոնք Դոնի մերձակա անտառի մի ճյուղն էին կազմում, բարձրացրեց մտրակը։ Հարվածից, որ դաղեց ձիու գավակը, ու վայրենի աղաղակից ձին ցնցվեց ամբողջ մարմնով, պառկեցրեց ականջները ու հետզհետե ավելի մեծ արագություն վերցնելով, թռչունի պես թռավ դեպի Դոն։ Գրիգորին մի հիսուն սաժեն էլ չէր անցել, երբ աջ ափի բլուրից, դեմուդեմ, երկար հերթերով որոտաց մի գնդացիր։ «Ֆիույտ, ֆիո՛ւյտ, ֆիո՛ւյտ, թյո՛ւ, թյո՛ւ»,— արջամկան պես սվսվացին գնդակները։ «Բարձր ես բռնել, ա՛յ քեռի»,— մտածեց Գրիգորին՝ ոտները սեղմելով ձիու կողերին, թուլացնելով սանձը, թուշը հպելով ձիու բաշին, որ փոփոում էր հանդիպական քամուց։ Ու կարծես կռահելով նրա միտքը, կարմիր գնդացրորդը, որ պառկած էր հաստոցավոր գնդացրի կանաչ վահանակի ետևում, հրվանդանի պես գետն իջնող, սպիտակ մի բլուրի վրա, կանխումով նշան բռնեց, ավելի ցած թափեց գնդացրային կրակի հոսանքը, և արդեն ձիու առջևի ոտների տակ ախորժակով չպպացրին, օձի պես ֆշշացին թռիչքում շիկացած գնդակները։ Դրանք մխրճվում էին խոնավ, վարարած ջրից դեռ չչորացած գետնի մեջ, տաք ցեխ էին շաղ տալիս...

«Թը՛ք, շշշիո՛ւ, թը՛ք, թը՛ք», ու դարձյալ գլխավերևում և ձիու մարմնի կողքերին — «Տիուո՛ւտ, թյո՛ւ... տիիիուուո՛ւտ»։

Քիչ բարձրանալով ասպանդակների վրա, Գրիգորին համարյա պառկած էր ձիու ձգված պարանոցին։ Սարսափելի արագությամբ դեմուդեմ էր սլանում ուռենիների կանաչ շարանը։ Երբ նա արդեն հասավ ճանապարհի կեսին, Սեմյոնովսկի բլուրից խփեց մի թնդանոթ։ Արկի երկաթային կլորճկլորճոցը ցնցեց օդը։ Պայթյունի մոտիկ դղրդյունը Գրիգորիին ստիպեց ճոճվել ձիու վրա։ Նրա ականջներում դեռ չէր մարել արկաբեկորների հեծկլտող կաղկանձն ու ոռնոցը, մոտակա լճակում դեռ չէին բարձրացել եղեգները, որոնք տափել էին օդի մրրկաթափ ճնշումից և խշշալով շտկվում էին,— երբ բլուրի վրա թնդաց թնդանոթային կրակոցի որոտը, ու մոտեցող արկի ոռնոցը նորից ճմլեց Գրիգորիին, նրան սեղմեց թամբին։

Նրան թվաց, որ ճնշող, առավելագույն լարվածության հասած կրճկրճոցը խզվեց վայրկյանի ինչ-որ մի հարյուրերորդական մասում, և ահա հենց այդ մեկ հարյուրերորդական վայրկյանում նրա աչքերի առաջ ծառս եղավ մի սև ամպ, խորտակիչ հարվածից դողաց երկիրը, ձիու առջևի ոտները ասես ինչ-որ անդունդ ընկան...

Ընկնելու պահին Գրիգորին բացեց աչքերը։ Նա այնքան ուժեղ զարկվեց գետնին, որ պաշտպանական գույնի մահուդե շալվարի ծնկները ճղվեցին, կտրվեցին ներբանափոկերը։ Պայթյունից ցնցված օդի հուժկու ալիքը նրան ձիուց հեռու շպրտեց, ու արդեն ընկնելով, նա մի քանի սաժեն գլորվեց խոտաբույսերի վրա, գետնին քսվելուց ցավեցին ձեռներն ու մի թուշը։

Ընկնելուց խլացած, Գրիգորին ոտքի ելավ։ Վերևից սև անձրևի նման թափվում էին հողի կտորներն ու փշուրները, խոտաբույսերի դուրս թռած արմատները... Ձին ընկած էր ձագարից մի քսան քայլ հեռավորությամբ։ Նրա գլուխն անշարժ էր, բայց հողոտված ետին ոտները, քրտնակալած դավակը և պոչի թեք արմատը ցնցվում էին մանր, ջղաձգական դողից։

Դոնի մյուս կողմում գնդացիրը լռեց։ Մի հինգ րոպե լռու-

թյուն էր։ Լճակի վրա անհանդիստ կչկչում էին կապույտ ձկնկուլները։ Հաղթահարելով գլխապտույտը, Գրիգորին քայլեց դեպի ձին։ Նրա ոտները դողում էին, տարորեն ծանր էին։ Նա այնպիսի զգացում էր ապրում, որը սովորաբար լինում է երկար ու անհարմար նստելուց հետո քայլելիս, երբ արյան առժամապես խախտված շրջանառությունից ուռած ոտները օտարոտի են թվում և յուրաքանչյուր քայլը խուլ արձագանքվում է ամբողջ մարմնի մեջ...

Գրիգորին սպանված ձիուց հանեց թամքը և հազիվ էր մտել մենամարտ լճակի եղեգների մեջ,— որոնք կտրատված էին արկաբեկորներից,— երբ վերստին հավասար ընդմիջումներով որոտաց գնդացիրը։ Գնդակների թռիչքը չէր լսվում, պարզ էր, որ բլուրից արդեն որևէ նոր նպատակակետի էին կրակում։

Մի ժամից հետո նա հասավ հարյուրյակի հրամանատարի գետնատունը։

— Հիմի դադարեցրել են ատաղձագործությունը,— ասաց հարյուրյակի հրամանատարը,— իսկ գիշերն էլի անպայման գործի կանցնեն։ Դուք մեզ փամփուշտ ուղարկեիք, թե չէ բանը վատ է. ամեն մեկը մեկ-երկու պահունակ փամփուշտ ունի։

— Իրիկնադեմին փամփուշտ կբերեն։ Աչքդ չկտրես այն ափից։

— Հա՛ մտիկ ենք տալի։ Միտք ունեմ գիշերս մարդ ղրկել, ով որ ուզենա, որ լող տան մյուս կողմը ու տեսնեն, թե նրանք ինչ են շինում։

— Բա ինչո՞ւ անցած գիշերը չես ուղարկել։

— Երկուսին ուղարկել էի, Գրիգորի Պանտելեևիչ, ամա նրանք վախեցել էին խուտոր գնալ։ Ափի մոտ լող էին տվել, իսկ խուտորը գնալ սիրտ չէին արել... Էհ, հիմի ո՞ւմ կարող ես ստիպել։ Վախենալու բան է, կընկնես նրանց ուղեկալի ձեռքը, ու նրանք շանսատակ կանեն։ Կազակները ոնց որ թե իրենց տներին մոտիկ տեղում ղոչաղության հետ այնքան էլ գլուխ չունեն... Գերմանու կովումը շատ շատերը ոխսկ էին անում, որ ինչ է, խաչ ստանան, իսկ հիմի չես կարենում ստիպել, որ չէ՛ թե հեռու հետախուզության, այլ մինչև իսկ ուղեկալ գնան։ Մի կողմից էլ կնանիքն են փորձանք դառել.

գալիս են իրենց երիկների մոտ, գիշերում են հենց խրամատներումը, ու չես կարող վռնդել։ Երեկ սկսեցի վռնդել նրանց, իսկ կազակներն ինձ վրա մատ են թափ տալի. «Թո՛ղ,— ասում են,— իրեն խելոք պահի, թե չէ նրա հախիցը կգանք, հա՛-ա»։

Գրիգորին հարյուրյակի հրամանատարի գետնատնից գնաց խրամատները։ Դրանք ծուռումուռ ձգված էին անտառում, Դոնից մի քսան սաժեն հեռավորությամբ։ Կաղնուտը, ոլոռնաթփերը և խիտ բուսած մատղաշ կաղամախիները կարմիրբանակայիններին աչքերից թաքցնում էին խրամների պատվարի դեղին թումբը։ Խրամները հաղորդակցության անցքերով միանում էին բլինդաժներին, որտեղ հանգստանում էին կազակները։ Գետնատների մոտ թափթփված էին չորացրած ձկան գորշ կճեպներ, ոչխարի ոսկորներ, արևածաղկի կեղև, ծխախոտի մնացորդներ, ինչ-որ լաթեր. ծառերի ճյուղերից կախված էին լվացված գուլպաներ, քաթանե վարտիքներ, ոտափաթաթաններ, կանացի շապիկներ ու յուրկաներ...

Հենց առաջին գետնատնից ջահել, քնաթաթախ մի կին դուրս հանեց հերարձակ գլուխը։ Նա տրորեց աչքերը, անտարբեր նայեց Գրիգորիին. չքացավ մուտքի սև անցքում, ինչպես գետնասկյուռը իր բնում։ Հարևան գետնատանը կամացուկ երգում էին։ Խեղդված, բայց զիլ ու մաքուր կանացի ձայնը միախառնվում էր տղամարդկանց ձայներին։ Երրորդ գետնատան հենց մուտքի մոտ նստած էր տարիքավոր, մաքուր հագնված մի կազակուհի։ Նրա ծնկների վրա հանգչում էր մի կազակի ալեխառն, քյաքուլավոր գլուխը։ Կազակը ննջել էր կողքի վրա հարմար պառկած, իսկ կինը խնամքով քթիվ էր անում նրա գլուխը, փայտե ատամնավոր սանրի վրա ջարդում գլխի սևաքամակ ոջիլները։ Քշում ճանճերը, որոնք նստում էին նրա ծերացած «յարոյի» երեսին։ Եթե չլիներ գնդացրի զայրացկոտ ճարճատյունը Դոնի մյուս կողմում, հրանոթների թնդաձայն որոտմունքը, որ ջրի վրայով գալիս էր վերևից, Միգուլինսկու թե Կազանսկու հողից,— կարելի էր կարծել, որ Դոնի մոտ հանգստանում են հնձվորները,— այնքա՞ն անդորր էր կրակի գծի վրա գտնվող գրոմոկյան հարյուրյակի տեսքը։

Պատերազմի հինգ տարվա ընթացքում Գրիգորին առաջին անգամ էր այդչափ արտասովոր դիրքային պատկեր տեսնում։ Չկարողանալով թաքցնել ժպիտը, նա քայլում էր գետնատների կողքից, ու ամենուրեք նրա հայացքը հանդիպում էր կանանց, որոնք սպասարկում էին ամուսիններին, նորոգում, կարկատում կազակական հագուստը, լվանում զինվորական սպիտակեղենը, ուտելիք պատրաստում ու կեսօրվա թեթև հացկերույթից հետո լվանում ամանեղենը։

— Դուք այստեղ լավ, հարմարություններով եք ապրում...— ասաց Գրիգորին հարյուրյակի հրամանատարին՝ վերադառնալով նրա գետնատունը։

Հարյուրյակի հրամանատարը ժպտաց՝ բաց անելով ատամները.

— Ապրում ենք, էլի՛, ի՞նչ պիտի անենք որ։

— Ջափից դուրս հարմար.— Գրիգորին մռայլվեց.— Այստեղից իսկույն վռնդե՛լ կնանոնց։ Պատերազմ է, ու այդ տեսակ բա՞ն... Բազա՞ր է այստեղ, թե՞ տոնավաճառ, հը՞։ Սա ի՞նչ բան է։ Այսպես կարմիրները կանցնեն Դոնը, իսկ դուք չեք է՛լ լսի, ժամանակ չեք ունենա լսելու, կկորչեք կնանոնց երեսից... Մութն ընկավ թե չէ, քշիր բոլոր երկարապոչերին։ Թե չէ վաղը կգամ, ու եթե տեսնեմ յուրկայով մեկն ու մեկին, առաջինը քո գլուխը կթռցնեմ։

— Դե՛, հարկ է որ...— սիրով համաձայնվեց հարյուրյակի հրամանատարը,— ես ինքս կնանոնց դեմ եմ, ամա ի՞նչ անես կազակների հետ։ Կարգապահությունը ընկել է... Կնանիքը կարոտել են իրենց մարդկանց, ախր երրորդ ամիսն է, որ կռվում ենք։

Իսկ ինքը կարմրատակելով, նստում էր հողե թախտին, որ իր մարմնով ծածկեր թախտի վրա գցած կանացի կարմիր գողնոցը, ու դեմքը շուռ տալով Գրիգորիից, բարկացկոտ, ծուռ նայում էր գետնատան մի անկյունին, որ վարագուրված էր կոշտ քաթանով և որտեղից նայում էր հենց ի՛ր կնկա ծիծաղկոտ, շագանակագույն աչքը...

LXII

Ակսինյա Աստախովն Վեշենսկում տեղավորվեց իրեն ազգական մի պառավի մոտ, որ ապրում էր ստանիցայի ծայրում, նոր եկեղեցուց քիչ հեռու։ Առաջին օրը նա փընտրում էր Գրիգորիին, բայց սա դեռ Վեշենսկում չէր, իսկ հետևյալ օրը մինչև ուշ երեկո փողոցներում ու նրբանցքներում սվսվում էին գնդակները, պայթում արկերը, ու Ակսինյան սիրտ չէր անում խրճիթից դուրս գալ։

«Կանչեց Վեշկի, խոսք տվեց, թե միասին կլինենք, իսկ ինքը ով գիտի որտեղ է թրև գալի»,— չարացած մտածում էր նա օթախում, սնդուկի վրա պառկած կծոտելով կարմիր, բայց արդեն խամրած շուրթերը։ Պառավը նստել էր պատուհանի մոտ, գուլպա էր գործում, յուրաքանչյուր հրանոթային կրակոցից հետո խաչակնքում էր։

— Ա՛խ, տեր Հիսուս։ Սա ի՞նչ քամբախտություն է։ Ախր ինչի՞ են կռվում, է՞։ Ինչի՞ են կատաղել իրար դեմ։

Փողոցում, խրճիթից մի տասնհինգ սաժեն հեռավորությամբ մի արկ պայթեց։ Խրճիթում աղիողորմ շրխկոցով թափվեցին պատուհանների ապակիները։

— Մորաքույր, հեռացիր պատուհանից, ախր կարող են խփել քեզ,— խնդրում էր Ակսինյան։

Պառավը ակնոցների տակից հեգնանքով նայեց նրան, սրտնեղած պատասխանեց.

— Ախ, Ակսյուտկա, մտիկ եմ անում քեզ ու մտածում՝ որքա՛ն անխելք ես դու։ Ես նրանց թշնամի՞ն եմ, ինչ է։ Նրանք ինձ վրա ինչի՞ պիտի կրակեն։

— Պատահմամբ կսպանեն։ Նրանք հո չե՞ն տեսնում, թե գնդակներն ուր են թռչում։

— Էլ ո՛նց չէ, կսպանե՞ն։ Միթամ չեն տեսնում, հա՛-ա։ Նրանք կազակների վրա են կրակում, կազակները նրանց, այն կարմիրների թշնամիներն են, իսկ ես պառավ եմ, որբևայրի եմ, նրանց ինչի՞ն եմ պետք։ Նրանք հո գիտեն, թե հրացաններով ու թոփերով ում վրա պիտի նշան բռնեն։

Կեսօրին փողոցով, ստորին գետապտույտի ուղղությամբ շեշտակի անցավ ձիու պարանոցին թեքված Գրիգորին։ Ակսինյան պատուհանից տեսավ նրան, դուրս թռավ մուտքի

սանդուղքը, որ պատած էր վայրի խաղողով, ճվաց՝ Գրի՛գոր...— բայց Գրիգորին արդեն չքացավ փողոցի շրջադարձում, նրա ձիու սմբակների բարձրացրած փոշին դանդաղ նստեց ճանապարհին։ Նրա ետևից վազելն անօգուտ էր։ Ակսինյան մի քիչ կանգնեց մուտքի սանդուղքի հարթակում, լացեց շար արցունքներով։

— Դա Ստյոպան չէ՞ր, որ անցավ։ Ինչի՞ գժվածի պես դուրս թռար,— հարցրեց պառավը։

— Չէ... նա մեր խուտորից էր...— արտասվելով պատասխանեց Ակսինյան։

— Բա ինչո՞ւ արտասուք թափեցիր,— հարցուփորձ էր անում հետաքրքրվող պառավը։

— Ախր ի՞նչ ես ուզում, ա՛յ մորաքույր։ Այդ ձեր խելքի բանը չի։

— Ո՛նց թե մեր խելքի բանը չի... Ուրեմս անցնողը սիրեկանդ էր։ Բա ուրիշ ի՞նչ կարող է լինել։ Մի բան կա, թե չէ դու չէիր ճվա... Ես է՛լ եմ ապրել, գիտեմ։

Պրոխոր Զիկովը երեկոյան մտավ խրճիթ։

— Բարև ձեզ։ Ձեզ մոտ, տանտիրուհի, Տատարսկից ոչ ոք չկա՞։

— Պրո՛խոր,— ուրախացած ախ քաշեց Ակսինյան, օթախից դուրս վազեց։

— Ա՛յ աղջի, դու իմ հոգին հանեցիր, է՛։ Մեռա քեզ փնտրելով։ Հո գիտես նա ինչ մարդ է, չէ՞։ Հորն է քաշել, գժի մեկն է։ Անհաշիվ կրակ է թափվում, թե մարդ թե կենդանի ծակ ու ծուկ են մտել, իսկ նա հա՛ բղավում է՝ «Գտիր Ակսինյային, թե չէ շանսատակ կանեմ»։

Ակսինյան բռնեց Պրոխորի վերնաշապկի թևքից, նրան տարավ հաշտ։

— Ո՞րտեղ է նա, անիծվածը։

— Հը՛մ... Ո՞րտեղ պիտի լինի։ Դիրքերից ոտով եկավ։ Այսօր նրա տակի ձին սպանել են։ Եկավ կատաղած, ոնց որ կապած շուն։ «Գտա՞ր»,— հարցնում է։ Ախր ո՞րտեղ գտնեմ նրան,— ասում եմ,— հո չեմ կարող նրան ստեղծել»։ Նա թե՝ «Մարդը ասեղ չի», ու այնպե՛ս է գոռում վրաս... Իսկական գել է մարդու սֆաթով։

— Ի՞նչ էր ասում։

— Պատրաստվիր գնանք, ուրիշ ոչինչ։

Ակսինյան մի րոպեում կապեց իր իրերը, հապճեպորեն հրաժեշտ տվեց պառավին։

— Ստեպա՞նն է ուղարկել դրան։

— Ստեպանը, մորաքույր։

— Դեհ, բարև տար նրան։ Բա ինչի՞ ինքը չեկավ։ Կաթ կխմեր, հրեն, վարենիկ է մնացել...

Ակսինյան մինչև վերջ չլսելով՝ խրճիթից դուրս վազեց։

Մինչև հասավ Գրիգորիի բնակարանը, շնչասպառ եղավ, գունատվեց, խիստ արագ էր քայլում, այնպես որ Պրոխորը ի վերջո նույնիսկ կշտամբեց.

— Լսիր ինձ, է՛։ Ես էլ ջահել ժամանակս աղջիկների ետևից էի ընկնում, ամա կյանքումս այնպես չեմ շտապել, ինչպես դու։ Համբերություն չունե՞ս, ինչ է։ Թե՞ հրդեհ մարելու ես գնում։ Շունչս կտրվեց։ Բա այդպես կթռչե՞ն ավազի վրով։ Ձեր ամեն ինչն էլ հեչ մարդավարի չէ...

Իսկ ինքն իր մեջ մտածում էր՝ «Էլի իրար կպան... Հը՛մ, սատանեն ինքն էլ հիմի դրանց չի բաժանի։ Նրանք իրենց գործն են տեսնում, իսկ ես սրան, քածին պետք է փնտրեի գնդակների տակ... Աստված չանի Նատալյան իմանա, նա ինձ ոտով-գլխով կկորցնի... Գիտենք Կորշունովների ցեղը։ Էհ, թե որ սարսաղություն չանեի, հարբած չլինեի, ձիս ու հրացանս չկորցնեի, էլ ինչի՞ պիտի գնայի քեզ ստանիցայում փնտրելու։ Ինքներդ եք ցեխն ընկել, ինքներդ էլ դուրս եկեք»։

Օթախում, որի պատուհանների փեղկերը պինդ ծածկված էին, մրուր արձակելով վառվում էր ձիթաճրագը։ Գրիգորին նստել էր սեղանի առաջ։ Նա հենց նոր էր մաքրել հրացանը ու դեռ չէր վերջացրել մաուզերի փողը սրբելը, երբ դուռը ճռնչաց։ Ակսինյան կանգնեց շեմքին։ Նրա նեղ, սպիտակ ճակատը քրտնակալած էր, իսկ գունատ դեմքի վրա այնպիսի մոլեգին կրքով էին վառվում լայնացած, բարկացկոտ աչքերը, որ երբ Գրիգորին նայեց նրան, սիրտը դողաց բերկրանքից։

— Կանչեցիր-բերիր... իսկ ինքդ... կորչում ես,— ծանր շնչելով ասաց Ակսինյան։

Նրա համար այժմ, ինչպես մի ժամանակ, վաղո՛ւց, վաղուց անցած օրերում, ինչպես իրենց սիրային կապի առաջին

օրերում, բացի Գրիգորիից, ուրիշ ոչինչ գոյություն չուներ։ Ակսինյայի համար նորից մեռնում էր աշխարհը, երբ բացակայում էր Գրիգորին, ու դարձյալ վերածնվում էր, երբ Գրիգորին նրա մոտ էր լինում։ Պրոխորից չքաշվելով, Ակսինյան նետվեց դեպի Գրիգորին, վայրի գայլուկի նման փաթաթվեց նրան, ու լալով, համբուրելով սիրածի մազակալած այտերը, կարճ համբույրներ թափելով նրա քթին, ճակատին, աչքերին, շուրթերին, հեծկլտալով, կամացուկ շշնջում էր.

— Ինչքա՜ն եմ տանջվել... տկարացել, Գրի՛շենկա, հարազատս։

— Դե լավ... Դե, տեսնում ես, էլի... Կաց... Ակսինյա, լավ, հերիք է...— շփոթված մոթմոթում էր Գրիգորին՝ շուռ տալով դեմքը, խուսափելով Պրոխորին նայելուց։

Նա Ակսինյային նստեցրեց նստարանին, նրա գլխից հանեց ծոծրակին ընկած շալը, շոյեց գզգզված մազերը։

— Դու մի տեսակ...

— Ես էլի այնպես եմ։ Իսկ դու...

— Չէ, աստված վկա, դու ջանի կրակ ես։

Ակսինյան ձեռները դրեց Գրիգորիի ուսերին, ծիծաղից արտասվելով, շշնջաց շուտասելուկով.

— Լավ, բա այդպես կարելի՞ է։ Կանչեցիր... Եկա ոտով, ամեն բան թողի, իսկ դու չկաս... Ձիով թռար-անցար, ես դուրս վազեցի, ճվացի, իսկ դու շուռ եկար, կորար... Կարող էին սպանել, ու վերջին անգամ քեզ չէի տեսնի...

Նա էլի ինչ-որ անասելի փաղաքուշ, սիրազեղ, կնոջական խենթ բաներ էր ասում ու ձեռներով շարունակ շոյում Գրիգորիի կորացած ուսերը, առհավետ հլու իր աչքերով անընդհատ նայում նրա աչքերին։

Ինչ-որ ողբմելի ու միևնույն ժամանակ մահացու կերպով անողոք բան էր տեղորվում նրա հայացքում, որպես հալածված գազանի աչքերում,— այնպիսի մի բան, որի պատճառով Գրիգորիի համար անհարմար ու ցավալի էր նայել նրան։

Գրիգորին արևակեզ արտևանունքներով ծածկում էր աչքերը, բռնազբոսիկ ժպտում, լռում, իսկ Ակսինյայի այտերը հետզհետե ավելի էին վառվում երերուն, վառ կարմրությամբ, ու ակնաբիբերը ասես կապույտ մուժով էին սքողվում։

Պրոխորը դուրս ելավ առանց հրաժեշտ տալու, հաշտում թքեց, ոտով տրորեց թուքը։

— Հաթա է, էլի,— մուտքի սանդուղքից իջնելիս չարացած ասավ նա ու դիտմամբ զիլ շրխկացնելով ծածկեց բակի դուռը։

LXIII

Երկու օր նրանք ապրեցին ինչպես երազում, շփոթելով ցերեկներն ու գիշերները, մոռանալով շրջապատը։ Երբեմն Գրիգորին արթնանում էր կարճ, շշմեցնող քնից ու կիսամթնաղում տեսնում իրեն նայող Ակսինյայի ուշադիր, ասես ուսումնասիրող հայացքը։ Ակսինյան սովորաբար պառկում էր արմունկին հենված, թուշը ձեռքին դրած, նայում համարյա անթարթ աչքերով։

— Ի՞նչ ես նայում,— հարցնում էր Գրիգորին։

— Ուզում եմ մի լավ տեսնել քեզ... Կսպանեն քեզ, սիրտս վկայում է։

— Դե որ վկայում է, նայիր,— ժպտում էր Գրիգորին։

Երրորդ օրը նա առաջին անգամ դուրս ելավ փողոց։ Կուդինովը առավոտից սուրհանդակներ էր ուղարկում մեկը մյուսի ետևից, խնդրում էր գալ խորհրդակցության։ «Չեմ գա, թող առանց ինձ խորհրդակցեն»,— պատասխանում էր Գրիգորին սուրհանդակներին։

Պրոխորը նրա համար նոր, շտաբում ճարած մի ձի բերեց, գիշերով գնաց Գրոմոկի հարյուրյակի ճակատամասը, բերեց այնտեղ թողած թամքը։ Տեսնելով, որ Գրիգորին մեկնելու է պատրաստվում, Ակսինյան վախեցած հարցրեց.

— Ո՞ւր։

— Ուզում եմ գնալ Տատարսկի, տեսնել, թե մերոնք ոնց են պաշտպանում խուտորը, ու մեկ էլ իմանամ, թե որտեղ է մեր ընտանիքը։

— Երեխաների՞դ ես կարոտել,— Ակսինյան ասես մրրսելով, շալը գցեց կոկլիկ, թուխ ուսերին։

— Կարոտել եմ։

— Մի՛ գնա, էլի՛։

— Չէ, կգնամ։

— Մի՛ գնա,— խնդրում էր Ակսինյան, ու նրա սև ակնա-

խոռոչներում սկսում էին բորբ շողալ աչքերը.— Ուրեմն քեզ համար ընտանիքը ինձանից թանկ է, հա՞-ա։ Թա՞նկ է։ Համ նա է քեզ քաշում, համ ե՞ս։ Դե ուրեմն դու ինձ տար քեզ մոտ, էլի։ Նատալյայի հետ մի կերպ կհաշտվենք... Էհ, գնա, գնա, բայց էլ չգա՛ս ինձ մոտ, չեմ ընդունի։ Այդպես չեմ ուզում... Չե՛մ ուզում։

Գրիգորին լուռ դուրս ելավ, ձի նստեց։

Տատարսկի պլաստունների հարյուրյակը ծուլացավ խրամներ փորել։

— Ախմախ բան ես հնարում,— ասում էր Խրիստոնյան.— Մենք գերմանական ֆրոնտո՞ւմն ենք, ինչ է։ Տղերք, սովորական խրամատներ փորեք, ուրեմս, ծնկաչափ խորությամբ։ Բա այդ գլուխ գալու բա՞ն է, ուրեմս, երկու արշին փորել այս պնդացած հողը։ Դա լինգով էլ չի փորվի, էլ ուր մնաց թե բահով։

Նրան լսեցին, ձախափնյա ղռաջ, սեպաձև յաոի տակ պառկած կրակելու խրամատներ փորեցին, իսկ անտառում գետնատներ շինեցին։

— Ահա և մենք արջամկան դրության անցանք,— սրախոսում էր երբեք չտխրող Անիկուշկան.— Կապրենք բների մեջ, խոտ-մոտ կուտենք, հերիք է ինչքան կաթի սերով բլին, միս, էրիշտով ձուկ կերանք... Իսկ էշի յոնջա չէի՞ք կամենա։

Կարմիրները տատարցիներին քիչ էին անհանգստացնում։ Խուտորի դիմաց մարտկոցներ չկային։ Միայն երբեմն աջ ափից ճարճատում էր մի գնդացիր, մի քանի գնդակ արձակում խրամատից դուրս ցցված դիտորդի վրա, հետո էլի երկար ժամանակով լռություն էր տիրում։

Կարմիրբանակային խրամատները գտնվում էին սարի վրա։ Երբեմն այնտեղից էլ էին կրակում։ Կարմիրբանակայինները միայն գիշերով էին գնում խուտոր, այն էլ կարճ ժամանակով։

Գրիգորին իրիկնադեմին մտավ իրենց գետառը։

Այստեղ ամեն ինչ ծանոթ էր նրան, յուրաքանչյուր ծառը հուշեր էր առաջացնում... Ճանապարհը գնում էր Դևիչի

մարգագետնով, որտեղ կաղակները ամեն տարի Պողոս-Պետրոսի տոնին, մարգագետինը «կտրտելուց» (բաժանելուց) հետո արաղ էին խմում։ Ալյոշկայի պուրակը Հրվանդանի ձեվով մտնում է գետառը։ Վաղ ժամանակ, երբ այդ պուրակը դեռ անուն չուներ, գայլերը պատառոտել էին մի կով, որը պատկանում էր մի ինչ-որ Ալեքսեյի,— Տատարսկի խուտորի բնակչին։ Մեռավ Ալեքսեյը, ջնջվեց նրա հիշատակը, ինչպես ջնջվում է գերեզմանաքարի մակագրությունը, նույնիսկ նրա ազգանունն էլ մոռացան հարևանները և ազգակիցները, իսկ նրա անունով կոչված պուրակը ապրում է, դեպի երկինք ձգում կաղնիների ու թեղիների մուգ կանաչ գագաթները։ Տատարցիները դրանք կտրում են տնտեսության մեջ անհրաժեշտ առարկաներ շինելու համար, բայց հաստարմատ կոճղերից գարնանը կենսունակ, մատաղ ոստեր են բարձրանում, մի-երկու տարվա աննշմար աճ, ու նորից Ալյոշկայի պուրակը ամռանը պճնվում է տարածված ճյուղերի մալախիտե սաղարթով, աշնանը — ոսկե օղաղրահով,— առավոտյան զովից թարմացած կաղնու նախշուն տերևների ոսկե ցոլքով։

Ամռանը Ալյոշկայի պուրակում մոշի փշոտ թփուտը խիտ ցանցում է խոնավ հողը, հին թեղիների գագաթներին բույն են հյուսում շքեղ փետրավորված փայտփորներն ու անծեղները. աշնանը, երբ տարածվում է կաղինների ու կաղնու թափված տերևների բարկ, դառն բույրը, պուրակում կարճ ժամանակ հյուր են լինում չվող կտցարները, իսկ ձմռանը միայն աղվեսի կլոր դրոշմված հետքն է մարգարտաթել ձգվում ձյան փռված, սպիտակ թաղիքի վրա։ Գրիգորին պատանեկության օրերում հաճախ գնում էր Ալյոշկայի պուրակը՝ աղվեսների թակարդ դնելու համար...

Նա գնում էր ծառերի ճյուղերի զով ստվերի միջով, նախորդ տարվա ճանապարհի կանաչած անվահետքերով։ Անցնելով Դևիչի մարգագետինը, մոտեցավ Սև յառին, և հուշերը գայլուկի խմիչքի նման խփեցին գլխին։ Երեք կաղամախիների մոտ մի ժամանակ, երբ փոքր տղա էր, ծանծաղ լճակով ընկնում էր դեռ չթռչող վայրի բադերի թուխս ու ճուտերի ետևից, Կլոր լճում առավոտից մինչև երեկո տինկաներ էր որսում... Քիչ հեռու գտնվում է փոնչենու վրանանման ծառը։

Այն կանգնած է պուրակից դուրս, միայնակ ու հնացած։ Այն երևում է Մելեխովների բակից, ու Գրիգորին աշնանը դուրս գալով իրենց տանից, մուտքի սանդուղքից դիտում էր փունջ-նու թուփը, որը հեռվից ասես բռնկված լիներ կարմիր, երկարալեզու բոցերով։ Հանգուցյալ Պետրոն այնքա՞ն էր սիրում դառնավուն և մածուցիկ փուունչով եփած կարկանդակները...

Գրիգորին մեղմ տխրությամբ դիտում էր մանկությունից ծանոթ վայրերը։ Ձին քայլում էր՝ պոչով ծուլորեն քշելով հոծ վխտացող մժղուկները, դարչնագույն, չար մոծակները։ Կանաչ սեզը և ջղախոտը մեղմակի օրորվում էին քամուց։ Մարգագետինը պատած էր երերվող կանաչով։

Մոտենալով Տատարսկի պլաստունների խրամատին, Գրիգորին մարդ ուղարկեց հորը կանչելու։ Հեռվում, ձախ թևում Խրիստոնյան բղավեց։

— Պրակոֆիչ, շուտ արա գնա, ուրեմս, Գրիգորին եկել է...

Գրիգորին իջավ ձիուց, սանձը տվեց մոտ եկած Անիկուշկային, դեռ հեռվից տեսավ կաղալով, արագ եկող հորը։

— Հը՛, բարև, պետ։

— Բարև, հերքս։

— Եկա՞ր։

— Ջոռով կարողացա գալ։ Է՛, մերոնք ո՞նց են, մերքս, Նատալյան ո՞րտեղ են։

Պանտելեյ Պրակոֆիևիչը թափ տվեց ձեռքը, կնճռոտեց դեմքը։ Նրա սև այտի վրայով գլորվեց արցունքը...

— Ի՞նչ է, նրանց ի՞նչ է պատահել,— անհանգիստ ու կորուկ հարցրեց Գրիգորին։

— Ջանցան գետը...

— Ո՞նց թե, հը՞։

— Նատալյան դրանից երկու օր առաջ բոլորովին պառկեց։ Կարծեմ թե տիֆ է... Հա, իսկ պառավը չուզեց նրան թողնել... Ամա դու մի վախենա, որդիս, նրանց մոտ այնտեղ ամեն բան լավ է գնում։

— Բա երեխե՞քը, Միշատկա՞ն, Պոլյուշկա՞ն։

— Նույնպես այնտեղ են։ Դունյաշկան եկավ։ Վախենում էր մնալ... Գիտե՞ս աղջկա գործ է։ Հիմի Անիկուշկայի կնկա հետ գնաց Վոլոխով։ Իսկ տանը ես արդեն երկու անգամ

եղել եմ։ Գիշերվա կեսին նավակով գնացի, տեսա նրանց։ Նատալյայի դրությունը շատ վատ է, իսկ երեխաները — ոչինչ, փառք աստծու... Նատալյուշկան ուշագնաց է, տաքություն ունի, շրթունքները կծոտելուց արյունլվիկ են եղել։

— Բա ինչո՞ւ դու նրանց չբերիր այստեղ, հը՞,— վրդովված բղավեց Գրիգորին։

Ծերունին չարացավ, նրա դողդոջ ձայնը վիրավորանք ու կշտամբանք էր արտահայտում։

— Բա դո՞ւ ինչ էիր անում։ Չէի՞ր կարող առաջուց գալ ու տանել նրանց։

— Ես դիվիզիայի հրամանատար եմ։ Պետք է դիվիզիա՛ն անցկացնեի,— տաքացած առարկեց Գրիգորին։

— Լսել ենք, թե դու Վեշկիում ինչով ես զբաղվում... Միթամ ընտանիքին ոչինչ էլ չի հարկավոր, հա՞-ա։ Պետք է աստծու մասին մտածել, եթե մարդկանց մասին չես մտածում... Ես գետը ոչ թե այստեղից, այլ ուրիշ տեղից եմ անցել, թե չէ մի՞թե նրանց չէի բերի։ Իմ դասակը Ելանումն էր, ու մինչև այստեղ հասանք, կարմիրները գրավեցին խուտորը։

— Ես Վեշկիում... Այդ բանը քեզ չի վերաբերում... Եվ դու ինձ...— Գրիգորիի ձայնը խռպոտ ու խեղդված էր։

— Բան չե՛մ ասում,— վախեցավ ծերունին՝ տհաճությամբ նայելով մոտիկում խմբված կազակներին.— ես դրա մասին բան չեմ ասում... Իսկ դու կամաց խոսա, հրե՛ն, մարդիկ լսում են...— ու ցածրացրեց ձայնը։— Դու ինքդ հո պրստիկ երեխա չես, ինքդ պետք է գիտենաս, իսկ ընտանիքի համար թող հոգիդ չցավի։ Աստված կտա, Նատալյան կառողջանա, իսկ կարմիրները նրանց նեղություն չեն տալի։ Դրուստ է, մի տարեկան հորթը մորթեցին, ամա մնացածը՝ ոչի՛նչ։ Գութ են արել ու ձեռ չեն տալի... Քառասուն կոտ հաց վերցրին։ Էհ, բա պատերազմում առանց կորստի բա՞ն կլինի։

— Կարելի է հիմի նրանց բերե՞նք, հը՞։

— Իմ կարծիքով կարիք չկա։ Ո՞ւր բերենք հիվանդին։ Վտանգավոր բան է։ Նրանք այնտեղ էլ վատ չեն ապրում։ Պառավը մտիկ է անում տուն ու տեղին, ես էլ հանգիստ եմ, թե չէ, գիտե՞ս, խուտորում հրդեհներ եղան։

— Ո՞ւմ տները վառվեցին։

— Ամբողջ հրապարակը վառվեց։ Ամենից շատ վառվեցին վաճառականների տերը։ Խնամի Կորշունովների տունը բոլորովին վառվեց։ Խնամի Լուկինիշնան հիմի Անդրոնովի տանն է, իսկ Գրիշկա պապին մնացել էր տունը պահելու։ Մերը պատմում էր, թե նա, Գրիշկա պապին ասել էր՝ «Իմ տնից ոչ մի տեղ չեմ գնա, իսկ կռապաշտները ինձ մոտ չեն գա, խաչից կվախենան»։ Նա վերջը բոլորովին թոցրեց խելքը։ Ամա, ոնց որ երևում է, կարմիրները չվախեցան նրա խաչից, տուն ու տեղը բռնվեց ծխով, իսկ նրա մասին իսկի լուր չկա... Նրա մեռնելու ժամանակն է։ Քսան տարի առաջ իրեն համար ճաղը է պատրաստել, ու էլի ապրում է... Իսկ խուտորը վառողը քո ընկերն է, գետինը մտնի նա։

— Ո՞վ է։

— Միշկա Կոշևոյը, այն անիծվածը։

— Ի՞նչ ես ասու-ո՞ւմ...

— Նա է, աստված վկա։ Եղել է մերոնց մոտ, հարցրել քո մասին։ Մորը այնպես էլ ասել է՝ «Հենց որ անցնենք Դոնի մյուս կողմը, ձեր Գրիգորին կկախվի առաջին հերթին։ Կկախվի ամենաբարձր կաղնուց։ Ես նրա վրա,— ասել է,— չեմ է՛լ կեղտոտի թուրս»։ Իմ մասին էլ հարցրել է ու ահ տվել։ Իսկ այն թոփալին,— ասել է,— ո՞ւր է տարել սատանեն։ Կնստեր տանը, վառարանի վրա,— ասել է նա։ Իսկ եթե բռնեմ, միանգամից չեմ սպանի, այլ մտրակով այնքան կթակեմ, մինչև որ շունչը փչի»։ Ա՛յ թե ինչ տեսակ սատանա դուրս եկավ։ Ման է գալի խուտորում, կրակ է գցում վաճառականների ու տերտերների տները ու ասում՝ «Իվան Ալեքսեևիչի ու Շտոկմանի համար ամբողջ Վեշենսկայան կվառնեմ»։ Բա այդ ինչի՞ է նման։

Գրիգորին մի կես ժամ էլ խոսեց հոր հետ, հետո մոտեցավ ձիուն։ Խոսակցության ժամանակ ծերունին այլևս ոչ մի բառով չակնարկեց Ակսինյայի մասին, բայց Գրիգորին առանց այդ էլ ճնշված էր։ «Երևի բոլորը իմացել են, քանի որ հերքս է՛լ գիտի։ Ո՞վ կարող էր ասել։ Բացի Պրոխորից, ո՞վ է մեզ միասին տեսել։ Մի՞թե Ստեպանն էլ գիտի»։ Նա մինչև իսկ ամոթից, ինքն իր դեմ չարանալուց կրճտացրեց ատամները...

Կազակների հետ կարճ խոսակցություն ունեցավ։ Անիկուշկան կատակում էր ու խնդրում հարյուրյակի համար մի քանի դույլ արաղ ուղարկել։

— Մեզ փամփուշտներ էլ հարկավոր չեն, միայն թե արաղ լինի,— ասում էր նա քրքջալով ու աչքով անում, նշանակալից կերպով շրխկացնում մատները՝ տանելով վերնաշապկի կեղտոտ օձիքին։

Գրիգորին իր բերած ծխախոտով հյուրասիրեց Խրիստոնյային ու մյուս բոլոր խուտորցիներին. մեկնելուց առաջ տեսավ Ստեպան Աստախովին։ Ստեպանը մոտեցավ, դանդաղ բարևեց, բայց ձեռք չտվեց։

Ապստամբությունը սկսվելու օրվանից Գրիգորին նրան առաջին անգամ էր տեսնում, նայում էր զննողաբար և անհանգիստ. «Գիտի՞ թե չէ»։ Բայց Ստեպանի գեղեցիկ, չոր դեմքը հանգիստ էր, նույնիսկ ուրախ, ու Գրիգորին թեթևացած շունչ առավ. «Ոչ, չգիտե»։

LXIV

Երկու օրից հետո Գրիգորին վերադարձավ իր դիվիզիայի ճակատում շրջագայելուց։ Հրամանատարի շտաբը տեղափոխվել էր Զոռնի խուտորը։ Գրիգորին Վեշենսկու մոտ մի կես ժամով հանգիստ տվեց ձիուն, ջրեց նրան ու առանց ստանիցան մտնելու գնաց Զոռնի։

Կուդինովը ընդունեց նրան, ուրախ նայեց՝ սպասողական ժպիտը դեմքին։

— Հը՛, Գրիգորի Պանտելեև, ի՞նչ տեսար, պատմիր։

— Տեսա կազակներին, բլուրների վրա տեսա կարմիրներին։

— Շա՛տ բան ես տեսել։ Իսկ մեզ մոտ երեք աերոպլան եկավ, փամփուշտներ ու նամակներ բերին...

— Ի՞նչ է քեզ գրում քո սիրելի գեներալ Սիդորինը։

— Իմ զինվորական ընկե՞րը,— նույն կատակային տոնով շարունակելով սկսված խոսակցությունը, հարցը կրկնեց արտասովոր կերպով ուրախ Կուդինովը.— գրում է, որ բոլոր ուժերովս դիմանամ ու չթողնեմ, որ կարմիրներն անցնեն

Դոնը։ Հետո էլ գրում է, որ Դոնի բանակը շատ շուտով վճռական հարձակման կանցնի։

— Քաղցր է գրում։

Կուդինովը լրջացավ.

— Ճեղքելու են ֆրոնտը։ Ասում եմ միայն քեզ և բոլորովին գաղտնի։ Մի շաբաթից հետո կճեղքեն Ութերորդ կարմիր բանակի ֆրոնտը։ Պետք է դիմանալ։

— Դիմանում ենք, էլի։

— Գրոմոկում կարմիրները պատրաստվում են գետն անցնելու։

— Մինչև հիմի էլ թխկացնո՞ւմ են կացինները,— զարմացավ Գրիգորին։

— Թխկացնում են... Իսկ դու ի՞նչ տեսար, ո՞րտեղ էիր։ Դու հո Վեշկիում չէի՞ր նստած։ Գուցե ոչ մի տեղ էլ չես գնացել։ Երեկ չէ մյուս օրը ես ամբողջ ստանիցան տակնուվրա արի, քեզ էի փնտրում, և ահա գալիս է մի սուրհանդակ, ասում է՝ «Մելեխովը տանը չէր, իսկ օթախից դուրս եկավ շատ գեղեցիկ մի կնիկ ու ասաց՝ «Գրիգորի Պանտելեևիչը գնացել է», այդ կնկա աչքերն ուռած էին»։ Ես էլ մտածեցի՝ «Երևի մեր դիվհրամը քեֆ է քաշում սիրածի հետ ու մեզանից թաքնվում է»։

Գրիգորին կնճռոտեց դեմքը։ Կուդինովի կատակը նրան դուր չեկավ։

— Լավ կլիներ դու քիչ ականջ դնեիր սուտ-մուտ բաներին ու քեզ համար կարճալեզու սուրհանդակներ ընտրեիր։ Իսկ եթե ինձ մոտ ուղարկես շատ երկարալեզուներին, ես առաջուց թրով կկտրեմ նրանց լեզուները... որ զուր տեղը չհաչեն։

Կուդինովը հոհոաց, թփթփացրեց Գրիգորիի ուսին։

— Մեկ-մեկ դու է՛լ հանաքի չես դիմանում։ Դեհ, հանաքը դենը։ Ես քեզ հետ լուրջ խոսակցություն ունեմ։ Մենք պետք է լեզու բռնենք, սա մեկ, ու մի ուրիշ բան է՛լ. պետք է գիշերով մի որևէ տեղից, Կազանսկու սահմանից ցած երկու ձիավոր հարյուրյակ անցկացնենք Դոնից ու կարմիրների մեջ իրարանցում գցենք։ Կարելի է մինչև իսկ Գրոմոկ անցնել, նրանց մեջ խուճապ առաջացնելու համար, հը՞, դու ի՞նչ ես կարծում։

Գրիգորին մի փոքր լռեց, հետո պատասխանեց.

— Վատ գործ չի։

— Իսկ դու ինքդ,— Կուդինովը շեշտեց վերջին բառը,— չի՞ս տանի հարյուրյակները։

— Ինչո՞ւ ինքս։

— Մարտական հրամանատար է հարկավոր, ա՛յ թե ինչու։ Խիստ մարտական հրամանատար, որովհետև այդ գործը հանաք բան չի։ Գետն անցնելով, կարելի է այնպիսի դրության մեջ ընկնել, որ ոչ մեկը չի վերադառնա։

Ինքնասիրությունը շոյված Գրիգորին առանց երկար մտածելու համաձայնվեց.

— Կտանեմ, իհարկե։

— Մենք այստեղ պլան ենք կազմել ու այսպես որոշել,— աշխուժացած խոսեց Կուդինովը՝ վեր կենալով տաբուրետից, քայլելով օթախի հատակի ճռճռան տախտակների վրա.— Խոր թիկունք անցնել պետք չէ, այլ Դոնին մոտիկ երկուերեք խուտորում պետք է այնպես թափ տալ նրանց, որ գլուխները կորցնեն, պետք է փամփուշտներ ու արկեր խլել, գերիներ վերցնել ու նույն ճամփով ետ գալ։ Այս բոլորը պետք է անել գիշերով, լուսածեգին արդեն անցնել գետը։ Ճի՞շտ է։ Դե, ուրեմն մտածիր, իսկ վաղը վերցրու ուզածդ կազակներին, ընտրիր ու տար։ Մենք այնպես էլ որոշել էինք, որ բացի Մելեխովից, ուրիշ ոչ ոք չի կարող այդ անել։ Իսկ երբ որ կատարես, Դոնի կառավարությունը չի մոռանա այդ բանը։ Հենց որ մերոնց հետ միանանք, զեկույց կգրեմ ուղղակի փոխատամանին։ Կգրեմ քո բոլոր ծառայությունների մասին, ու աստիճանի բարձրացում...

Կուդինովը նայեց Գրիգորիին ու մնաց կես խոսքի վրա. Մելեխովի մինչ այդ հանգիստ դեմքը մթնեց ու ծամռվեց բարկությունից։

— Ես քեզ համար ի՞նչ եմ...— Գրիգորին ձեռներն արագ տարավ մեջքին, վեր կացավ.— Ես աստիճանների համա՞ր պիտի գնամ, հը՞... Վարձո՞ւմ ես... Աստիճանի բարձրացո՞ւմ ես խոստանում, հը՞... Ես...

— Սպասիր, է՛։

— ...Թքել եմ քո աստիճանների վրա։

— Կաց։ Դու ինձ սխալ...

— ... Թքել եմ։

— Դու ինձ սխալ հասկացար, Մելեխով։

— Ես ամեն բան հասկացա,— Գրիգորին միանգամից շունչ առավ ու նստեց տաբուրետին.— Փնտրիր ուրիշին, ես կազակներին չեմ տանի Դոնի մյուս կողմը։

— Զուր տեղն ես տաքանում, էլի՛։

— Չեմ տանի։ Դրա մասին էլ ոչ մի խոսք։

— Ես քեզ զոռով չեմ ստիպում ու չեմ խնդրում։ Ուզում ես տար, չես ուզում, քո բանն է։ Մեր դրությունը հիմա շատ լուրջ է, դրա համար էլ որոշել էինք նրանց մեջ տագնապ առաջացնել, չթողնել, որ պատրաստվեն Դոնն անցնելու։ Իսկ աստիճանի բարձրացման մասին ես հանաք արեցի։ Ինչո՞ւ չես հասկանում հանաքը։ Կնկա մասին էլ հանաքով հիշեցրի, հետո էլ տեսնում եմ՝ դու շարանում ես, մտածում եմ՝ արի մի անգամ էլ կծեմ սրան։ Ես հո գիտեմ, որ դու կիսատ-պռատ բոլշևիկ ես ու աստիճան-մաստիճան չես սիրում։ Իսկ դու կարծեցիր թե ես լո՞ւրջ ասացի,— խորամանկում էր Կուդինովը ու ծիծաղում այնքան բնականորեն, որ Գրիգորին մի ակնթարթ նույնիսկ մտածեց՝ «Կարելի է սա իսկապե՞ս հանաք էր անում»։— Չէ, դու... քա՛հ-քա՛հ-քահ ասա՛... դու զուր տեղը տաքացար, աղբերս։ Աստված վկա հանաք արեցի։ Ուզեցի մի քիչ ջղայնացնել...

— Միևնույն է, հրաժարվում եմ Դոնն անցնելուց, փոխեցի միտքս։

Կուդինովը տնտղում էր գոտու ծայրը, անտարբեր, երկար լռում էր, հետո ասաց.

— Դե ի՞նչ արած, միտքդ փոխեցիր թե վախեցար,— դա կարևոր չէ։ Կարևորն այն է, որ մեր պլանը վիժեցնում ես։ Բայց մենք, իհարկե, կուղարկենք որևէ մեկին։ Ամեն բան հո անպատճառ քեզնով չպիտի՞ լինի... Իսկ որ մեր դրությունը հիմի շատ լուրջ է, դրա մասին ինքդ դատիր։ Այսօր Կոնդրատ Մեդվեդևը Շումիլինսկուց մեզ մի նոր հրաման է ուղարկել։ Մեր դեմ զորքեր են ուղարկում... Հրե՛ս, ինքդ կարդա, թե չէ չես հավատա...— Կուդինովը դաշտային պայուսակից հանեց մի կտոր դեղին թուղթ, որի լուսանցքներում

չորացած արյան մուգ բծեր կային, ու տվեց Գրիգորին.— Գտել են ինչ-որ Ինտերնացիոնալ վաշտի կոմիսարի մոտ։ Կոմիսարը լատիշ էր։ Այդ իժը պաշտպանվելու համար կրակել էր մինչև վերջին փամփուշտը, հետո էլ հրացանով նետվել կազակների մի ամբողջ դասակի վրա... Նրանցից այդ գաղափարականներից էլ են լինում այդպիսիները... Կոնդրատն ինքն էր գլորել կոմիսարին։ Հենց ինքն էլ նրա կրծքի գրպանում գտել էր այս հրամանը։

Դեղին, արյունոտված թերթիկի վրա մանր, սև տառերով տպված էր.

ՀՐԱՄԱՆ

Էքսպեդիցիոն զորքերին

8 № 100

Բոգուչար

25 մայիսի 1919 թ.

Կարդալ բոլոր վաշտերում, էսկադրոնեներում, մարտկոցներում ու խմբերում։

Վե՛ր ջ Դոնի ստոր ապստամբության։

Հասե՛լ է վերջին ժամը։

Բոլոր անհրաժեշտ նախապատրաստությունները կատարված են։ Կենտրոնացված են բավականաչափ ուժեր, որպեսզի նետվեն դավաճանների ու մատնիչների վրա։ Հասել է ժամը՝ դատաստան տեսնելու Կայենների դեմ, որոնք ավելի քան երկու ամիս հարվածներ էին տալիս Հարավային ֆրոնտի մեր գործող բանակների թիկունքին։ Ամբողջ բանվորագյուղացիական Ռուսաստանը նողկանքով և ատելությամբ է նայում Միգուլինսկու, Վեշենսկու, Ելանսկու, Շումիլինսկու այն բանդաներին, որոնք խաբեբայական կարմիր դրոշակ բարձրացնելով, օգնում են սև-հարյուրյակային կալվածատերերին,— Դենիկինին և Կոլչակին։

Պատժիչ զորքերի զինվորնե՛ր, հրամանատարնե՛ր, կոմիսարնե՛ր.

Նախապատրաստական աշխատանքն ավարտված է։ Բոլոր անհրաժեշտ ուժերը և միջոցները կենտրոնացված են։ Ձեր շարքերը կազմ ու պատրաստ են։

Հիմա ազդանշանով — դեպի առա՛ջ։

Խայտառակ դավաճանների և մատնիչների որջերը պետք է ավերվեն, Կայենները պետք է ոչնչացվեն։ Ոչ մի գթություն այն ստանիցաներին, որոնք դիմադրություն ցույց կտան։ Ողորմածություն միայն նրանց, ով-

քեր կամավոր կերպով կհանձնեն զենքերը և կանցնեն մեր կողմը։ Կոլչակի ու Դենիկինի օգնականների դեմ—արհիճ, պողպատ և կրակ։

Սովետական Ռուսաստանը հույս է դնում ձեր վրա, ընկեր զինվորներ։ Մի քանի օրում մենք պետք է Դոնը մաքրենք դավաճանության սև բծից։ Հասել է վերջին ժամը։

Բոլորդ մի մարդու պես դեպի առա՛ջ։

LXV

Մայիսի տասներեքին Միշկա Կոշևոյը Գումանովսկու,— 9-րդ բանակի էքսպեդիցիոն բրիգադի շտաբի պետի կողմից շտապ ծրարով ուղարկվեց 32-րդ գնդի շտաբը, որը, Գումանովսկու ունեցած տեղեկությունների համաձայն, գտնվում էր Գորբատով խուտորում։

Նույն օրվա իրիկնադեմին Կոշևոյը ձիով ժամանեց Գորբատով, բայց 32-րդ գնդի շտաբը այնտեղ չէր։ Խուտորը լեփ-լեցուն էր Միրոնովի 23-րդ դիվիզիայի երկրորդ կարգի գումակի բազմաթիվ սայլերով։ Դրանք հետևազորի երկու վաշտի պաշտպանությամբ գնում էին Դոնեցից դեպի Ուստ-Մեդվեդիցա։

Միշկան մի քանի ժամ թափառեց խուտորում՝ փորձելով հարցնելու միջոցով իմանալ շտաբի տեղը։ Վերջ ի վերջո ձիավոր կարմիրբանակայիններից մեկը նրան հաղորդեց, որ նախորդ օրը 32-րդ գնդի շտաբը գտնվում էր Եվլանտևսկի խուտորում, Բոկովսկայա ստանիցայի մոտ։

Ձիուն կեր տալով, Միշկան գիշերով ժամանեց Եվլանտևսկի, սակայն շտաբը այնտեղ էլ չկար։ Արդեն կեսգիշերին վերադառնալով Գորբատովսկի, Կոշևոյը տափաստանում հանդիպեց կարմիրբանակային պարեկին։

— Ո՞վ է գալիս,— հեռվից ձայն տվեց Միշկային։

— Մերոնցից եմ։

— Հապա, տեսնեմ դու մերոնցից ով ես...— ձին մոտ քշելով, ցածր, մրսած ձայնով ասաց ուկրաիներեն խոսող հրամանատարը, որ կուբանյան սպիտակ փափախով էր ու կապույտ շերքեզկայով.— Ո՞ր զորամասից ես։

— Իններորդ բանակի էքսպեդիցիոն բրիգադից։

— Զորամասից թուղթ կա՞։

Միշկան ներկայացրեց փաստաթուղթը։ Լուսնի լույսի տակ զննելով այն, պարեկի հրամանատարը անվստահությամբ հարցեր տվեց.

— Ո՞վ է ձեր բրիգադի հրամանատարը։

— Ընկեր Լոզովսկին։

— Իսկ հիմի ո՞րտեղ է բրիգադը։

— Դոնի մյուս կողմում։ Իսկ դուք ո՞ր զորամասից եք, ընկեր։ Երեսուներկուերորդ գնդից չե՞ք։

— Չէ։ Մենք երեսուներեքերորդ Կուբանյան դիվիզիայից ենք։ Բա դու հիմի ո՞րտեղից ես գալի։

— Եվլանտևսկուց։

— Ո՞ւր ես գնում։

— Գորբատով։

— Օ-հո՛։ Ախր Գորբատովսկում հիմի կազակներն են։

— Չի կարող պատահե՛լ,— զարմացավ Միշկան։

— Ես քեզ ասում եմ, որ այնտեղ ապստամբ կազակներն են։ Մենք հո տեսել ենք։

— Բա ես ո՞նց գնամ Բոբրովսկու կողմերը,— շփոթվելով ասաց Միշկան։

— Ոնց որ գիտես, գնա։

Պարեկի հրամանատարը քշեց կախ գավակով, սևաթույր իր ձին, հեռացավ, բայց հետո կիսով չափ շուռ եկավ թամքի վրայից խորհուրդ տվեց.

— Արի մեզ հետ, թե չէ մեկ էլ տեսար գլուխդ թոցրին։

Միշկան հաճույքով միացավ պարեկին։ Հենց այդ գիշեր կարմիրբանակայինների հետ նա ժամանեց Կրուժիլին խուտորը, ուր գտնվում էր 294-րդ Տագանրոգյան գունդը, ծրարը հանձնեց գնդի հրամանատարին, ու նրան բացատրելով, թե ինչու չկարողացավ ծրարը հասցնել ըստ պատկանելության, թույլտվություն խնդրեց մնալ գնդում, հեծյալ հետախուզախմբում։

33-րդ Կուբանյան դիվիզիան, որ նոր էր կազմվել Թամանյան բանակի զորամասերից և Կուբանցի կամավորներից, Աստրախանի մերձակայքից փոխադրվեց Վորոնեժ-Լիսկի ռայոնը։ Նրա բրիգադներից մեկը, որի մեջ էին մտնում Տագանրոգյան, Դարբանդյան և Վասիլկովի գնդերը, ուղարկվել էր ապստամբության դեմ։ Հենց նա էլ հանձնակվել էր Մելե-

խովի 1-ին դիվիզիայի վրա՝ նրան ետ շպրտելով Դոնի մյուս կողմը։

Բրիգադը կռվով, արագացրած երթով անցավ Դոնի աջ ափով, Կազանսկայա ստանիցայի հողից մինչև Ուստ-Խոպերսկայա ստանիցայի արևմտյան առաջին խուտորները, աջ թևով գրավեց Չիրի խուտորները և միայն դրանից հետո ետ դարձավ՝ երկու շաբաթ կանգ առնելով Դոնի մերձակայքում։

Միշկան մասնակցում էր այն մարտին, որ մղվեց Կարգինսկայա ստանիցան և Չիրի մի քանի խուտորները գրավելու համար։ 27-ի առավոտյան տափաստանում, Նիժնե-Գրուշինսկի խուտորի մոտ 294-րդ Տագանրոգյան գնդի 3-րդ վաշտի հրամանատարը ճանապարհի կողքին շարք կանգնեցնելով կարմիրբանակայիններին, կարդաց հենց նոր ստացված հրամանը։ Միշկա Կոշևոյի հիշողության մեջ ամուր տպավորվեցին հետևյալ խոսքերը. «...Խայտառակ դավաճանների որջերը պետք է ավերվեն, Կայենները պետք է ոչնչացվեն...» Եվ ապա՝ «Կոլչակի և Դենիկինի օգնականների դեմ — արհիճ, պողպատ և կրակ»։

Շտոկմանի սպանությունից հետո, Իվան Ալեքսեևիչի ու Ելանսկու կոմունիստների մահվան լուրը Միշկային հասնելուց հետո նրա սիրտը լցվեց բուռն ատելությամբ դեպի կազակները։ Նա արդեն երկար չէր մտածում, չէր ունկնդրում կարեկցության անորոշ ձայնին, երբ որևէ ապստամբ կազակ ընկնում էր իր ձեռքը։ Այն ժամանակներից նա ներողամտություն չէր ցուցաբերում նրանցից և ոչ մեկի նկատմամբ։ Կապույտ և սառույցի պես սառն աչքերով նայում էր կազակին, հարցնում՝ «Կռվո՞ւմ էիր սովետական իշխանության դեմ, հա՞-ա», ու պատասխանի չսպասելով, չնայելով գերու սարսափահար դեմքին, թրատում էր նրան։ Թրատում էր անողորմ կերպով։ Եվ ոչ միայն թրատում էր, այլև «կարմիր աքլոր» էր դցում ապստամբների թողած խուտորների կտուրների տակ։ Իսկ երբ վախից խելագարված եզներն ու կովերը, ջարդոտելով վառվող տների ցախե ցանկապատերը, բառաչելով դուրս էին վազում, Միշկան հրացանից դեմառդեմ կրակում էր նրանց վրա։

Անհաշտ, անողոք պատերազմ էր նա մղում կազակական

հղիացածության, կազակական ուխտադրժության դեմ, այն ամբողջ անխախտ ու քարացած կենսակառուցվածքի դեմ, որը հարյուրամյակներով հանգչում էր բարեշեն խրճիթների կտուրների տակ։ Շտոկմանի ու Իվան Ալեքսեևիչի մահվամբ էր սնվում ատելությունը, իսկ հրամանի խոսքերը առավելագույն պայծառությամբ արտահայտեցին Միշկայի համոզմունքները... Այդ նույն օրը նա երեք ընկերների հետ Կարգինսկայա ստանիցայում մի հարյուր հիսուն տուն վառեց։ Վաճառականական ինչ-որ մի խանութի պահեստում մի բիդոն նավթ գտավ ու գնաց հրապարակով, սև ձեռքում մի տուփ լուցկի սեղմած, իսկ նրա ետևից դառն ծխով ու բոցալ էին բռնվում վաճառականների ու տերտերների թիթեղածածկ, շքեղ, ներկված տները, ունևոր կազակների խրճիթները, հենց այն մարդկանց բնակարանները, «որոնց խարդախությունը դեպի խռովություն էր մղել կազակական խավարամիտ մասսային»։

Չիավոր հետախուզախումբը առաջինը մտավ հակառակորդի թողած խուտորները. ու մինչդեռ մոտենում էր հետևակորդը, Կոշևոյն արդեն քամուն էր տալիս ամենահարուստ խրճիթները։ Նա ուզում էր ինչ կերպ էլ լինի ընկնել Տատարսկի, որպեսզի իրենց խուտորցիներից վրեժ առներ Իվան Ալեքսեևիչի ու Ելանսկու կոմունիստների մահվան համար, վառեր խուտորի կեսը։ Նա արդեն մտքում կազմել էր այն մարդկանց ցուցակը, որոնց տները պիտի վառեր, իսկ այն դեպքում, եթե իր զորամասը գնար Չիրից, Վեշենսկու ձախ կողմից, Միշկան որոշել էր գիշերով ինքնակամ բացակայել զորամասից ու լինել հայրենի խուտորում։ Կար նաև մի ուրիշ պատճառ, որ նրան ստիպում էր գնալ Տատարսկի... Վերջին երկու տարում, այն ժամանակվա ընթացքում, երբ նա երբեմնակի տեսնում էր Դունյաշկա Մելեխովային, նրանց կապում էր դեռևս խոսքերով չարտահայտված զգացմունքը։ Հենց Դունյաշկայի թուխլիկ մատներն էին դունագեղ դարուսով ասեղնագործել Միշկային նվիրած ծխախոտի տոպրակը, հենց նա էր, որ ձմռանը, հարազատներից թաքուն, այծի գորշ բրդից գործած ձեռնոցներ էր բերել Միշկային, հենց մի ժամանակ Դունյաշկային պատկանող, ասեղնագործած թաշ-

կինակն էր, որ Կոշևոյը խնամքով պահում էր զինվորական բլուզի կրծքի գրպանում։ Ու փոքրիկ թաշկինակը, որ իր ծալերի մեջ երեք ամիս պահել էր խոտի բուրմունքի պես հազվիվ զգալի՝ աղջկական մարմնի բույրը, անսահմանորեն թանկ էր Միշկայի համար։ Երբ Միշկան մենության րոպեներին հանում էր թաշկինակը, միշտ էլ ինքնաբերաբար մեջտեղ էր գալիս հուզիչ հիշողությունը,— եղյամնապատ բարդին ջրհորի մոտ, մռայլ երկնքից փչող բուք-բորանը, Դունյաշկայի պինդ, դողդոջ շուրթերը, բյուրեղափայլ ձյան փաթիլները, որոնք հալչում էին նրա կորնթարդ արտևանունքների վրա...

Միշկան խնամքով պատրաստվում էր տուն գնալու։ Կարգինսկում վաճառականական մի տան պատից պոկեց գունագեղ, փոքրիկ մի գորգ, հարմարեցրեց իբրև ձիու տապճակ,— հիանալի, շքեղ տապճակ էր դա, հեռվից էլ աչքի էր ընկնում գույների ու նախշերի բազմազանությամբ։ Կաղակական սնդուկից հանեց համարյա նոր, լամպասավոր մի շալվար, կես դյուժին կանացի շալեր, որոնք գործածեց իբրև երեք զույգ ոտափաթաթան, կանացի գործած ձեռնոցներ, որոնք դրեց պայուսակի մեջ, որպեսզի հագներ ոչ թե հիմա, պատերազմի գորշ առօրյայում, այլ բլուրի վրա, Տատարսկի մոնաստրի առաջ։

Դարեր շարունակ այնպես էր ընդունված, որ խուտոր ժամանող զինվորը պետք է շքեղ հագնված լինի։ Միշկան էլ, որ դեռ չէր աղատագրվել կազակական տրադիցիաներից, նույնիսկ գտնվելով Կարմիր բանակում, պատրաստվում էր սրբությամբ կատարել հինավուրց սովորությունը։

Նրա ձին լավն էր, մուգկարմրավուն և սպիտակաուռգ։ Դրա նախկին տիրոջը,— Ուստ-Խոպերսկու կազակին Կոշևոյը թրատել էր գրոհի ժամանակ։ Ձին ռազմական ավար էր, կարելի էր պարծենալ նրանով, տեսքն էլ լավ էր, վազքն էլ, խելքն էլ, շարային կեցվածքն էլ։ Բայց Կոշևոյի տակի թամքը խկի էլ աչքի ընկնող չէր։ Բարձիկը մաշված ու կարկատված էր, ետին փորքաշը լսնակոնած փոկից էր, ասպանդակները պատած էին վաղուցվա ժանգով, որը համառորեն չէր մաքրվում։ Նույնպես խղճուկ էր բոլորովին անզարդ սանձը։

Հարկավոր էր որևէ բան ձեռնարկել գոնե սանձը զարդարելու համար։ Միշկան երկար ժամանակ դլուխ էր ջարդում այդ հարցը լուծելու համար և վերջապես, նա ամենաերջանիկ մի միտք հղացավ։ Մի վաճառականի տան մոտ, հենց հրապարակի վրա դրված էր մի սպիտակ, նիկելի մահճակալ, որ վառված տանից դուրս էին բերել վաճառականի ծառաները։ Մահճակալի ծայրերին, անդրադառնալով արևը, կուրացուցիչ կերպով շողշողում էին սպիտակ գնդիկները։ Բավական էր միայն հանել դրանք, հետո էլ կախ տալ սանձի բերանոցից, ու սանձը բոլորովին ուրիշ տեսք կստանար։ Միշկան այդպես էլ արեց. նա մահճակալի ծայրերից պտուտակահանեց մեջտեղը դատարկ գնդիկները, դրանք մետաքսե քուղերով կախեց սանձից, երկուսը՝ բերանոցի օղակներից, երկուսն էլ՝ քթարմատի փոկի կողքերից, ու գնդիկները կեսօրվա սպիտակաշող արևի նման փայլում էին նրա ձիու գլխին։ Անդրադարձնելով արևի ճառագայթները, դրանք կուրացուցիչ փայլ էին արձակում։ Այնպես էին շողում, որ ձին արևի դիմաց քայլում էր աչքերը կկոցած, հաճախ սայթաքելով, անվստահ փոխելով ոտները։ Բայց չնայելով, որ ձիու տեսողությունը տուժում էր գնդիկների փայլից, չնայելով, որ ձիու աչքերը լույսից վնասվելով, արցունքներով էին լցվում, Միշկան և ոչ մի գնդիկ չհանեց սանձից։ Եվ ահա արդեն ժամանակն էր դուրս գալ կիսով չափ վառված, մոխրի ու մրոտված աղյուսի հոտ արձակող Կարգինսկայա ստանիցայից։

Գունդը պետք է գնար Դոնի կողմը, Վեշենսկու ուղղությամբ։ Դրա համար էլ Միշկան առանց որևէ դժվարության հետախուզախմբի հրամանատարից թույլտվություն ստացավ մի օրով այցելելու հարազատներին։

Հրամանատարը ոչ միայն կարճատև արձակուրդ տվեց, այլև ավելի շատ բան արեց.

— Ամուսնացա՞ծ ես,— հարցրեց Միշկային։

— Ոչ։

— Երևի ճնկո ունես, հը՞։

— Ի՞նչ ճնկո... Դա ի՞նչ բան է,— զարմացավ Միշկան։

— Դե՛, սիրած, էլի՛։

— Ա՛-ա-ա... Այդ չկա։ Սիրած ունեմ, մաքուր աղջիկ։

— Իսկ շղթայով ժամացույց ունե՞ս։

— Չունեմ, ընկեր։

— Չեղա՛վ,— ու հետախուզախմբի հրամանատարը, որ ստավրոպոլցի էր, անցյալում գերակետիկ ենթասպա և որը հին բանակից հաճախ արձակուրդով տուն էր գնում ու փորձից գիտեր, թե որքան դառն է զորամասից տկլոր ու դատարկ տուն գնալը,— իր լայն կրծքից հանեց ժամացույցը և անասելի ծանր շղթան, ասաց.— Դու լավ մարտիկ ես, ա՛ռ, կրիր տանը, աղջկանց աչքին թող փչիր, իսկ ինձ հիշիր երրորդ դասակից։ Ես էլ ջահել եմ եղել, աղջիկներ եմ փչացրել, կնանոնց հետ սիլի-բիլի արել, գիտեմ... Շղթան նոր, ամերիկական ոսկուց է։ Թե որ մեկն ու մեկը հարցնի, այդպես էլ պատասխանիր։ Իսկ թե պատահի որևէ ախմախի մեկը ու հարցուփորձ անի, թե ուր է հարգը, շրմփացրու հենց մռութին։ Կան լիրբ քաղաքացիներ, նրանց մռութը պետք է ջարդել առանց երկար խոսելու։ Պատահում էր, որ ճաշարանում կամ հասարակական տեղում կամ հենց բ....ում ինձ է մոտենում մի որևէ սարսաղ գործակատար կամ գրագիր և ուզում է մարդկանց մոտ ամոթով անել. «Հը՛, այդ շղթան այնպես եք չաշ արել փորիդ վրա, որ կարծես թե իսկական ոսկի լինի... Բա ո՞ւր է դրա հարգը, թույլ տվեք իմանալ»։ Իսկ ես նրան չեմ էլ թողնում մեկ էլ բերան բանա. «Հա՞րգը, ա՛ռ քեզ»,— ու Միշկայի բարեհոգի հրամանատարը սեղմեց թուխ, մանկան գլխի մեծությամբ բռունցքը, վայրագ ու սարսափելի ուժով թափահարեց այն։

Միշկան վերցրեց ժամացույցը, գիշերով, խարույկի լույսի տակ սափրվեց, թամքեց ձին, ճանապարհ ընկավ։ Լուսաբացին մտավ Տատարսկի։

Խուտորը էլի նույնն էր. աղյուսաշեն եկեղեցու ցածր զանգակատունը էլի նույնպես դեպի կապույտ երկինք էր բարձրացրել խունացած ոսկեջրած խաչը, տերևների ու վաճառականների հոյաշեն տները էլի նույնպես ծանր նստել էին հրապարակում, էլի նույն հարազատ լեզվով էր սոսափում Կոշևոյների կիսավեր խրճիթի կողքին բարձրացող բարդին...

Ապշեցնում էր խուտորի համար արտասովոր մեծ լռությունը միայն, որ ասես սարդոստայնով էր պատել նրբանցքները։ Փողոցներում ոչ ոք չկար։ Խրճիթների պատուհանների փեղկերը պինդ փակված էին, տեղ-տեղ դռների վրա կողպեքներ էին կախված, բայց դռների մեծամասնությունը բոլորովին բաց էր։ Ասես խուտորով մեկ ժանտախտն էր անցել իր սև թաթերով, ամայացրել բակերն ու փողոցները, դատարկությամբ ու ամայությամբ լցրել բնակելի շենքերը։

Ոչ մարդկային ձայն էր լսվում, ոչ անասունների բառաչ, ոչ էլ աքաղաղների պարզ կանչը։ Միմիայն ճնճղուկները, ասես անձրևից առաջ, աշխույժ ճռվողում էին մարագների չարդախների տակ ու չոր ցախակույտերի վրա։

Միշկան մտավ իրենց բակը։ Հարազատներից ոչ ոք դուրս չեկավ նրան դիմավորելու։ Դրսի դուռը բոլորովին բաց էր, շեմքի մոտ թափթփված էին կարմիրբանակայինի պատռված մի ոտափաթաթան, ճմռթված, արյունից սևացած մի բինտ, հավերի գլուխներ, փետուրներ, արդեն նեխված այդ գլուխների վրա ճանճեր էին նստել։ Կարմիրբանակայինները ըստ երևույթին օրեր առաջ ճաշել էին խրճիթում. հատակի վրա թափթփված էին ջարդոտված անոթների կտորտանքներ, հավի կրծոտված ոսկորներ, ծխախոտի մնացորդներ, լրագրերի կոխկրտված կտորներ... Խեղդելով ծանր հառաչանքը, Միշկան անցավ օթախը։ Այնտեղ ամեն ինչ առաջվա պես էր, միայն հատակի մի տախտակը, որի տակին, նկուղում աշնանը սովորաբար ձմերուկներ էին պահվում, մի քիչ բարձրացած էր թվում։

Միշկայի մայրը սովորություն ուներ այնտեղ չորացրած խնձորներ թաքցնել երեխաներից։

Վերհիշելով այդ, Միշկան մոտեցավ տախտակին։ «Մի՞թե մերրս չէր սպասում ինձ։ Գուցե նա այստեղ մի բան պահած լինի»,— մտածեց նա։ Ու հանելով թուրը, դրա ծայրը անցկացրեց տախտակի տակ։ Տախտակը բարձրացավ ճռնչալով։ Նկուղից խոնավություն ու նեխահոտ փչեց։ Միշկան ծունկ չոքեց։ Մթությանը չընտելացած նրա աչքերը երկար ժամանակ ոչինչ չէին տեսնում, վերջապես, տեսան հետևյալը. հին, փոված սփռոցի վրա դրված էր կես շիշ արաղ, բորբոսնած ձվածեղով մի թավա, կիսով չափ մկների կերած մի կտոր հաց. մի պնակ պինդ ծածկված փայտե կլոր խուփով... Պա-

ռավը սպասել էր որդուն։ Սպասել էր որպես ամենաթանկագին հյուրին։ Սիրով ու բերկրանքով դողաց Միշկայի սիրտը, երբ նա իջավ նկուղը։ Այդ բոլոր առարկաներին, որոնք կարգով դրված էին հին, մաքուր սփռոցի վրա, մի քանի օր առաջ հալվել էին մայրական հոգատար ձեռքերը... Նույն տեղում սպիտակին էր տալիս մարդակից քաշ արած քաթանե մի տոպրակ։ Միշկան հապճեպ հանեց այն ու գտավ իր մի զույգ հին, բայց վարպետորեն կարկատած, մաքուր լվացած և փայտե հարթիչով հարթուկած սպիտակեղենը։

Մկները կեղտոտել էին ուտելիքը. միայն կաթն ու արաղն էին անձեռնմխելի մնացել։ Միշկան խմեց տնական արաղը, կերավ նկուղում հրաշալի պաղ վիճակում պահված կաթը, վերցրեց սպիտակեղենը, դուրս ելավ նկուղից։

Մայրը հավանորեն Դոնի մյուս կողմումն էր։ «Վախեցել է մնալ, լավ է արել, որ գնացել է, թե չէ կազակները կսպաննեին։ Առանց այն էլ երևի իմ պատճառով թափ են տվել նրան ոնց որ տանձենի...»— մտածեց նա, ու մի փոքր հապաղելով, դուրս ելավ։ Արձակեց ձին, բայց սիրտ չարեց գնալ Մելեխովների մոտ. նրանց տունը հենց Դոնի վերևումն էր, իսկ Դոնի մյուս կողմից որևէ ճարտար հրաձիգ կարող էր Միշկային գլորել ապստամբական արճիճի անպարուտակ գնդակով։ Միշկան որոշեց գնալ Կորշունովների մոտ, իսկ մթնշաղին վերադառնալ հրապարակ ու մթության մեջ հրդեհել Մոխովի ու մյուս վաճառականների և տերտերների տները։

Հետնաբակերով նա ձին քշեց Կորշունովների ընդարձակ բակի կողմը, նստեց մտավ բաց դարպասից, ձին կապեց բազրիքից և ուզում էր անցնել տունը, երբ այնտեղից դուրս եկավ Գրիշկա պապին։ Ջյան պես սպիտակ նրա գլուխը դողում էր, ծերությունից խամրած աչքերը կուրաբար կկոցվում էին։ Զմաշված կազակական գորշ համազգեստը, որի կեղտոտ օձիքի ծալքերի վրա կարմրին էին տալիս մերակները, խնամքով կոճկված էր, բայց դատարկ թվացող, կախ շալվարն ընկնում էր, ու պապին ձեռներով անընդհատ վեր էր քաշում այն։

— Բարև, պապի,— Միշկան կանգնեց արտաքին սանդուղքի մոտ՝ թափահարելով մտրակը։

Գրիշկա պապին լուռ էր։ Նրա մոայլ նայվածքում միախառնվել էին սին ու զզվանքը։

— Բարև՛, ասում եմ, ո՞նց ես,— Միշկան բարձրացրեց ձայնը։

— Փառք աստծո,— դժկամ պատասխանեց ծերունին։

Նա շարունակեց Միշկային զննել լարված, զայրացկոտ ուշադրությամբ։ Միշկան կանգնել էր մի ոտը անփույթ կերպով ետ դրած. խաղացնում էր մտրակը, նոթոտվում, սեղմում աղջկականորեն փափլիկ շրթունքները։

— Ինչո՞ւ դու, Գրիգորի պապի, չես անցել Դոնի մյուս կողմը։

— Իսկ դու ո՞րտեղից գիտես անունս։

— Այստեղի բնակիչ եմ, դրա համար էլ գիտեմ։

— Հա՛-ա՞։ Ո՞ւմ տղեն ես։

— Կոշևոյի։

— Ակիմկայի տղե՞ն ես, որ մեզ մոտ մշակ էր։

— Հենց նրա։

— Ուրեմն այդ հենց դո՞ւ ես, աղա պարոն, հը՞։ Սուրբ մկրտության ժամանակ անունդ Միշկա են դրել, չէ՞։ Լա՛վ ես, հա՛-ա, հենց հորդ ես քաշել։ Նա, մեկ էլ տեսար, լավության համար ք... էր հատուցում, դու էլ, ուրեմն, այդ տեսակ ես, էլի՛։

Կոշևոյը ձեռից քաշեց ձեռնոցը, է՛լ ավելի մոայլվեց։

— Ինչ էլ որ լինի անունս և ինչ տեսակ էլ որ ես լինեմ, այդ քո բանը չի։ Ասում եմ՝ ինչո՞ւ չես անցել Դոնը։

— Չէի ուզում, ու չգնացի։ Իսկ դու, ի՞նչ է, սատանի ծառա՞ ես դառել։ Գդակիդ կարմիր ա՞ստղ ես կպցրել։ Ուրեմն այդ դո՞ւ ես մեր կազակների դեմ գնում, մունդոիկ շան որդի, հը՞։ Հենց քո խուտորցիների դե՞մ։

Գրիշկա պապին անհաստատ քայլերով իշավ մուտքի սանդուղքից։ Նա, ըստ երևույթին, վատ էր սնվում այն օրվանից, երբ կորշունովների ամբողջ ընտանիքը մեկնեց Դոնի մյուս կողմը։ Հարազատներից զրկված, հյուծված, ծերունաբար անմաքուր, նա կանգնել էր Միշկայի դիմաց և զարմանքով ու բարկությամբ նայում էր նրան։

— Հենց նրանց դեմ,— պատասխանեց Միշկան,— ու շատ շուտով կաղկենք նրանց։

— Բա սուրբ գրքումը ի՞նչ է ասված։ Ինչ չափով որ չափեք, նրանով հատուցի ձեզ։ Բա ո՞նց կլինի։

— Դու, ա՛յ պապի, գլուխս մի տանի քո սուրբ գրքերով, ես դրա համար չեմ եկել այստեղ։ Ձեռաց հեռացիր տնից,— Միշկան ավելի մռայլվեց։

— Ո՞նց թե այդպես։

— Հենց այդպես։

— Այդ ի՞նչ ես անում, հը՞...

— Դե ոչինչ, էլի, հեռացի՛ր, ասում եմ...

— Չե՛մ գնա իմ տանից։ Գիտեմ, թե այդ ինչի համար է... Դու սատանի ծառա ես, գդակիդ վրա նրա նշանն է։ Հենց ձեր մասին է, որ Երեմյա մարգարեն ասել է՝ «Ահավասիկ ես ցամբեցից դոցա օշինդր և արբուցից դոցա ջուր դառնության, զի ի նոցանե էլ պղծություն ընդ ամենայն երկիր»։ Եվ ահա այնպես էլ եղավ, որ տղան դուրս եկավ հոր դեմ, աղբերն աղբոր դեմ...

— Գլուխս մի թլոզի, պապ։ Այստեղ բանը եղբայրները չեն, այստեղ հասարակ թվաբանություն է. հերթս մինչև մեռնելը աշխատում էր ձեզ համար, ես էլ պատերազմից առաջ ձեր ցորենն էի կալսում. շալակում տանում ձեր ցորենի ջվալները, քիչ էր մնում փորրս պատռվեր գոռից, իսկ հիմի եկել է քվիտ լինելու ժամանակը։ Դուրս գնա տնից, հիմի պիտի վառեմ։ Ապրում էիք լավ-լավ տներում, իսկ հիմի կապրեք այնպես, ինչպես մենք էինք ապրում,— սամանե խրճիթներում։ Հասկացա՞ր, բիձա։

— Ա՛յ, ես էլ հենց այդ եմ ասում։ Եսայի մարգարեի գրքումը այդպես էլ գրված է. «Եվ ելցեն և տեսցեն զոսկերս մարդկան առ իս հանցուցելոց, զի որդն նոցա ոչ վախճանեսցի և հուր նոցա ոչ շիջցի և եղիցին ի տեսիլ ամենայն մսեղյաց»։

— Էհ, ես այստեղ քեզ հետ ասուլիս անելու ժամանակ չունեմ,— սառն կատաղությամբ ասաց Միշկան,— տնից հեռանո՞ւմ ես թե չէ։

— Չէ՛, գնա, ոսոխ։

— Հենց քեզ պես քավթառների երեսից է, որ պատերազմ է տեղի ունենում։ Հենց դուք եք խառնակում մարդկանց, ռևոլյուցիայի դեմ հանում...— Միշկան մեջքից արագ հանեց կարաբինը...

Կրակոցից հետո Գրիշակա պապին ընկավ երեսի վրա, պարզ ասավ.

— Որպես... ոչ շնորհիվ իմ... բայց կամոք աստծո մեր հանգյա... Տեր, ընդունյա ծառային քո... խաղաղությամբ...— ու խոխոռացրեց, սպիտակ բեղերի տակից ծորաց արյունը։

— Կընդունի՛։ Վաղուց էր հարկավոր քեզ այնտեղ ուղարկել, քավթա՛ռ սատանա։

Միշկան զզվանքով անցավ սանդուղքի մոտ փռված ծերունու կողքից, բարձրացավ ու ներս մտավ։

Չոր տաշեղները, որ քամին քշել լցրել էր հաշտը, բոնբկվեցին կարմրավուն բոցով, մառանը հաշտից բաժանող տախտակե միջապատը սկսեց արագությամբ վառվել։ Ծուխը բարձրացավ մինչև առաստաղը ու միջանցիկ քամու հետ ներխուժեց սենյակները։

Կոշևոյը դուրս եկավ, ու մինչդեռ կրակ էր գցում մարագն ու ամբարը, տան միջից կրակը արդեն դուրս եկավ, խշշալով, անհագ լիզեց պատուհանների սոճու շրջանակները, երկար լեզուները բարձրացրեց դեպի կտուրը...

Մինչև մթնշաղ Միշկան քնեց հարևան ծառուտում, վայրի գայլուկով ցանցված մամխիների թփերի ստվերում։ Նույն տեղում, ծուլորեն պոկոտելով ջղախոտի հյութեղ ցողունները, արածում էր թամքը հանած ու երեք ոտը կապած նրա ձին։ Երեկոյան ծարավ զգալով, ձին վրնջաց, արթնացրեց տիրոջը։

Միշկան վեր կացավ. շինելը թամքի ետին դաշի փոկերով կապեց թամքին, հենց այնտեղ, պուրակում ձին ջրեց ջրհորի ջրով, հետո էլ թամբեց, նստեց ու դուրս եկավ փողոց։

Կորշունովների վառված տանը, դեռ ծուխ էին արձակում սև, ածխացած գերանները, ցրվում էր խիստ դառն ծուխը։ Ընդարձակ տանից մնացել էին միայն բարձր, քարաշեն հիմքը ու կիսափլված վառարանը, որը դեպի երկինք էր բարձրացրել մրակալած ծխնելույզը։

Կոշևոյը գնաց ուղիղ դեպի Մելեխովների տունը։

Իլյինիչնան չարդախի տակ գոգնոցի մեջ կպչան էր լցնում, երբ Միշկան առանց ձիուց իջնելու բացեց բակի դուռը, մտավ բակը։

— Բարև ձեզ, մորքուր ջան,— փաղաքուշ ողջունեց նա պառավին։

Վերջինս վախով բռնված, պատասխանի մի բառ էլ չասաց, քաշ արավ ձեռները, գոգնոցից թափվեցին տաշեղները...

— Է՛, ո՞նց եք, մորքուր։

— Փառք... Փառք աստծու,— տատանվելով պատասխանեց Իլյինիչնան։

— Ողջ-առո՞ղջ ես։

— Ողջ եմ, իսկ առողջությանս մասին մի էլ հարցնի։

— Որտե՞ղ են ձեր կազակները։

Միշկան իջավ ձիուց, մոտեցավ չարդախին։

— Դոնի մյուս կողմում...

— Կաղետների՞ն են սպասում։

— Իմ գործը կնկա գործ է... Ես այդ բաները չգիտեմ...

— Իսկ Եվդոկեյա Պանտելեևնան տա՞նն է։

— Նա է՛լ է Դոնի մյուս կողմում։

— Սատանե՛ն է նրանց տարել այնտեղ,— Միշկայի ձայնը դողաց, ապա ուժեղացավ զայրույթից։— Ես ձեզ այ թե ինչ կասեմ, մորքուր. Գրիգորին, ձեր տղեն, սովետական իշխանության ամենակատաղի թշնամի դուրս եկավ։ Մենք կանցնենք Դոնի այն կողմը, ու առաջինը նրա վիզը կգցենք պարանը։ Իսկ Պանտելեյ Պրակոֆևիչը զուր տեղն է փախել։ Ձեր ու կաղ մարդ է, պետք է միշտ էլ տանը նստի...

— Մահվա՞ն սպասի,— խիստ տոնով հարցրեց Իլյինիչնան ու էլի սկսեց տաշեղներ հավաքել գոգնոցի մեջ։

— Դե, նրա մահը դեռ հեռու է։ Գուցե թե մի քիչ մտրակի ծեծ ուտի, նրան չէին սպանի։ Բայց ես, իհարկե, դրա համար չեմ եկել ձեզ մոտ.— Միշկան կրծքի վրա շտկեց ժամացույցի շղթան, կիտեց հոնքերը.— ես եկել եմ, որ տեսնեմ Եվդոկեյա Պանտելևնային։ Շատ եմ ափսոսում, որ նա էլ է դնացել, բայց ես ձեզ, մորքուր, ինչպես նրա հարազատ մորը, կասեմ։ Ա՛յ թե ինչ կասեմ. ես նրա համար վաղուց եմ տանջվում, բայց հիմի մենք իսկի ժամանակ չունենք աղջիկ ուղեղ-

լու, մենք կռվում ենք կոնտրայի (կոնտրռևոլյուցիայի) դեմ ու անխնա ջարդում ենք նրան։ Իսկ երբ նրան բոլորովին վերջ տանք, ամբողջ աշխարհում խաղաղ սովետական իշխանություն կհաստատվի, այն ժամանակ ես, մորքուր ջան, ձեզ մոտ խնամախոսներ կուղարկեմ ձեր Եվդոկիային ուզելու համար։

— Ժամանակը չի այդ մասին խոսելու։

— Ոչ, ժամանակն է,— Միշկան մռայլվեց, հոնքերի արանքում կամակորություն արտահայտող կնճիռ առաջացավ։— Նշանվելու ժամանակը չի, սա դրա մասին կարելի է խոսել։ Ու ես էլ չեմ կարողանա դրա համար ուրիշ ժամանակ ընտրել։ Այսօր այստեղ եմ, իսկ վաղը ինձ գուցե Դոնից դենն ուղարկեն։ Դրա համար էլ ես ձեզ զգուշացնում եմ. անխելք բան չանեք, Եվդոկիային ոչ ոքի մարդու չտաք, թե չէ ձեր բանը վատ կլինի։ Թե որ իմ զորամասից նամակ գա, որ ես սպանված եմ, այն ժամանակ նշանեցեք, իսկ հիմի չի կարելի, որովհետև իմ ու նրա մեջ սեր կա։ Ես նրան նվեր չեմ բերել, չգիտես որտեղից նվեր վերցնես, իսկ թե որ ձեզ բուրժույների, վաճառականների ունեցածից մի բան հարկավոր լինի, ասեք. հիմի կերթամ կբերեմ։

— Աստված չանի։ Ոչ մի ժամանակ ուրիշի ունեցածից չենք օգտվել։

— Դեհ, ոնց որ կուզեք։ Ինձանից շատ կարոտով բարև արեք Եվդոկեյա Պանտելևնային, եթե ինձանից շուտ տեսնեք նրան, դեհ, մնաք բարով, մորքուր, խնդրեմ չմոռանաք խոսքերս։

Իլյինիչնան առանց պատասխանելու գնաց խրճիթ, իսկ Միշկան նստեց ձին, գնաց հրապարակ։

Խուտորում գիշերելու համար բլուրից կարմիրբանակայիններ եկան։ Փողոցներում հնչում էին նրանց աշխույժ ձայները։ Երեքը, որոնք ձեռքի գնդացրով գնում էին ուղեկալ, դեպի Դոն, հարցափորձ արեցին Միշկային, ստուգեցին նրա փաստաթղթերը։ Սեմյոն Զուգունի խրճիթի դիմաց նա էլի չորս կարմիրբանակայինի հանդիպեց։ Նրանցից երկուսը սայլով վարսակ էին տանում, իսկ մյուս երկուսը՝ Զուգունի թո-

քախտավոր կնկա հետ — ոտնաշարժ մի կարի մեքենա և մի պարկ ալյուր։

Զուգունի կինը ճանաչեց Միշկային, բարևեց։

— Այդ ի՞նչ ես տանում, հորքուր,— հետաքրքրվեց Միշկան։

— Մենք աղքատ դասակարգի մի կնկա տուն ու տեղ ենք դարձնում. նրա համար բուրժույի մեքենա ու ալյուր ենք տանում,— գվարթ շուտասելուկով պատասխանեց կարմիրբանակայիններից մեկը։

Միշկան իրար ետևից վառեց յոթ տուն, որոնք պատկանում էին Դոնեցի մյուս կողմը փախած վաճառականներ Մոխովին և Ատեպին-Ցացային, տեր-Վիսսարիոնին, գործակալ տեր-Պանկրատիին ու էլի երեք ուներոր կազակի, ու միայն դրանից հետո ճանապարհվեց խուտորից։

Բարձրացավ բլուրը, շուռ տվեց ձին։ Ներքևում, Տատարսկում, քարետախտակի պես սև երկնքի ֆոնի վրա գալարվում էր շիկակարմրավուն բոցը, որ ասես աղվեսի երերվող, կայծկըլտուն պոչ լիներ։ Կրակը մերթ այնպես էր վեր թռչում, որ նրա ցոլքերը ցանցում էին Դոնի բուռն հոսանքը, մերթ էլ իջնում էր, թեքվում դեպի արևմուտք՝ ագահությամբ լափելով շենքերը։

Արևելքից փչում էր տափաստանային թեթև քամին։ Սա հրահրում էր բոցը և քշում տանում ահագին հրդեհի մրուրի սև, ածխափայլ փաթիլները...

(ԵՐՐՈՐԴ ԳՐՔԻ ՎԵՐՋԸ)

«ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ»
ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ՇԱՐՈՒՅՑ ԿՏԵՍՆԵՆ.

Լ. Տոլստոյ — Անն ա կ ա ր ե ն ի ն ա (2 գրքով)

Վ. Բելինսկի
Դոբրոլյուբով
Չերնիշևսկի — Ընտիր էջեր

Ի. Տուրգենև — Հատընտիր

ՄԻԽԱՅԻԼ ՇՈԼՈԽՈՎ
ԽԱՂԱՂ ԴՈՆԸ
Հատոր երրորդ

Шолохов Михаил Александрович
ТИХИЙ ДОН
В четырех томах. Том третий
(На армянском языке)
Издательство «Советакан грох», ул. Теряна, 91.
Ереван 1978

Խմբագիր՝ Է. Բ. Թոսունյան
Նկարիչ՝ Ան. Վ. Գասպարյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Գ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ե. Վ. Ազատյան

ИБ-456

Հանձնված է շարվածքի 5/X 1977 թ.։ Ստորագրված է տպագրության 20/III 1978 թ.։ Թուղթ տպագր. № 1, 84×108¹/₃₂, տպագր. 16,0 մամ. = 26,88 պայմ., մամ., հրատ. 23,25 մամ.։ Պատվեր 2201։ Տպաքանակ 50 000։ Գինը 2 ռ. 20 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Сов. Мин. Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-9, Теряна, 91.